Ասէ սուրբն. «Ո՞ւմ արդեօք տայք ինձ երկիրպագանել. կախարդին և մոլորականին և մեռեալ շանն։» Եւ մռնչեալ իբրև զգազանս վայրենիս և կրճտեալ զատամունս իւրեանց ի վերայ նորա, դան հարկանէին զնա յանխնայ և կապեալ զնա ընդ ծառոյ միոյ թթենոյ. բայց յառաջ քան զկապելն ծունր կրկնեալ կայր յաղօթս և ասէր. «Զքեզ Քրիստոս փառաւորեմ հանդերձ Հարբ և ամենասուրբ Հոգւովդ։»

Եւ բարբարոսացն դրդուեալ զմիմեանս, քարաձիգ լինէին ի սուրբն. և կայր երանելին իբրև զգառն ի մէջ գայլոց. ոչ ոք էր որ ողորմէր և ոչ ոք որ ի թիկունս հասանէր. այլ ամենեքեան յեկացն և ի բնակացն Պարսից՝ իբրև շունք կատաղեալք՝ թափէին ի նա զնետս յանդիմանութեան։

Եւ ի թանձրութենէ քարանցն՝ որ իբրև զտեղատարափս զեղուին ի վերայ սրբոյն, ջախջախեալ առ հասարակ ոսկերքն և յօդքն քակտեալ ի միմեանց. և պատառ պատառ մարմինքն յերկիր անկանէին։ Եւ սուրբն աւանդեաց զոգին

3. ո նորայ. 4. ո հիւսւոյ. 5. ո քրիստոնէայք.

*ի փառս Աստուծոյ, ըստ գրեցելումն. «Ոգիք արդարոց ի ձեռին Աստուծոյ են։»*

*Եւ ապա յետ այսորիկ հրաման ետ բռնաւորն և եդին առաստան ի պարանոց երանելւոյն, և ետ քարշել ընդ հրապարակս արտաքոյ քաղաքին փողոցացն քրիստոնէից՝ իբրև յաղթութիւն մեծ զիւրսն համարելով։ Իսկ զկնի այսորիկ եմուտ սատանայ ի սիրտ բռնաւորացն, զի հրով այրեսցեն զմարմինս երանելւոյն. և ընկեցեալ ի հուրն՝ ոչ այրեցաւ։ Եւ ի գիշերին յայնմիկ եկեալ ծնողք սրբոյն՝ բարձին զնշխարս վկային և եդին ի հասարակաց գերեզմանս քրիստոնէից գեղջն, անգիտանալով զարժանիս վկային, միանգամայն և զարհուրելով ի բռնաւորացն։*

*Իսկ զկնի անցելոց երկուց ամաց՝ փոխեցաւ ի մատուռն ի նոյն տեղւոջ գերեզմանացն. և ի փոխել նորա ականատես եղաք՝ զի ոչ էր այրեալ կապանք ձեռացն, և ոչ մազ մի ի գլխոյն ծախեալ. որ և նշխարք վկային յերկաքանչիւր տեղիսն առնէր բժշկութիւնս բազումս ի փառս Աստուծոյ։ Վասն զի զփառաւորիչս իւր փառաւորէ Աստուած աստ և ի հանդերձելումն։*

*Բայց եկեսցուք և ի տեսիլ սքանչելի լուսոյն՝ որ երևեցաւ ի վերայ նշխարաց սրբոյ վկային. երևեալ ոչ հաւատացելոց միայն, այլ և անհաւատիցն. ոչ մի անգամ, այլ և երկիցս. և է օրինակ առաջնոյն այսպիսի։*

*Սովոր իսկ էին Պարսիկք գեղջն յաւուրս պահոց իւրեանց բերել աղօթակոչ՝ զի ի գիշերի ձայնիւ զարթուցէ զնոսա յաղօթս, նմանապէս և ի տուընջեան ժողովեսցէ։ Եւ եկեալ մշակն անօրէնութեան՝ գայլն արաբացի ի գեւղն՝ ուր էր հանգստարան սրբոյն Խոստրովու, և յարուցեալ ի գիշերի միում կամեցեալ զուրացութեանն բարբառն հնչեցուցանել առ նոսա, ելանէ ի տեղի մի բարձրաւանդակ և տեսանէ նշան սքանչելի ի վերայ գերեզմանի սուրբ վկային լոյս սաստիկ՝ որ առաւել զանցանէր զլուսաւորութեամբ*

20. ո զքանչելի.

Digitized by Google

*արեգականն. և յահէն ըմբռնեալ ոչ կարէր ամենևին խօսել, այլ անկեալ դնէր կիսամեռ, մինչև ցառաւօտն։ Եւ ի վաղիւն եկեալ գտին զնա, զի կայր անշունչ իբրև զմեռեալ։ Ապա հարցանէին զնա Պարսկաստանեայքն՝ եթէ «Ի գիշերիս յայսմիկ ընդէ՞ր ոչ յարեար և զմեզ յարուցեր. զի վասն այնորիկ կոչեցաք զքեզ՝ զի աղօթս արասցես և զմեզ յորդորեսցես։»*

*Իսկ նա հազիւ ուրեմն ուշաբերեալ կաց պատմեաց զտեսիլ գիշերոյն, և նոքա յոյժ զարմացան և երթեալ պատմեցին դատաւորին։ Եւ դատաւորն սաստեալ ի վերայ նոցա, զի մի յայտնեսցեն զսքանչելի տեսիլն մեծ զոր տեսին։ Եւ առաքէր զմի ոմն ի ծառայից իւրոց, զանխլաբար պատուէր տուեալ՝ զի մի ոք գիտասցէ։ Եւ եկեալ ծառայն ըստ հրամանի դատաւորին հսկէր զգիշերն ամենայն. և տեսանէ ի մէջ գիշերի լոյս համապայծառ ի վերուստ փայլեալ ի վերայ հանդստարանի սրբոյն. և յահի եղեալ և ի դողման, ոչ զօրէր նայել ընդ ճառագայթս լուսոյն՝ որ երևեցաւ. և ի վաղիւն ահիւ և դողութեամբ երթեալ ի քաղաքն՝ պատմեաց զտեսիլն մեծաքանչ և զարմանալի։ Իսկ պիղծ և անօրէն դատաւորն զլանալ կամեցաւ զսքանչելի մեծութիւնն՝ զոր լուաւ ի ծառայէն, նոյնպէս և զառաջինն՝ զոր ի բազմաց լուաւ։*

*Յետ այսորիկ ոմանք յանհաւատից ըստ պատահման հատին զծառն, յորում կապեցաւ սուրբ վկայն, զի այրեսցեն։ «Եւ տեսեալ քահանայի միոյ՝ ետ փոխանակ փայտ յայրել և առ. և զկարծիս առեալ ոչ տային. և պատճառաւ հաւանեցուցանէ՛ր. և ուրախ եւս լինէ՛ր, զի և յառաջ իսկ կամէր և ոչ իշխէր. և այս ի Տեառնէ պատահէր։ Եւ տարեալ եդ ի դաւիթս եկեղեցւոյն և բազում բժշկութիւն առնէր կեղև նորին յառաջ և զկնի հատանելոյն. բազումք և յանհաւատիցն առնուին ի բժշկութիւն։ Զկնի ինչ աւուրց անցանելոյ՝ տեսեալ ի հեռաստանէ հաւատացեալք լոյս*

8. ո ուշայբերեալ. 19. ո զարմանանալի. 29. ո եկեղեցեցւոյն.

իջեալ ի վերայ գաւթին, և եկեալ պատմէին քահանային. և այլք ի հաւատացելոց տեսիլս պատմէին որ մերձ էին յեկեղեցին, եթէ ասէր ի տեսլեան գիշերոյ եթէ «Զիս խաչ ձևացուցեալ օրհնեցէք և անուն դիք սուրբ Ստեփանոս»: Եւ լուեալ զայս քահանայն՝ անյապաղ կատարէր և զկոփուածս փայտին զբաւանդակն առնուին ի բժշկութիւն, որովք ոչ սակաւ բժշկութիւն կատարէր Տէր ի փառս իւր և ի գովութիւն վկային, կուրաց և այլոց ախտից:

Իսկ զզրպարտիչ վկային՝ զկինն պիղծ դատապարտեաց Տէր առաւել ըստ արժանի իւրոյն գործոյ. քանզի ծնաւ ծնունդ այլանդակ, խառն ինչ մարդոյ և գազանի և ի նմին սատակի. որով և ծանուցաւ բազմաց հաւատացելոց և անհաւատից արդարադատութիւնն Աստուծոյ: Եւ այլքն եւս չարաչար կրեցին անցս ազգատոհմ նորուն կնոջ. ոմանք ի դիւէ ըլկեալք և այլք բնաւին բարձեալ եղեն մահուամբ և ոչ մնաց և ոչ ոք յազգատոհմէ նորին:

Կատարեցաւ սուրբ վկայն Քրիստոսի յաշխարհին Առանայ, ի մայրաքաղաքին որ կոչի Գանձակ, ի թուականին ՈԺԶ, յամսեանն Արաց, յերրորդ աւուր, ի գլուխ յիսներեկի պահոց վարդավառին, ի թագաւորութեանն Յունաց Կիռ Մանուիլի և յիշխանութեանն Հայոց Թորոսի, որ էր պատուեալ կեսարոսական պատուով ի թագաւորէն Յունաց, և ի Վրաց Գէորգէ, և յիշխանապետութեանն Հասանայ՝ որդւոյ Վախթանգայ՝ կողմանցն Խաչենոյ, ի հայրապետութեանն Տեառն Գրիգորիսի և Ներսիսի հարազատ եղբարց Հայոց մեծաց, և տանն Աղուանից Տեառն Ստեփանոսի, և Տէր Յոհաննիսի եպիսկոպոսի քաղաքին Գանձակայ, և յիշխանապետութեանն Արևելից Ելտկուզին, և ի թագաւորութեանն Եղեմացւոց և Պարսից Ասլանշահի. իսկ ի մեզ թագաւորելոյ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ, որում վայելեն փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

1. ո քահանանային. 24. ո խաչենոյ. 30. այստեղ նշանակուած չէ Քրիստոնէական թուականը՝ որ է 1167:

Digitized by Google

### Մխիթարայ վարդապետի մականուն կոչեցեալ Գոշ, Ներբողեան ասացեալ ի նոր վկայն կոչեցեալն Խոսրով:

Զուարճանան ժողովուրդք նմանապէս ի յիշատակ կանուխ և անագան վկայից, զի մի է հաւաքումն հետաւորութեան ժամանակին, որ առ Տէր մերն։ Քանզի յանցեալ և ի ներկայ և յապառնի այլայլի, այլ ոչ զտիրապէսն փափագ։ Վասն զի բնաւորապէս և ոչ պատահմամբ զնա ստացեալ ունիմք. ըստ որում ոչ հուր և ոչ սուր և ոչ այլ ինչ ներհակ՝ հատանել զնա ի զանազան կարէ ժամանակի, զի յատացողէ աղաւաղիլն է և արծարծիլն։ Նա և ոչ գիտէ ընտրել երեսս երբ ճոխի և աղքատի, առն և կնոջ, մանկան և ծերոյ, կուսի և երիտասարդի. այլ զիւրն գտեալ արժանի բնակէ և ի նոսին ներգործէ. ապականչօքն զօրանայ և ի խափանիչսն պքանչելի լինի. ի վեր քան զկարիս ամբառնայ մարմնոյ. անհայր ուսուցանէ և անմայր. զմի ևեթ գիտել որ պատճառն է բնաւից. խնդայ ընդ չարչարանս, մեծարէ զվէշտս, կերակրէ նախատանօք, ուրախանայ հալածանօք, ճոխանայ աղքատութեամբ, բերկրի տնանկութեամբ, մեռանի կենդանի, յառնէ մեռեալ, ատէ զաշխարհ, գարչի որ ի նմա, խոկայ ի տուէ, հսկէ ի գիշերի, զարթուցանէ զանձն, հեղու զարտասուս, հաստատի հաւատով, մխիթարի յուսով, զօրանայ սիրով, գոչէ արիապէս և ելանէ նահատակ. պատրաստ զանձն ունի և սպասէ ժամու. հայցէ աղօթիւք պատահիլ պատերազմին, և եթէ մարտ ճակատու ոչ էյէ՝ մարտադիրն նախայօժար պսակէ կամօք. ի դէպ ժամանակի յօրինէ գործօք և կրկնապատիկ հատուցէ վարձս, և եթէ լուեալ հալածիչքն ի նորին լինին զօրութենէ, սակայն յառաջ զարժանիսն ձգէ հանդիսին. վարէ

4. ո ներկեա. 5. ո բնաւորայպես. Գ. Տ. Միրզայեան գրում է բնաւոր այսպէս՝ առանց ծանօթութեան. ո ըզնա. 7. ո ներըհակ. 9. ո ընդրել. 12. ո սքանչելի. 16. ո տնանգութեամբ. 18. ո զարթուցուցանե. 25. ո զօրութենէ.

Digitized by Google

զթագուցեալն իբր հողմով հրոյ զբոց սէրն. պատճառանաւ փոքձանաց նահատակս ցուցանէ, որովք ի խոր զարմանս ձգէ, իբր տունկ ի սատակութենէ չարժեալ հողմոյ։ Եւ որպէս ի հանդերձից օժանդակութեամբ ոմանք այլոյ մերկանան ձեռօք, նմանապէս և ի մարմնոյ նոքա, հակառակօք զհակառակն գործեն նման Տեառն. հալածեալք լինէին ոչ յաշխարհէ միայն, այլ և ի մարմնոյ, զի երանութեանն արժանասցին. ծանեան անփոփոխ զերանութիւնն, որպէս զնորին իսկ զտուողն. վասն այնր և իւրաքանչիւրքն զնոսա ծնան ժամանակ։ Եւ որպէս առաջինքն յիշատակօք նորոգին միշտ, նմանապէս և նոքին պատուելով ընդ առաջինսն առ ի մէնջ փառաւորին տօնիւք. և զոր օրինակ առաջին է չարչարանօք խաչի վկայ Տէր և զհետ նորա միշտ յեկեղեցի լինի խորհուրդ, նորոգ զնոյն ցուցանելով, այսպէս նոքա և հինք արժանացեալք վկայութեան, միով կոչին և զարդարին անուամբ։ Յաղագս որոյ և մեք զմերս կոչեմք պսակաւոր վկայ նոր, և ընդ հինսն մեծարեմք տօնիւ, զԽոստրով ասեմք մանուկ և հանդիսաւոր նահատակ. զարքայանուանն և զկրողն կոչմանն, զերեւելին գաւառաւ և զզանձալին աշխարհաւ, զնշանաւորն և բնակութեամբ. զգեղեցիկն հասակաւ, զառոյգն մարմնով, զպատանին տիօք, զշառաւեղն քաջ յարմատոց բարեաց։ Եւ զի թեպէտ գովութիւն վկայից յերկրէ և ի մարմնոյ զպատճառն ոչ ունի, այլ զի ի միասին նմա ամենայն եկին, յարմարեցաք սակաւուք։ Եւ դարձեալ մերձ զանկաւորն դիցուք. պատուականն յանարգաց, մեծն ի փոքունց, երեւելին յաննշանից, փարթամն յաղքատաց, ճոխն ի խոնարհաց, փառաւորն յանփառից, մեծատունն ի տնանկաց, իմաստունն ի տգիտաց, արին ի հեզգաց, պարկեշտն ի վաւաշոտից, արթունն ի քնէածաց, զուարթունն ի թմրեցելոց, լուսաւորն ի խաւարելոց, անփոփոխն ի ցնդելոց, արդարն յանիրա-

19. Հեղինակը «զարքայանուանն և զկրողն կոչմանն» բառերով ակնարկում է Խոսրով անունը, որը պարսկերեն (خسرو xusrav) նշանակում է արքա։ 25. n զանգաւորն. 29. n վաւաշրից. 31. n ի ցընդելոց.

ւաց, ընդրեալն ի բիւրուց, զօրաւորն ի տկարաց, խրախուսեալն ի միամարտից ծուլից, սպառազէնն ի զենընկեցաց, ծաղիկն ի ձմերանի, ակն ի վիմաց, մարգարիտն յաւազից, բարեբախտիկն ի վատաբախտից, գնողն ագարակին և ի նմա ծածկեցելոյ գանձին, ստացողն անգին մարգարտին, խաչակիրն Քրիստոսի, Նախանձաւորն Տեառն վկայիցն, գտողն ճանապարհին անյայտ բազմաժամանակեայ եղելոյ, աշակերտն Տեառն միամիտ։

Զաս տեսեալ բանսարկուն Նախանձի անգիտանալով զկատարածն. Թոյլ և կոչման տայ շնորհ, զծածկեալն յայտնել զհամբերութիւն. ի ձեռն զհինն առնու զէն չարն, կարծելով նմանապէս յաղթել, ամաչի գնայ ունայն։ Զմի եղ զորոգայթ և յերկուս կարծէր յաղթել. փշրի որոգայթն, դատարկանայ խորհուրդն։ Կինն էր թակարթ և յաղթել կարծէր պոռնկութեամբ և ուրացմամբ. պարտի յայսմ. փոխի յայլ. զրպարտել զնահատակն տայ. հրապարակալուր զիրն առնէ. մատնի և ի բանդ մտանէ. հարցափորձի, խոստմունս բազումս ընդունի, ի վեր քան զբնաւն ելանէ պատրանս, զմի և եթ փութացուցանել, եթէ անպարտ ի զրպարտութեանց է. զի մի տգեղն ծածկիցի անուամբ սքանչելին վկայութիւն. քանզի առաջի զճշմարտութիւն ուրանալ եգին և զկեալ. դիւրապատիր զմանկութեան կարծեն զժամանակ. ներեն զզջանալ. իսկ նա կրթութեան առնու պատճառս զմեղաց աւուրցն. խորհի զբազումս առաքինացեալս մանկունս և վկայեալս. զոր ոչ ուսաւ ի գրոց, ուսաւ հոգւով։ Զմանկունս, ո՞վ դուք, թերևս ի դէպ էր ասել դատաւորին չարի, կարծէք յաղթել յախտից. այդ ձերոց օրինացդ է և ոչ քրիստոնէից. զոր և ոչ յարութիւն առանց հեշտութեան խոստովանիք առանց ախտից և ոչ ծերք ձեր ողջախոհանան և երիտասարդք ձեր պարծանս զհեշտութիւն վարկանին. այլ մեզ մաքրութիւն առաւել պատուի և մահ վասն հաւատոյ տօնի։ Մայր վկայի անվարժ և ան-

2. Ո սրպառազենն. 5. Ո սքտացողն. 30. Ո ողջախոհանան.

տեղեակ հայրն գրոց, հարկաւորեն ստիպեն· «Բանիւք, որդեակ, սաստ և ազատեալ կալ զճշմարտութիւն ուր և կամիս»։

Իսկ Նա ուսեալ հոգւով զհրամանն Տեառն ոչ ուրանալ բանիւ առաջի մարդկան, զի մի առաջի Հօր ուրասցի և Նա, ոչ ընդունի· ի բաց զերեսս դարձուցանէ· սաստէ և ի ձեռաց ոչ կերակրի նոցա։ Եւ եթէ զգրոց նոցա ոչ երկրորդէ, զնոյն զօրութեամբ ցուցանէ· «Զիա՞րդ զձեր ի կորուստ զմնունդ դարձուցանիք· ո՞չ ապաքէն Քրիստոսի հաւատացեալք՝ դուք Նմա և Նորին հաւատոց զիս ընձայեցայք· զիա՞րդ և մոլար մատնէք օրինաց։ Զծնողաց պարտին որդիք ժառանգել զաւանդ· զոր ի ձէնջ ընկալայ, ոչ ուրանամ զհաւատ, զի մի նախատինք ձեզ եղէց։ Եթէ կարծիք ինչ էին մերոց կրօնից, ի դէպ էր խնդրող ճշմարտին լինել· բայց արդ յամենայն՝ ազգաց վկայի աներկբայ և հաստատուն մերս լինել· նաև նոյն ի հալածչացս վկայի և ի խրատն յայտնի· զի ի մահուանէ զերծանել ուսուցանեն, ոչ գչար ինչ թողուլ օրէնս և առնուլ բարի։ Ոչ կարեմ ի սուտ անկանել օրինացն, և տեղի տալ չարախօսացն զձէնջ և մեռանել։ Ամօթ մեծ է ինձ ընդ հասակակիցս, ի հրապարակի նախատել· զիա՞րդ սրտի տարայց՝ խոցման, յորժամ զհաւատացեալ եղբարս յեկեղեցի ժողովեալ տեսանիցեմ և զիս մերժեալ։ Հնազանդիլ ծնողաց խրատու, առաջնից օրէնք ուսուցանեն և ոչ հիւանդաց· նոյն և ի Տեառնէ յայտ է, զի թողուլ զայնպիսի ծնողսն հրամայէ։ Պատուելի էիք ինձ մինչև ցայս վայր· այսուհետև զառաջինն պատուեմ պատճառ զԱստուած։ Հեռի կացէք յինէն՝ որ հեռացուցանել զիս ի Տեառն՝։ խորհիք· ի բաց գնացէք, որ ոչ զզօրութիւն գիտէք պատուիրանաց· զի Նա մարդասիրութեամբ է պատճառ և դուք հարկիւ բնութեամբ· վասն որոյ ամփոփոխ լիցի պատիւն։ Ո՞ւր զնորայն մոռացայց զչարչարանսն վասն մեր։ Ի ձէնջ ի դէպ էր ինձ խրատել ի համբերութիւն, այլ դուք լքանիլ ուսուցանէք։ Զիա՞րդ ոչ մօրն

1· ն ըհայր· 19· ն ըննդ· 30· ն անփոփ·

Digitized by Google

Նմանիս ուխտանց մանգանցն՝ որ առ Մակաբայեցիսն. զի փոխանակ միոյ ուխտն եւս ի մահ երթեալ զօրինակ բազմաց. մինչ չէ՛ր նորա խանդաղատանք և կամ որդխատեաց էր մայր. այլ զի խրատեալ գիտէր յօրինացն, եթէ՝ մահ վասն Աստուծոյ անմահութիւն է։ Եւ թէ առանց դպրութեան զայս ոչ գիտէք, մինչ ի սոսնի ոչ լուայք քառասուն վկայիցն, եթէ զինչ ասաց կամ զի՞նչ գործեաց մանկանն Մեղիտոնի մայր։ Մահ միայն զերեւելիս կարծէք չար, այլ այս պատճառ բարեաց առ Աստուած է. և մեռելութիւն անբերկոյթ հոգւոյ կենաք յաւիտենից մահ է։ Խնայէք յիս իբր որդւոցք, զի մարդ ոչ իմանայք, եթէ չար և ատելութիւն է մեծ՝ ծնողաց զորդւոյ ոչ կամիլ զկորուստ. այլ ընտրել արժան է, զի այս կարծեցեալ կորուստ՝ յաւիտենից է գիւտ, եւ գիւտս այս՝ անվախճան կորուստ։ Ընդէ՞ր զբարին յաչաղէք զիմ նախանձ և ոչ մի ինչ է ծնողաց։ Զայն ինչ ընկալայ, զոր ի ձէնջ ոչ ուսայ. գտի որում ակն ոչ ունէի։ Ընկալայ, որ ի վեր է քան զարժանն իմ. ճանապարհ ցուցաւ ինձ բարի. ի սրտիս գիտութիւնս ազդակէ՝ մի յապաղել. եթէ հեղգամ՝ երբ ապա զսա գտից։ Սիրելի աշակերտաց շնորհս է։ Եթէ կայր յոգի իմ այժմ տենչանք՝ մինչև ցարդ ոչ գիտէի, այժմ բորբոքեցաւ իբր հուր և ոչ տայ ինձ հանգիստ. ծանեայ ճշմարիտ զսէր Տեառն յիս լինել. եթէ ողջակիզաք և պատարագաք հայցել մինչև ցայժմ էի չահակէր, թող թէ բնաւին ոչ երի . . . . . . . տաս

. . . . . . . . . . . . . . . . . . էի

. . . . . . . . . . . . . . . . . . թենէ

2. այստեղ մէկ բառ պակաս. դրինք իբրև ըստ Գ. Տ. Մկրտչեանի. 3. ո խանդաղատանք. 6. ո գրում է գիտեր, ուղղեցինք գիտէք ըստ ուղիղ ընթերցուածի Գ. Տ. Մկրտչեանի. 11. Սկսեալ ոչ իմանայք բառերից, մինչեւ ներքեւեալի վերջը տպագրում ենք Գ. Տ. Մկրտչեանի հրատարակութիւնից, Արարատ, 1897, էջ 39—41. այս մասին տես եւ ներքեւը, էջ 40: Հրատարակիչը նշանակած չէ թէ ձեռագիրը որտեղ յ ձայնը յապաւած կամ է ձայնը եւի է վերածած. ուստի մենք էլ չկարողացանք նշանակել։ Ստորագծեալ տառերը պակաս են եղել բնագրում եւ հրատարակիչը իր կողմից լրացրել է: 12. ո ընտր ...ալ. 24. ո այստեղ վեց տող պակասում. իւրաքանչիւր տողը մօտաւորապէս խառն տառից բաղկացած.

. . . . . . . . . . . . . . . . . . . ձր

. . . . . . . . . . . . . . . . . . դոր

. . . . . . . . . . . . . . . . . բազմաց

կանխաւ պատահեաց, որոց նախանձն մեր ձ էր, և կրթու-թիւն յանձախ, ոչ են զարմանք, այլ այս է հիանալի, զի ոչ զոք տեսի վկայ և զօրացուցիչ, այլ և հակառակ որպէս և դուք։ Թո՛յլ տուք ինձ մեռանել յաղագս Նորա, որ վասն իմ մեռաւ, և չարչարել յաղագս Զարչարեցելոյն. թէպէտ հաւասարել ոչ է ծառայից Տեառն, սակայն զյօժարու-թիւն ցուցանելի է։ Ընդունի, զի բարերար է, և յիւրմե ես յաւելու փառաց. վասն իւր առնէ զիմս, որ առնէ այժմ։ Հաստատէին և զմիտս հաւատացելոց, եթէ մինչ ի կատարած ընդ մեզ է. պատուէ զծառայանս ի ձեռս իմ. ոչ տայ թոյլ մոռանալ զհանդէս վկայութեան. ճշմար-տէ զպատմութիւնս յաղագս նահատակաց. առատ զինքն ցուցանէ և պատրաստ ի բաշխել բարիս։ Մի՛ զայժմուս տեսանիցէք զվիշտս և խռովիցիք, այլ ի կատարած անդր նայիցիք։

Փոխանակ բանդիս՝ դրախտն, և ընդ կապանացս՝ ար-ձակումն ի մեղաց. քաղցրին՝ հացն կենաց, և ծարաւին՝ ջուր մշտաբուխ. ընդ ապականութեան մարմնոյս ծաղկի անապականութիւն, ընդ վախճանելի կենացս՝ անվախճանն։ Եթէ դուք անգիտանայք, յինէն ոչ է ծածկեալ. լուարուք յայտնապէս՝ ոչ պատրիմ։ Զբազում հաստակակիցս տեսի մեռեալ վայրապար. հարկաւոր առաջի կայ մեռանել, ըն-դէր կամաւոր ոչ գործեցից և պսակեցայց։»

Եւ լուեալ զայս գնացին խնդութեամբ և սրտմու-թեամբ՝ երկոքումբ բաժանեալ. յաղթին ի բնութենէ կա-րեաց, սղան դառնապէս առաջի աչաց զմահն տեսանելով որդւոյն սիրելոյ, մխիթարին ի կատարածի՝ ունելք զպա-

24. Ո անգիտանեք. 25. Ո պարտիմ. 26. Արտասացի մեջ ցպրված է վայրա-պար՝ առանց ծանօթութեան. ներադրում եմ թե ձեռագրի վայրապար-ը պետք է այսպես ուղղել՝ իբր հակառակը յաջորդ հարկաւոր բառին: 29. Ո բարձան-եալ.

տիւ վկայից։ Բայց և հալածչացն ցաւին ոգիքն, զի ի մեռեալ զյոյս նոցա ունել ասաց և վկայեաց, եթէ «Կենդանի է Բանն աստուծոյ. կենդանի է և մարմնով, և գալոց է նա դատել զկենդանիս և զմեռեալս, վասն որոյ ոչ ուրանամ և զպատիր ձեր ընդունիմ զբան և հաւանիմ մոլար ձեր օրհնացդ և զհետ գամ հետին մահու, զի այդ է անուն մոլորեցուցչին ձերոյ։»

Եւ զայս լուեալ հատանէ վճիռ դատաւորն քարկոծ լինելոյ։ Եւ պատճառ, զի ամենեքեան հաղորդեսցին արդարոյն մահու և պսակեսցին. և զայս իսկ քարոզն աղաղակէր։ Այլ սակայն խորհուրդ է և այս վկայից, որոց կամ է բազում անգամ վասն Տեառն մեռանել։ Կամօք բազմացն իբրու բազում անգամ մեռանին։ Կապի և ընդ տունկս ի բժշկութիւն ճաշակման տնկոյն առաջնոյ, և ի հաղորդութիւն չարչարեցելոյն ի փայտի։ Ընդունի զքարանցն բազմութիւն նման նախավկային. աղօթէ, թէև ոչ յայտնի, սակայն ի սրտի, ըստ որում տեսանէ Տէր. հաւատալի է, թէ և ոչ առանց վերին տեսչութեան յայնպիսում ժամանակի վկայք լինին, և հաստատէ զայս բանալն երկնից առաջի վկային, այլ ըստ պատշաճի յայտնին կամ ծածկին։ Եւ եթէ նմա այս պատահեաց և մեզ ոչ յայտնեցաւ, Տեառն գիտելի է։ Աւանդէ զհոգին ի ձեռս Աստուծոյ, ննջէ զքուն քաղցրութեան, զուարճանան հրեշտակք, բերկրին սուրբք, ցնծան հաւատացեալք, պարտի բանսարկուն, ամաչեն դևք, զահի հարկանին հալածիչքն, սակայն յայլ յեղանակ փոխին չարժեալք ի չար հոգւոյն։ Ծախի հրով ի նախատինս հաւատացելոց, և զի մի պատուեսցին նշխարք պատուական վկային՝ ընդ հուր անցանի անծախելին՝ նման երից մանկանցն. զի և ո՛չ ի հերան մեր-

1. Ո ի մեռեալ. Տ. Միրզայեան ուղղում է «մեռեալս». բայց ուղիղը ձեռագիրն է. հատուածը պէտք է թարգմանել՝ «սրովբէներ ասաց թէ նոքա իւրանց յոյսը մի մեռեալի վերայ (ի մեռեալ) են դրած»: 6. Գ. Տ. Միրզայեան հետին մահու մեկնում է իբր բառախաղ՝ փոխանակ Մահմեդ=մահու հետ-ի (Արարատ. 1896, էջ 590)։ 12. Ո անկամ. 20. Ո առաջին։ 23. Ո հրչտակք 29. Ո մանգանցն.

ձեցաւ և ոչ զկապանս երկաթ։ Դիտեն պատկառել և տարերք ի կշտամբանս յանդգնելոցն, զի այնմ, որ զհուրն չիջոյց բնութեան, չիջաւ իրաւացի և հուրն. և զի յայտ լիցի, եթէ հուրն հանդերձեալ զարդարս լուսաւորէ և կիզու զմեղաւորս։ Եւ քանզի սուրբք նորա որ ի Տեառնէ արկաւ միշտ բորբոքեալ են, որով և ամենայն շիջանի ի հուր, անմատոյց շիջանելի լինին հրոյ, անշիջանելեաւն ձուլեալք։ Եւ զի յանդ ելեալ մեղմանան գործոցք չարի, բայց չարագոյնք քան զչարսն անյագ են։ Վասն այնորիկ ընդ ամենայն օրինակս անցուցին տանջանաց. ընդ կապանս, ընդ բանդ, ընդ քաղց, և ընդ ծարաւ, ընդ բանս անարգանաց, ընդ խարկոծանս մահու։ Ընդ քարշանս զկնի մահու, ընդ հուր ի կատարածի, հազիւ ապա լռեալ դադարեցին։ Բազում անգամ ի սրբոց մահու հանդարտ .

ի խս . . . . . . . . . . . . . . . .

րք . . . . . . . . . . . . . . . . .

մե . . . . . . . . . . . . . . . .

ան . . . . . . . . . . . . . . . .

ուն . . . . . . . . . . . . . . . .

բար . . . . . . . . . . . . . . . .

զդևս, զի զկնի մահու ոչ յանդգնին։ Նահանջին ապա այնուհետև պատկառեալք յանծախութենէ հրոյ։ Համայն և յադէն չարանախանձիցն կամք։ Ի հանդիստ և զքաջն փոխեն վկայ, զանխլանալով ի քարկոծչացն ծնողքն, ի սեպհականն իւրեանց տեղի ի հասարակ հաւատացելոցն դնելով շիրիմս, անգիտանան զօրինակ . . . . . . . . . .

Սոյն ընդարձակ վկայաբանութիւնը, ինչպէս և նրան յաջորդող ներբողեանը ունի միայն Ո ճառընտիրը՝ (այժմեան վինձակում) էջ 479 բ′—483 բ″, այս վերնագրով. «Վկայութիւն սրբոյն խոստրովու մեծ և փառաւորեալ որ կոչի Նոր Նահատակ, որ վկաեաց

7. Ո ծուլեալք. 15. Ո վեց տող պակաս. 24. Ո ի սեփհականն. 26. Այստեղ վերջանում է ձեռագիրը. մնացեալը կորած է։

Digitized by Google

*յաշխարհն ազատանից ի մայրաքաղաքն որ կոչի գանձակ»: Ձեռագիրը վերջից դժբախտաբար պակաս է և այսպէսով Ներբողեանը կիսատ է մնում: Վկայաբանութիւնը և Ներբողեանը հրատարակած է նախ Գալուստ Տ. Մկրտչեան, Արարատ,* 1896 (*դեկտ.*), *էջ* 590—594 *և* 1897 (*յունվար*), *էջ* 37—41, *մի կարճ յառաջաբանով: Սոյն հրատարակութիւնից երևում է թէ* Ս *ճառընտիրը գոնէ դեռ* 1896-*ի վերջը մի թերթ աւելի ունէր, այն է* 484 *բ.* (*թէև մեծաւ մասամբ պատառատուն և դժուարընթեռնլի*), *որը այժմ կորած է: Ներբողեանի սոյն կորած մասը արտատպել ենք Տ. Մկրտչեանի հրատարակածից, ինչպէս որ վերևը, էջ* 36՝ *ծանօթութեան մէջ էլ նշանակել ենք: Մկրտչեանի յառաջաբանից ենք քաղում նաև հետևեալ տեղեկութիւնները, որոնք արդիւնք են հրատարակչի հետազօտութեանց. «Վկայաբանութիւնը ժամանակակցի գործ է և նոյն ԺԲ դարի ձեռագրից:... ճառընտրի գրութեան թուականը ... է* ՈԼԵ—ՈԼԶ (=1187), *ուրեմն հազիւ քսան տարի նահատակութիւնից յետոյ: Վկայաբանութիւնը նահատակութիւնից միայն մի քանի տարով ուշ է գրուած: Վկայաբանութեան հեղինակը, թէև ոչ ականատես նահատակութեանը, սակայն ականատես է սրբի նշխարների տեղափոխութեանը.«իսկ զկնի անցելոյ երկուց ամաց փոխեցաւ ի մատուռն ի նոյն տեղւոջ գերեզմանացն: Եւ ի փոխել նորա ականատես եղաք, զի ոչ էր այրեալ կապանք ձեռացն և ոչ մազ մի ի գլխոյն ծախեալ»:..... Ներբողի պատմական մասը առնուած է վկայաբանութիւնից և մեզ թւում է հաւանական, որ վկայաբանութեան հեղինակն էլ նոյն ինքն Մխիթար Գոշն է, որն և հաւանականաբար առաջին անգամ կարգեց կատարել Խորով Գանձակեցու տօնախմբութիւնը, ինչպէս այդ երևում է Ներբողեանի ակնարկներից: Շատ հին ժամանակներից սովորութիւն էր, որ վկաների յիշատակի օրը կարդացւում էր նրանց նահատակութեան պատմութիւնը և ապա Ներբողեան կամ գովասանք: Սովորաբար թէ՛ Ներբողեանի և թէ վկայաբանութեան հեղինակը միևնոյն անձն էր լինում. բաւականանանք իբրև օրինակ յիշելով Խորենացու անուամբ մեզ հասած Հռիփ-*

Digitized by Google

սիմեանց պատմութիւնը և նոյն կոյսերի ներբողեանը.....»։

Թուականի համար մեր բնագիրը (տես էջ 31, տող 18—20) տալիս է միայն հետևեալ տեղեկութիւնը. «ի Թուականին ՈԺԶ՝ յամսեանն արաց, յերրորդ աւուր, ի գլուխ յիսներեկի պահոց վարդավառին»։ Այս տեղեկութիւնը՝ որքան որ բաւարար, սակայն բոլորովին պարզ չէ։ «Ի գլուխ» բառով կարելի էր իմանալ պասի թէ՛ սկիզբը և թէ վերջը. բայց այստեղ անշուշտ առաջին նշանակութեամբ պէտք է առնել, որովհետև եթէ երկրորդ նշանակութեամբ վերցնէինք, պէտք կը լինէր հէնց վարդավառը հասկանալ և հետևաբար հեղինակն էլ կ'ասէր վարդավառին և ոչ թէ աւելորդաբանութեամբ «վարդավառի պասի վերջին»։ Այս հաշուով բնագիրը մեզ տուած կը լինի նաև նահատակութեան օրը՝ այն է բշ.։ Արդ՝ ըստ յայսմաւուրաց, այսինքն անշարժ տումարի հաշուով՝ Արացի 3-ը համապատասխանում է Յունվարի 10-ին։ Բայց որովհետև վարդավառի պասի երկուշաբթին շարժւում է յունիսի 22-ից մինչև օգոստոսի 26-ը միայն և չի կարող յունվարի 10-ին պատահել, միանգամայն՝ որովհետև 1167 Թուականի յունվարի 10-ը գալիս է մի երեքշաբթի օր, ուստի չենք կարող ճառընտրի Թուականը անշարժ տոմարով բացատրել։

Այժմ վերցնենք շարժական տոմարը։

Շարժական տոմարի հաշուով ՈԺԶ Թուի նաւասարդի մէկը գալիս է 1167 փետրուարի 8-ին. սրա համեմատ էլ նոյն տարուայ արացի 3-ը (նաւասարդի մէկից մինչև արացի 3-ը՝ լինում է 153 օր) համապատասխանում է հռովմէական Թուի յուլիսի 10-ին։ Արդ՝ 1167 Թուի յուլիսի 10-ը երկուշաբթի էր, համաձայն մեր բնագրին։ Նմանապէս ՈԺԶ=1167 Թուի տարեգիրը լինելով ծ, նոյն տարուայ զատիկը պատահում է ապրիլի 9-ին, վարդավառի կիրակին յուլիսի 16-ին և վարդավառի պասի երկու շաբթին էլ գալիս է յուլիսի 10-ին։ Բոլոր այս պարագաները համապատասխան լինելով բնագրի տեղեկութեանց և իրարի հետ, ընդունում ենք ՈԺԶ արաց Գ=1167 յուլիս 10 երկուշաբթի։

Վկայաբանութիւնը համառօտուած գտնուում է նաև յայսմաւուրքների մէջ. այսպէս՝ A 171 բ″—172 բ′, B 442 ա′—բ′, C 1143—4, D 537 բ′—538 ա″, E 1045″—1046″, G 560 ա′—բ″, H 522 բ″—523 ա″, I 566 ա—567 ա, J 992′—993″, K 529 բ—530 ա, L 459 բ—460 ա, M 548 ա″—բ″, N 524 բ″—525 բ′, O 516 ա″—բ″, P 448 բ″—449 ա″, Q 533 բ″—534 բ″, R 529 բ′—530 ա″, S 555 ա′—բ″, T 539 ա′—բ″, U 513 բ″—514 ա″, V 381 բ′—382 ա′, W 481 ա′—բ″, Y (Ա. հատոր) 259 ա″—260 ա′, Z 402 ա″—բ″, b 584 բ′—585 ա′, c, d և e, բոլորն էլ մարգաց Իէ=յուլիս 3, Բիանորոսի և Սիլուանոսի վկայաբանութիւններից յետոյ։ Իսկ լրացուցիչ սոյն ընդարձակ վկայաբանութեան, առանց յիշեալ 28 յայսմաւուրքների մանր տարբերութիւնները նշանակելու, ներքևում դնում ենք մեր լաւագոյն ձեռագրերից երկուսը, այն է G և A ձեռագրերը, առանձին սիւնակներով և հատուած առ հատուած՝ դէմ առ դէմ. առաջին սիւնակը G ձեռագիրն է, իսկ երկրորդը A ձեռագիրը։ Մնացեալ ձեռագրերը գնում են G-ի հետ, միմիայն աննշան տարբերութիւններով։ Համառօտ վկայաբանութիւնից քաղելով ունին նաև Զամչեան, Գ. 435—6, և Աւգերեան, Վարք սրբոց, հատ. ԺԲ. 219—220, որոնց մէջ սրբի նահատակութեան թուականը դրուած է ՊԽԸ=1399, մարգաց Իէ=յուլիս 3 (ըստ Աւգերեանի, յուլիս 2)։ Հմմտ. նաև Ցայսմ. Ա տպ. էջ 935″—936″, Բ տպ. էջ 639′—″, Գ տպ. հատոր Բ., էջ 5′—″։

### *Յայսմաւուր վկայաբանութիւն սրբոյն Խոսրովու Գանձակեցւոյն.*

Սա այս պատանիս Խոսրով էր ի քաղաքէն Գանձակայ Աղուանից՝ զաւակ քրիստոնեայ ծնողաց, Հայ ազգաւ, հասակաւն պատանի և տեսլեամբն գեղեցիկ։

Եւ էր նոցա դրացի մի պարսիկ՝ որ ունէր ուստերս և դստերս։ Եւ մին յորդւոցն պարսկին ցանկացաւ քեռն իւրոյ և չնացաւ ընդ նմա։ Եւ աղջիկն ցանկայր Խոսրովու և կամէր անկանիլ ընդ նմա։ Եւ Խոսրով ոչ կամեցաւ կգործն պղծութեան։

Եւ յետ այնորիկ յղացաւ աղջիկն յեղբօրէն։ Եւ ի խոշտանգել հօրն զաղջիկն և նա զրպարտեաց զսուրբ մանուկն Խոսրով, զի կամեցաւ այնու հասանիլ ցանկութեանն իւրոյ՝ որ ի վաղուց հետէ ցանկայր աղջիկն պարկեշտ մանկանն՝ դուստրն սատանայի. և ոչ կարաց խաբել զողջախոհ մանուկն զայն. եւ հնարեցաւ այնու կատարել զկամս իւր։ Եւ հայր աղջկանն զեկոյց զայն ամիրային և պարսից հրապարակին, որք կոչեցեալ զԽոսրով հարցանէին։

Եւ նա ասաց. «Քրիստոնէից

### *Յայսմաւուր վկայութիւն սրբոյն Խոսրովու Գանձակեցւոյն *.*

Սուրբ վկայն Քրիստոսի Խոսրով էր ի Գանձակայ՝ ի քաղաքէ Աղուանից, ի քրիստոնեայ ծնողաց. և էր գեղեցիկ տեսլեամբ, պատանի հասակաւ։

Էր նոցա դրացի մի պարսիկ՝ որ ունէր ուստերս և դստերս. և ցանկացեալ մի յորդւոց նորա քեռ իւրում, չնացաւ ընդ նմա։

Եւ իբրև գիտաց հայր նորա թէ յղի է, խոշտանգէր զնա թէ ով գործեաց զայդ. և նա զրպարտեաց զսուրբ մանուկն Խոսրով,

զի ի վաղուց հետէ ցանկայր նմա

և ոչ կարէր խաբել զպարկեշտն, հնարեցաւ դուստրն սատանայի այնու կատարել զկամս իւր։ Եւ իսկոյն մատնեցին զնա դատաւորի քաղաքին։ Եւ նա կշտամբեալ զնա բազում խոշտանգանօք եդ ի բանդի, կամ ուրանալ զՔրիստոս և առնուլ զնա կին, և կամ մեռանել չարաչար։ Իսկ աքանչելի վկայն խոստովանէր զՔրիստոս համարձակապէս և ասէր. «Մեր օրէնս-

* A գանձակեցոյն.

ոչ են այդ օրէնք, այլ Պարսից. զի մեր օրէնսդիրքն մեզ զպարկեշտութիւն քարոզեցին. այդ ձեզ է գործ և ոչ քրիստոնէից» Ընդ որ բարկացեալ՝ հարին զնա և տանջեցին. և ասէին թէ «Տանկացիր և առ զաղջիկն քեզ կին. և թէ ոչ՝ մեռանիս այրմամբ հրոյ» Եւ գանեալ զնա՝ եդին ի բանտի։ Եւ երթային բազում պատգամաւորք յամիրայէն՝ խոստանալով նմա պարգևս և պատիւս, եթէ տանկանայ և առնու զաղջիկն։ Իսկ նա հաստատուն կացեալ ի հաւատս Քրիստոսի՝ ոչ ի սպառնալեացն երկնչէր և ոչ պարգևացն հաւանէր։

Այլ և ծնօղքն նորա գնային առ նա ի բանտն և լալով աղաչէին զնա և ասէին. «Ցանձն առ վայր մի, մինչև գնասցուք յերկիրն Վրաց, և անդ համարձակ պաշտեա զՔրիստոս» Եւ

նա ասաց. «Լաւ է ինձ մեռանիլն բարի անուամբ, քան թէ կեղտ անուն թողուլ յաշխարհի»

Դարձեալ կոչեցին զնա յատեան և կրկին խոստացան նմա բարի առնել. եւ նա ոչ հաւանեցաւ բանից նոցա։ Եւ ապա սպառնացան չար մահուամբ սպանանել. եւ նա ասաց.թէ «Ես պարգևացդ ձեր ոչ հաւանիմ և զՔրիստոս Աստուած ոչ ուրանամ. եւ. պատրաստ եմ մեռանիլ վասն անուան նորա»

Եւ հրամայեաց ամիրայն

զիլրն մեզ պարկեշտութիւն ուսոյց և ողջախոհութիւն։ Այգ* Մահմետի գործ է և նորին հաւանելոցն. անիրաւ զրպարտէք զիս»

Եւ երթեալ ծնօղացն

վատթար խրատ տային նմա. «Ցանձն առ, ասեն, առ վայր մի և զերծիր ի տանջանացն և ի մահուանէ. և ապա երթամք յերկիրն Վրաց և անդ համարձակութեամբ պաշտեա զՔրիստոս» Եւ նա ոչ անսայր բանից նոցա. ասէր. «Ես զՔրիստոս ոչ ուրանամ և պատրաստ եմ ի մեռանել վասն անուան նորա»

Դարձեալ կոչեցին զսուրբն յատեան հրապարակին և խոստացան պարգևս և պատիւս. և նա հաստատուն եկաց** ի հաւատն Քրիստոսի։

Եւ հրամայեաց դատաւորն

* A այտ. ** A էկաց.

Digitized by Google

քարկոծել զնա։ Եւ հանեալ արտաքոյ քաղաքին, կապեցին ի Թթի ծառ մի, եւ սկսան բազմութիւն պարսիցն քարկոծել զնա։ Եւ քարինքն որպէս զտարափ անձրեւաց տեղային ի վերայ

նորա։ Եւ նա այնպէս կատարեցաւ ի Քրիստոս։

Եւ քարշեցին զնա ընդ փողոցն քրիստոնէից և արկին ի հուր, և ոչ այրեցաւ և ոչ մազ մի ի գլխոյ նորա և ոչ կապանքն։ Եւ բարձեալ ծնողացն զսուրբ մարմին տղային և եդին ի գերեզմանս իւրեանց։ Եւ լոյս պայծառ ծագեաց ի վերայ գերեզմանին երկու անգամ՝ վկայ անմեղութեան նորա և սուրբ հաւատոյն։

Եւ զծառն յոր կապեցաւ սուրբն, հատին անօրէնքն և կամէին այրել, զոր ոչ ետ Թոյլ քահանայ մի, այլ ետ գինս և առեալ պայն՝ խաչ ձեւացոյց և օրհնեաց յանուն սրբոյն Խաչրովլաւ։ Ցարմէ բազում բժշկութիւնք կատարին յամենայն նեղեալս ի պէս պէս ցաւոց՝ ի խաչէն և ի գերեզմանէն։

Եւ պիղծ աղջիկն ցնկնաւ զսերմն եղծօրն և ոչ էր ի կերպարանս մարդոյ, այլ խառնակերպ այլանդակ ի մարդոյ և յանասնոյ կերպարանս՝ ի յամօթ և ի նախատինս գործողացն զչարն և ի պարծանս անմեղութեանն Խաչրովլաւ վկային Քրիստոսի։

քարկոծել զնա։ Ապա հանեալ արտաքոյ քաղաքին, կապեցին զԹթենի ծառոյ միոյ և սկսան ամենայն բազմութիւնն* պարսից քարկոծել զնա. և քարինքն իբրև զտարափ** անձրևաց տեղային ի վերայ նորա և պատառ պատառ հատանէին մարմինքն և յերկիր անկանէին. և ջախջախէին ոսկերքն առհասարակ։ Եւ այնպէս ի ձեռն Աստուծոյ աւանդեաց զհոգին իւր։ Եւ հրամայեաց անօրէն դատաւորն քարշել զնա ընդ փողոց քրիստոնէիցն և ապա հրով այրել. և ընկեցեալ ի հուրն ամենևին ոչ այրեցաւ անգամ և ոչ մազ մի ի գլխոյն և ոչ կապանքն։ Եւ բարձեալ ծնողացն զնշխարս սրբոյն, եդին ի գերեզմանս քրիստոնէից. և լոյս սաստիկ ծագեաց ի վերայ գերեզմանին, միանգամ և երկիցս, վկայ անմեղութեան նորա և հաւատոցն։ Եւ զծառն յոր կապեցին զսուրբն, հատին անօրէնքն և կամէին այրել, և քահանայ մի գնեաց

զնա և ձևացոյց խաչ. և բազում բժշկութիւնք'' կատարին ի սրբոյն, ի հիւանդս և ի նեղեալս։

* A բազմութիւնն ** A զտարափս '' A բըժըշկութիւք.

Digitized by Google

# Դ.

## ՅՈՎՍԷՓ ԴՈՒՆՆԵՑԻ

† ՈԺԹ· ամին ի— =1170 հոկտեմբեր 24 ըր.

Յաւուրս անիշխանութեան մերոյ ազգի, ի նուաղեալ ժամանակիս՝ յորում էր թիւ համարու թուականութեանս Հայոց ՈԺ և Թ, յամս աստուածապատիւ և ներանձնեան շնորհազարդեալ Հայրապետին Հայոց տեառն Ներսեսի, և ի թագաւորութեան Վրաց Գէորգեայ, յորում ժամանակի բռնանայր հարստահարութիւնն Սկիւթացւոց և մեծապէս չարչարանօք նեղեալ լինէին ազգք քրիստոնէից ազգի ազգի անիրաւութեամբ յամբարիշտ և յանօրէն ազգէն Թուրքաց և առաւելապէս ես ի ժամանակս՝ մեծախրոխտ և յաղթող ի մարտ պատերազմի և մեծիմաց ի հնարս հայթայթանաց անօրէն օրէնսդրին իւրեանց՝ մեծահարկի և անուանի եղեալ յազգս իւրեանց ամիրապետն մեծ՝ կոչեցեալն Ելտկուզ։ Սա բռնացեալ տիրեաց բազում աշխարհաց, այր բարեմիտ եւ խաղաղարար. և յաւուրս սորա բազում խաղաղութիւն եղև աշխարհաց։

Իսկ որք անհնազանդ էին կամաց նորա, նուաճել ջանայր ընդ իշխանութեամբ իւր. և յոլովք մարտիրոսական հանդիսիւ չարչարեալք ի ձեռաց նորա, մեռան վասն սիրոյն Քրիստոսի. ընդ որս էր և այս ճշմարիտ վկայ Բանին Աստուծոյ, յաղագս որոյ պատմեմքս իսկ։

1. Ստորագծեալ տառերը չկային բնագրի մէջ եւ մեզնից են։ Նմանապէս ձեռագիրը Է-ի տեղ միշտ Ե է գրում, որը մենք փոխել ենք. մի քանի տեղ միայն ձեռագիրը Է տառը պահել է, որը ծանօթութեան մէջ նշանակում ենք։

Արդ պարտ է մեզ նախ գիտել և զայն թէ ուստի՞ սա կամ յորմէ՞ ազգէ եկեալ յաշխարհս մեր՝ զայսպիսի նահատակութիւնս կրեաց։

Այր ոմն Սեւուշ կոչեցեալ՝ ազգաւ պարսիկ՝ հաստուածեալ յազգէ իւրմէ, բնակէ ի գիւղ մի Նորաշէնք կոչեցեալ, որ է ի Թուրբար դաշտի, ի սահմանս Կոտայից նահանգի, մերձ առ գետն Հուրաստան, ընդ իշխանութեամբ Խոստրովակերտ քաղաքին՝ որ այժմ կոչի Դուին. որ յարքունս հասեալ մանկան միոյ յորդւոց սորա՝ ի տիս համբակութեան անուանէր զանուն նորա Բուպագր. և տայ զնա ի վարժանս, զի ուսցի զուսումն դենին իւրեանց։ Եւ նորա կացեալ անդ աւուրս բազումս՝ տեսանէր զգործս զաղրութեան և այլանդակութեան. և գարշեալ ի նոցանէ՝ փախստական լինէր անդէն ի տունս իւրեանց։ Եւ յայնմհետէ թերացեալ գոյր ի դենէ հարց իւրոց և մնանէր ի մէջ քրիստոնէից. և վարժէր ոչ իբրև զմանուկ սիրելով զթատերաց խաղս կամ զպարս գինարբուաց, այլ ի բաց փախչէր ի նոցանէ, գիտելով սնոտի և ունայն զայն և երգս սատանայականս։ Եւ իբրև հասանէր ի տիս աւսարդական հասակին, վերնական ձրիւք ազդմամբ սուրբ Հոգւոյն, փափագմամբ մեծաւ և ջերմեռանդն ըղձիւք տենչայր կարգի քրիստոնէից՝ տեսանելով օր ըստ օրէ ծաղկեալ բարեպաշտութեամբ։ Նաև ի քրիստոսասէր արանց խրատէր և վարժէր և ուսանէր զկարգ քրիստոնէից։ Եւս առաւել յառնէ միոջէ բարեպաշտէ Սարգիս կոչեցեալ՝ որ կայր ի տունս նոցա մշակաբար։ Քանզի նա եղև պատճառ դարձի նորա և կենաց։ Եւ ինքն հնազանդ և հլու էր ամենայն ասացելոց նորա, իբրև զերկիր՝ որ բուսուցանէ զսերմանեալն ի նմա։

Եւ ցանկայր հասանել կարգի քրիստոնէից՝ թողլով զհայրենական դենսն՝ զոր ունէր։ Եւ աւուրս բազումս այնպէս կացեալ, ոչ կարէր ժուժել եռանդման հոգւոյն՝ որ

5. ռ յազգէ։

եւայր ի նմա վերնական շնորհք. քանզի կեալ ընդ ծնօղս իւր եւ պաշտել զհաւատս քրիստոնէից՝ խոստովանելով զՔրիստոս Աստուած եւ որդի Աստուծոյ, ոչ իշխէր, գիտելով զի անհնար էր նմա զայն առնել. այլ ի միտ եդեալ գնալ հեռանալ յաշխարհ հեռաւոր, պանդխտանալ անդ եւ պաշտել զհաւատս ճշմարիտս եւ դաւանել յայտնապէս զՔրիստոս՝ Աստուած ճշմարիտ եւ որդի Աստուծոյ։ Եւ ելեալ ի տանէն իւրեանց դատարկաձեռն եւ ունայն յամենայն ընչից, միայն զՔրիստոս առնելով յոյս եւ տեղի ապաւինի. զմտաւ ածեալ զայն՝ թէ Մերկ եկաք յաշխարհ եւ մերկանդամ անդրէն դառնալոց եմք. եւ եթէ Ունիմք կերակուր եւ հանդերձ՝ եւ այնու շատասցուք։

Երթայ այնուհետեւ ի յաշխարհն Վասպուրական, ի Տոսպ գաւառ, ի գիւղն Առեստոյ, յորում մանր աղձկունքն ելանեն. եւ անտի հասանէ ի դաշտն Բաղեշից՝ որ է մերձ յանառիկ դղեակն՝ որ կոչի Ամուկ։ Հայր նորա հետամուտ եղեալ հասանէ յայնմ տեղւոջ, յաղթմանէ չարին՝ որ ոչ կամի զփրկութիւն մարդկան, այլ զկորուստ։ Եւ բազում ողոքական եւ աղերսալի բանիւք դարձուցանէր զնա խաբմամբ, ասելով. «Եկ, որդեակ, դարձցուք ի տուն մեր եւ դու կեաց որպէս կամ է քո. եւ մի տարաշխարհիկ եւ օտարամահ լինիր. եւ մի զրկեր զմեզ ի տեսութենէդ քումմէ։»

Եւ նորա պարզմտութեամբ հաւատացեալ բանի նորա, կարծելով ճշմարիտ գոլ զասացեալսն, դառնայ ընդ նմա. եւ եկեալ ի տունս իւրեանց՝ զպատրուակեալն վասն նորա չար խորհուրդ յայտնէր եւ դնէր շղթայս երկաթիս յոտս եւ ի ձեռս նորա. զի էր այր չար, եւ պնդագոյնս ի կրօնս դենին իւրեանց։ Ապա կոչէ զմոլար օրինացն իւրեանց զառաջնորդս, զի թերեւս հնար գտցեն դարձուցանել զնա ի դենս իւրեանց։

4. Ո նմայ. 11. Տես Յոհ. Ա. 21. | Ո եթէ. 12. Տես Ա. Տիմ. Զ. 8. 13. Ո վասպուրական. 14. Ո ի գեաղն. | մանր աղձկունքն՝ Գ. Տ. Մխրչեան, Արարատ, 1897, էջ 41 կարդում է մանրաղ ձկունքն (մանրաղ մեկնելով մանր եւ աղի) եւ կամ փոխում է տառերը ձկունքն: Աղձուկն բառը համարում եմ «աղած ձուկ». հմմտ. Արեւմտեան գաւառների աղկեր բառը՝ «աղած ձուկ» նշանակութեամբ: 15. Ո անդի. 21. Ո է. 27. Ո նորայ.

Digitized by Google

Եւ նոքա բազում ողոքական բանս խօսէին ասելով. «Որդեակ, մի թողուր զուղիղ դենս մեր և լինիր նախատինք և ծաղանք ազգիս մերում։ Եւ մի տար տարապարտուց հեղուլ զարիւն քո և մի թողուր զպատգամաւորն մեր՝ որ զայս բարութիւն շնորհեալ է մեզ և անդ զդրախտին վայելչութիւնն։ Քանզի ամենեցուն մեք տիրեմք և բռնութիւն մեր զօրացեալ է ի վերայ ամենեցուն։ Մի լսեր քրիստոնէիցն՝ որ կամին կորուսանել զքեզ. յիշեա՛ զգութ ծնողաց քոց. յիշեա՛ զքորս և զեղբարս քո, զի դեռ մանուկ ես և չես ծանծրացեալ վայելչութեամբ աշխարհիս»։

Իսկ նորա պատասխանեալ ասէ. «Զեմ անիմաստ՝ թէպէտ և մանուկ եմ. զի Դանիէլ երկոտասան ամաց գոլով զծերս յանդիմանեաց. և Յովսէփ ի նոյն տիս, իմաստութեամբ իւրով տիրեաց ամենայն իշխանութեան Փարաւոնի։ Եւ քան զձեզ ես տեղեկագոյն եմ ձերոց առասպելաբանութեանցդ, զի սուտ և սնոտիք են։»

Եւ նոքա ասեն ցնա. «Մի փոխելանիր և նման մանկանց բարբառեր, զի չես իմաստուն և հանճարեղ քան զառաջնորդս մեր, որք զայս կարգ օրինաց եդուն մեզ։»

Իսկ երանելին ասէ ցնոսա. «Ես ի մանկութեան տիսն իմում կացեալ եմ յուսումն դպրութեան ձերոյ. և իբրև տեսի զվարդապետս օրինաց ձերոց ի գործս աղտեղիս զազրութեան, փախեայ ի նոցանէ. արդ յայսպիսի կրօնս մուծանէք զիս. չեմ լսելոց կորստական խրատուցդ ձերոց։»

Իբրև գիտացին նոքա զյամառ կամս նորա, և թէ չէ լսելոց բանիցն նոցա, կամեցան ջուրս յուռթել և տալ նմա ըմպել. թերևս յիմարեալ դարձցի։ Եւ նորա կնքեալ նշանաւ խաչին, ոչինչ ազդէր նմա։

Յայնժամ հայր իւր և եղբարքն բրածեծս առնէին

5. n է. 6. n վայելչութին. 21. n ցնոսայ. 24. n ի նոցանէ. 29. n ընբել. 30. n ազդեր.



Digitized by Google

զնա և բազում բանս նախատանաց խօսէին և ասէին. «Մի՛ լինիր կորուստ անձին քո և մեզ»։ Եւ նա ժուժկալեալ տանէր համբերութեամբ բազմաւ՝ ունելով զյոյս իւր առ Աստուած։ Եւ նոքա նովին կապանօք պահէին զնա աւուրս բազումս։

Եւ իբրև ոչինչ գտանէր ելս իրացն, յայնժամ ոմանք ի մերձաւոր սիրելեաց իւրոց ի տգէտ քահանայից, ասեն ցնա՝ թէ «Վերին երեսօք յանձն առ զկամս դոցա կատարել և արձակել յայդպիսի կապանաց. և երթ ուր և կամիս կրօնաւորեա զկրօնս քրիստոնէից»։ Եւ նորա ճշմարիտ կարծեցեալ զբանս նոցա՝ յանձն առ կատարել զկամս նոցա և դառնալ յառաջին հաւատն՝ զոր ունէր։

Եւ նոքա ուրախացեալ արձակեցին զնա. և իբրև աւուրք ինչ անցին, յիշեաց զդաւանութիւն ուխտին՝ զոր յառաջին ընկալեալ էր, թէ ընդէր խաբեցայ իբրև զպարզամիտ ոք։ Եւ ելեալ գաղտագողի գնայ ի գաւառն Ծաղագայ, որ է Բջնի, ի վանս Իշխանի, որ է ի մէջ երկուց լերանց զայս բարձրագունից՝ պարփակեալ անտառախիտ ծառօք, առ այր ոմն միանձնացեալ՝ որ առաւել փայլէր յաշխարհիս մերում, մաքուր վարուք, ճգնաւորական հանդիսիւ, քահանայական շնորհիւ զարդարեալ, Սարգիս կոչեցեալ, խրատ իմն գտանել ի նմանէ, եթէ որպէս վարեսցէ զկեանս իւր և կամ ուր երթեալ դադարեսցէ։ Եւ ուսեալ ի նմանէ, երթայ այնուհետև ի գաւառն Սևորդեաց, ի գերադրական և ի հռչակաւոր ուխտն ի Հաղբատ և ի Սանահինն։ Եւ անդ կեայր ճշմարիտ հաւատով անուանելով զանուն իւր Յովսէփ։ Գրէ առ ծնողս իւր և յայտնի առնէ զհաւատն՝ զոր ունէր առ Քրիստոս, ասելով թէ «Ես քրիստոնեայ եմ»։

Եւ կեցեալ անդ ամս երկուս՝ յոյժ տառապանօք և նեղութեամբ անցուցանէր զանցաւոր կենցաղս, ոչ ունելով թոշակս մարմնականս և հանդերձս։ Եւ որպէս է անգթութիւն և անցաւակցութիւն ազգիս մերում, զի ոչ գթանք գորովալի

22. ո եթէ. 28. ո քրիստոնիա.

Digitized by Google

*գթով յայնպիսիսն և ոչ խնամ տանիւք հոգևորին և մարմնաւորին, սոյնպէս և սա անտես լեալ ի նոցանէ և ոչ ողորմութիւն գտեալ. քանզի այսպէս ասէին. «Միթէ պարծանք մեր են դարձ ձեր յայս կրօնս»։ Եւ թուի ինձ թէ և այս ևս ի չարէն և ի բարիատեացն սատանայէ լինէր, զի նեղեսցի և դարձցի յետս։*

*Եւ նորա բազում ժուժկալութեամբ տարեալ սովու և մերկութեան և այլ անհնարին անհանգստութեան. զի մանուկ գոլով տիովք և անսովոր այնպիսի կրից, թեպէտ և այս ամենայն գայր ի վերայ նորա, այլ նա ոչ նեղասրտեալ ձանձրանայր. և ոչ եղանէր տրտունջ ի բերան նորա, սակս ճշմարիտ և ջերմեռանդն սիրոյն՝ զոր ունէր առ Քրիստոս։ Դիտելով թէ կեանքս այս սնոտի է և անցաւոր, անզրաւականին ցանկայր և յաւիտենականին, լսելով օր ըստ օրէ զվարս սրբոցն և զճգնութիւն նահատակացն։ Նաև զայս ևս լսէր յարանց գիտնականաց՝ թէ «Երթ ի տեղին՝ ուր յետոյ ուրացող եղեր և անդ հաստատեա զհաւատսդ զոր ունիս»։*

*Երթայ այնուհետև ի վանս Մակարու, որ է նոյն գաւառ Սևորդեաց, զի ի պատմագրաց միենոյն կոչին սոքա. և անդ ևս չգտեալ հանգիստ, զի հաց անգամ չուտէին ընդ նմա՝ իբրև զխաբեբայ համարեալ։*

*Ապա դէմ եդեալ գայ ի գաւառն Շիրակ, ի վանս Հառիճոյ՝ որ է յոտն Արագածոյ՝ ի հիւսիսոյ կողմանէ, յորում էին արք երկիւղածք և պատուիրանապահք յոյժ, կամեցեալ կեալ անդ. և բարիատեացն չար և զնոսա գրգռեաց. քանզի ասէին ցնա. «Մի կար աստ, այլ երթ, գնա ի մէնջ, զի մի փնասեսցուք»։*

*Ապա գայ հասանէ յաշխարհն Հայոց՝ յԱյրարատ գաւառս, ի Սաղմոսավանս, որ է յոտն Արագածու՝ ի խորաձորին՝ ընդ որ Քասաղ գետ հոսի, խոռոջացեալ ահագնա-*

8. n անհանկստութե. 17. n զհաւատսս. 21. n հանկիստ. | n անկամ. 24. n հառիճառ. | n իւհիւսիւսո.

ձայն թնդմամբ, մերձ առ մեծ բլուրն Տրիչեայ։ Եւ բնակիչք տեղւոյն սիրապէս ընկալեալ, այլ ահաբեկ եղեալ ասեն գնալ, «զի մի կորիցուք դու և մեք յազգէ քումմէ յայլասեռից»։ Եւ անդ ևս չգտեալ հանգիստ, քանզի բանսարկուն չար և անդր ևս հասանէր յարուցանել հալածանս նմա։ Զի և սա երկրորդ Վահան երևեցաւ յաւուրս մեր։ Ապա իջանէ ի մենաստանն մեծ՝ Յոհաննու կոչեցեալ վանս, որ է նոյն Ոտն Արագածու՝ ի վերայ Քասաղ գետոյ։ Եւ խորհուրդ իմն գեղեցիկ ի վերին տուչութենէ անտի զմտաւ ածէր՝ երթալ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, տեսանել զտեղի ծննդեանն Քրիստոսի և զխաչելութեանն և զյարութեանն և զայլ ևս սրբութեանցն, և մխիթարել և լուսաւորիլ։

Եւ երթեալ նախ ի լեառն Սուկաւեթ, զսուրբ նահատակսն և զճգնաւորսն զայնոսիկ բարեխօս ինքեան և օգնական ճանապարհին իւրում ունել։

Ապա երթեալ զփափագ ցանկութեան իւրոյ լնոյր, ոչինչ ունելով ուրով զպէտս վճարէր, բայց զտուիչն ամենայն բարեաց։ Եւ իբրև դառնայր, զմտաւ ածէր զայս ի վերին խնամոց անտի, թէ «Չեմ կատարեալ ի հաւատս՝ եթէ ոչ երթեալ ի տեղի ուրացութեանն՝ անդ խոստովանեցից յայտնապէս զՔրիստոս Աստուած և որդի Աստուծոյ»։

Եւ իբրև եկն ի գիւղն Նորաշէնք կոչեցեալ՝ ի տունն իւրեանց՝ ի ժամ գիշերին, և հայր իւր մեռեալ էր։ Իբրև տեսին զնա մայր իւր և եղբարքն՝ զարմացան, զահի հարան և ասեն. «Որդին մեր է Բուպաքր»։ Եւ նա ասէ. «Չեմ Բուպաքր, այլ Յովսէփ. ճշմարիտ քրիստոնեայ եմ և քրիստոսունակ և խոստովանող նորին»։ Եւ նոքա ասեն ցնա. «Այդպիսի հաւատով գոլով քո՝ ընդէր թաքնաբար մտեր այսր. զի լուիցեն ազգք մեր և կորուսցեն զքեզ հանդերձ մեօք. արդ՝ գնա յանապատ տեղիս և կեաց անդ նովին հաւատովդ, և մեք հոգասցուք զպէտս քո

1. ո թնամամբ. 20. ո անդի. 23. ո գեւղն.

մարմնականս։» Իսկ նորա պատասխանեալ ասէ. «Ոչ կացից թաքնաբար, այլ զհաւատն՝ զոր ի սմին տեղւոջ ուսուցեալ գտայ, յայտնապէս առաջի ամենեցուն յանձն առից. կամ մեռայց, կամ կեցից Աստուծով, զի վասն այնորիկ եկեալ եմ։»

Իսկ նոքա կոչեն զքահանայ ոմն Սարգիս՝ զի հաւանեցուսցէ զնա գնալ ուրեք. և նորա բազում բանս խօսեցեալ նմա, ասելով թէ «Ոչ խնդրէ զայդ ի քէն Աստուած, և ոչ ոք ի մարդկանէ մեղադիր լինի այդմ։» Իսկ նա ոչ առնոյր յանձն ասելով. «Չեմ լսելոց բանից ձերոց։» Ապա եղբայր նորա երկուցեալ ազդ առնէ վերակացուի գեղջն, եթէ «Եղբայր իմ՝ որ ապստամբեալ գնաց ի մէնջ, արդ եկեալ է կրօնաւոր ձևով և քրիստոնեայ կերպիւ։»

Իսկ նորա կալեալ զնա դնէ ի տան բանդին, ազդ առնելով գլխաւորի գեղջն՝ որ էր ի Դուին քաղաքի, որում անուն Սրջահան կոչեն։ Եւ նորա եկեալ փութանակի ի գեւղն յայն, նստեալ ի տան քրիստոնէի, կոչէ զնա առ ինքն։ Եւ իբրև ածին զնա զառաջեաւ, նշան տէրունական խաչին կանգնեալ կայր ի տանն յայնմիկ. իսկ նա երիս ծունր կրկնեալ և ապա ասէ ցնա. «Ամիրայ, բարի եկիր, խաղաղութիւն ընդ այն.» (զի էր այր չարաբարոյ և ժանդ)։ Ասէ ցնա. «Ընդէ՞ր ոչ նախ ինձ երկրպագեցեր։» Եւ նա ասէ ցնա. «Վասն զի քրիստոնեայ եմ և քրիստոնէին այնպէս պարտ է առնել։» Ասէ բռնաւորն. «Ընդէ՞ր թողեր զհայրենի դենն քո և մոլորեալ եղեր։»

Իսկ Յովսէփ բացեալ զբերան իւր ասէ. «Ո՛չ եմ մոլորեալ, և ոչ եմ թողեալ զհայրենի հաւատն. այլ ի մոլորութենէ դարձայ և զհաւատն հայրենի զոր ոչ ունէի՝ գտի։ Արդ՝ առաջի քո եմ. զոր ինչ կամ է քո, արա։»

Իսկ նորա ընդ գինիս մտեալ զգիշերն ամենայն և գինեղինեալ արբեցութեամբ՝ կոչէ զնա առ ինքն. և

1. n ասէ. 4. n այ. 11, 14. n ասդ. 19. n կանկնեալ. 28. n ի մոլորութէնէ.

*սուսեր մերկացուցեալ կամեցեալ սպանանել զնա։ Ապա այգ լինէր գեղջն և նոքա մեծաձայն ճչիւք անդր հասանէին. և բազում ազերսանօք աղաչէին զնա թէ մի այդպիսի արիւն հեղուլ ի միջի մերում և մի զբարկութիւն Տեառն շարժել ի վերայ մեր։ Եւ հազիւ դադարեցուցանէին զնա։*

*Ապա ի վաղիւ անդր դնէ անուր ի պարանոց նորա՝ տանել ի քաղաքն Դուին։ Եւ իբրև եհաս ի Նորագաւիթ գեղջն, քրիստոնեայքն եկեալ ընդ առաջ նորա, արգելին զնա յայնմ գիշերի, թերևս զերծուցեն զնա. և խոստանան տալ զգին նորա և թողուլ զնա. և նա բանադատեալ ի նոցանէ՝ յանձն առնոյր։ Եւ նովին կապանօք տանին զնա ի Դուին և դնէ զնա ի բանդի՝ աւուրս ութ. զի էր ամիսն Արաց՝ յորում արեգակն տապէր զամենայն մնեղիս։ Ապա երթեալ քրիստոնէիցն՝ տան զկէս գնոց նորա՝ հանեալ զնա ի տանէ բանտին։ Իսկ սուրբն ոչ կամեցեալ՝ ասէ ցնոսա. «Մի՛ գնէք զիս, զի զարիւն իմ ետու փոխանակ արեանն Քրիստոսի. մի՛ արգելուք զիս ի գեղեցիկ առաջարկութենէս և մի՛ զինչս քրիստոնէից տայք ի գինս իմ։»*

*Իսկ նոցա ոչ լուեալ նմա՝ արձակեցին զնա. և իբրև աւուրք ինչ անցին, կամեցան շրջեցուցանել զնա և զգինս նորա ժողովել։ Իսկ սուրբն ոչ կամեցեալ՝ ասէ ցնոսա. «Ընդէ՞ր զրկէք զքրիստոնեայսդ՝ տալով ի գինս իմ. զի ես ոչ վասն այդորիկ եկի, այլ զի իմով արեամբս գնեցից զարքայութիւնն Աստուծոյ։» Եւ երթայ դարձեալ ի տուն բանդին՝ ուր յառաջն էր, ազդ առնելով Սրջահանին այն։ Եւ նոքա ասեն ցնա, թէ «Բուպաքր կայ առ դուրս։» Իսկ նորա եկեալ արտաքս՝ հարցանէր ցնա. «Վասն է՞ր եկեալ ես այսր։» Նա պատասխանեալ ասէ. «Եթէ կամ է քեզ, թող զիս նովին հաւատովս և մի՛ զրկեր զաղքատս վասն իմ։ Ապա թէ ոչ՝ զոր ինչ կամ է քո, արա։» Եւ նորա սրտմտեալ յոյժ իբրև զչար գազան, բրածեծ արարեալ զնա չարաչար գանիւ,*

2. ռ տող. 13. ռ դնէ. 26. ռ տող.

դնէ կոճեղ ի յոտս նորա և շղթայս երկաթիս ի պարանոց նորա, պահելով ի տան բանդին։ Եւ վարժեալ երանելի նահատակն զինքն աղօթիւք և պահօք անդուլթեան, ոչինչ ճաշակելով ի տունս նոցա. այլ և բազում բանիւք նախատէր զնոսա և զաստուածս նոցա, առասպել վարկանելով զկրօնս նոցա։ Իսկ նոցա զչարեալ՝ երկիցս ծակեցին զքիթս նորա և անուր անցուցեալ շրջեցուցանէին ընդ դուրս իւրեանց՝ նման ուղտու՝ նովին կապանօք։ Եւ նա գոհանալով զՏեառնէ, տանէր ժուժկալութեամբ։ Եւ կացեալ յայնմ բանդի ամիսս երկու, կին ոմն հաւատացեալ տանէր նմա աւուրն նկանակ մի. զկէս նորա ուտէր և զայլն տայր ցնա ասելով. «Տուր զայդ յաղքատս»։ Եւ այնպէս մեծաւ տառապանօք անցուցանէր զաւուրսն զայն։

Եւ իբրև եկն ամիրապետն մեծ Աթապակ կոչեցեալ ի յոստանն մեծ Հայոց ի Դուին քաղաք, և բնակէր մերձ ի նա, ի տեղի մի Խորու կոչեցեալ՝ ամբոխաստաստ բազմութեամբ, և խաժամուժ ժողովօք։ Յայնժամ Սրջահանն ծանուցանէ ամիրապետին մեծի վասն նորա. և նա հրամայէ առաջի իւր տանել։ Եւ դնեն զնա ի գրաստու, զի յոյժ ներքևեալ գոյր ի չարաչար կրից անտի։ Եւ իբրև ածին կացուցին զնա առաջի, և նա սաղմոսէր. «Աստուած, յօգնել ինձ նայեաց և Տէր, յընկերել ինձ փութա. առ քեզ, Տէր, Տէր, են աչք իմ, ի քեզ յուսացայ։» Եւ կուտեցաւ ամենայն ամբոխ զօրուն ի տեղին յայն՝ տեսանել զնահատակութիւն սրբոյն։

Ասէ ցնա ամիրապետն մեծ. «Հայր և մայր քո պարսիկ գոն և պաշտօնեայ մերոյ պատուամաւորին. դու յումէ հարկեալ կամ նեղեալ յայդպիսի հաւատս դարձար կամ զայդպիսի ձև զգեցար. արդ, լո՛ւր ինձ և մի՛ ընդդիմանար հրամանաց իմոց։»

Իսկ նա ոչինչ տայր պատասխանի, այլ միայն զնշանն տերունական անդադար դրոշմէր յերեսս իւր։

20. Ո անտի. 21. Ո յաւգնեալ. 23. Տես Սղ. ԿԹ. 2 , ՃԽ. 8. 26. Ո զոյն. 28. Ո ազեցար.

Digitized by Google

Ասէ ամիրապետն մեծ. «Զահի հարեալ երկեաւ ի մէնջ առաջի իմ.» Իսկ Սրջահանն՝ որ պահէր զնա, ասէ ցամիրապետն. «Ոչ եթէ երկեաւ, այլ չառնէ արժանի պատասխանւոյ. զի բազում աւուրք են որ կայ առ իս ի բանդի և ի չարչարանս, և ոչինչ լուայ ես ի դմանէ բանս թուլութեան. հրամայեա սպանանել։»

Ապա հրամայէ դարձուցանել և բերել զնա առաջի իւր։ Ասէ ցնա դարձեալ ամիրապետն. «Մի՛ կար յայդպիսի կամս և տարապարտ մեռանիր. հաւանեա՛ ինձ, և ես տաց զգեղն քո հայրենի ի ժառանգութիւն քեզ։» Եւ դնէ առաջի նորա ոսկի բազում։ Իսկ երանելին Ցովսէփ ասէ ցնա. «Ես ո՛չ յումեքէ բռնադատեալ և ոչ հարկեալ, այլ ինքնին կամօք իմովք եկի ի տեղիս յայս. ոսկիդ այդ և մեծութիւն զոր խոստանաս, արհամարհեալ է առաջի իմ. եթէ զամենայն աշխարհ և զգաւառ՝ որ է ընդ իշխանութեամբ քո՝ տաս ինձ, չեմ փոխանակելոյ ընդ այսմ հաւատոյ, զոր ունիմ։ Եթէ քաղցր են կամք քո առ իս, թող զիս նովին հաւատովքս. ապա թէ ոչ՝ զոսկիդ զայդ տուր սպանողաց իմոց։»

Ասէ ամիրապետն մեծ. «Ամենեքեան հրամանաց իմոց հնազանդ են. և դու ընդդիմանիս. և նախատես զառաջնորդն մեր։»

Պատասխանի ետ սուրբն և ասէ ցնա. «Իմ երթեալ է յԵրուսաղէմ և տեսեալ զտեղի ծննդեանն և զտեղի չարչարանացն և զյարութեանն և զհամբարձմանն և զայլ նահապետացն տեղի և զգերեզմանս։ Իսկ զպատգամաւորին ձերոյ ոչ ուրեք տեսի կամ գտի։»

Ապա հրամայէ բազմութեան այլասեռ զօրուն՝ որ շրջափակեալ շուրջ կային զնովաւ, սպանանել զնա և քարկոծել։ Եւ նոքա իբրև զգազան արիւնարբու մոմռեալ՝ կրճտէին զատամունս իւրեանց։ Եւ կալեալ զձեռանէ նորա

2. n ասէ. 10. n ժառանկութի. 15. n է. 17. n զոր զոր. 24. n ծնընդեանն.

տատի և անտի ընթացուցանէին ի տեղի սպանմանն։ Իսկ երանելի վկայն ոչ դադարէր յասելոյ զաղօթս զայս. «Վասն քո մեռանիմք զօրհանապազ, վասն քո հեղում զարիւն իմ՝ որպէս Դու վասն իմ։» Եւ նոքա հարկանէին զնա, ոմն ձեռամբ, ոմն փայտիւ, և բազում բանս նախատանաց ասէին։ Իսկ նա ասէր. «Տէր, մի՛ համարիր սոցա մեղս, զի ոչ գիտեն զինչ խօսին։»

Եւ եղբայր նորա անկեալ յոտս նորա, բազում աղաչանօք և արտասուօք ասելով. «Մի՛ տար սպանանել զքեզ. առ այժմ յանձն առ զհրամանս դոցա կատարել և յետոյ որպէս կամ է քո կեացս։» Իսկ սուրբն խոժոռեալ ասէ ցեղբայր իւր. «Երթ յետս. հակառակ իմ ես. մի՛ զրկեր զիս ի մարտիրոսական նահատակութենէս։ Զի Փրկիչն հրամայեաց թէ՝ Որ ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացայց և ես զնա առաջի Հօր իմոյ՝ որ յերկինս է։»

Եւ իբրև սակաւ հեռացուցին, խաղխանն այն՝ որ պնդեալ ունէր զաջոյ ձեռն նորա, հարկանէ դանակաւ զձախ կուշտ նորա. և պատառեալ հերձաւ մինչև յաջուն. իսկ նորա յերեսս անկեալ թաւալէր յարիւն իւր։ Ապա որ շուրջն կային՝ հարկանէին զնա, ոմն սրով, ոմն քարիւ և մեռելոտի ոսկերօք. և զոր ինչ անկանէր ի ձեռս նոցա՝ արկանէին ի վերայ նորա։ Եւ հատեալ զգլուխն մորթեցին՝ զի տարցեն յաշխարհն իւրեանց՝ ինչս ժողովելոյ վասն։

Եւ սրբոյն աւանդեալ զհոգին ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ, ըստ այնմ, թէ «Հոգիք արդարոց ի ձեռս Աստուծոյ են»։ Եւ եղբայր նորա բրեալ սակաւ մի զտեղին, թաղէ զմարմին սրբոյն հանդերձ գլխովն։

Եւ ի գիշերին յայնմիկ արհաւիրք եղեալ իբր որոտմամբ և թնդիւն զօրացն. զի այնք որ շուրջ բնակեալ էին՝ զգիշերն ամենայն սրտաբեկեալք անքուն լինէին։ Եւ մարդասիրին Աստուծոյ փառաւորեալ զփա-

1. ո անդի. 4. Տես Սղ. ԽԳ. 22, Հռով. Ը. 36. 7. Տես Գծ. Է. 59, Ղկ. ԻԳ. 34. 15. հմմտ. Մտթ. Ժ. 33 եւ Ղուկ. ԺԲ. 9. 16. ո պնտեալ. 25. տես Իմ. Գ. 1.

ուսուցիչն իւր՝ բանալով զհաստատութիւնն, և լոյս կամարաձև ի վերայ նորա իջեալ՝ առ ի պարծանս վկային և յանդիմանութիւն անհաւատից։

Իսկ նոցա տեսեալ զարմացան ոսխրացեալք. երթեալք առ դատաւորն իւրեանց և առաջնորդն՝ հարցանէին թէ «Զի՞նչ էնուրն այն, այսինքն լոյս, որ էջ ի վերայ նորա։» Եւ ասէ ցնոսա, թէ «Զքարինսն և զմեռելոտի ոսկերսն՝ զոր եդուք ի վերայ նորա, պատուէ Աստուած. և վասն այնր էջ լոյսն. որչափ զձեզ որ սպանողքդ էք։» Իսկ կէսքն ասէին թէ «Մլհեռ է, լոյս աստուածութեանն այրէ զնա։»

Կատարեցաւ սուրբն Յովսէփ բարի խոստովանութեամբ ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ, յամսեանն ահկի, որ օր քսան էր՝ յաւուր շաբաթու՝ յիններորդ ժամու՝ ի տեղին որ Միջոց կոչի, առ եզր գետոյն Երասխայ մեծի, մերձ առ ոտն լերինն մեծի Մասեաց, հանդէպ Արտաշատ քաղաքի և դղեակ բերդի, ուր է վիրապն մեծ, որ է տեղի չարչարանաց սրբոյն Գրիգորի, քանզի և սա պտուղ է չարչարանաց նորա։

Արդ՝ ո՜վ եղբարք քրիստոսասէրք, նահատակութիւն սորա զարմանալի է. քանզի բազում մարտիրոսք եղեն յառաջ, առաւել ևս ի Հայս, զի ծաղկեալ և զարդարեալ դոյր աշխարհս Հայոց արեամբ նոցա. զի նոքա պատկեր և ապացոյց ունէին զայլսն. զի զոմանս պսակեալս տեսանէին, յոմանց վերայ լոյս կամարաձև երևեալ և զոմանս պատուեալ յԱստուծոյ և ի մարդկանէ, և այս ևս յորդորէր զնոսա։

Բայց սա ոչ ի տան Աստուծոյ սնեալ և ոչ գրովք սրբովք դարմանեալ և ոչ զայլս տեսեալ, այսպիսի նահատակութեամբ կատարեցաւ. որ և զարմացոյց զզօրս վերինս։ Եւ քանզի աշխարհս Հայոց ի վաղնջուց երաշտացեալ և ծարաւի դոյր ցօղոյ արեան մարտիրոսաց, արդ զովացեալ արբեցաւ արեամբ սորա։

10. ո է. 13. ո յիններորդ. 23. ս տեսանէին. 25. ո ի մարդկանէ.
30. ո վաղընճուց

Digitized by Google

Արդ՝ որք ջերմեռանդն գթով և յուսով մեծաւ և բաղձմամբ սիրոյ և ճշմարիտ հաւատով կատարեն զտօն վկայից Աստուծոյ, եղիցին վկայ առանց չարչարանաց, առանց սրոյ՝ նոցին պսակացն արժանացեալք։ Արդ՝ յուսացեալք ի Տէր՝ ի ձեռն սոցին բարեխօսութեան՝ հայցեցէք ի Քրիստոսէ զթողութիւն մեզ մեղուցելոցս, և Քրիստոս ձեզ և մեզ ողորմեսցի· ամէն։

### Թէ ուրկէ վերափոխումն եղեւ նշխարաց նորա եւ ուրկէ եղեալ կայ:

Այր ոմն Սարգիս կոչեցեալ՝ որդի Զաւախի, ի համբակութեան տիան իւրոյ դարձեալ եղև ի հայրենական դենէն իւրմէ, ի հաւատս ճշմարիտս, խոստովանելով զՔրիստոս Աստուած և որդի Աստուծոյ, մնեալ յանապատի և ուսեալ զուսումն աստուածեղէն, և արժանացեալ շնորհի քահանայութեան և առաջնորդութեան եկեղեցւոյ Աստուծոյ։ Նա և սա կոչեցեալ եղև ի հանդէս մարտիրոսական մրցանաց ի Շահի Արմանէն, որ տիրէր գաւառին Բզնունեաց և այլոց բազմաց· և աւուրս ինչ արգելեալ ի տան բանդի և պատգամս յղեալ առ նա, խոստանայ ինչս բազումս և մեծութիւնս, հաւասար առնել անձին իւրոյ, եթէ արասցէ զկամս նորա· ապա թէ ոչ ի փայտ մահու բարձրացուցանել սպառնայր։

Եւ նորա պատասխանեալ ասէ· «Եթէ զամենայն աշխարհիս մեծութիւնս տաս ինձ, յայսմ հաւատոյ ոչ կացից յետս· և որով մահու կամ է քո, առաջի քո եմ, կատարեա զկամս քո»։ Զի էր այր քաջասիրտ և կորովախօս, ոչ ոք կարէր պատասխանել նմա։

Եւ արհաւիրք եղեալ կնոջ ամիրապետին, վասն այնո-

5· ո ի քրիստոսէ· 12· ո իւրմէ· 20· ո եթէ· 21· ո արասցէ· 23· ո ասէ էթէ·

րին արձակեալ եղև ի ձեռն միջնորդի՝ կալ ի հաւատս իւր։ Եւ այլ ևս նեղութիւն կրեալ վասն ուղիղ հաւատոցն։

Սա իբրև լուաւ զնահատակութիւն սրբոյն Յովսեփայ, փութանակի ընթացաւ անդրէն ի բանակն. և իբրև աւուրք ինչ անցին, խնդրեաց յամիրապետէն մեծէ զմարմին վկային։ Իսկ նա ասէ. «Ընդէր մահ նիւթես անձին քում. զի թէ զայդ արասցես, զնոյն մահ և դու կրեսցես։»

Ապա կացեալ նորա ի բանակին աւուրս քսան, և զմահու երկիւղ ի բաց եդեալ՝ կամեցեալ թագնաբար գողանալ. առեալ ընդ իւր արս երկուս և հանեալ զնա ի հողոյ անտի, կամեցեալ սրբել զնա։ Յայնժամ իմացեալ այլասեռիցն, արս վեց հեծեալս յերիվարս ձիընթացս սուսերամերկ գան ի վերայ նոցա. իսկ արքն որ ընդ նմա էին, ի փախուստ դառնայրին՝ հեծեալ յերիվարս իւրեանց։ Իսկ նա քաջասրտեալ և պնդեալ զերիվարն՝ կայր հաստատուն ի տեղւոջն. և զի էր հասարակ գիշեր և լուսինն ուռճացեալ լուսով իւրով լուսաւորէր զամենեսեան. եւ իբրև մօտեցին, ձեռնհաս և նա խօսեցաւ ի լեզուս պարսիկս։ Յայնժամ անտեսութիւն անկեալ զաչօք նոցա, անդէն ի փախուստ դառնային, այնպէս զի ոչ ընկեր զընկերի հետ գտանէր։ Ապա արքն փախուցեալք իբրև տեսին զայն նշան, դարձան յետս։ Եւ եդեալ ի գրաստու՝ ընդ մէջ բանակին զամենայն գիշերն տանէին աներկիւղաբար։ Եւ այնպէս ի նախախնամութենէ Աստուծոյ աջողեալ, որ ոչ ոք ի նոցանէ գիտէր թէ զի՞նչ է զոր բարձեալ տանին։ Եւ զգիշերն զայն գնացեալ տանէին զնա յուխտն հռչակաւոր ի Հաւուցթառ։ Ապա հանգուցանէ զնա ի տեղի մի բարձրաւանդակ որ Խաչողն կոչեն, յարևմտից կողմանէ հանդէպ գեղաքաղաքին Դառնու, ի պահպանութիւն գաւառին այնմիկ։ Եւ զգլուխ սրբոյն թողեալ յեկեղեցւոջն, զի ի ձեռն նորին բարեխօսութեան գթասցեալ մարդասէրն Աստուած՝ ողորմեսցի իւրոց հաւատացելոց. և նմա փառք յաւիտեանս. ամէն։

11. Ո անդի. | Ո սրբեալ. 13. Ո էին. 24. Ո նախախնամութենէ. 25. Ո թէ.

*Թուղթի քահանայի ի սքանչելի վկայն Քրիստոսի Յովսէփ պատանի, որ յԱյրարատոյ նահանգէն, ներբողական գովեստի բան:*

Պարտական եմ պատուասիրել առ քեզ, ըստ նազելի և պարկեշտագեղ պատուոյ դերագունից իմաստնոյ, և ինձ յոյժ աստուածուսոյց սիրով մերձաւորիդ, զզօրութիւն աստուածային Հոգւոյն և զանուն մխիթարական յանձին կրողի, վկայասէր մտօք զվաղնջուցն ի ձէնջ խնդիրս լնուլ, զառոգանութիւնս գովեստից։ Վասն զի, մասնաւորիլ ի ճշմարիտն ձայնէ ուսաք ի հասարակութիւն նմանակցութեան՝ զյօժարութիւն. զոր՝ խնդրողիդ յաւէտ շնորհ ունել՝ իրաւացի է, եթէ գիպեսցի պատեհաբար ինչ իմանալ և ասել. և դրուագս գովեստից ընդ պատմութեան նորին գովելի կենացն և նահատակութեանն յարահիւսել։ Սակայն ի սաստկագոյն լինիմ յերկիւղի. գուցէ այլայլութիւն մտաց և ապազօր զգայարանացս գոլոյ՝ յարժանւոյն վրիպեցայց ասից. վասն որոյ անագան յայտոսիկ ածայ հաւանութիւն, լծակցեալ ընդ վկայասէր անձին քում՝ և զիմս յօժարութիւն։ Եւ քանզի դու ինքն որով ունիսդ՝ բաւական քան զմեզ էիր յաւէտ հրաշացուցանել զհանգունակիցն հրեշտակաց՝ ի մարմնի անդ խոնարհութեան, այլ զի իրաւացի վարկար ըստ պատմութեանն ճշգրտաբանութեան՝ և զգովեստիցն մեզ լնուլ պարտս, հաւանութիւն յանձին ունիմ՝ անստերիւր սիրոյ ախորժիւք. քանզի և հոգիք մարգարէից՝ մարգարէից հնազանդել օրինադրեցան՝ յԱռաքելոյ. և սիրոյ հաստատութիւն՝ ընդարձակ է ի համարձակութիւն, վասն զիջանելոյ սիրողին՝ ի սիրեցելոյն վստահութիւն։

Ուստի իրաւացի վարկայ սկանել ի դրուատիս գովեստից մեծապանծ և նորազարդ վկային Աստուծոյ, և ինձ

ի տեսիլ աչաց ժամանեցելոյ, իսկապէս և անըստգիւտ սիրողին Քրիստոսի՝ Ցովսեփայ։ Քանզի միշտ Նորոգ քրիստոսադիր ապարիզին մրցական՝ յորդորականաւն ընդ մեզ գոլով ձայնիւ, որ յաղթեացն ախոյեանին, և իշխանութեամբ ի վերայ ընթանալ և կոխել զգլուխ վիշապին հրամայէ։

Ցայսոսիկ մրցմունս մատաղ հասակաւ և համեստ ժուժկալութեամբ կրթէր զանձն՝ երանելիս մեր պսակաւոր, պահօք և աղօթիւք, խարազնազգեստ և բոկագնաց թափառելով շրջել ի հանդստանոցս քրիստոնէից, և առ արս երևելիս յիմաստս և յառաքինի երկս, թերևս օժիտս իւրոյ առաջարկութեանն հաւաքեսցէ ի պիտանեացն արանց։

Իսկ բարիատեացն և պատերազմողն սիրելեացն Աստուծոյ՝ զանազանս նմա պատրաստէր փորձութիւնս ի մարդկանէ, այպանութեան բանիւք և ապտակաւ և լուտալով, իբր թէ զաղփաղփուն և անհաստատ է մանկութիւն, և անտար՝ այնպիսի խստակրօն վարուց։ Սակայն նա յայսմ հասակի զկատարելագունիւքն զանցանէր համեստութեամբ. և յարբունս հասակին նովին ժամանեալ հրահանգիւք, յորում աստուածային օրէնքն՝ ի մարտ զԻսրայելի Նորահասակսն մուծանէր. և սա ի նոյն սկըսմանէ կատարեալ ցուցանի նահատակ ի կրկէսի երկնաւոր հանդիսադրին։ Այլ նոքա ի կատարման տիոցն հրամայէին վստահանալ ի մարտակռուութիւնն. իսկ սա ի մանկականն աստեաց՝ ոչ ի հրահանգողէ յաւէտ՝ այլ անձամբ և հոգևոր յորդորմամբ՝ զանձն իւր մղէ ի մրցարանն. և ոչ եթէ դիպուածով իւիք միոյ և կամ երկուց պատահմանց ի դիմի հարեալ՝ քաջ և անուանի լեալ գովեստ ընկալաւ, այլ կրթութիւն մտաց ի մանկութենէ զհանդիսին իւրոյ արարեալ ասպարէզ, նովիմբ ի ստադիոնն մտանէ վերջին. վասնորոյ առաւել նկարագրաւս ցուցանի։ . . . . . . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . . . . . .

Վասնորոյ և խրախացեալքս մեք ի տօնի աստ, որպէս ընդ կենդանւոյ խօսելով՝ աղերսաբանեսցուք, հայել ի մեզ

զուարթութեամբ, և. ընդունել զյօժարութիւնս՝ ի նմանակցութիւն իւրոյն հանդիսաւոր նահատակութեան. և կոչելով զնա յանուանէ՝ ասասցուք. Ո՜վ ամենապանծալի պարկեշտագեղդ Յովսէփ, մերձ կացեալդ հասարակացն կենագործի Տեառն մերոյ, բարեխօսեա վասն սրբոյ եկեղեցւոյ՝ զոր սիրեցեր, և յորմէ ծնար զանախտաբար ծնունդ, առ որ ունիսդ համարձակութիւն. զի ազատեսցի յամպարիշտ ձեռնարկութեանց այլասեռից, և ի տառապանմանէ խռովական ամբոխից՝ անդորրասցի վերստին, հօտապետօք և հօտերէց վերակացուօվք, նուիրակատար քահանայիւք, և բովանդակ իսկ զարդուք զարդարեցելովք. որպէս զի երթիցեն ելանել յառաջին պայծառութեանն լրութիւն, յոր խարսխեցաւն ի սկզբանէ մերոյ լուսաւորութեանն, որ ի ձեռն սրբոյ խոստովանողին և առաքելաշնորհին Գրիգորի զարդարեցաւ. յորում նահանգի և դու՝ զխոստովանողականն ընկալար զբաժակ։ Եւ զոր խոստացաւն տալ խաղաղութիւն Փրկիչն՝ հասարակաց իւրոյն ծանօթից և սիրելեաց, վերստին շնորհեսցէ որոց ակն ունին նմա ի փրկութիւն. զի զհասարակացն և զառանձնապէսն ի վերայ եկեալ ուրեք պատահարս՝ բարեսէր կամօքն ի բաց դարձուսցէ. զհիւանդութիւնս կրկնապատիկս՝ զհոգեկանն և զըստ մարմնոյ, ամենահնար բուժարանաւն ապաքինեսցէ. և զյառաջատեսլեան ի մանկութենէ ի կրօնս կատարման առաքինավաստակ երկոց՝ զօրացուսցէ ի դիմամարտութիւն չարասիրին, և մարմնականացն կամաց և լլից. որպէս զի և ըստ քումդ անստգիտանելոյ սիրոյ և կրօնից՝ համարձակիցեն առաջի կալ կենարարին, քոյով միջնորդութեամբ աղերսել ընդ քեզ, և ասել. Տէր մեր և Աստուած, Յիսուս Քրիստոս, կերպարան անսկզբնականն Հօր, անտարափոխ նոյնութիւն ըստ բնութեան, և պատկեր մերոյ ազգիս մարդասէր տնօրէնութեամբ. խնայեա ողորմութեամբ քով և գթա ի վերայ հօտի քո մատնելոյ ի ձեռս ամբարշտաց. և դարձո զգերութիւն ազգի մերոյ, որպէս երբեմն զԻսրայելին։ Բարձ զլուծ ծառայութեան ի պարանոցէ մերմէ, ըստ որում արարերն, և

Digitized by Google

դու ինքնին թագաւորեա ի վերայ մեր, որով խնդք և ա[illegible]ժեսցես: Դադարեցո զամպրոպն խռովական, և ամենայն զխռովարարն ի սկզբանէ, զչար արբանեակն չարասիրին ընդ կրուկն դարձո. և սպառազինեալ ամրական զինու զօրականս քո, վառնել զբանակս նոր Ամաղեկայ և Քանանու, որպէս Յեսու, Բարակաւ և Գեդէոնիւ, Սամուելիւ, Դաւթաւ և Եզեկիայիւ. վասն զի երկարեաց ողբովք պանդխտութիւն մեր ի վրանս Կեդարու. զոր ոչ ի քէն վարկանիմք, Տէր բարեսէր, այլ զի դառնացուցաք զբարեգործդ: Եւ արդ սովորաբար ի խնդիր եկ, հովուապետ զօրեղ, ամպի ի վերակացուաց եզելոցս, և գիտ զմոլորականքս յանայցելի լերինս և խորափիտս սուզեալս. կամ զխոցեալսն յանաւզակաց և ի ճանապարհ անկեալ անողորմ կողոպտաց, բարձ ի վերայ ուսոց և կամ ի գրաստին՝ զորմէ ասացերն, և տար ի տունն զոր շինեցեր՝ քոյովդ մարմնանալով. զի աւանդապահք կենարար պատուիրանի քո՝ դարմանեսցեն զնա, առ ի պահպանութիւն խրթհրդական օծմանն՝ որ ի քէն. և ուրախ արա գտեալ բանին՝ զոր արքունեցեր ի սուրբ խորանէ քումէ: Յորմէ ապաքինեալ ի յոգնակի վիրաւորութեանցն՝ տօնեսցուք զտօն սիրելեաց քոց վկայիցն երանելեաց. յորոց մի է և այսր աւուր կոչնատէրս Յովսէփ, որոյ բարեխօսութեամբ հանդիպել արժանասցուք քեզ՝ [illegible] արքութեան քո. և սովաւ հանդերձ՝ յերանաւէտ կեանսդ հաւատամբ մտանել, յանլուելի և յիմանալի փառաբանչացդ կայեանս:

Սոյն ընդարձակ վկայաբանութիւնն, ունի միայն Ռ ճառընտիրը՝ էջ 462 բ'—467 բ', հետեւեալ վերնագրով. «Պատմութիւն Նորոգ վկային յովսեփու վարուցն և նահատակութեանն վկաութիւն», Զոր հրատարակած է նախ Գ. Տ. Մկրտչեան, Արարատ, 1897, էջ 41—48, մի կարճ յառաջաբանով: Ներքոյեանը հրատարակել է Հ. Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 358—359, ուր

Digitized by Google

դժբախտաբար մէջ բերուած են միայն Ներբողեանի առաջին մասն ու վերջաւորութը, իսկ մէջին մասը թողուած է, որից արտագրում ենք նաև մենք:

Վկայաբանութիւնը համառօտած գտնւում է նաև յայսմաւուրքների մէջ. այսպէս A 157 ա'—158 ա', B 430 ա''—431 ա', C 1113'—1114', D 519 ա''—520 ա', E 1022'—1023'', F 438 բ'—439 ա'', G 542 ա''—543 ա', H 507 ա'—բ'', I 550 բ'—551 ա', J 963'—964', K 514 բ'—515 ա', L 447 ա''—բ'', M 533 բ'—534 ա'', N 510 բ'—511 ա'', O 499 ա'—500 ա', P 434 ա''—435 ա', Q 516 բ'—517 ա'', R 515 ա''—516 ա', S 538 բ''—539 բ', T 523 բ'—524 բ', U 500 ա'—բ', V 369 ա''—370 ա', W 465 ա'—բ'', Y (Ա. հատ.) 243 բ'—244 ա'', Z 391 բ'—392 ա'', a 270 բ'—271 ա'', b 568 ա'—բ'', c, d և e: Այս ձեռագրերից երկու լաւագոյնները դնում ենք ներքևում. այսպէս G (առաջին սիւնակ) և A (երկրորդ սիւնակ). միւս ձեռագիրները գնում են G-ի հետ, գրչագրական աննշան տարբերութիւններով, որոնք նշանակուած չեն այստեղ. a ձեռագիրը խիստ համառօտուած է: Հմմտ. նաև Չամչեան, Գ. 87, Աւգերեան Վարք Սրբոց, ԺԲ հատ. 291, Յայսմ. Ա տպ. 907'—908'', Բ տպ. 620'—621', Գ տպ. Ա. 261'—'', ինչպէս և Վարդանայ Վարդ. Հաւաքումն պատմութեան, Վենետ., 1862, էջ 128—129, ուր միայն հետևեալ երկտողեայ ծանօթութիւնն է գտնուում. «Յորում ժամանակի և ի մխիթարութիւն քրիստոնէից՝ գեղեցիկ պտուղն հասուն և քաղցրաճաշակ պտղաբերին Յովսէփ՝ մկրտեալ չարչարանօք յամսեանն յահեկի ի քաղաքն, և թաղեցաւ ի Հաւութառ, որ էր պարտէզ ազգաւ, ի սահմանացն Դունայ, ի գեղջէն որ Նորաշէնք կոչի»:

Սորա նահատակութեան թուականը տարբեր է ճառընտրի մէջ և տարբեր Յայսմաւուրքների մէջ: Ճառընտիրը, որին համաձայն է գալիս նաև Վարդան պատմիչ, դնում է ՈԺԹ թուին, «յամսեանն ահկի, որ օր քսան էր, յաւուր շաբաթու»:

Ահկի քսանը ըստ անշարժ տոմարի համապատասխանում է ապրիլի 27-ին. բայց որովհետև 1170 թուականի ապրիլի 27-ը երկուշաբթի էր, ուստի և անշարժ



Digitized by Google

տօմարը համաձայն չէ մեզ։ Ընդհակառակը շարժական տոմարով ՈԺԹ անկի քեանը համապատասխանում է 1170 թուի հոկտ. 24-ին, որ իրօք շաբաթ օր էր (այդ տարուայ Նաւասարդի 1-ը գալիս էր փետրվ. 7-ին), համաձայն ճառընտրին։

Գալով Յայսմաւուրքներին, սրանցից մեծ մասը ունի մարգաց ԺԳ=յունիս 19, իսկ ANZa մարգաց ԺԲ=յունիս 18. տարբերութիւն էլ թէև առ հասարակ ՈԺԹ է դրուում, բայց GHKLMRY ձեռագրերը ունին ՈԺՁ, Z ունի ՈԺԸ, իսկ h անթուական է։ Պարզ է որ Յայսմաւուրքների շեղումը կա՛մ սխալ է և կամ արդիւնք է ուրիշ տեսակ հաշիւների։

Ներբողեանը, ինչպէս վերնագրից էլ երևում է, հեղինակութիւնն է Դաւիթ քահանայի. «Դաւթի քահանայի ի սքանչելի վկայն Քրիստոսի Յովսէփ ...»։ Դաւիթը, ըստ Գ. Տ. Մկրտչեանի, ԺԲ. դարի հեղինակ է և իր Ներբողեանը գրել է Մխիթար անուն մի անձի խնդրանօք, որին ինքը վկայասէր տիտղոսն է տալիս. «Զանուն մխիթարական յանձին կրողի, վկայասէր մտօք զվաղնջուցն ի ձէնջ խնդիրս լնուլ, զառօգանութիւնս գովեստից ... խնդրողիդ յաւէտ շնորհ ունել ... լծակցեալ ընդ վկայասէր անձին քում ...»։ Ներբողեանի երկու մութ ակնարկներից Գ. Տ. Մկրտչեան հետևցընում է նաև որ Յովսէփի ընդարձակ վկայաբանութեան հեղինակն էլ հաւանականաբար այս Մխիթարն է. «Այլ զի իրաւացի վարկար ըստ պատմութեան ճշգրտաբանութեան և զգովեստիցն մեզ լնուլ պարտս ... և դրուագս գովեստից ընդ պատմութեան նորին գովելի կենացն և նահատակութեան յարահիւսել»։ Վերջապէս Գ. Տ. Մկրտչեան կարծում է թէ «Անհաւանական չէ, որ այս Մխիթարը նոյն ինքն Գոշ Մխիթարը լինի, Խոսրով Գանձակեցուն Ներբողեան գրողը» (Արարատ, էջ 41)։

## Վկայաբանութիւն Սրբոյն Յովսէփայ նոր վկային Քրիստոսի Աստուծոյ.

Սուրբն Յովսէփ նոր վկայն Քրիստոսի էր ի Դուին* քաղաքէ Հայոց, բնական տաճիկ ի հօրէ և ի մօրէ։ Եւ բնակէր ի նոյն գաւառն Դուինայ՝**ի գիւղն որ կոչի Նորաշէն, սնեալ և վարժեալ ընդ մանկունս քրիստոնէից։ Եւ ընդ նոսին երթայր յեկեղեցին, և տեսանէր զուգիղ վարս և զբարի կրօնս քրիստոնէից, և զանեղծ հաւատս Հայոց, և ցանկայր կրօնից նոցա։ Եւ ետուն զնա ծնօղքն ի տաճիկ դպրոց, ի Դուին* քաղաքի։ Եւ տեսեալ բարեսէր պատանին Ուսուֆն զչար գործս Մուղբենոյն, մանաւանդ զանխտիր արուագիտութիւնն, փախեաւ ի նոցանէ, և գնաց առ ծնօղսն իւր։ Եւ յայտնապէս խոստովանեցաւ զՔրիստոս Աստուած, որդի Աստուծոյ, էակից Հօր և փառակից սուրբ Հոգւոյն։

Եւ յաւուր միում ետես զնա հայրն իւր յերկրպագութիւն սուրբ խաչին Քրիստոսի՝ յարևելս կոյս, յաղօթարանն Հայոց։ Առեալ զսուրն և կամեցաւ սպանանել զնա. և մայրն անկաւ ի վերայ տղային. ազդ արար երիցու գեղջին, թափել զտղայն ի ձեռաց հօրն։

Եւ ասէին մանկանն առ ժա-

* G ի դըւին. ** G դըւնայ.

## Վկայութիւն Յովսէփայ նոր վկայի, որ կայ նշխարքն ի վանքն ի Հաւուցթառ, մերձ առ գեղաքաղաքն Գառնի.

Սուրբ վկայն Քրիստոսի Յովսէփ, էր ի տաճիկ տոհմէ, ի Դուին* քաղաքէ Հայոց,

մի ի գեղջից զոր Նորաշէնք անուանեն։

Սա սնեալ ընդ մանկունս քրիստոնէից, ընդ նոսին երթայր յեկեղեցին և տեսանէր զբարիոք կարգս նոցա, և զաստուածպաշտութիւն,

ցանկայր հաւատոց նոցա։ Դէպ եղև ծնօղացն տալ զնա ի դպրոց ի Դուին։*

Եւ տեսեալ պատանոյն զչար գործս վարդապետացն տաճկաց, մանաւանդ զարուագիտութիւն անխտիր, փախեաւ ի նոցանէ, և եկեալ ի տուն իւր՝ համարձակութեամբ խոստովանէր զՔրիստոս։

Եւ տեսեալ հօրն զնա յերկրպագութիւն Քրիստոսի,

առեալ զսուրն կամէր զենուլ զնա. և ընթացեալ մօրն անկաւ ի վերայ նորա, և ազդ արարեալ երիցու գեղջն, թափեն զնա ի ձեռաց նորա։

Եւ ասեն մանկանն առ ժամ

* A ի դվին.

Digitized by Google

մանակ մի հանել զկամս հօրն իւրոյ հաւանական բանիւ, և գնալ յերկիրն Վրաց, և անդ վստահ և յայտնապէս պաշտել զՔրիստոս Աստուած։

Եւ հայրն մահու չափ դանն հարեալ եթող զնա և յետս ուղևորեցաւ։ Եւ նա եկեալ գաղտ ի ծնողացն և գնաց առ Սարգիս ճգնաւորն ի Թեղենիսն։ Եւ նա քաջալերեաց զնա ի հաւատս Քրիստոսի, և ասաց չերթել ընդ վանորայսն։

Եւ նա առեալ զաղօթս սրբոյն, եկն և գնաց ի Հաղբատ և ի Սանահին, և ի Մոկրօրավանս. և անդ ուսաւ գիր և սաղմոս, և եղև կրօնաւոր խարազնազգեստ արեղայ։ Եւ անուանեցաւ Յովսէփ. զի առաջին անուն նորա Արութաքր էր, և ի տղայութիւնն իւր մկրտած էր։

Եւ ապա գնաց յԵրուսաղէմ։ Եւ հանդիպեցաւ ի Հռոմկլայն՝ մեծ և չնորհալի իմաստնոյն Տեառն Ներսէսի կաթողիկոսին մերոյ, և առեալ ի նմանէ օրհնութիւն։ Եւ ասաց. «Եթէ կատարիս յանօրինաց, կարգեցից զյիշատակս քո ընդ առաջին մարտիրոսացն»։ Եւ գնացեալ եհաս յԵրուսաղէմ և շրջեցաւ ի սուրբ տնօրինական տեղիսն։ Եւ դարձաւ առ ծնողսն իւր յարևելս՝ քարոզել նոցա զՔրիստոս, զի մի կորիցեն յանհաւատութեանն։ Եւ հայրն մեռեալ էր։

Իսկ մայրն և եղբայրն ոչ ընկալան զբանս նորա, այլ

մի հանել զմիտս նորա հաւանական բանիւք, և ապա երթալ յաշխարհն Վրաց, և անդ համարձակութեամբ պաշտել զՔրիստոս։

Եւ նորա դան մահու հարեալ եթող զնա։ Եւ յետ սուղ աւուրց եկեալ գաղտ ի ծնողացն, չոգաւ առ սուրբ միայնաւորն ի Թեղենիսն, ի Սարգիս։ Եւ նա խրատ տայր նմա երթալ

չերթել ընդ վանորայսն։

Եւ նորա

եկեալ գնաց ի Հաղբատ և ի Սանահին և ի Մոկորավանսն. և ուսեալ գիր և սաղմոս, և եղև կրօնաւոր խարազնազգեստ*

Եւ անուանեցաւ Յովսէփ. զի առաջին անուն նորա Բութաքր էր. և ի տղայութեան** ընկալեալ էր զմկրտութիւն սուրբ ջրոյն։

Եւ ապա չոգաւ աղօթականութեան աղագաւ առ մեծ կաթողիկոսն Հայոց Ներսէս իմաստասէր, եղբայր Գրիգորիսի, որ նստէր ի Հռոմէական կլայն. և ընկալեալ ի նմանէ օրհնութիւն և քաջալերութիւն. և «Եթէ փախճանիս, ասէ, յանօրինաց, կարգեցից զյիշատակս քո ընդ առաջին վկայիցն»։ Եւ ապա չոգաւ յԵրուսաղէմ և շրջեալ ընդ ամենայն սուրբ տեղիսն, դարձաւ առ ծնօղսն իւր աւետարանել նոցա զՔրիստոս, զի մի կորիցեն։ Եւ եգիտ'' զի մեռեալ էր հայրն։ Եւ քարոզեալ մօրն և եղբօրն զՔրիստոս, և նոքա ոչ ընկալան, այլ ասեն.

* A խարազնազգեստ. ** A ի տղայութե.
'' A էգիտ.

ասացին նմա թէ «Երթ զնա ի հեռաստան երկիր, զի մի՛ ոք գիտասցէ զքեզ և անիրաւ մեռա-նիցիս։»

Եւ նա ասաց թէ «Ես վասն այնորիկ եկեալ եմ աստ, զի մեռայց վասն Քրիստոսի, և կամ համարձակ պաշտեցից զնա։»

Եւ նորա ծանուցին ամիրա-յին Դունայ* Սաաքիջնանայ. և նա կոչեաց զնա առաջի իւր։ Եւ յոր-ժամ եկն, երկիր եպագ խաչին որ կայր յորմն տանն, զի տուն քրիս-տոնէի էր, որ իջեալ էր ամիրայն։

Եւ զայն տեսեալ ամիրայն, առաւել ցասեաւ, և սկսաւ նախ սպառնալեօք ահացուցանել զնա. և նա ոչ երկեաւ։ Եւ ապա ողո-քական բանիւք խրատ տայր, եթէ ուրասցիր զՔրիստոս։ Եւ ոչ կարաց հաւանեցուցանել զնա, զի հա-մարձակ տայր պատասխանի, և զՔրիստոս Աստուած դաւանէր. և ասէր բարձր ձայնիւ. «Հաւատամ յամենասուրբ երրորդութիւնն։»

Վասն որոյ դան հարին զնա ուժ-գին և արկին ի բանտ. և թողին անտուաղ զաւուրս բազումս։ Եւ ապա հանեալ ի բանտէն, տեսին զնա հաստատուն ի հաւատս Քրիս-

* G դըւնայ·

«Երթ ի հեռաստան ուրեք, զի մի ոք գիտասցէ զքեզ և մեռցիս»

Եւ նա ասաց. «Եւ ես վասն այնորիկ եկեալ եմ, զի մեռայց վասն Քրիստոսի և կամ համարձակ պաշտեցից զնա։»

Եւ ի վաղիւն եկն ամիրայն Դունայ,* որում անուն էր Սրջա-հան. և ազդեցուցին նմա վասն Քրիստոսի զինուորին. և հրամայ-եաց կոչել առաջի իւր։ Եւ իբրև եկն, երկիր եպագ** խաչին որ ի տան անդր կայր, զի տունն քրիս-տոնէի էր, ուր իջեալ էր։

Եւ զայն տեսեալ՝ առաւել ցասեաւ անօրէնն, և ապա սկսաւ սպառնալեօք և ողոքանօք խաբել զնա և դարձու-ցանել յերկրպագութենէն'' Քրիս-տոսի։

Եւ նորա ծաղր արարեալ զամե-նայն, միայն զՔրիստոս խոստո-վանէր և անարգէր զՄահմէտ։

Եւ բարկացեալ իշխանն հրա-մայեաց դան սաստիկ հարկանել զնա միանգամ և երկիցս. և կա-պեալ ուժգնապէս եդ ի բանդ. և ընդ իւր առեալ տարաւ ի Դը-ւին*'' և անդ չարաչար տանջեալ բանդիւ և կապանօք և սովով բազում աւուրս։ Եւ յորժամ եկն ամիրապետն՝ ազդեցոյց վասն որբոյն. և կոչեալ զառաջեաւ՝ խոստանայր նմա պարգևս և իշ-խանութիւն. և իբրև ոչ կարաց

* A դըվնայ· ** A էպագ· '' A յերկրպագութենէն· *'' A ի դվին·

Digitized by Google

տոսի։ Եւ հրամայեաց ամիրայն սրով սպանանել զնա։ Եւ նոյն

ժամայն խոցեցին զկուշտ սրբոյն. և հերձեալ վայթեցան աղիքն. և ապա հատին զգլուխ նորա։ Եւ այնպէս բարի հաւատով կատարեցաւ ի Քրիստոս։

Եւ եղբայր նորա թաղեաց զնա յաւազ անդր։

Եւ յայնմ գիշերի եղեն արհաւիրք մեծամեծք և որոտմունք. և լոյս պայծառ ծագեաց յերկնից ի վերայ սրբոյն, զոր տեսեալ անօրինացն՝ զարհուրեցան յոյժ։

Եւ այր մի Սարգիս անուն, բարձեալ զմարմին սրբոյն, տարաւ ի մեծափառ վանսն Հաւուցթառ, որ է հանդէպ Գառնւոյ։ Եւ եդին անդ մեծաւ պատուով փառաւորապէս, յորմէ բազում բժշկութիւնք լինին ամենայն ցաւոց, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

Կատարեցաւ սուրբ վկայն Քրիստոսի Յովսէփ ի ՌԺԹ թուին մեր Հայոց, ի մարգաց ի ժԳ և յունիսի 19։

հաւանեցուցանել զնա, հրամայեաց սրով սպանանել։ Եւ դահճացն նոյն ժամայն կատարեալ զհրամանն, սրով զկուշտն նորա հերձեալ, վաթեցին զաղիսն. և ապա հատին զգլուխն։

Եւ եղբայր սրբոյն թաղեաց զնա յաւազ անդր։

Եւ ի գիշերին եղև արհաւիրք մեծ և որոտմունք. և լոյս սաստիկ ծագեաց յերկնից ի վերայ սրբոյն և տեսեալ անօրինացն՝ զարհուրեցան։

Եւ մի ոմն Սարգիս անուն, բարձեալ զնշխարս սրբոյն, տարաւ ի վանքն որ կոչի Հաւուցթառ, հանդէպ Գառնոյ. և անդ

եդին* փառաւորապէս։ Եւ բազում բժշկութիւնք** լինին ի նշխարաց սրբոյն։

Կատարեցաւ սուրբն Յովսէփ ի թուականին հայոց ՌԺԹ

և յունիսի 18։

* A էդին. ** A բըժըշկութիւք.

# 5.

## ՍԱՐԳԻՍ ԻՇԽԱՆ ԽԱՉԵՆԵՑԻ

† ՈԼԱ=1182 մարտ 26 ուր․

Ի նոյն ամի (ՈԼԱ) Սարգիս ոմն Խաչենեցի կայր ի Գան-ձակ և առնոյր խարաճ․ և ոմն պարսիկ ի յաւագ ուրբա-թուն քաշեաց զնա ընդ պարիսպն, ասելով․ «Խաչակից լեր Քրիստոսին քում․» զոր լուեալ իշխանք նորա՝ տարան առ ինքեանս զպարսիկն և չարամահ սպանին։

Սոյն տեղեկութիւնը տալիս է մեզ Վարդան պատ-միչ, Վենետիկ 1862, էջ 132։

Նոյն նահատակի մասին Մխիթար Այրիվանեցի, Մոսկվա, 1860, էջ 64 հետևեալ տողն ունի․ «ՈԼ=1181, զՍարգիս Խաչենեցի խաչեցին ի Գանձակ։»

Հմմտ․ նաև Չամչեան, Գ․ էջ 151, ՈԼԴ և 1185 թուականի ներքև, ուր նահատակիս համար ասուում է «իշխան ոմն հայոց Սարգիս։»

Երեք տարբեր թուականներից ընտրում ենք Վար-դանի տուած թուականը, համարելով թէ այս է ամէ-նից աւելի հարազատը։ ՈԼԱ=1182 թուի տարեգլխը լինելով է, նոյն տարուայ զատիկը գալիս է մարտի 28-ին, ուստի և աւագ ուրբաթը մարտի 26-ին։

Digitized by Google

6.

## ՅՈՐԴԱՆԱՆ ՎԿԱՅ ԹԱՒՐԶ

† ՈԼԱ = 1182 մարտ

Ի սոյն աւուրս (աւագ ուրբաթ) և Յորդանան ոմն ի տաճիկ տոհմէ վկայեաց մեծ հանդիսիւ ի Կարնոյ քաղաք. և եղան նշխարք նորա ընդ Յովսեփայ և ընդ Սահակայ ազգականին իւրոյ։

Սոյն վկայի մասին ջիչեւոր տեղեկութիւնը տալիս է Վարդան պատմիչ, Վենետ. 1862, էջ 132, նախորդ վկայեին նուիրուած հատուածից յետոյ:

Հմմտ. նաև Չամչեան, Գ. էջ 151, ՈԼԴ = 1185 թուի տակ: Վկայի հետ յիշուած Յովսէփի և Սահակ անուն անձերը նոյնպէս նահատակներ են, անշուշտ կարնեցի, որոնց համար Վարդան, էջ 91 գրում է. «Յորում աւուրս (դէպի ՆԽ =991 թուականը) կատարեցան ի Քրիստոս Սահակ և Յովսէփ, տաճիկք ազգաւ, յարացի հնդեւտաստոն»:

7.

## ԹԷՈԴՈՐՈՍ ԿԱՄԱՐՈՑԻ

† ՈԾԳ մարերի ժբ = 1204 մայիս 18 գշ.

Քրիստոսածիր և առատաբուղխ ողորմութեան շնորհք Հոգւոյն սրբոյ՝ զոր միշտ և հանապազ ըստ իւրաքանչիւր ժամանակի առատաձեռնեալ տնօրինէ յեկեղեցիս իւր, զոր հաստատեաց ի վերայ առաքելական վիմի հաւատոյ, և կանգնեաց անյողդողդ ի յեօթանց սեանց; և ոչ երբեք նուազեցուցանէ կամ պակասեցուցանէ առ իւր ստեղ-ծեալքս; մանաւանդ առ այնս որք ի սկզբանէ հաճոյացան կամաց նորա և կատարիչք եղեն խորհրդոց նորին. և հաս-տատապէս առնէ նշանս և զքանչելիս յաւուրս և ի դարս և ի ժամանակս հանապազօր. որով և տարար ի սկզբանէ և առնելոց է մինչև ի գալուստ իւրոյ տէրութեանն; որպէս և երևեցոյց ի դարուց դարս որք են գծագրեալք և ձևա-ցեալք ի տառս աստուածայինս։ Արդ ի գալ Բանին Աս-տուծոյ և ի ծագել առ մեզ արեգականն արդարութեան, որ և զկնի ի մեզ Թագաւորելոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, յորժամ ի մարմին Թանձրացեալ անմարմինն Աստուած՝ ինքնայօժար կամօք առ ի մերս կենցաղավարիւր բնութիւն, ըստ մարգարէին, զատ և որոշ ի մեղաց. և յետ չարչարանաց նորին և աշխարհակեցոյց յարութեանն և նորահրաշ համբարձմանն կատարելով առ սուրբս և սիրե-լիս առաքեալն իւրոյ, և առ վկայս իւրոյ մարմնաւորն անո-

ըէնութեանն, որք արիաբար յօժարութեամբ բարձին զխաչս խաչելոյն և ընթացեալք զհետ կոչողին ձայնի՝ եղեն խաչակիցք Որդւոյն Աստուծոյ։ Քանզի ի բացուստ դիտմամբ տեսանելով զփառս Բանին և զբարեբաստութիւն խոստացեալ անհատ պարգևին, զանասելի գեղեցկութիւնն, զանծերանալի կեանսն, զանտրտում ուրախութիւնն, զանթառամ պսակն և որ սոցին նման, զոր և ոչ ակն ի մտաւորաց զննել կարացէ և կամ բանիւ ընդ թուով արկանել զհամար վկայիցն, որք կամաւ և առաքինաջան նահատակութեամբ հասին աւետեացն Հօր, երանելի յուսոյն ակն ունելով՝ անձամբ զանձինս ի խաչ հանին կարեօք և ցանկութեամբ հանդերձ. կրելով յինքեանս ըստ Առաքելոյ՝ զբազմազան և զյոքնակի կիրս չարչարանաց, համբերելով նեղութեանց և լլկանաց, քաղցոյ և ծարաւոյ, ցրտոյ և մերկութեան, գելարանաց և կապանաց, ստանալով զյաւիտենական կեանսն, պսակելով ի Հօրէն լուսոյ և ժառանգելով զանտրտում ուրախութիւնսն։

Արդ ի սոյն իսկ ժամանակի, և ընդ նուաղել շրջաբերութեան կենցաղոյս, ի յեանել աւուրցս, ի ժամանակս վերջինս, եղև նշանս և սքանչելիքս այս ի միջի մերում. զոր եթէ կամեցեալ նախախնամութեանն Աստուծոյ ծաղկաձև պսակել սուրբ զեկեղեցի և զուարճալից առնել զմանկունս նոր Սիոնի, և բարձրացուցանել զեղջիւր սուրբ եկեղեցւոյ. զոր տեսանելով վարատեցելոցն և յերկուացելոցն ի հօտէն Քրիստոսի՝ զարթիցեն ի մահահանգիստ քնոյն, զղջասցին և ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն. աւետարանական դաւանմամբ հաստատեսցին ի հաւատս սուրբս և ի խոստովանութիւն սրբոյ Երրորդութեանն։ Եւ այս գործիւր ի բառնալ արդարոց և ընդ վերանալ ընտրելոց Աստուծոյ, և ընդ սերանալ և ի բազմանալ ազգի ազգի չարեաց է վերայ երկրի զոր սերմանեաց չար ոսոմանցն սերմանողն որդին կորստեան և մշակն անօրէնութեան։

Ընդ ժամանակս բռնակալութեան մեծի արքային

Digitized by Google

Տաճկաստանի Սուլիման Շահ Սուլտան Ռուգնատտինին, որ բազում հանդէս քաջութեան և յաղթութեան պատերազմի ցուցեալ յաւուրս ժամանակաց իւրոց, և յաչս յոքունց մեծարեալ առ արկանելով ամենայն թագաւորաց տիեզերաց։ Սա որդի գոլով մեծ և յաղթող ինքնակալ Խլիճ Ասլան Սուլտանին. ուստի գրաւեալ սորա ընդ իշխանութեամբ տէրութեանն իւրոյ զկողմանս հիւսիսոյ, սկսեալ ի Կեսարացւոց մայրաքաղաքէն մինչև ի մեծն Բիւզանդիոն, որ այժմ կոչի Կոստանդինուպօլիս, ունելով ընդ իշխանութեամբ զՊոնտոս և զՍեբաստիա և զամենայն զՃմենտացւոց և զՏրապիզոնտացւոց զտէրութիւնն. և հասեալ մինչև ի մեծ և ի հռչակաւոր քաղաքն Թէոդուպօլիս՝ որ կոչի Կարնոյ քաղաք, նուաճեաց ընդ գաւազանաւ զԵկեղեաց և զԴարանաղեաց, արկ ընդ ձեռամբ զիշխանն Ծոփաց, փութացաւ մինչև ի լայնանիստ քաղաքն Մելիտենի, մերձ ի սահմանսն Եդեսացւոց. համարձակեցայց ասել թէ և զամենայն աշխարհ, տիրելով ի վերայ ամենայն հայրենական աշխարհաց իւրոց։ Եւ արդ այսոցիկ այսպէս եղելոց, յաւուրս սորա յերկրորդում ամի տէրութեան իւրոյ յայտնեցաւ մեծ և սքանչելի, պանծալի և հռչակաւոր վկայն Քրիստոսի, երանեալ նահատակն սուրբն Թէոդորոս։

Սա ծնեալ լինէր ի գաւառի Դամրաց՝ յաշխարհն Կապադովկացւոց, ի քաղաքին Կեսարացւոց, որ է աթոռ հայրապետական և թագաւորական, և ամենայն քաղաքաց Յունաց գահերիցագոյն, յոքունս ունելով յինքեան արեգակունս՝ զհոյլս վկայիցն սրբոց, որ ջահաբորբք լուսով պայծառացուցանեն զեկեղեցիս քրիստոնէից. զՄերկիւրիոս ասեմ և զԳորդիոս, և զմեծն Բասիլիոս, առ որս մի ի նոցանէ է տեսանել զյոքներանեան վկայն Քրիստոսի զսուրբն Թէոդորոս. արդ ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ օրհնեալ նախասացեալ քաղաքն Կեսարիա՝ որ զայսպիսի ջահունս և զարեգակունս ծնուցանէր։ Բայց ի հանդէս պատմութեան եկեսցուք քաջ և յաղթող վկայիս, և զսորայս քաղաքավարութիւն դրուատական բանիւք պանծալի երևեցուսցուք.

այլ դուք մաքրեցէք զլսելիս յունկնդրութիւն համբերատար ժուժկալութեան սրբոյ նահատակին։ Արդ սա որ այսքան երանութեան արժանաւորեալ, ի տղայական տիոց և ի մայրական խանձարրոց հրահանգեալ և կրթեալ օրինօք և մարգարէիւք և աւետարանական կաթամբն սնեալ՝ ըստ շնորհաց սրբոյ աւազանին, զարգանալով ըստ աճման հասակի մինչև յարբունս երիտասարդութեան հասեալ, գնալով յօրէնս Տեառն և խոկալով ի պատուիրանս նորա ի տուէ և ի գիշերի. և տայր ըստ սարսափ հասարակաց բնութեանս զուգաւորի պարկեշտ ամուսնութեամբ, ներգործելով արուեստս ինչ զոր առնէր՝ այնու հատուցեալ վճարէին զպէտս կենաց իւրեանց, ըստ մարգարէին, թէ՝ Զվաստակս ձեռաց քոց կերիցես։ Այլ ի միտս եղեալ երանելւոյն ի հնարս մտանէր թէ զիարդ և կամ որով աղագաւ կարասցէ զաղքատութիւն մարմնոյն ի դերև կացուցանել, ըստ սովորութեան բնութեանս յառաջիկայն հակամիտէր։ Բայց է աղքատութիւն որ պարունակեալ ունի յինքեան բազմազան փարթամութիւն, և է փարթամութիւն որ ունի յինքեան զնորին հակառակն, թուի թէ մի գոլով սա յայնց աղքատացելոցն՝ զոր աստուածեանն բան յաշխարհակեցոյց քարոզութեանն երանական բանին արժանացոյց ասելով. Երանի աղքատաց հոգւով։

Սա երթեալ առ մի ոմն ի քաղաքացեացն ասելով. «Տուր ինձ փոխ դահեկանս ոսկւոյ և արծաթոյ, օգնական լինելով իմոյ թշուառութեանս». իսկ նա յօժարութեամբ ետ նմա որչափ խնդրեաց ինչ ի նմանէ. և առեալ նորա գնաց և անդ վաճառեաց, որպէս ինձ թուի, թէ զանցաւորս վաճառեաց զարքայութեանն ստանալով զանդ երանութիւնն, զդրախտին վայելչութիւնն, զգրգանս գոգոյ հայրապետին Աբրահամու։ Ո՞վ հրաշիցս. ոսկին առ հողն խոնարհէր, և որ բարձրեալն էր զգանձն անմահական՝ առ այն որ ունէր զգոյս ապականացու։ Եւ իբրև մերձեցաւ ժամանակ հա-

13. Տես Սղ. ձԻԷ. 2. 15. Ձեռ. կեցուցանել. 22. Տես Մտթ. Ե. 3.

տուցանելոյ զտրիտուր փոխարինին՝ զոր նա ոչ ունէր հատուցանել, և որ պարտոյ տէրն էր՝ նեղէր կեղէր դարձուցանել անդրէն զպարտսն. և նա ոչ կարէր։ Ապա առեալ տանէր առ դատաւոր քաղաքին, որ էր կարգեալ արքունական հրամանաւ դատիչ և իշխաւարար ի վերայ ամենայն գաւառացն։ Եւ իբրև յուղի անկեալ գնացին՝ պատմեաց զիրսն ստուգապէս ներհակն դատաւորին, և նա հրամայեաց ամենայն իրաց հատուցանել անդրէն զդարձն։ Եւ իբրև ելին յերեսաց դատաւորին՝ կալեալ զնա չար ծառայակցին նեղէր զնա խեղդելով. իսկ Թէոդորոս զեղծեալ ի ձեռաց նորա դարձեալ միւսանգամ անկանէր յատպարանս դատաւորին. և անդանօր ուրանայր զքրիստոնէական հաւատն զոր ունէր, և ճողոպրեալ զերծանէր առ ժամայն յառնէն որ նեղէր զնա։ Ապա այնուհետև գնացեալ ի յարկս իւր և նոյն ժամայն ուշաբերեալ յիշեաց զտէրունական բանն որ ասէ, Թէ՝ Որ ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացայց և ես զնա առաջի Հօրն իմոյ և հրեշտակաց սրբոց։ Խորհուրդս բարիոք զմտաւ ածելով՝ սորջացեալ տիրապէս և ի զղջումն եկեալ հաւատապէս, անկանէր ի վերայ երեսաց իւրոց յերկիր, լայր դառնապէս և արտասուէր ողորմաբար, աղաչելով զկորուստ անձին իւրոյ. և եկեալ ի զարհուրումն՝ չքեղանայր դէմք երեսաց նորա որպէս երանեալ և քաջ վկային Քրիստոսի սուրբն Յակովբիկ, որ կատարեցաւ արեամբ ի փառս Աստուծոյ։

Յարուցեալ այնուհետև խոյս ետ ի տեղւոջէ անտի, յուղի անկեալ գնաց ի քաղաքիկ մի փոքրիկ՝ որ էր մերձ ի սահմանս Յունաց, որ ըստ հայական անսայթաք սիղոբայիցն կոչի Տնարհաւոր, և ըստ իսմայելեան խաղտալուր լեզուին Խիրշանք. և անդանօր զտեղի առեալ բնակէր, ի ծածուկ ունելով զհաւատն հայրենատուր և ամբիծ որ առ Քրիստոս. և անդ կացեալ ապաշխարէր մեծաւ զղջմամբ։ Յայնժամ ի սողոբելոյ չարին և ի հակառակու-

17. Տես Մտթ. Ժ 33 և Ղկ. ԺԲ 9. 28. Տպ. խաղխտալուր.

Digitized by Google

թենէ չար կամաց բանսարկուին՝ որ հանապազ մարտնչի ընդ որդիս մարդկան, յարուցանէր ի վերայ նորա փորձութիւնս։ Այր ոմն ի քաղաքէն Կեսարու ի դասուց անօրինացն՝ գնացեալ ի նախասացեալ քաղաքն յայն, և հանդիպմամբ պատահեալ մեծին այնորիկ և ցանկալի առն Աստուծոյ, և ի տեսլենէն ծանեաւ զնա, և ըմբռնեալ զամենաերջանիկ վկայն Քրիստոսի խօսել սկսաւ և ասէ ցնա. «Ո՞չ դու այն ես որ ուրացար զՔրիստոսն քո և ի բաց կացեր ի ճշմարտութենէ անտի նորա, և եղեր ուրացող և պաշտօնատար մերոց օրինացն. և այժմ տեսանեմ զքեզ զի ունիս զառաջին հաւատսն և զկարգսն քրիստոնէից, և պատուես զնա յօժարութեամբ, ուրանալով զմեր կրօնսն և քամահելով զհաւատսն յոր սկսարին»։ Քանզի լուեալ էին զդարձ սորայն և ոչ գիտէին թէ ուր իցէ՝ զի կալցեն և սպանցեն զնա։ Իսկ անպարտելի վկայն Քրիստոսի աներկիւղ համարձակութեամբ խոստովանեաց զճշմարտութիւնն և ոչ ուրացաւ, ասելով յայտնապէս. «Այո, ես եմ որ խաբէութեամբ չարին պարտեցայ և յանցաւոր գտայ առ Տէրն իմ Յիսուս Քրիստոս, որ է արարիչ երկնի և երկրի, երևելեաց և աներևութից, որ միայն ունի զանմահութիւն բնակեալ ի լոյս անմատոյց. զիա՞րդ ուրանայի զնա որով ճանաչէի զնա յորովայնէ մօր իմոյ. զնա միայն պաշտեմ և նմա երկրպագեցի ի մանկութենէ իմմէ. բայց այժմ զղջացեալ ծանեայ զճշմարտութիւնն և դարձայ ունել զհաւատսն իմ որ առ նա»։ Յայնժամ սրտմտութեամբ և բարկութեամբ ցասուցեալ այրն այն՝ ոչ կամեցաւ թողուլ զնա, այլ անդէն ըմբռնեալ տանէր զնա եպերանօք առ զօրագլուխ քաղաքին, որ արքունական հրամանաւ ընկալեալ ունէր զվերակացութիւն քաղաքին, և պատմեաց նմա զամենայնն։ Զայս իբրև լուաւ քաղաքապետն այն՝ բարկացեալ հրամայեաց ձաղածանակ առնել և շրջեցուցանել զնա արհամարհանօք և անարգանօք ընդ փողոցս քաղաքին ի տեսս ամենայն ռամկին։ Իսկ սուրբ վկայն Քրիստոսի զայն ամենայն ինքեան փառս և պատիւ համարելով տանէր ժուժկալութեամբ։ Յայնժամ բարկացեալ բռնաւորն հրամայեաց արկանել

զսուրբն ի բանդի աւուրս ինչ։

Իսկ յետ աւուրցն անցանելոյ հանեալ տայր ի ձեռս դահճացն տանջել զերանելին. և զկնի չարչարանացն հրաման տայր կապանօք և դառն նեղութեամբ խաղացուցանել ի քաղաքն Կեսարիա առ մեծ արքայն։ Եւ յորժամ մուծին ի քաղաքն՝ նոյնժամայն արկին ի բանդ զերանելին։ Իսկ ի վաղուեան աւուրն ի ծագել արեգականն՝ ընթացեալ պատմեցին արքային զանցս սրբոյ վկային. իսկ նա իբրև լուաւ հրամայեաց փոյթ ընդ փոյթ ածել զառաջեաւ. և ի մտանել սրբոյն հայեցաւ ի նա արքայն մեծաւ ցասմամբ, և ասէ ցնա. «Այր դու, յիրաւի՞ ասեն զքէն եթէ տաճիկ եղեր, և այժմ յետս դարձեալ՝ ունիս զկարգս և զաղանդս քրիստոնէից, և պատուես զօրէնս Նազովրացւոյն, պաշտես զաստուած զոմն զոր Յիսուսն անուանեն, որ յինքեան արդէն չարչարեալ և խաչեալ՝ մեռանէր զչարագործաց մահն, և զմերս դեն թողեալ քամահես արհամարհանօք. արդ հրամայեմ քեզ առանց ամենայն պատճառի ունել զմերս սահմանեալ կրօնս, և թողուլ զանօտի և զընդունայն կարգ քրիստոնէից»։

Յայնժամ անպարտելի վկայն Քրիստոսի մեծաւ համարձակութեամբ եբաց զշնորհալից բերանն՝ ասելով. «Ես, ո՛վ թագաւոր, քրիստոնեայ եմ և ծառայ Քրիստոսի, այլ և ի շաւակէ քրիստոնէից, և ոչ երբեք ուրեք լուայ եթէ եղեալ է յազգատոհմի իմում ի մասինդ յայդմիկ՝ յորում դուդ ասացեր, և ոչ ես եղէց յաւիտեան. այլ միոյն միայն Աստուծոյն իմոյ Յիսուսի Քրիստոսի՝ որ մեռաւն վասն մեր և մահուամբն իւրով կենդանացոյց զազգս մարդկան։ Արդ ի սկզբանէ ի Նա եմք հաւատացեալ, և ազգաց յազգս զնա ունիմք փրկիչ և կեցուցիչ. Նմա պարտ է ծառայել և Նմին միայն գտանել հպատակ. մի՛ և մի՛ լիցի ուրանալ ինձ զՏէրն իմ և զԱստուածն ճշմարիտ՝ որ է տէր կենաց և մահու»։ Կրկնեաց դարձեալ արքայն և ասէ ցսուրբն. «Մի՛ այդպէս կայցես ի նմին յամառութեան և ընդդիմանար իմոց հրամանացս, ապա թէ ոչ՝ քարամբք քարկոծ հրամայեմ առնել

զքեզ և բառնալ ի քաղցր կենացս»: Պատասխանի ետ սուրբն Աստուծոյ և ասէ. «Գիտեա այսուհետև, ո՛վ արքայ, զի ես ոչ եմ եղեալ ի մտի խելամ երկնչել ի սպառնալեաց քոց, և ոչ ունիմ խորհուրդ և առաջարկութիւն կամաց ուրանալ զՔրիստոսն իմ, և լինել պաշտօնատար սնոտեապաշտից և խաբեբայ կռոնիցն ձերոց. այլ պատրաստ եմ յօժարական կամօք յանձն առնուլ զչարչարանս և զնեղութիւնս վասն անուան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ վասն իմ յանձն առ զչարչարանս խաչին և մահու. արդ մի՛ յապաղեր, այլ զոր ինչ առնելոց ես արա վաղվաղակի»:

Եւ մրմռեալ արքային հրամայեաց բռամբք հարկանել զբերան սրբոյ վկային այնքան, մինչև թափել ատամանցն ի լնդաց նորա. և ետ տանել զնա առ դատաւորն ասելով. «Քննեա զդա որպէս և կամիս՝ թէ յորմէ ազգէ է, և փարեացիս ընդ դմա ըստ հաճոյից քոց»: Իսկ նորա առեալ տարաւ զնա ըստ հրամանի ինքնակալին. և ի մտանելն նորա առ դատաւորն՝ ծանեաւ զնա վաղվաղակի և ասէ. «Ո՞չ դու էիր որ երբեմն եկիր առաջի իմ և ուրացար զՔրիստոսն քո և զհաւատն հայրենի, և այժմ աղաղակս աղաղակեցար յառնելն յայնմանէ՝ որում պարտէիր զաւակս դարձեկանացն. և ես ընկալայ զքեզ որպէս զորդի հարազատ և զեղբայր սիրելի, և պատուեալ մեծարեցի արձակելով զքեզ. արդ ուստի՞ գաս, և զի՞նչ է զոր լսեմս զքէն. Ճշմարի՞տ են եթէ սուտ, ասա վաղվաղակի, քանզի ի քէն կամիմ ուսանել զճշգրիտն»: Իսկ · սքանչելի այրն Աստուծոյ և մեծ վկայն Քրիստոսի բարձր ձայնիւ սկսաւ առաջի բազմամբոխ հրապարակին և յոգնախումբ ռամկին աղաղակել համարձակապէս լի արտասուօք ի լուր ամենեցուն, և ասէ. «Քրիստոնեայ եմ ըստ շնորհի աւազանին և ծառայ խաչելոյն Աստուծոյ. և արդ մի՛ լիցի ինձ ուրանալ զնա, այլ խոստովանիմ զնա Աստուած և տէր և թագաւոր, իշխան և փրկիչ, և յանձն առնում զամենայն հարուածս տանջանաց՝ վասն ա-

6. Ձեռ. յաւժական. 27. Տպ. տղաղակեաց.

*մենաստուրք անուան նորա. այլ և խնդութեամբ մեռանիմ՝ զի կեցից առաջի նորա զուարթ երեսօք. զի թէպէտ և յանցաւոր գտայ առ Տէրն իմ յառաջագոյն առաջի քոյոյդ ամենեցի, այլ յուսամ և ակն ունիմ գտանել և առնուլ ի նմանէ զթողութիւն յանցանաց ի ձեռն հեղման արեան իմոյ. աւա բռնաւոր, ով դատաւոր. զամենայն յինէն ճշմարտութեամբք:*

*Եւ պատասխանի դատաւորն և ասէ ցնա. «Ո՛ բդեաշխ իմ, մի ընդդիմանար խրատու իմոյ, յիշեա զդաշինս ուխտին՝ զոր հաստատեցեր առաջի իմոյ ատենի. եւ մերկացին ընկալայց զքեզ և տաց քեզ պանծս ոսկւոյ և արծաթոյ՝ առ ի բաւականութիւն պիտոյից կենաց անձին քում, և պատուեալ մեծարեսցիս յամենեցունց ի մէնջ ի մեծամեծաց և ի փոքունց, և լինիս երեւելի ի դրան արքունի. որովհետև ընծայեցեր զքեզ միայն Աստուծոյ, և կամօք քո ուրացար զանուն քրիստոնէութեան՝ մերոց անսալով կրօնից. արդ որդեակ, մի փոխերանար և փոխիր յայնմ բարի խորհրդոյն, մատնելով ի կորուստ զհասակ մանկութեան քո»: Զայս և որ սոցին նման բանս պատրողականս խօսէր դատաւորն ի լսելիս սրբոց վկային, կարծելով հաւանեցուցանել զնա. իսկ ամենապարծ սուրբն խօսեալ զակրանչս իւր՝ ամենևին ոչ ընդունէր զպատասխանս առ ի նմանէ, այլ միայն համարձակաձայն բարբառեալ ասէր. «Ո՛հ դատաւոր, խոստանալով ինձ ոսկի և արծաթ և մեծարանս և պատիւ ընդունել յարքունուստ, այդուիկ կամելով հաւանեցուցանել զիս քոյին կորստական և սուտապատիր բանիցդ, թողուլ զիմ հաւկեցուցանեւ զճանապարհն ուղիղ՝ որ տանի ի կեանսն յաւիտենից, ուր պանծն անապական է և արքայութիւնն անվախճանան, և լսել քոյին մոլար խրատու. փոխան որոյ և ես իսկ արտասուեմ զկորուստ անձանց ձերոց, և զխաւար կուրութեան իմանալի աչաց ձերոց. ուստի մնայ և պահեմ ձեզ հուրն անշէջ և որդն անքուն, որպէս ասաց Տէրն:*

32. Հմմ. Մարկ. Թ. 47.

Յայնժամ դարձեալ վկային ոյժ առեալ ի Հոգւոյն սրբոյ՝ երդմամբ կամեցաւ հաստատել զբանն, և ասէ. «Երդուեալ իմ՝ յերկինս և յերկիր և յարարիչ նոցին և ի հաստիչ, զի որպէս ոչ է նոցա հնար ելանել ընդ կարգս սահմանի իւրեանց, նմանապէս և ես ոչ եւս եմ փոխելոց յիմոց բարիոք խորհրդածութեանց. արդ զոր ինչ առնելոց ես արա վաղվաղակի, զի ես պատրաստ եմ ի մեռանել որպէս ասացի»: Եւ ամպարիշտ դատաւորն լցեալ ցասմամբ, ետ զնա ի ձեռս չարադև դահճացն հարկանել և տանջել զնա յերկար: Իսկ սպասաւորք չարին գանեալ քարամբք զկզակս նորա, մինչև ջախջախեալ խորտակեցան մնուրք բերանոյ նորա, առ որս վարդատեսակ արիւնն կայլակացեալ հոսմամբ ոռոգանէր զերկիրն. և անկեալ կայր առաջի նոցա իբրև զմեռեալ: Իսկ նոցա մերկացեալ ի նմանէ զհանդերձիկն զոր ունէր, և առիգածեալ սրբոյն՝ տանէին ի բանդն և պահէին զգուշութեամբ: Իսկ երանելի վկայն Քրիստոսի մտանելով ի բանդն՝ զամենայն գիշերն հանէր ի գլուխ յաղօթսն Աստուծոյ, բերկրալից սրտիւ և անտրտում ուրախութեամբ գոհանայր ի վերայ անպատում պարգևացն Աստուծոյ, որ արժանի արար չարչարիլ վասն նորա. ցնծայր և օրհնէր զԱստուած. և այնպէս կայր բազում չարչարանօք ի խաւարչտին բանդին զօրէն փեսայի յառագաստի: Եւ իբրև այդ եղև, ածեալ լինէր զառաջեաւ սուրբն հանդերձ կապանօք առաջի դատաւորին յապարանս նորա. իսկ դատաւորն իբրև ետես զքաջայաղթ վկայն Քրիստոսի՝ խօսել սկսաւ ցնա և ասէ. «Իմաստնացմր, որդեակ իմ Թէոդորէ. այժմ գիտեմ զի փոխեալ ես ի չար խորհրդոցն զոր ունէիր ի յանցելում աւուրն. ահա տեսանեմ, թէ որչափ դժուարին է նեղութիւնք մարմնոյ կամ երկիւղ մահու, վասն որոյ և ես իսկ ապաշաւեմ զերեկեան աւուրն զոր սրտմտութեամբ և բարկութեամբ յանցեայ առ քեզ. և այժմ ամաչեմ ի քէն, և

11. Տպ. ջաղջախեալ.

Digitized by Google

տաղաչելով խնդրեմ թողուլ հայրական աւետացս զտանջանսն՝ զոր առ քեզ ներգործեցի. յաղթեալ ի ցասմանէ սրտիս ոչ կարացի համբերել քոյոց ախմար և տղայական բարուցդ և երիտասարդական համարձակութեանդ։ Արդ ի բաց դիցես այժմ առ ի քէն զտմարդի և զանօգուտ կամսն՝ զոր ընկալար ի ձեռն խրատու քրիստոնէից, քանզի գիտեմ ես ամենայն իրօք թէ նոքա հրապուրեցին զքեզ կալ հակառակ մերոցս կրօնից. արդ լուր ինձ և դարձ վերստին և վայելեսցես ի բազում բարութիւնս ի կեանս աշխարհիս այսորիկ. և ոչ միայն այս, այլ լիցիս հաճոյացեալ յաչս ամենեցուն և սիրեցեալ ի դուռն արքունի. ահա ասացի քեզ մեղմով զամենայն, բայց զօգուտ անձին քո դու քեզէն ընտրեսցես»։

Իսկ երանելի վկայն Քրիստոսի ասէ ցդատաւորն. «Լուայ զասացեալսդ առ ի քէն զանօգտակարսդ իմ և զանպիտանսդ, որ առ ժամանակ մի է և ապա փութով լուծանի. մի՛ արդեօք ո՞չ լուար դու յինէն առաջի քո և ամենայն ատենիդ երէկ յանցելում աւուրն, որպէս երդուայ Աստուծով իմով, ոչ փոխիլ ի հաստատուն յուսոյն իմոյ զոր ունիմ առ Քրիստոս ի մանկութենէ իմմէ. ապա եթէ մոռացեալ իսկ է քո, դարձեալ կրկնեմ և երեքկնեմ և զայն ածեմ ի յիշատակ անդանդաղ և յօժարական կամօք, զի հաւատն իմ և յոյսն զոր ունիմ առ Տէրն իմ՝ անխախտելի է և հաստատուն. զի դիւրին է շարժել կամ փոփոխել լերինս բարձրացեալս՝ որ կայ հանդէպ մեր, քան թէ յիմոց մտացս փոփոխել և կամ ի բաց կալ ի հաւատոցս և ի յուսոյն որ առ Քրիստոս. արդ դու որպէս և կամիս արագապէս կատարեա զկամս հրամանաց քոց ի վերայ իմ»։ Եւ նոյնժամայն բարձր ձայնիւ գոչեաց փառաւոր և սքանչելի վկայն Քրիստոսի ի լուր ամենեցուն և ասէ. «Քրիստոս Որդի Աստուծոյ, որ ի հայրական ծոցոյ

25. Տպ. բարձրացելոյ. բնագիրը ունեցած լինելու էր բարձրացելս (ե պատիւով)։ որի պատիւը չնչուելով եւ ս շփոթուելով ո=ոյ ձևի հետ, գոյացել է բարձրացելոյ։

խոնարհեցար առ ազգս մարդկան և առեր մարմին ի սրբոյ Կուսէն, ծնար անճառապէս և առանց ապատոյ. և զկանխագիտութիւն մարգարէիցն կատարելով եկեր ի Յորդանան, գառնդ Աստուծոյ՝ որ բառնաս զմեղս աշխարհի, և նոյնժամայն տեսեալ ցուցեալ զերկինս մեծի Կարապետին քո, և Հոգւոյն Աստուծոյ զի իջանէր ի վերայ փառակցիդ իւրոյ. որ զամենայն յանձն առեր վասն մեր բայց ի մեղաց, և խաչիւ և արեամբ ազատեցեր զմեզ ի ծառայութենէ մեղաց. խոստովանիմ զքեզ Աստուած կատարեալ, մի յԵրրորդութենէդ, համագոյակից և փառակից, պատուակից և իշխանակից Հօր և Հոգւոյդ սրբոյ. խոստովանեա և զիս, Տէր, առաջի Հօր քոյ և հրեշտակաց սրբոց, որպէս խոստացեր. մի յանարժանութիւնս իմ հայեսցիս, այլ գթա յիս, և մի անտես առներ զծառայս քո. և կատարեա զընթացս իմ ըստ կամաց քոց բարերարաց, զի դու միայն ես փառաց և պատուոյ արժանի. և քեզ փառք յաւիտեանս. ամէն։

Իսկ անօրէն դատաւորն իբրև առաւել լցեալ արտմտութեամբ և բարկութեամբ՝ յարձակեցաւ ի վերայ սրբոյն զսպասաւորն անօրէնութեան, և անտանելի տանջանօք չարչարէին զամենաերջանիկ նահատակն Քրիստոսի, մինչև բազմաց իսկ ասել թէ մեռաւ. և քարշեալ ընդ փողոցամէջ քաղաքին՝ ունելով զհերաց գլխոյ, և տարեալ ընկեցին զնա ի բանդին. որ և անդ լինէր զաւուրս երիս. Իսկ երանեալ վկայն կոչեցեալ զայր ոմն քահանայ ճշմարտախօս և իրաւաբան, բարեպաշտօն և երկիւղած յԱստուծոյ, որում անուն էր Գէորգէոս, որ իբրև լուաւ՝ յօժարական կամօք եկն առ նա. և ասէ սուրբն. «Ո՞հ տէր իմ Գէորգէոս, յարուցեալ երթայցես ի վանսն հայրապետին մերոյ, առ եպիսկոպոսապետն և տէրն իմ Անանիաս, և պատմեսցես նմա զամենայն անցս աղետից և զկիրս չարչարանաց անձին իմոյ. և աղաչեա զնա աղօթս առնել ի վերայ իմ, թերևս արժանի եղէց առնուլ յանձն զմարտիրոսական նահատակութիւն»։ Եւ ապա ողջունեալք

ի միմեանց՝ առաքեաց զքահանայն, և ինքն անդէն յարուցեալ կայր յաղօթս. իսկ նախասացեալ քահանայն եկեալ փութանակի առ կաթուղիկոսն Հայոց՝ պատմեաց նմա զամենայն իրսն ստուգութեամբ։ Իսկ նա ըստ բնածին բուսոյ բարուցն և ըստ առաքինասէր կամացն զոր ունէր առ որբս և այրիս և առ անայցելուս, ևս առաւել առ այնոսիկ որ վասն հաւատոց արեամբ չափ նահատակէին, որպէս և առ սուրբ վկայիւս է տեսանել. զոր իբրև լուաւ զասացեալսն առ նա ի քահանայէն վասն սրբոյն՝ յարուցեալ խնդոյն եմուտ ի սենեակ իւր հանդերձ սուրբ եպիսկոպոսօք և ուղղափառ վարդապետօք և ամենայն եկեղեցական ուխտիւն, և անկեալ յերկիր ի վերայ երեսաց իւրեանց՝ աղօթս մատուցանէին առաջի Աստուծոյ հանդերձ ջերմեռանդն արտասուօք զաչս ի յերկինս համբարձեալ յօգնականութիւն զնահատակադիրն կոչէին՝ ապրեցուցանել զծառայն իւր զսուրբն Թէոդորոս, ասելով երգս ինչ ի սաղմոսէն միաբանական ձայնիւ. Աստուած յօգնել ինձ նայեաց, և Տէր յօգնել ինձ փութա. և դարձեալ՝ Ձայնիւ իմով ես առ Տէր կարդացի. և թէ՝ Տէր լուր աղօթից իմոց. և դարձեալ՝ Բազում նեղութիւնք են արդարոց, յամենայնէ փրկէ զնոսա Տէր։ Եւ անդ կացեալ յաղօթս իբրու ժամս երիս, դարձեալ անդրէն վերառաքեն զնախասացեալ քահանայն Գէորգէոս առ քաջամարտիկ վկայն ի բանդին, և բանս բազումս մխիթարականս զկնի նորա. և նա յարուցեալ գնաց և պատմեաց զամենայն յորդորական զբանսն և զօրինակ համբերութեան զառ ի սրբոյ հայրապետէն ասացեալսն. զոր լուեալ սրբոյ վկային ևս առաւել հաստատեալ ի հաւատս անշարժ յուսոյն որ ի Քրիստոս. և քահանային երկրպագեալ սրբոյն՝ դարձաւ անդրէն առ քահանայապետն։ Իսկ կաթուղիկոսին հրամայեալ նոյն քահանայի առնուլ կերակուր ինչ ի պէտս մարմնոյ երանելւոյն՝ տանել ի բանդն. մտեալ ի ներքս առ

1. Տպ. ի միմիեանց. 17-21. Տես Սղ. ԿԹ. 2, Գ. 5, ՃԱ. 2, ԼԳ. 20.

Digitized by Google

խոնարհեցար առ ազգս մարդկան և առեր մարմին ի սրբոյ Կուսէն, ծնար անճառապէս և առանց աղտոյ. և զկանխատեսութիւն մարգարէիցն կատարելով եկիր ի Յորդանան, գտանել Աստուծոյ՝ որ բառնաս զմեղս աշխարհի. և նոյնժամայն տեսեալ ցնծեալ զերկինս մեծի Կարապետին քո, և Հոգին Աստուծոյ զի իջանէր ի վերայ փառակցիդ իւրոյ. որ զամենայն յանցանս առեր վասն մեր բարձ ի մեղաց, և խաչիւ և արեամբ ազատեցեր զմեզ ի ծառայութենէ մեղաց. խոստովանիմ զքեզ Աստուած կատարեալ, մի յերրորդութենէդ, համագոյակից և փառակից, պատուակից և իշխանակից Հօր և Հոգւոյդ սրբոյ. խոստովանեա և զիս, Տէր, առաջի Հօր քոյ և հրեշտակաց սրբոց, որպէս խոստացեր. մի յանարժանութիւնս իմ հայեսցիս, այլ գթա յիս, և մի անտես առներ զծառայս քո. և կատարեա զընթացս իմ ըստ կամաց քոց բարեսիրաց, զի դու միայն ես փառաց և պատուոյ արժանի. և քեզ փառք յաւիտեանս. ամէն։

Իսկ անօրէն դատաւորն ես առաւել լցեալ սրտմտութեամբ և բարկութեամբ՝ յարձակեցաւ ի վերայ սրբոյն զպատասխանոյն անօրէնութեան, և անտանելի տանջանօք չարչարէին զամենեւրջանիկ նահատակն Քրիստոսի, մինչև բազմաց իսկ ասել թէ մեռաւ. և քարշեալ ընդ փողոցամէջ քաղաքին՝ ունելով զհերաց գլխոյ, և տարեալ ընկեցին զնա ի բանդին. որ և անդ լինէր զաւուրս երկուս. Իսկ երանեալ վկայն կոչեցեալ զայր ոմն քահանայ ճշմարտախօս և իրաւաբան, բարեպաշտօն և երկիւղած յԱստուծոյ, որում անուն էր Գէորգէոս, որ իբրև լուաւ՝ յօժարական կամօք եկն առ նա. և ասէ սուրբն. «Ո՞հ տէր իմ Գէորգէոս, յայտնեցեալ երկնայցես ի վախճան հայրապետին մերոյ. առ եպիսկոպոսապետն և տէրն իմ Անանիաս, և պատմեսցես նմա զամենայն անցս աղետիցս և զկեղս չարչարանաց անձին իմոյ. և աղաչեա զնա աղօթս առնել ի վերայ իմ, թերևս արժանի եղէց առնուլ յանձն զմարտիրոսական նահատակութիւն։ Եւ ապա ողջունեալք

*ի միմեանց՝ առաքեաց զքահանայն, և ինքն անդէն յարուցեալ կայր յաղօթս. իսկ Նախատացեալ քահանայն եկեալ փութանակի առ կաթուղիկոսն Հայոց՝ պատմեաց նմա զամենայն իրսն ստուգութեամբ։ Իսկ նա ըստ բնածին բուսոյ բարուցն և ըստ առաքինասէր կամացն զոր ունէր առ որբս և այրիս և առ անայցելուս, եւս առաւել առ այնոսիկ որ վասն հաւատոց արեամբ չափ նահատակէին, որպէս և առ սուրբ վկայիւս է տեսանել. զոր իբրև լուաւ զասացեալսն առ նա ի քահանայէն վասն սրբոյն՝ յարուցեալ իսկոյն եմուտ ի սենեակ իւր հանդերձ սուրբ եպիսկոպոսօք և ուղղափառ վարդապետօք և ամենայն եկեղեցական ուխտիւն, և անկեալ յերկիր ի վերայ երեսաց իւրեանց՝ աղօթս մատուցանէին առաջի Աստուծոյ հանդերձ ջերմեռանդն արտասուօք զաչս ի յերկինս համբարձեալ յօգնականութիւն զնահատակադիրն կոչէին՝ ապրեցուցանել զծառայն իւր զսուրբն Թէոդորոս, ասելով երգս ինչ ի սաղմոսէն միաբանական ձայնիւ. Աստուած յօգնել ինձ նայեաց, և Տէր յընկերել ինձ փութա. և դարձեալ՝ Ձայնիւ իմով ես առ Տէր կարդացի. և թէ՝ Տէր լուր աղօթից իմոց. և դարձեալ՝ Բազում նեղութիւնք են արդարոց, յամենայնէ փրկէ զնոսա Տէր։ Եւ անդ կացեալ յաղօթս իբրու ժամս երիս, դարձեալ անդրէն վերառաքեն զնախատացեալ քահանայն Գէորգէոս առ քաջամարտիկ վկայն ի բանդին, և բանս բազումս մխիթարականս զկնի նորա. և նա յարուցեալ գնաց և պատմեաց զամենայն յորդորական զբանսն և զօրինակ համբերութեան զառ ի սրբոյ հայրապետէն ասացեալսն. զոր լուեալ սրբոյ վկային եւս առաւել հաստատեալ ի հաւատս անշարժ յուսոյն որ ի Քրիստոս. և քահանային երկրպագեալ սրբոյն՝ դարձաւ անդրէն առ քահանայապետն։ Իսկ կաթուղիկոսին հրամայեալ նոյն քահանայի առնուլ կերակուր ինչ ի պէտս մարմնոյ երանելւոյն՝ տանել ի բանդն. մտեալ ի ներքս առ*

1. Տպ. ի միմեանց. 17-21. Տես Սղ. ԿԹ. 2, Գ. 5, ՃԱ. 2, ԼԳ. 20.

նա՝ տայր նմա ուտել. զոր առեալ եկեր առաջի նորա. և ապա յարուցեալ երկոքին միաբան կացին յաղօթս և կնքեալ զինքեանս նշանաւ խաչին նստան. և աստուածունոյց քահանայն սկսաւ երկրորդել նմա զոր ինչ գրեալ է ի գիրս աստուածայինս, զնահատակութիւնս բազմաչարչար վկայիցն Աստուծոյ, զնեղութիւնս արդարոցն, զհամբերատար ժուժկալութիւնս սրբոցն, և զհանդէս նախամարտիկ արանցն ընտրելոց ի Քրիստոս, զլլկանսն, զձաղանսն, զխաչն, զեղէգն. նաև քարոզէր նմա ի հին և ի նոր կտակարանաց։ Իսկ սուրբն և ամենասուրբն ունկնդրութեամբ լսէր նմա և զուարթութեամբ ուրախանայր, ցանկայր և փափաքէր հասանել երանաւէտ կոչմանն և անթառամ պսակացն։ Իսկ քահանային համբուրեալ զսուրբն՝ յանձն արարեալ զնա ամրածածուկ աջոյն Աստուծոյ Հօր, և ինքն դարձեալ վերստին առ եպիսկոպոսապետն։ Իսկ կաթուղիկոսին զաւուրս վեց զայս այսպէս նախախնամեալ հոգաբարձութեամբ, առաքելով զքահանայն միշտ առ նա՝ որպէս ցուցաք յառաջագոյն։

Եւ ապա զկնի աւուրցն վեցից յղէր դատաւորն ի բանդն առ սուրբն ի պատուաւորաց իւրոց ի մեծամեծ աւագանւոյն, ի գիտնականացն և յընթերցողացն իւրեանց առասպելաբան ուսմանցն, խօսել ընդ նմա բանս ինչ պատրողականս, թերևս կարասցեն ածել ի հաւան զընտիր նահատակն։ Եւ մտեալ ամպարշտացն առ նա ի բանդին, տային զողջոյնն մահացու և նստէին առաջի նորա. խօսել սկսան և ասեն ցնա. «Ընդէ՞ր կաս և մնաս ի դժնին յամառութեան և նստիս ի խաւարչտին տեղւոջդ՝ մատնելով զանձն քո ի մահ, անտես առնելով զկեանս քո. վասն ո՞ւմ առնես զայդ և կամ վասն որո՞յ յուսոյ համբերես այդպիսի լլկանաց և անհանդուրժելի չարչարանաց. լուր մեզ և ընկեա ի քէն զընդունայն խորհուրդս կամաց

3. Տպ. խաչիւն. 21. Ձեռ. աւագայնոյն.

Digitized by Google

քոյ, և յարուցեալ ուղեկից լեր մեզ, զի գնասցուք առ գլխաւոր մերոյ օրինացն և ընկալցիս բազում ընծայս և պարգևս ի Նմանէ և ի մէնջ ամենեցուն, և զերծեալ ապրեսցիս ի տանջանացդ յորում կաս»: Եւ այսպիսի օրինակաւ բազում բանս հրապուրանաց ասէին առ սուրբ վկայն՝ խափանել կամելով զնա յառաջի եդեալ ճանապարհէն. այլ նա քանզի աստուածային հրով սիրոյն բորբոքեալ էր՝ ամենևին ոչ այլ ինչ տանէր պատասխանի առ նա եկելոցն, բայց միայն զայս բան ասելով, թէ՝ «Քրիստոնեայ եմ և Քրիստոսի ծառայ՝ ըստ վերստին ծննդեան աւազանին, և ճշմարիտ խոստովանող աստուածութեանն Քրիստոսի»: Եւ իբրև ոչ կարացին շարժել և խախտել զկարծրութիւն հաստատուն հաւատոյ նորա և տկարացան առ ի վանել զամուրս նորա, յարուցեալ այնուհետև ամօթալից գնացին ի տեղւոջէ անտի: Իսկ ի միւսում աւուրն խորհուրդ առեալ դատաւորն՝ առաքէր առ սուրբն զայլս ոմանս յընչաւէտ և ի գոյաւոր իշխանացն՝ բերելով ընդ իւրեանս ոսկի և արծաթ և հանդերձս ազնիւս և մեծագինս. և մտեալ դնէին զայն ամենայն առ ոտս սրբոյն, և ըստ օրինակի առաջնոցն բանիցն խօսէին առ նա: Ցայնժամ ամենայն երանութեանց արժանաւոր վկայն Քրիստոսի՝ տեսանէր իմանալի ականբ հոգւոյն զարկուած և զփորձանս բանսարկուին, զոր ածէր ի վերայ ինքեան ի ձեռն չար սպասաւորացն անօրինին, արհամարհեալ զնոսա ցրուէր և ի բաց մերժէր զպարգևս ընծայից նոցա զոր բերեալն էին նմա, և թքեալ քամահէր մղելով ի նոսա զկորստական ձիրն նոցա. և միայն զայս բան աղաղակէր, թէ՝ «Քրիստոնեայ եմ, քրիստոնեայ, ինչք ձեր և խոստումն պարգևաց ձերոց ընդ ձեզ լիցի ի կորուստն յաւիտենից»:

Եւ իբրև տեսին զանսասանելի զպնդութիւն հաւատոյ նորին, գնացին և նոքա ամօթալից դիմօք զօրէն յա-

1. Տպ. ուղղեկից.

Digitized by Google

ռաջագոյն եկելոցն։ Ապա զկնի աւուրց ութևտասանց անցանելոյ՝ վաստակեցան պարտեցան չար սպասաւորքն մարտնչելով ընդ սրբոյ վկային։ Այլ և յետ այսչափ անտանելի չար և դառն տանջանացն զոր անցուցին անօրէնքն ընդ սուրբ մարմին երանելւոյն, հատին ի վերայ նորա զվճիռ մահու այսպիսի օրինակաւ. «ԶԹէոդորոս այր ժանտ և ապարասան՝ ազգաւ և տոհմիւ և քաղաքավարութեամբ ի դաւառէս Գամիրաց, և զկերպարանն և զձև ունելով զաղքատութեան, չքաւորութեան աղաղաւ ի բաց կացեալ ի հայրենատուր հաւատոցն և այժմ անդրադարձեալ պաշտէ զԱստուած ումն զխաչեալն՝ զոր Յիսուս անուանեն, և որ ոչ միով իւիք կարացաք զմիտս նորա շրջել կամ շարժել յետս՝ յառաջի եդեալ ճանապարհէն, ոչ ամենայն մեծութեամբ աշխարհիս և ոչ բնաւ համօրէն տանջանարանօք զոր արկաք ի վերայ նորա. այսուհետև հրամայէ մեր դատողական ատեանս կախել զնա կապանօք ընդ փայտն մահապարտաց, և քարկոծ առնել ամենայն բազմութեամբ զչարաբաստ մարմին նորա»։ Յայնժամ անօրէն դահիճքն ըստ հրամանի դատաւորին եկեալք ի բանդն առ սուրբն, սկսան ողոքանօք բանիւք ասել ցերանելին. «Տես, ահաւասիկ հատաւ ի վերայ քո վճիռ մահու, արդ զոր ինչ կամիս և առնելոց ես՝ ասա մեզ վաղվաղակի»։ Իսկ սուրբ վկայն Քրիստոսի ասէ ցնոսա. «Արդ զոր յառաջագոյն ասացի ընդ ձեզ և զնոյն դարձեալ վերստին ասեմ, եթէ բանից ձերոց ամենևին ես ոչ եմ լսելոց. քանզի ի սմին յայսմ գիշերի տեսանէի յանուրջս զՏէրն իմ Քրիստոս ունելով ի ձեռին իւրում թագ իմն թագաւորական և պսակ արքունական. ձայն եղև առ իս ասելով. Թէոդորոսէ, եկ, առ զբրաբիոնն կենաց ի ձեռաց պսակադրիս. արդ իմ տեսեալ զայն ամենայն՝ ըղձալի տենչմամբ փութամ գնալ առ նա, զի ընկալայց զվարձս վաստակոց իմոց։ Արդ աղաչեմ զձեզ, մի խափան առնէք ընթացից իմոց առ ցանկալին անձին իմոյ, և մի կայք ներհակ ճանապարհիս՝ որ ի կեանս անապականս կարա-

Digitized by Google

պետէ։ Իսկ նոցա հանեալ զնա յարգելարանէն, առեալ տանէին ձեռս յետս կապեալս ի տեղի կատարման սապարիսի նահատակութեանն, և ամենայն բազմութիւն քաղաքին Կեսարացւոց ընթացեալ երթային զկնի սրբոյն ի տեսարանն. և մինչդեռ հանէին զնա ընդ դուռն քաղաքին՝ պատահեալ նմա ի ճանապարհի անդ երկրորդ արքային և առէ ցնա. «Այր դու, ընդէ՞ր մեռանիս ի տարապարտուց և ընդ վայր. այժմ ասա բան ինչ հայհոյութեան, և անցեալ գնասցես պաշտելով զոր ինչ և կամեսցիս»։ Իսկ քաջամարտիկ և անպարտելի զինուորն Քրիստոսի ամենևին ոչ ետ նմա պատասխանի, այլ ի ձայն բարձր աղաղակեաց ասելով. «Քրիստոս որդի Աստուծոյ՝ որ բնակեալդ ես ի բարձունս, և անքուն ակն քո զննեալ տեսանէ զսիրտ որդւոց մարդկան. որ քննես զգաղտնիս խորհրդոց ամենեցուն, խնդրեմ ի քէն և աղաչեմ, անքնին և ինքնազօր յամենայնի, հայեաց ի նուաստութիւն մարմնոյ իմոյ և զաներևոյթ զօրութիւն Հոգւոյդ սրբոյ առաքեա յօգնութիւն տառապեալ անձին իմոյ, և արժանաւորեա զանարժանութիւնս իմ հասանել անսահման մեծութեանս այսօրիկ և գրիլ ի պարս վկայիցն որք հրաւիրեալ են յընթրիս անմահ փեսայիդ. և հեղմամբ արեան իմոյ շնորհեա զթողութիւն յանցանաց իմոց, և քեզ փառք յաւիտեանս. ամէն։»

Արդ մինչդեռ սուրբ վկայն զայս առանձինն աղօթս մատուցանէր Աստուծոյ, յանկարծակի հարեալ դահճին զսուրն՝ մղէր փութացուցանելով զնա ի տեղի նահատակութեանն. և սուրբն դարձեալ սկսաւ աղօթել այսպէս. «Որդի Աստուծոյ և Տէր ամենակալ, փառաւորեալ և հզօր յամենայնի, անսահման և անքնին մեծութիւն, զոր ոչ արարածոց տանին բնութիւնք և ոչ հրեղինաց ոգիքն նկատեն զանակնարկելի կամս աստուածութեան քո, և չիք սահման գթութեան և ողորմութեան քո, քանզի ամենայնի դու ես Տէր՝ որ ի բարձրութիւնս և ի խորութիւնս.

21. Տպ. արեամբ իմով.

զի քոյով հրամանաւդ կառավարին արարածք և ակնարկութեամբ քոյով խնամարկին և առկայանան յիւրեանց կայանս։ Արդ ես անարժան ծառայս ոչ անյոյս եղեալ յիմմէ փրկութենէ, և ոչ վհատի սիրտ իմ յամենագութ ողորմութեանց քոց, զի ամենայն կենցաղական իրաց փոխանակ՝ զքեզ սիրեցի, զքեզ ընտրեցի, ի քեզ հաճեցայ և ամենայն փափագանօք և բաղձանօք յօժարեցի հասանել անմահ բարեաց քոց։ Արդ որովհետև կանգնեցեր զանկեալս և վերածեր ի կեանս անմահս, և կացուցեր զիս ի հանդէս վկայական ասպարիսիս, արդ մի՛ ի բացէ առներ յինէն զողորմութիւն քո, և մի՛ տար ապականիչ գայլոյն մտանել յանդաստանս քո, զի դու միայն ես փառաց և պատուոյ արժանի. և քեզ փառք յաւիտեանս. ամէն։»

Արդ մինչդեռ սուրբն զայս աղօթս մատուցանէր Աստուծոյ՝ յախուռն յարձակմամբ յարեան ի վերայ նորա սպասաւորքն անօրէնութեան, և ըմբռնեալ զնա տարան ի տեղի կատարմանն մերձ ի փայտն մահու՝ զոր կանգնեալ էին ի սպանումն գողոց և աւազակաց ի մէջ բազմակոյտ հրապարակին, յորս հաւաքեալ լինէին ի կողմանց կողմանց արանց և կանանց հաւատացելոց և անհաւատից, իբրև զմանրամաղ փոշի աքախառն օդով բերեալ լինէին ի տեղեաց տեղեաց ի տեսիլ նահատակութեան սրբոյն։ Ուրախութեամբ ցնծայր և կաքաւելով հրճուէր ցանկալին զուարթնոց ի հանդէսն յայն, մարտ եդեալ մաքառէր հոգւոյն երիտասարդ մանուկն և փափաքելին լուսերամիցն։ Յայնժամ ուժգնակի քարշմամբ բերեալ լինէր ի սպասաւորացն մերձ ի փայտն նահատակն քրիստոսազգեաց, և պնդեալ զնա ընդ փայտին յոտից մինչև ցլանջան։ Իսկ անօրէն դահճին մերձ եղեալ առ սուրբն՝ ասէ. «Ասա բանս ինչ հայհոյութեան և ապրեսցիս ի մահուանէդ, և յետ այնորիկ երթ արա զկամս հաճոյից քոց»։ Իսկ ջատագովն ճշմարտութեան սուրբ վկայն Քրիստոսի լցեալ զբերան իւր խխով՝ եթուք յերեսս անօրինին, և նա անդրէն

33. Տպ. խողխով, իմա խուխով.

դարձեալ անամօթաբար զնոյն բանս խօսեցաւ և ասէ. «Երդուեալ ի կեանս արքային՝ եթէ ոչ լուիցես հրամանի իմոյ՝ փութով բառնամ զքեզ ի կենացս»։ Ասէ ցնա սուրբն. «Դառնացի քեզ աչք արքային քո՝ եթէ ոչ արագապէս կատարեսցես զկամս չարութեան քո առ իս»։ Յայնժամ երիցս անիծեալ և թշուառական դահիճն հարեալ ուժգնակի տապարաւ զգագաթն սրբոյն, և նոյնժամայն չեչտակի ճեղքեալ մինչև յունկն նորա. և այլ ոմն հարեալ վիմաւ զբիբս աչաց նորա՝ և տեսանողականն կախէր զերեսօք նորա։ Իսկ մեծ վկայն Քրիստոսի, սուրբն Թէոդորոս, ձայն բարձեալ առ նոսա ասելով. «Ներեցէք ինձ սակաւիկ մի»։ Եւ նոքա ունկնդիր եղեալ անսացին՝ կարծելով թերևս զղջացաւ վասն սաստիկ հարուածոցն։ Սուրբն ասէ. «Երդմնեցուցանեմ զձեզ ի կեանս արքային ձերոյ, զի թոյլ տալով խնայեսջիք մնալով միւսոյ աչաց իմոց, որպէս զի տեսից զյօշումն և զչարաչար քանցումն մարմնոյ իմոյ, և այնու ցնծացեալ ուրախ եղէց ի փրկութեան իմոյ զոր տուաւ ինձ ի Տեառնէ Աստուծոյ»։ Իսկ ամպարիշտ դահճացն անարգեցին զերանելեաւն և ասեն. «Մեք կարծէաք թէ զղջանալով քո դարձցիս ի քոյին յամառութեանցդ, վասն այնորիկ ներեցաք քեզ»։ Եւ անդէն վերացուցեալ դահճին եհար վաղակաւորաւն զճակատ երանելւոյն և ի բաց եհան զսկաւառակն ի գլխոյ անտի. և սուրբ վկայն աղաղակեաց ի ձայն մեծ և ասէ. «Տէր իմ և Աստուած Յիսուս Քրիստոս, ընկալ զիս որ վասն անուանդ քո մեռանիմ»։ Եւ նոյնժամայն հանդերձ կապանօքն շրջեցաւ փայտն ընդ արևելս[illegible]կոյս, քանզի կանգնեալ կայր ընդ հարաւ. ընդ որ հիացեալ զարմանային ի նա ամենեքեան ի վերայ սքանչելեացն եղելոց։ Եւ յորժամ դարձաւ յարևելս ամենազօր սուրբն՝ յաղօթս եկաց այսպէս. «Գոհանամ զքէն, Տէր Յիսուս Քրիստոս, փրկիչ և ստեղծիչ աշխարհի, որ յաղագս դատապարտութեան բանական բնութեանս առաքեցար ի հայրական ծոցոյ ի խնդիր մեզ մոլորելոցս, և զինքնազօր աստուածութիւնդ խոնարհե-

Digitized by Google

ցուցեր ընդ մահու լծով, և զբազումս քո զաշխարհակեցոյց տարածեցեր ի վերայ կենդանարմատ փայտին, և ի հարուածոյ տիգին ոչ դարձուցեր զԹիկունս քո, և ոչ զկերպարանդ Հօր ի Թքոյն և յապտակէն. արբեր և զքացախն խառնեալ ընդ լեղի և զկողահոս աղբիւր աստուածային արեանդ բացեր լուանալով զվէրսն Ադամայ, և զմուրհակս պարտեաց ամենայն մարդկան պատառեցեր ի վերայ խաչին, և աշխարհակեցոյց մահուամբդ քո փրկեցեր զմեզ ի մեռելութենէ մեղաց։ Եւ եթէ անսահման և անքանակ աստուածութիւնդ կրեաց զայս ամենայն վասն մեր, ո՞րչափ ևս առաւել հողեղինի և ընդ մեղօք բնակեալ բնութեանս՝ պարտիմք հեղուլ զարիւնս մեր վասն աստուածային արեանդ, ևս առաւել իմոյ նուաստութեանս, որ եթէ բիւր և զանազան վիշտք և չարչարանք կրէր յիմում մարմնի, առաւել ևս պիտոյ էր վասն անբաւ բարերարութեանդ քո որ առ իս. դարձեալ թէ ամենայն երկնաւոր խմբաւորութեանցն բարբառն էր ի բերանի իմում՝ իբր արդեօք այնու ամենայնիւ կարէի պատմել զանճառ տնօրէնութիւնդ քո, կամ օրհնութիւն և գոհութիւն ամենօրհնեալ աստուածութեանդ քո վերառաքել, եթէ յորքան և յորպիսի անօրէնութենէ հաներ զիս, և յանբաւ և յանճառ երանութեան մերձեցուցեր. և արդ այսուհետև քա . . .»։

Եւ մինչդեռ շունչ նորա ի նմա էր, և մատուցանէր աղօթս, հարին զնա յամենայն կողմանց սուսերօք և քարամբք և փայտիւք. և նա ուրախութեամբ աւանդեաց զոգին։

Յետ այսօրիկ ի ցոլանալ պայծառ լուսոյ ի վերայ մարմնոյ. սրբոյն՝ յարհաւիրս անկեալ դահճացն՝ խոյս ետուն անտի. և Տահռուգնատին իմացեալ զեղեալսն՝ հրաման ետ Անանիայ հայրապետի փութով բառնալ և թաղել զնա։ Եւ գնացեալ բարձին զսուրբն և ամփոփեցին պատ-

13. Տպ. զոր.

ուով յարժանաւոր տեղւոջ. և արար Աստուած բազում սքանչելիս ի գերեզմանի նորա ի վերայ հիւանդաց և ախտաժետաց։ Եւ եղև փառաւոր նահատակութիւն երանելւոյն յամի Տեառն 1204 և ի թուին Հայոց ՈԾԳ, ի մայիսի 18, յաւուր երեքշաբաթի, յեօթներորդ ամի թագաւորութեան Լեւոնի արքայի Հայոց և յերկրորդ ամի Ռուգնատինայ։

Յիշեալ վկայաբանութեան բնագիրը տպուած է ի Վարք և վկայաբանութիւնք սրբոց հատընտիր քաղեալք ի ճառընտրաց. հատոր Ա. Վենետիկ. 1874, էջ 550—568։ Վկայաբանութիւնը ընդհատուած է էջ 568, (մերը էջ 92, տող 23) հետևեալ ծանօթութեամբ. «Աստ թերի մնայ օրինակն։» Բայց Աւգերեան և Չամչեան անշուշտ այս վկայաբանութեան ամբողջական և անթերի օրինակն ունեցած են, որովհետև երկուքն ալ գրեթէ նոյն բառերով դրած են վկայաբանութեանս համառօտութիւնը մինչև վերջը։ Այսպէս տես Աւգերեան, Լիակատար վարք սրբոց, հատոր ԺԲ. էջ 181-3, մայիս 18, ուր և ճառընտրի համարը կը դրուի, «Ճառընտ. Բ. երես ՊԿԵ։» Իսկ Չամչեան, հատ. Գ. էջ 176-8, այսպէս սկսած է. «Եւ մինչդեռ նա անդ էր ամսօրեայ ժամանակօք (այսինքն Փոքր Հայոց Անանիա կաթուղիկոսը ի Կեսարիա), նահատակեցաւ սուրբ վկայն Թէոդորոս որ և Թորոս, զորմէ արժան համարիմ գրել աստ սակաւուք, ըստ որում պատմէ զնմանէ ընդարձակ և ճառօրէն մի ոմն յականատես վարդապետաց եղելոց ի քաղաքի անդ, որպէս աւանդի ի հին երկաթագիր ճառընտիրս՝ գրեալ ի նմին դարու։—Այս Թէոդորոս էր որդի առն բարեպաշտի յազգէ հայոց ի քաղաքն Կեսարիա ... ևն։» Ընդհատուած վկայաբանութեան շարունակութիւնը արտատպում ենք Չամչեանի համառօտութիւնից։ Հմմտ. նաև Յայսմ. Գ. տպ. Ա. 224′—225′, որ մի ամբողջական օրինակի համառօտութիւնն է։

Digitized by Google

## 8.

## ՏԷՐ ԱՌԱՔԵԼ ՔԱՀԱՆԱՅ ԿԵՉՐՈՐՑԻ

## † ՈԾԷ=1208

*Սոյն նահատակի մասին մի փոքրիկ յիշատակութիւն տալիս է Այրարատ, էջ 47 ա։ Բայց աւելի ընդարձակօրէն ծանօթանում ենք նրա հետ՝ Խծկօնից եկեղեցու մի տապանագրից, որի մասին Հ. Ալիշան, Շիրակ, էջ 129, խօսում է այսպէս․*

*Ի հարաւոյ կուսէ յարակից է յեկեղեցիս մատուռն փոքր, և յորմն նորին առ գետնաւ տապանագիրս այս, յամի 1208.*

*Թուական ՈԾԷ. Ես Գ . . . ոս աշակերտ Մարգարէի քահանայի միայնաւորի կանգնեցի զխաչս պահապան գերեզմանի սորա և եղբօր իմում Առաքելին. աղաչեմ յիշել յաղօթս ձեր . . . զվարդապետս, զՊօղոս, և զԱնդրէաս և զծնողսն իմ. և զտէր Առաքելն որ նահատակեցաւ ի Կեչրոր քաղաքի զանազան տանջանօք։*

Digitized by Google

# Գ.

## ԳՐԻԳՈՐ ԿԵՉՌՈՐՑԻ

### † ՈՀԱ=1222

*Սոյն նահատակի մասին Այրարատ, 47 ա այսպէս է խօսում. «Յիշատակին յարձանագիրս Խնծկօնից՝ նահատակեալք Տէր Առաքէլ ի թուին 1208, «ի Կեչրոր քաղաքի, գանապան տանջանօք». և Գրիգոր ոմն (կամ այլ անուն) յամի 1222»:*

*Աւելի ընդարձակ տեղեկութիւն ենք գտնում Շիրակ, էջ 130, Խծկօնից եկեղեցիների նկարագրութեան մէջ.—Նման ումին է ձևով և մեծութեամբ չորրորդ եկեղեցին, քարընկեցիւ ի բացեայ յերիցն և յայլում քարափան, յարևելից նոցին. չկան ի սմա արձանագիրք, այլ գերեզմանք արկղաձևք շուրջ զնովաւ, ի միումն գրեալ.*

Աստուած ողորմի Գրիգորոյ. ամէն։

*ի միւսում՝ որոյ խաչվէմ. կործանեալ է մասամբ արձանագրին, մնայ այս բան, 1222 ամին թուականաւ.*

Որ նահատակեցաւ ի Կեչրոր քաղաքի. որք երկրպագէք Քրիստոսի սուրբ նշանիս՝ յիշեսջիք զմեզ որ կայք առաջի սորա. Թվին Հայոց ՈՀԱ։

*Վերջինիս համար Հ. Ալիշան գրում է. «Թուի նոյն Տէր Առաքէլ՝ որոյ նահատակութիւն յիշեցաւ վերագոյնդ յայլում արձանի:» Բայց Առաքել նահատակուած լինելով 14 տարի առաջ, պէտք է ընդունել թէ իրարից տարբեր են երկուքը:*

Digitized by Google

# IO.

## ԳՐԻԳՈՐ ՀԱՂԲԱԿԵԱՆ ԽԱՉԵՆԱՑԻ

### † ՈՀԲ=1223

Զկնի այսորիկ եկեալ ժամանակ ինչ անցին ի վերայ․ այլ զօր ել ի Հոնաց՝ զոր Խուչախն անուանեն․ և եկեալ ընդ աշխարհն Վրաց առ թագաւորն Լաշայ, և առ հազարապետն Իւանէ, զի տացեն նոցա տեղի բնակութեան․ և նոքա ծառայեսցեն նոցա միամտութեամբ։ Իսկ նոքա ոչ առին յանձն լինել նոցա ասպնջականք։ Եւ նոքա դէմ եդեալ գնացին առ բնակիչսն Գանձակ քաղաքի․ և նոքա յօժարութեամբ ընկալան, քանզի էին ի մեծ նեղութեան ի զօրացն Վրաց, որք աւերէին զաշխարհս նոցա, և դերէին զմարդ և զանասուն, ետուն նոցա տեղի բնակութեան ի սահմանս քաղաքին․ օգնէին և այլ կերակրօք և ըմպելեօք․ զի նոքօք կայցեն ընդդէմ թագաւորութեանն Վրաց։ Իսկ զօրքն Հոնաց դադարեալք անդ և զետեղեալք, զօրաժողով եղև Իւանէ և դիմեաց ի վերայ նոցա հզօրութեամբ․ մեծամեծս փքայր բնաջինջ առնել զնոսա և զքաղաքն, ի բազմութիւն զօրացն յուսացեալ՝ և ոչ յԱստուած, որ տայ յաղթութիւն ում և կամի։ Իբրև հասին ընդ միմեանս, ելին խուժքն հանդստեամբ յորջից իւրեանց․ և զվաստակեալ և զքքեալ զօրսն Վրաց ի բերանս սրոյ արկեալ, և զբազումս ձերբակալս արարեալ, և զմնացորդսն փախուցեալ, և մեծ բեկումն եղև յաւուր յայնմիկ զօրուն քրիստոնէից․ և այնքան թողան ի ձեռանէ Աստուծոյ, մինչ զի մի վատ այր զբազում քաջ արս և անուանիս եղեալ ի

Digitized by Google

*պատերազմունս, իբրև հովիւ զհօտ առաջի անցուցեալ բերէին. զի երբարձ Տէր զօգնութիւն ի սրոյ նոցա. և ոչ ընկալաւ զնոսա ի պատերազմի. բերէին զարս պատուականս և վաճառէին ընդ դոյզն հանդերձից կամ՝ ընդ կերակրոյ. և Պարսիցն գնեալ զնոսա՝ անհնարին նեղութեամբ կեղէին զկեանս նոցա. և այնքան պահանջէին ի նոցանէ կշիռս ոսկոյ և արծաթոյ, մինչև անհնարին լինել հատուցանել. և բազումք մեռան անդէն ի բանտի։*

*Անդ ըմբռնեցան ընդ այլսն և Գրիգոր որդի Հաղբակայ՝ եղբայր Վասակայ քաջի, և Պապաքն՝ նորուն եղբօր որդի, զի երեք որդիք էին Վասակայ՝ Պապաքն, Մկրտէմ, Հասան զոր Պռօշն կոչէին, արք քաջք և անուանիք, որ յահէ նոցա դողայր ամենայն զօրն Տաճկաց. Զպապաքն սպանին ի պատերազմին. իսկ զԳրիգոր ձերբակալ արարեալ, նեղէին բազում խոշտանգանօք, զի ուրասցի զՔրիստոս. և նա ոչ առ յանձն, այլ առաւել ևս անարգէր զմոլար օրէնսդիրն նոցա զՄահմետ, և զգարշելի օրէնս նոցա. և բարկացեալ նոցա՝ քարշեցին զնա մերկ ի վերայ երկրի, և փշով քանցեցին զամենայն մարմինս նորա. և այնքան տանջեցին զնա, մինչև ի գանելն աւանդեաց զհոգի իւր, և ընկալաւ ի Քրիստոսէ զվկայական պսակն։ Սոքա գաւառաւ Խաչենեցիք էին, յերևելի ազգէ, հաւատով քրիստոնեայք ուղղափառք, և ազգաւ Հայք։*

Ցեչեան՝ նահատակութեան պատմութիւնն ունի միայն Կիրակոս Գանձակեցին. մենք քաղել ենք Մոսկուայի 1858-ի տպագրութիւնից, էջ 119—120։ Համեմ. նաև Չամչեան՝ պատմ. Հայոց, հատոր Գ. էջ 202՝ ՈՀԲ=1223 թուականի տակ։

# II.

## ՍՏԵՓԱՆՈՍ ՎԱՆԱՀԵՑԻ

† ՉԶ=1257

Ի Թուականին հայոց ՉԶ եկին յարևելից, ուստի մեծ ղանն էր, է ղանի որդիք՝ ամէն դուման մի հեծելով. և մի դումանն էր ԼՌ։ Եւ են անուանք նոցա այս. առաջին և մեծն ի նոցանէ՝ Հոյլաւու, որ էր եղբայր Մանկուղանին. երկրորդ՝ Խուլն, որ և զինքն եղբայր Աստուծոյ ասէր, և ոչ ամաչէր. երրորդն՝ Բալախէն. չորրորդն՝ Տուտարն. հինգերորդն՝ Թագուդարն. վեցերորդն՝ Ղասա ղանն. եօթներորդն՝ Բօրաղանն. և էին սոքա անհնազանդք միմեանց և յոյժ աներկիւղք և մարդակերք։

Իսկ գալն՝ որ եկին, ամէն կառօք եկին և կառօք շրջէին, մինչ զի զլեառն և զբլուրս հարդէին աշխարհաւն արևելից վասն հեշտ գնալոյ կառացն և սայլիցն։ Իսկ այն գլխաւորն, որ զինքն եղբայր Աստուծոյ ասէր՝ եկն ընդ մէջ երկրին, և կոխեաց անողորմաբար զտառապեալ քրիստոնեայսն, և զփայտէ խաչն, ուր և գտանէին ի ճանապարհս և ի լերինս կանգնեալ՝ զամէնն այրէին, և ոչինչ իրօք ոչ յագենային, այլ զվանորայսն որ կային յերկիրն, ուր և գտանէին՝ առաւել ևս կոխէին, ուտելով և ըմպելով, և զպատուական քահանայսն կախէին և ծեծէին անողորմաբար։

Իսկ գլխաւոր մի ի Խուլին հեծելէն գնաց ի վանք

1. Տպ. ի չուՆի. | Տպ. Թվականին. 6. Տպ. եղբն փխ. հինգերորդն.

մի որ ասի Գերեթին. և էր հայր վանից ալևոր ծեր յոյժ, ընդրեալ, սուրբ և առաքինի և ամենայն վարուք և բարի գործովք՝ կատարեալ, Ստեփաննոս անուն։ Եւ նա յորժամ եսես զգլխաւոր Տաթարին, որ գնայր առ նա ի վանքն՝ էառ գինի ամանով ինչ և գնաց ընդդէմ Տաթրին և բռնեաց տղղու, որպէս սովորութիւն է Տաթարին։ Եւ ապա յետ այնորիկ տարեալ ի վանքն, և նստուցեալ հանդերձ այլ հեծելօքն, որ կային զկնի գլխաւորին, և զենեաց ոչխար, և եբաց այլ գինի, և յադեցոյց ուտելով և ըմպելով զամէնն՝ մինչ զի բռին կարէին դադարել ի ձիանն։ Եւ յերեկոյն արբեալ գնացին ի տունս իւրեանց, զի հուպ առ վանքն էր տուն Տաթարին։ Իսկ յորժամ հասին ի տունս իւրեանց և ննջեցին զգիշերն, ընդ առաւօտն զարթուցեալ՝ տեսին զգլխաւորն հիւանդ յոյժ, և յորժամ հարցին, թէ վասն ինչ պատճառի է հիւանդութիւնդ՝ ասաց գլխաւորն, թէ երէցն դեղեաց զիս յերեկոյն։ Եւ էր անմեղ երէցն. բայց վասն խարաբ և յանյագ ուտելոյն և ըմպելոյն իւրեանց այնպէս հանդիպեցաւ։

Եւ առ ժամոյն ուղարկեցին և կապանօք տարան զհրաշալի ծերն՝ զհայրն Ստեփաննոս. և յետ չար հարց և փորձի և նոցա ոչ աւատալոյ՝ ի չորից կողմանց փայտ ցցեցին, և պրկեցին անողորմաբար զամպարտն ի յայն բանն, ի գետնոյն բարձր իբրև կանգնաւ չափ. և ապա հուր վառեալ ի ներքոյ այրեցին, և խորովեցին զամենայն մարմինն նորա մինչև աւանդեաց զհոգին հրաշալի ծերն Ստեփաննոս։ Եւ յայտնապէս նշան և սիւն լուսոյ տեսին ի վերայ երանելի հօրն Ստեփաննոսի, որ այնպէս անմեղ և ի զուր նահատակեցաւ և ընդ սրբոց մարտիրոսացն պսակեցաւ։

6. Մաղաքիայի պատմութեան հրատարակիչ Ք. Պատկանեան կը 68 տողը բառը բացատրում է այսպէս. ճողոլ, ուղղագոյն՝ տողոլ, կամ լաւ ես՝ տրղոլ—تزغو , ترغو—հարկ, պաշար ճանապարհի։ Ց. Տր. Հանդեձ.

Իսկ պիղծ և անողորմ գլխաւորն այն զատ ի ցաւէն, որ ունէր հարեալ ի դիւէ. մինչ զի կատաղեալ ուտէր զալիզծ մարմինն իւր. և այնպէսև չարչարանօք և դառն հարուածով սատակեցաւ. նոյնպէս և ամենայն բանակին անկան ի չար ախտ, և բազումք սատակեցան ի նոցանէ.

Այս տեղեկութիւնը Ստեփաննոս փանագօր նահատակութեան մասին տալիս է Մաղաքիա աբեղայ, «Պատմութիւն վրանց ազգին Նետողաց». Ս. Պետերբուրգ 1870, էջ 23—25։

# I2

## ՋԱԼԱԼ՝ ԻՇԽԱՆ ԵՒ ՏԷՐ ԽԱՉԵՆՈՅ

† ՉԺ=1261

Իսկ զբարեպաշտ և զատաքինի իշխանն Ջալալ նեղէր անհնարին կտտանօք, բազում հարկս պահանջելով ի նմանէ՝ առաւել քան զկարն, եդեալ փայտ ի պարանոց նորա, և երկաթ՝ յոտս նորա։ Եւ զայս առնէր ընդ նմա վասն առաւել քրիստոնէութեան նորա, զի թշնամիք էին ամենայն տաճկահաւատքն, որք յորդորէին զԱրղունն ի սպանութիւն նորա, զի ասէին, թէ սա առաւել թշնամի է դենիս մերոյ և օրինաց. զի և Արղունն եւս Տաճկակրօն էր. և առեալ տարաւ զնա ի Ղազուինն։ Իսկ նա գոհութեամբ տանէր ամենայնի, զի յոյժ տեղեակ էր աստուածային գրոց, և պահող, և աղօթական, և պարկեշտ ի կերակուր և յըմպելի, և ցանկացող մարտիրոսական մահուան։ Իսկ դուստր Ջալալին, Ռուզուքան անուն, որ կին լեալ էր Պօրա Նուինին՝ որդւոյ Չարմաղունին, առաջին գլխաւորի Թաթարին, գնաց առ Տօղուս Խաթունն՝ կին Հուլաւույին, զի թափեսցէ զհայր իւր ի ձեռաց Արղունին։ Եւ գիտացեալ անօրէն Ոստիկանին՝ առաքեաց վաղվաղակի դահիճս և ի գիշերի ետ սպանանել զսուրբ և զարդար այրն. և երթեալ անօրէն դահճացն՝ անդամ անդամ յօշեցին զնա ըստ նմանութեան սուրբ վկային Յակովբայ․ նորին չարչարանացն հաղորդեալ, և պսակի նորուն արժանացեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ։

Digitized by Google

Այսպէս կատարեցաւ այրն անարատ և աստուածապաշտ, զընթացսն կատարելով, և զհաւատս պահեալ, յՋԺ թուականին Հայոց։ Եւ առաքեաց որդի նորա Աթապակն արս հաւատարիմս և ետ գողանալ զնշխարս հօր իւրոյ, զի ընկեցեալ կայր ի ջրհոր մի ցամաք, զի Պարսիկն՝ որ ի տան իւրում ունէր զնա ի կապանս, տեսեալ աստուածայինս ի վերայ նորա, զի իբրև սպան զնա, իջեալ լոյս սաստիկ ի վերայ, խնամարկեալ ընկէց զնա ի ջրհորն, զի յետ աւուրց թաղեսցէ զնա պատուով։ Նա եցոյց խնդրողացն զմարմինն նորա, և պատմեաց զսքանչելի երևումն. և նոցա ժողովեալ խնդութեամբ, և բարձեալ տարան զնա ի տուն իւր և թաղեցին ի վանքն Գանձասար՝ ի գերեզմանս հարց իւրոց։ Այլ և բերողք նշխարացն տեսին ի ճանապարհի զնոյն տեսիլ լուսոյն ի վերայ նշխարացն։

Այս՝ հատուածը յիշեալ վկայի մասին տալիս է Կիրակոս Գանձակեցի, Մոսկուա 1858, էջ 235—6։ Իսկ Վարդան պատմիչ (Վենետիկ 1862, էջ 152—153) իշխան Ջալալի նահատակութեան մասին պատմում է հետևեալը. «Ի յեօթն հարիւր թուին իշխանաց իշխանն արքայաշուքն Ջալալն դառն չարչարանօք կցորդեցաւ մահուն Քրիստոսի և վկայից նորա ի գրախօս Տաճկաց, զուր պարտաւորեալ և մատնեալ Արղունին. տարեալ ի Տաճկաստան ի Խազուինն, և անդ գիշերի յօդակոտոր արարեալ սպանին, միայն զքրիստոսասիրութիւնն ունելով պատճառս, պահօք և աղօթիւք և ողորմածութեամբ և զմիաշաբաթսն յոտնկացութեամբ անցուցեալ զժամանակս իւր մինչև ի ծերութիւն, վասն որոյ և լուսով ի բարձանց պատուեաց զնա Աստուած, իջանելով ի վերայ յօշեալ անդամոցն նորա, պսակելով և վկայելով զանպարտաւոր մահ նորա զմարտիրոսական։ Զոր տեսեալ սպանողացն սոսկացեալ ընկեցին ի ջրհոր մի ցամաք, մինչև եկին իւրքն և տարեալ թաղեցին յիւր սեփհական վանքն Գանձասար կոչեցեալ հայրենեօք

տուն գերեզմանի իւրեանց. զնոյն ճառագայթս լուսոյ տեսանելով բերողացն»։ Հմմտ. Նաև Չամչեան, Գ. էջ 260, ՉԺ և 1261 Թուականի տակ։ Նոյն ՉԺ=1261 Թուականը ունի Կիրակոս Գանձակեցին. իսկ Վարդան պատմէչ Ջալալի նահատակութիւնը դնում է «Ի յեօթն հարիւր թուին» այն է Չ=1251։

# 13.

## ԳՐԻԳՈՐ ԲԱԼՈՒԵՑԻ, ՍԻՄԷՈՆ ԵՒ ԿԻՐԱԿՈՍ

† ՉԼԹ հոռի դ=1290 փետր 10 ուրբ.

Յամի ՉԼԹ թուականութեանս Հայոց տումարի՝ ես նուաստ ծառայ ծառայից Աստուծոյ՝ Դաւիթ երէց, ի քաղաքէս Բալուայ, սկիզբն արարից պատմել զանցս աղետից, որ ի յազգէն Իսմայէլացւոցն կրեաց քրիստոսադաւան և քաջ րաբունապետն Գրիգոր ի քաղաքին Խարբերդ. որ զչարչարանս և զնահատակութիւն տանջանաց զսրբոյն Գրիգորի Լուսաւորչին և զսրբոյն Ստեփանոսի Նախավկային բերէր զօրինակ համբերութեամբն իւրով։ Այս սուրբ վարդապետս Գրիգոր էր ի քաղաքէն Բալուայ, բարեսէր և աստուածապաշտ ծնողաց զաւակ, ուսեալ զԱստուածաշունչ՝ զՀին և զՆոր Կտակարանսն և առեալ զպատիւ և զաստիճան քահանայութեան, հեզ և խոնարհ վարուք, բնակէր ի մէջ աշխարհի, որպէս յանապատի։

Եւ կացեալ ընդ ամուսնոյն իւրոյ ամս Բ և փոխեցաւ յաշխարհէս ամուսինն իւր։ Թէպէտ օրինօք էր ամուսնացեալ, այլ ունէր ի մտի զբանն առաքելոյն Պօղոսի որ

1. q յամի եօթնհարիւրերորդի երեսներորդի. | q հայկազան տումարի. 2. q չունի աստուծոյ. | d երէց. | q ի քաղաքիս. 3. d բուլուայ. q բալուա. | q զանձս. 4. q իսմայէլացւոց. 5. d գրիգիգոր. 6. d կսուրբ. 7. q ստեփաննոսի. | 8. d աւրինակ. 9. q վարդապետն. | q բալուա. 10. q ծնողաց. | q նստեալ և ուսեալ զածային կտակարանսն (փխ. ուսեալ .... զնոր կտակարանսն). 13. d յաշխարհի. 14. d փոխեալ (փխ. փոխեցաւ յաշխարհէս). 15. q և թէպտ և էր օրինօք. 16. q ի մտի ունէր. | q զբան առաքելոյն զսրբոյն պօղոսի.

Digitized by Google

տաէր. «Եթէ ունիցիմք կամայս, որպէս թէ չունիցիմք»։ Եւ յայնմ հետէ հոգս ի մտի եդեալ՝ ելանէր ի քաղաքէն իւրմէ և գնացեալ դադարէր յարևելս՝ յԱյրարատեան գաւառն՝ ի վանքն Վիրապի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին՝ առ հռչակաւոր իմաստասէր վարդապետն Հայոց Վարդան. որ և դպրոց կարգեալ էր նորա Ծ աշակերտաց, զոր մինն սա գտանէր ի մէջ նոցա՝ փայլեալ շնորհօք և առաքինութեամբ. զի էր երիտասարդ հասակաւ, խարտեաշ և լուսափայլ դիմօք և խոնարհհոգի, քաղցր և կակուղ՝ բնութեամբ և սիրուն առ ամենայն ընկերսն իւր։

Եւ կացեալ անդ ամս Զ՝ տքնութեամբ և աշխատութեամբ և մեծաւ ջանիւ նեղէր զանձն իւր յուսումն աստուածային գրոց։ Եւ յետ Զ ամին անցելոյ՝ հաճեալ մեծ վարդապետն Վարդան ընդ շնորհս և ընդ գիտութիւն նորա, տուեալ նմա զաստուածային օրհնութիւնն և զգաւազանն վարդապետութեան, գրով և իշխանութեամբ առաքեաց զնա յաշխարհն իւր՝ քարոզել և աւետարանել զբանն կենաց ի լսելիս ամենեցուն։

Եւ եկեալ ի քաղաքն իւր՝ ընդ առաջ ելին նմա միահամուռ ողջագուրելով զնա, որպէս զերկնաւոր վարդապետն Քրիստոս։ Եւ գրով յանձնեցին ի նա զսուրբ Մեսրոպայ աղօթանոցն և կայարանն, որ կայ յանառիկ դղեակն, և զսուրբն Յակոբ որ էր յառաջի նորա։ Զոր յանձն էառ և շինեաց վերստին զեկեղեցին և զվանքն, և կացոյց անդ կրօնաւորս և առաջնորդս, և դադարումն անդ լինէր։ Եւ

1. q թէ. | Հմմտ. Առ. Կորնթ. գլ. Է, 29 «զի որ ունիցին կանայս՝ որպէս թէ չունիցին»։ 2. d այնմհետէ. | q ելանել. 4. d սուրբ. 5. q և իմաստասէր. 6. d կարգել էր (փխ. կարգեալ էր). 7. d դաւանէր (փխ. գտանէր). 8. d խարտէշ. 9. d յոգի փխ. հոգի. | q և քաղցր. | q բնութբն. 10. q ընկերակիցսն. 11. d չունի անդ. 12. d մեծ. 13. q կտակարանաց հին և նոր օրինացն (փխ. գրոց). | q չունի և յետ զ ամին անցելոյ. 14. q չունի և ընդ գիտութիւն. 15. d տըւեալ. | d զաւազան. 17. q առաքեալ. | q չունի զնա. | q յաշխարհ. 19. q ի քաղաք. | q յառաջ. | q չունի նմա. 21. d անձնեցին. | dq կ-ր. | q Մեսրոպայ. 22. q կա. 23. q և յանձն առ և շինեաց և զսուրբն յակոբ (փխ. և զսուրբն յակոբ.) | q առաջի. | d անձն. 24. q չունի վերստին. | q վերակացուս (փխ. անդ կրօնաւորս և առաջնորդս). 25. d դադարումըն.

Digitized by Google

*դայր յամենայն ժամ ի քաղաքն և ժողով առնէր յեկեղեցիսն, յորդորէր և հաստատէր զժողովուրդն և զժամատեղիսն, քաջալերէր զքահանայս և մխիթարէր զամենեսեան քաղցրալուր վարդապետութեամբն իւրով. պատուիրէր նոցա թողուլ զմեղս և ատել զպոռնկութիւն, զագահութիւն, զգողութիւն, զմարդասպանութիւն, զոխակալութիւն, զարբեցութիւն, զստախօսութիւն և զայլն՝ որ սոցին նման են. և ամենեքեան լսող և հնազանդ լինէին քաղցրուսոյց վարդապետութեան նորա։*

*Արդ՝ ես ծառայս Աստուծոյ Դաւիթ երէց, քըւեր որդի նորա, աշակերտէի և սպասաւորէի նմա. զորոյ զսրբութեան, զպարկեշտութեան, զառաքինութեան և զհամբերութեան համբաւն բացայայտել կամիմ լսողացդ։ Ոչ թէ այլոց տեսութեան և յայլոց լսելով՝ այլ ես ինձէն ականատես և ականջալուր եղեալ՝ պատմեմ ձեզ զխոնարհութեան, զսրբակացութեան, զշնորհացն, զաղքատսիրութեան, զօտարասիրութեան զբարի նախանձն՝ զոր ունէր առ Աստուած և առ մարդիկք՝ որ անդադար խրատու օրինացն ուսուցանէր զամենեսեան։ Զտիւ և զգիշեր յԱստուածաշունչ Գրոց կարդալոյն ոչ խափանէր և զգիշերն՝ առանձնական աղօթիւք, յոտնակացութեամբ, աքնութեամբ և սաղմոսերգութեամբ անցուցանէր։ Եւ զկարգ ժամատեղացն անխափան կատարէր ընդ սպասաւորս եկեղեցւոյն։ Եւ ելեալ քարոզէր ի տեղիս տեղիս և ուսուցանէր զբանն Աստուծոյ՝ բազում համարձակութեամբ։ Եւ գնա-*

1. ձ յեկեղեցին. 2. գ և յորդորէր զժամատեղսն (փխ. յորդորէր և հաստատէր զժողովուրդն և զժամատեղիսն). 3. գ չունի և | գ զժողովուրդսն (փխ. զամենեսեան). 4. ձ պատուիրէր. 5-6. գ զպոռընկութիւն և զչնութի զգողութի զմարդասպանութի զագահութի (փխ. զպոռնկութիւն....զմարդասպանութիւն). 8. գ լսող լինէին և հնազանդ (փխ. լսող և հնազանդ լինէին). 9. գ քաղցրաբարբառ հրամանաց նր (փխ. քաղցրուսոյց ...նորա). 11. ձ զոր. 12. ձ պարկեշտութեան. | գ և զառաքինութե և զպարկեշտութե. 14. գ միայն (փխ. թէ). | գ տեսութբ. 15. գ յականատես. | գ զխոնարհութեն. 16. գ զաղքատսիրութեն. 17. գ զօտարսիրութեն. 18. գ մարդիկդ. 19. ձ ամեն. | գ և զտիւ. 20. գ կարդալոյ. | գ գիշերն. 21. գ յոտնկալ. 22. գ չունի և սաղմոսերգութեամբ. 23. ձ ընդ սպասաւորսն եկեղեցոյ. | գ ամ (փխ. բազում).

ցեալ յաշնանային ժամանակն ի Խարբերդ քաղաք՝ քարոզէր և ուսուցանէր նոցա՝ զպահսն սուրբ պահել, ի յաղօթս ճգնել. որ յառաջն թոյլ և ծոյլ էին յաղօթից և ի պահոց և ոչ ունէին զմիաբանութիւն ժամատեղաց, և քահանայքն և ժողովուրդքն անհնազանդ էին միմեանց. իսկ ի գալ և ի դադարել վարդապետին անդր՝ թողեալ ամենեցուն զսովորական գնացս իւրեանց՝ զոր յառաջն ունէին. զի վարդապետն օր ըստ օրէ առոգանէր զնոսա ջրովն կենդանաբար, որպէս մարգարէն ասէ. «Գնացք գետոց ուրախ առնեն զքաղաքն Աստուծոյ»։ Եւ օր ըստ օրէ ժողովէր զնոսա յեկեղեցին և պատուիրէր նոցա հաստատուն կալ ի հաւատս և հրաժարել ի մարմնաւոր հեշտութեանց և յիշել զօր մահուն և զահեղ դատաստանին, զահ դժոխոցն և զփառք և զհանգիստ արդարոցն։ Եւ զայս լուեալ դառնային ամենեքեան ի չար գործոց իւրեանց՝ զոր յառաջն սովորեալ էին։

Եւ վարդապետն կեցեալ անդ ամիսս Ե և յօր ըստ օրէ յաւելոյր և աճեցուցանէր զբանն և զսէրն կենաց, և սերմանէր յերկիր բանաւոր, և բերէր պտուղ հարիւրաւոր. իսկ բանսարկուն սատանայ, որ ի սկզբանէ ճշմարտութեան հակառակ կայ՝ նախանձեցաւ ընդ բարի գործս նորա,

1. d աշնանային եղանակն. | q քաղաքն. 2. q չունի ի. 3. q յառաջն էին թոյլ և ծոյլ. 5, d ժողովուրդն. | q անհնազանդ միմեանց դատանէին. | q չունի ի գալ և. 7. q գնացսն. 7-9. q և բացեալ զբերանն իւր վրդովն բղխէր նց ջուր կենդանարար արբուցանել զպապաքումն հոգւոց նց ոպ ասէ մարգարէն (փխ. զի վարդապետն ... մարգարէն ասէ). Սաղմ. խե. 5. 10. q չունի աստուծոյ. | q և նա. | d զնա (փխ. զնոսա). 11-14. q բանայր զբերանն իւր մեկնէր նց զածային օրէնսն և զհաւատոց պնդութին և պատուիրէր նոցա հրաժարել ի մարմնական հեշտութեց և յիշել զօր դատաստանին և զահեղ ատենին (փխ. և պատուիրէր ...... զհանգիստ արդարոցն). 11. d պատուիրէր. 12. d հրաժարեալ. 14. d արդարոցըն. | q չունի զայս լուեալ. | q ամէն իւրաքանչիւր ոք (փխ. ամենեքեան). 15. q էին սովորեալ. 16. d Ե կամ է անորոշ k. 16-18. q Եւ դադարեալ նր անդ ամիսս Ե և օրաօրէ յաւելոյր ի նս զբանն այ աճեցուցանէր զսերմն բարի մշակն երկնային սերմանէր յերկիր բանաւոր զի բղխեսցէ պտուղ հարիւրաւոր արմատացուցանէր աշակերտութբ զբարին զի խլեսցէ զչարն (փխ. Եւ վարդապետն ... պտուղ հարիւրաւոր այն k տող 16-18). 20. q կա. | d գրուածս (փխ. գործս). | q նց (փխ. նորա).

Digitized by Google

շարժեաց ի չար նախանձ և գրգռեաց զազգն Տաճկաց և զՊարսկաց՝ որ էին ի քաղաքին, ի մեծամեծաց մինչև ի փոքունս, ախտացեալ և չարացեալ ընդ միաբանութիւն ժողովրդեանն հետ վարդապետին և ընդ ժրութիւն աղօթից նոցա յեկեղեցին՝ արք և կանայք. և այս եղև սկիզբն և պատճառ չար նախանձու նոցա։

Այր ոմն գլխաւոր ի Նեստորաց ազգէն և կամ՝ ի Պարսից, ի մեծ տոհմէ, բնակէր ի Խարբերդ քաղաք, իշխեցող աշխարհացս այսոցիկ, անուն նորա՝ Խարպանդ ազայ։ Եւ յայնմ ժամանակին՝ ի ներքին աշխարհացն ի Դըմըշխոյ և ի Հաղպայ ժողովք արարեալ հեծելոց՝ յարձակեցան ի վերայ աշխարհաց մերոց՝ գերել և աւերել։ Իսկ Խարպանդ-աղան և այլ գլխաւորքն որ էին ի սահմանս մերոյ երկրին, ժողովք արարեալ զօրաց՝ ելին ընդդէմ նոցա ի պատերազմ։ Եւ նոքա յաղթեցին զօրս մեր, աւերեցին զերկիրս մեր և գերեցին և տարան զեղբայր Խարպանդ աղային գերի ի Մըր քաղաք. և ջանայր գնել զեղբայրն ի գերութենէ։

Եւ յաւուրսն յայնոսիկ նստեալ գլխաւորաց քաղաքին ի դարպաս մի մեծ և խորհուրդ առնէին ընդ միմեանս՝ վասն գնելոյ զեղբայրն ի գերութենէ, և սահմանեալ հարկապահանջութիւն յաշխարհէն՝ ժողովել գանձս ի մեծամեծաց մինչև ի փոքունց և ի տնարգել աղջկանց։ Ի նոյն

1. գ ի նախանձ չար գրգռեալ. 2. գ պարսկաց. | գ ի մեծամեծս և ի փոքունս. 3-6. գ ընդ միաբանեալսն առ վարդպն և ընդ ժողովոնց յաղօթսն և յեկեղեցին և այս եղև պատճառ և սկիզբն չար նախանձու նց (փխ. ընդ միաբանութիւն...նոցա). 7. ժ ի նեստոր. | ժ պարսից (փխ. ի պարսից). 8. ժ տոհմից. | ժ խարբերթ. 9. ժ յաշխարհաց. | ժ չունի այսոցիկ. 10. գ աշխարհաց ի դմշխոյ և ի հալպա. 11. ժ հեծելոց. 13. գ գլխաւորք. | գ է փխ. էին. | գ մեր աշխարհիս. 14. գ չունի զօրաց. | գ չունի ի. 15. գ նց յաղթեալ զօրաց մերոց (փխ. նոքա յաղթեցին զօրս մեր). 16. գ չունի մեր. 17. ժ մար. | գ զեղբայրն իւր ի գերութենէն. 19. գ գլխաւորացն. | գ չունի քաղաքին. 20. գ մեծ բառից յետոյ աւելացնում է և բարձրագոյն և ամրագոյն էր շինեալ եւ այլ մեծամեծք նստել ի դարպասն յայն. | գ առնել. 21. գ գնելոյն. | գ ի գերութենէն. | գ սահմանել. 22. ժ յաշխարհն. | գ գանձս անթիւս. 23. գ և ի փոքունց մինչև. | գ աղջկանց-ից յետոյ աւելացնում է և մինչև յաղքատս գլխահարկս գրել և ժողովել.

Digitized by Google

ժամն յանկարծակի սաստուածասաստ բարկութիւն եկն ի վերայ նոցա. զի ճայթեաց սաստիկ դարպասունն և կոտորեցաւ ընդ մէջն, և Դ որմանցն յերկնայր զիրարան, և սաստատողն նստաւ ի վերայ նոցա։ Եւ ամենեքեան որ անդ կային՝ չարաչար մահուամբ սատակեցան՝ բաց բանի մարդկանէն որ ապրէ. «Գերեզմանք տունք նոցա եղիցին»։ Եւ չար խորհուրդն զոր խորհեցան՝ խափանեաց Տէր։ Եւ ամենեքեան որ լսէին՝ փառաւոր առնէին զԱստուած՝ որ փրկեաց զնոսա ի սպառնալեացն՝ որ գալոցն էր։ Այս եղև ի նոյն ամին, յորժամ վարդապետն կայր անդ։ Եւ քրիստոնեայքն որ էին անդ՝ առաւել ևս հզօրէին ի պահս և յաղօթս, որ ըստ օրէ գային առ վարդապետն, և նա բանիւք աստուածայնին օրհնացն խրատէր զնոսա. և նոքա ևս քան զևս ուրախանային ի սէրն Աստուծոյ։

Իսկ ազգն Տաճկաց և Պարսից՝ որ կային անդ՝ և խառնիճաղանճ ժողովուրդքն՝ որ կոչէին Խօշամամաք և չխերացն՝ և խորհեցան խորհուրդ չարեաց ի վերայ անմեղ քրիստոնէից. և ի գիշերի սպանին շուն մի և զշան զլուխն տարեալ եդին ի մեհրապն և զշունն կախեցին ի դրան մզկթին։ Եւ առաւօտուն միաբանեցան և գոչէին թէ «Եկայք տեսէք, ազգ և ազինք և գլխաւորք Տաճկաց» թէ զինչ են արարեալ ժողովք վարդապետին ի մզկիթն մեր»։

1. զ յանկարծակի ի նոյն ժամն. 1-2. ժ յածայրին ցասմանէն և ի բարկութենէն ժամանեաց ի վր նց (փխ. սաստուածասաստ...նոցա). 2. զ ճայթեաւ. 3. ժ յերար. 4-5. զ և չարաչար մեռան բ մեծամեծ գլխաւորքն խարդանից ազան և պատրաստին պալվքն և այլքն որ էին ի նս (փխ. և ամենեքեան .... սատակեցան այս է տող 4-5). 6. Սաղմ. խը 12. | զ զխորհուրդն փխ. չար խորհուրդն 7. զ ունէք ը. յ. աւելացնում է և զքանն զոր խոսեցան ոչ մընաց առ նոսա. 8. ժ որսէին (փխ. որ լսէին). զ փրկեացն. 9. ժ տարին (փխ. ամին). 10. զ անդ կայր. 11. զ ի տեղին յայնմիկ (փխ. անդ). | զ չունի ևս. | զ օրստօրէ. 12. զ գալ (փխ. գային). | զ չունի նա. 13. ժ չունի օրհնացն. 14. զ ուրախ լինէին. 15. զ պարսկաց. | զ ի տեղին յայն (փխ. անդ). 16. զ խառնաճաղանճ. | զ ժողովրդեանն. | զ կոչէին. | զ խոշամամաք. 17. զ խենչերոցն փխ. չխերացն. | զ խորհուրդս. 19. զ չունի տարեալ. | զ դրին ինքեանք (փխ. եդին). | զ ի մահրապն. 20. ժ առաւօտուն. | զ չունի թէ. 21. զ չունի տեսէք.

Digitized by Google

Եւ դրին խուրեանց արարեալ չարիսն ի վերայ մեր վարդապետին և անմեղ ժողովրդեանն և բորբոքեցան ի չարութիւն ի մեծամեծաց մինչև ցփոքունսն։

Եւ վարդապետն յեկեղեցին միաբանեալ զժողովուրդն յաղօթս, զի էր պահք սուրբ Սարգսին, և յանկարծակի հասին չեխերն և ժողովք Խօջամատեաց և մտեալ ի մէջ ժողովոց քրիստոնէիցն՝ արկին ձեռս ի վարդապետն և քարշեցին ի դուրս ի հրապարակն. և նա ամենևին ոչ գիտէր զպատճառն։ Յայնժամ հասին զինուորք ի գլխաւորաց քաղաքին և տարան զԳրիգոր վարդապետն ի բանտն, և ԽԵ այր պատուաւոր ի քաղաքէն եդին ընդ նմա ի բանտի. և էր օր պահոցն չորեքշաբաթի։ Եւ վարդապետն քարոզէր ժողովրդեանն ի բանտին զբանն կենաց և մխիթարէր զնոսա և հաստատէր ի սէրն Աստուծոյ։

Եւ տեսեալ վարդապետն յայնմ գիշերի տեսիլ՝ զկէտ կատարման իւրոյ, և առաւօտուն ելեալ պատմէր բանտարգել քրիստոնէիցն և ասէր. «Ո՛վ քրիստոսասէր եղբայրք, յայսմ գիշերի տեսի զհրաժարիլն իմ ի ձէնջ՝ որ յայսմաւուր կատարիմ նահատակութեամբ չարչարանօք մարմնոյս և ելանեմ յաշխարհէս. բայց ձեզ և ոչ միոյ վնաս լինի ինչ, բայց երկուց արանցդ՝ որ ինձ սպասաւորէին և առաջնորդէին ժողովելոցն և միաբանելոցն կոչել յեկեղեցին։ Եւ ես ձեզ փոխան եղէց, բայց դուք հաստատուն կացէք ի սէրն Աստուծոյ՝ և յիշեցէք և զմտաւ

1-2. կ եդին զիւրց գործն ի վր անմեղ քրիստոնէիցն (փխ. եւ դրին...... ժողովրդեանն ձեռ տող 1-2). 3. ժ ի մեծամեծաց մինչև ի փոքունսն. 4. գ վարդապետն գրիգոր. | գ ժողովրդօքն. 5. գ յաղօթսն. 6. գ խոջամատեաց. 7. գ ժողովոցն (փխ. ժողովոց քրիստոնէիցն). 8. ժ քարշեց. 9. ժ զինուորք. | գ ի գլխաւորացն (փխ. ի գլխաւորաց քաղաքին). 10-11. գ խ և ե (փխ. և խե). 11. ժ պատուաւոր. | գ այրք պատուաւորք. | գ և եդին. 12. գ պահոց. | գ չորեքշաբթի. | գ չունի վարդապետն. 13. գ ժողովրդոցն. 15. գ տեսանէր. | գ ի (փխ. յայնմ). 16. գ կատարմանն իւրո. | գ չունի ելեալ. | ժ պատմել. 16-17. գ բանտարգելեացն (փխ. բանտարգել քրիստոնէիցն). 17. գ եղբարք. 18. գ տեսի տեսիլ (փխ. տեսի). 19. գ չարչարանօք բառից յետոյ աւելացնում է և նեղութբ. 20. գ մարմնոյս իմոյ (փխ. մարմնոյս և). 21. գ ինչ վնաս լիցի (փխ. վնաս լինի ինչ). | գ յբ (փխ. երկուց). 23. գ և (փխ. բայց). 24. ժ չունի և յիշեցէք ... զզօրէնս աստուծոյ.

Digitized by Google

*ածէք զպատուիրանն և զզօրէնս Աստուծոյ, զոր ուսուցի ձեզ ի տուէ և ի գիշերի։ Զի այսօր է իմ տեսանել զձեզ և առաջի ահեղ ատենին Քրիստոսի տեսցուք զմիմեանս. և մի մոռանայք զիս յաղօթից ձերոց, զի սէր ձեր և կատարումն իմ Նեղէ զիս»։ Եւ զոր առցին Նմին է՝ բանիւք աստուածային խրատէր զնոսա, և ամենեքեան լային և յոտն անկանէին օրհնել ի Նմանէ։*

*Յայնժամ հասին զինուորքն և բազմութիւն խառնիճաղանճ ժողովոյն Տաճկաց սուսերօք և բրօք և հանին զսուրբն ի բանտէն և զերկուս սպասաւորսն ընդ Նմա՝ զՍիմէօն և զԿիրակոս՝ և տարան ի քաղաքէն ի դուրս ի յարձակ տեղւոջ՝ ուր ժողովեալ էին բազմութիւնք Տաճկաց անթիւ և անհամար։*

*Եւ գլխաւորք ժ ածռով Նստեալ՝ ի քաղաքէն և յայլ քաղաքաց եկելոց, զորոց զանուանսն ծանր և անարժան համարեցայ գրել՝ և կացուցին առաջի ատենին զվարդապետն Գրիգոր։ Եւ ի ժամուն յայնմիկ ամենևին մին քրիստոնեայ ոչ երևէր. զորս ի բանտի էին արգելեալք և զորս յահէ օրինացն փախուցեալք և թագուցեալք։ Յայնժամ հարցանէին զնա ի ձեռն թարգմանին թէ «Զի՞ մտեր դու ի քաղաքս մեր, և ժողովուրդ քո սպանին շուն մի, և ի գիշերի բերեալ կախեցին ի յաղօթարանս մեր»։*

2. գ *տեսանելն*. 4. գ *յաղօթս ձեր*. 5-6. դ *չունի և զոր առցին ... խրատէր զնոսա*. 7. կ *առաջի* (*փխ. յոտն*). 8. գ *խառնաճաղանճ*. 9, գ *ժողովրդեանն ընդ Նոսա* (*փխ. ժողովոյն տաճկաց*). | դ *բիւրաւք*. 10. կ *զսբ վարդապետն գրիգոր* (*փխ. զսուրբն*). | գ *Նր փխ. ընդ Նմա*. 11. գ *ի դուրս ի քաղաքէն*. 12 դ *տեղոջ*. 12-13. գ *բազմութի յոյժ անթիւ մարդկան մեծամեծք և փոքունք* (*փխ. բազմութիւնք տաճկաց անթիւ և անհամար*). 14. գ *ածռովք*. 14-15. դ *չունի ի քաղաքէն ... եկելոց*. | դ *զորոյ*. 15. դ *զանուանս*. 16. գ *համարեցաք գրել ի գիրս յայս* (*փխ. համարեցայ գրել*). | դ *յատենի*. 16-17. գ *զգրիգորիոս* (*փխ. զվարդապետն գրիգոր*). 17. գ *չունի ի ժամուն յայնմիկ*. 18. դգ *քրիստոնեա*. | կ *երևէր-ից յետոյ ի ժամուն յայն*. | գ *զոր ի բանտէն արգելեալ և զոր թաքուցեալ յահէ Նց* (*փխ. զորս ի բանտի..... թագուցեալք այն է տող* 18-19). 20. գ *ընդ Նա փխ. զնա*. | գ *թարգմանի* | գ *չունի թէ*. 21. գ *չունի դու*. | գ *ժողովք*. 22. գ *չունի մի*. | գ *և կախեցին ի գիշերի ի տուն աղօթից մերոց* (*փխ. և ի գիշերի.....մեր*).

Digitized by Google

Եւ նա լի սրտիւ և պինդ հաւատով բացեալ զբերանն իւր՝ առնէր նոցա պատասխանի և ասէր. «Ամենայն ազգի և լեզուի աղօթք առ Աստուած ելանէ, և ամենայն տեղիս ուր և աղօթեն՝ Աստուած անդ կայ։ Զիարդ իշխէ մարդ այսպիսի չարիս գործել ի տուն աղօթից. զի թէ ես գիտենայի զգործող չարեացդ այդ՝ ես ինքնին սպանանէի զնա։ Ես ի քաղաքիս յայսմիկ ծածուկ ինչ ոչ խօսեցայ, այլ յայտնապէս ուսուցի ամենայն մարդոյ զբարիս գործել և ոչ զչարս»։ Ասեն. «Զի՞նչ ուսուցեր»։ Ասէ վարդապետն Գրիգոր. «Սիրել զԱստուած և զընկերն, ի բաց կալ ի շնութենէ, ի գողութենէ, ի սուտ վկայելոյ, ի մատնութենէ, յարբեցութենէ. զպահքն սուրբ պահել, զաղօթքն առ Աստուած՝ մաքուր մտօք առնել և աշխարհի խաղաղութիւն խնդրել, և թագաւորաց և մեծամեծաց իւրոց առողջութիւն և պահպանութիւն յԱստուծոյ խնդրել»։ Զայս ամենայն և որ սոցին նման են ասէր վարդապետն Գրիգոր ի ձեռն թարգմանին, զոր կացուցին ի միջի։ Իսկ թարգմանն ոչ ըղորդ ասէր զբան վարդապետին, այլ զլեզուն սրեալ ի չարութիւն՝ խօսէր ըստ իւրում չար սրտին և յարուցանէր զսրտմտութիւն բռնաւորացն ի վերայ անմեղ գառինն՝ որ էր ի մէջ արիւնարբու գայլոցն։

Եւ յետ հարցմանցն և ի յատեան կալոյն՝ ապա յա-

1. գ սրտիւ. | ժ պինտ. | գ զբերան. 2. ժ չունի պատասխանի. 3. ժ լեզուի. | գ ելանեն. | գ յամ տեղի. 4. գ աղօթեն (փխ. և աղօթեն). 5. գ այդպիսի. | գ և ես. | գ գիտէի. 6. գ զգործօղ բանիդ (փխ. զգործօղ չարեացդ այդ). | ժ սպանանէին. 8-9 գ չունի զբարիս.... զչարս. 9. գ ասացին. | գ գրիգորիոս (փխ. վարդապետն գրիգոր). 11. գ ի շընութենէ. | գ վկայութենէ (փխ. վկայելոյ). 11-12. գ յարբեցութենէ ի մատնութենէ. | գ զաղօթսն. 13. գ չունի մաքուր. | ժ յաշխարհի. 14-15. գ չունի և թագաւորաց..... խնդրել այն է տող 14-15). 16. գ չունի ամենայն. | գ էր փխ. են. | գ գրիգորիոս փխ. վարդապետն գրիգոր. 17. ժ չունի զոր կացուցին ի միջի. 18. գ ոչ ասէր զխօսս գրիգորի (փխ. ոչ ըղորդ... վարդապետին). | գ զլեզուն իւր. 19. գ զչարութի փխ. ի չարութիւն. | գ խօսէր զչարիս ի սրտի իւրում և յարուցանէր (փխ. խօսէր ..... յարուցանէր). 20. ժ յարուցեալ. 21. գ արեանարբու. 22. գ այնչափ հարցմանցն. | ժ յատեան գայլոցն (փխ. ի յատեան կալոյն).

բուցեալ մի ի գլխաւորացն՝ խօսեցաւ ննջեցանօք ընդ վարդապետացն և ասէր. «Ո՛վ մանկտի, զարմացիք ի հաւատս մեր և առ զկրօն առաջնորդին մերոյ. և տեսէք զեղ պարգեւս բազում և երկն զառաջնորդն մեր պատուեմք զձեզ»։ Ասէ Գրիգոր. «Մանկունք և ամբարիշտ բռնաւորք, զիտեմք թողում զկենդանին Քրիստոս և պաշտեմ զմեռեալ առաջնորդն ձեր, որ կուրացեալ մտօք կորեաւ զձեզ ի խաւարային նորա կամօքն. գիտեմք թողում զլոյսն և գնամ ի խաւարն. զառ սպառնաս ինձ տանջանօք երկրաւորս եկանեալ ի մտաբ՝ որ փոխանակ այս կենացս չարչարանացն ժամանակեայց պատրաստեալ է Աստուած զանմահական կեանսն և զանվախճան ուրախութիւնն և զանթառամ պսակսն»։ Եւ այլ բազում բանս խօսեցաւ առաջի նոցա համարձակութեամբ։

Յայնժամ ասէ դատաւորն. «Ալեւոր ծեր, խնայեա ի ծերութիւնդ քո և ի յալիսդ և մի մատներ զանձն քո ի տանջանս և ի չարչարանս»։ Ասէ Գրիգոր. «Գրեալ կայ ի գիր՝ թէ բազում նեղութեամբ և չարչարանօք պարտ է մտանել յայն հանգիստն. զի նեղ է դուռն և գժուարին է ճանապարհն, որ տանի ի կեանս, և լայն է դուռն և արձակ ճանապարհ, որ տանի ի գժոխսն. և բազումք են որ գնան ընդ նա»։ Ասէ դատաւորն. «Ո՞ր մարդիկ գնան ընդ նա»։ Ասէ Գրիգորիոս. «Որ հեշտութեան կամաց ծառայեն՝ ուտելով և ըմպելով, ագահելով և արբենալով,

1. գ գլխաւորի փխ. վարդապետացն. 2. դ չուեմի ով. | գ մարհաս... 3. գ զկրօնս. | գ մահամեաւ փխ. առաջնորդին մերոյ. 3-5. գ և պարգևս տաց քեզ և որպիսց քեզ ած ի միջի մերում (փխ. և տեսէք....պատուեմք զձեզ). 4. d պատուեմք. 5. գ գրիգորիս. | d անբարիշտ. 6. գ զարարակեալ մահամեան (փխ. զմեռեալ...ձեր). 9. d ըստ... | գ տանջանք յանցաւոր երկրիս (փխ. տանջանօք երկրաւորս). 10-12. գ պատրաստեալ է քեզ ած զանմահական զկեանսն (փխ. որ փոխանակ .... զանմահական կեանսն). 12. d զանվաղճան. 15. d ալեօրն. 16. գ չուեմի և ի յալիսդ. 16-17. գ ի տանջանս (փխ. ի տանջանսն և ի չարչարանս). 17. գ գրիգորիոս. 17-19. գ ես խնայեցի յիս (փխ. գրեալ կայ .... յայն հանգիստն). 19. d գժուարին. 20-21. գ ի գժոխսն (փխ. ի կեանս...ի գժոխսն). 21-22. գ և բազումք մարդիկք գնան ընդ այն (փխ. և բազումք...ընդ նա). 22. գ մարդիկք։ 23. գ այն փխ. նա. | գ կացեալ փխ. կամաց. 24-3. գ և ոչ օրինօքն



Digitized by Google

*չնանալով և պոռնկելով, զրկելով և սպանանելով. այս է հեշտ, և լայն է ճանապարհն՝ որ տանի զմարդիկ ի կորուստ և ի դժոխս»։*

*Ցայնժամ բարկացեալ մերկացուցին զվարդապետն Գրիգորիոս մինչև ի գօտին և տարածեցին ի գետինն փոբիվեր և դալար փայտիւ ԳԾ անգամ զարկին զփորն և զկուրծսն նորա՝ մինչև բացաւ փորն, և երևէր աղիք նորա. և նա ի գոհանալոյ և օրհնելոյ զԱստուած ոչ դադարէր, մինչև զարմանալ ամենեցուն զհամբերութիւն նորա. զի վառեալ էր ի սէրն Քրիստոսի և զանտանելի տանջանսն ոչինչ համարէր։ Ցայնժամ կացուցին առաջի բռնաւորացն զերկուս մանկագոյն արսն՝ զՍիմէոն և զԿիրակոս՝ որ էին նոքա յառաջադէմ ի միաբանութիւն եղբարցն և հմուտ յաստուածային օրէնսն. և հարցափորձեալ զնոսա՝ բանիւք ողոքանօք և սպառնալեօք կամէին հաւանեցուցանել զնոսա թողուլ զՔրիստոս և դառնալ ի հաւատս իւրեանց։ Իսկ նոքա ուսեալք ի վարդապետէն՝ պատասխանի ետուն և ասեն. «Ո՛վ անիրաւ դատաւոր, մեք ուրախ եմք յելանել յաշխարհէս և տեսանել զԹագաւորն մեր զՔրիստոս և հասանել փառաց սուրբ վկայիցն՝ որ յառաջ քան զմեզ՝ չարչարանաց և տանջանաց համբերեալ՝ մեռան վասն անուանն Քրիստոսի ի ձեռաց ամբարշտացն՝ որ յառաջն քան զձեզ էին»։*

այ վարին նց արձակէ ճանապարհն որ տանի ի դժոխսն և բազում մարդիկք գնան ընդ յայն ի դժոխս (փխ. ուտելով.....ի դժոխս). 1. ժ պոռընկելով. 4. գ չունի բարկացեալ. | գ զօրն փխ. զվարդապետն գրիգորիոս. 5. ժ չունի մինչև ի գօտին. | կ մեկնեցին փխ. տարածեցին. | գ ի վր գետնի. | գ ի փոր ի վեր. 6. գ բրօք փխ. փայտիւ. | գ դձ. | կ հարին փխ. զարկին. 7. գ մասունք փորոյ փխ. աղիք. 8. գ նա ոչ դադարէր (փխ. նա ի .... ոչ դադարէր). 9. գ ընդ համբերութեն. | գ չունի նորա. 10-11. գ զի զտանջանսն առ ոչինչ համարելով զի սէրն այ բևեռեալ կայր ի սիրտ նր (փխ. զի վառեալ....համարէր). 14. ժ ածային յօրինացն. | գ ընդ նոսա փխ. զնոսա. 15. ժ կամեցուցանել փխ. կամէին հաւանեցուցանել. 16-17. գ ի հաւատն մահմետի փխ. ի հաւատս իւրեանց. 18. գ ետ սիմոն (փխ. ետուն և ասեն). | գ դատաւորք. 19. գ ելանել. | գ տեսանեմք. 20. գ քս. 22. ժ չունի մեռան. | ժ ամպարշտացն. 23. գ իբրև փխ. յառաջն քան. | գ էին-ից յետոյ աւելացնում է զնոյն և կիրակոս դաւանեաց զքս առաջի նց ճշմա-

Digitized by Google

*Յայնժամ անօղորմ դատաւորն հրամայեաց բրօք ջարդել զգլուխ և զմարմինս նոցա և յերկիր ընկենուլ։ Եւ Գրիգորիոս ուժ առեալ՝ ձայնէր առ նոսա և ասէր. «Ո՛վ որդեակք իմ, մի խափեսցէ զձեզ խոստումն դոցա և մի մեծութիւն աշխարհիս. զի անցաւոր է և սուտ է կեանքս այս. համբերեցէք սակաւիկ մի՝ և տեսանիցէք զՔրիստոս զփառաւորիչն ձեր. և մի զարհուրիք յայնցանէ, որ սպանանեն զմարմինս և հոգւոց ձերոց չունին իշխանութիւն»։ Եւ այլ բազում բանս մխիթարականս խօսեցաւ վարդապետն՝ մինչև աւանդեցին Կիրակոս և Սիմէոն զհոգիս իւրեանց առ Աստուած։*

*Յայնժամ հրամայեաց չար դատաւորն բերել զկապեալսն որ ի բանտին. և խորհէին զնոյն անցս չարչարանացն առնել ընդ նոսա։ Իսկ գլխաւոր ոմն՝ Թաթղարայ անուն, յազգէն Նետողաց, յոտն կացեալ և հեծեալ ձի՝ զօրօքն իւրովք խլեալ զկապեալսն ի նոցանէ՝ և արձակեաց զնոսա խաղաղութեամբ և սպառնալով նոցա թէ «Զայսպիսի քաղաքացիսն կոտորէք, ես զի՞նչ պատասխանի տաց աշխարհական խանին՝ որոյ ես ի նմանէ առաքեալ եմ աստ պահել զքաղաքս»։ Եւ այսպիսի հնարիւք թափեաց զկապեալսն։*

*Յայնժամ խառնիճաղանճ ժողովուրդն դիմեցին ի վերայ վարդապետին՝ քարամբք ջարդել զնա։ Եւ քարն գայր ի վերայ նորա որպէս զանձրև, մինչև քարակոյտ արարեալ ի վերայ նորա. և այնպիսի տանջանօք աւանդեաց զհոգին իւր առ Աստուած՝ սուրբ վարդապետն*

բնտ վկայութբ. 1. գ ամբարիշտ փխ. անօղորմ. 2. ժ չունի և յերկիր ընկենուլ. 4. գ խոստում. 5. գ անցաւոր փխ. անցաւոր է. 8. ժ սպանեն. | ժ հոգւոց մերոց. 9. գ չունի բազում. 10. գ գրիգորիոս փխ. վարդապետն. | գ չունի կիրակոս և սիմէոն. 12. գ չունի չար. | գ զկապեալս. 13. գ չունի և. | գ բանս փխ. անցս. 14. գ Թաթխարա. 15. ժ յազգէ նետողացն. | գ յերիվար իւր և փխ. ձի. 16. ժ խլեաց զնոսա զկապեալսն ի նոցանէ. 17. ժ չունի զնոսա. | գ չունի խաղաղութեամբ և. 18. գ քաղաք փխ. քաղաքացիսն | գ զիարդ ես (փխ. ես զի՞նչ). 19. գ յորոյ. 20. գ չունի պահել զքաղաքս. 23. գ գրիգորի փխ. վարդապետին. | ժ քայրն. | գ գայր քայրն. 24-25. գ չունի որպէս....ի վերայ նորա. 26. գ չունի իւր առ աստուած.

Digitized by Google

Գրիգորի։ Իսկ դահճացն կտրեալ զգլուխ նորա և կախեցին ի դրան քաղաքին՝ պարսպակէն։

Եւ ի կատարման չարչարանաց առաւելութեան, հրաշալի երեւումն եղև. զի ծագեաց լոյս պայծառ յերկնից ի վերայ տեղւոյն՝ յորում չարչարեցան մարտիրոսքն նոցա։ Զոր տեսեալ յառաջ աւագ մուղրին, որ առաջնորդէր նոցա՝ զի ելանէր ընդ առաւօտն ի մինարան՝ կոչել զժողովուրդն գալ ի յաղօթս։ Եւ տեսեալ զլոյսն անճառ ի վերայ մարմնոյ վարդապետին Գրիգորի՝ ձայնէր ի բարձրութենէ ի քաղաքն. «Արիք», ասէր «ի դուրս հայք և տաճիկք և տեսէք զնուրն իջեալ ի վերայ մահրասայինն։ Վայ ձեզ որ անմեղ և անպարտ չարչարեցիք զնա։ Ահա պատուեաց Աստուած և փառաւորեաց զիւր սիրելին և զձեզ յամօթ և նախատինս արար»։ Իսկ նոցա լուեալ զձայն մուղրոյն՝ ընթանային ի տեսարանն և ապշեալք լինէին յանդիմանեալք ի լուսոյն։

Յայնժամ ժողովեալ քրիստոնէից հանդերձ քահանայիւք ի տեղին՝ զի մինչև ցայն ժամն թաքուցեալ կային քրիստոնեայքն ի յահէ բռնաւորացն՝ և ի յայտնել լուսոյն ուրախացան և միաբանեալ բարձին զսուրբ մարմին նորա և զգլուխն սաղմոսիւք և օրհնութեամբ, թաղեցին ընդ նմա զԿիրակոս և զՍիմէոն՝ ի քաղաքէն ի դուրս՝ ի վանքն ուղղափառ Յակոբիկ Ասորոց՝ որ կոչի սուրբ Պարամէի։

1. գ Գրիգոր-ից յետոյ աւելացնում է ի փառս այ. | գ հատեալ փխ. կտրեալ. | դ չունի և. 1-2. դ կախեցին ի դուռն քաղաքի պարսպին. 3. դ առաւօտին. 4. գ չունի զի. | գ չունի պայծառ. 5. գ սբ. մարտիրոսքն նոցա. | գ յառաջ տեսեալ. 6. դ յառաջնորդէր. 7. գ չունի ընդ. | գ ի մընարայն-իւր. | գ զժողովուրդն. 8. գ յաղօթսն (փխ. ի յաղօթս). 9. գ ի բարձրութենէն. 10. գ տեսէք փխ. և տեսէք. 11-12. գ վարդապետին որ անմեղ չարչարեցին զնա վայ է ձեզ որ ձեռն արկիք ի նա (փխ. մահրասայինն.... զնա). 12. դ պատուեաց. 13. գ չունի և փառաւորեաց. | գ չունի և զձեզ ....արար. 14. գ չունի զձայն մուղրոյն. 15. դ ափշեալք. 17. գ քրիստոնէից. 18. գ զայն ժամ. | գ թաքուցեալ. 19. գ չունի քրիստոնեայքն. 20. գ միաբանեցան փխ. միաբանեալ. 21-10. գ օրհնութբ. և երգօք հոգևորօք եդին ի դիր հանգստեան ի նշանաւոր չիրմի և առնէ ցաւոց փարատումն սբ. նշխար գրիգոր վարդապետին և աշակերտացն սիմէոնի և կիրակոսի ի փառս քի այ (փխ. օրհնութեամբ թաղեցին.....

*Եւ կան գերեզմանք նոցա ուրեք ուրեք ի միմեանց և աբեղայք վանացն ապաստաւորեն. սուրբ գերեզմանք նոցա և հող գերեզմանաց նոցա առնեն բժշկութիւն ամենայն ցաւոց ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ որ է օրհնեալ յաւիտեանս ամէն։*

*Այս եղև ի Թուականիս մերոյ ՉԼԹ, յամսեանն հոռի Դ և փետրվարի Ժ, օրն շաբաթ, ի տօնի սուրբ Սարգսին, ի Թագաւորութեան Հայոց Հեթմու, ի հայրապետութեան Տեառն Ստեփաննոսի, ի բռնակալութեան ազգին Նետողաց Արղուն խանին ի Թավրէզ։*

Այս վկայաբանութիւնն ունին միայն ժ և զ ձեռագրերը. ժ ունի փ=ապրել ժե, հետևեալ վերնագրով. «Վարք և յիշատակ և նահատակութի սքանչելի առն այ երանելի վրդի Բալւեցւոյ». իսկ զ արեգ Չ=մարտ ժԴ, այս վերնագրով. «Վարք և նահատակութի սքանչելի առն այ երանելի վարդապետին Գրիգորի Բալըւեցւոյն:»Ծանօթութիւն զ ձեռ. «Այս տեղից չկայր այս պատմութիւս (ամբողջ վկայաբանութեան համար) մինչ ի Խարբերթու օրինակեցի և բերի յայս»։ Հմմտ. նաև Այրարատ, էջ 438 ա։

Համեմատութիւնից երևում է որ ժ և զ համառօտութիւն են մի ընդարձակ օրինակից։ Վկայաբանութեանս հեղինակն է Գրիգոր Բալուեցւոյ քրոջ որդի՝ Դաւիթ երէց Բալուեցին (տես էջ 104 և 106), որ նրա մօտ աշակերտել է, և ականատես է եղել իր պատմած դէպքերին։

Թուականի համար մեր բնագիրը (տես էջ 117, տող 6-7) տալիս է հետևեալ մանրամասն տեղեկութիւնը. «ի Թուականիս մերոյ ՉԼԹ, յամսեանն հոռի Դ և փետրվարի Ժ, օրն շաբաթ, ի տօնի սուրբ Սարգսին»։ Մեր երկու ձեռագրերից՝ ժ Յայսմաւուրք է, իսկ զ՝ Վարք Սրբոց. երկուսի մէջ էլ այս վկայաբանութիւնը դրուած է բնագրի հաղորդածից տարբեր ամիսների և ամսաթուերի տակ։ Բնագրի տեղեկութիւնը նահատա-

ի Թավրէզ, այն է տող 21-10). 6. ժ Թվկնիս.

Digitized by Google

կութեան ժամանակի մասին ստոյգ է։ Գրիգոր Բալուեցին նահատակուել է փետրուար ամսին. «յաշնանային ժամանակն» գալիս է Խարբերդ (էջ 107, տող 1) և հինգ ամսից յետոյ (էջ 107, տող 16) նրան այնտեղ նահատակում են։ Բնագրի «ՉԼԹ յամսեանն հոռի Դ և փետրվարի Ժ» շարժական տոմարի հաշուով է։ ՉԼԹ թուի նաւասարդի մէկը գալիս է 1290 յունուարի 8-ին, ուստի նոյն տարուայ հոռի 4-ը համապատասխանում է հռովմէական թուի փետրուարի 10-ին։

Արդ՝ 1290 թուի փետրուարի 10-ը ուրբաթ էր, իսկ մեր բնագիրը ունի «օրն շաբաթ»։ Սակայն նահատակութեան պատմութիւնից ստուգւում է, որ իսկապէս նահատակութեան օրն ուրբաթ է եղել, որովհետև վկայաբանութեան մէջ հաղորդուած է որ «ի լուսանալ շաբաթ առաւօտուն՝ հրաշալի երևումն եղև»։

Այսպէս ուրեմն հաստատ կերպով կարելի է եզրակացնել, որ յիշեալ վկաները նահատակուել են ուրբաթ փետրուարի 10-ին, իսկ շաբաթ փետրուարի 11-ին նահատակութեան տեղում լոյս է ծագել, և նոյն շաբաթ օրը վերոյիշեալ նահատակներին թաղել են Սուրբ Պարսամէի վանքում։

Սոյն վկայաբանութեան բնագիրը կազմելիս մեծ մասամբ հետևել ենք ա ձեռագրին, երբեմն նոյն իսկ նրա անհարազատ ընթերցուածները պահելով, որ կարելի էր ուղղել գ ձեռագրի համեմատութեամբ։ Միւս վկայաբանութիւնների բնագիրը՝ անկասկածելի դէպքերում՝ ճշտել ենք, ձեռագրերի տարբերութեանց վրայ հիմնուելով։

Digitized by Google

# 14.

## ԿԻՐԱԿՈՍ ՌԻԱԿԵՐՑ

† ՁԽ=1291

Սոյն նահատակի մասին Սիսական, էջ 160, տալիս է հետևեալ տեղեկութիւնները․

«Է արդ ընդ բերդաքարիւն կամ ի լանջս բլրոյ միոյ մատուռն մի քարաշէն (Վայոց ձորի մէջ, Ոստին գիւղի և Սուլեմայ գետակին մօտերը) յոյժ փոքրիկ (6 քայլ երկայն, 4 լայն), զոր և Ընդեղի մատուռն կոչեն մերձաբնակքն և գան յուխտ․ այլ նահատակի նորոյ համարին զայն հանգստարան, աղջկան միոյ կամ Թուրք երիտասարդի հաւատացելոյ․ է ի միջին վէմ տապանի, յորում գրեալ այլ ոչ ճշգրիտ ընթերցեալ,

Զնորոգող սուրբ նահատակիս զհոգևորն Պլճոնց յաղօթս յիշեցէք զԿիրակոս միակեաց ի Քրիստոս Յիսուս։

Կայ և խաչվէմ առ երի մատրանն ՁԽ թուականաւ (1291)։ Ջալալեանն՝ Սուրբ Կիրակոս կոչէ զմատուռնս, և զնահատակն ասէ ի ժամ պատարագելոյն սպանեալ ի հինից, ըստ աւանդութեան։»

## ԺԵ.

### ԶՈՒԱՏ ՐԱՆՏԻԿ

† 1317?

Սոյն նահատակի մասին իւր եղբայրը Սարգիս Աբեղայ (1317) իւր «ի հաւաքեալ գիրս գործոց Նիւսացւոյն, Թղթոց Կլայեցւոյն և այլ բազում բանից» յիշատակարանին մէջ գրում է ըստ Ալիշանի, Սիսական, էջ 133։

Եւ զարեամբ ներկեալ եղբայրն մեր Զուատն, որ ի տարաժամ հասակի սպանաւ յանօրինաց և խառնեցաւ ընդ մարտիրոսացն։

Digitized by Google

# ԺԹ.

## ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԿՆԵՐՑԻ

† ՉՀ ամաց ԻԲ=1321, յունիս 20, շբ.

Ընդ ժամանակս բռնակալութեանն ազգին Նետողաց՝ կրկին զօրացեալ ազգն Իսմայելեան՝ յարուցանէին հալածանս ի վերայ ամենայն քրիստոնէից, մանաւանդ ի վերայ աշխարհիս Հայոց։ Եւ չար հողմունք հազարային հնչեցին հանդիպօրէն ամբարիշտ Թագաւորացն Դեկոսի, Դիոկղետիանոսի և Յուլիանոսի Ուրացողին, քանզի ազգն Նետողացն դառնային ի դին Իսմայելականաց և յաղագս մահմետականաւրէն կրօնից օրէնսդրին իւրեանց՝ յանձն առնուին զթլփատութիւն և արբանեկութեանն նոցին բազում չարիք անցուցանէին յեկեղեցիս քրիստոնէից և զպաշտօնեայս Աստուծոյ խափանել ջանային ի սուրբ եկեղեցեայցն Աստուծոյ։ Եւ ի բազում տեղիս յաւարի առեալ քակէին, զոր Տէր Յիսուս խափանեսցէ ծովով զօրութեամբ իւրով և խափանեսցէ զչարաճարակութիւն անօրինացն։ Եւ ըմբռնեալ զքրիստոնեայսն զատան տանջանօք նեղէին ստիպեալ զքրիստոնեայսն հաւատոյն՝ որ ի Հայք և յՎրաց և յամենայն աշխարհս Հոգւ։ Դարձեալ տուգի տաան և երկին հարկս ի վերայ քրիստոնէից և յամենայն գլխոյ առնուին եօթն ութ դահեկան՝ յամենայն ամի, կամ ուրանալ զՔրիստոս, կամ տալ զդահեկանն՝ որ

2. Ձ Իսմայելեանքս. 3. Ձ յաշխարհս. 5. Ձ Դիոկղետիանոսի. 6. Ձ յուրացողին. 7. Ձ ... 8. Ձ յաղթեալքն. 10. Ձ խափանել. 14. Ձ յանաւրինացըն.

*է խարան. զոր ոչ հնազանդեցան քաջահաւատքն և արիքն խաբեբայ աղանդից նոցա, այլ յանձն առին տալ ըզ հարկն յամենայն ամի։ Եւ մերային սեռս և քրիստոսադաւան քրիստոնեայք ՝մտանէին ի լուծ հարկացն և գոհութեամբ տային զինչս և զստացուածս վաճառէին և տային յամենայն ամի և յերկոտասանամեայ մանկանէ առնուին զհարկն. և բազումք տարադիրք եղեալ վասն հարկին։ Իսկ քրիստոնէիցն տալով զայս ամենայն՝ անվրդով կացին ի հաւատս՝ որ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս։*

*Եւ արդ մինչ էր թուականն Հայոց Ձ և Հ, ամբարիշտ ոմն յազգէն Նետողացն՝ որում անուն Դամուր Տաշասի, այս է ինքն Երկաթաքար. և անօրէնն գայ յաշխարհն Հոռոմոց և տեսեալ զերկիրն Հայոց զԿիլիկիա, զի որպէս ճիւղ մի ձիթենւոյ մնացեալ դադարէին ի նեղ և անձուկ և ի խորշակահար երկրին բազում տառապանօք, ի մէջ երկուց անօրէն ազգացն այն՝ Եգիպտացւոց և Արակլիացոց։*

*Արդ անօրէն Երկաթաքարն այն ի նախանձ մտեալ ընդ թագաւորն Հայոց վասն իրիք պատճառանաց և խորհէր աւարի առնուլ զերկիրն խրոխտանօք և մռմռայր իբրև զառիւծ, զօրս ժողովէր, հեծեալս կազմէր, դեսպանս առաքէր խաբեբանօք, զի ըմբռնեսցէ զթագաւորն Հայոց և զաշխարհս աւարի առցէ։ Զոր իմացեալ զչար խորհուրդն նենգաւորին՝ ոչ հնազանդեցան հրամանի նորա. այլ ամրացան յիւրաքանչիւր դղեակս և յամրոցս, ի քարանձաւս և այլ անառ կլանիս։ Եւ անօրէն Երկաթաքարն այն մտեալ յերկիրն Հայոց բազում հետեւակօք և ձիաւորօք և բազում աւերմունս արարին և զհրաշափառ եկեղեցին Էջմիածինն այրեցին հրով, ընդ նմին և զկէս քաղաքին։ Նաև զվաստակ երկրին այրեցին և անթիւ սպանին և գերի վարեցին։ Եւ ելեալ անդրէն եկին ի Կեսարիա Կա-*

10. d թվականն. 13. d զկիլիկիայ. 14. d ձիթենոյ. 16. d յայն յեգիպտացւոց. 18. d յանաւրէն. 22. d ընբռնեսցէ. 25. d յամրոցըս. ի քարանձաւսս.

*պադովկացւոց և զխաչն Մերախայ առեալ մանրեցին, քանզի էր կազմեալ յոսկոյ սրբոյ. և բազում քահանայս ի հռոմադաւան քրիստոնէից նահատակեցին. զոր Տէր Յիսուս հատուսցէ նոցա զհատուցումն նոցա նոցին։*

*Եւ զայն տեսեալ անօրէն դատաւոր ոմն ի մայրաքաղաքէն Կարնոյ, քանզի ունէր նախանձ ինչ ընդ եպիսկոպոս քաղաքին և առ քրիստոնեայս, գնաց առ չարիմաց Երկաթաքարն և առեալ հրամանս հրովարտակաց և զինուորս բազումս, դայ ի քաղաքն Կարնոյ։ Եւ ժողովեալ զբազմութիւն քաղաքին հանդերձ եպիսկոպոսաւն Տէր Գրիգորիսիւ և զանիրաւ հրովարտակս կարդայր առաջի ամենայն բազմութեանն. և ըմբռնեալ զեպիսկոպոսն, ընդ նմին և զնորին հօրեղբայրն զՏէր Պաւղն և ըմբռնութեամբ կապեալ թլփատեցին և դարձուցին ի պիղծ հաւատն իւրեանց։ Իսկ սուրբ եպիսկոպոսն ասէ թէ՝ «Մերկ եկն ամենայն ծնեալքն յաշխարհս և մերկ ելանելոց եմք յաշխարհէ, ըստ աստուածաբան առաքելոյն Պօղոսի՝ որ ասէ. Զունիմք քաղաք որ աստէն մնալոց է»։ Իսկ անօրէն զինուորքն և դատաւորն կապեցին զեպիսկոպոսն և նստեալ յատենի՝ կացուցին առաջի իւրեանց՝ ի հարցանել և ի դատել զնա, որպէս խաչահանողքն զՏէրն։*

*Ասեն բռնաւորքն. «Ո՞ւր է խաչն քո՝ որ կազմեալ է յոսկոյ, զոր դուք Աստուած պաշտէք և երկրպագութիւն տայք որպէս Աստուծոյ»։*

*Եպիսկոպոսն ասէ. «Մեք պատուէր ունիմք ի Տեառնէ մերմէ ոչ ստանալ ոսկի և ոչ արծաթ, ոչ ակունս, ոչ մարգարիտս և ոչ հանդերձս փափուկս. այլ զՔրիստոս միայն ստանալ, զի ի նորա յարքայութեանն վայելեմք։ Իսկ խաչն զոր ասէք եթէ Աստուած պաշտէք, ո՛չ է նա մեր Աստուած, այլ զեն Աստուծոյ և մեզ պատճառ երկրպագութեան»։*

II. d հըրով արտաքս. 14. d ի պիղծն. 17. d առաքելոցն. 18. Տես Եբր. ԺԳ. 14. 20. d և ի հարցանել. 21. d և որպէս. | d և զտէրն. 26. d ստանալ. 30. d երկրպագութի.

Յայնժամ լցան ցասմամբ և բարկութեամբ բռնաւորն և դատաւորն և հրամայեաց չար սպասաւորացն՝ երկաթի բրօք հարկանել զկուրծսն և զթիկունս՝ մինչև բացան կողք և ոսկերք թիկանցն՝ զոր տեսել ոմանց թէ մեռաւ։ Իսկ նա ապրեալ լինէր զօրութեամբն Քրիստոսի։

Եւ թողեալ զեպիսկոպոսն կիսամահ անդէն ի տեղւոջն, դիմեցին առ հասարակ անօրէնքն քաղաքին բազում ամբոխիւ ի վերայ եկեղեցւոյ եպիսկոպոսին՝ որ յանուն սրբոյ Նազարայեցին, և զսուրբ սեղանն՝ յորմէ զողջան հրեշտակին, մանրեալ խորտակեցին և զսպաս սրբութեանն և զսուրբ Աւետարանն հանդերձ հին և նոր կտակարանօքն յափշտակեցին ի տունս իւրեանց ի վերայ եկեղեցւոյն։ Ապա յայնժամ անօրէնքն ի խորհուրդ մտեալ զի առաքեսցեն ի դպրաց իւրեանց և յաւագաց նոցա՝ զի դաւանանութեամբ առ իւրեանց կրօնս դարձուսցեն. զանձս ցուցանէին և խոստանային. զուղթս ցուցանէին մարգահանութեամբ ըստ օրէնի մարգարէին Սարակինոսաց։ Իսկ երանելին եպիսկոպոսն առ ոչինչ համարելով զպարգևս նոցա և զմեծութիւնս զոր խոստանային և ոչ զդառն տանջանսն զոր կտտանօք չարչարէին՝ ասելով զբանս սուրբ առաքելոյն թէ՝ «Յոյս իմ ի Քրիստոսէ և ես պատրաստ եմ ի մեռանել վասն անուանն Քրիստոսի»։

Յայնժամ հրամայեաց անօրէն բռնաւորն հանդերձ դատաւորաւն անիրաւի պիղծ դահճացն՝ զի սրով ճեղքեսցեն զջիլս երկուց ծնկացն և աղիւն լնուլն զվէրսն, նոյնպէս զներբանս ոտիցն. և այնպէս պրկեալ կայր բազում ժամս անմռունչ ի բազում ցաւոց՝ զոր իմացեալ անօրինացն թէ մեռաւ։

Ապա առեալ տարան ի տուն մի պղտոցւոյ և վստահացուցին առ ի պահել զնա։ Իսկ նա զօրութեամբն Քրիստոսի կայր կենդանի։ Ասէ այրն այն. «Քրիստոնէից եպիսկոպոս, բերե՞ց ջուր, զի արբցես»։ Եւ նա ասէ. «Ոչ»։

3. d զի երկաթի. 4. d թիկնացն. 12. d տայ. 13. d յայնժամուն. 17. d սարակինոսաց. 25. d բ (փխ. երկուց). 26. d կեայր. 29. d վստահ ցուցին.

Ասէ բանսարկուն իւր մարդասիրութիւն ցուցանելով. «Տաց քեզ անկաւինի մի կերակուր. զի այս քանի աւուրք են անսուաղ կաս»։

Ասէ եպիսկոպոսն. «Կերակուր չէ ինչ պիտոյ, այլ ունիմ խնդիրս ի քէն, զի տացես ինձ անկաւնիկ մի քարտէզս»։ Եւ նորա բերեալ ետ ցեպիսկոպոսն. և առեալ մուր գրեաց ի ծածուկ առ քահանայս քաղաքին, զի առացեն մանն զի հաղորդեսցի. առնլով թէ՝ «Իմ կերակուրն այն է»։ Եւ առեալ տարան զթուղթն առ քահանայսն դպրոցս։ Եւ նոքա առաքեցին ի ձեռն պատանւոյ միոյ և առեալ գոհացեալ և ճաշակեաց և համբարձեալ զձեռս իւր յերկինս՝ ասէ. «Փառաւորեմ զքեզ Տէր»։ Եւ զաւուրս քառասուն ոչ ճաշակեաց և ոչ էարբ ջուր. այլ կերակուր և ըմպելի նորա չարչարանքն եղեն. զի կերակրեալ լինէր նա ի շնորհացն Քրիստոսի։

Իսկ երանելի եպիսկոպոսն յայտնի միջամուտս և ի չարչարանս կայր քաջ հովիւն և զինւորն Քրիստոսի Տէր Գրիգորիս համանուն իւր նախնեացն մեծամեծաւորեալ եղեալ ի մեծ պատերազմին աստուածային անօրինացն և ոչ ետ գերել զքաղաքն զայն, նա և ոչ տեսանել զբազում տեղիս, այլ յաղթեաց զպատութեանքն Քրիստոսի Բեղխարայ և զօրաց նորա. զի եթէ գտեալ էր տեղի չարն այն և քրիստոնէութեան զանուանսն, բազում չար խորհուրդս համբարեալ ունէին փորձանաւորաւն իւրեանց սատանայիւ, զի զքրիստոնեայս քաղաքին հրապուրեսցեն յիւրեանց աղճատելի կրօնս։ Փարձեալ գոր օրինակ ի նախատոյն պատերազմին Գողիաթու Դաւիթ մարգարէն զդիմի կալաւ երիս բարանց Նեղեղանի և եհար զԳողիաթ և եբարձ զնախատինս Իսրայելի, նմանապէս երանելի սուրբ եպիսկոպոսն Գրիգորիոս յերկնաւոր անուն յուսալով առաքեցաւ ընդդէմ աներեւոյթ Գողիաթայ և ընդդիմացաւ անօրէն բռնաւորին

3. d անսուաղ կասա. 9. d զթուխտն. 13. d ըմպելի. 17. d կեայր.
22. d գտեալ. 28. d յիսրայէլի.

Digitized by Google

*և դատաւորին, և եբարձ զնախատինս հանուրց քրիստոնէից. քանզի ամենայն քահանայք քաղաքին և ճանաչ քրիստոնեայքն փախեալ կային ի մեծ վտանգէն ահիւ. զի հարին զհովիւն և հօտն ցրուեցան։ Ցայնժամ հատին վճիռ ի վերայ նորա, զի սրով սպանցեն զերանելին։*

*Ապա կապեցին կրկին կապանօք և տարան ի տեղի կատարմանն և նորա հայեցեալ այսր անդր և ոչ զոք տեսանէր ի քրիստոնէիցն. քանզի ամենեքեան ահիւ մեծաւ փախուցեալ կային։ Ապա կնքեալ զինքն խաչիւն Քրիստոսի՝ յանձն արարեալ զհոգին իւր սեփհական ի ձեռն Տեառն, եկաց յաղօթս ի սրտի իւրում և ասէ. «Տէր Յիսուս Քրիստոս, Որդի Աստուծոյ, որ յաղագս մեր հասարակաց բնութեանս խոնարհեցար յերկիր և առեր մարմին ի սուրբ կուսէն Մարիամայ՝ կրելով զմեր բնութիւնս բայց ի մեղաց, խաչեցար և եդար ի գերեզմանի և յարեար ի մեռելոց և համբարձար առ Հայր, ընկալ զհոգի ծառայիս քո Գրիգորիսի և խառնեա զարիւն իմ՝ որ վասն քո հեղու, ընդ սուրբ արեան վկայից քոց և շնորհեա եկեղեցեաց քրիստոնէից անդորրութիւն և երկրպագուաց սրբոյ երրորդութեանդ կեանս խաղաղականս ի կրկին ներհակաց. հայրապետին մերոյ և ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց՝ համառօտել զբանն ճշմարտութեան, քահանայից՝ կատարողաց անմահ զենման պատարագին՝ մաքուր հոգով սպասաւորել կենաց հացին, բարեպաշտ թագաւորաց Եւ իշխանաց քրիստոնէից՝ յաղթող լինել ի պատերազմունս բարբարոսաց և համօրէն ամենայն հաւատացելոց՝ յիւրաքանչիւր վտանգից փրկութիւն, ծառայից և գերեաց ազատութիւն և անմեղ արեանց դադարումն»։ Եւ ապա խոնարհեցոյց զպարանոցն, և անօրէն դահիճն եհատ սուսերաւ զգլուխ նորա՝ սուրբ և ընտրեալ նոր մարտիրոսին, արացի ԻԲ, յաւուր շաբաթի։*

2. d ճաճանչ. 4. d վճիռ. 8. d յամքն. 18. d յեկեղեցեայց. I9. d երկրպագեց. 26. d և իւրաքանչիւր. 30. փխ. արացի իբ, d ունէր յունվարի իթ. այս մասին տես էջ 127-8։

Եւ կին մի բարեպաշտ ձգեալ զվարշամակ գլխոյն առաջի սրբոյն և զարիւնն ոչ եթող հեղուլ յերկիր· այլ ամենայն մաքրեալ զկաթուած արեանն և առեալ տարաւ ի տուն իւր մեծաւ յուսով։ Եւ հրամայեաց անօրէն բռնաւորն՝ զի զգուշութեամբ պահեսցեն զմարմինն, զի մի եկեալ ի գիշերի գողանայցեն հաւատացեալքն և զորս ըմբռնեսցեն, պատուհասակոծ արասցեն. զի անդէն ի տեղւոջն կացցէ լինել կերակուր գազանաց։

Իսկ յերրորդում գիշերի՝ մինչ պահէին պահապանքն զմարմին սրբոյն, էջ լոյս յերկնից ի վերայ պատուական մարմնոյն՝ զոր տեսեալ բազմութեան արանց հաւատացելոց և անհաւատից, տային փառս Աստուծոյ։

Եւ ապա հրաման տուեալ անօրէն դատաւորն՝ զի առնուն քրիստոնեայքն և ըստ օրինացն պահեսցեն զերկնային գանձն. զոր իբրև լուան քահանայքն և ժողովուրդքն, առ հասարակ ժողովեցան և առեալ զմարմինն տարան հանգուցին ի տաճար սրբոյն Սարգսի զօրավարին։

Ապա անօրէն դատաւորն ըմբռնեալ զքրիստոնեայսն և պատուհասակոծ արարին զբազումս և առեալ զմարմին երանելոյն, տարան ընկեցին ի տեղի կատարմանն՝ խնդրելով ի քրիստոնէից գանձս՝ մինչև տացեն զխնդրելին իւրեանց։ Եւ ապա ետուն հրաման երթալ և առնուլ զմարմին սրբոյն. և եդին ի գերեզմանի ի սուրբ տաճարն որ յանունն սուրբ Կարապետին և սուրբ Գրիգոր Լուսաւորչին՝ մեծաւ պատուով ի փառս Քրիստոսի Աստուծոյ։

Սոյն վկայաբանութիւնն ունի միայն d ձեռագիրը, Արաց ԻԲ և յունվարի 29, այս վերնագրով. «Ի սմին աւուր նահատակութիւն Տէր Գրիգորիսի սուրբ եպիսկոպոսին Թէոդոյ Պօլսոյ որ Կարնոյ քաղաք Արզրումն։»

Շատ հետաքրքրական է սուրբի նահատակութեան Թուականի խնդիրը, որի բացատրութեան բա-

13. d տըւեալ. 22. d ետոյն.

նոյնի արդիւնք է պր. Մանանդեանի մտածողութեան։

Վկայաբանութիւնը թուականի համար տալիս է հետևեալ տողերը. «Եւ այս մինչ էր թուականն Հայոց Չ և Հ» (էջ 122, տող 10) և «յունվարի ԻԹ, յաւուր շաբաթի» (տես էջ 126, տող 30-31՝ ձեռագրի բուն ընթերցուածը)։

Հայոց ՉՀ թուականը սկսում է Քրիստոնէական 1320 թուի դեկտեմբերի 31-ից. ուստի և յունվար ԻԹ ընկնում է 1321 թուին։ Ամէնից առաջ նկատենք թէ 1321 թուի յունվարի 29 գալիս է հինգշաբթի օր. իսկ մեր ձեռագիրն ունենալով շաբաթ, յայտնի է որ չի կարող ճիշտ լինել։

Բայց ըստ անշարժ տումարի կամ յայսմաւուրաց թուականով՝ յունվարի 29 համապատասխանում է Հայոց արաց ամսի ԻԲ-ին։ ՉՀ թուի արացի ԻԲ-ն էլ ըստ շարժական տոմարի համապատասխանում է 1321 թուի յունիսի 20-ին, որ իրօք էլ շաբաթ օր է գալիս։ Ուստի կը հետևցնենք թէ վկայաբանութեան նախնական բնագիրն ունէր (շարժականի հաշւով) ՉՀ թուի արաց ԻԲ, շաբաթ. սակայն Յայսմաւուրքը կարգադրողները ուզենալով շարժականը անշարժի վերածել՝ արաց ԻԲ-ի դէմ դրել են նրա համապատասխան յունուար 29՝ ըստ անշարժ տումարի, անգիտանալով ի հարկէ ուղղել շաբաթը։ Մեր օրինակում պատահել է որ բնագրի մէջ սոյն «արաց ԻԲ» բառերն էլ ընկնեն, և մնացել է միայն յետսամուտ «յունվար ԻԹ» սխալ ձևը։

Այժմ բնագիրը վերականգնւում է տոմարական հաշիւներով։

Digitized by Google

# 17.

## ԱՄԻՆԱՒՐԴ ԴԵՐՋԱՆՑԻ

† ՉՁԴ=1335 մարտ 10, ուր.

Երանելիս այս էր ի գաւառէն Դերջանու՝ ի գեղջէն Կառնբերդակ՝ այր աշխարհիկ և երկրագործ, գեղեցիկ դիմօք և վայելուչ հասակաւ, ուժեղ և զօրաւոր մարմնով։ Եւ ինքն էր բարեպաշտ և երկիւղած յԱստուծոյ և բարի ծնողաց զաւակ. անուն հօր նորա էր Թիմեր, և մօրն Զամէնտիկլին։

Սա ունէր այլազգւոյ ումեմն սակաւ ինչ պարտս. և նա եկեալ նեղէր զսուրբն, և զդրաստն բռնութեամբ քարշեալ տանէր իբրև դրաւական։ Ասէ Ամենաւագ ցեղբայր իւր. «Մի թողուր տանել զդրաստն, քեզ լիցի քան թէ այլազգւոյն»։ Ասէ եղբայրն. «Ոչ է ինձ պիտոյ»։ Եւ բարկացեալ Ամենաւագն՝ ասէ. «Ո՞րպիսի քրիստոնէութիւն է այդ՝ ես ոչ գիտեմ»։

Յայնժամ ասէ այլազգին ցԱմենաւագն. «Ահա ոչ հաճեցար դու ընդ քրիստոնէութիւն, ապա ընկալար զայլազգութիւն»։ Եւ կացին վկայք թէ ուրացաւ զՔրիստոս։ Զայս լուեալ երկեաւ և փախուցեալ թաքեաւ ժամանակս ինչ. և դարձեալ եկն ի գիւղն իւր Կառնբերդակ, և եկաց անդ աւուրս ինչ։ Եւ տեսեալ թէ այլազգիք ոչ դադարին ի խնդրելոյ՝ և ինքն ոչ կարէ մնալ թաքուն, գնաց առ քահանայն և խոստովան եղև զմեղս իւր, և դաւանեալ զՀայր և զՈրդի և զՀոգին սուրբ, հաղորդեցաւ ի մարմնոյ



Digitized by Google

և յարենէն Քրիստոսի, և զինեալ զինքն հոգևոր զինուք՝ պատրաստ եղև ի պատերազմ։

Ազդ եղև իշխանին՝ որոյ անուն էր Ամիրմահմուտ և դատաւորին՝ որ կոչէր Ամիրհասան՝ որ ծարաւի էր արեան քրիստոնէից. և առաքեալ զօրականս և տարան ի դեղաքաղաքն և կացուցին յատեան առաջի իշխանին։ Ասէ իշխանն. «Դու ընկալեալ ես զայլազգութիւն»։ Եւ նա ասէ. «Ես քրիստոնեայ եմ»։ Եւ վկայքն ասէին թէ՝ ուրացաւ զՔրիստոս։

Յայնժամ իշխանն առաքեաց առ դատաւորն. և նա ասէ. «Հաստատո՞ւն իցես ի խոստման քում»։ Ասէ սուրբն. «Ոչ գիտեմ զինչ իցէ խոստումն իմ»։ Ասէ դատաւորն. «Յանձն առեալ ես ընդունիլ զայլազգութիւն»։ Եւ նա ասէ. «Հայ եմ ազգաւ և հաւատով քրիստոնեայ»։ Եւ հրամայեաց և արկին ի բանդ. և զաւուրս երկուս ոչ ետուն նմա հաց և ջուր. և կայր անդադար յաղօթս։

Եւ դարձեալ յետ երկուց աւուրց կոչեաց զնա դատաւորն, և ասէ. «Ուրացիր զՔրիստոս. ապա թէ ոչ՝ սպանանել տամ զքեզ և քարկոծել»։ Եւ նա ասէ. «Ամենայն ազգն իմ քրիստոնեայ է. և ես զիմ հօրն և զմօրն հաւատն ունիմ և քրիստոնեայ եմ»։ Ասէ դատաւորն. «Դու դարձեալ ես յայլազգութիւն և ընդէ՞ր քրիստոնեայ կեաս»։ Ասէ վկայն Քրիստոսի. «Ես հայ եմ. զՀայրն հաւատամ և զՈրդին խոստովանիմ»։ Յայնժամ ասէ դատաւորն. «Հայհոյեաց, ընդէ՞ր լսէք, խցէք զականջս ձեր և հարէք»։ Եւ ամբոխն աղաղակէր. «Հրաման է իշխանին՝ զի մահու մեռանիցի». և այլք ասէին թէ «Ուրացաւ զՔրիստոս առաջի իշխանին». և ջանային խախտել ի հաւատոցն Քրիստոսի։

Եւ դարձեալ ասէ դատաւորն. «Ուրացի՛ր զՔրիստոս՝ զի ապրեսցիս». և բազում պարգևս խոստանայր՝ երիվար, արծաթ և ոսկի և հանդերձս։ Եւ այլազգիքն յամենայն կողմանէ խիթէին և ասէին. «Միանգամ ասա դառնամ և ապրեաց. և յետոյ զքո հաւատն պաշտեսջիր»։ Եւ բազում քաղցր և պատրողական բանիւք ջանային մոլորեցուցանել

ի հաւատոցն Քրիստոսի։

Ասէ Ամենաւագ. ԶՔրիստոս Աստուած պաշտեմ, զերրորդութիւնն և զմի Աստուածութիւնն հաւատամ։ Եւ յորժամ լուան զանունն Քրիստոսի, ամենեքեան վկայէին թէ՝ մահու արժանի է՝ զի հայհոյեաց. և յորժամ դատաւորն վճռեաց թէ մահապարտ է, յորուցեալ Ամենաւագն համբուրեաց զվկայսն՝ և ասէ. «Սպանէք»։ Եւ պատեալ ամբոխն շուրջանակի՝ կալեալք զհերացն և զհանդերձիցն՝ հարկանէին մեղմագոյն բռամբ՝ և տանէին ի տեղի սպանմանն, զի յերկիւղէն զարհուրեալ ուրասցի. և զհանդերձն իւր զգլխոյն արկանէին՝ և դարձեալ աղաղակէին առ դատաւորն և առ մեծամեծսն և ասէին. «Դարձաւ յայլազգութիւն. մի հարկանէք»։

Եւ ընթացեալ դատաւորն մերձ՝ ասէ. «Հաւատաս և դառնաս յայլազգութիւն»։ Եւ ծառայն Քրիստոսի աղաղակեաց. «Քրիստոնեայ եմ և զՔրիստոս Աստուած հաւատամ»։ Եւ բարկացեալ դատաւորն խնդրեաց քար, և եհար ուժգին զգլուխն. և ասէ ամենեցուն. «Քարկոծեցէք». և սկսան քարկոծել. և ոմանք դաշնակաւ խոցեցին զկողսն. և այլ ոմն եհար ուժգին զգլուխն երկաթի ուռամբ և եհեղ զուղեղ գլխոյն. և ամենայն բազմութիւնն քարաձիգ լինէին՝ մինչև ծածկեցաւ մարմինն ի քարանցն։ Եւ այսպէս ճշմարիտ խոստովանութեամբ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած՝ մարտի ժ, յուրբաթի օր՝ ի ժամ խաչելութեանն Քրիստոսի և մինչև յիններորդ ժամն քարկոծեալ եղև։

Եւ հանեալ անտի մերկացուցին զհանդերձն և կապեալ պարան յոտս՝ քարշել տային քրիստոնէիցն բռնութեամբ յերկիր ի վերայ երեսաց. և ամբոխն զկնի ընթանային և ամենեքեան հարկանէին զմեռեալ մարմինն և «մեղ մասն լիցի» ասէին, որպէս ասէ Տէրն. «Եկեսցէ ժամանակ որ սպանանիցեն ի ձէնջ՝ համարիցին պաշտօն մատուցանել Աստուծոյ»։ Որ և կատարեցաւ այս առ սուրբ վկայն Քրիստոսի Ամենաւագ։

32. Տես Յովհ. ժզ. 2.

Digitized by Google

Եւ զերիս աւուրս կացեալ անթաղ՝ գազանք կամ թռչունք ոչ մերձեցան առ սուրբ մարմինն. և այլազգիք կալեալ զշունսն՝ տանէին ի վերայ մարմնոյն, և տեսեալ զսուրբ մարմինն յետս փախէին. և ոչ բնաւ նեխեցաւ՝ այլ բուրէր զանուշահոտութիւն։ Եւ լոյս պայծառ ծագեցաւ ի գիշերին, և իբրև զամպար վառէր ի վերայ մարմնոյն. և ձայն երգոց և պաշտամանց լսէին իբրև զքահանայից։ Եւ տեսեալ այլազգեացն՝ կարծելով թէ քահանայք երթեալ գիշերի՝ զի գաղտաբար գողասցին և թաղեսցեն, ընթացան առ մարմինն՝ զի կալցեն զքահանայսն, և ոչ զոք տեսին։

Եւ յետ երից աւուրց՝ յաւուր կիւրակէի՝ երթեալ հաւատացեալքն առին հրաման յիշխանէն և ի դատաւորէն՝ և եդին պատուով ի գերեզմանի։ Եւ այս եղեւ ի թուին Հայոց եօթն հարիւր և ութսուն և չորս. յորում ժամանակի Յովհաննէս վարդապետ՝ այր բարեկրօն՝ գտեալ ի գաւառն Դերջան՝ ականատես և ականջալուր լինելով գրեալ է զհանդէս վկայութեան սուրբ նահատակին։ Եւ Կարապետ դպիր անցուցեալ է ի կարգս դրչագիր Յայսմաւուրաց այնր ժամանակի. յորմէ բայց ի յառաջաբանութենէն որ սկսանի՝ «Հուր է սէրն Քրիստոսի և յոգիս մարդկան բորբոքի», զայլն ամենայն գրեթէ բառ առ բառ արձանագրեցաք աստ՝ ի փառս Քրիստոսի։

Յիշեալ վկայաբանութիւնն ունի Յայսմ. Գ. տպ. Ա. էջ 114′—116′, Մարտի 10 և Ապրիլի ը, Թէոդոսիոս տիւրացւոյ, և Խաչիկա իշխանի վկայաբանութիւննեըից յետոյ, այս վերնագրով. «Յայսմ աւուր վկայութիւն և տօն սուրբ վկային Քրիստոսի Ամենաւագին։»

Վկայաբանութեան վերջից երևում է թէ բնագրի նախնական խմբագրութիւնը եղել է աւելի ընդարձակ, և ունեցել է մի նախաբան՝ «Հուր է սէրն Քրիստոսի և յոգիս մարդկանս բորբոքի» սկզբնաւորութեամբ. հեղինակն է ոմն Յովհաննէս վարդապետ, որը գրել է Դերջանում եղած միջոցին։ Այդ նախնական ընդարձակ խմբագրութիւնը մենք չենք գտել ո՛չ ճառընտիրներում

Digitized by Google

և ոչ Վարք Սրբոցում: Յայսմաւուրքի Գ տպագրութիւնը յայտնում է թէ ընդարձակը յետոյ (անշուշտ համառօտելով) Յայսմաւուրքի մէջ է անցկացրել Կարապետ գրիչ, որից ինքը յապաւելով նախաւրանը՝ տպագրում է թեթև փոփոխութեամբ: Կասկածում ենք սակայն թէ նոյն Կարապետ գրիչը իրօ՞ք արդեօք առաջին անգամ Յայսմաւուրքի մէջ է անցկացրել, թէ ինքը մի պարզ օրինակող է մի ուրիշ Յայսմաւուրքի, որ ունեցել է նոյն վկայաբանութիւնը: Այս խնդիրը որոշ յայտնուած չէ. իսկ մենք վերջինն աւելի հաւանական ենք կարծում:

Digitized by Google

# 18.

## ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ

† ՉՂԷ=1348

Սոյն նահատակի տապանագիրը միայն ունի Շիրակ, էջ 34, հետեւեալ տեղեկութեամբ.

Մերձ նմին (Անի Թուրքմենի գիւղի) և քաղաքին (Անի քաղաքի) երկու հանգստարանք կամ գերեզմանք նահատակաց ԺԴ դարու. մին կիսաւեր մատուռն իմն ամբարձեալ ի վերայ կամրջաձև կամարի, յորմոց ձգելոց ընդ հիւսիս և ընդ հարաւ, և ի ներքոյ նորին անցք են. ի հարաւային կողմանն արձանագրեալ կայ յամի 1348,

Այս է հանգիստ Կիրակոս վարդապետին, որ նահատակեցաւ յանօրինաց. Յիշեցէք ի Քրիստոս. Թվին ՉՂԷ գրեցաւ։

Digitized by Google

# 19.

## ՍԱՐԳԻՍ ՆՈՀՃԱՑԻ

### ԺԴ. Դար

Այն նահատակի մասին Ալիշան, Շիրակ, էջ 34 հետևեալ տեղեկութիւնն ունի.

Սակաւուք հեռի (Անի Թղթարնակ գիւղի մօտ, Կիրակոս վարդապետի † 1348 մահարձանից քիչ հեռու) է մի ուն, որմանձև կերտուած կամ խարխուլ. Նշմարի նաև և խաչվէմ մեծ ագուցեալ ի նմա, երկու սանք այլ ես խաչվէմք գեղաքանդակք ի կարմիր քարանց. յորոց ակն և խաչի ձոր կոչի տեղին. ի ներքոյ մեծի խաչ-վիմին գրեալ է արձանս այս պատասուչ, յիշատակ եղբօր սիրելւոյ ի վերայ եղբօր սպանելոյ.

Զսուրբ և զանարատ զխաչս զատուածընկալ՝ որ բևեռեալ ի սմա անմահ մեռեալ Տէրն մեր Քրիստոս՝ որ մահուամբն իւրով անմահացոյց զմահացեալքս, արդ ես Կաղեբս որդի Մեհնի կանգնեցի զսա կարողութեամբ բեռովին սորա յիշատակ ինձ և ծնողաց իմոց, ես առաւել արինաթաթաւ . . . ա Սարգսի՝ որ յանօրէն Թուրքաց նահատակ եղև յանմարդաձայն տեղիս՝ զոր ընդ ոտիւք դիղաշխարհաւն դրելով զարեգականմանն եղբայրն իմ զոր գտի ի խորագոյն հորի քարաթաղ արարած. ի մազորանն արենաթաթախ մարմնոյն ոչ կարէի ծանել զնա. բազում աշխատութեամբ բերեալ եդի յայսմ տեղի. աղաչեմ յիշեցէք։

Ալիշան նահատակիս թուականը դնում է ԺԴ դար:

6. արիւնաթաւ. 9. ի խորոգու. 10. կարէի.

Digitized by Google

# 20.

## ՎԱՆԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՈՋՆՈՑ

† ՊԼԶ=1387

*Սոյն նահատակի մասին Չամչեան, Գ. 422 տալիս է հետեւեալ փոքրիկ տեղեկութիւնը.*

*Պաշարեցին զօրքն Լանկթամուրայ և զՈջնի. և առեալ զայն՝ կալան զընակիչսն, և ստիպեցին զնոսա յուրացութիւն. և յընդդէմ դառնալ նոցա՝ զոմանս սրախողխող արարին, և զոմանս յերկիր բևեռեցին ցցովք. զոմանս կախեցին գլխիվայր, և զոմանս կապեցին ընդ փայտս և ընդ ծառս. սպանին չարաչար և զեպիսկոպոս քաղաքին՝ զոր Վանակ կոչէին։*

Digitized by Google

# 2Ի.

## ՍՏԵՓԱՆՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵԲԱՍՏԻՈՅ

† ՊԼԶ=1387

Յամի ՊԼԶ Թուականին Հայոց՝ այր ոմն ժանտ և չարաբարոյ, գռող և արիւնարբու, խիստ և դաժանամիտ, անուն Բուրհանադին, որ էր ինքն դանիշման և դատի այլազգեացն՝ և եղև ի չար բարուցն և ի խիստ մտացն արքանեակն սատանայի և որդին կորստեան՝ դատի Բուրհանադինն այն, որ գլուխ ամբարշ, եսպան զտէրն Սեբաստիոյ և յինքն կորզեաց զիշխանութիւն նորա, և նստաւ սուլտան Սեբաստիոյ։

1. JOS յամին. | BE ըճլզ. CGKLMRY ըճ և լզ. FNPTWZb պ և լզ. H ըճ և լ և զ. | DEHNQRVYb Թվականին. FOPZc Թըւականին. BT Թուականիս. W Թվականիս. GHKLMR մի (փխ. ոմն). CEFGHIKLMNPQRVYZbc ժանդ. (փխ. ժանտ և չարաբարոյ) DW ժանդաբարոյ. JOSTU չարաբարոյ ժանդ. HY չարաբարւոյ. P չարայբարոյ. I չարաբարո. 2. MRY և գռող. JOSTU արիւնարբու բառից յետոյ գռող. | BEMQRVY արեանարբու. CJNOPW արիւնարբոյ. Z արեանարբու. | JOSTU չունին խիստ. 3. CZ անունն N չունի անուն ... որ էր. GKL բուրհանատին. CJOPQUZbc բուրխանադին. V բուրխանդին. I բունխանադին. F բարխանադին. HMR պուրհանատին. BY պուռհանատին. | CT չունին որ. b է. | Q յինքն. CINQUVc դանիշմանդ. E դանիշուն. S տնդանիշման. BDFGHJKLMNOQRSWYZ դատի. V դաւոր. 4. CEGIJOPSTUc այլազգեաց. L այլազգիցն. b այլազգեացն. BNZ այլազգաց. F այլազգց. BCDEFGHIKLMNPQRVWYZbc չունին և եղև ..... բուրհանադինն այն, տես տող 4-6. | S մըտացն. 5. T արքաննեակ. O արփաննեակն. | T որդի. | OST կորըստեան. JOS դատի. | S բուրհանատինն. T բուրխանադինն J բուրղանդինն. 6. JOSTU չունին որ. DWb ուր. 7-8. BDJORSTWb և եսպան. GMU և էսպան. Z և սպան. K էսպան. 7-8. QV չունին և յինքն....սեբաստիոյ, այլ k տող 7-8. 7. CEFILWZc ինքն. | N կորզեալ. P զիշխաննութի. | JOSTU ամիրայ

*Եւ զի էր այրն յանդուգն և չարամիտ, որոյ ոչ կարացեալ տանել զօրացն խստասրտութեան և ամբարտաւանութեան նորա՝ վասն որոյ խորհեցան բառնալ զնա ի միջոյ. զոր չարք ոմանք ազդեցին նմա, և նա կալեալ զչարախօսն զայնոսիկ՝* եսպան *անձինս ԺԴ. Եւ ապա ազդեցաւ նմա՝ թէ և եպիսկոպոսն սուրբ Նշանի վանացս՝ տէր Ստեփաննոսն՝ նոյն խորհրդոցն խորհրդակից եղեալ է։ Եւ նա արձակեաց առ նա խիստ և ժանտաբարոյս՝ տանել զեպիսկոպոսն ամենայն ուխտիւն առաջի նորա։*

Եւ ի զալ դժնեայ կոչողացն ի տանել զեպիսկոպոսն ամենայն ուխտիւն, իսկ եպիսկոպոսն զայլ կրօնաւորսն աղաչանօք եւ կաշառօք զոր ետ զօրականացն՝ ետ արձա-

(փխ. սուլտան). P սեփաստիոյ. 1. E այր էր. FGHKMRY այր. L չունի. S նա. BHJNOQRSVYZb յանդուգն. EW անդուգն. P յանդուգին. յանդուգն-ից յետոյ QV աւելացնում են և յիմարն....սեբաստիոյ, տես էջ 137, տող 6-7. E չունի և QV զի էր (փխ. և). P չարայմիտ. C որ. DW որոց. W կարացեալք. JSU կարաց. FO կարացին. 2. Z տանեն. BGKLMU տանիլ. BQ յաջորդ բառից յետոյ. Z խստաս-րտութե. Q խստասրտութեն. T խստասրտութե նր. M խստութե. L խստասրտութե. T ամբարտաւանութեն. G անբարտաւան. 3. QV չունին խորհեցան. T չունի նորա. NPW զնայ. TV չունին. 4. N յայտնեցին. W նմայ. P նայ JOSU չունին. DJORVW զչարախօսն. S զչարախօսսն. FNPZ զչարախօսքն. E զչարախօս. 5. HLRY և եսպան. GKM և էսպան. U էսպան. F ձեռագիրը մաշած ու պատառոտած է. ստորագծեալ բառերը եւ նշանագծերը պակաս են մեզ. QV չունին զայնոսիկ. QV անձինք. KLMR ժբ. H ժ և բ. DNPWZ ապայ. C չունի. JS ազդեցին. Z ազդեցաւ. 6. PW նմայ. CGHKLMRVYZ թէ (փխ. թէ և). փխ. սուրբ Նշանի վանացս տէր Ստեփաննոսն նոյն GHKLMRY ունին այլ ոչ՝ն. BCDEFINPQVWYZbc այն. JOST վանացն. 7. J ստեփննոս. S ստեփաննոս. BDW խորհրդոյն. HY խորհրդոցն. Z չունի. T խորհրդոցն իւրեանց կորստեանն. JOSTU լեալ փխ. եղեալ. O էր (փխ. է). Z է նոցա. 8. DNOPW նայ. U ապա (փխ. նա). Z յարձակեաց. QV այրս. CDEFGJKLMNOPSTUVZc ժանդաբարոյս. W ժանդաբարոյ. b ժանդաբարուոյս. HRY ժանտաբարուոյս. KLU տանիլ. W եպսն. 9. Q ուխտիւքն. V ուխիւքն. GHKLMNRYZ չունին առաջի նորա. EJOSTU իւր փխ. նորա. 10. BDGHKLMNRSWYZb չունին և ի զալ....ամենայն ուխտիւն, F ստորագծեալ նշանաւորը պատռած է. EOPQV դժնեա. I դըժնա. CJ տանել փխ. ի տանել. U ի տանիլ. 11. JOTU հանդերձ միաբան (փխ. ամենայն). OP զեպսն. E և զայլ. O կրօնաւորին. 12. b աղաչանաւք. JOSU ետ կաշառս և աղաչեաց զզօրականսն փխ. աղաչանօք ... ետ արձակել և (S զզօրականս..). bc չունին և կաշառօք. Z կա-

Digitized by Google

կել եւ թողուլ ի վանսն: Եւ ինքն առեալ ընդ իւր Բ ծերազոյն աբեղայ, *որոց անուանքն՝ միոյն Սեղբեստրոս և միւսոյն Թորոս, և գնացեալ առաջի դրողին վստահ և համարձակ, ոչինչ գիտելով խիղճ զանձինէ՝ զի անմեղ էր։*

*Եւ էր զաւրին հեռի ի քաղաքէն, իջեալ զօրօք իւրովք ի լեառն Աղշարու ի հովանոց վասն ամառնային տօթոյն։ Եւ անդանօր տարան զեպիսկոպոսն առաջի պղծոյն. զոր հարցաքննեալ՝ և նա ուղիղ տայր զպատասխանին անխիղճ մտօք։ Եւ զաւրին ոչ հաւատայր նմա, այլ հարկ ի վերայ եդեալ թէ ուրանամն զՔրիստոս և աղանդեցին ի պաշտամանէն։ Եւ նորա հաստատուն յուսով սրտիւ կայցէ ի դաւանութիւն հաւատոցն Քրիստոսի և խոստովան եղեն*

չառաւքն. | T անօրէն զօրականացն փխ. զօրականացն. 12-1. (փխ. եա արձակել և թողուլ) E և եա թողուլ. QV արձակեալ եթող. Z և եա յարձակել և (փխ. եա արձակել և). I. JOU թողուլ զնս փխ. թողուլ. S ..ղուլ զնս. | O յինքն. GHKLMRY չունին ընդ իւր. | C ծայրազոյն. S ծերագւոյն. E ծերագուն. 2. CFGHKL աբեղայս. Z յաբեղայ. D աբեղեայ. ORb որոյ. Fbc անուանքն. NZ անուանք. DE անուանքն են. BJSTUW անուանքն էին. O անուանք էին. W միոյ. BEMS չունին. b սեբաստոս. GHKLRY սեղբեստրոս սար. 3. BMS չունին միւսոյն. KLMU Թօրոս. | V յաջի. E վքստահ. V վստահացեալ. 4. FNPZ և ոչինչ. FN գիտել. P գիտէր յետոյ ուղղուած է գիտել. C ի խիղճ. D խիղչ. O չունի. Z յանմեղ. 5. L զի փխ. և. | Z զաւրին ի հեռոյ էր իջեալ ի քաղաքէն (փխ. էր զաւրին .... իջեալ). BDFGHJKLMNOQRSWYZ զաւրին. V զաւուրն. BD FIJOPQSTVWbc հեռու. F ի քաղաքին. P ի քաղաքէ. JOSTU եջեալ փխ. իջեալ. Z զաւրաւքն. P զաւրուք. O զօրականօքն. BV իւրօք. 6. EFIJOPQSTUbc ախշարու. NV աշխարու. Z աշխարհու. EG հովանոցն. Q հովւանոց. R ամառնոյին. BCDGHIKLMNPQ RTVWYZbc օդոյն. F յօդոյն. 7. BCDGHIKRT անտանօր. F անտանաւր. JOU անդ. S անտ. Z անուրէնքն. N տարեալ. 8. B և փխ. զոր. DNOP նայ. DW պատասխանին. Bb պատասխանի. 9. CO անխիղճ. JOSTU իսկ փխ. եւ. BDFGHJKLMNOPQRSUWYZc զաւրին. V զաւուրն. N հաւատար. JP հաւատոյ. HOW նմայ. P ի նմայ. 10. JOST եթէ. GHKLMRY ուրանայք. JOSTU ուրացին. NZ ուրանայ. CGHKLMRY չունին և. Oc աղանդեցեն. GHKLMRY աղանդիք. Z աղանդի. 11. N ի ըմպանմանէն. GU ի պաշտամանէ. C ի մահուանէն. B ի մահուանէ. Z նքյ. D հաստատուն. JOTU սերտ և հաստատուն. S սիրտ և հաստատուն. b յուսացուլ. | FR սրտիւ. Z և սրտիւ միրով. 12. S ի դաւանութիւն. փխ. ի դաւանութիւն հաւատոցն L ի հղաւատոցն. b ի հաւատս. | BCQV հաւատոցս. K հաւատոյն. JS չու-

Digitized by Google

*զանուն ամենասուրբ Երրորդութեանն՝ եպիսկոպոսն և աբեղայքն, ասելով այսպէս. «Հաւատամք ի Հայր և յՈրդի և յամենասուրբ Հոգին՝ մի աստուածութիւն՝ երեք անձինք և մի բնութիւն։ Խոստովանիմք և զՈրդին Աստուծոյ մարդ եղեալ ի սուրբ կուսէն Մարիամայ՝ կամաւ Հօր և հաճութեամբ Հոգւոյն Սրբոյ. աւետեօք հրեշտակապետին Գաբրիէլի յղացաւ Բանն Աստուած յարգանդի կուսին, և ծնաւ ի նմանէ Աստուած և Որդի Աստուծոյ՝ մարդ և որդի մարդոյ։ Հաւատամք և զնոյն խաչեալ և մեռեալ, թաղեալ և յարուցեալ վասն մերոյ փրկութեան, Նոյն Ինքն յերկինս համբարձեալ և ընդ աջմէ Հօր նստեալ։ Եւ Նա է դատաւոր կենդանեաց և մեռելոց* ի *միւս անգամ գալստեանն իւրոյ* յերկնից փառօք Հօր եւ հրեշտակաց սրբոց: Ի վերայ այսր դաւանութեան՝ մեռանելն մեր շահ է, եւ կեանք՝ *Յիսուս Քրիստոս՝ հաւատա*ցելոցս *ի Նա։ Այս*

նին. JS քի և ամբողջ ի հաւատն փխ. քրիստոսի. | E չունի և. | S խոստովան. FW եղէն. Pc եղև. 1. LNWZ զանունն. | O ամենյսր. PZ ամենայսր. N ամէնասր. EFYZ երրորդութե. | E և եպսն. N եպսքն. 2. L չունի ասելով. | N հաւատամք ամէնասր երրորդութին փխ. հաւատամք. FIOVWZ որդի. R ի որդի. Y ի յորդի. 3. FOQVZ ամենասր. N յամէնայսր. W յամենայսր. QV հոգի. | JOSTU չունին մի աստուածութիւն ..... մի բնութիւն. V և գ փխ. երեք. 4. JOSTU և խոստովանիմք. | E զորդին փխ. և զորդին. 5. GHKLMRWY մարդացեալ.փխ. մարդ եղեալ. HW մարիամա. JOSTU չունին կամաւ հօր... ծնաւ ի նմանէ, այն է տող 5-8. 6. DEFIPZc հոգոյն. GHKLMR սուրբ հոգւոյն փխ. հոգւոյն սրբոյ. F աւետեօքն. N աւետաւք. IPb աւետօք. P հրշկյպետին. GHKLMQRY չունին. 7. DW գաբրիէլին. Zbc գաբրիելի. | N յղացաւ. | Z զբանն. N զբան. c յարգանդի. 8. N որդի փխ. և որդի. Z յորդի. 9. HVY մարդւոյ. MR հաւատամ. JOSTU չունին. | T նոյն. | V խաչեալն. BDWb ի խաչ ելեալ. B մեռեալ և. 10. JOSTU չունին նոյն ինքն. G և նոյն. 11. DW ի յերկինս. | JOSTU համբարձեալ յերկինս. | JOSTU և նստեալ ընդ աջմէ հօր. (S նըստեալ). 12. DEFHINPWY նայ. F ի-ն պակաս է. 13. FHINOPRSTbc դալըստեանն. Z գալըստեան. L դալստեան. | F սեռագծեալ հատուածը պակաս է. փխ. փառօք հօր՝ DW և փառօք. QV չունին. 14. GHKLMY և ի. | GHKLMRY այս. C դաւանութեն. BGKLMU մեռանելն. b մեռանել. | CQTZ չունին մեր. 15. b կեանքն. B կեանք է. | DW չունին յիսուս...ի նա. JOSTU չունին յիսուս. | (փխ. յիսուս քրիստոս) G ի յս քս. MR յի քի. U ի քս. | G հաւատացելոցս. | P ի նայ.

Digitized by Google

*ինչ* յայտ լիցի *քեզ՝ սուլտան. զի պարգեւաց քոյ ոչ հաւանիմք եւ ի սպառնալեաց քոց ոչ երկնչիմք։ Եւ այդմ գիտասցու, զոր դուք զմէնջ կարծէք՝ չեմք ինչ գիտասապաշտ։ Եւ դու զոր ինչ առնելոց ես ընդ մեզ՝ արա փաղփաղակի։*

*Յայնժամ պիղծն այն ամիրայն հրաման ետ դահճացն գլխատել զնոսա։ Եւ մատեան դահիճքն նախ առ եպիսկոպոսն, եւ երկու անգամ հարին ուժգին զպարանոց եպիսկոպոսին սուր թրով, եւ ոչ եհատ սուրն զպարանոց նորա։ Ընդ որ բարկացեալ արիւնախանձն այն ամիրայն, կախարդինս իմն կարծեցեալ՝ եւ ետ ունել չորից արանց. երկուց՝ զոտան եպիսկոպոսին եւ երկուց՝ զձեռանն։ Եւ ապա դահիճն եհար զմէջսն եպիսկոպոսին եւ յերկուս*

1. EGHKLMNRY *յայտնի.* BCPQVZc *քեզ յայտնի լիցի.* F *ունի քեզ պատուած է յայտնի լիցի.* N *լինի.* INb *սուլթան.* Pc *սոլթան.* EJOS TU *ամիրայ.* V *չունի.* R *քոյ.* QV *մեք ոչ փխ. ոչ.* 2. N *ի սպառնալեաց.* R *քո.* V *մեք ոչ փխ. ոչ.* FIJPTW *երկընչիմք.* KL *յայդմ.* U *այդ.* 3. O *գիտասու.* L *զդուք փխ. զոր դուք.* JOSTU *դու.* BQVWZ *ի մէնջ.* J *կարծես զմէնջ.* OSTU *կարծես.* E *չեմ.* (*փխ. չեմք ինչ գիտասապաշտ*) MRY *չեմք այն.* GKL *անալոյլ ա եմք.* H *չունի չեմք ... զոր ինչ.* QVW *գիտասապաշտք* N *գիտասկար.* Z *գիտասապար.* C *գիտասապաշտ-ից յետոյ աւելացնում է այլ անմեղ եմք.* 4. DGKLW *չունին զու.* O *զինչ փխ. զոր ինչ.* EFGH KLMR *չունին ընդ մեզ.* T *արա ընդ մեզ.* HINOPSVWYZb *արայ.* 5. CEJOPQV *պեղծն.* SZbc *պեղծ.* N *այն պեղծ.* VZ *չունին այն.* N *ամիրան.* BV *չունին.* T *հրամայեաց փխ. հրաման ետ.* BT *չունին դահճացն.* 6. DW *մատուցեալ.* F *դահիճք.* I *չունի նախ.* 7. F *չունի եւ.* JOSTU *երկրորդ.* KL *գ.* N *ուժգին հարին.* Z *յուժգին հարին.* W *յուժգին.* CILN *չունին.* DJOSUW b *զպարանոցն.* E *զպարանոցս.* 8. R *եպկսն.* FP *չունին սուր թրով.* M *թրրով.* Z *կարեց փխ. եհատ.* D *սուր.* JOQSUV *թուրն.* GHKLMRY *չունին.* E *զպարանոցն.* L *զորանոց.* S *ըզպարանոյ.* Z *զվիզ.* 9. EN *եպսին փխ. նորա.* GHIMQRTVYb *արիւնանախանձն.* BDFWZ *արիւնանախանձ.* N *արիւննախանձն.* S *արիւնարբու.* c *արիւնախանձ.* BDSWZb *չունին այն.* 10. N *ամերայն.* C *կախարդին.* Y *կախարդ.* b *կախարդիս.* Z *կախարդութիս.* V *կախարդին սիմն փխ. կախարդինս իմն.* B *չունի կախարդինս իմն կարծեցեալ.* Z *չունի իմն.* C *չունի եւ.* IJOSU *ետուն փխ. ետ ունել.* DW *չորս.* T *դ.* 11. Nb *արանցն.* EGHKMRY *երկոցունց.* F *երկուցն.* L *երցունց.* T *զր.* W *բ.* b *բ-ս.* S *ունել.* EQV *զոտս.* F *ոտսն.* T *ոտս.* L *չունի եւ.* GHKLMRY *երկոցունց.* b *երկուցն.* DW *երկուսն.* T *զբ ձեռսն փխ. երկուց զձեռսն.* 12. OPWZ *ապայ.* CDE IJWb *եհատ.* BINPUZbc *զմէջն.* GHKLMRY *զմէջքն.* JOS *զմէջս.*

Digitized by Google

հերձեալ։ Եւ ապա մատեան առ աբեղայսն և զերկուսն գլխատեցին։ Եւ այնպէս կատարեցան ի Քրիստոս բարի խոստովանութեամբ տէր Ստեփաննոս եպիսկոպոսն և երկու աբեղայքն իւր ընդ նմա՝ Սեղբեստրոս և Թէոդորոս։

Եւ արար Աստուած մեծ սքանչելիս, զոր ինքեանք իսկ տեսին աչօք իւրեանց այլազգիքն, և վկայեցին լուսոյն որ էջ ի վերայ մարմնոց սրբոցն։ Զի յայնմ տեղւոջ, ուր զմԴ Տաճիկսն սպանին՝ անդ և զեպիսկոպոսն և զաբեղայսն սպանին յետ երկու աւուրց, և ընկեցին խառն ի վերայ մարմնոց այլազգեացն։ Եւ ի ճառագայթել լուսոյն ի վերայ սրբոցն՝ տեսեալ անօրէն ղաղլին, թէ այն մասն

QV չունին և. W երկուս. N յերկու: O յերկուց. Z քս. 1. DW հերձաւ. I բաժանեալ. E չունի և ապա … գլխատեցին. OPWZ ապայ. GHKLMRY ապա յետոյ. c առ աբեղայքն. L յերկուսն. UZ զերկուսն այլ. B չունի. T զր-ուսն. 2. M չունի ի քրիստոս. JOS բարի խոստովանութեամբ ի քս. 3. E հաւատով և խոստովանութբ փխ. խոստովանութեամբ. M սրն. V որ էր (փխ. տէր). (փխ. տէր ստեփանոս եպիսկոպոսն) O եպսն տէր ստեփաննոս. JT եպսն տէր ստեփանոս. U սբ եպսն տր ստեփաննոս. CGKLMRSV ստեփանոս. D ստփնոս. 4. E աբեղայ բ փխ. երկու աբեղայքն. E չունի իւր. HJPW նմայ. Z սեղբեսրիոս. B չունի սեղբեստրոս և թէոդորոս. 5. DUWb մեծամեծ. V սքանչելիք. b չունի ինքեանք. 6. DW չունին իսկ. W չունի տեսին. EM աչօքն. L առաչօք. IQV այլազգիքն աչօք իւրեանց. U իւրայք. W չունի և. Z լոյսուն. GHKLMRTVY վ՛ լուսոյն. 7. DW չունին որ էջ …սրբոցն. փխ. մարմնոց սրբոցն EZ ունին մարմնոյն սրբոց. FP սրբոց մարմնոցն. b սրնց. (փխ. յայնմ տեղւոջ) BFIPQVb ի տեղին. c ի տեղի. GHKLMRY ղտեղին. CDENWZ տեղին. O այնմ տեղւոջ. T յայնմ տեղոջ. NW որ փխ. ուր. 8. C զասան և դ. V ժդ. KLMRY զժդ. H զժ և դ. CE տաճիկն. JOSU տաճիկքն. QV դահիճսն. c սպաննին. W սպային. BCEFGHIKLNPRYZbc անդ փխ. անդ և. G եպսն DW զաբեղայսն և զեպիսկոպոսն. O աբեղայսն. 9. b սպաննին. BV նահատակեցին. F և յետ. V աւուրցն. F յաւուրց. B աւուր. GNPZ ի խառն. L խառսն. B ընդ փխ. ի վերայ. 10. JOS այլազգեաց մարմնոցն. U այլազգեացն մարմնոց. QV մարմնոցն. I այլեազգացն. E այլազգեաց. FNP այլազգացն. L չունի ի. KLU ճառագայթիլ. WP ճառայգայթել. D լուսոյ. P լոյսոյն. 11. E չունի ի վերայ սրբոցն. KL որ ի փխ. ի. GHKLMRY մարմնոց սրբոցն փխ. սրբոցն, T անօրէնն. BDFGHJKLMNOQRSWYZc ղաւրին, E զղաղին. V դաւրն.

Digitized by Google

հաճի մըսըլմանէրոյն եղև սքանչելիքն։ Եւ եւս ջոկել զեպիսկոպոսի մարմինն եւ զաբեղայիցն յայլազգեացն։ Եւ շնորհօքն Քրիստոսի լոյսն զհետ գնաց մարմնոյ սրբոցն՝ յամօթ այլազգեացն եւ ի պարծանս քրիստոնէից՝ վկայ անմեղութեան եպիսկոպոսին։

Եւ թողին զմարմինս սպանելոցն անդէն կերակուր լինել գազանաց եւ հաւուց։ Բայց զեպիսկոպոսին գողացան քրիստոնեայքն և տարեալ եդին յեկեղեցի մի, և զաբեղայսն՝ ի փոս մի, եւ հողով ծածկեցին։ Իսկ անօրինացն անդէն ի տեղին մաշեցան և կերակուր գազանաց եղեն և թռչնոց օդոյ։

Եւ անօրէն սուլտանն այն ղադին սատանակոյթ զհա-

ՔV չունին ա.ն. 1. CNTUb հաջի. O չունի. | V մեր պօրայն փխ. հաճի մըսըլմանէրոյն. B միսիլմանէրոյն. CLSTb մսըլմանէրոյն. GU մըսլմանէրոյն, Q մսլմանէրաւն. F մըսըլմընէրոյն. P մսըլմընէրոյն. Y մըսըլմնէրաւն. HMR մըսըլմնէրոյն. E տանաց. L սքանչելիսն. V սքանչելիքս. BCENPZbc սքանչելիք. Y յետ. CFIJNOPQSV Zbc զեպսին. 2. CEIPZc մարմին. L աբեղայիցն. N յայլազգացն. Z ի յայլազգեացն. C ի մարմնոց այլազգեացն. F սօսրացծիալը պատ- ուած է. 3. E լուսն. GHKLMRY ի հետ նց փխ. զհետ. I զհետոյ փխ. զհետ գնաց. E երթայր փխ. գնաց. GHKLMRY ի մր մար- մնոց փխ. մարմնոց. QV մարմնոցն սրբոց. E սրբոց. Z սրբոյյն. T որ մարտիրոսացն. 4. Z յամօթ և ի նախատինս փխ. յամօթ. GL OP յայլազգեացն. E այլազգեաց. Z այլազգաց. | CIJLOQSUV քրիս- տոնէիցն. Z վկա. E վս. GS և վկայ. 5. SU անմեղութեն. Z ե- պիսկոպոսին և աբեղայիցն (փխ. եպիսկոպոսին). 6. (փխ. եւ թողին) OU և եթող ղադին. T և եթող ղադին. JS եթող ղադին. BDW անդէն զմարմինս սպանանելոցն (B սպանելոցն). JOS զմարմինն. EQTUV զմարմին. | CFHIOPSVYc սպանելոցն. RWZ սպանանե- լոցն. b չունի անդէն. E անդէն ի միասին. BGKLMU լինել. I չունի. 7. R հաւսսոց փխ. հաւուց. DF եպսին. U զեպսինն. I զեպսն. Z զեպսին մարմինն. (փխ. գողացան քրիստոնեայքն) T առին քրիս- տոնեայքն դադա մերձակայ գեղջին. (փխ. քրիստոնեայքն) QV ա- բեղայքն և քրիստոնեայքն. JSU քրիստոնեայքն մերձակայ գեղջին. O քրիստոնեայքն մերձակայ գեղջին. 8. W տարան յեդին. JOSTU չունին տարեալ. | EIJOSTU յեկեղեցին (մի չունին) | Z մի փոքրիկ փխ. մի. W զաբեղաբցն. 9. JOSU անդէն ի փխ. ի. JOSTU մի եղին փխ. մի. | EHNPQRVYZc չունին և. | Իսկ անօրինացն… օդոյ այս 9-11 տողերն միայն EJOSTU, իսկ BCDFGHIKLMNPQRVWYZbc չու- նին. 10. E չունի ի. S չունի և կերակուր ….օդոց. 11. O յօդոց. 12. N սուլտան. E սուլթանն. V բռնաւորն. JOSTU չունին սուլտանն այն. BDFGHJKLMNOPQRSUWYZc ղադին. IV չունին. T ղադին այն.

լածանս ի վերայ քրիստոնէից, առնլով յամենայն քահանայից զգինս արեան խուրեանց՝ յամէն գլխոյ Ռ դեկան։ Եւ զվանք սուրբ Նշանին կողոպտեաց. զխաչ և զաւետարան և զայլ սպասս սրբութեան ընդ ձեռամբ անօրինացն դրաւեաց և պիղծ չեխեր ի վանքն բնակեցոյց և արար զեխս։ Եւ փոխանակ արեան կարգաւորացն, որոց յամէն գլխոյ Ռ դեկան դին առին՝ զուռի և զքարտի ծառերան քան զհազարն աւելի հատին ի տակաց փոխանակ երիցանցն. Թող զայլ տուգանսն որ առին։

Քակեաց և զսուրբ Քառասունսն և այլ՛ շատ եկեղե-

EN սատակացուց. VW սասկացոյց. 1. Y յունին ի վերայ. DGHIKLORSWY քրիստոնէիցն. NPbc առընլով. DEFGHIJKLMQRSVW առնելով. QVZ ամ. W քհիցն յամ փխ. յամենայն քահանայից. CIO քահանայիցն. Z քրիստոնէից կամ քահանաից. 2. I զարեան գինս. QV արեանց. N արեանն. MRY յունին խուրեանց. BF յամ. Z ամէն. W գլխո. JOSTU ռ դկն միոյ գլխոյ (փխ. յամէն գլխոյ ռ դեկան). 3. E զվանսն. QTVq վանքն. I խաչին փխ. Նշանին. DGHKLMRWY կողոպտեցին. Z թալանեաց և կողոպտեաց. NOQVZ զխաչն. T խաչ. NQVZ զաւետարանն. Y զաւտրնս. 4. L այլ. BCDINOPSTUW bc սրբութիւն. Z սրբութեցն. I ընդ ձեռաց. LQVZ անօրինաց. Nb անաւրինեացն. 5. GHKLMRY դրաւեցին. LM յունին և պիղծ ...զեխս. CDIJNOPQSTVWZbc պեղծ. T չխխէր. F չէխէր. J չեղխեր. RZ չ'ներ. D չիխեր. E չիխերն. P չեհեր. V անօրէնքն. EJOSU ի վանսն. F բնակեցոց. GHKRY բնակեցուցին. GHKRYZ արարին. 6. CEJLMNOPQSTVWbc զեխայ. D զեայի. K զէվխա. GHRY զէվխայ. FZ զեխայ. V արեանն. QV կարգաւորաց. I քհնյիցն. JOST երիցանցն և արեղայիցն քաղաքին և երկրին (T իրիցանցն. S երկրին). U կերիցանցն և զարեղայիցն. L կարգաւորացն սրբոյն փխ. կարգաւորացն որոց. BDWZ յորոց. M որոյ. QV նա. DEFGHIKLMOPSTUW ամէն J ամէն փխ. յամէն գլխոյ. 7. B գլխէ. EF գլխոց. c զըլխոյ. IKL յունին դին. GHMRY առին գին. TU և զուռի. O և զուռի. JS յունին զուռի ... որ առին, այն է տող 7-9. DGOPTWbc զքարդի. E զփարտի. GQV ծառերս. BN ծառերն. Z ծառեռն. KL ծառերսն ի տականց. 8. BDEFWZbc զռն. N զռին. P զռին. T զհազարն. QV զհազարս. COU զռ. E հանին. O կտրատեցին. QTUVZ կտրեցին. GHMRYZb ի տականց. N ի տակացն. C ի ակացն. KL յունին. QV երիցանց. L երիցունցն. Z երիցացն. 9. O զայլ տուգանսն թող. QV յունին թեղ ... առին. IL տուգանս. E տուքանսն. P տոգանսն. EGMOUZ զոր. OTU առին c քրիստոնէիցն հայոց. 10. T քակեցին. CIJ զսուրբ խփ. և զսուրբ. ի զքառասունսն փխ. զսուրբ քառասունսն. VZ քառասունքն. (փխ. այլ շատ) I զայլ բազում. KLO զայլ շատ. JOSTU եկեղեցիս բազոց

ցիս։ Եւ յառաջ քան զսպանութիւն եպիսկոպոսին՝ ժողովեաց յամենայն երկրէն զժամահարսն, և կոտորեաց զամենեսեան։ Եւ այլ բազում չարիս արար, զոր ոչ է ասելի՝ անիծեալ ղադին այն։

Բայց և ինքն յետոյ ըստ արժանեաց իւրոց չարութեանն կալեալ եղև ի Թուրքմանէն, որում անուն էր Օթման՝ և սպանաւ ի ձեռաց նորա։ Եւ այնպէս բարձաւ չարն ի միջոյ։

Այս վկայաբանութիւնն ունին B էջ. 433 բ′—434 ա″, C 1121″—1123″, D 524 ա″—525 բ′, E 1032″—1034″, F 442 ա″—443 ա′, G 547 ա′—548 ա′, H 511 բ′—512 բ′, I 555 ա′—556 ա′, J 975′—977′, K 518 բ″—519 բ″, L 450 բ″—451 բ″, M 537 բ′—538 բ′, N 514 բ″—515 բ′, O 504 ա′—505 ա′, P 438 ա″—439 ա″, Q 521 բ″—523 ա′, R 519 բ″—520 բ″, S 546 ա′—547 ա′, T 528 ա″—529 ա″, U

յետոյ աւելացնում են ի պատճառս ամբութեան պարապին (T պարբերային). 1. FS զսպաննութիւն. W զսպանանութիւն. 2. QVWZ ամ. | CFO երկրէ. LV յերկրէն. FNPZ յերկրէ. | PW զժամայհարսն. V զժամահարն. DEFHIJMNOPQRSTUVW զամ. 3. GHKLMRY գործեաց փխ. արար. | CDFIJNOPSTUWZc զորս. | QV չէ փխ. ոչ է. | GHKLMRY անօրէն ղատին զոր ոչ է ասելի փխ. զոր ... ղադին այն. | I պատմելի փխ. ասելի. 4. BDWb այն անիծեալ ղատին. JOSU անիծեալն այն ղատին. Q անիծեալ ղատին. V անիծեալն այն. I անօրէն ղադին անիծեալն այն. Z անօրէն ղատին և չար անիծեալն այն. FNP ղատային փխ. ղադին այն. | E չունի այն. 5. I չունի բայց. GHKLMRWY չունին և. | JOSTU յետոյ և ինքն. | (փխ ինքն յետոյ) VW յետոյ ինքն. Z ինքն. | DVW ըստ արժանեացն. F ըստ արժանաց. | BIJc իւրոյ. E իւրնց. Y չունի. | DFVWYZ չարութեան. C չարեացն. 6. O ի Քուրքմանէն. L ի Թուքմանէն. | որում...ի ձեռաց նորա ունին GHKLMRY, իսկ BCDJOQSUYWZb փոխարէնը ունին և սպանաւ. FNPTc և սպաննաւ. E չունի. I և չարամահ խայտառակեցաւ յաւուր կորրստեան իւրոյ. Z և սպանեցաւ չարաչար մահուամբ. | HY անունն. 7. CFJNOPQSTUVc չարն ի միջոյ բարձաւ փխ. բարձաւ չարն ի միջոյ. 8. H ի միջոց. I ի միջոյ անիծեալն այն. Z ի միջոյ և ոչ ետես զփառսն այ.



Digitized by Google

503 բ″—504 բ′, V 372 բ″—373 բ′, W. 469 բ′—470 բ″, Y 248 ա′—249 ա′, Z 395 ա″—396 ա′, b 573 ա′—574 ա′, և c.—Համմտ. Նաև Ցայսմ. Բ. տպ. 625″—626″. Ա. տպ. 915″—917′։ Վկայաբանութիւնը կըգտնուի կամ՝ մարգաց ԺԷ=յունիս 23, Ղևոնդեաց և նորա ընկերներից յետոյ, կամ՝ մարգաց Ի=յունիս 26, Շիւղայից և Սիւղիանոսից յետոյ։ M ձեռագիրը գրած է մարգաց ԺԵ=յունիս 23. բայց նախորդ թիւն է ԺԶ և յաջորդը՝ ԺԸ, ուստի ԺԵ-ը ԺԷ պիտի կարդալ։

Վերնագիրը հետևեալն է. «Ցայսմաւուր յիշատակ նահատակութեան տեառն Ստեփանոսի արքեպիսկոպոսին Սեբաստիոյ». (Ձեռագր. տարբերութիւններ. B ի սմին աւուր. b յայսմաւուր. | CQZ յիշատակ է. | W նահատակութեն. | փխ. յիշատակ նահատակութեան E նահատակութիւն, | GHKLMR տէր. | CGMRTUV ստեփաննոսի, K ստեփաննոս, E ստեփանոսին, L ստեփանոս. | DW արհեպսին, b արքեպսի. | F սեբաստացոյ. | P սէբաստիոյ. | E սեբաստիոյ արքեպկին. JOSTU սեբաստիոյ եպսին։

Այս նահատակութեան պատմութիւնը ունի նաև Զամչեան, Գ. 431—3. սակայն որովհետև Զամչեանում կան այս մասին ինչ-ինչ մանրամասնութիւններ՝ որոնք մեր ձեռագրներում պակասում են, ուստի յարմար համարեցինք ամբողջ հատուածը մէջ բերել այստեղ։

«Ի ժամանակի անդ՝ յորժամ էառ Լանկթամուր զԲաղտատ և եկն ի Հայաստան, Պուրհանատին անուն ոմն՝ որ և ասի Բուրհան Ղալի՝ համարձակութիւն առեալ՝ ապստամբեցաւ յամիրայէն Սեբաստիոյ, և սպան զնա. և ինքն նստաւ ի տեղի նորա. և ժողովեալ զօրս՝ ասպատակէր ի բազում տեղիս։ Այլ քանզի առ ամենեսին գտաւ անողորմ, զօրք նորա՝ որք էին ի քաղաքի անդ Սեբաստիոյ՝ խորհեցան վտարանջել ի նմանէ, և կամ ի ծածուկ դաւել զնա և բառնալ ի կենաց։ Եւ էր յայնժամ եպիսկոպոս քաղաքին Ստեփաննոս անուն՝ առաջնորդ սուրբ Նշանի վանացն՝ այր սրբակրօն, և առաջի մեծամեծաց յարգոյ. որոյ և մարմնոյն կազմուած արտաքոյ հասարակ կարգի ահեղատեսիլ էր և զօրաւոր։

Իբրև ազդ եղև Պուրհանատին ամիրային խոր-

Digitized by Google

հուրդն ապստամբութեան զօրաց Լիւրոյ, ոմանք ի թշնամեաց մատուցեալ առ նա՝ ասեն, թէ դրդուիչ ապստամբութեանն է Ստեփաննոս եպիսկոպոս քաղաքին։ Զայս լուեալ ամիրային՝ դիմեաց ի վերայ Սեբաստիոյ, և նուաճեաց զապստամբսն. կալաւ և զեպիսկոպոսն, և զերկուս յաբեղայից նորա, որոց անուանք էին Սեղբեստրոս և Թորոս. զորս և կամեցաւ բազում տանջանօք սպանանել։ Եւ թէպէտ եպիսկոպոսն յայտնի եցոյց առաջի նորա զանմեղութիւն իւր և զհաւատարմութիւն, բայց նա գրգռեալ ի թշնամեաց՝ ասէ ցնա, այդու գիտացից՝ թէ անմեղ ես և հաւատարիմ առ իս՝ եթէ դարձցիս յօրէնս իմ։ Ասէ ցնա եպիսկոպոսն, դու զիս կալար իբրև ապստամբ. արդ՝ եթէ ապստամբ եմ, սպա՛ն զիս. իսկ եթէ անմեղ, արձակեա՛։ Այլ ամիրային բարկացեալ ընդ այս պատասխանի նորա՝ առաւել ևս ստիպէր զնա յուրացութիւն, և սպառնայր ածել ի վերայ նորա և աբեղայից նորին բազում չարիս։

Յայնժամ երեքին նոքա սկսան միաբերան խոստովանել զամենասուրբ զերրորդութիւն և զՔս ած, և ասել առեն. մեք զայլ հաւատ ոչ գիտեմք և ոչ ընդունիմք, այլ զայս միայն, և ի վերայ այսր հաւատոյ մեռանել պարծանս համարիմք. և փառաւորեմք զարարիչ մեր, զի զայսպիսի աւանդեաց մեզ ուղիղ հաւատս։ Ընդ այս ցասուցեալ ամիրային՝ հրամայեաց հատանել զգլուխս նոցա առաջի իւր։ Եւ դահճին բազում անգամ ամենայն զօրութեամբ հարեալ զպարանոց եպիսկոպոսին՝ ոչ կարաց հատանել. և նա օրհնէր անդադար զփրկիչ իւր. և ամիրայն զայրացեալ ի վերայ դահճին, և լուեալ զքաղցրաբարբառ օրհնութիւնս եպիսկոպոսին, աղաղակեաց մեծաձայն, պատառեցէք ասէ զբերան դորա, զի մի լուայց զօրհնութիւն բանիցդ։ Յայնժամ տարածեալ զնա դահճաց յերկիր՝ ոմանք պատառեցին զբերանն, և ոմանք հատին զնա ընդ մէջ, և անդամ անդամ յօշեցին. և նա գոհանալով զտեառնէ աւանդեաց զհոգին։ Անդ գլխատեցին և զերկու աբեղայսն. և արկին զմարմինս նոցա ընդ դէշս դիականց այլոց չարագործաց նորոգ սպանելոց. բայց հաւատացեալքն գողացեալ թաղեցին

զնտօին, և այս եղև յամի տեառն 1387 և ի Թուին Հայոց ՊԼՁ, ի ԺԷ աւուր մարգաց ամսոյ. այն է ի յունիսի 28։ իսկ ի միում անծանօթ պատմութեան դնի, թէ այս եղև ի Թուին ՊԼԳ. և թէ այս Պուրհանատին կործանեաց զԹառաստնից վանքն, այլ յայտ է թէ զայն կործանեաց Լանկթամուր։

Յետ այսորիկ դեռ ևս բարկութեամբ բորբոքեալ ամիրայն՝ հրամայեաց կողոպտել զեկեղեցիս Հայոց և զվանորայս գաւառին Սեբաստիոյ. և սպասաւորք նորա բազում աղետալի գործս գործեցին. առին զամենայն՝ զոր գտին ի սուրբ Նշանի վանսն, և բնակեցուցին անդ զօտարազգիս. սոյնպէս արարին և յայլ քանի մի վանս մինչև հազիւ ուրեմն կարացին մեծամեծք Հայոց միջնորդութեամբ ոմանց դադարեցուցանել զգործ դառնութեանն. բայց ամիրայն եդ հարկս բազում դրամոց ի վերայ եկեղեցականաց, թող զայլ տուգանսն։

Յայս. Գ. տպ. Ա. էջ 267′-268′ ևս ունեցել է Ջամչեանի օրինակը։

Վկայաբանութեան բովանդակութիւնից երևում է, որ Ստեփանոսի, Սեղբեստրոսի և Թորոսի նահատակութիւնը ամառ ժամանակ է տեղի ունեցել, երբ Բուրհանադինը իւր զօրքերով ամառնային շոգերի պատճառով հեռացել էր Սեբաստիայից «ի լեառն Աղշարու ի հովանոց» (տես էջ 139, տող 5-7)։ Յայսմաւուրքների մի մասը ունի մարգաց ԺԷ=յունիս 23, իսկ միւսները՝ մարգաց Է=յունիս 26։ Ստեփանոսի վրայ գրուած տաղից երևում է, որ այս նահատակի գլուխը բերել են հօր մօտ չորեքշաբթի օրը (տես էջ 150)։ Արդ՝ ՊԼՁ Թուի յունիս 26-ը ընկնում է իսկապէս չորեքշաբթի, ուստի Յայսմաւուրքների այս ամսաթիւը կարելի է ուղղագոյնը համարել։ Անշուշտ մեր ենթադրութիւնը սխալ կըլինի, եթէ Ստեփանոս վկայի գլուխը յանձնել են հօրը նահատակութիւնից մի կամ մի քանի օր յետոյ։

Digitized by Google

## ՏԱՂ

### Ի Տէր Ստեփաննոս Նահատակի Սեբաստիոյ

Ահա զգովքն ասեմ Տէր Ստեփաննոսին.
Թագաւոր նստէր նա ի մէջ Սեբաստ քաղաքին.
Եկին սուսերօք զվանքըն պատեցին,
Որպէս ի հընումըն Հըրէայք զՏէրըն խաչեցին.
Զհանդերձըն հանին զնա մերկացուցին,
Մերկ ու բոկիկ ու գլխիբաց զնա չարչարեցին։
Զայն դեղձան մազերն փունջ փունջ փետեցին,
Զայն իւր ջախուջախ բազկըռուկըն յերկաթ պնդեցին.
Զայն կամար ուներն Տէր Ստեփաննոսին,
Հանց զինչ որ քաշած էր կամար աւագ խորանին,
Զայն ծով ծով աչերն Տէր Ստեփաննոսին
Հանց զինչ որ ջըրով աւազանն ի յեկեղեցին.
Զայն վարդ վառեցեալ կարմիր երեսուին
Հանց զինչ նշխարքըն ու բաժակն ի սուրբ սեղանին.
Զայն մաքուր բերանն Տէր Ստեփաննոսին,
Ատամունքըն ի միջին շարած էր զեռ մարգարտին։
Իւր բոլոր լեզուէն կանգնէր ի բեմին.
Կարդալով պատմէր ըզբան Աւետարանին։
Դաշըն եդեալ ըզսուրըն քաշեցին.
Ասէ. «Դուք տըւէք զպատասխան այն ծածկագիտին»։
Հեղեցին զարիւն Տէր Ստեփաննոսին.
Յայնժամ սար ու ձոր վայ կանչեց իւր ըսպանողին.
Իւր հօրն ասացին. «Կուգայ քո որդին,

Digitized by Google

Արեկ ու սրբէ գ․քրտինքըն ճակտին ՚ւ երեսին»։
Իւր հայրն էր նստեր դէմ ճանապարհին,
Գիտէր թէ կուգայ կարդալով իւր պարոն որդին։
Ցայն առաւօտին սեւ չորեքշաբաթին
Բերին արիւնով ըղդըլուխն ի գոգն ընկեցին։
Լըցաւ արիւնով իւր սիրտն ի փորին,
Լայր ողորմագին ու դընէր զերեսն երեսին։
Մայրն եկեալ տեսաւ զորդին յայն հալին,
Սավտայի ու խէվ դարձաւ ի յանվայր վայրին։
Ծաղիկ էր քաղքին մանուշակ երկրին,
Հանց եղ ըլինչ կու փայլէր այն կարմիր մորուսն յերեսին.
Թոռմեցաւ ծաղիկ վարդն ի յիւր թըփին,
Կարմիր ու ճերմակ երեսուին դարձաւ ի դեղին։
Կայր տարեկուսած Սաղմոսն յառեննին,
Ձիւր գրեանքն ամէն կուտեցին յեկեղեցին.
Լոյսն երկնային քառաթեւ խաչին
Ցերկնից ի վայր ճառագայթեաց սուրբ գերեզմանին։

Ցիշեալ վկայաբանական տաղը հրատարակեց նախ ողբացեալն Նահապետ (Հ. Ղ. Ալիշան), Բազմավէպ, 1848, էջ 341, հետեւեալ վերնագրով. «Ի տէր Ստեփաննոս նահատակ Սեբաստացոյ»։ Որից յետոյ Ալիշան՝ էջ 342—3, խօսում է տաղի գեղարուեստական գեղեցկութիւնը երեւան հանելու համար. Հ. Ալիշան կարծում է թէ նոյն տաղի հեղինակը նահատակի աշակերտներից մէկն է։

11. Ալիշանն գրում է հանցեղ, իբր «այնպէս» այն ցեղ․․ յարմարագոյն դատեցինք հանց եղ «ինչի չկա»:

## 22.

### ՄԱՐՏԻՐՈՍ ԿՈՂՐԱՑԻ

† ՊԼԶ=1387-ից յետոյ

ՅՊԼԶ թուականին մեր (բռնաւորն Արեւելից Լանկ-Թամուր Թաթարաց) առեալ էր զաշխարհն Խորասանու ութամեայ պատերազմաւ, և անտի չուեալ եկն էառ զԳանձակ շահաստանի քաղաքն Թաւրէզ։ Եւ անտի չուեալ եկն յերկիրն Սիւնեաց ի վերայ դղեկին Երնջակու. և ապա ի վերայ երկրին Ծակատուց՝ էառ զքաղաքն սուրբ Մարի ի հիմանց տապալեալ զամուրն մեր զոր էր ամրափակեալ պատուական ազգին Բագրատունեաց. և գերեաց զքաղաքն և զամենայն շրջակայ գեղորայսն։ Իսկ բարեպաշտ տանուտէր մի Մարտիրոս անուն՝ յոյժ զօրեղ զօրական, ողորմած և աղքատասէր ի գեղջէն Կողբայ, ելեալ ի լեառն Բարդող, որ կոչի յայլոց ազգաց Թակալթու, յոյժ արի և քաջ մանկամբք գեղջն ապրեցոյց զամենայն հաւատացեալսըն մեծաւ պատերազմաւ և սրտապնդ զօրութեամբ օգնութեամբ հզօրին Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի Փրկչին մերոյ։ Եւ թէպէտ բազում անգամ պատերազմեալ՝ ոչ կարացին առնուլ զլեառն զայն։ Որ յետոյ այրն այն նահատակեցաւ ի պիղծ Թուրքմանէն Սահաթ անուն, հեղձուցեալ ի ջուրն Արազու անտես ի մարդկանէ։

Սոյն տեղեկութիւնը տալիս է Թովմա Մեծոփեցի, էջ 17—18. հմմտ. նաև Չամչեան, հատոր Գ. էջ 421—2։ Մարտիրոս նահատակի մասին ուրիշ տեղ յիշատակութիւն չենք գտած։

# 23.

## ԵՒԱԳ ՍԱՂԱՄԱՍՏԵՑԻ

† ՊԼԹ մեռելան ծէ=1390 փետրուար 23 դշ.

Անքննելի են խորք իմաստից Աստուծոյ և անզննելի՝ դատաստանք նորա, անչափ է բարերարութիւնն Աստուծոյ և անբաւ՝ գթութիւն նորա, անհաս է մարդասիրութիւնն Աստուծոյ և անճառ՝ ողորմութիւն նորա. զի արդար է ի դատել և քաղցր՝ ի բարեգործել. ճշմարտութեամբ դատի, խրատամբք քննէ և ողորմութեամբ քաւէ. զի է սիրոյ յաղթի և գթութեամբ արդարացուցանէ զատեղծուածս իւր, զոր արար ըստ պատկերի իւրում։ Զի թէպէտ և ի

1. Զ մի բերդ պակաս է. հմմտ. անքննելի են ... դարս և ի էջ 152 միւնչեւ էջ 158 տող 5. I անքննքննելի. F չունի են. E իմաստնիցն. F ի մաստիցն. | HNPRTc անզըննելի. CGMRSY անզննելի են. D անզննելի է. W անզըննելի է. 2. W դատաստանքն. | P անչափ. | EHJKLMRSUVWYZ բարերարութի. D բարերարութի. | DEHIJKLMRSUVWYZ նորա փխ. աստուծոյ. 3. V չունի և անբաւ գթութիւն նորա. | N անբաւ են. BCDFHW անբաւ է. | C գթութին. BDEJNSTUWZc գթութիւք. HKLMRY գթութիւքն. P գըթութիւք. | (փխ. նորա) HKLMRY այ. C չունի. Y չունի անհաս է մարդասիրութիւնն աստուծոյ. | DNPW չունին անհաս է.... ողորմութիւն նորա. | J մարդասիրութի. Z մարդասիրութիւն. 4. BEHJKLMRSTUVYZc ողորմութիւք. 5. Z քաղց. NT քաղցր է. | NPTZc ի բարէգործել. HKLMRY ի բարերարել. V ի բարեխօսել. DW ի բարիգործել. | Z ճշմարտութիւք. 6. BCVc դատէ. | BDSVWb խրատամբ. C և խրատամբ. N և յխրատամբք. C խրատամք. | E քաւէ փխ. քննէ. | E չունի և ողորմութեամբ քաւէ. | V չունի քաւէ. | JU չունին ի. 7. D ի սիրո. | S յարդարացուցանէ. b արդարարացուցանէ. | Pbc զատեղծուածս. Y զըստեղծուածս. MR զատեղծուածոցս. 8. CHIJKLMRSTUc զորս. | CFIb չունին արար. | (փխ. իւրում) CFIb իւր արար. E իմում. | GN չունին զի թէպէտ.........ի հոռ անտուչից, միւնչեւ էջ 155, տող 12. | V զի պէտ մրդկն ի կամս (փխ. զի թէպէտ և ի կամս). | DEJSUWZ չունին և.

կամս չարին խոտորեցաւ, սակայն ոչ անտեսացաւ յառաւտաքաշխ ողորմութենէ բարերարին, այլ ի յայց եկ, խնամով արդարութեամբ չափեաց, իրաւամբք կշռեաց, ճշմարտութեամբ դատեաց և մարդասիրութեամբ քաւեաց։ Զի յիւրաքանչիւր դարս և ի ժամանակս ընտրեաց և ընկալաւ երախայրեաց պտուղս ի մարդկայնոց ազգէ՝ որպէս զապաշխարանս Նախաստեղծիցն՝ և զպարգեւն Աբելի ընդհանրական պատարագին, զսրբութիւնն Սեթայ և զյուսադրութիւնն Ենովսայ, զհաճելի պահսն Ենովքայ և զկուսութիւնն Նոյի, զհաւատն բարի գործովքն Աբրահամու և զմաքրութիւնն Իսահակայ, զանարատ քահանայութիւնն Մելքիսեդեկի և զսրբութիւնն Յակոբայ Իսրայելի, զողջախոհութիւնն Յովսեփայ և զհամբերութիւնն արդարոյն

1. HKLMR խոտորեցաւ յերկիր. Y խոտորեցաւ երկիր. | c անտեսաւ. J անտես արար. W անեսացաւ. | P յառատայքաշխ. R յառախաքաշխ. 2. JY յողորմութենէ. V յողորմութե. S ողորմութենէն. | HKLMRY բարերարին այ. | B չունի ի. E և. | E այց. | P ի յայցեալ փխ. ի յայց եկ. 3. P չափեաց. | BP իրաւամբ. Z իրամբ. V և իրաւամ․ք. | F կշռեաց. P կշռեայ. c կշռեաց. | c սոուգութբ. V ըստուգութբ. փխ. ճշմարտութեամբ. 4. V դատեաց արդրութբ փխ. դատեաց. | P մարդայսիրութբ. F ողորմութբ. 5. DHKLMYZ իւրաքանչիւր. | V ընտեաց. | V ընկաւ. 6. H երախայրեց. F և երախայրեաց. KL յերախայրեց. V երախայրէաց. b երեխայրեաց. | FIb պտուղ. | DWb ի մարդկային. 7. V զապաշխանսնս. E չունի և. | HRY զպրգեւն. P զպրդեւնն. | KLMPRUY աբէլի. Q հաբելին. V հաբէլին. c հաբելի. 8. Q համեղական. | DJWYZ զսրբութի. M զարդարութին. | DJb սեթա. P սէթայ. C սեթեայ. HKL սեդայ. Z սեդա. | JVY զյուսադրութիւն. 9. D ենովսա. FT ենովքայ. Z յելովսայ. | V զհանճելի. | F չունի զհաճելի պահսն ենովքայ. b զհաճելին ի պահս ենովքայ. T զհաճիլ ի պահոն ենովքայ. | c զկուսութին Նոյի և զհաճելի պահսն ենովքայ (փխ. զհաճելի պահսն ....Նոյի). | BCFHKL MRY պահքն. | C զկուսութիւնն փխ. և զկուսութիւնն. | JVY զկուսութիւն. 10. HKLRY զհաւատքն. | B գործօքն. S գործովն. D գործովք. | P աբրայհամու. | C չունի և. 11. VY զմաքրութի. W զմարգարէութին. | VYZ քահանայութիւն. 12. C մելքեսեդեկի. F մելքիսէդեկի. SV մելքիսեթեկի. W մէլքիսէդեկի P մելքեսեթեկի. | JY զսրբութի. | JTUZ յակովբայ. | Q չունի յակոբայ իսրայելի զողջախոհութիւնն. | Z իսրայելի. C իսրայէլի. HV ինի. F ինին. | D զողջախոյութին. JVY զողջախոհութի. P զողջայխոհութին. 13. FP յովսէփայ. | IJVYc զհամբերութի. | DJSU յոբայ արդարոյն. WZ յոբա արդարոյն. E յոբայ արդարոյ.

*Յոբայ, զհեզութիւնն Մովսեսի և զհնազանդութիւնն Ահարոնի, զանմեղութիւնն Յեսուայ և զարիութիւնն Փենեհեսի, զուխտադրութիւնն Սամուէլի և զզղջումն արտասուացն Դաւթի և զայլս իւրաքանչիւրոց մարգարէիցն՝ յոմանց՝ զգործս ընդ հաւատոցն և յոմանց՝ զպահս ընդ աղօթիցն, յայլոց՝ զկանխումն ի գիշերի և զկիսոց՝ զյանդիման լինելն յառաւօտու. իսկ ի յայլոց բազմաց՝ զմատնիլն տանջանաց և զմահն գլխովին. որպէս զԵսայեաս սղոցեցին և զԵրեմիաս քարկոծեցին, զԶաքարիաս սպանին և զԴանիէլ կեր գազանաց արկին. զերիս մանկունսն հրոյ մատնեցին և զՄակաբայեցիսն սրոյ ճարակ տուին. որ և*

13-I. MR չունին արդարոյն յոբայ զհեզութիւնն. 1. JVY զհեզութի. | CFHJKLMPQRTVWYc մովսէսի. IU մովսիսի. | Z հնազանդութիւն. VY զհնազանդութի. | CFI զառաքինութիւն. b զառաքինութի. 2. VY զանմեղութի. | Pc յեսուայ. b յեսըւայ. | HMRS զարիութիւնն փխ. և զարիութիւնն. 2-3. HKLMRY զուխտադրութիւնն սամուէլի և զարիոյթիւնն փենեհէսի (Y զուխտարդրութի. KLY և չունին. Y զարիութի. HRY փենէհէսի). | JV զարիութի. S զայրութիւն. | C փենէհեսի. DESTVZ փենեհեզի. FW փենէհէզի. JU փենէհէսի. Q փէնէհէսի. P փենեհէսի. 3. J զուխտադրութի. E զուխտադրութիւ. P զուխտ արդարութիւն. | Zb սամուելի. Pc սամւէլի. | E զզղջումն փխ. և զզղջումն. | b զըղջումն. BCDEFHIJPQRSVWYZc զղջումն. | FPZbc արտասուացն. 4. F զայլսն. DEJSUWZ զայլ. | DEHIKLRSWY իւրաքանչիւրոցն. Cb յիւրաքանչիւրոցն. P յիւրայքանչիւրոցն. QTV իւրաքանչիւր. c յիւրաքանչանչիւր. | FHIKLMRY մարգարէից. b մարգարէեաց. 5. F զոմանց. S յորոց. DW չունին յոմանց զգործս.... ընդ աղօթիցն. EJSUZ զգործսն. HKLMRY ըստ. IJ հաւատոյն. T հաւատոց. | J ոմանց. | FJ զպահսն. C զպահքն. 6. Ib աղօթից. W այլոց. | CS կանխումն. Z զկանկումն. C չունի ի. b ի գիշերին. | CQV զկիսոցն. FIb կիսոց. | QVZ յանդիման. W զանդիման. 7. BKLMU լինիլն. JQV լինել. CIQUVZ առաւօտու. W յառաւօտոյ. D առօաւտոյ. HKLRY յառաւօտի. F յառաւօտէ. BMY առաւօտի. | F չունի ի. P և. | V յայլոցն. F այլոց. | C բազմացն. | DW զմարտիլն. EZ զմատիլն. 8. DQW ի տանջանաց. Z ի տանջանացն. FY տանջանացն. | QVc զմահն իսկ. | F գովելի փխ. գլխովին. | CD HKLMRWY զեսայի. F զյեսայաս. QVc զեսայիաս որ. 9. EJSWZ զերեմիայ. DU զերեմիա. bc զերիմիաս. Q զէրէմիաս որ. V զերեմիաս որ. | HPRY զզաքարիայ. KLM զզաքարիա. FQV զաքարիաս. EJSZ զաքարիայ. DUWc զաքարիա. 10. P զդանիել. | T կէր. CFIPZbc կերակուր. | C գազանացն. | DW մանկունս. | Q հըրոյ. 11. Y ըզմակաբայեցիսն. J զմակարայցիսն. P զմակայբայեցիսն. | S հըրոյ. Y հրոյ. | (փխ. սրոյ ճարակ տուին) Vc ի սուր քարշեցին. Q չունի.

զմայրն Շամունէ է որդւովքն սարսռելի չարչարանօք և կարծրագոյն տանջանօք մաշեցին, ընդ որս և ծեր քահանայն Եղիազար, որ վասն աստուածային սիրոյն և քաջայոյս հաւատոյն առ յոչինչ զխստագոյն տանջանսն համարեցան. զորս թուէ Պօղոս ասելով. «Քարկոծեցան, սղոցեցան և սպանմամբ սրոյ մեռան. շրջեցան լեաշկ մաշկօք և մորթովք այծենեօք. կարօտեալք, նեղեալք, չարչարեալք, յանապատի մոլորեալք՝ ի լերինս, ի յայրս և ի փապարս երկրի»։ Եւ սոքա ո՛յք՝ այնք՝ զորս մի ի նոցանէ բոլոր աշխարհս ոչ արժէ. ամենեքեան վկայեալք ի հաւատոցն և ի բարի գործոցն. վասն որոյ հոտոտեցաւ Տէր Աստուած ի հոտ անուշից։ Իսկ ի ծագման Բանին Աստուծոյ մարմնաւորին տնօրէնութեանն՝ որոց և ճանապարհ գործեաց փրկական չարչարանօք խաչին և կենարար մահ-

| DEJPSWZ տըւլն. Y տվին. FIKLb եսուն. 1. I մայրն. | C չամոնէ. | C եօԹն. W եւԹն. EZ ե. | DHY որդովք. KLMR որդւովք. C որդովն. EFIPSTVZbc որդովքն. | EJKLPZb սարսըռելի. S սարսըռել. W սաւսըռելի. I սարսռեռի. | HKLMRY չարչարեցին փխ. չարչարանօք. 2. Z կածրագոյն. b կարծրագւոյն. S կարծագւոյն. Q կարծրանօքն. | Z տանճանաւք. | DEJSUWZ մահու մատնեցին փխ. մաշեցին. | DW ընդ որս էր փխ. ընդ որս. | HKLMRY զծեր. | F քհնյ. 3. FIb եղիազարոս. SW եղիայզար. | P սիրոյն. | P քաջայյոյս. 4. CFIb հաւատոցն. | C որ առ. | FIMRVZ ոչինչ. | Sb զխստագւոյն. V խստագոյն. P ըզխստայգոյն. | Y չունի զխստագոյն տանջանսն. BCFM համարեցաւ. 5. (փխ. զորս) F այլ և զորս. QVc զորս և. | EHJPRVWYb Թըւէ. Z Թվէ. | (փխ. Թուէ պօղոս). KLQ պօղոս Թուէ. Vc պօղոս Թըւէ. | (փխ. պօղոս) C առաքեալն պօղոս. Fb առաքեալն. I առաքեալ. | Եբր. ԺԱ, 37. | JU չունին քարկոծեցան...մեռան. 6. CHKLRTY չունին և. | b սպանմանմբ. S սըպանմամբ. | b սըրոյ. | DHIMQRSTUWYZbc լեշկ. CEFJV լէշկ. KL լերկ. P չեշկ. F մաշկեղինօք. 7. b մորԹօք. | KL այծեղինօք. EFITVb այծենօք. JSZ այծենովք. 8. C չունի ի լերինս. 9. PW փափարս. | V յերկրի. | IJ սոքայ. | I յոյք. Y ոյնք. W ոք. | J անք. | DEJSUWZ ի նոցանէ. 10. HKLMRY չունին ամենեքեան... գործոցն. | F վկայք. 11. FIb չունին և ի բարի գործոցն. | Z բարի փխ. ի բարի. | R որո. | b խոտոտեցաւ. | F տրն. 12. DW ածն. F չունի. | անուշից բառից յետոյ աւելացնում են b ի փառս սրբոցն. V որ է օրհնել. | FZ ի ծագմանէ. | D չունի աստուծոյ. 13. FVY տնօրէնուԹե. J տնօրէնուԹե այ. c տնօրէնուԹբ. | Q յորոց. | V չունի որոց և ճանապարհ ......ճառեսցուք վասն նորա, այն է մինչեւ էջ 157, տող 6. 14. F գործաց. | M փրկագործ. | CFIb խաչիւն փխ. չարչարանօք խաչին. | EPc մահուամբն.

| փխ. մարդ մի C՝ մին մարդ. 1. փխ. մին մարդ GZ մարդ մի. | L մի փխ. մին. | C չունի մարդ. | C չունի եմ. | փխ. ինչ Z այլ ինչ. C այլ ինչ իրօք. | C չունի քան զիս. 2. փխ. որ նախատես զիս Z էր զմեզ նախատես և. | C կու նախատես. | BC զմեզ փխ. զիս. | C եթէ քեզ ած պարոնութի է տուեալ (փխ. թէ աստուած քեզ թագաւորութիւն է տուեալ). 3. HRY տուել. G տուեր. Z տըւեր. B տուեալ. | C նա դու տր փխ. դու ընդէր. 4. փխ. մեր BZ իմ. | փխ. զի օրէնքն C չեմ հպարտանալ այլ զի օրէնքն. | B օրէնք. 5. C զձերն բառից յետոյ աւելացնում է և ես կամիմ որ դուք այլ լաւ օրինաց տիրանայք. | Z զի այլ. 6. CZ իւր օրէնքն. HRYZ թվի. R թըւի. C կու թուի. | Y զմիւսոյն. C զայլոցն. 7. BCKL հբ. | Z ւ երկու. | C բաժանեալ. BG բաժանեեր. | փխ. ամենեցուն BGHKLRYZ ամի. 8. փխ. կայ մի՞թէ B կամ թէ. | Y հրամանքըդ. BZ հրամանք. | B զայն. C զայ. 9. C կամիս. | B GK զամ. Z զամենեսին. | Y չունի քո. 10. BZ թէ. C զի. | C ձեր առաջնորդն. 12. R յիշեայ. L զանու-նըն. | C առաջնորձին. | GHK RY յօրէնքն. LZ յօրէնսն. 14. BCHRYZ չունին ես. | BC սովորեալ. Z սովոր. | C զառաջնորդն ձեր յիշել փխ. յիշել զանուն առաջնորդին ձերոյ. | փխ. զանուն առաջնորդին BZ զառաջնորդն. | BHKR YZ ձեր. 15. Z չունի յիսուս. | L առաջնորդն իմ է. Z առաջնորդ. | փխ. և C որ. | B չունի է. 16. L երկնից. | B ի յերկիր. CZ չունին. | փխ. լոյսն ի հօրէն լուսոյ B լոյս ի լուսոյ հօրէ. CZ լոյս. | C ի հօրէ. 17. G չունի և. | B չունի սուրբ. Z ի սրբոյ. C մարիամայ բառից յետոյ աւելացնում է եւ քարոզեաց յաշխարհի զածութի իւր և սպարել

Digitized by Google

և խաչեալ, թաղեալ և յարուցեալ ի մեռելոց, համբարձեալ յերկինս, և նստաւ ընդ աջմէ Հօր։ Նա է Աստուած իմ և պարգևատու։ Եւ ես վասն Նորա թողում զկենդանին և մեռելոյն հնազանդիմ։

Յայնժամ բարկացեալ ամիրայն և եհար երկոքին ձեռօքն զգլուխն Վարդանայ։ Եւ նա ասէ. «Ո՛վ ամիրայ, եթէ երկնչէի ես ի հարկանելոյդ քո՝ ոչ դայի առ քեզ։ Այլ վասն սիրոյն Քրիստոսի Աստուծոյն իմոյ զմահ յանձն առնում՝ զի զնա տեսանել արժանանամ, յորժամ փոխիմ յաշխարհէս»։

Յայնժամ հրամայեաց ամիրայն տանել զնա ի բանտ և չարչարել ասելով. «Մի թէ հաւանիս կամաց մերոց»։ Եւ առեալ զուրբն Վարդան՝ տարան ի բանտ։ Եւ նա ուրախութեամբ երթայր և գոհանայր զԱստուծոյ։ Եւ տարեալ զնա ի բանտ մերկ և բոկ և գլխիբաց։ Եւ էր աւուրքն ձմեռնային Յայտնութեան պահոցն։ Եւ եդին զնա ի կոճեղս և չարչարէին։ Եւ նա ի փառաւորելոյ զԱստուած ոչ դադարէր, այլ ասէր. «Գոհանամ զքէն Քրիստոս Աստուած իմ, որ արժանի արարեր զծառայս քո լինել քեզ չարչարակից։ Աղաչեմ զքեզ Տէր, տուր համբերութիւն ծառայիս քո, զի կարող լիցիմ տանել տանջանացս և գալ առ քեզ»։

բացում սքանչելիս. 1. Z չունի խաչեալ. B համբարձաւ. CZ և համբարձաւ. L և համբարձեալ. 2. Z յաջմէ. HYZ նայ. CL ած. 3. C պարգևատուն. B չունի ես. 6. C ի վերայ գլխոյն. փխ. նա Z նա ամիրայն. LM ամիրայ. H ամիրա. Z անմիտ. Z չունի եթէ. 7. Y երկընչէի. BC քոյ. Z չունի. 9. Y զնայ. Z արժանանամք. M չունի յորժամ փոխիմ յաշխարհէս. C փոխիմ. 10. Z ի յաշխարհէս. 11. M տանիլ. Y զնայ. C ի բանտն. 12. BCZ չունին ասելով. HMRY մեր. CZ նորա. M և տարան զնա փխ. եւ առեալ...տարան. 13. C ի բանտն. GHKLMRY չունին եւ նա...ի բանտ, այն է տող 13-15. 14. C էր փխ. տարեալ զնա ի բանտ. 15. C բոկ ի բանտին. C չունի եւ էր...ձմեռնային. Z աւուրքքն. 16. B ձմերնային. GHKLY ձմերային. Z ձմերայնի. Y յայտնութեն. 16-18. C եւ նա փխ. եւ եդին...այլ. 17. Z խոկ փխ. եւ. 19. BKLM լինիլ. C չարչարակից լինել քեզ. 20. Y չարարակից. C աղաչեմք. 21. BC քոյ. BGHKLMRY չունին զի կարող լիցիմ. Z կարող. C լիցիմ. LM տանիլ. B ներել. C տանել. Z տանջանաց.

Digitized by Google

Եւ զերիս աւուրս ոչ դադարէին ի չարչարելոյ զսուրբն Վարդան։ Ապա հրամայեաց ամիրայն կրկին տանել զնա առաջի իւր։ Ասէ Վարդան. «Վասն ինչ պատճառի տաս զիս չարչարել. վասն գողութեան թէ վասն շնութեան և թէ վասն այլ իրիք անիրաւութեան։ Եթէ զճշմարիտն ասեմ և զհաւատոյ դաւանութիւնս յայտնեմ քեզ ինչ է»։ Ասէ ամիրայն. «Եկեալ ես նախատել զօրէնս մեր, և զօրէնքն քո ճշմարիտ առնես և զՔրիստոս՝ Աստուած ասես՝ վասն այն չարչարեմ զքեզ»։ Ասէ Վարդան. «Մ՛ի ամիրայ, ես և դու դատաստանօք խօսիմք։ Օրէնքն ձեր երկու և երեք մարդ, որ ի վերայ մի բանի վկայեն՝ սուտ է բանն այն թէ ճշմարիտ»։ Ասէ ամիրայն. «Ճշմարիտ»։ Ասէ Վարդան. «Քրիստոսի աստուածութեանն երկոտասան ազգ-վկայեն։ Եւ ի դիրս ձեր գրեալ է Յիսա ռուհ Ալլահ, որ ասէ

1. C եւ-ից յետոյ այնպէս ի կոճեղս եդեալ զսբն վարդան. | B դադարեցին. | B ի տանջելոյ փխ. ի չարչարելոյ. | M չունի զսուրբն վարդան. C զնա. 2. C չունի ապա հրամայեաց... առաջի իւր, այլ k տող 2-3. GZ կրկին անգամ. | փխ. տանել B տանջել. KM տանիլ. BGHRY չունին զնա. 3. (փխ. ասէ վարդան ..... վասն այն չարչարեմ զքեզ, այլ k տող 3-9.) C ասէ սուրբն վարդան ընդ ամիրայն թէ վասն ինչ պատճառի համար տաս զիս չարչարել վասն գողութեան թէ վասն շնութեան եթէ վասն այլ ինչ անիրաւութեան ես դիմանամ յանձն իմ զի ոչ ինչ մեղուցի քեզ եւ թէ զհաւատոց դաւանութիւնս իմ խօսիմ քեզ ինչ պակասութիւն կու լինի. ասէ ամիրայն ապա չէ պակասութիւն որ եկեալ ես զօրէնքն մեր սուտ առնել և զձերն ճշմարիտ. 4. Z վս շնութեան և թէ վս գողութե փխ. վասն գողութեան թէ վասն շնութեան. BH չունին և. | RY և վս թէ. Z եթէ փխ. և թէ. 5. Z ինչ փխ. իրիք. B անօրէնութե. | Z անիրաւութեան-ից յետոյ ունի աղքատ եմ և մուրացիկ. փխ. եթէ M միայն թէ. | Z զճշմարիտս. 6. L դաւանութի. Z դաւանութեա իմ. M չունի քեզ ինչ է. | BH զինչ. փխ. է Z պարտիմ. 7. փխ. զօրէնս B զօրէնք. G զօրէնսն. Z զագգս և զօրէնս. | փխ. մեր B իմ. 9. KM ամիրա. 10. C դատաստանաւ. փխ. ձեր Z որ. 11. փխ. որ ի վերայ...վկայեն L վկայեն ի վերայ մին բանի. C չունի որ. M միոյ. K մին. | CZ բանի մի. Z որ վկայեն փխ. վկայեն. C այն բանն սուտ է թէ ճշմարիտ է փխ. սուտ է... թէ ճշմարիտ. | փխ. է բանն այն Z ասեն. 12. B եթէ. Z ամիրայն թէ ճշմարիտ. C ճշմարիտ է. 13. C առաքքի. Y ածուքն. B ազգք. 14. Z ի գիրսն. C ի գիրն. | C կայ փխ. է. B յեսա. Z յեսայ. MRY յիսայ. CGHKL յիսէ. | HRY ըռուհալլայ. KLM ըռուհալլահ. C ըռօհալահ. B ռօհալլահ. Z ըռուհալահ. | CZ է փխ. ասէ.

Աստուծոյ հոգի։ Ես զնա Աստուած հաւատամ։ Ասէ ամիրայն. «Զառաջնորդն մեր ընդէր ոչ յիշես»։ Ասէ քաջն Վարդան. «Քո հայրն ամիրայ էր և մեռաւ. և դու ամիրայ ես և կենդանի։ Արդ այս մարդիկս քեզ հնազանդ կենան և թէ քո հօրն»։ Ասէ ամիրայն. «Ինձ»։ Ասէ Վարդան. «Ապա ես վասն էր թողում զկենդանի Քրիստոս Աստուածն իմ և մեռելոյն հնազանդիմ»։

Եւ այլ բազում բանս խօսեցաւ սուրբն Վարդան և յանդիմանէր զնա։ Եւ ամիրայն և մեծամեծքն իւր զարմացան ընդ համարձակ խօսս նորա։ Քանզի ոչ թէ նա էր որ խօսէր. այլ Հոգին Աստուած խօսէր ընդ բերան նորա ըստ վկայութեան Աւետարանին՝ զոր խօսեցաւ Քրիստոս։

Յայնժամ բարկացեալ ամիրայն ասէ. «Տարէք զդա առ դատաւորն մեր. զինչ հրամայէ՝ զայն արարէք»։ Եւ առեալ տարան զնա առ դատաւորն։ Եւ ասէ դատաւորն. «Զի՞ է զի առաջի ամիրային դարձեալ ես յօրէնսն մեր և յետոյ փոշիմանեալ»։ Ասէ Վարդան. «Ես ո՛չ եմ խախտեալ յօրինացն իմոց. այլ քրիստոնեայ եմ ծնեալ և եմ ընդ

1. BZ հոգի այ. 2. Z ոչ յիշեցեր վս էր է փխ. ընդէր ոչ յիշես. 3. K ամիրա էր. | C այժմ դու. | KL դու ամիրա. 4. BL չունին և | CZ չունին արդ. R այսմ. | Z մարդիկքս. | փխ. հնազանդ կենան B հնազանդին. Z հնազանդեն. C հնազանդի. 5. BC չունին և. R չունի ասէ վարդան. 6. R ապայ. Z և. | B չունի ես. | G ընդէր փխ. վասն էր. | BZ չունին քրիստոս. 7. փխ. իմ B իմ և ամ աշխարհի. 8-9. C և աներկիւղ յանդիմանէր. 9. Z յանդիմանեաց. B ամիրայն փխ. եւ ամիրայն. | L ամիրայն. | Z ամ մեծամեծքն փխ. և մեծամեծքն. B չունի իւր. | Z զարմանայր. 10. CZ եթէ. | HRYZ նայ. 11. փխ. հոգին GZ հոգին սր. | Z չունի աստուած. | C թերադրէր ի բերան փխ. խօսէր ընդ բերան. | փխ. ընդ բերան B բերանով. 12. P վկայական. | խօսեցաւ ունին միայն CGM, միւսները խոստացաւ. 13. փխ. յայնժամ Z ապա. | փխ. բարկացեալ C սրտմտեալ. | Z ասաց. | H զդայ. Z զդայ. 14. փխ. առ դատաւորն մեր C առ դադին. | C և զինչ. | R հրամանէ. 15. փխ. առեալ C իբրև. | CGHKLMRY չունին զնա. | CZ դատաւորն բառից յետոյ աւելացնում են յայնժամ ասէ վարդան ով դատաւոր հարցիր ի դոսա թէ վս էր են ըմբռնեալ զիս (C չունի յայնժամ. | C զդոսա. | Z ըմբռնեալ են.). CZ չունին և. 16. CZ վս. փխ. զի է. | BC յօրէնս. 17. Z փոշիմանել. | C չեմ փխ. ոչ եմ. Z խախտել. 18. փխ. իմոց C մերոց. | H քրիստոնեա. | փխ. ծնեալ...մեռանել այն է տող 18-1 B և յոժար եմ վս անուանն քո մեռանիլ. | CZ չունին և եմ .... առ-

Digitized by Google

Քրիստոսի Աստուծոյն իմոյ. և կամիմ քրիստոնեայ մեռանել»։ Ասէ դատաւորն. «Գիտասցիր որ թէ ոչ դառնաս յօրէնս մեր՝ սաստ սպանանել զքեզ»։ Ասէ Վարդան. «Եթէ զմարմինս իմ սպանանես, ապա հոգիս կենդանանայ»։

Յայնժամ բարկացեալ դատաւորին՝ ետ հրաման սպանանել զնա։ Եւ առեալ տարան զնա արտաքոյ քաղաքին։ Եւ սուրբն Վարդան ինքնին ուրախութեամբ երթայր առաջի նոցա, որպէս թէ ոք ի մեծարանս թագաւորի ընթանայ։ Եւ ճշմարիտ մեծարանք էր նմա յերկնաւոր թագաւորէն Քրիստոսէ։ Զի թէպէտ մարմնով չարչարեալ և տանջեալ. այլ հոգւով փարթամացեալ և գնացեալ ի հարսանիսն անապականս։ Եւ էր կոչնական հարսանեացն Նախավկայն Ստեփաննոս՝ առաջին նահատակին։

Յայնժամ ժողովեցան բազմութիւնք այլազգեացն ի վերայ նորա, որպէս չար գազանք արեան ծարաւիք։ Եւ ասէ Վարդան. «Հաւատացեալ եմ և հաւատամ զՀայրն ան-

տուծոյն իմոյ. 1. C և քրիստոնեայ մեռանելոց եմ (փխ. և կամիմ քրիստոնեայ մեռանել). | HZ քրիստոնեա. | GKLMZ մեռանիլ. 2. C չունի գիտասցիր. | B չունի որ. | փխ. որ թէ CLM եթէ. | BHKLMRY յօրէնքն. C յօրէնս. 3. փխ. սաստ Z պիտի. | C չարաչար սպանանել սաստ փխ. սաստ սպանանել. փխ. եթէ զմարմինս ... հոգիս կենդանանայ B եւ ի մահուանէ ոչ երկնչիմ որ պատճառ է կենաց. 4. փխ. սպանանես C սպանանել տաս. | C չունի ապա. | CZ հոգիս իմ. 5. Z չունի բարկացեալ դատաւորն. | C հրամայեաց դատաւորն փխ. բարկացեալ...ետ հրաման. | Z սպանանելոյ. 6. B եւ փխ. զնա եւ. | GHKLMRY տարան փխ. տարան զնա. 7. փխ. եւ սուրբն.....երթայր առաջի նոցա, այն է տող 7-8 C եւ նա երթայր ինքնակամ յօժարութեբ զհետ նոցա ուրախ սրտիւ. | փխ. ուրախութեամբ երթայր Z կամաւն իւրով երթայր ուրախութբ. 8. փխ. ընթանայ Z երթայ. 9. Z ճշմարիտ այս. | Y նմայ. 10. B չունի քրիստոսէ. MRYZ քի. | C թէպէտ և. MR թէպէտ որ. | փխ. չարչարեալ և տանջեալ CZ աղքատ էր. 11. CZ հոգով. | K փարթացեալ. CZ փարթամացաւ. | CZ գնայր. 13. Z ստեփանոս. | փխ. առաջին նահատակն Z առաջի նահատակին. C այլ և անուանակիցն իւր վարդան մամիկոնեան. 14. C չունի յայնժամ....արեան ծարաւիք, այն է տող 14-15. | Z այլազգացն. L այլազգեայն. 15. Z չունի նորա որպէս...արեան ծարաւիք. | BGHLRY գազան. BHRY ծարաւի. | K չունի և. փխ. եւ ասէ վարդան C եւ սուրբն վարդան ասէր մեծաձայն. Z եւ նա ասաց. | L չունի ասէ վարդան.....և բազմութիւն ամբոխին, այն է տող 15 մինչեւ էջ 242 տող 5. 16. Z զհայր. | B զհայրածին որդին միածին փխ. զհայրն ... միածին.



Digitized by Google

ծին և զՈրդին միածին, զմարմնացեալն Աստուած և զՀոգին ճշմարիտ, Երրորդութիւն և մի Աստուածութիւն՝ դաւանութեամբ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ։ Քրիստոնեայ եմ և անարգեմ զօրէնքն և զառաջնորդն ձեր խաբեբայ և սուտ։ Եւ բազմութիւն ամբոխին դիմեցին ի վերայ նորա և սրով և բրով և քարամբք նահատակեցին զնա։

Եւ աւանդեաց զմաքուր հոգին իւր առ Աստուած՝ երանելին Վարդան ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ Յայնժամ գնացին քրիստոնեայքն և բարձին զնա պատուով և տարեալ եդին ի տապանի սաղմոսիւք և օրհնութեամբ և երգովք հոգևորօք։

Կատարեցաւ սուրբ նահատակն Վարդան ի Թուականութեանս Հայոց ՊՀ, յունվար ամսոյ ի Դ, Ծննդեան պահոցն, յաւուր շաբաթու, ի մետասան ժամու, և առնէ բժշկութիւն բազում ցաւոց նշխար ոսկերաց սրբոյն։

1. MR չունին և զորդին միածին. | Z անծինիփխ.անծին և. | CG չունին զմարմնացեալն աստուած. | փխ. զմարմնացեալն M և զմարմնացեալ բանն. R զմարմնացեալ բանն. Z զմարմմանացեալն. | MR զհոգին սբ. 2. B սբ երրորդութի. | CZ չունին երրորդութիւն և մի աստուածութիւն. 3. R գրիգորին. | C եսքրիստոնեայ. B չունի քրիստոնեայ եմ. 4. փխ. անարգեմ B արհամարհեմ. | CZ չունին և անարգեմ...սուտ. 5. M սուտ և խաբեբայ. | C յայնժամ փխ. Եւ. | K բազմութիք. | C չար ամբոխին. 6. C սրով քարիւ և փայտիւ փխ. և սրով...քարամբք. | Z սրաւք. | GZ բրօք. | L քարիւ. 7. փխ. աւանդեաց ... մերոյ, այն է տող 7-8 C ի փառս քի այ մերոյ. GHKLMRYZ չունին առ աստուած. 8. B չունի ի փառս ... աստուծոյ մերոյ. | Z այ փխ. քրիստոսի աստուծոյ մերոյ. | M չունի մերոյ. 9. C և փխ. յայնժամ. | փխ. գնացին քրիստոնեայքն և Z գնացեալ քրիստոնէիցն. C գնացեալ քահանայիցն և ժողովրդոցն. | C մեծաւ պատուով. 10. փխ. եդին ի տապանի Z թաղեցին զնա. 11. B չունի և երգովք հոգևորօք. | CZ հրգօք. 12. փխ. սուրբ նահատակն B սրն. փխ. սուրբ R սրն. | C վարդան ի բաղէշ քաղաքի. | M ի թուականութե. R ի թվականութե. HY ի թվականութեա. BC ի թուականիս. Z ի թվին. 13. KL չունին հայոց. C ըճհ. G ըճ և հ. HKLMY պ և հ. B ըճհ ամին. փխ. յունվար ամսոյ ի BCZ յունվար ի. L ամսու. BY ի սբ ծննդեան. R ծնընդեան. C յայտնութեան. GHK ի սբ ծննդեան. L չունի ծննդեան պահոցն ... ժամու. Z չունի ծննդեան պահոցն...ոսկերաց սրբոյն, այն է տող 13-15. 14. C չունի յաւուր շաբաթու...ոսկերաց սրբոյն, այն է տող 14-15. | B ժամուն. 15. փխ. բժշկութիւն բազում ցաւոց B բզմ բժշկութի. | փխ. բազում GL ամ. | GKM նշխարք. L չունի նշխար ոսկերաց սրբոյն.

Digitized by Google

Այս վկայաբանութիւնն ունին BCGHKLMRYZ ձեռագրերը՝ C արեգ. Է—մարտ ԺԵ Դանիէլ մարգարէից և երեք մանկանցից յետոյ, էջ 782''—785'։ GH KLMRY մարերի Թ—մայիս ԺԶ, Զաքարիայից և ուրիշ երեք վկայաբանութիւններից յետոյ․ G էջ 498 ա''—500 ա'', H 463 ա'—465 ա', K 470 բ'—472 ա'', L 413 բ'—414 բ', M 494 բ''—496 ա', R 473 բ''—475 բ'', Y (Ա. հատ.) 198 բ''—201 ա'։ Z քաղոց ԻԵ—յունվար Դ, Զոսիմոսից և Աբրահամից յետոյ, էջ 169 բ'—171 ա'։ B մարերի Ը—մայիս ԺԵ, Խոնդորոսից յետոյ, էջ 399 բ'—400 բ''։ Սոքա բոլորն ունին հետևեալ վերնագիրը․ «Յայսմաւուր վկայաբանութիւն սրբոյն Վարդանայ նահատակին որ ի Բաղէշ քաղաքին» (B չունի նահատակին որ ի Բաղէշ քաղաքին․ | C Վարդանայ որ ի Բաղէշ քաղաք կատարեցաւ․ | Z փխ․ նահատակին ունի նոր վկային․ | R Բաղեշ․)։

Սոյն վկայաբանութիւնը ամփոփելով և համառօտելով մէջ բերած է նաև Չամչեան, Գ․ էջ 441—443․ բայց այստեղ նահատակութեան օրը նշանակուած է յունվար 4, յաւուր միաշաբաթու․ ինչ որ սխալ է փոխանակ շաբաթ, որովհետև ՊՀ—1421 տարուայ յունվար 4-ը շաբաթ օր է ընկնում և ոչ կիւրակի։ Չամչեան Բաղէշի պարոնի անունն էլ յիշում է «Շամշատին ամիրայ որդի Շարաֆայ»։

Տես նաև Յայսմ․ Ա․ տպ․ 833''—836'', Բ․ տպ․ 570''—572'', Գ․ տպ․ հատ․ Ա․ 9'—10''։

Z ձեռագիրը նահատակութեան վերջում աւելացնում է հետևեալը․ «Բարեխաւսութբ․ քո նոր վկային Վարդանայ ողորմեա ամ հաւատացելոց և յարմարողի ծառիս Աւաքէլ վրդպտի»։

# 36.

## ՀԱՅՈՑ ՔԱՀԱՆԱՅՔ

† ՊՀ=1421

...Վանքն Բարիձոր՝ որ է յանուն սրբուհւոյ Աստուածածնին, ուր էին մարմինք սուրբ նահատակացն Հայաչից քահանայիցն, որք առաջնորդութեամբ սուրբ Հոգւոյն և սիրով Որդւոյն միածնի և նախախնամութեամբ Հօրն երկնաւորի ելեալ յաշխարհէն իւրեանց և եկին ի սուրբ քաղաքն յԵրուսաղէմ և կատարեցին զուխտս իւրեանց և հասեալ յերկիրս Հայոց և շրջէին ի վանորայս։ Եւ յետոյ եկեալ ի քաղաքն Խիզան և անդ նահատակեցան ի ձեռաց այլազգեացն։ Զոր եկեալ քրիստոնէիցն բարձին զմարմին երկուց սուրբ քահանայիցն Հայաչ մարտիրոսացն. և տարեալ ամփոփեցին ի վանքն Բարեձորի, Պ և Հ թուականին Հայոց։

Սոյն վկայաբանական տեղեկութիւնը հանում ենք Ստեփաննոս վարդապետի վկայաբանութեան միջից. ձեռագրական տարբերութիւններ, տեղեկութիւններ և ծանօթութիւններ՝ տես անդ, էջ 251 և վկայութեան վերջը։

Digitized by Google

# 37.

## ՍՏԵՓԱՆՆՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՒ ՊԵՏՐՈՍ ՔԱՀԱՆԱՅ ԽԻԶԱՆՑԻՔ

† ՊՀԳ=1424 յունիս 2 ուր.

## և ՍՏԵՓԱՆՆՈՍ ՕԻՐԱՑԱՂ Ի ՍՈՐԲ ԴԵՂՁԻ

† ՊՀԳ=1424 յունիս 11 կիր.

Աստուածային առաքեալն և աւետարանիչն Քրիստոսի՝ մեծն Յովհաննէս՝ որդին Որոտման և սիրելի աշակերտն Քրիստոսի հրամայէ ի գիրս կաթուղիկէիցն՝ թէ «Երկիւղ ոչ գոյ ի սէրն. վասն զի սէր կատարեալ ի բաց մերժէ զերկիւղն»։ Եւ դարձեալ՝ թէ «Աստուած սէր է և որ հայ ի սէրն՝ յԱստուած բնակէ. և Աստուած ի նմա»։

Արդ՝ որովհետև դիտացաք եթէ Աստուած սէր է, վասն որոյ ուր Աստուած է՝ շնորհօք փախուցեալ է անտի երկիւղ։ Քանզի ուր թագաւորն վառեալ է զինուք և անդ շրջակայք նորա ոչ երկնչին ի սպառնալեաց թշնամւոյն։ Այսպէս և ուր Աստուած է զօրաւիգ՝ անդ է և զօրք նորա՝ որ են դասք սրբոցն, ոչ երկնչել ի սպառնալեաց թշնամեաց յերևելեաց և յաներևութից։ Որպէս և ասաց ինքն Որդին Աստուծոյ, եթէ «Քաջալերացարուք, զի ես յաղթեցի աշխարհի»։ Եւ քանզի սիրոյ զօրութիւնն գերազանց է քան զընութիւն, զի մռուացուածն առնէ չարչարելի

2. E յոհաննէս. 3. E կաթուղիկէիցն. եթէ. Ա. Յովհ. Դ. 18. 4. E զօ բայց մերժէ զերկիւղ փխ. գոյ ի սէրն...զերկիւղն. 5. E առէ. եթէ փխ. թէ. 6. E բնակէ յած. E ի նմա բնակէ. Ա. Յովհ. Դ. 16. 7. C չունի այդ որովհետև ...այլ ինչ յերկրաւորացս հասուածը՝ այն է տող 7—էջ 246, տող 5. 10. E երկինչին ի սպառլեաց. 12. E սրբոյն. 14. E չայ. Յովհ. ժզ. 33.

Digitized by Google

և եղծանելի բնութեանս և միաւորէ յուսով ընդ անեղին Աստուծոյ, վասն որոյ որք սիրով հաստատեցան ի խաչելեալն Աստուած, ոչինչ ի տարրականաց կարացին բաժանել զնոսա ի Նմանէ. ոչ հուր և ոչ ջուր և ոչ այլ ինչ յերկրաւորացս։ Որպէս ասէ անօթն ընտրութեան, փողն տարածանացին, առաքեալն Քրիստոսի Պօղոս, եթէ «Ո՞վ մեկնեսցէ զմեզ ի սիրոյն Քրիստոսի, նեղութի՞ւն թէ անձկութիւն». և այլն որ ի կարգին է։

Որպէս եղև այս և արեամբ ներկեալ նահատակացս սրբոց, որք կոխեցին զհուր մարմնոյն չարչարանօք և չիջուցանէին ինքեանք զբոցն ցանկութեան և վառէին զլապտեր հոգւոյ իւրեանց անշիջանելի հրովն աստուածային։ Անցանէին ի ջուրս յորձանաց ըստ բանի մարգարէին և ցամաքեցուցանէին յինքեանց զախտն մեղաց ցանկութեանց։ Եւ առողանէին զոգիս իւրեանց ջրովն անհիւթական, այսինքն շնորհօք Որդւոյն Աստուծոյ։

Արդ ջերմութիւն արեգականն և լուսաւորութիւնն ոչ չիջանի և ստուերանայ. թէպէտ և լինիցի ժամանակ՝ զի ամպով ծածկի ի մէնջ, այլ ինքն ըստ ինքեան ներգործէ զլոյսն և զջերմութիւնն։ Այսպէս և իմանալի Արեգակն արդարութեան Քրիստոս միշտ և հանապազ ծագէ զլոյս շնորհաց և գիտութեան յոգիս ընդունողացն կամօք և բորբոքէ ի սէրն վերին։ Ըստ որում ասաց թէ «Հուր եկի արկանել յերկիր». և թէ «Ես լոյս յաշխարհ եկի, որ հաւատայ յիս ի խաւար մի՛ մնասցէ»։

Զոր և այժմ ի վերջին աւուրքս և յերեկոյացեալ

5. C և ասէ առաքեալն սբ փխ. ասէ...քրիստոսի, տող 5-6. 6. C թէ. 7. C նեղութիւք թէ անձկութիւք. 8. Հռոմ. Ը. 35. | E և զայլն ևս որ ի կարգին թուէ. 9. C որով փխ. որպէս. | C չունի և. | C չունի ներկեալ. 10. E սրբոցս. C չունի. | C մարմնոյ. | C չունի և չիջուցանէին...որդւոյն այ. այն է տող 10-16. 11. E վառէր. 13. E յորձայնաց. 17. C չունի և լուսաւորութիւնն. 18. E ըստուերանայ. | C լինի. | C որ փխ. զի. 19. E ի մէջ. C չունի. | E ինքնեանն. 20. E զջերմութի. 21. C չունի միշտ և. 22. C չունի կամօք. 23. C իւր վերասին փխ. վերին. Ղուկ. ԺԲ. 49. | C չունի ըստ որում...մի մնասցէ. 25. Յովհ. ԺԲ. 46. 26. C չունի և. | C ժամանակս փխ. աւուրքս...երեկոյեանս.

Digitized by Google

ժամուս ի ձմեռնային եղանակս բորբոքեաց զհուր չնորհաց և զլոյս գիտութեան Որդւոյն Աստուծոյ ի սիրտ ցանկալի նահատակացն և աստուածընկալ քահանայիցն՝ Ստեփաննոս վարդապետին և Պետրոս քահանային՝ զորոց հանդերձեալ եմք պատմել զքաջութիւն արիութեան սոցա, որք որպէս զվարդս գարնանային փթթեցան ի մէջ Հայաստան աշխարհիս և լցին հոտով անուշութեան զեկեղեցիս քրիստոնէից։ Զի թէպէտ և անկան ի փորձութիւն, այլ օգնութեամբն Աստուծոյ յաղթեցին սատանայի. թէպէտ և անկան ի հուր մեղաց, այլ կարողութեամբն Աստուծոյ շիջուցին զզօրութիւն հրոյ ցանկութեանց, ըստ ասելոյ մեծին Պօղոսի. թէպէտ և սխալեցան և անկան յախտ ուրացութեան, այլ յետոյ կանգնեցին արձան դաւանութեան. թէպէտ և ըմբռնեցան ի ժանիս վիշապին, այլ փշրեցին զծամելիս և զգլուխ նորին. թէպէտ և հնազանդեցան կարեաց մարմնոյ, այլ ոչ վերջացան ի սիրոյն Աստուծոյ. Թէպէտ դլորեցան ի վիհն չարեաց, այլ դարձեալ հաստատեցան հեղմամբ սուրբ արեան իւրեանց։

Երանելիքս այս կրկին լուսաւորքս և ծաղկունք Հայաստանեաց և պարծանքս քրիստոնէից, վարդապետն Տէր Ստեփաննոս և ցանկալի քահանայն Պետրոս, էին ի Խիզան քաղաքէ. վարդապետն էր ի վանացն, որ յանուն սուրբ Գամաղիելի առաքելոյն Քրիստոսի, և քահանայն Պետրոս էր աշխարհական երէց և որդի քահանայի։ Եւ յազգմանէ չարին անկան յուրացութիւն և սուտ ածին ազգիս

1. E զջհուր. | E չընորհաց. C չնորհացն իւր. 2. C չունի և զլոյս ... Աստուծոյ. | E որդին. C երանելի նահատակացս փխ. ցանկալի... քահանայիցն. 4. C պատմեմք զքաջութիւն նահատակութեան փխ. հանդերձեալ եմք ... զեկեղեցիս քրիստոնէից, այն է տող 4-8. 6. E զառնանային. 8. C չունի և անկան...և սխալեցան, այն է տող 8-12. 11. Եբր. ԺԱ. 34. 12. E պօղոսի. | E չունի և անկան. 13. C յախտս ուրացութե և սխալեցան. | C դարձան. 14. C չունի թէպէտ և...պարծանքս քրիստոնէից, այն է տող 14-20. | E ընմբռնեցան. 18. E արեամբն. 21. C չունի տէր. | E ստեփանոս. | C չունի ցանկալի. | C որ էին. | C ի հիզան. 22. E քաղաքի. | E ի վանքն փխ. էր ի վանացն. 23. C գամաղիէլին. | C չունի առաքելոյն քսի. 24. CE էրէց. | E չունի և. | C որ փխ. և (երկրորդը). 25. E ուրացութի.

Digitized by Google

*Հայոց. զի յորժամ լսեցին զանցս աղէտից այսորիկ տառապեալ և գերի անկեալ ազգս քրիստոնէից, ամենեքեան ի սուգ մտին՝ քաղաք և գիւղ, վանք և անապատ, վարդապետք և եպիսկոպոսք, քահանայք և սարկաւագունք, կուսակրօն և ամուսնացեալք, այր և կին, ծեր և տղայ ամենեքեան աշխարհէին և լային զմոլորութիւն նոցա։ Եւ շատք ի թուլամորթաց գայթակղեցան և անկան յուրացութիւն և մեծ տրտմութիւն ածին ազգիս Հայոց։*

*Այլ նա՝ որ տէրն է ամենայնի՝ Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ ոչ անտես արար զարեամբ գնեալ ժողովուրդս իւր մնալ ի դուռն գայթակղութեան, այլ էած զղջումն ի սիրտս նոցա՝ վարդապետին Ստեփաննոսի և քահանային Պետրոսի, որք մոռացան զտկարութիւն մարմնոյ և զինեցան հոգւովն Աստուծոյ և մատնեցին զանձինս իւրեանց տանջանաց և մահու, զի որք գայթակղեցան ի նոսա, դարձեալ ևս առաւել հաստատեցան ի հաւատս Քրիստոսի՝ արիութեամբ նոցա, ըստ առաքելոյն բանին՝ որ ասէ. «Ուր առաւել եղեն մեղք, անդ ևս առաւել յաւելան շնորհքն»։ Սկեալ ի միտս իւրեանց վարդապետն Ստեփաննոս և քահանայն Պետրոս ասեն ընդ միմեանս զբանս անսուտակին՝ որ կայ յաւետարանին՝ եթէ «Քանի՜ վարձկանք են ի տան հօր իմոյ հացալիցք. այսինքն ի մէջ եկեղեցւոյ քահանայք և ժողովուրդք և վայելեն յանմա-*

1. E այս. 2. C չունի և գերի անկեալ. | C հայոց փխ. քրիստոնէից. 3. C վանականք և աշխարհականք և աշխարհհէին փխ. քաղաք և գեօղ...և լային, այն է տող 3-6. | E գեօղ. 4. E չունի և (երկրորդը). 7. C շատ. | E չունի ի թուլամորթաց. 9. C տէրն փխ. նա որ տէրն է. | C ոչ եթող փխ. որդին...արար. 10. E զարեամ. 11. C գայթագղութեան. | C էած. 12. C չունի նոցա. | C չունի ստեփաննոսի. 13. E ի քհնային. | C չունի պետրոսի. | C որ յետս ընկեցին փխ. որք մոռացան. | C մարմնոյն. 15. E չունի իւրեանց. 16. C նոքօք փխ. ի նոսա. | C չունի ևս առաւել. | C հաստատեցին. 17. C չունի քրիստոսի. | E սոց. C չունի ըստ առաքելոյն...շնորհքն, տող 17-19. | E աքելոյն. 19. Հռովմ. Ե. 20. 20. C չունի ստեփաննոս. | C ըստ անսուտակին և ասեն փխ. պետրոս...յաւետարանին եթէ. 21. E աւետարան. | E քան. 22. C մերում. | E չունի հացալիցք. | Ղուկ. ԺԵ. 17. | E եկեղեցիյ քհային այք փխ. ի մէջ եկեղեցւոյ քահանայք. 23. E չունի և (երկրորդը). | E անմահական.

Digitized by Google

հակառն սեղանոյն և ի շնորհացն Աստուծոյ։ Եւ մեք զրկեալք ի քահանայութենէ և ի քրիստոնէութենէ։ Վա՜յ է մեզ և եղուկ մոլորելոցս թէ յորպիսի մեծութեանց յորքան աղքատութիւն անկաք, յորպիսի փարթամութեանց յորչափ անարգութիւն հասաք. յորդիութենէ Հօրն երկնաւորի զրկեցաք և ի մէջ այլազգեաց խոզարածք պանդխտեցաք, այսինքն մեղաց և աղտեղի գործոց։ Արդ երթիցուք առ Հայրն երկնաւոր, ոչ եթէ աղօթիւք կամ պահօք կամ տքնութեամբ, այլ արեամբ նահատակութեան, զի թերևս ընկալցի զմեզ և թողութիւն շնորհեսցէ յանցանաց մերոց։ Զանզի մեծ են յանցանք մեր, զի զբազումս գայթակղեցուցաք։ Եւ այս ցաւս այլ ուրուք ոչ բժշկի, բայց միայն հեղմամբ արեան մերոյ. զի մի ժառանգեսցեմք զպատուհասն աւետարանական հրամանին, որք զմի ի փոքրկանց գայթակղեցուցանեն։ Այլ որպէս տրտմեցուցաք զեկեղեցի Աստուծոյ, դարձեալ ուրախացուցանեմք չարչարանօք մարմնոյս մերոյ։ Զի որք սուգ զգեցան յուրացութիւն մեր, դարձեալ բերկրին ի նահատակութիւն մեր։

Յայնժամ արիացեալք ի շնորհաց Սուրբ Հոգւոյն վարդապետն Ստեփաննոս և քահանայն Պետրոս՝ զմիմեանս քաջալերէին անխախտելի մնալ ի սիրոյն և ի հաւատոյն Քրիստոսի և ոչ երկնչել ի մահուանէ։ Այլ որպէս միմեանց պատճառ ասեն գայթակղութեան, նոյնպէս լիցուք և փրկութեան. որպէս ասէ Սողոմոն՝ «Եղբայր յեղբօրէ օգնեալ որպէս զքաղաք ամուր»։

1. C չունի եւ ի շնորհացն այ. | E զրկեալ. 2. E այլ և քրիստոնէութենէ անաւանէ փխ. և ի քրիստոնէութենէ. | C չունի և եղուկ մոլորելոցս. 3. E որպիսի. C փարթամութենէ ի յաղքատութի անկաք փխ. մեծութեանց...հասաք. | E որքան. 4. E որչափ. 6. C այլազգաց. | E խոզարած զրօեցաք. 7. C չունի այսինքն ... գործոց. | C դարձցուք փխ. երթիցուք. 8. C մեր փխ. երկնաւոր. | C միայն փխ. եթէ. C և պահօք փխ. կամ պահօք կամ տքնութեամբ. 9. C նահատակութեամբ. E նահատակութբ. | E չունի զի. 10. C չունի զմեզ. C մեզ փխ. յանցանաց մերոց. 11. E եւ քանզի. 12. C չունի եւ այս ցաւս...ի նահատակութիւն մեր, այն է տող 12-18. 13. E յարեամբ. 19. E հոգոյն. 21. E հաստատեցին փխ. քաջալերէին. | C ի հաւատս և ի սէրն. 22. C չունի այլ որպէս...զքաղաք ամուր, տող 22-25. 24. E սողոմոն. | Առակ. ժԸ. 19.

Նստան երկոքեան ի քաղաքն Բաղէշ և գրեցին բանս հաւատոյ դաւանութեան ի սուրբ Երրորդութիւնն և ի մի աստուածութիւնն, այլ և ի մարդեղութիւնն Քրիստոսի Աստուծոյ և նախատինս ազգին Տաճկաց և օրինաց նոցա և առաջնորդին իւրեանց և ասէին թէ «Բեզար եմք յօրինաց ձերոց և ի կրօնից, և զՔրիստոս ճշմարիտ Աստուած դաւանիմք։ Եւ դուք սուտ էք և խաբեբայ և առաջնորդն ձեր որդի սատանայի և կարապետ Նեռինն, որ ինքն մոլորեցաւ և զձեզ մոլորեցոյց»։

Եւ յուղարկեցին զթուղթն ի Խիզան՝ մօտ ի դատաւոր քաղաքին. ապա և ինքեանք վարդապետն Ստեփաննոս և քահանայն Պետրոս ելեալ ի քաղաքէն Բաղէշու և մտեալ ի ճանապարհ՝ գնացին ի Խիզան. զերկիւղ մահու ի բաց եդին և օգնականութեամբ Որդւոյն Աստուծոյ՝ որպէս զանդամանդեայ վէմ հաստատեցան։ Եւ զմիմեանս քաջալերէին և յորդորէին ի ճանապարհին. «Երթամք, ասեն, գտանել զմարգարիտն մեր, զոր կորուսաք ի քաղաքին Խիզան։ Գնամք վառել զճրագն հաւատոյ՝ զոր շիջուցաք ուրացութեամբ։ Երթեալ գնեսցուք զանգին մարգարիտն, զակն պատուական, զի ծախեցաք ուրացութեամբ։ Երթիցուք գտանել զարծաթն հաւատոյ՝ զոր թաղեցաք ի հող անօրէնութեան։ Երթեալ կանգնեսցուք արձան հաստատութեան՝ զոր խախտեցաք գործով գայթակղութեան։ Գնամք ծածկել զհոտն գարշութեան՝ զոր սփռեցաք ի հոտոտելիս քրիստոնէից և փոխանակ նմին բուրեսցուք հոտ

1. E երկոքեանն. C չունի. 2. C չունի հաւատոյ. 3. E ա̃ծու̃ի. | E ի մարդեղութի. 4. C չունի աստուծոյ. | C այլազգեացն և ասեն թէ հրաժարեալ, փխ. ազգին տաճկաց...բեզար. 5. E յօրինանաց. 6. C չունի և (երկրորդը). 7. E դաւանեմք. | C չունի եւ դուք...մոլորեցոյց, տող 7-9. 8. E Նեռ. 10. E ուղարկեցին. | C ի Խիզան առ դատաւորն և ապա ինքեանք յետոյ գնացին փխ. ի Խիզան...վէմ հաստատեցան, տող 10-15. 14. E որդոյն. 15. E զանդամանդեա. 16. E և յորդէին. C չունի. | C և ասէին. երթամք գտանեմք. 17. C չունի ի քաղաքին Խիզան. 18. E վառեալ. C և վառեմք. C մեր, փխ. հաւատոյ. 19. C չունի երթեալ...գայթակղութեան, տող 19-23. E գնասցուք. 21. E թողեցինք. 22. E կանգնեսցուք. 24. C զհոտ. C ի մէջ հաւատացեալ փխ. ի հոտոտելիս. 25. C և գայթակղե-

Digitized by Google

*անմահութեան զբանս դաւանութեան՝ որ եղեալ տարածեցի յոլորտս տիեզերաց։ Մի երկիցուք ի մահուանէ՝ որ կենդանութիւն բերէ. մի զարհուրեսցուք ի տանջանացն՝ որ զպսակն պարգեւէ. մի երկմտեսցուք ի յուսոյն՝ որ առ Աստուած վերացուցանէ»։*

*Յայնժամ դնացեալ մտին ի վանքն Բարեձոր՝ որ է յանուն սրբուհւոյ Աստուածածնին, ուր էին մարմինք սուրբ նահատակացն Հապաչից քահանայիցն, որք առաջնորդութեամբ սուրբ Հոգւոյն և սիրով Որդւոյն միածնի և նախախնամութեամբ Հօրն երկնաւորի եղեալ յաշխարհէն իւրեանց և եկին ի սուրբ քաղաքն յԵրուսաղէմ և կատարեցին զուխտս իւրեանց և հասեալ յերկիրս Հայոց և շրջէին ի վանորայս։ Եւ յետոյ եկեալ ի քաղաքն Խիզան և անդ նահատակեցան ի ձեռաց այլազգեացն։ Զոր եկեալ քրիստոնէիցն բարձին զմարմին երկուց սուրբ քահանայիցն Հապաչ մարտիրոսացն. և տարեալ ամփոփեցին ի վանքն Բարեձորի, Գ և Հ թուականին Հայոց։*

*Իսկ վարդապետն Ստեփաննոս և քահանայն Պետրոս երկրպագեալ սրբուհւոյ Աստուածածնին և նշխարաց մարտիրոսացն՝ որ աստայք, և մնացեալ անդ աւուրս երեք և մեծաւ զղջմամբ և լալով խոստովանեցան և հաղորդեցան ի կենարար մարմնոյ և յարենէ Որդւոյն Աստուծոյ, յաւուր մեծի համբարձմանն Քրիստոսի։*

*Այս ասեն միաբանիցն՝ որ անդ էին, եթէ «Գնամք*

ցուցաք զնոսա. դարձեալ հաստատեսցուք զխախտեալսն ի հաւատոյն ի սէրն քո։ Եւ այսպիսի բարի խորհրդով, փխ. և փոխանակ... յայնժամ, տող 25-6. 3. E ի տանջանացն. 6. E չունի է. 7. E սրբուհւոյ. C որ. 8. C հապաչ կրօնաւորացն, զոր ի Խիզան սպանին և անդ բերեալ թաղեցին. և կացեալ նոցա անդէն, փխ. հապաչից ... մնացեալ անդ. այն է տող 8-20. 9. E հոգւոյն. E որդւոյն. 12. E զուխս. 15. E բ փխ. երկուց. 17. E թուականին. 19. E սրբբուհւոյ. 20. E չունի և մեծաւ ...լալով. 22. E ի փրկական փխ. ի կենարար. E արեան. CE որդւոյն. 24. ապա ասեն...և ասէին, այն է տող 24—էջ 253, տող 1 համառօտ C համառօտում է այսպէս. Եւ ասեն ցմիաբանս ուխտին. արարէք վասն մեր աղօթս, զի տացէ մեզ տէր արիութիւն համբերանել ի մարտս որ առաջի մեր կայ. զի պատճառ եղաք դայթակղութեան ամենայն քրիստոնէից. այժմ լիցուք պատճառ հաստատութեան հաւատոյ ամենայն հաւատա-

Digitized by Google

մեք ի տեղի նահատակութեան, ի յասպարէզն կատարման, ի հանդէսն քաջութեան, ի Թէատրոնն արիութեան. զի ուր մերկացաք զզգեստն պայծառութեան և զգեցաք զհանդերձն անօրէնութեան, դարձեալ անդ Թօթափեմք զարդն աղտեղութեան և զգենումք զպատմուճանն որ տուանց ապականութեան, զոր արեամբ մերով զարդարեմք ի գոյն վարդի։ Մեք եղաք պատճառ դայթակղութեան բազմաց, մեք լիցուք առիթ հաստատութեան քրիստոնէից։ Զի որք տրտմեալ էին վասն մեր ուրախասցին ազգ քրիստոնէից. և որք ուրախացեալ էին ի վերայ մեր սատանայ և կամարարքն իւր տրտմեսցին։ Այլ և դուք, հոգևոր եղբարք մեր, աղօթս արարէք վասն մեր և աղաչեցէք զԱստուած, զի տացէ մեզ՝ կարողութիւն համբերել չարչարանացն և արժան լինել ողորմութեան Նորա. քանզի դժար է կամաւ զմահ յանձն առնուլ։ Այլ դուք աղօթիւք օգնական լերուք մեզ. և մեք յուսալով ի խաչելեալն Քրիստոս և յանձն առնեմք ի Նա զանձինս մեր։ Եւ գնամք առաջի այլազգեացն և խոստովանիմք ի մէջ նոցա՝ զՔրիստոս Աստուած և Որդի Աստուծոյ։ Զի և Նա խոստովանեսցի զմեզ առաջի Հօր և հրեշտակաց սրբոց»։

Յայնժամ ելեալ ի վանացն և միաբանքն ամենայն լային զհետ նոցա. և բազում ողբովք և արտասուօք աղաչէին զԱստուած՝ օգնական լինել նոցա և տալ համբերութիւն։ Եւ մտին երկուքն՝ Ստեփաննոս և Պետրոս ի քաղաքն Խիզան և գնացեալ ի դուռն եկեղեցւոյն երկրպագեցին անդ և արտասուօք աղօթս մատուցանէին առաջի Աստուծոյ։ Եւ օրն էր ուրբաթ՝ ի 6 ժամու աւուրն։

Յայնժամ ելեալ գնացին ի մէջ քաղաքին, համար-

ցելոց։ Յայնժամ միաբանք սուրբ ուխտին բազում լալով և ողբալով յանձն արարեալ Աստուծոյ, ճանապարհորդեցին զնոսա։ Եւ նոքա գնացեալ ի քաղաքն Խիզան՝ աղօթեցին առաջի եկեղեցւոյն և երկրպագեցին։ Եւ էր օրն այն ուրբաթ՝ զոր ելեալ ի վեց ժամ աւուրն ի մէջ քաղաքին և աղաղակէին մեծաձայն և ասէին թէ. 7. E դայթագղութե. 8. E լիցեմք. 12. E եղբայրք. 18. E այլազգացն. 22. E արտասուօք. 25. E եկեղեցոյն. 27. E յաւուրն.

ձակ և բարձրաձայն աղաղակէին և ասէին. «Քրիստոս Աստուած է ճշմարիտ, լոյս ի լուսոյ, և Աստուած յԱստուծոյ, ծնեալ ի սուրբ կուսէն Մարիամայ, խաչեալ և թաղեալ և յարուցեալ ի մեռելոց և համբարձեալ փառօք յերկինս, նստեալ ընդ աջմէ Հօր. և դարձեալ գալոց է ի դատել զերկիր։ Ով որ զնա Աստուած դաւանէ, զկեանսն յաւիտենականս ժառանգեսցէ, և որք ոչ դաւանեն՝ զտանջանսն յաւիտենականսն ժառանգեսցեն։ Բայց դուք, ով անօրէնք, որդիք խաւարի և կորստեան, դուք և մոլորեցուցիչ առաջնորդն ձեր, զայս յայտնի գիտասջիք՝ զի դուք սուտ էք և մոլորեալ և մեք հրաժարեալ և բեզար եմք յօրինաց ձերոց, զոր խաբեաց զմեզ սատանայ։ Այժմ դարձեալ հաւատամք բոլորով սրտիւ ի Քրիստոս Աստուածն մեր, զի Նա է ստեղծօղ ամենայն արարածոց երկնի և երկրի, երևելեաց և աներևութից, տէր կենաց և մահու։ Զօր և այսօր մեք զանձինս մեր ի մահ մատնեմք վասն սիրոյ Նորա, զի արժանի լինիցիմք զնա տեսանել. զի ով որ զնա տեսանէ, ոչ է մեռեալ, այլ է միշտ կենդանի։ Զի և ինքն Քրիստոս Աստուած մեր թէպէտ և խաչեցաւ

3. E չունի սուրբ. 4. E չունի և (առաջինը). E չունի փառօք. 5. C չունի դարձեալ. 6. E ի դատաստան փխ. ի դատել զերկիր. E է դաւանեալ, զկեանքն յաւիտենական. 7. C ժառանգէ. | E յորք ոչ են դաւանեալ զտանջանսն անվախճան ժառանգեսցէ. 8. ամբողջ բայց դուք... և տպականի այն է տող 8— էջ 256, տող 21 հատուածը C համառօտում է այսպէս. զայս յայտնի գիտասջիք, զի մեք հրաժարեալ եմք ի ձէնջ և օրինաց ձերոց, զոր խաբեաց զմեզ սատանայ. հաւատամք ի կենդանի ածն մեր. զի զոր զկենդանի քան ած դաւանէ, զմահ մի տեսցէ, այլ զյաւիտենից կեանսն ժառանգեսցէ։ Եւ բազմութիւն այլազգեացն ժողովեցան և առեալ զնոսա ի մէջ՝ շողոքորթէին և ասէին. միթէ արբեալ էք և խելագարեալ, որ այդպիսի բանս խօսիք և նախատէք զմեզ և զօրէնս։ Յայնժամ պատասխանեալ սուրբքն ասեն. մեք ի յարբեցութենէ մեղաց՝ այժմ զթափեցաք. և ի խելագարութէ իմաստնացաք. և դարձեալ անմահական բաժակ արբաք՝ և զմայլեալ սարխօշացաք սիրովն քո։ Զի սէրն քո՝ կրկին վառեցաւ ի սիրտս մեր. և ոչ երկնչիմք ի մեռանելոյ՝ ոչ սրով՝ և ոչ քարով. ոչ հրով՝ և ոչ այլ ինչ տանջանօք. և արձակեցին զգօտիս իւրեանց. և հանեալ զհանդերձս իւրեանց ձգեցին ի նոսա. և ասեն. այս է օրէնքն ձեր սուտ՝ որ պիտի հնանայ և ապականի։ 15. E աներևոյթից.

և թաղեցաւ, այլ յարեաւ ի մեռելոց և է կենդանի յերկինս։ Եւ զդաւանողս իւր կենդանացուցանէ՝ աստ յուսով և արդարութեամբ, և անդ հոգւով և մարմնով և անճառ փառօք։ Իսկ մոլորեալ և մոլորեցուցիչ առաջնորդն ձեր ինքն մեռեալ է մեղօք և մարմնով և հոգւով ի յաւիտենից տանջանսն կայ և հետևողք նորա նման նմա լինելոց են. որպէս և Քրիստոսի հետևողքն Աստուծոյն մերոյ՝ նման Նորա»։

Եւ դարձեալ ի քրիստոնեայսն ասեն. «Լալի և եղկելի էաք ի մէջ աշխարհի և ոչ գիտէաք. այլ իբրև զարբեալ շրջէաք ի մէջ մարդկան կուրացեալ մտօք և գործով անօրէնութեան. այլ այժմ թափեցաք ի մէնջ զարբեցութիւնն զայն որ զեղխութիւն էր և անմտութիւն։ Եւ այսօր արբեալ սիրովն Քրիստոսի և մոռացեալ զսէր աշխարհիս և զոր ի սմա, այլ և զմարմինս մեր, զի ինքն Քրիստոս սիրեաց զմեզ և պարգևեաց զցանկալի օրս այս մեզ՝ որ է մեծ աւետիս հոգւոց մերոց։ Զի այսօր ուրախութիւն է և ի յերկինս՝ վասն մեր մոլորելոցս»։

Զոր յայնժամ դարձեալ ասեն քրիստոնէիցն. «Գնացէք ի մէնջ ի զատ, զի մի յորժամ զմեզ սպանցեն, զմաղձ դառնութեան չարեաց իւրեանց ի ձեզ թափեսցեն և ձեզ վնաս ածեն։ Այլ դուք աղաչեցէք զԱստուած, զի տացէ մեզ կարողութիւն համբերել չարչարանացս»։

Ապա երկոքեանն իբրև ի միջէ բերանոյ վարդապետն Ստեփաննոս և քահանայն Պետրոս աղաչէին զԱստուած և ասէին. «Ո՜վ Տէր Յիսուս խաչեալ թագաւոր, մի յիշեր զմեղս մեր՝ զառաջինս։ Այլ որպէս ընկալար կրկին զզղջումն Պետրոսի, որ դառնապէս արտասուեաց, ընկալ և այժմ զապաշխարութիւնս մեր որ զարիւնս հեղումք վասն Քո։ Եւ որպէս խաչակցին քում աւազակին ի մեծի ուրբաթին բացեր զդուռն դրախտին, վասն զի խոստովանեցաւ զքեզ արքայ և Տէր, եգիտ հովիւն քաջ Որդին Աստուծոյ և արժանաւորեաց այսմ հանդիսի և նահատակութեան զմեզ։

3. E հոգով. 4. E մոլորացիչ. 5. E հոգով. 16. E հոգոց. 22. E համբերեալ. 25. E յիշէր. 28. E հեղեմք.

Digitized by Google

Այսօր լուանամք զպատմուճանս հոգւոց մերոց արեամբ մերով յառաջին յանցանացն, զի արժանի լիցուք զՔրիստոս զգենուլ։ Այսօր զարդարեմք զմարմինս մեր կարմրագոյն արեամբ մեր, հարսնացուցանել փեսային երկնաւորի Քրիստոսի։ Այսօր աւետիս է մեզ, զի չարչարակից եղաք նահատակացն առաջին, մտցուք ընդ նոսա ի յառագաստ վերին։ Այսօր ցնծութիւն և ուրախութիւն է մեզ, զի ազատիմք ի վշտաց աշխարհիս և մտանեմք ի խորանն երկնային։ Այսօր առաւել խնդութիւն եղև մեզ քան զամենայն ժամանակս կենաց մերոց, զոր ապրեցաք յերկրի, զի զճշմարիտ կեանքն Քրիստոս տեսանեմք։ Բաց և մեզ յաւուր ուրախութեան զդուռն ողորմութեան քո, որ չարչարակից քեզ լինիցիմք, զի և փառաց քոց հաղորդս արասցես, վասն զի դաւանեմք զքեզ Տէր և Աստուած, ի յայսմ ատենիս։ Ո՜վ Տէր, դու լեր մեզ պարիսպ և° ապաւէն և ընկալ զոգիս մեր ի խորանս երկնից։ Զի ի քեզ յուսացաք և վասն անուան քո մեռանիմք»։

Յայնժամ դասք քրիստոնէիցն փախեան յահէ անօրինացն. և բազմութիւն այլազգեացն դիմեցին առ հասարակ ի վերայ նոցա. և առեալ կացուցին զնոսա ի մէջ իւրեանց բազմութիւն գայլոց զերկուս գառինան՝ զՍտեփաննոս և զՊետրոս, որ հանդերձեալ էին զինքեանս պատարագ մատուցանել Աստուծոյ։ Խօսել սկսան առ նոսա ազգ անօրինացն և ասեն. «Միթէ արբեա՞լ էք կամ խելագարեալ, որ այդպիսի բանս խօսիք և նախատէք զմեզ և զօրէնս մեր և զառաջնորդն և ձեր անձինդ մահ կամենայք»։

Յայնժամ պատասխանեալ սուրբքն ասեն. «Ո՜վ անզգամք և անմիտք, որդիք կորստեան և զաւակք սատանայի. դո՛ւք էք խելագար և արբեալ անօրէնութեամբ։ Մեք այժմ թափեցաք ի մէնջ զարբեցութիւն մեղաց և իմաստնացաք ի խելագարութենէ։ Եւ դարձեալ նոր գինի եմք արբեալ և սարխօշացեալ սիրով Յիսուսի Քրիստոսի

1. E հոգւոյ. 5. E զմեզ. 8. E ի վըշտաց. 10. E երկրի. 11. E տեսանեմ. 17. E մեռանիմ. 21. E զբ. 24. E արբել. 25. E այսպիսի. 27. E առէին.

Որդւոյն Աստուծոյ, զոր կորուսեալ էաք զսովորական գինին մեր զբաժակն անմահութեան և այսօր գտեալ արբաք, էնց որ այլ ոչ ըմպանամք։ Եւ մինչև ցայսօր թէպէտ և կենդանի էաք մարմնով, այլ մեռեալ էաք հոգւով։ Այլ այժմ թէպէտ և մեռանիմք մարմնով, այլ հոգւով և արդարութեամբ կենդանանամք ընդ կենդանւոյն Քրիստոսի Աստուծոյն մերոյ։ Այլ դուք թէպէտ և մարմնով կենդանի երևիք, այլ սաստ հոգւով էք մեռեալ և անդ հոգւով և մարմնով զդժոխքն յաւիտենից ժառանգէք և զթանձրամած խաւարին և զանքուն որդն և զտարտարոսն և զլալ աչացն և զկրճտել ատամանցն։ Եւ մեք ոչ երկնչիմք ի յահէ ձերմէ, և ի սոյն տանջանացն՝ զի էնց հալալ էնք հագել ի հոգիս մեր՝ զսէրն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ ոչ ի սոյն վախենամք և ոչ ի քարէ և ոչ ի հրոյ և ոչ ի մահուանէ։ Այլ և զայս գիտասջիք զի Մաշային լաւ է մեր քան զօրէնքն ձեր և զխաբեբայ առաջնորդն, զի նա կորեաւ և զձեզ կորոյս»։

Եւ առեալ զգօտիս իւրեանց ընկեցին առաջի նոցա և զհանդերձն հանեալ և ասեն. «Այս է օրէնքն ձեր սնոտի. առէք ի ձեզ, զի օրէնքդ ձեր այդ հանդերձիդ նման է, որ պիտի հնանայ և ապականի»։

Յայնժամ մռմռեալ նոցա որպէս զարիւնարբու գազան և դիմեցին ի վերայ Պետրոս քահանային բրով և հարեալ կոտորեցին զբազուկս նորա և ընկեցին ուշաթափ. և նա զօրացեալ շնորհօքն Աստուծոյ՝ ելեալ կանգնեցաւ ի վերայ ոտից իւրոց և բարձրաձայն ասաց. «Ո՛վ վարդապետ, զի՞ յապաղես, տես զի ահա Քրիստոս եկեալ կոչէ զմեզ»։ Եւ վարդապետն եւս առաւել զօրացաւ ի պա-

1. E որդոյն. 4. E հոգով. 5. E մարմով. | E հոգով. 6. E կենդանոյն. 7. E մարմով. 8. E հոգով. | E հոգով. II. E զկրճըտել. 15. E զայսն. 19. E չունի է. 20. E չունի սնոտի. 21. E նըման. 22. E նցյ, բայց յետոյ ուղղած նք. E արիւնարբու. 23. E նց և բրով հր" ի զբազուկն պտրս քհնային և կտրեցին և ընկեցին զնայ փխ. պետրոս...ընկեցին. 25. E ի շնորհացն. | E կանկնեցաւ. 26. E ասէ բարձրաձայն. 27. E ապաղես. E ահայ. 28. C չունի և վարդապետն...ի պատասխանիսն.

Digitized by Google

տասխանեան։ Ու նոյն ժամայն սրով և փայտիւ զՊետրոս քահանայն նահատակեցին ի նոյն տեղին և ի վարդապետն խնայեցին, զի Թերևս երկնչի և Թուլանայ ի հաւատոցն։ Իսկ վարդատիպ պատկեր վարդապետին պայծառացաւ որպէս զանուանակցին իւրոյ Նախավկային և սկսաւ յանդիմանել զմոլորութիւն նոցա և զանօրէնութիւն, որպէս Նախավկայն զազգին Հրէից։

Յայնժամ եհար դատաւորն ապտակ ի գլուխ վարդապետին։ Ու վարդապետն ոյժ առեալ յԱստուծոյ և պնդեալ զբերան՝ եհար ուժգնակի ձեռամբն յերեսս դատաւորին։ Իսկ բազմութիւն Արապնոյն դիմեցին ի վերայ կացնով և Թրով, քարիւ և փայտիւ. անդ կատարեցին զնոսա զերկոսեանն, պատուական քահանայն զՍտեփաննոս և զՊետրոս, զնորաբողբոջ ծաղկունքն, զլուսափայլ աստղունքն, որ նոր լուսաւորեցին զեկեղեցիս Հայաստանեայց, զանշիջանելի ճրագունքն որ բարձրացան յաշտանակի ի մէջ քրիստոնէից, զքաղցրահամ աղբերակունս՝ որք կակղացուցին բղխմամբ արեան իւրեանց զկորդացեալ և զչորացեալ միտս բազմաց և պտղաբերեցին յաստուածպաշտութիւն։

Ընդ որս և մի ոմն Ստեփաննոս անուն, որ և նա տաճկացեալ էր, յորժամ լուաւ զնահատակութիւն անուանակցին իւրոյ՝ զՍտեփաննոս վարդապետին և զՊետրոս քահանային, և նա հաստատեցաւ կրկին յառաջին հաւատն

1. E եւ զքհնայն պետրոս նահատակեցին և ի նա խնայէին և ողոքէին. Թէրևս. փխ. եւ նոյն ժամայն...Թերևս. 4. E վղտն և վարդատիպ պատկերն պայծառացեալ կերպարանօք ոպ զանուանակիցն իւր զնախավկայն զստեփաննոս։ Սկսաւ անդիմանել՝ փխ. վարդատիպ ...յանդիմանել. 6. C չունի և զանօրէնութիւն. 7. C զազգն. 9. E և նա ուժ առեալ ի շնորհացն այ. 10. E չունի ուժգնակի. | C յերեսս. 11. E բազմութին անօրինացն. | E ի վր նր։ Եւ. 12. E զանակով և քարով. և թրով. փխ. քարիւ և փայտիւ. | C չունի անդ. 13. C չունի զնոսա. | E գ.բ. | C զնորաբողբաջ ջահսն որ լուսաւորեցին զհաւատացեալսն քր. և զկորդացեալ միտս մարդկան դարձեալ փխ. պատուական...բազմաց և, այն է տող 13-19. 18. E արեամբն. 19. E զչորարացեալ. | E պտաբերեցին. 21. C ստեփանոս. | E անուամբ. | E նա. 22. E լսեց. 23. E ստեփաննոս. | E չունի և զպետրոս քահանային. 24. E նա. | C չունի կրկին.

իւր՝ ի քրիստոնէութիւնն։ Զոր կալեալ անօրինացն յետ ինն աւուր նահատակութեանն սոցա՝ յերկիրն Խորձայ՝ ի գեօղն որ կոչի Սորբ և շատ ողոքեցին սիրով ոչ դառնալ ի տաճկութենէ և ոչ կարացին խախտել զնա ի հաւատոյն Քրիստոսի, զցանկալի վկայն զՍտեփաննոս։

Ապա սկսան ի չարչարել և նա ասէ. «Ես քրիստոնեայ եմ և զՔրիստոս Աստուած հաւատամ, զի նա է արարիչ երկնի և երկրի։ Եւ ես ի մահուանէ ոչ երկնչիմ, զի զկենդանին Քրիստոս տեսանեմ։»

Եւ մայր նորա՝ քաջահաւատ և երկիւղած յԱստուծոյ՝ ի բաց եդեալ զկանացի տկարութիւնն, եկեալ դէմ որդւոյն և ասէր. «Սիրելի և քաղցրիկ որդեակ իմ, սակաւ մի համբերէ և հասանես անճառ փառացն և աստուածայինն տեսոյն. ի յաշխարհս բարի անուն ժառանգես և յուրացութենէ ազատիս, ի մարտիրոսաց դասն խառնիս և յերկնից արքայութիւնն մտանես։»

Այս բարեպաշտ կինս նման եղև նախնոյն Շամունէի, կնոջն պատուական և աստուածասիրին, որ զեօթն որդիսն յորդորեաց ի չարչարանս, ոչ ելանել յօրինացն Մովսէսի։ Եւ մօրն Կիւրղի հայրապետին՝ Սրբուհւոյն Աննայի և ողջախոհութեանց ծնօղին մեծին Գայիանեայ, որ զՀռիփսիմէ խրատէր պինդ կենալ և ոչ լսել կամաց թագաւորին։ Այլ և մօրն Մելիտոնի, որ էր ի քառասնիցն։ Նոյնպէս և հաւատարիմ կինն մայրն Ստեփաննոսի խրատէր զորդին անխախտելի մնալ ի քրիստոնէութեան հաւատոցն։

1. E այսինքն փխ. իւր. | E կալեալ զնա. 2. E յաւուր նահատակութենց. | E խորձայ. 3. C սորբ կոչի. | E չունի սիրով. 4. C ի տաճկութենէն. | E խաբանել փխ. խախտել զնա. 5. C վկայն քր. 6. C որ ասէր, փխ. ապա ... ասէ. | E չունի ես. 7. E դաւանեմ փխ. հաւատամ. 8. E երկնին. | C և սկսան չարչարել զնա, փխ. Եւ ես ...տեսանեմ. 10. E մայրն. 11. E տկարութի. | CE որդոյն. 12. E ասէ. | C քաղցր. 13. E հասանիս. | E փառաց. 14. E սիրոյն. ի աշխարհս փխ. տեսոյն ...բարի. | E ուրացութենէ. 15. E երկնից արքայութի. 17. C մօրն շամոնեայ, փխ. Նախնոյն...մովսէսի, տող 17-19. 20. E սրբուհոյն. | C չունի սրբուհւոյն աննայի. | C ողջախոհեաց. 21. C գայիանեայ, փխ. մեծին... թագաւորին. 23. E մէլի տոնի. C մելիտոնին. | C խրատեցին զորդիս իւրեանց արիաբար մեռանել վասն հաւատոց և սի-

Digitized by Google

Իսկ բազմութիւն այլազգեացն յորժամ տեսին թէ ոչ կարացին դարձուցանել զնա ի հաւատոցն Քրիստոսի, յայնժամ որպէս գազան յարձակեցան ի վերայ Ստեփաննոսին և նահատակեցին։

Եւ եկեալ քրիստոնէիցն բարձին զպատուական մարմինն հրաշագեղ և քաջ նահատակին նոր վկային Ստեփաննոսի և եդին ի գերեզմանի՝ ի գեօղն Սորբ, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

Իսկ զցանկալի վկայքն Քրիստոսի՝ զմարդապետն Ստեփաննոս և զքահանայն Պետրոս յորժամ նահատակեցին ի Խիզան քաղաքին, առեալ անօրինացն զպատուական մարմինս նոցա և հանեալ ի քաղաքէն ի դուրս առ ի յայրել։

Եւ քրիստոնեայքն 15,000 դրամ տուին կաշառ և ոչ կարացին առնուլ զպատուական մարմինս նոցա։

Ապա ժողովեցին այլազգիքն շատ փայտ և վառեցին հուր, և արկին զսուրբսն անդ, և այրեցաւ փայտն և շիջաւ հուրն և ոչ այրեցան մարմինք նոցա։ Յայնժամ հանին ի հրոյն և մասն մասն կտրատեցին և ընկեցին ի կրակն. և ժողովեցին այլ փայտ և այրեցին։ Իսկ մաքուր հոգիք նոցա վերացան յերկինս և խառնեցան ի դասս հրեշտակաց, անդ ուր ժողովք մարտիրոսացն են և խումբ նահատակացն։ Եւ բուրեաց հոտ անուշութեան նոցա յոլորտս

րոյն որ առ ած. փխ. էր ի քառասնիցն...հաւատոցն, տող 23-25. 1. C այլազգացն. | E չունի տեսին թէ. 2. E հաւատոցն. | C ի քսէ. դիմեցին իբրև զկատաղի գազան ի վերայ նորա՝ նահատակեցին զնա, փխ. ի հաւատոցն... նահատակեցին. 3. E արձակեցան. 5. C մարմին նորա, փխ. մարմինն...ստեփաննոսի. 6. E քաջ. 8. C չունի աստուծոյ մերոյ. 9. E չունի քրիստոսի. 10. E պէտրոս. 11. C ի հիզան. | C չունի քաղաքին. | C այլազգեացն. | E զպատուական. C չունի. 12. C չունի մարմինս նոցա. | C տարան, փխ. ի դուրս առ. 14. E տուին. | C և ժողովեալ բազում փայտս և վառեցին ի վր նց և փայտն այրեցաւ և մարմինք սրբոցն մնացին անկիզելի. զոր հանեալ ի հրոյն՝ մասն մասն կտրատեցին և ձգեցին ի կրակն և շատ ջանացին, փխ. եւ քրիստոնեայքն...այլ փայտ, տող 14-20. 22. C չունի անդ ուր...նահատակացն. 23. E բուրեցաւ. | E անուշութի.

Digitized by Google

տիեզերաց, քանզի հոգևոր վարդ փթթեցան նոքա ի մէջ Հայաստան աշխարհիս։ Զի որպէս վարդն ի փշոց մէջ կարմիրանայ, նոյնպէս և սոքա կարմրացան ձեռամբ անօրինացն, որք փուշք և խոցոտիչք են քրիստոնէից։ Եւ որպէս վարդն ի ցած տեղ բուսանի և ոչ ի բարձր ծառ, այսպէս և սուրբքս Աստուծոյ և ցանկալի վկայքս խոնարհեցան ի չարչարանս և զմահ յանձն առին և ապա պայծառագոյն երևեցան։ Եւ որպէս գոյն վարդին սպիտակ լինի, կարմիր և դեղին, այսպէս սոքա կարմրացան մարմնով չարչարանօք, այլ և վառեցան սիրովն Աստուծոյ և տգեղացեալ դեղնեցան յոյժ վշտալից նահատակութեամբ, և սպիտակացեալ պայծառացան հոգիք նոցա անճառ լուսով և յանթառամ պսակացն։ Եւ դարձեալ վարդն թէպէտ և ի տեղացն պակասի, հոտն ի տեղն կու մնայ, այսպէս և սուրբքս թէպէտ և մարմնով ի մէնջ բաժանեցան, այլ հոտ շնորհաց և քաղցրութեան սոցա ելից զՀայաստան աշխարհս։ Եւ որպէս վարդն մաղձուն և չարպաթ լինի հիւանդաց, այսպէս և նահատակութեամբ հեղումն արեան սոցա դեղ և բժշկութիւն է մեզ տօնօղացս զօր յիշատակի սոցա ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

Կատարեցան քաջ նահատակքն Քրիստոսի՝ վարդապետն Ստեփաննոս և քահանայն Պետրոս՝ ի թուականիս Հայոց Պ և ՀԳ, յունիս ամսոյ 2, յաւուր Համբարձմանն ուրբաթու, զի կատարումն սոցա եղև աստ։ Եւ մեք գրեցաք յահեկի ի Դ, յաղագս լսելոյ քրիստոնէից։

Արդ՝ որք կարդայք յիշեցէք յաղօթս ձեր զԱռաքել վարդապետս՝ զյարմարող ճառիս և զծնօղսն իմ։

1. E վարթ. 2. C հայաստանեաց. | C չունի զի որպէս...աստուծոյ մերոյ, այլ է տող 2-20. 18. E նահատակութիւն. 22. E իթվնիս. 23. C մերում. | C յունիսի. | C չունի յաւուր...քրիստոնէից. 26. C հանդիպիք. | C զյարմարող պատմութեանիս զառաքել վարդապետն բաղիշեցի, փխ. զառաքել ... իմ. 27. E վդայպտս.

Digitized by Google

Սոյն վկայաբանութիւնն ունին միայն C և E ձեռագրերը. առաջինը էջ 775′—779′ Արեգ գ, Մարտ 14, Նախահարց Աղամայ, Ենովսայ եւն պատմութիւնից յետոյ, այս վերնագրով. «Ցայսմ աւուր վկայաբանութիւն Ստեփաննոս վարդապետին և Պետրոս քահանային»։ Իսկ երկրորդը՝ որ շատ աւելի ընդարձակ է քան առաջինը, էջ 836 ա″—843 բ′, Ահկի 4 և Ապրիլ 11՝ Ս. Արտեմանայ եպիսկոպոսի վկայաբանութիւնից յետոյ՝ հետևեալ վերնագրով. «Ցայսմ աւուր վկայաբանութի Նոր Նահատակացն Ստեփաննոս վղպին. և Պետրոս քհին որ ի Խիզան քաղաքն կարցն ի Քս։»

Վկայաբանութեան վերջի յիշատակութիւնից յայտնի երևում է թէ նահատակութիւնը կատարուել է ՊՀԳ յունիս 2-ին, Ս. Համբարձման տօնի յաջորդ ուրբաթ օրը։ Հայոց ՊՀԳ թուի Նաւասարդ 1-ը քրիստոնէական 1423 թուականի դեկտ. 6-ին գալով, նահատակութեան թուականը կը լինի շարժական տոմարով ՊՀԳ արաց ԻԹ=1424 յունիս 2, կամ անշարժ տոմարով ՊՀԳ Մարերի Իէ։ 1424 թուի տարեգիրը 8 լինելով, նոյն տարւայ Զատիկը գալիս է ապրիլի 23-ին, որով և Համբարձման տօնը յունիսի 1՝ հինգշաբթի։ Այսպէսով վկայաբանութեան մէջ նշանակուած թուականը կատարելապէս ստուգուած կը լինի։

Հարկաւոր է նաև մի փոքրիկ բացատրութիւն տալ վկայաբանութեան վերջի «ղի կատարումն սոցա եղև ասա։ Եւ մեք գրեցաք յահեկի ի դ, յաղագս լսելոյ քրիստոնէից» տողերին։

Այս խօսքերով վկայաբանութեան հեղինակը՝ Առաքել Բաղիշեցի՝ տալիս է գրութեան ժամանակը. նա ուզում է ասել որ թէև նահատակութիւնը կատարուել է ՊՀԳ արաց ԻԹ=1424 յունիս 2-ին, բայց ինքը այն ժամանակ մտադրուած չի եղել սրբերի նահատակութեան պատմութիւնը գրելու։ Քիչ ժամանակ յետոյ քրիստոնեաները խնդրում են իրանից այդ աշխատութիւնը, Առաքել Բաղիշեցին զիջանում է նոցա խնդրքին և գրի է առնում սրբերի կեանքը՝ ահեկի 4-ին, այն է ըստ շարժական տոմարի 1424 օգոստոսի 6 կամ ըստ անշարժ տոմարի ապրիլ 10 (նահանջը նկատի չունենալով ապրիլ 11)։

Բնագիրը վերականգնելու համար մենք առհասարակ հեռացել ենք E ձեռագրէն, որ շատ աւելի ընդարձակ է քան C, համարելով թէ պահած է աւելի նախնական խմբագրութիւնը: Այս կէտը վերջին անգամ հաստատւում է թուականի խնդրով, երբ նկատենք թէ E համաձայն բնագրին վկայաբանութիւնը զետեղում է ահկի 4-ին, մինչդեռ C դնում է արեգի Զ=մարտ 14:

## 38.

### ԹՈՎՄԱ Ի ՊՈՒՏԼԻԿ ՎԱՆԱՑ

† 1423 մինչեւ 1425 (?).

Եւ յառաջ քան զայս (=յառաջ քան զնահատակութիւնն Ղազարայ վարդապետի Բաղիշու) երից և չորից ամաց՝ վարդապետ մի Թովմա անուն՝ աշակերտ Սիմէոնի վարդապետին Ուշտունեաց, գիտակ Մանր ուսմանց, սիրող սրբութեան եւ աղօթից՝ ի սուրբ ուխտէն Պուտլիկ Վանաց, նետիւ հարեալ սպանին։

Այս վկայաբանութիւնն ունի Թովմա Մեծոփեցի․ Փարիզ․ էջ 44։ Հմմտ․ նաև Զամչեան, Գ․ 452, որը հաշուում նահատակութեան թուականն է 1424 կամ 1425։ Թովմա նահատակի թուականը ըստ Մեծոփեցու Պատմութեան այնքան էլ որոշ չէ, և պատմագիրն ինքը խոստովանում է այդ՝ վկայաբանութեան վերջում աւելացնելով․ «Դու անմեղադիր լեր զի ծեր էի եւ յետ 50 ամացս սկսայ․ վասն այսորիկ յետ եւ յառաջ գրեցի» (Թ․ Մեծոփեցի, էջ 44)։

Digitized by Google

## 39.

### ԳՐԻԳՈՐ ԽԼԱԹԵՑԻ

† ՊՀԵ=1426 *մայիս* 19 *կիր.*

Այս *երջանիկ և երանելի, աստուածահաճոյ և աստուածապարփակ, երանաշնորհ քարոզս կենաց և կենդանի նահատակս՝ սուրբ վարդապետս Գրիգորիոս, էր սնեալ և վարժեալ ի գործ քահանայութեան առ սուրբ ճգնաւորի միոյ Վարդան կոչեցեալ՝ որ հնգետասան ամ յանապատի էր բնակեալ առ մեծ վարժապետն Տիրատուր։ Եւ յետոյ եկեալ էր բնակել ի հռչակաւոր ուխտն սրբոյն Ստեփաննոսի՝ Ցիպնավանք կոչեցեալ՝ յերկիրն Արծկոյ քաղաքին։ Առ որ գնացեալ երջանիկս Գրիգոր և ցանկացեալ առաքինասէր վարուց նորա և առ նմա կեցեալ ամս վեց և աշակերտեալ նմա և օրհնութիւն ի նմանէ ընկալեալ իբրև զօրհնութիւն Աստուծոյ։ Եւ էջ հանգեաւ ի վերայ նորա*

1. r *երանելի և երջանիկ.* | M *չունի ածապարփակ.* 2. M *շնորհալի փխ. երանաշնորհ.* | T *քարոզն.* 3. M *գրիգորիոս սուրբ վարդապետս.* | M *էր սա.* 4. r *կրօնաւորական ժուժկալութք առ ճգնաւոր կրօնաւոր մի փխ. ի գործ...միոյ.* 5. CT *հնգէտասան.* | M *յանապատին.* 6. M *վրդպտն.* 7. M *բնակել.* T *բնակիլ.* | C *ի հռչակաւոր.* | r *վանսն ցիպնայ փխ. հռչակաւոր ... քաղաքին.* 8. M *ցիպանա.* T *ցիպնայ փխ. ցիպնավանք.* | MT *չունին յերկիրն արծկոյ քաղաքին.* 9. *առ որ...վեց և հատուածը ունի միայն* r. *իսկ միւսները այս ամբողջին տեղ ևս վեց ամս.* 11. r *ընկալեալ ի նմանէ.* M *ի նմանէ առեալ.* 12. r *զահութիւս.* | M *յայ.*

Հոգւոյն Սուրբ, հոգւոյն հեզութեան և խոնարհութեան. մինչ զի լուսաւորէր զամենայն բնակիչս գաւառին իմաստութեամբ և ուսմամբ՝ իբրև զկատարեալ վարդապետ։ Եւ հարկեալ յուսումնասէր եղբարց երթալ առ մեծ վարդապետն Յոհաննէս Որոտնեցի՝ մականուն Կախիկ՝ կախեալ ի սէրն Յիսուսի. և ութն ամ վարժեալ և սրբեցեալ ի նմանէ՝ ուսումնակից իւր ունելով զհամանունն Գրիգոր և զերկրորդ լուսաւորիչն Հայոց սուրբ առաքելոյն Ստաթէոսի։

Եւ յետ մահուան մեծին Յոհաննու Որոտնեցւոյն և աւերման վերին աշխարհին ի չար բռնաւորէն Թամուր կոչեցեալ, եկն դարձեալ ի բնիկ գաւառն իւր՝ առ մեծ վարժապետն Սարգիս՝ յերկիրն Քաջբերունեաց՝ ի հռչակաւոր և յաստուածաբնակ ուխտն Աստուածածնի՝ որ Սուխարավանք վերակոչի։ Եւ անդ վարժեալ և բազում աշխատութեամբ դեգերեալ՝ ընկերակից իւր ունելով զմեծ ճգնաւոր վարդապետն Վարդան Հոգեաց Վանացն, որ յետոյ յաջորդեաց զաթոռ վարդապետութեան երանելոյն Սարգսի։

Եւ տասն ամ առ նմա յամեալ՝ ընկալեալ ի նմանէ զաստիճան վարդապետութեան և լուսաւորէր առհասարակ զամենեսեան իմաստութեամբ և ընթերցմամբ, գրելով

1. T հոգի հեզութեան. C հոգին զօրութե. | M չունի և խոնարհութեան. | r և եղև քաջուսումն ի գիրս աստուածային և ի յարուեստ գրչութեան արագ և առատամիտ և զամենայն զոր վաստակէր գրչաւ աղքատաց բաշխէր և ապա աղաչեցեալ եղև փխ. մինչ զի ... և հարկեալ. 3. MT իբր. 4. C ուսումնասէր. | r գնալ. | CM վարժապետն. 5. r յոհանէս. | Tr որոտնեցին. 6. C այ փխ. յիսուսի. | r չունի և (ո.-ր). | M սրբեալ. 7. T արարեալ փխ. ունելով. | C զհամանուն. | r զմեծն գրգր տաթևացին զլուսատու ջահն վզպաց, փխ. զհամանունն ... ստաթէոսի. 8. M ստաթէի. T ստաքէոսի. 9. r յոհաննու. | C որոտնեցոյն. M որոտնեցւոյ. T որոտնեցոյ. 11. r զանէն փխ. կոչեցեալ. | r յերկիրն քաջբերունեաց ի վանքն սուխարայ առ մեծ վզպն սարգիս. և ժամ առ նմա վարժեալ փխ. առ մեծ...դեգերեալ. 12. T վզպն. | T ի յերկիրն. | T քաջբերունեայ. 13. T սուխարայ վանք. 14. T Ե. 15. r զճգնաւոր. փխ. զմեծ ճգնաւոր. 16. CMTr հոգեց. | T վանաց. 17. r սրբոյն փխ. երանելոյն. 19. r և ապա ընկալեալ ի մեծէն սարգսէ փխ. և տասն ...ի նմանէ. 20. C զամենեսեան առհասարակ. 21. r ընթերցմամբ և ուսմամբ, փխ. իմաստութբ և ընթերցմամբ.

Digitized by Google

և կարդալով. գանձով և տաղով. մինչ զի ոչ երևէր թէ երկրաւոր էր առնայնն, այլ զերկնայնոցն նմանութիւն յինքեան ունէր։ Եւ առեալ հրաման ի վարժապետէն իւրմէ դաս առնել և աշակերտ ժողովել. և նա ելեալ բնակեցաւ յերկիրն Բզնունեաց՝ ի քաղաքն Արծկէ, ի սուրբ ուխտն Ստեփաննոսի Նախավկային, ի վանսն Ցիպնայ, յառաջին տեղին իւր։

Եւ ժողովեցան առ նա բազումք ի կրօնաւորաց և յուսումնասէր եղբարց. և մխիթարէր զնոսա անճառելի և անպատմելի մխիթարութեամբ, Աստուածաշունչ գրոց գիտութեամբ և Հնոց և Նորոց իմաստութեամբ, յորդորելով զամենեսեան ի ճշմարիտ հաւատս ուղղափառութեան և ի գործս առաքինութեան։ Այլ և զյիմարս իմաստնացուցանէր, զտգէտս ի գիտութիւն Տեառն կոչէր, զգերիս ազատէր, զմերկս զգեցուցանէր, զհիւանդս հոգւով և մարմնով սփոփէր, զսգաւորս մխիթարէր, զաղքատս կերակրէր, և անհանգիստ տքնութեամբ ի գիշերի և ի տուընջեան ձեռօք իւրովք վաստակէր ի գիրս գրչութեան, և ի տնանկս կարկառէր և ամենեցուն բաղձալի լինէր՝ Աստուծոյ, հրեշտակաց և մարդկան, հաւատացելոց և անհաւատից, մինչ զի երանի տային տեսողքն ի յայլազգեաց ազգիս մեր Հայոց՝ որ այնպիսի առաջնորդ ունին։

Այլ և Երկրորդ Վկայասէր անուանեցաւ ի վերջին ժամանակիս և յետին դարուս. զի ժողովեաց գիրս բա-

1. r չունի գանձով...յինքեան ունէր, տող 1-3. 2. M առեան. | C նմանութե. 4. r աշկերտ ժողովել և դաս առնել. | r չունի նա. | T չունի բնակեցաւ յերկիրն. 5. C բզնունեց. T ի բզնունեաց. | T քաղաքն. 6. M T չունին Նախավկային...տեղին իւր. C որ կոչի ցիպնավանք. 9. r զամեն և յորդորէր ի փխ. զնոսա...ի ճշմարիտ, տող 9-12. 10. T խնդութբ փխ. մխիթարութ. | C յածաշունչ. 11. T յորդերելով. 12. r ուղափառութե. 13. r չունի այլ և. C այլ. | r զյիմարսն 14. r զտգէտսն. | այս ամբողջ զգերիս...այլ և հատուածին տեղ՝ այն է տող 14-23, r ունի համառօտ «և առհասարակ զամեն լուսաւորէր.» 17. C տքնութբ. 19. M յայ. 21. MT ազգիս մեր տեսողքն ի յայլազգեաց (T չունի ի). 22. MT չունին Հայոց ...առաջնորդ ունին. 24. r չունի և յետին դարուս. | C դարոյս. | r պատմութիւս բազմ ի մերոց գրոց, փխ. գիրս ... ի մերոց.

Digitized by Google

զամս ի մերոց և յօտարաց, զհնացեալս և զեղծեալս, և զծածուկ և զանյայտ պատմութիւնս ամենայն սրբոց ի խաւարէ ի լոյս ածեալ և արար զգիրս Յայտնութեանց։

Այլ և ժողովեալ զյառաջագոյն զանձերան յառաջին վարդապետացն՝ զոր անընդունակ և անպէտս անկեալ կայր, և սրբագրեալ ճարտարաբանեաց և արար զգիրս Գանձարանին, տաղով և մեղեդով, յուրախութիւն և ի ցընծութիւն մանկանց եկեղեցւոյ. և այնպիսի անուշաձայն եղանակաւ պայծառացոյց զդրունս սուրբ եկեղեցեաց, մինչ զի լուսեղէն զուարթնոցն պարակցութիւն ի յերկրի երեւէր, և զի ոչ էր եղեալ այնպիսի ուրախութիւն հոգևոր եկեղեցեացս հայաստանեայց յաւուրս մերոց իշխանացն և թագաւորացն։ Եւ զամենայն խորին և զանհասականալի բանս քերթեալ եհան ի միջոյ. և պարզ և յստակ գրեաց զպատմութիւնս սրբոց. և զամենայն աստուածաշունչ գրեանս զթարգմանեալսն ի սրբոց թարգմանչացն կրկին յղկեաց և եբաց զմիտս գրոց սրբոց, առ ի հասկանալ ամենայն ումեք։ Եւ այնպէս փոյթ էր ի գրչութիւնն, մինչ զի ի գիշերի և ի տուընջեան անխափան էր ձեռն նորա ի գրելոյ. և անչափ և անհամար գրեանս գրեաց և բաշխեաց ի դրունս եկեղեցեաց, և զորս վաճառէր, առեալ զգինսն բաշխէր աղքատաց և կարօտելոց։ Զմերկան զգե-

1. C չունի և զծածուկ. 2. r չունի ամենայն. 3. CMT յայսմաւուրաց յուրախութիւն և ի ցնծութիւն ամենայն եկեղեցւոյ մանկանց. 4. այլ և ժողովեալ...լինելով հատուածը, այն է տող 4-էն 268 տող 7 ունի միայն r. իսկ CMT ձեռագրերում են հետեւեալ եղանակով. C ունի այլ և երգեաց յիւրում հոգիազարդ մտացն բազում գանձս և տաղ. և զյառաջագոյն ... ցեալսն ի հնոցն սրբագրեալ և ի յոտն հանեալ արար դիւրայարմար երգեցողացն. և եդ ի տուփ գանձարանին զիւրաքանչիւրն յիւրում տեղին՝ զորս ի տօնս տէրունականս և զորս ի պատիւ սրբոցն Աստուծոյ, յուրախութիւն և ի ցնծութիւն սօնասէր անձանց։ Իսկ MT ունին աւելի համառօտ՝ Եւ լուսաւորեալ պայծառացոյց զվերին կողմանս և զներքինս և զամենայն եկեղեցիս հայաստանեաց. սրանից յետոյ CM T միասին շարունակում են մինչ զի ոչ էր եղեալ այսպիսի ուրախութիւն հոգևոր ազգիս մեր հայոց (MT չունին հայոց) յաւուրս մերոց թագաւորացն (M թագաւորաց) և իշխանացն։ 10. r զլուսեղէն. 12. r մերոյ. 14. r յըստակ.

Digitized by Google

ցուցանէր, որբոց և այրեաց խնամ անէր, զգերիսն ազատէր և զտնանկսն լցուցանէր։ Եւ այնպէս էր սովորութիւն նորա՝ որ համարով ոչ տայր զողորմութիւն, այլ զոր ինչ առ ինքն ժողովէր՝ ի մի տեղ լնոյր, և յորժամ աղքատք հանդիպէր՝ առանց համարի ի միատեղով ի նա տայր։ Եւ այնպէս լուսաւորեաց զվերին և զներքին կողմանս գրելով և կարգելով, և ողորմութեան օրինակ լինելով։

Եւ հասեալ ի բարւոք ծերութիւն՝ աւելի քան զեօթանասուն ամ, կամեցաւ գնալ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, վարդապետօք և աշակերտօք, մխիթարել զհոգևոր և զմարմնաւոր աղքատսն՝ որ անդ կային՝ տրօք և իմաստութեամբ։ Եւ երկու ամ յամեալ յԵրուսաղէմ, և ապա անտի եկեալ ուրախութեամբ և ցնծութեամբ ի բնիկ գաւառն իւր՝ զամենեսեան ուրախ առնէր։

Եւ ի վերայ այսր ամենայնի սուրբ վարուցն առաքինութեան, ցանկայր մարտիրոսութեան հասանել և վկայից պսակացն ժամանել։ Եւ որ զկամս երկիւղածաց իւրոց առնէ և աղօթից նոցա լսէ, կատարեաց զխնդրուածս նորա։ Զի մինչդեռ յուրախութեան և ի խաղաղութեան վայելէաք և ի քաղցրուսոյց վարդապետութեան նորա պարէաք, ահա յանկարծակի եկն եհաս մրրիկ թշուառութեան ի նենգաժետ և յանհաւատ ազգէն Մարաց, զի հասին սուսերօք և տիգօք ի վերայ Արծկէ քաղաքին և զբազումս սպանին։ Եւ այլք ի նոցանէ երթեալ գաղտագողի յաստ-

8. MTr ի բարւոք. | CMr ծերութե. | CMTr զհ. 11. M աղքատքն. | r էին փխ. կային. 12. r կեցեալ փխ. յամեալ. 13. r չունի անտի. | r չունի ուրախութեամբ և. | MT չունին և ցնծութեամբ. 14. C իւր և. 15. MT չունին սուրբ վարուցն. | M ուրախութե և ցնծութե փխ. առաքինութեան. | r չունի սուրբ վարուցն առաքինութեան. 16. C մարտիրութե. M և մարտիրոսութե. | r մարտիրոսանալ փխ. մարտիրոսութեան հասանել. 17. C երկիւղածացն. | CM չունին և. 18. C և կատարէ. | C նց. 19. r ուրախութե. | T ցնծութե փխ. խաղաղուե. 20. M վարդապտութի. C վարդապետութի. 21. T չունի եկն. 22. C ի նենգաժոտ. M ի նենգժոտ. T ի նենգեժոտ. r ի նենգէժոտ. | M յազգէն. | r յանկարծակի սպառազինեալ փխ. սուսերօք և տիգօք. 23. MT քաղաքի. 24. r գնացին ի վանսն ցխնեալ առ ի կոտորել զկրօնաւոր եղբարսն. զոր իմացեալ աբեղայիցն փախստական եղեն, փխ. երթեալ գաղտագողի ...եղեն ի տեղւոջէն.

ուածաբնակ ուխտն Ցիմնայ, կամէին զընակեալ սուրբ եղբարսն ի նմա սրոյ ճարակ տալ։ Եւ նոցա գիտացեալ փախստական եղեն ի տեղւոջէն։

Իսկ զերջանիկ և զերանելի այրն Աստուծոյ զմեծն Գրիգորիոս վարդապետն ոչ կարացին հանել ի վանացն. քանզի ասէր. «Աստ կեցից և աստ մեռայց, զի թէ ի նոցանէ մեռանիցիմ, հաւատամ ի Տէր իմ Յիսուս Քրիստոս. զի ընդ վկայիցն Աստուծոյ անապական և անթառամ ժառանգութեանն արժանաւոր գտայց։»

Եւ մինչ նա յայսպիսի խորհրդեան էր, հասին ի վերայ նորա բազմութիւնք անօրինացն՝ ծարաւիք արեան իբրև շունք կատաղի և իբրև զգազան ագահեղի։ Ըմբռնեցին զնա իբրև զոչխար անմռունչ և ասեն եթէ «Դու ես որ Իսայուն Աստուած ասես»։ Եւ նա ասէ. «Այո, ես եմ որ Իսայուն Աստուած ասեմ, զի ճշմարիտ Աստուած է։» Եւ ապա որպէս ոչխար զենին և հեղին զարիւն նորա՝ իբրև զգառին անմեղի։ Եւ նա աղօթիւք կարդայր առ Աստուած, ասելով. «Տէր Յիսուս, ընկալ զհոգի իմ ընդ անմեղ վկայիցն քոց և խառնեա զմահս իմ ընդ երանելի սրբոցն գնդից։» Եւ օրհնութեամբ և ճշմարիտ դաւանութեամբ աւանդեաց զհոգին իւր ի փառս Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։

1. C և կամէին. | MT չունին զընակեալ. | MT զսբ. 2. CM եղբարքն. | MT չունին ի նմա. 3. C փախստականական. T փախըստական. | M ի տեղոջէն. 4. r իսկ զերանելի վդպն գրգր հանել ոչ կարացին ի վանացն. այլ ասէր աստ կեցայց և աստ մեռայց հաւատամ ի տր իմ յս. զի ընդ անմեղ վկայիցն քր անթառամ պսակացն արժանի գտայց, փխ. իսկ զերջանիկ ... գտայց, տող 4-9. | C երանելի. | MT չունին աստուծոյ. | T չունի զմեծն. 5. T զգրիգորիոս. | MT չունին վարդապետն. 6. MT այլ փխ. քանզի. | C կեցայց. 7. M չունի քրիստոս. 8. M T քի փխ. այ. 10. C է. 11. T ծարաւիքն. | r չունի ծարաւիք արեան. | M զշունք կատաղիք. 12. r չունի իբրև. | M զգազանք աղտեղիք. | r վայրենի փխ. ագահեղի. | T ըմբռնեցին. 13. T անմռունչ. | r անմեղ, և զենին ող զգառն անմռունչ, փխ. անմռունչ...անմեղի, տող 13-16. | CT չունին և ասեն. 16. MT զգառն անմեղ. 17. Mr կարդաց. r չունի առ աստուած. 18. T զոգի. | r չունի անմեղ. | r քո. | C խառնեայ. | T զմահ. 19. r գնդին. 20. M չունի իւր. 21. M հօր և որդւոյ և սբ հոգւոյն. C այ. r քի. | T որդոյ.

Digitized by Google

Իսկ յետոյ եկեալ հրեղէն լեզուն Յակոբ ճգնաւոր վարդապետն Ղրիմեցին աշակերտօք իւրովք և ազգականօք և բազում ժողովրդօք. և արարին կոծ մեծ ի վերայ նորա և եդին սաղմոսիւք և օրհնութեամբ ի տապանի ի փոքր բլրին, որ է հանդէպ վանացն յարևմտեան կուսէն։

Այժմ վայ և եղուկ է մեզ՝ հոգևոր որդիքս հօրն մերոյ խրատեալքս, եկայք ի միասին ողբասցուք զհօրն զվտանգ։ Ո՛չ թէ հեռացաւ նա ի դառն ծովու աշխարհիս, այլ զի մեք հեռացաք ի նորա քաղցր և վայելուչ տեսութեանցն. մերժեցաք ի քրիստոսանման խոնարհութեանցն. ծարաւ գտաք յանուշահամ բաժակէ զեղեցիկ վարդապետութեանցն. քաղցեալ եղաք ի հոգևոր գիտութեանցն. օտարացաք յաստուածանման և ի քրիստոսատեսակ առաքինութեանցն. և խաւար տարածեցաւ ի վերայ հայաստանեաց, զի սուգ անմխիթար մեզ պատահեաց. ձայն հոգևոր երգոց պակասեաց ի դրանէ սուրբ տաճարաց, եկեղեցիք անշքեղացան և մանկունքն ցրուեցան։ Բայց զոհութիւն տացուք Աստուծոյ հօրն երկնաւորի՝ զի այսօր ուրախութիւն է երկնաւորաց և երկրաւորաց, զի հայրն մեր հոգևոր ժամանեաց Հօրն գթութեան. որդիացեալն Աստուծոյ ետես զՈրդին Միածին յաթոռ փառաց. բնակարանն Հոգւոյն սրբոյ եհաս Հոգւոյն պարգևաց. հրեշտակացեալն ի մարմնի խառնեցաւ ի դասս հրեշտակաց. աստուածաբանն միաւորեցաւ ընդ աստուածաբանիցն պարակցութեանց. քահա-

1. r յակոբ մըդպն հրեղէն լեզուն. | T և ճգնաւոր վրդպտն յակովբ. 2. Cr զրիմցին. | Cr աշակերտօքն. | Cr չունին և ազգականօք. | r և բզմ ժողովրդօք և ազգականօքն. 3. M ժողովրդովք. | եւ արարին… կուսէն ունի r. իսկ CMT այսպէս. «և առեալ եդին զնա պատուով ի տապանի և կոծ մեծ արարին ի վերայ նորա» (MT չունին և առեալ, պատուով. C չունի զնա. M արարին կոծ մեծ).| ըստ Չամչեան, Գ. 452 նահատակը թաղուել է «ի նոյն վանս ստեփաննոսի նախավկային». 6. r չունի այժմ վայ…կատարեցաւ, այն է էջ 272, տող 4. | M չունի այժմ վայ… երկրաւորաց, տող 6-19. | T չունի որդիք. 7. T զվտանգ. 10. T ծարաւ՝ գտաք … վարդապետութեանցն խօսքը գնում է քաղցեալ … գիտութեանցն բառերից յետոյ. 11. T եղաք ի փխ. գտաք. 13. T յածատեսակ. | C չունի ի. | T ի քախնամ. 15. C սուք. 20. CM գթութեց. 21. C ի յաթոռ. | T բնակարան.

Digitized by Google

նոյն սուրբ քահանայագործեաց ընդ քսան ու չորս երիցանցն. տօնաւէրն և մարտիրոսաւէրն շարադրեցաւ ընդ մարտիրոսացն բազմութեանց. վարդապետն ճշմարտութեան՝ հիմնադիր ուսման ընդ երամս վարդապետաց, վկայն սուրբ՝ ընդ վկայիցն գնդից՝ զՔրիստոս Աստուած և Տէր դաւանեաց. Ներկեալն արեամբ՝ ընդ արիւնաներկ սրբազանիցն, և կենդանի նահատակն՝ ընդ նահատակօն, ճգնաւէրն ընդ ճգնազգեացօն. կուսանն առ կուսանսն վերացաւ. և թագաւորեալն ի վերայ ախտից մեղաց՝ ի յերկինս թագաւորեաց. և Տէր Յիսուս բազմութեամբ հրեշտակաց ընդ առաջ ընթացաւ նմա. ձայն ետ ընդերականն թէ՝ «Աղնի՛ է, ծառայ բարի և հաւատարիմ, եկ մուտ յուրախութիւն իմ որ ոչ տրտմեսցիս, բազմեցուցանեմ ի սեղան հօր իմոյ և զգեցուցանեմ քեզ զգեստ փառաց՝ որ ոչ մաշի. ագուցանեմ քեզ պատմուճան՝ որ ոչ աղտեղանայ. մուծանեմ յառագաստն իմ՝ որ ոչ լուծանի. ուրախ արարից զքեզ ի պարգևս իմ՝ որ ոչ աղքատանայ. թագաւորեցուցից զքեզ ի վերայ տասն քաղաքաց, փոխանակ տասն քանքարացն, որ ոչ ծրարեցեր ի վարշամակս ծուլութեան. օրհնեցից զքեզ ի կեանս անվախճանս. և ուրախ լեր ի տեսութիւնս իմ անզրաւ յաւիտեանս. քաջ մշակ իմ և արթուն անուն նահատակ Գրիգորիոս մեծ վկայ և հրամանակատար իմ ծառայ, լեր առ իս բարեխօս և միջնորդ հաշտութեան ամենայն ազգաց, որ կան ի յերկրի ի մէջ ամենայն վշտաց. և անդառնալի լիցին ամենայն խնդրուածք քո. ա-

1. MT իգ. | M երիցանց. T քհյիցն իրիցանցն. 2. C տօնաւէրըն. | C T մարտիրոսն. | M չունի շարադրեցաւ. 4. CT հիմն եդիր. | C վարդապետացն. 6. T սրբազանից. C սըրբազանիցն. 8. C ճըգնազգեացքն. M ճգնազգեացքն. | C ընդ փխ. առ. | վերացաւ բառից յետոյ M վերջացնում է այսպէս. «ի փառս քի այ մերոյ» 9. C չունի ի յերկինս թագաւորեաց. 10. C թագաւորն թագաւորաց յս քս փխ. և տէր յս. 12. T չունի բարի. | T հաւատարիմ վկայ. | C յուրախութիս. 14. C զգեստ պայծառ, փխ. քեզ զգեստ փառաց. | C ագեցուցանեմ. 15. T ի յառագաստ. 16. C ուրախացուցից. | C ի պարգեւսն. 17. C աղքատանաս. 20. C ի վախճան. 21. T և յաւիտեանս. 24. C գան. | T ի մէջ երկրի. | T չունի ամենայն. 25. T չունի ամենայն.

Digitized by Google

ռաջի ամենայն դասուց հրեղինաց. այս քեզ յինէն պարգևք խոստմանց ի փառս Հօր և Հոգւոյն իմոյ՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն։»

Կատարեցաւ նահատակութեամբ մեծ վարդապետն Գրիգորիոս՝ ի ՊՀԴ թուականիս հայոց, ի մայիս ամսոյ ինն՝ յաւուր կիրակէի մեծի պենտէկոստէին գալստեան Հոգւոյն Աստուծոյ, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի և աղօթք նորա ի վերայ ամենայն աշխարհի. և մաղթանօք նորա Տէր մեզ ողորմեսցի՝ խնդրողացս բանիցս այս՝ երկու Կարապետի ի Թումայ հռետորէ, որ և զայսչափ գիծս շարագրեաց. որ և նորին յիշատակն օրհնութեամբ եղիցի։ Այս գրեցաւ ի Բաղէշ քաղաքի ի վանքս Գոմաց սուրբ Աստուածածնի և սուրբ Գէորգեայ զօրավարի. որք ՙհանդիպիք սմա՝ յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր։

Սոյն վկայաբանութիւնն ունին C, M, T և r ձեռագրերը. առաջինը C՝ քաղոց ԻԸ և յունվար 5, Ս. Ծննդեան Ճրագալոյցի պատմութիւնից յետոյ, այս վերնագրով. «Յայսմ աւուր յիշատակ է տիեզերալոյս վարդապետին Գրիգորի Խլաթեցւոյ.» էջ դճձէ-դճղօ, այն է 487′—490″։ M հոռի ԺԲ և սեպտ. 21 Ս. Եղիշէ առաքելից յետոյ, այս վերնագրով. «Յայսմ աւուր յիշատակ է տիեզերալոյս վարդապետին Գրիգորի Խլաթեցւոյ որ մականուն Ծերենց ասի, որ զկարճոյ յայսմաւուրքն յաճախեցոյց» էջ 72 բ′—73 բ″։ T քաղոց ԻԷ և յունվար 4՝ Ս. Զօսիմոսից յետոյ, հետևեալ վերնագրով. «Յայսմ աւուր յիշատակ է տիեզերալոյս վարդապետին

I. C հրեշտակաց, փխ. հրեղինաց. 5. r գրգր. | T պհդ թուականին մեր. r ի պհգ թվկնին. 6. C պենդէկոստէին. r պենդակոստէին. | T գալըստեան. | r հոգոյն. 7. r վերջանում է հոգւոյն աստուծոյ բառերով. | C չունի աստուծոյ մերոյ. 8. C աղօթիւք. 9. T մեզ ողորմեսցի բառերից յետոյ աւելացնում է և թովմայ վրդպտին որ զայս չափ գիծս շարագրեաց» և վերջացնում է. | խնդրողացս բանիցս ... հետևեալը մինչև վերջ ունի միայն C, որից յետոյ գալիս է գրողի· յիշատակարանը. IO. C հեռետորէ.

Գրիգորի Խլաթացոյ», էջ 258 ա''—260 ա''։ r 499 ա''—500 բ'' «պատմութիւն քաղ և տխեղերալոյս վարդապետին մերոյ Գրիգորի Խլաթեցոյ Ծերենցն։»—Համմտ. Նաև Ջամչեան, Գ. 451—2, ուր ասուած է Նաև «Եւ կալաւ զտեղի նորա (Վարդան վարդապետի) ի Սուխարա Գրիգոր վարդապետ Խլաթեցի՝ մին յաշակերտաց Սարգսի՝ որդի առն ուրումն Ծեր կոչեցելոյ, ուստի և ինքն կոչի Գրիգոր Ծերենց։» Նաև Այրարատ, էջ 325 բ. ուր ի մէջ այլոց ասուած է թէ «որոյ յիշատակ էանց ի գիրս Յայսմաւուրաց՝ զոր ինքն իսկ կարգաւորէր, յաւելլով զնահատակութիւնս նորոց վկայից, ընդ որոց և գաւեցաւ ըստ բաղձանաց իւրոց (ի 29 մայիսի, 1426 ամի)։»

Սրբի նահատակութեան թուականը շատ խառնակ է. մեր զանազան աղբիւրներն ունին այսպէս՝

CT —ՊՀԴ=1425 մայիս 9 կիր. Հգգլստ.
r —ՊՀԳ=1424 մայիս 9 կիր. Հգգլստ
Այրարատ —ՊՀԵ=1426 մայիս 29
Թովմ.Ջամչ. —ՊՀԴ=1425

Բայց այս թուականներից և ոչ մէկը համաձայն չէ տոմարական հաշիւներին։—Ընդունում ենք թէ նահատակութիւնը եղել է 1424—6 թուականներին, մայիսի մէջ, մի կիրակի օր, Հոգեգալստեան տօնին։ Այդ տօնը շարժւում է մայիս 10-ից մինչև յունիս 13, և բացարձակապէս անկարող է մայիս 9-ին պատահել. ուստի մայիս 9 յայտնապէս սխալ է։ Հոգեգալուստը 1424—6 թուականներին պատահել է հետևեալ օրերին.

1424 յունիս 11 կիր.
1425 մայիս 27 կիր.
1426 մայիս 19 կիր.

սրանցից առաջինը՝ յունիս է և միմիայն r ձեռագրի պահանջածն է, որի մէջ ՊՀԴ կարող էր դիւրութեամբ փոխուել ՊՀԳ. ուստի դուրս հանելով այն՝ մնում է յաջորդ երկուքը. սրանցից էլ մենք ընտրում ենք վերջինը՝ որովհետև նախ 1426-ը արդէն Ալիշանի դրած թուականն է և երկրորդ որ մայիս 19 կարող էր դիւրութեամբ ձեռագրերի մէջ վերածուած լինել 9-ի, Ալիշանի մօտ էլ 29-ի, եթէ այս վերջինը արդէն պարզապէս տպագրական սխալ չէ. մինչդեռ մայիս 27 շատ նուազ հա-

ւանականութիւն ունի այսպիսի շփոթութիւն կրած լինելու:

Այսպէս ուրեմն մեր քննութեանց արդիւնքը կը լինի ընդունել ՊՀԵ=1426 մայիս 19 կիր·։

Այս տեղ դնում ենք Գրիգոր Խլաթեցու անուանը նուիրուած վկայաբանական տաղը, որը ամբողջովին արտատպում ենք Հայերգից, հաւաքեաց Արիստակէս վարդապետ Տէվկանց, Թիֆլիս, 1882, էջ 175—180։ Ինչպէս չորրորդ տան մէջ ևս յատկապէս յիշւում է, տաղի հեղինակն է Յակոբ աշակերտ Գրիգոր Խլաթեցու։ Այս Յակոբը պիտի լինի Յակոբ Ղրիմեցի վարդապետը՝ որ նահատակի մարմինը տապանի մէջ դրաւ, տես էջ 270, տող 1—5։ Հետաքրքիրն այն է որ այս յայտնի վկայութեան դէմ տաղի սկզբնատառերը կապում են ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՅԱՌԱՔԵԼԷ ՆՈՐԻՆ ԱՇԱԿԵՐՏԷ։ Անշուշտ անկարելի է երկուսը իրար հակառակ դնել. ուստի պէտք է ընդունել թէ Առաքել՝ Յակոբ վարդապետ Ղրիմեցու աշխարհական և աշակերտական անունն է։

## Եղերերգութիւն ի մահ անմարուակութեան Տեառն Գրիգոր վարդապետի Խլաթեցւոյ:

Գորովագութ ձայն կականի,
Աղաղակեմ արտասուալի.
Շարժեմ ի կոծս զազգս Արամի,
Զաքանաղեան Հայկայ տոհմի։

Բարունք համայն որ յաշխարհի,
Լացէք զՀայոցս եկեղեցի,
Որ մերկացաւ յանկարծակի,
Զլոյսն պայծառ յաշտանակի։

Ինձ վայ եղուկ տխմար գրչի,
Յակոբ անուն գրող բանի,
Հոգւոյ ծնունդ հօրն մեծի,
Քաջ րաբունւոյն իմ Գրիգորի։

Գանձ մերկացայ ես եղկելի,
Որ ապտաստուաց եմ արժանի,
Զրաբունապետն իմ բաղձալի,
Որ և Գրիգոր անուն կոչի։

Ո՛չ հանդուրժեմ այսմ աղտի,
Այլ յօժարիմ կոծ սխրալի.
Քանզի տեսի զհայրն բարի,
Ներկեալ արեամբ այսօր յերկրի։

Րաբաղ հոգիս մեղօք է լի,
Չունիմ իմաստ բանականի.
Զի՞նչ ասիցեմ ես արժանի,
Մեծ րաբունւոյն իմ Գրիգորի։

Վարդապետաց էր ցանկալի,
Խրատիչ, քանոն ամենայնի.
Վարդ անթառամ յեկեղեցի,
Հոտով լցեալ զտունս Արամի.

Արթուն անուն այն ըղձալի
Գրիգորիոսն երանելի,
Արեգական նման յերկրի,
Լուսաւորէր զեկեղեցի։

Րամից Հայոց որ յաշխարհի,
Լուսաւորիչ էր նա յայտնի.
Մեղուցելոց մարդկան ազգի,
Մաքրիչ մեղաց ամենայնի։

Դրախտ բազմազան պտղովք է լի,
Անուշահամ անծախելի,
Սուրբ վարդապետն հոգելի,
Գրիգորիոսն որդին Տերի։

Անձամբ առնէր զգործս բարի,
Նման Փրկչին Տեառն Յիսուսի,
Եւ քարոզէր ամենայնի.
Խափանեցաւ այսօր յերկրի։

Պատուէր զվկայսն Քրիստոսի,
Եւ յօրինէր ճառս ցանկալի,
Վկայասէրն բաղձալի,
Անուանակից նախնոյն մեծի։

Եհաս անանցն պսակի,
Որում ցանկայր տենչմամբ սրտի,
Րաբունապետն հրաշալի,
Սպանեալ ձեռամբն անօրինի։

Տանս Հայոց գերեալ ազգի,
Էած կսկիծ անբուժելի,
Ամենագով հայրն բարի,
Գրիգորիոսն Բզնունի։

Ի նեղութեան ժամանակի,
Էր օգնական ամենայնի.
Միշտ կերակրող էր աղքատի,
Զգեցուցանող մարմնոյ մերկի։

Նման նախնոյն այն Ներսեսի,
Եղբօրն մեծի տէր Գրիգորի,
Նոր զարդարեաց զեկեղեցի,
Գանձ և տաղիւ բազմագունի։

Յոյժ քաղցրախօս էր աղքատի,
Հեզ և խոնարհ յամենայնի.
Ոչ էր սիրող նա արծաթի,
Ունէր զպատուէրն Քրիստոսի։

Արթուն հսկող անձանձրալի,
Հանգոյն Մաշտոց Մեսրովբի,
Եւ Գրիգորին Լուսաւորչի,

. . . . . . . . .

Digitized by Google

Ուստին բաշխէր մարդկան ազգի,
Զքանս գրոց պատուիրանի,
Մատամբ իւրով անխոնջելի,
Դպիր վերին Տեառն արքայի։

Այսօր եթող զմեզ որբ յերկրի,
Ամենագութ Հայրն բարի,
Հաւասարեալ երկնից գնդի,
Ժառանգ անանցն պսակի։

Քուրձ զգեցիր, եկեղեցի,
Այրի եղեր յանկարծակի,
Փեսայն բարձաւ քո ի միջի՝
Ցառագաստէ քում խորանի։

Եկեալ հասին վաղվաղակի
Ազգն Մարաց, որ Քիւրտ կոչի,
Սպանին զհայրն ցանկալի,
Ի Ցիպնավանքն երևելի։

Լուսոյ ծնունդք աւազանի,
Դառն ողբացէք զանցս աղէտի,
Խաւարեցաւ լոյսն արփենի,
Ջահն շիջաւ Նոր Սիոնի։

Եհաս ինձ սուգ անբուժելի,
Լալով կոչեմ անլռելի.
Զի խրատատուն իմ ըղձալի՝
Այսօր թողեալ զիս ամայի։

Նոր ձայն երգեմ ի յատենի,
Ներբողական ի չափ տաղի.
Առ քեզ խօսիմ, հա՛յր րաբունի,
Միթէ հոգիս մխիթարի։

Ո՛վ ցանկալիդ ամենայնի,
Րաբունապետ Հայոց ազգի,
Մտօք մաքուր, պայծառ հոգի,
Մարմնովդ կոյս 'ւ առաքինի։

13. Տպ. վաղավաղկի.

Րոտեալ սիրոյն Քրիստոսի,
Հովի՛ւդ քաջ Նորին հօտի,
Վանիչ գայլուն իմանալի,
Եւ արածօղ ի դալարի։

Իմաստութիւն Հօրն յերկնի
Զքեզ զարդարեաց իւրն տեղի.
Ցորս և հոգւով Հայրն հանգչի.
Երրորդութիւնն անտրոհելի։

Նաւ ի ծովու այսմ աշխարհի,
Ուռկան մեծին այն որսորդի,
Որ որսացեր զծնունդս ախտի,
Հաներ իջևանս որ մահ չունի։

Աղբիւր ջրոյն այն կենդանի,
Բղխեալ հոգւոյն Քրիստոսի,
Որ ծարաւեալ մարդկան ազգի.
Միշտ արբուցեր անսպառելի։

Շնորհազարդ տանն Յիսուսի
Դու գանձապետ իմաստիւք լի,
Միշտ բաշխէիր յեկեղեցի
Զգանձ հին և Նոր Կտակարանի։

Ամենիմաստ գլուխ բարի,
Խոնարհեցար ի տապանի.
Ակն պայծառ առատալի,
Ծածկեալ հողով այսօր յերկրի։

Կարօտելոցն աղաղակի,
Ունկդ որ լսող էր ամենի՝
Խափանեցաւ յանկարծակի,
Թողեր մեզ սուգ անբուժելի։

Եւ երգարանդ հոգւոյն մեծի,
Որ միշտ հնչէր յեկեղեցի,
Խցեալ սրով անօրինի,
Որ խօսակից էր աղքատի։

Բամից որբոց և տնանկի,
Այլ որ շնորհէր տուրս ամէնի,
Կապեալ եղաւ իսկ ի շիրմի,
Որ միշտ կրէր զբանս տէրունի։

Տարակուսիմ յամենայնի,
Քանզի չունիմ իմաստ բանի,
Զքեզ ներբողել ըստ արժանի,
Երախտաւոր Հայր հոգելի։

Իւրն տացուք փառք ի յերկրի,
Հօր և Հոգւոյն ընդ Միածնի,
Որ դասակցեաց հրաբուն սեռի,
Այսօր զքեզ Տէր րաբունի։

Սոյն սբբին վերաբերեալ յաջորդ հատուածը արտատպում ենք Թովմա Մեծոբեցու Պատմութիւնից, տպ. Փարիզ, էջ 41—43։

Եւ յաջորդեաց զաթոռ նորա (Վարդան վարդապետի) մեծ վարդապետն և նահատակն և ողորմածն ամենայնի Գրիգոր՝ որդի հաւատարիմ առն Աստուծոյ Ծերի, գոլով ի քաղաքէն Խլաթայ, յաշակերտացն մեծին Սարգսի՝ հոգևոր հարազատ և համշիրակ իւր. բայց ոչ ի նոյն Սուխարու ուխտն Աստուածածնի, այլ ի յերկիրն Բզնունեաց ի քաղաքն Արծկէ, ի սուրբ ուխտն Ստեփաննոսի վկային

Ցիպնայ կոչեցեալ։ Այլ ոչ պարապեալ վարդապետական դասի վասն սառնացեալ բարուց ուսումնականաց մերում ազգի։ Այլ տիւ և գիշեր գիրս գրէր, և զամենայն աղքատս կերակրէր, և սիրէր զողորմածութիւն, և զամենայն վարդապետս և կարգաւորս ի նոյն յորդորէր։ Ոչ գոլով նման նմա ողորմած և մարդասէր և սպասաւոր աղքատաց և տնանկաց։ Եւ ետ նմա Աստուած իմաստութիւն առաւել քան ամենայն վարդապետաց. վասն զի զերից ժամանակաց պատմութիւնս ի լոյս ածէր ի հարցանելն և ի պատասխանատուութիւնս, և զգիրս սրբոց մարտիրոսաց և վկայիցն որ կոչի Յայսմաւուրց՝ սակաւաբան և անվթար շարադրեալ ի սրբոց հնոց և նորոց վարդապետացն՝ ի լոյս էած, զխաւարեալ դրունս եկեղեցւոյ մերոյ լուսաւորեաց. և ոչ ոք կարէ գիտել զիմաստութիւնն, որ ի նմա ծածկեալ կայ. այլ Աստուծոյ միայն է գիտելի։ Եւ 50 ամ գիրս գրեաց տիւ և գիշեր անհանգիստ տքնութեամբ, որպէս գիտակ է զաղտնեաց գիտակն։ Եւ բազում երգս գանձուց և տաղից յիշատակ թողեալ ինքեան՝ յոյժ տօնասէր և պատուող սրբոց՝ մինչ զի ոչ եղեալ է և ոչ լինելոց է։

Եւ հասեալ ի բարւոք ծերութիւն աւելի քան զ75 ամ և յ874 ամի թուականիս մերում եկն պիղծ ազգն Մարաց ի յԱրծկէ քաղաք Հայոց, և գնաց յանապատն Ցիպնայ, և ըմբռնեալ զնա անօրինացն՝ յոյժ տանջեալ չարչարեցին. և նա ճշմարիտ դաւանութեամբ զՔրիստոս՝ Աստուած և Տէր դաւանեալ խոստովանեցաւ. և նոյնժամայն զենին զնա իբրև զգառն անմեղ և անարատ զերջանիկն և զերանելին Գրիգոր՝ փոխանակ գառին Քրիստոսի։ Եւ եհաս մարտիրոսական պսակի՝ յոյժ մարտիրոսասէր գոլով. և եդին զնա ի սուրբ ուխտն Ցիպնայ՝ Նախավկային Ստեփաննոսի անուամբ կոչեցեալ։ Եւ հոգևոր հարազատն իւր վարդապետն Յակոբ ճգնաւոր՝ այրն ցանկալի՝ եկն ամփոփեաց զնա հանդերձ հարազատ որդւովք իւրովք Ստեփաննոս եպիսկոպոսաւ եւ աշակերտաւ. եւ նստաւ սպասաւոր նորա գերեզմանին ամ մի։

Digitized by Google

*Նոյն պատմագիրը երկրորդ անգամ՝ էջ 85, խօսում է նոյն նահատակի մասին՝ հետեւեալ ձեւով.*

*Եւ ի սոյն աւուրս եկն նենգաւոր եւ անողորմ Քուրդն Բաղիշոյ ի վերայ աստուածապահ քաղաքին Արծկոյ, եւ հարեալ, սպանեալ, սրախողխող արարեալ զբազումս յազգաց մերոց՝ մանաւանդ զաստուածապատիւ և զաստուածապարիսպ, զողորմած և զերջանիկ վարդապետն Գրիգոր՝ զորդի Ծերին Խլաթեցւոյ՝ ի սուրբ ուխտն Դաստակ՝ որ Ցիպնավանք վերակոչի։ Եւ սուգ եղև ամենայն ազգիս Հայկազնոյ. վասն զի զարդարէր զեկեղեցիս Հայոց Յայսմաւուրօք, կորուսեալ ճառիւք, գանձիւք, տաղիւք եւ 55 ամ գիրս գրեաց եւ զամենայնն աղքատաց բաժանեալ։ Եւ հեզահոգի եւ յոյժ ուսումնասէր գոլով և մարտիրոսաց պատուող՝ մարտիրոսաց պսակացն եհաս։ Եւ էր սա աշակերտ մեծին Սարգսի վարդապետին Հայոց, և ութն ամ աշակերտեալ Յովհաննու Որոտնեցւոյ, աշակերտակից Մեծին Տաթևացւոյ։*

Digitized by Google

# 40.

## ՅԱԿՈԲ ՕՎՍԱՆՆԱՑԻ

† ՊՀԷ=1428

Եւ *յետ այսորիկ* (=յետ Նահատակութեան Գրիգորի Խլաթեցւոյ) *յետ երկու ամի՝ նոյն Քուրդն յազգէն Մարաց ի Բաղիշու գնաց յերկիրն Ռշտունեաց, և զերջանիկ և զտօնասէր աղօթարար վարդապետն Յակոբ Ովսաննացի ի յԱնծղնապատի ուխտէն նահատակեալ՝ եդին զնա մերձ գերեզմանին Գրիգորի Նարեկայ վանից։*

*Այս վկայաբանութիւնն ունի Թովմա Մեծոփեցի, Փարիզ, էջ* 43։ *Համտ. նաև Չամչեան. Գ.* 452, 1428 *թուականի տակ։*

# 41.

## ՂԱԶԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂԻՇԵՑԻ

† ՊՀԷ=1428

Եւ ի նոյն ամի (=յամի Նահատակութեան Յակոբայ Ովսաննացւոյ) վարդապետն Բաղիշու Ղազար՝ յոյժ հռչակաւոր և բանիբուն, աղօթարար և ճգնաւոր՝ փախեաւ ի յանօրինաց և գնաց ի լեառն Սասնոյ։ Եւ գտեալ զնա անօրէն ազգին Մարաց՝ ասեն. «Դու ասես թէ Քրիստոս Աստուած է»։ Եւ նա ասէ. «Ես ասեմ և ուսուցանեմ. և այն որ ոչ ասէ և ուսուցանէ, գնայ ի կորուստն յաւիտենականն»։ Եւ նոքա հարեալ սրով սպանին զնա. և եհաս մարտիրոսական պսակաց։

Այս վկայաբանութիւնն ունի Թովմա Մեծոփեցի, Փարիզ, էջ 43—44։ Հմմտ. Նաև Ջամչեան, Գ. 452, 1428 թուականի տակ։

Digitized by Google

## 42.

### ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՆՈՒԿ ԽԼԱԹԵՑԻ

✝ 1438 փետր. 22, շբ.

Պատուական և պանծալի վկայս Յոհաննէս էր ի Բզնունեաց գաւառէն, ի քաղաքէն Խլաթայ, բարեպաշտ ծնողաց զաւակ, ի ՊՁԶԶ Թուականին Հայոց։ Եւ էր վարժեալ ի յարուեստս երաժշտական գուսանական խաղուց. և էր յոյժ անուշաձայն և քաղցրերգեցիկ, մինչ զի զարմանալի էր տեսողացն և լսողացն. և էր սիրեցեալ յաչս ամենեցուն, ևս առաւել ամիրայէն Սէֆէզնի. և հանապազ կայր առաջի նորա։

Էր և կին մի առաջի նոյն ամիրային երգեցիկ և խաղացող. և յաղթեալ լինէր պիղծ կինն այն ի մանկանէն՝ առաջի հրապարակին, զի մանուկն Յոհաննէս գեղեցիկ եղանակաւ բերէր զերգս Փառք ի բարձունս և զայլ քաղցր բարբառ շարականացն ի մէջ և զարմացուցանէր զամենեսեան։ Իսկ նենգժոտ ազգն Մարաց՝ որ և Քրդաց՝ գրգռեցին զամիրայն ի կորուսանել զնա։

1. r սուրբ փխ. պատուական. | r վկայս քի. | r չունի ի. 2. r խլաթ քաղաքէ. | f բարեպաշտ և ածասէր. | fr ծնօղաց. 3. r իպ և ձզ. f իպ և իձզ. | r Թվկնիս. f Թվնիս. | fr մերում փխ. հայոց. 4. f չունի ի. | r գօսանական. | r երգոց. | r չունի և էր... քաղցրերգեցիկ. 5. փխ. քաղցրերգեցիկ f քաղցր գեղեցիկ. | փխ. մինչ զի...լսողացն B և զարմանալի լսողաց. 6. fr չունին ամենեցուն ևս առաւել. 7. r չունի առաջի. 9. r խաղացող. f խաղցող. IO. r փխ. պիղծ կինն r պեղ-ծըն. f պեղծ կինն. 11. փխ. զի մանուկն f զմանուկն. | r յոհանէս. 12. r չունի եղանակաւ. | փխ. զերգս...շարականացն ի մէջ, այն է տող 12-13 B զամենայն երգս. 14. fr նենգէժոտ. | Br չունին մարաց որ և. | fr գրգռեն.

Եւ յաւուր միում կոչեաց զնա ամիրայն ի բերդն՝ առ ինքն և ասէ. «Ես ստուգեալ եմ, զի դու լեալ ես երբեմն մեղօք ընդ տաճիկ կնոջն երգեցողի. պարտ է քեզ տաճկանալ և առնուլ զնա և կամ չարաչար մահուամբ մեռանիլ»։

Իսկ ծառայն Քրիստոսի Յոհաննէս համարձակութեամբ ետ պատասխանի և ասէ. «Այդ ձեզ է գործ և առաջնորդաց ձերոց. և հեռի է ի քրիստոնէից, որ եմք ծառայ Քրիստոսի. զի Քրիստոս սուրբ է և զսուրբս սիրէ»։

Յայնժամ սրտմտութեամբ լցեալ անօրէնին և հրամայեաց Դ արանց՝ ընկենուլ զնա ի բերդէն ի վայր և ոչ կարացին. զի աներևոյթ օգնութեամբն Աստուծոյ յաղթեաց նոցա սուրբն։ Եւ նոցա բրածեծ արարեալ զնա դառն և խիստ գանիւք և կապեալ ոտիւք և ձեռօք՝ եդին ի բանտի. և ի գիշերին ողոքելով և պատիւ խոստանալով թուլացուցին զնա ի հաւատոցն։ Եւ ասէ. «Ի վաղիւն կամք ձեր եղիցին,» երկուցեալ՝ զի մի ի գիշերի աներևութաբար կորուսցեն զնա։

Եւ յայգուցն հանեալ տարան առ ամիրայն և բռնութեամբ հանեալ ի ձի և շուրջ ածեալ զքաղաքն ամենայն։ Եւ զի էր նա մանուկ քսանամեայ և դիւրափոխ ի յամենայն բանս, վասն որոյ ի նոյն օրն փոշիմանեցաւ ի պիղծ օրինացն, զոր անօրէնքն բռնութեամբ եդին ի վերայ նորա. և զղջացեալ ի միտս իւր՝ խորհէր մեռանիլ վասն անուանն Քրիստոսի։

1. փխ. եւ յաւուր միում f եւ յորժամ ի միում աւուր. | r չունի ամիրայն. 2. B լինալ. 3. fr կամ պիտի փխ. պարտ է. 4. r մեռանել չարաչար մահուամբ. 5. f մեռանել. 6. r յոհանէս. | r չունի համարձակութեամբ. 8. fr չունին է. | r չունի որ եմք ծառայ քրիստոսի. 9. f զսէրն. 10. r ասաց փխ. հրամայեաց. 11. f ի բերդն. 12. r անօրէնքն զի. | B չունի աներևոյթ. | f օգնականութբն. 14. B չունի ոտիւք և ձեռօք. | f իբանդի. 16. r ի հաւատոց. 17. f եղիցի. | fr աներևոյթաբար. 19. r այգուցն. B ի վաղիւն. 20. r ածին. 21. f չունի նա. | r խամեա. | f չունի ի. 22. r օր. | f ի պեղծ. | r անօրինացն. 24. f խորհէր մեռանել. r կամէր մեռանել.

Digitized by Google

Յղեաց զոմն ի քրիստոնէից առ քահանայսն թէ «Տուք ինձ հաղորդութիւն ի մարմնոյն Քրիստոսի, զի ի վաղիւն նահատակիմ վասն անուան Նորա»։

Եւ նոցա անփոյթ արարեալ անհաւատ և ուրացող կոչելով զնա։ Այլ նա հալէր և մաշէր յանձն իւր և ի դառնութենէ սրտին ողբս լալագինս յօրինէր ինքն ինքեան և ողբալով և ամօթղածութեամբ շուրջ գայր ի քաղաքին գօտելոյծ և միաձորձ, վայ և եղուկ կարդայր անձին իւրում և ասէր. «Վա՜յ քեզ ուրացողդ Յոհաննէս, զի զքահանայսն տրտմեցուցեր և զծնօղսն քո ի սուգ նստուցեր. և զսիրելի եղբարս և զընկերսն քո դառնացուցեր. զաւազանն մոռացար որ ծնաւ զքեզ որդի Աստուծոյ. զԱւետարանն թողեր՝ որ լուսաւորեաց զքեզ քարոզութեամբ. ելեր յաչացն Քրիստոսի. հեռացաւ ի քէն հրեշտակն պահապան։ Եւ արդ Քրիստոսի Աստուծոյն քոյ զի՞նչ պատասխանի տայցես յաւուրն դատաստանի. որ ասաց ի սուրբ Աւետարանին, թէ «Որ ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացայց և ես զնա առաջի Հօր իմոյ, որ յերկինս է»։

Զայս և առաւել քան զսոյն ողբս յօրինէր և լայր հանապազ և յարտասուս շարժէր զլսօղսն։ Եւ այնուհետև վաճառեաց զամենայն ինչս և զստացուածս իւր և ետ աղքատաց և կարօտելոց։ Եւ երթեալ առաջի եկեղեցւոյն, դաւանեաց զամենասուրբ Երրորդութիւնն և զՔրիստոսի մարդեղութիւնն և ողբալով և լալով մեղայ ետ առաջի ամե-

1. r յըղեաց. | r ի քրիստոնէից. 2. f հաղուրդութի. | r չունի ի մարմնոյն քի. 3. r անուանն քի. | f նց փխ. Նորա. 4. fr ուրացող. 5. փխ. այլ նա...մաշէր B իսկ նա մաշէր. 6. r լալագին. | փխ. ինքն ինքեան...անձին իւրում, այն է տող 6-8՝ B և գօտելոյծ և միաձորձ շրջէր ի քաղաքն ամօթալի. | f օրինէր. 7. f շրջէր փխ. շուրջ գայր. 8. f կարդալով. 9. f ուրացողդ. | r յոհաննէս. 10. f տրտմեցուցանէր. 11. fr եղբարսն. | f ընկերս. 13. f ի յաչացն. 14. B չունի հեռացաւ ի քէն հրեշտակն պահապան. | fr չունին արդ. 15. r տացես պատասխանի. 16. f ուրացի. 20. r և յողբ և յարտասուս. f և ողբս և արտասուս. | r զլսողսն. | փխ. այնուհետև վաճառեաց B վաճառեալ. 21. Br չունին և զստացուածս. | B ետ փխ. և ետ. 22. Br չունին և կարօտելոց. | r եկեղեցոյն. 23. փխ. և զքրիստոսի մարդեղութիւնն r և զմի ածութի զմդեղութին քի. f չունի. 24. r ողբալով փխ. և ողբալով. | B չունի և լալով. | f մեղա. | r ար.փխ. ամենայն.

նոյն քահանայից. և եցոյց զգերեզմանն իւր առաջի սուրբ սեղանոյն և ասէ. «Աստ թաղեցէք զիս». և յանձն արար զհոգին Աստուծոյ և սուրբ եկեղեցւոյն և պատրաստեցաւ ամենայն սրբութեամբ և հասեալ ի պահքն առաջաւորին, զԵ օրն անսուաղ անցոյց։

Եւ եկեալ առ նա Բ այր ի գլխաւորաց անօրինացն և ասեն. «Եկ երթիցուք յաղօթանոցն մեր, կերիցուք և արբցուք ի միասին, ապա թէ ոչ, մեռանիս ի ձեռաց մերոց»։

Եւ նա ասէ. «Խտրին սրբոյն եմ խոստացեալ զայսքան աւուրս և ոչ կարեմ գալ»։

Եւ նոքա չարութեամբ լցեալ՝ երթեալ առ դատին և ասեն վասն նորա՝ թէ «Ճշմարիտ քրիստոնեայ է. և խաբեաց զմեզ և զօրէնս մեր»։

Եւ նա ասէ. «Լուռ լերուք մինչև ի պահսն իւրեանց. և ի նոյն օրն թլփատեմք զնա. և թէ ոչ կամեսցի, չարաչար մահուամբ կորուսցուք զնա»։

Եւ նոցա լռեալ մինչև ի վերջին օր չաբաթու բուն բարեկենդանին և ի նոյն օրն երթեալ ըմբռնեցին զնա և տանէին հարկանելով։ Եւ տեսեալ ծնողացն, աղիողորմ ողբալով և կոծելով երթային զհետ նորա։ Եւ նա ասէ ցնոսա. «Աստուածադաւթ ծնօղք իմ, մի լայք ի վերայ մահուան իմոյ, այլ լացէք ի վերայ կորստեան իմոյ. բայց աղաչեմ զձեզ՝ հալալ արարէք ինձ զաշխատանս ձեր և օրհնեցէք զիս, զի ես այսօր վկայ լինելոց եմ Քրիստոսի՝ նման Յակովկայ»։

I. B զգերեզման. | B չունի սուրբ բառը. 2. B թէ փոխանակ և ասէ. 3. r եկեղեցւոյն | r պատրաստեաց զհոգին. 4. fr ի պահք. 5. fr անսուաղ (f անօթեւաղ) անցուցանէր զաւուրսն (f զաւուրս) Ե. 6. r չունի առ նա. | r չունի այր. 7. fr չունին և. | r ասեն ցնա. | f ի յաղօթանոցն. | f և կերիցուք. | r չունի կերիցուք...ի միասին. I0. B խնդրաբոյս. r խը-դրնաբոյն. f խըտրնապոյն. 11. r ոչ կարիմ. 12. փխ. երթեալ B գնացին. I3. f չունի թէ. I4. r զօրէնսն. 17. r կորուսանեմք. f կուրուսից. 18. fr ի վերջի. | r շաբթուն. I9. r օր. 2I. փխ. ողբալով և կոծելով r կոծելով. B ողբով և կոծով. 22. r ով փխ. աստուածապաւթ. | f ծնօղ. 24. փխ. հալալ արարէք ... յակովկայ, այն է տող 24-26՝ B օրհնել զիս.

Digitized by Google

Եւ տարածեալ ծնօղացն զձեռս իւրեանց՝ խաչակնքեալ օրհնեցին զնա և ասեն. «Զօրացուցիչն Աստուած զօրացուցանէ զքեզ. երթ ի խաղաղութիւն. և ինքն Քրիստոս եղիցի ընդ քեզ։»

Եւ տարեալ զնա անօրինացն առ դատին և նա յղեալ առ ամիրայն՝ ասէ. «Կրկին ուրացուցէք և Թլփատեցէք զդա։»

Եւ հասեալ ի դուռն բերդին, զտեղի առեալ կանգնեցաւ և ասէ. «Ո՞ւր կամիք տանել զիս. աստ եմ հեծեալ ի ձին սատանայի և ուրացեալ զՔրիստոս, աստ եմ մեռանելոց։»

Եւ ամբարձեալ զաչս իւր ի վեր և ետես հոգւոյ ակամբ զՔրիստոս եկեալ բազում հրեշտակօք և դասուք մարտիրոսօք և բերեալ նմա պսակ անթառամելի. և քաջալերեալ զօրացուցանէր զնա ի մարտին և խոստանայր նմա զօթեվանս լուսեղէնս։ Վասն որոյ պայծառացեալ դէմ երեսաց նորա և ամբարձեալ զձեռն իւր յերկինս՝ աղաղակեաց և ասէ. «Հաւատամ ի Քրիստոս Աստուածն իմ, յարարիչն երկնի և երկրի։» Եւ փախեալ ի ձեռաց նոցա, անկաւ յերկիր և զհողն խաչակնքեալ՝ արկանէր ի բերան իւր և ասէր. «Ա՛ստ սպանեցէք զիս վասն Քրիստոսի։»

Յայնժամ անօրէնքն դիմեցին ի վերայ նորա իբրև շունն կատաղի և քարիւ և փայտիւ հարին զգլուխ նորա, մինչ զի ուղեղն գլխոյն ի վայր Թափեցաւ և անկաւ ի մէջ նոցա իբրև զմեռեալ, մինչ զի բազմաց ասել Թէ մեռաւ։ Եւ նա յանկարծակի ուշաբերեալ և ելեալ նստաւ և արեամբն

1. B ծնողացն. | B չունի խաչակնքեալ. 3. B չունի երթ ի խաղաղութիւն. 5. B չունի անօրինացն. | B յղեալ. 6. B և ասէ. | B ուրացուցէք զդա և Թլփատեցէք. 9. r չունի հեծեալ ի ձին սատանայի և. 10. B և աստ. r աստէն. | f մեռանելոյ. 12. fr համբարձեալ. 13. r չունի եկեալ բազում.....պսակ անԹառամելի, այն է տող 13-14. | f դասիւք. 15. r զօրացուցանէ. | f զնա զօրացուցանէր. 16. փխ. նմա զօթեվանս լուսեղէնս B օթեվանս լուսեղէն. | f լուսեղէն. 17. f համբարձեալ. 19. f յերկրի. | r փախեաց. f փախել. | r և անկաւ. 20. r արկ. | f ի բերանն. 23. փխ. և քարիւ B քարիւ. 24. փխ. ուղեղն գլխոյն r ուղիղ գլխոյն. B ուղիւղն. | r նա անկաւ. | B չունի ի մէջ նոցա. 26. r չունի նա. | f յուշաբերեալ.

*խուրալ օծանէր զերեսն և ասէր. «Ահա բաժակ անապական, զոր արբի և մահ պատուական՝ որ այսօր ինձ հանդիպեցաւ։»*

*Եւ ասեն անօրէնքն. «Մի երկնչիր. մի բան խօսեաց և մեք դեղօք ողջացուցանեմք զքեզ։»*

*Եւ նա դարձեալ դաւանեաց զՔրիստոս Աստուած և կրկին անգամ խաչիւ դրոշմեալ զհողն արկանէր ի բերանն և զձեռն խաչակնքեալ ի վերայ սրտին գոչէր մեծաձայն և ասէր. «Հարէք զիս և սպանեցէք, զի ես ծառայ Քրիստոսի եմ։»*

*Եւ տեսեալ անօրինացն զհամբերութիւն քաջ նահատակին՝ թողին զնա և գնացին առ դատին և ասեն. «Թաբերայն այն ոչ դադարէ ի դաւանելոյ զՔրիստոս Աստուած։» Եւ նա ասէ. «Ընդէր ոչ սպանէք զնա»։ Եւ նոքա ասեն. «Սպաննաք զնա և նա նոր կենդանացաւ»։ Եւ հրամայեաց դատին երթալ քարկոծել զնա։ Եւ նոցա երթեալ ողջքանօք խրատ տային նմա առնել զկամս դատաւորին։ Եւ նա ասէ. «Երթիցուք առ դատաւորն։»*

*Եւ նոցա ուրախացեալ՝ տանէին զնա առ դատին։ Իսկ զօրեղ զօրականն Քրիստոսի և քաջ մենամարտիկն զցաւանձինն ի բաց եդեալ և ելեալ եկն ի տեղին՝ ուր զուրացութեան ձին էր հեծեալ. և ձայնեաց մերձաւոր քրիստոնէիցն՝ թէ «Առ սա հեծայ զսեաւ ձին և սա մեռայց վասն իմ Քրիստոսին։»*

1. r զերեսս իւր. | r անապական բաժակ. 2. r պուռկն. 3. r և տեսեալ անօրինացն ասեն փխ. եւ ասեն անօրէնքն. 4. r ողջացնեմք. 5. փխ. և կրկին...և ասէր. այն է տող 5-8՝ B բարձրաձայն և ասաց. 6. փխ. խաչիւ դրոշմեալ f խաչակնքեալ. 7. f խաչակից արարեալ. | f մեծայձայն. 8. f սպաննեցէք. r սպանէք. 10. փխ. քաջ նահատակին B սրբոյն. 11. r զարմացեալ փխ. թողին զնա և. | փխ. խաբերայն...աստուած, այն է տող 11-12՝ r գքռ. ճչա. ած. դաւանեաց խաբերայն այն. 13. փխ. եւ նա ասէ... քարկոծել զնա, այն է տող 13-15՝ B եւ ասաց դատին քարկոծել զնա. | r չունի նոքա. 14. r սպանէք. 15. f երթեալ. 17. r երթայց. 18. r առեալ տանէին. 19. փխ. զօրեղ զօրականն B սուրբ վկայն. | f մինամարտիկն. | Br չունին և քաջ մենամարտիկն. | r զտարութին և զցաւ. 20. փխ. եդեալ և r բարձեալ. B ընկէց և. | r եկեալ ի նոյն տեղին փխ. ելեալ եկն ի տեղին. 21. r հեծեալ էր. | r չունի և. | B չունի մերձաւոր. 22. r ձին զօրինակն սայլի փխ. ձին և. | f չունի և.

*Եւ տեսեալ անօրինացն զճշմարիտ հաւատ նորին, քարիւ և փայտիւ հարեալ ջարդեցին զամենայն մարմին նորա։ Եւ նա այնու աւանդեաց զհոգին իւր առ Աստուած՝ ի ձեռս հրեշտակաց։ Եւ առեալ անօրինացն զմարմին երանելի մանկանն՝ այրեցին հրով։*

*Եւ ի գիշերին յայնմիկ լոյս պայծառ ծագեաց ի վերայ նորա և անօրէնքն ամօթով գլխակոր եղեն։ Եւ յետ երից աւուրց հրաման ետ ամիրայն բառնալ և թաղել զմնացեալ նշխարս նորա։ Իսկ քրիստոնեայքն, որ յահէ անօրինացն փախուցեալ էին՝ ժողովեցան ընդ բարեպաշտ ծնօղացն նորա և եկին ի տեղին և ծնօղքն հանդերձ ազգոյն ի բաց ընկեցին և սպիտակ զգեցան. և օրհնութեամբ մեծաւ գոհութիւն Աստուծոյ տային. և ասէին ուրախացէք այսօր ընդ մեզ ամենեքեան, զի հարսանիք խնդութեան է զաւակիս մեր. ցնծացէք քահանայք և ժողովուրդք ամենեքեան. զի որդեակս մեր զհոգևոր բաժակն էարբ. մեք արբցուք զմարմնաւոր բաժակն և ուրախասցուք. և ամաչէին որոց լային և կամ ափսոսային։ Եւ առեալ զմնացեալ մասն նշխարացն նորա. սրբազան եպիսկոպոսն Ստեփաննոս ամենայն բազմութեամբ քահանայից և ժողովրդոցն՝ օրհնէին զԱստուած որ ի ձմեռնացեալ ժամանակիս վարդ փթթեցոյց մեզ հոտով անուշութեան։ Եւ տարեալ եդին յեկեղեցին ի ներքոյ բեմբին ուր ինքն դրօշմեալ էր զտեղին սաղմոսիւք և օրհնութեամբ ի փառս արարչին։*

1. փխ. զճշմարիտ B. զհաստատուն. 2. r ջարդեալ փխ. հարեալ ջարդեցին. 3. r չունի այնու. f քաղցրութբ. | B չունի ի ձեռս հրեշտակաց. 4. փխ. եւ առեալ անօրինացն զմարմին երանելի մանկանն այրեցին հրով B եւ անօրէնքն այրեցին զմարմին երանելի մանկանն. 6. f այնմիկ. | r պատուիկ փխ. պայծառ. 7. B չունի և անօրէնքն ամօթով գլխակոր եղեն. 8. r աւուր. | r քրիստոնէից բառնալ. 9. իսկ քրիստոնեայքն ..... *հատուածը մինչեւ վերջը՝* B *համառօտում է* և եկեալ ծնողաց նորա և սրբազան եպիսկոպոսն ստեփաննոս՝ քահանայիւք և բազմութեամբ ժողովրդոց և տարեալ եդին յեկեղեցին, ի ներքոյ բեմբին՝ ուր ինքն եցոյց, սաղմոսիւք և օրհնութեամբ, ի փառս քրիստոսի աստուծոյ։ 11. f ծնօղացն. | f զհանդերձ. 13. f գոհութիւ. | r ամին այսօր ընդ մեզ. 14. f խնդութի. 15. f չունի ամենե-

Կատարեցաւ սուրբ վկայն Քրիստոսի յամսեանն փետրվարի ի ԻԲ. ի տօնի ՃԾ հայրապետացն։

Այս վկայաբանութիւնն ունին միայն Bfr ձեռագիրները. Bf մեհեկի ԺԶ և փետրվար 22, Կուռնելիոս հարիւրապետի և Ս. Պօղիկարպոսի վկայաբանութիւններից յետոյ, B այս վերնագրով.«Ի սմին աւուր վկայաբանութիւն մանկանն Յոհաննիսի.» էջ 284 ա'—285 ա'. f ձեռագրի վերնագիրն է. «Յայսմաւուր վկայաբանութի նոր վկային Քի մանկանն յոհաննիսի։» Իսկ երրորդը r էջ 501 ա'—502 բ'', հետևեալ վերնագրով. «Վկայաբանութիւն նոր վկային Քրիստոսի մանկանն Յոհաննիսի, որ մականունն խօլու ասի։»

Նոյնը ունի նաև P էջ 268 ա'' (նոյն օր, նոյն սրբերից յետոյ) հետևեալ համառօտութեամբ. «Յայսմ աւուր յիշատակ է և վկայաբանութիւն նոր վկային Քրիստոսի մանկան միոյ Յոհաննէս անուն կոչեցեալ, որ մականուն հոյլու ասի. կատարեցաւ ի անաւրինաց ի փառս Քի։»

Վկայաբանութեանս մի երկրորդ խմբագրութիւնն ունի y ձեռագիրը, նոյն օր, նոյն սրբերից յետոյ, այս վերնագրով. «Յայսմաւուր յիշատակ է և վկայաբանութի նոր վկային քի մանկան միոյ յօհաննէս անուն կոչեցեալ»։ Հարկաւոր համարեցինք յաջորդով մէջ բերել սոյն խմբագրութիւնն էլ, որի ինչ ինչ մասերն աւելի ընդարձակուած են և ամբողջին մի աւելի աշխարհիկ լեզուի նկարագիր է տրուած։

Թուականի համար մեր բնագրերը համաձայնութեամբ ունին ՊՁԶ փետրուար 22, բարեկենդանի նախորդ շաբաթ օրը։ ՊՁԶ թուին (փետր. ԻԲ) ըստ սովորական հաշուի համապատասխանում է քրիստոնէական 1437 թիւը։ Բայց այս 1437 թուին՝ Զատիկը մարտ 31-ին լինելով, Բարեկենդանը

քեան. 18. f չունի կամ. 19. f ի նշխարաց. | f ստեփաննոս. 20. f քհյիցն. | f և օրհնէին. 21. r չունի ի. | f փրթր-թեցոյց. 23. f բեմին. | f և ինքն. 1. f յամսեան.

Digitized by Google

գալիս է փետրվար 10-ին, ուստի համաձայն չէ մեր բնագրի մանրամասն տեղեկութեանց։ Յաջորդ տարին է 1438, որ Զատիկը ապրիլ 13-ին գալով՝ Բարեկենդանը պատահում է փետրվար 23-ին և 150 հայրապետաց տօնը փետրվար 22 շաբաթ օրը։ Այս պատճառով և սրբի նահատակութեան թուականը դնում ենք ոչ թէ 1437, այլ ճշտիւ 1438 փետրվար 22 շաբաթ։

Պատուական և պանծալի վկայս այս Յօհաննէս էր ի Բզնունեաց գաւառէն ի Խլաթ քաղաքէ, բարեպաշտ և աստուածասէր ծնողաց զաւակ, ի ՊՁԶ թուականութեանս մերում, սնեալ և վարժեալ ի յարուեստս երաժշտական դուսանական երգոց, մինչ զի զարմանալի էր տեսողացն և լսողաց՝ հաւատացելոց և անհաւատիցն։ Եւ սիրեցեալ եղև յաչս ամիրապետին Սևդին կոչեցելոյ։ Եւ հանապազ կայր առաջի նորա ի գինարբուս և յամենայն տեղիս։

Էր և ի նոյն քաղաքին կին մի ղաւալ և երգիչ։ Եւ յորժամ գային առաջի նորա առ ի յերգել զարուեստս ունայնութեան անպիտան և վնասակար գործոյն՝ յաղթեալ լինէր ալիզծն այն առաջի ամենայն հրապարակին։ Եւ յորժամ զՔրիստոսէ ճառէր և զամենասուրբ Երրորդութիւնն օրհնաբանէր, և զերգս հրեշտակացն զՓառս ի բարձունսն ի ձայն և ի յերգս արուեստին խառնեալ՝ համարձակ վստահութեամբ առաջի ամենեցուն երգէր։

Իսկ բանսարկուն սատանայ, որ ի սկզբանէ մարդասպանն է և ուսուցիչ չարին՝ արկեալ նախանձ և ատելութիւն ի սիրտ օձաբարոյ և նենգժոտ ազգին Մարաց՝ չարախօսեն զնա առ որդի ամիրային, զի գաղտաբար կորուսցէ զնա։

Յաւուր միում կոչեալ զնա առ ինքն ի Կլայն՝ և հարցանէր նենգութեամբ։ Ասէ. «Դու լեալ ես երբեմն մեղօք ընդ Տաճիկ ղաւալին։ Օրէնքն մեր ուսուցանեն մեզ այնպիսոյն յօրէնքն մեր գալ և զօրէնքն մեր կատարել կամ մեռանիլ»։ Իսկ ծառայն Քրիստոսի համարձակութեամբ ետ պատաս-

7. յ ամիրապետէն.

Digitized by Google

խանի և ասէ. «Բաւ և մի լիցի, որդի ամիրայի. այն գործ ձեր է և առաջնորդին ձերոյ։ Իսկ ես ծառայ Քրիստոսի եմ. Քրիստոսն մեր սուրբ է և զսուրբսն սիրէ։ Ոչ է պարտ ծառայիցն Քրիստոսի ի պիղծս մերձենալ, այլ օրինօքն Քրիստոսի կեալ՝ մինչ զի զօրհնութեան պսակն առնուլ քահանայիւք ի դուռն եկեղեցեաց մերոց»։

Յայնժամ բարկութեամբ լցեալ անօրինին և իբրև զհուր վառեալ ասէ. «Լեր դու յօրէնս մեր. ապա թէ ո՛չ՝ ի սոյն ժամու դառն և չարաչար մահուամբ կորուսանեմ զքեզ»։ Եւ նոյն ժամայն հրամայեաց չորս արանց ի բերդէն ի վայր արկանել զնա և մեռանել։ Եւ ոչ կարացին անօրէնքն յաղթել նմա, զի աներևոյթ օգնութիւնն Աստուծոյ յաղթեաց նոցա։ Եւ նոքա բրածեծ արարեալ զնա դառն և խիստ գանիւք և կապեալ ոտիւք և ձեռօք՝ եդին ի բանտի, և զգիշերն ողոքելով և պատիւ խոստանալով տկարացուցին զնա։ Եւ նա խաբեաց զնոսա և ասէ. «Թող այդպէս եղիցի», զի մի կորուսանիցեն զնա ի գիշերի։

Եւ այգուցն յորժամ լուսացաւ՝ հանեալ տարան առ ամիրայն, և բռնութեամբ եդեալ ի ձիոյ՝ շուրջ ածին ի քաղաքին և ուրախութեամբ տօն մեծ կատարէին։

Իսկ ողորմելի մանուկն Ի ամեայ գոլով ի տիս հասակի, ի նոյն օրն զղջացեալ՝ փոշիմանեցաւ և կամէր մեռանիլ վասն անուանն Քրիստոսի։ Յղեաց առ քահանայս զոմն քրիստոնեայ թէ «Տուք ինձ զմարմին և զարիւն որդւոյն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի, զի այսօր և վաղիւն մեռանիմ վասն անուան նորա»։ Եւ նոյա անփոյթ արարեալ, յոյժ անարգելով անհաւատ և ուրացող կոչելով զնա, այլ նա հալիւր և մաշէր յանձն իւր, լալով և ողբալով ամօթալածութեամբ և երկիւղիւ, գօտելոյծ և միաձորձ ի շուրջ գայր ի քաղաքին, վայ և եղուկ կարդայր անձին իւրոյ. «Վա՜յ քեզ ուրացող Յօհաննէս, զքահանայսն տրտմեցուցեր և զծնօղսն քո ի սուգ սգաւորութեան նստուցեր, զսիրելի

* 1. յ գործ. 32. յ ի սուք.

եղբարսն քո և զընկերսն դառնացուցեր. և Քրիստոսի Աստուծոյն քոյ զի՞նչ տայցես պատասխանի յաւուրն դատաստանի, որ ասաց ի սուրբ Աւետարանին թէ «Որ ուրասցի զիս առաջի մարդկան՝ ուրացայց և ես զնա առաջի Հօր իմոյ, որ յերկինս է»։ Այլ և զի՞նչ տացես պատասխանի լալի և ողորմելի ծնողացն քոց և քահանայից և պահապան հրեշտակացն քոց, որ զիս օրինօքն Քրիստոսի սնուցին, և ես զօրէնքն Քրիստոսի անարգեցի։ Աւա՜ղ և վա՜յ զիս՝ Աստուծոյ եմ ես ծառայ և ստեղծուած և եղէ աստուածուրաց. մոռացայ զԱւետարանն սուրբ որ ծնաւ զիս որդի Աստուծոյ. առ ոտն կոխեցի զաստուածաբերեալ մարմինն և արիւն որդւոյն Աստուծոյ, որ սրբեացն զիս. Թշնամանեցի զԱստուած Հոգին որ բնակեացն յիս։ Լո՛ւր երկին և որ ի քեզ զօրութիւնք դասք հրեշտակաց, հոգիք արդարոց և լուսաւորք։ Ունկն դի՛ր երկիր և որ ի քեզ կենդանիք և բոյսք դալարիք։ Եկա՛յք ողբասցուք զանձն իմ եղկելի. քանզի ոչ փոքր ինչ է կորուստ, այլ մեծ և սարսափելի. վասն զի զպատկերն Աստուծոյ անարգեցի, զհոգիս իմ կորուսի, և յետ հոգւոյս իմ կորստեան՝ զԱրարիչն իմ Աստուած ի բաց թողի։ Վա՜յ է ինձ և աւուրն իմ ծննդեան. վա՜յ է ինձ յաւուրն դատաստանի»։

Եւ զայս ասացեալ զամենայն քաղաքացիքն յողբ շարժէր։ Եւ վաճառեաց զամենայն ինչս իւր աղքատաց և կարօտելոց, և երթեալ առաջի սուրբ եկեղեցւոյն՝ դաւանեաց զամենասուրբ Երրորդութիւնն և զմի Աստուածութիւնն և զսուրբ մարդեղութիւնն Քրիստոսի, և մեղայ ետ առաջի քահանայիցն, զամենայն մեղս իւր լալով և ողբալով։ Եւ եցոյց զգերեզմանն իւր առաջի սուրբ սեղանոյն և ասէ. «Աստ թաղեցէք զիս»։ Եւ յանձն արար զինքն Աստուծոյ և սուրբ եկեղեցոյն և պատրաստեաց զինքն ամենայն սրբութեամբ։ Եւ հասեալ ի պահքն առաջաւորքն՝ անսուաղութեամբ անցուցանէր զաւուրսն Ե։

20. y ծնընդեան.

Եւ եկեալ արք երկու գլխաւորք օրինացն և ասեն ցնա. «Ե՛կ գնասցուք յաղօթանոցն մեր և կերիցուք. ապա թէ ոչ՝ և վաղիւն կորուսանեմք զքեզ»։

Եւ նա ասէ. «Խորին սրբոյն եմ խոստացեալ զայսքան աւուրքս և ոչ կարեմ գալ»։

Եւ նոքա չարութեամբ լցեալ՝ երթեալ առ դատին՝ չարախօսեն և ասեն զնմանէ, եթէ ճշմարիտ քրիստոնեայ է և խաբեաց զմեզ և զօրէնս մեր։

Եւ նոքա ասեն. «Լուռ լերուք մինչև ի պահքն մեր և ի նոյն օրն թլփատեմք զնա. և թէ ոչ կամի՝ չարաչար մահուամբ կորուսանեմք զնա»։

Եւ նոցա լռեալ մինչև ի վերջին օր չաբաթու Բարեկենդանին և նոյն օրն երթեալ՝ ըմբռնեցին զնա և տանէին հարկանելով։

Եւ տեսեալ ծնողացն՝ աղիողորմ կսկծանօք և մեծակական ողբով երթային զհետ նորա։ Յետս դարձեալ ետես զնոսա և ասէ. «Աստուածադութ ծնող իմ մարմնաւոր, մի լայք ի վերայ մահուան իմոյ, այլ լացէք ի վերայ կորստեան իմոյ։ Բայց աղաչեմ զձեզ, հալալ արարէք զաշխատանս ծնողութեան ձերոյ և օրհնեցէք զիս, զի ես այսօր առ Քրիստոս կամիմ երթալ և իբրև զՅակոբիկ կամիմ Քրիստոսի վկայ լինել. փոխադարձ արարից նմա. զի Քրիստոս վասն մեր չարչարեցաւ՝ ես վասն նորա չարչարիմ։ Քրիստոս վասն իմ անարգեցաւ՝ ես վասն նորա անարգիմ։ Անմահ Բանն Աստուած վասն իմ մեռաւ՝ ես վասն նորա մեռանիմ»։

Եւ տարածեալ ծնողացն զձեռս իւրեանց՝ խաչակնքեալ օրհնեցին և ասեն. «Զօրացուցիչն երկնաւորաց և երկրաւորաց Քրիստոս Աստուած ամենակարող զօրութեամբն զօրացուցանէ զքեզ։ Ե՛րթ ի խաղաղութիւն և Ինքն ընդ քեզ եղիցի»։

Եւ տարեալ զնա անօրինացն առ դատին և նա յղեաց

ռու ամիրային և ասէ. «Կրկին ուրացուցէք և Թլփատեցէք զնա»։

Եւ հասեալ ի դուռն բերդին՝ զտեղի առեալ կանգնեցաւ և ասէ. «Ո՞ւր տանիք զիս. աստ ուրացեալ եմ՝ աստ մեռայց»։

Եւ յանկարծակի զպսակ անձինն զգլուխն ի վեր ամբարձեալ՝ ետես իմանալի մտացն հայեցողութեամբ զամենասուրբ Երրորդութիւնն՝ զնախնի նահատակն համբերութեամբ վկայիցն և զհանդիսադիրն ամենեցուն զՔրիստոս Աստուած. զի եկեալ յօգնութիւն զտկարսն զօրացուցանէր։ Վասն որոյ զդասս հրեշտակացն յառաջ կոչէր, զպարտս արդարոցն մեծարէր և զվկայիցն քաջալեր տայր դալ տեսանել զարի և զքաջ վկայն ի հանդիսական ատենին և ինքն զպսակն հիւսէր՝ զԹագն կազմէր, զտեղի հանգստեան պատրաստէր, զօԹևանն ցուցանէր։

Եւ տեսեալ անօրինացն, զի տիպ պատկերին գեղեցկանայր այտ երեսացն իբրև հրով վառեալ, տեսութիւն աչացն պայծառացեալ, և ռնգունքն էառ զհոտ անուշութեան անմահ Թագաւորին Քրիստոսի. եդ ծունր և ձգեաց զձեռն իւր յերկինս, աղաղակեաց ի ձայն մեծ և ասէ. «Քրիստոս է արարիչ իմ և ես հաւատամ զնա։ Պիղծ է առաջնորդն ձեր և ամենայն մանկունք նորա։ Նզովեալ է սատանայ և ամենայն պոռնկասէր դևք նորա։ Եւ վազեալ ի մէջ ամբոխին՝ անկաւ յերկիր և հողն խաչեալ ի բերանն արկանէր և ասէր. «Ահա սպանէք զիս վասն Քրիստոսի»։

Յայնժամ բազմութիւն անօրինացն իբրև զշուն կատաղի խումբ արարեալ՝ դիմեցին ի վերայ նորա և քարիւ և փայտիւ և սրով հարին զգլուխ նորա, մինչ զի ուղեղ գլխոյն ի վայր Թափեցաւ. և նա անկեալ ի մէջ նոցա, մինչ զի բազմաց ասել Թէ մեռաւ։ Եւ նա ուշաբերեալ յանկարծակի ելեալ նստաւ և արեամբն օծանէր զերեսն իւր և ասէր. «Ահա բաժակ զոր ճաշակեցի և յօշարակ

18. y ըռըն-կունքն.

նուան՝ յորմէ ըմպեցի և մահ պատուական, որ այսօր հասի»։

Եւ տեսեալ անօրինացն ասեն. «Մի՛ երկնչիր. միայն բան մի խօսեաց և մեք դեղօք բժշկեմք զքեզ»։ Եւ նա դարձեալ դաւանեաց զՔրիստոս Աստուած և կրկին խաչիւ դրոշմեալ՝ զհողն ի բերանն արկանէր և զձեռսն խաչակնքեալ ի վերայ սրտին՝ գոչէր մեծաձայն և ասէր. «Հարէք զիս և սպանէք; զի ես ծառայ Քրիստոսի եմ»։

Եւ տեսեալ անօրինացն զհամբերութիւն քաջ վկային՝ զարմացեալ գնացին առ դատին և ասեն. «զՔրիստոս ճշմարիտ Աստուած դաւանեաց խաբեբայն այն»։ Եւ նա ասէր. «Ընդէ՞ր ոչ սպանիք»։ Եւ ասեն. «Սպանաք զնա և նա նոր կենդանացաւ»։ Եւ հրամայեաց դատին երթալ քարկոծել զնա։ Եւ նոցա երթեալ. խրատ տային նմա ողոքանօք՝ ածել զկամս դատաւորին։ Եւ նա ասէ. «Երթայց առ դատաւորն»։ Եւ նոցա ուրախացեալ՝ ածեալ տանէին առ դատաւորն։

Իսկ զօրեղ զօրականն Քրիստոսի և քաջ մենամարտիկն զտկարութիւն և զցաւ անձինն ի բաց բարձեալ, եկեալ ի նոյն տեղին, ուր ուրացութեան ձին հեծեալ էր՝ ձայնեաց մերձաւոր քրիստոնէիցն թէ «Աստ հեծայ զսև ձին, աստ մեռայց վասն իմ Քրիստոսին»։

Եւ տեսեալ անօրինացն զճշմարիտ հաւատ նորին՝ քարիւ և փայտիւ հարեալ ջարդեցին զամենայն մարմինս նորա։

Եւ նա քաղցրութեամբ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած ի ձեռս հրեշտակաց։ Եւ առեալ անօրինացն զպատուական նշխարս երանելի մանկան տղային՝ հրով այրեցին ի մէջ քաղաքին։

Եւ ի գիշերին յայնմիկ լոյս սաստիկ ծագեալ ի վերայ նորա և անօրինացն ահաբեկ եղեալ՝ յամօթ լինէին։ Եւ յետ երից աւուրց հրաման ետ ամիրայն քրիստոնէիցն գնալ թաղել զմնացեալ ոսկերս նորա։ Իսկ քրիստոնէիցն, որք յահէ անօրինացն փախուցեալք էին՝ այդուցն ժողովեալ՝ եկին ի միասին, և բարեպաշտ ծնօղք նորա ընդ նոսա՝ զսևացեալ հանդերձս ի բաց արկեալ սպիտակազգեստք

Digitized by Google

եղեն՝ եկին ի տեղի նահատակութեան պատուական վկային և օրհնութեամբ և գոհութեամբ փառս Աստուծոյ տային և գովէին մեծաձայն բարբառով. «Որ է հարսանեաց մեր զաւակին։ Եկայք ուրախասցուք սրբազան քահանայք և բազմութիւն ամենայն եղբարց ի միասին. զի որդեակս մեր զհոգևոր բաժակն ճաշակեաց՝ մեք զմարմնաւոր բաժակն ըմպեսցուք»։ Եւ եթէ ոք լայր ի վերայ նորա՝ ծնօղք նորա սաստէին ի բաց կալ ի լալոյ և յողբոց մեծի խնդութենէ նոցին։

Եւ առեալ զմնացեալ մասն նշխարաց նորա սրբազան արհեպիսկոպոսն տէր Ստեփաննոսն և պատուական քահանայքն հանդերձ ամենայն բազմութեամբ քաղաքին՝ ցնծութեամբ և ուրախութեամբ օրհնելով զամենասուրբ Երրորդութիւնն, որ ի սառուցեալ և ի ցրտացեալ ժամանակիս ոչ յանձն արար զմեզ առաջի ազգաց անհաւատից՝ տարեալ եդին ի սուրբ եկեղեցին ի ներքոյ աստիճանի բեմբին, յորում ինքն դրոշմեալ էր զտեղի գերեզմանին։

Կատարեցաւ սուրբ վկայն Քրիստոսի յամսեանն ի փետրուարի ԻԲ, ի տօնի ՃԾ հայրապետացն Կոստանդնուպօլսի, յետի Բարեկենդանի շաբաթ օրն, ի վեց ժամու աւուրն։

43.

## ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԱՐՕՆՈՅ

† ՋԺԲ=1463 ապրիլ 19 գշ.

Էր սուրբ եպիսկոպոսն Յոհաննէս ի տղայութենէ սնեալ և վարժեալ ի վանս սուրբ Կարապետին, ի գաւառին Տարօնոյ, կրթեալ ի վարս պարկեշտութեան՝ կրօնաւորական ժուժկալութեամբ։ Եւ հասեալ ի. չափ հասակի, արժանացաւ ձեռնադրիլ յաթոռ եպիսկոպոսութեան նոյն աստուածարեալ տեղւոյն Իննակնեան, որ է աթոռ սրբոյն Յովհաննու Կարապետին՝ ձեռնադրողին Քրիստոսի, ըստ տեսչութեան Հոգւոյն Աստուծոյ։ Որ և առաքելաբար հովուէր զհօտս(?) Քրիստոսի, ուղիղ վերակացութեամբ, ոչ որպէս տիրելով վիճակին, այլ զանձն օրինակ կացուցեալ՝ առնելով և ուսուցանելով։ Եւ այնպէս փայլէր որպէս զջահ լուսաւոր ի մէջ ազգիս Հայոց։

Եւ ըստ բարւոք յօժարութեան իւրոյ՝ զոր ունէր եպիսկոպոսն Յոհաննէս՝ ձեռնարկեաց առ ի նորոգել վերստին զտաճարն սուրբ Կարապետին և յօրինեաց զնա գեղեցիկ շինուա-

1. B չունի էր. | r յոհաննէս. | r ի տղայութե. 2. B սնեալ էր. | r ի գաւառէն. 3. f տարօնայ. 4. f ժուժկալութեան. 5. B յաթոռն. 6. r տեղոյն. | B չունի որ է աթոռ ... հոգոյն աստուծոյ. | f յաթոռ. 7. f յոհաննու. r յովհանու. 8. f չունի ըստ...աստուծոյ. 9. f հովէր. 11. Bf չունին և այնպէս...հայոց. 13. Br յօժարութեանն. | r չունի եպիսկոպոսն. 14. B յոհան. r չունի. | r վերըստին. B չունի. | Bf զտաճար. 15. r յօրինեալ. B կատարեաց.

ծով։ Եւ ապա ձեռնարկեաց ի մեծ կաթուղիկէն, ի վկայարան սրբոյն Ստեփաննոսի Նախավկային։ Եւ այնպէս կային և գործէին մեծաւ ուրախութեամբ։ Զոր տեսեալ վիշապն անօրէն, օձն կամակոր, թշնամին արդարութեան սատանայ, զայնպիսի յառաջադիմութիւն եպիսկոպոսին, ոչ կարաց ժուժել ցաւոցն. այլ տուան շարժեալ զջախջախեալ գլխոյն և յարոյց պատերազմ ընդդէմ նորա։

Եւ գտեալ ազգ մի խուժադուժ լեզուաւ և ազգաւ, որ կոչիւր Դմլի, որք տեղի առեալ բնակէին ի նոյն գաւառն Տարօնոյ, առ ստորոտաւ լերինն այնմիկ Տօրոսի, ի մերձակայ գեօղսն. որք գնացեալ եդին բարուրս ի վերայ նորա, եթէ «Քակեաց զքարինս մզկթին և տարեալ շինեաց զեկեղեցին իւր»։ Եւ այսպէս արկին զնա յորսայս մահու։

Եւ ծանուցեալ զայս գաւառապետին Խալիլ՝ ետ ունել զեպիսկոպոսն և կապեալ զնա յուղարկեաց ի Բաղէշ քաղաք՝ առ ամիրապետն Շարաֆ։ Եւ նա ոչինչ քննեալ զպատճառս իրաւանց, այլ վաղվաղակի ետ ի ձեռս դահճացն և հրամայեաց հանել արտաքս յատենէն, ի տեսութիւն հրապարակի քաղաքին։

Որ և անդէն մերկացուցին զնա և արկին չուան ի պարանոցն և հանեալ ի բարձր տեղի մի, որ կոչի չահնշի, առ ի տեսանել զելս իրացն թէ զինչ հրամայեսցէ ամիրայն։

Իսկ եպիսկոպոսն ել ի միջոյ նոցա և կոչեաց առ ինքն զմի ոմն ի քահանայից քաղաքին՝ որ անդն կային. և կատարեալ զդաւանութիւն ուղափառ հաւատոյս ճշմարիտ խոստովանութեամբ ի ծածուկ և հաղորդեցաւ ի փրկական

1. r ձեռնարկեաց ապա ի մեծ փխ. եւ ապա...ի մեծ. 2. B սրբոյ. | f ստեփաննոսի. 3. B չունի մեծաւ. | B չունի զոր տեսեալ ...ընդդէմ նորա հատուածը. իսկ r ձեռագրի մէջ բերք է պակասում՝ ընդհատուելով գլխոյն յաւրից. 8. B էր փխ. գտեալ. 9. f կոչի. 10. f տարօնայ. | f ստորոտաւ. | f ի մերձակա գեօղն. 11. B նախանձեալ փխ. գնացեալ. 12. f ե թէ. | f մզքթին. 13. f այսպէս արկեալ. 14. B խալլի և ետ. 15. B չունի զնա. f ուղարկեաց. 17. B իրաւանցն. | B դահճաց. 20. f չլուան. 25. f մի. 26. B չունի ուղափառ. | B չունի ճշմարիտ. 27. B չունի ի ծածուկ.

մարմնոյ և յարենէն Քրիստոսի, զոր յառաջագոյն բերեալ էր ընդ իւրն և ասացեալ զգոհացողական աղօթսն, դարձաւ անդրէն առ զինուորսն։ Եւ նոցա բազում հարց և փորձ արարեալ ընդ նմա նենգութեամբ, զի թերևս կարասցեն պատրել զնա բանիւք և ոչ կարացին։ Եւ ապա սուսերամերկ խծծէին զնա ընդ երեսս և ընդ թիկունսն, մահ սպառնալով եթէ ոչ լուիցէ և դարձցի յօրէնս նոցա։

Իսկ նորա ոչինչ զանգիտեալ ի նոցանէ ամենևին, այլ տայր համարձակ զպատասխանին և յանդիմանէր զանաստուած մոլորութիւն նոցա։ Եւ ապա քարշեալ զնա անետք բռնութեամբ ընդ քաղաքամէջն և տարեալ կացուցին զնա առաջի դրան բերդին և կուտեցաւ ամբոխ յոյժ ի տեղւոջն, մինչև կոխել զմիմեանս։ Եւ բորբոքեցին հուր, զի այրեսցեն զնա. և ասեն թէ «Ուրացիր զՔրիստոս և դարձիր յօրէնս մեր և զերծիր ի մահուանէ և բազում պատիւս և պարգևս ընկալցիս ի մէնջ. և զնշան զոր արարեր, շնորհեմք քեզ։»

Իսկ նա պատասխանի տուեալ ասէ ցնոսա. «Խոստումդ ձեր ընդ ձեզ ի կորուստ լիցի. մինչև ցայժմ քրիստոնեայ կեցեալ եմ ոչինչ խիղճ գիտելով զանձնէ իմմէ և այժմ անկանիլ յանաստուածութիւն որպէս զանուղղայ ազգդ ձեր վասն առօրեայ ժամանակիս և սուտակայ փափկութեանս՝ անհնար է ինձ այդմ լինել։»

Եւ նոքա ևս ստիպէին զնա և ասէին. «Ասա բան ինչ և ազատիր ի մահուանէ և կաց պատուով։»

Իսկ նա ի պատասխանելոյ և ի յանդիմանելոյ զնոսա՝ ոչ դադարէր։ Իբրև տեսին նոքա թէ ոչինչ օգտեցան ի խօսմանցն, կրճտեցին զատամունս իւրեանց ի վերայ

1. f չունի և յարենէն քրիստոսի. 3. f զինուորսն. 6. Bf խըծծէին. 7. f բսպառնալով. | f մոգպետի փխ. նոցա. 9. f պատասխանին. 11. B չունի բռնութեամբ. | f չունի զնա. 12. f կոտեցաւ. B կուտեցան. 14. B չունի թէ. 15. f զերծեր. 18. B ասաց (չունի ցնոսա). 19. f ամպաչտութբ փխ. քրիստոնեայ. 21. f անկեալ. | f զանուղա. 22. f առօրեա. | f սուտակա. 23. B լինիլ. 26. B չունի ի պատասխանելոյ և ի. | f պատասխանելոյ և յանդիմանելոյ. 27. f օգտեցան. 28. B չունի իւրեանց.

Digitized by Google

նորա և ասեն. «Է՛ մելղուն, որպէս իշխեցեր քակել զմզկիթն և չինել եկեղեցի:»

Իսկ նա կայր անմռունչ ի մէջ նոցա, որպէս գառն անմեղ մատնեալ անողորմ գայլոց, որք սուսերամերկ պատեցին զնա, որպէս գազան կատաղի՝ արդարոյն արեան ծարաւի և մռմռեալ խածատէին զնա բանիւք՝ առաւել քան թէ սրով: Իսկ նորա դարձուցեալ զերեսս իւր ի նոցանէ, դիմեաց ինքնին ի հուրն, եկաց ի մէջ բոցոյն և ասէ ցնոսա. «Արդարև ասեմ ձեզ, զի տաչորումն հրոյս կակղագոյն է քան զխստութիւն սրտից ձերոց:»

Եւ նոքա եւս բորբոքէին զհուրն փքով դարբնաց. իսկ նա կայր ի մէջ հրոյն և ի փառաւորելոյ զԱստուած ոչ դադարէր: Իբրև տեսին թէ այնու ևս ոչ կասեցաւ սուրբն, կամեցան ձեռնամուխ լինել ի նա ամենեքեան, որպէս և օրէն է այս նոցա չարութեանն, զի ամենեքեան ողորմութիւն գտցեն քարաձգութեամբն ի նա: Եւ զրոհ տուեալ ի վերայ նորա՝ քարշեցին զնա արտաքս ի հրոյն. և եհար մի ոմն ի նոցանէ ուժգին սրով զկողս եպիսկոպոսին, վասն որոյ յոյժ նուաղեցաւ: Եւ ապա բազմութեան հարեալ զնա քարիւ և փայտիւ. և գայր ի վերայ նորա բազմութիւն քարանցն՝ որպէս տարափ կարկտի, մինչև անդէն ի տեղւոջն ծածկեցաւ մարմին երանելւոյն ի քարանցն: Եւ այնպէս աւանդեաց զհոգին իւր առ Աստուած սուրբ եպիսկոպոսն Յոհաննէս, որպէս խունկ անոյշ:

Եւ ապա հրաման ետ ամիրապետն Շարաֆ քրիստոնէիցն ի նմին աւուր բառնալ զնա և թաղել: Զոր և յառաջագոյն հաճուկս արար արձակել զնա, վասն քրիստո-

1. B մլղուն. | f զմքսիդն. 3. B չունի որպէս գառն…գայլոց. 5. B չունի որպէս…ծարաւի. 6. B չունի զնա. | B քան զսրով. 8. f ասէր. 9. f տոչորումն. 12. B փառաւորէր զած. փխ. ի փառաւորելոյ…դադարէր. 14. B լինիլ. | f ամցւն. 15. f չարութե. 16. f քարաձգութբ. 17. B չունի ի վերայ նորա. | f չունի զնա. 18. B սրով ուժգին. | f զկողսն. 19. B բազմութեն. 20. f քարանցն բզմութեան. 21. B տարափ խուռն մինչև. 22. f երանելոյն ի սաստկութէ քարանցն. 23. f չունի իւր առ ած. 24. B չունի որպէս խունկ անոյշ. 26. f աւուրն բառնալ և թաղել զնա. 27. B հանճոյկս. f հարձուկս.

*նէից քաղաքին։ Իսկ բազմութիւն ամբոխին ոչ անսացին հրամանաց ամիրային, այլ փութապէս զկամս սրտից իւրեանց կատարեցին, որք հանապազ ծարաւիք էին արեան քրիստոնէից։*

*Առ որ եկեալ արքեպիսկոպոս քաղաքին Տէր Յովաննէս ամենայն ուխտիւ և ժողովրդով, բարձին զպատուական մարմին երանելի եպիսկոպոսին. և տարեալ յաւագ եկեղեցին՝ ի վկայարան սրբոյն Սարգսի զօրավարին և կատարեալ զպաշտօն գիշերոյն հսկմամբ յերեկորեայ մինչև ցառաւօտն և մատուցեալ զխորհուրդ փրկական սուրբ պատարագին, եդին զնա ի տապանի առաջի սրբոյ սեղանոյն՝ սաղմոսիւք և օրհնութեամբ ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։*

*Կատարեցաւ սուրբ եպիսկոպոսն Յովհաննէս ապրիլի ի ԺԹ յետ սրբոյ Զատկին, զկնի Նոր Կիրակէին՝ յերկրորդումն շաբաթու երեքշաբաթին։*

Սոյն վկայաբանութիւնն ունին միայն Bfr ձեռագրերը. առաջին երկու Յայսմաւուրքները՝ այն է B էջ 370 բ′—371 ա″ և f՝ տհկի ԺԲ և ապրիլի 19, Քերսոնայ եպիսկոպոսաց վկայաբանութիւնից յետոյ՝ հետևեալ վերնագրով. «Ի սմին աւուր կատարեցաւ ի Քրիստոս վկայական մահուամբ սուրբ եպիսկոպոսն Յոհաննէս, ի քաղաքն Բաղէշ, յանաստուած և ի նենգաժոտ (f ի նենգեժոտ) ազգէն Մարաց, որ և Քրդաց, յ ԹՃԺԲ

2. B չունի սրտից. 3. B չունի որք հանապազ...քրիստոնէից. 5. f յովաննէս. 6. f ուխտիւն և ժողովրդովն. 7. B սուրբ փխ. երանելի. | B տարեալ յեկեղեցին. 8. B ի վկայարանն. | B չունի զօրավարին. 9. f յերեկորեա. | B չունի յերեկորեայ մինչև ցառաւօտն. 10. B մատուցեալ զպատարագն փրկական և ապա եդին. 11. r վերջանում է այստեղից այսպէս. ...քոյ սեղանոյն սաղմոսիւք հեւայլն. | f սեղանոյ. B վերջանում է սեղանոյն բառով. 12. r չունի աստուծոյ մերոյ. 14. r յոհաննէս. | f ապրէլի. | r ապրիելի ԺԹ. 16. fr չորեքշաբաթին. այս մասին տես յաջորդ երեսը՝ ծանօթութեան մէջ.

Digitized by Google

թուին հայոց (f ի Ջ և ի իբ թուականին)»: Իսկ երրորդը՝ այն է ճառընտիր r, էջ 500 բ—501 ա, հետևեալ վերնագրով. «Պատմութիւն և վկայաբանութիւն սուրբ եպիսկոպոսին յոհաննիսի. սուրբ եպսն յոհաննէս կատարեցաւ վկայական մահուամբ ի քաղաքն Բաղէշ յանուած. և ի նենգէժոտ ազգէն մարաց որ և քրդաց ի Ջ և ի ժբ թվկնին:»

Սոցանից fr ունին նախնական ընդարձակ խմբագրութիւնը, իսկ B մի քանի տեղ համառօտած է. r ձեռագրից մի թերթ ընկել էր. մենք այդ պակասը լրացրինք միայն Bf ձեռագրերի համեմատութեամբ:

Տես նաև Ջամչեան, հատ. Գ. էջ 515, ուր երկու տող աննշան տեղեկութիւն միայն կայ:

Սրբի նահատակութեան թուականի համար հարկաւոր է մի կարճ բացատրութիւն: Նախ պէտք է ուղղակի սխալ համարել f ձեռագրի ՋԻԲ=1473 ապրիլ 19 թուականը, որովհետև 1473 թուին՝ Զատիկը ապրիլ 18-ին գալով՝ Նոր Կիրակին=ապրիլ 25՝ արդէն տրուած սահմանից անցնում է: Պէտք է ընդունել ՋԺԲ=1463 ապրիլ 19՝ համաձայնութեամբ B և r իրարից անկախ ձեռագրերի: Այս թուին (1463) Զատիկը գալիս է ապրիլ 10-ին, ուստի Նոր Կիրակին ապրիլ 17-ին: Բոլոր ձեռագրերն ունին ապրիլ 19 չորեքշաբթի: Բայց Նոր Կիրակուայ՛ յաջորդ չորեքշաբթին գալիս է ապրիլ 20-ին. ուստի կամ պէտք է ապրիլ 19-ը ուղղել ապրիլ 20, և կամ չորեքշաբթին փոխել երեքշաբթի: Ընդունելին վերջինն ենք համարում, իբր Գ և Դ տառերի նմանութիւնից յառաջացած շփոթութեան արդիւնք: Հետևաբար իբր սրբի նահատակութեան ուղիղ թուական տալիս ենք ՋԺԲ=1463 ապրիլ 19 երեքշաբթի:

# 44.

## ՍՏԵՓԱՆՆՈՍ ՄԱՆՈՒԿ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍԵՑԻ

† Ջի=1471

*Սոյն նահատակի մասին ունինք միմիայն Չամչեանի հետևեալ տողերը. (Տես Չամչեան, Գ. 515)։*

Ի *թուին Հայոց Ջի նահատակեցաւ ի Կոստանդնուպօլիս Ստեփաննոս մանուկ, զորոյ զներբող մահուն ասէ թէ գրեաց մի ոմն յականատեսից հանդերձ պատմութեամբն, այլ մեք չունիմք ի ձեռին։*



Digitized by Google

# 45.

## ԳՐԻԳՈՐ ԽԱՐԲԵՐԴՑԻ

✝ ՋԻԳ=1474 յունվ. 16 կիր.

Սա էր յերկրէն Խարբերդու՝ որդի քահանայի Գրիգոր կոչեցելոյ. և էր սորա քեռայրն տաճկացեալ։ Եւ յաւուր միում հանդիպեցաւ սմա երթալ յայլ գեօղ ի հարսանիս։ Եւ տեսեալ զփեսայն իւր անդ՝ դարձոյց զերեսն իւր ի նմանէ, անհաւատ և ուրացօղ անելով նմա։ Զոր եկեալ պիղծն այն ի քաղաքն առ դատաւորն և ասէ թէ «Դաւիթ որդին աներոյ իմոյ անարգեաց զիս և զբերանս իմ և զհաւատս և զառաջնորդն մեր»։

Եւ առաքեալ դատաւորն տարաւ զԴաւիթ և կապեալ էարկ ի բանտ աւուրս Ի։ Եւ յամենայն օր երբեմն ողոքանօք և երբեմն սպառնալեօք կամէին թուլացուցանել զնա ի հաւատոցս Քրիստոսի և ոչ կարացին խախտել։ Եւ յետ քսան աւուրն վճիռ հատին նմա՝ զի հրով այրեսցի։

Եւ հանեալ ի բանտէն՝ սկսան չարչարել զնա ամենայն բազմութիւն քաղաքին. սրով խոցոտեցին և փայտիւ ծաղեցին, ապտակեցին զերեսս նորա և թքին և անողորմ վիրաւորեցին։

Եւ հայրն Դաւթի՝ Գրիգոր քահանայն լալով յորդորէր զմանուկն. «Որդեակ, որդեակ հօրս ցանկալի և փափագելի, մի երկնչիր ի յայս չարչարանացս, որ զմարմինդ միայն

Digitized by Google

ապականէ և զհոգիդ ոչ։ Այլ ուրախացիր որ յաւիտենից և անմահ կենացն ես ժառանգորդ և անպատում ուրախութեանն»։ Եւ Դաւիթ ցնծալի հոգւով ասէր. «Մի՛ մնար ինձ փրկութեան, հայր իմ, զի այսօր ինձ օր փեսայութեան է և օր ուրախութեան. և ահա ունիմ առնուլ հանդերձ փրկութեան և պատմուճան ուրախութեան և փոխանակ չարչարանացս՝ ահա ունիմ առնուլ զհանգիստն յաւիտենից»։

Եւ յորժամ լուան զայս բան ի բերանոյ Դաւթի ազգն անօրէն՝ բորբոքեցին հուր և առեալ զԴաւիթ՝ տարան յայրել. և փայլեցին երեսք նորա՝ որպէս զՍտեփաննոսին, և ընկեցին զԴաւիթ ի մէջ հրոյն՝ և ոչ այրեցաւ սուրբն առժամայն. այլ հուրն ի լոյս դարձաւ և ծիրանագոյն եղև։ Եւ անօրէնքն հանեալ զԴաւիթ ի հրոյն և սրախողխող կարեվէր խոցոտեցին զբոլոր մարմինն, մինչև ի սպառել շնչոյն. և ապա կրկին արկին ի հուրն։

Եւ եղև նշան սքանչելի, զի սիրտն և գլուխն ոչ այրեցաւ. և զայլ մասունք մարմնոյն այնչափ այրեցին, որ փոշի եղեն և զփոշին հողմով հոսեցին և արարին կորուստ։ Եւ զսիրտն տարեալ ընկեցին ի հրայրս բաղանեացն և բորբոքեցին հրով. և ոչ այրեցաւ ամենևին իբրև զպողովատիկ երկաթ։ Եւ բաղանիքն և պղինձ բաղանեացն հերձան յերկուս. որ և յահէն սասանեցան անօրէնքն և երկեան երկիւղ մեծ։

Եւ մինչդեռ քրիստոնեայքն ի սուգ էին և յերկիւղի կային, և հայրն Դաւթի մորմոքայր կսկծագին՝ յանկարծակի ճառագայթեցաւ լոյս պայծառ ակներև ամենեցուն ի վերայ նշխարաց սրբոյն Դաւթի խաչանման զաւուրս հնգետասան յամենայն գիշերի։ Եւ ուր տարեալ եղև նշխար սրբոյն Դաւթի՝ ի տուն և յեկեղեցի՝ փայլէր և շողայր լուսով։ Եւ ի լրման աւուրն երեսնի՝ կրկին ճառագայթեաց լոյս ի վերայ տեղեաց նահատակութեան սրբոյն Դաւթի, և աղաւնիք լուսափայլք երամօք տեսեալ հաւատացելոցն՝ որք խաղային ի վերայ նահատակութեան տեղեացն և երամօք թռչէին ընդ արևելս. որ և ի սքանչելի հրաշիցն հիա-

Digitized by Google

ցեալ քրիստոնէիցն՝ գոհութիւն մատուցանէին Աստուծոյ։ Եւ հայր և մայր մանկանն և ամենայն ազգայինքն սփոփեալ մխիթարեցան ի մեծ ողջոյն և ուրախութեամբ գոհանային զԱստուած։

Ե Կատարեցաւ երանելի վկայն Քրիստոսի Դաւիթ ի թուականիս Հայոց ԹՃԻԳ ամին, յունվարի ամսոյ ԺԶ, յաւուր կիւրակէի, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

Այս վկայաբանութիւնն ունի B ձեռագիրը· քաղոց Ա, դեկտեմբեր 9, Եղիշէ առաքեալից յետոյ, այս վերնագրով. «Ցայսմաւուր վկայաբանութիւն սրբոյն Դաւթի»՝ էջ 164 բ''—165 բ'։ Չամչեան, հատ. Գ. էջ 515 այս վկայի մասին միմիայն հետևեալ տողերն ունի. «Ի թուին ՉԻԳ նահատակեցաւ Դաւիթ որդի տէր Գրիգորի ի Խարբերդ կամ ըստ այլոց ի Կաֆա։»

# 46.

## ՍԻՐԱՆ ՀԻԶՆԱՑԻ

† ՋԻԵ=1476 յունվար 14 կիր.

Սա էր ի քաղաքէն Հիզնայ, հայ ազգաւ, սնեալ ուղղափառ հաւատով քրիստոնէութեան, երիտասարդ հասակաւ և վայելուչ տեսլեամբ, ԻԵ ամաց։ Եւ մայր սորա տաճկացաւ յազդմանէ չարին։ Վասն որոյ առաքեաց դատաւոր քաղաքին բերել զսուրբն Սիրուն, զի թերևս և զնա կարասցէ դարձուցանել ի մոլար օրէնսն իւր։ Իսկ սիրելեաց սրբոյն ազդ արարեալ նմա զի փախիցէ։ Եւ նա ոչ փախեաւ, այլ գնացեալ առ ազգականսն իւր, և արար զկտակն մահուան իւրոյ՝ որպէս պարտն պահանջէր։

Եւ գնացեալ ինքնակամ եկաց առաջի դատաւորին և ասաց համարձակ. «Գիտասցիր, մօլնայ, զի ես քրիստոնեայ եմ Եւ Քրիստոսի ծառայ»։

Ասէ ղադին. «Դարձիր ի Քրիստոսէ, և լեր տաճիկ՝ որպէս զմայրն քո. զի չէ պատեհ բաժանիլ քեզ ի մօրէն քումմէ, այլ պարտ է քեզ կեալ ընդ ծնօղին քո, և պաշտել ընդ նմա զհաւատ նորա»։

Ասէ սուրբն. «Մինչ ի յայն էր նա ինձ ծնօղ՝ որքան և ինքն հոգևոր ծնունդ էր սուրբ աւազանին, և երկրպագու խաչին Քրիստոսի։ Իսկ յորժամ մերկացաւ նա զշնորհք սուրբ աւազանին՝ որ է վերստին ծնօղ մեր, և ուրացաւ զԽաչելեալն, այսուհետև ոչ է ինձ մայր, այլ թշնամի և ատելի»։

Digitized by Google

Եւ դատաւորն ողոք անկեալ խոստացաւ տալ նմա ինչս բազում, այգիս և դրախտս և աղջիկս գեղեցիկս, զոր և ինքն կամեսցի տալ նմա ի կնութիւն։

Ասէ սուրբն. «Մի՛ կարծեր զիս որպէս պակասախելքս և կարճամիտս, որ պատրեալ ձգեսցես յօրէնսն քո. այլ յոր հաւատ որ ծնեալ եմ ես, ի նոյն մեռանելոց եմ։»

Վասն որոյ բարկացեալ դատին հրամայեաց հանել զնա ի բաց, և տանել չարչարել։ Եւ չար սպասաւորքն անդէն խոցեցին զնա խանջարով. և քարշեալ զնա ի վերայ երեսաց՝ իջուցին զնա ի վերնատանէն ի վայր։ Եւ տարեալ եդին խիճս հեղեղատի ի ներքս նորա. և յոյժ պնդեցին փոկով. և ապա խիստ գանեալ՝ կոտորեցին քարիւ զատամունս նորա։ Եւ այնպէս տարեալ արկին ի բանդ, և թողին զաւուրս երկուս։ Եւ ապա հանեալ ի բանտէն՝ հարցանէին. և գտին հաստատուն ի հաւատս Քրիստոսի։ Եւ ժողովեցին փայտ՝ զի այրեսցեն զսուրբն. և ոչ այրեցին, այլ ահացուցանէին զնա։ Եւ բերեալ կայծ կրակ լցին ի հողաթափս նորա. և ագուցին յոտսն։ Եւ հրախառն մոխիր հնոցէ արկին ի ծոց նորա. և նա կայր անկիզելի՝ շնորհօքն Քրիստոսի։

Իբրև տեսին անօրէնքն եթէ ոչ կարացին խախտել զերանելի մանուկն, առեալ ածին զնա ի ձիատուն մի. և կապեցին զնա ընդ յետս ի սիւն մի. և տարեալ զերկու ձեռսն ի յետոյ՝ պատեցին ի բոլոր սեանն։ Եւ պատատեցին զբոլոր մարմինն բարակ չուանով ընդ սիւնն. և ամենեքեան եկեալ թքանէին յերեսն նորա և ապտակէին, որպէս հրէայքն զԿենարարին։ Եւ ծակոտեցին զամենայն մարմին նորա սրով, և լցեալ ի վերայ վիրացն աղ՝ կսկծեցուցանէին։ Եւ ծակեցին զերկու թաթս ձեռինն՝ ըստ նմանութեան Տեառն ի խաչին. և ընդ արեանն հոսէին ի նմանէ քրտունքն։ Եւ առեալ անօրինացն ջուր՝ մատուցին նմա և ասեն. «Ըմպեա սակաւ մի. զի զովասցի լեզու քո։» Իսկ նա ոչ էառ՝

27. i ծակոտտեցին.

ասելով. «Ես ակն ունիմ՝ անմահական ջրոյն Քրիստոսի:» Եւ թողին զնա այնպէս՝ պնդեալ ընդ սիւնն զգիշերն ամենայն:

Եւ նա ի նոյն տանջանսն ննջեաց: Եւ ետես ի տեսլեան զսուրբն Սարգիս՝ Մարտիրոս որդւովն իւրով եկեալ յերկնից բերեալ նմա պսակ լուսեղէն: Եւ նա զարթուցեալ ուրախութեամբ օրհնէր զԱստուած:

Եւ ընդ լուսանալ առաւօտին՝ ժողովեցան այլազգիքն ի վերայ նորա, աչձակեալ հանին արտաքս՝ և հարցանէին: Եւ նա խնդութեամբ ետ պատասխանի, և դաւանեաց զՔրիստոս Աստուած՝ պուարթ երեսօք. և անարգեաց զՄահմէտ, և զամենայն հետևողք նորա: Իսկ նոցա բարկութեամբ լցեալ՝ կրճտեցին զատամունս իւրեանց ի վերայ նորա, և առեալ քարշեցին զնա տանել ի տեղի կատարմանն:

Եւ ի հասանել հանդէպ մեծ շուկային, ելին մեծատունք քաղաքին ընդ առաջ նորա. և բերին ի խանութս իւրեանց խումաչս բազումս. և մատուցին նմա, զի թերևս դառնայ ի հաւատոցն իւրոց:

Եւ սրբոյն պատասխանեալ ասաց. «Ամենայն մարդ զլաւն իւր կամենայ. եթէ ձեր հաւատդ լաւ է, նա ընդէր ձգէք կաշառօք ի վերայ քրիստոնէից. ապա յայտ է թէ ոչինչ է:»

Եւ դարձեալ զերեսն իւր յարևելս՝ խաչակնքեաց զդէմս իւր. և առժամայն հարեալ անօրինացն՝ կտրեցին զձեռսն իւր. և պատեալ շուրջ զնովաւ՝ մերկացուցին զնա. և քարշեալ զսուրս իւրեանց, աղաղակեցին միաբան ամենեքեան, և դիմեալ ի վերայ նորա, մխեցին առհասարակ զսուրս իւրեանց յարիւն նորա: Եւ նա կայր ի մէջ նոցա՝ որպէս զգառն անմեղ՝ մատնեալ անողորմ գայլոցն: Եւ ամենևին ոչ մնաց տեղի ողջ ի մարմին նորա: Եւ այնպէս կատարեցաւ սուրբն Սիրուն, որ գործովն զանունն ելից, և եղև սիրելի որդի Հօրն երկնաւորի, և անուանակից սէր անուանն Յիսուսի, և սիրուն անօթ Հոգւոյն ճշմարտութեան:

10. i զուարթ. 13. i ի տեղի. 22. i քաչակնքեաց. 32. i հօգւոյն.

Եւ ժողովեալ բազում ցաւագարաց, և առեալ յարենէն ամբիծ սուրբ Նահատակին, օծանէին զինքեանս և առժամայն առողջանային շնորհօքն Քրիստոսի։

Եւ տեսեալ Տաճկացն զբժշկութիւնն որ լինէին ի սրբոյն, խորհուրդ արարին զի այրեսցեն զնա հրով։ Իսկ ամիրայ քաղաքին ոչ եթող. այլ հրաման ետ քրիստոնէիցն՝ բառնալ և թաղել զնա՝ որպէս և կամեսցին։

Եւ երթեալ բազմութեան քահանայիցն և ժողովրդոցն՝ բարձին պատուով զպատուական մարմին սուրբ վկային Քրիստոսի։ Եւ եդին ի տապանի՝ առաջի Յարութեանն՝ սաղմոսիւք և օրհնութեամբ և երգօք հոգևորօք։

Կատարեցաւ սուրբ մանուկն Սիրունն՝ ի թուականիս մերում Ջ և ի ԻԵ ամին՝ յունուար ամսոյ ի ԺԴ, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

Սոյն սրբի վկայաբանութիւնը չենք գտել Ս. Էջմիածնի ձեռագրերի մէջ. ոչ էլ մի ուրիշ տեղից մեզ ծանօթ է։ Վերևում հրատարակուածը գտնուում է Կարնոյ մի ձեռագիր Յայսմաւուրքի մէջ, այս վերնագրով. «Յայսմաւ ուր վկայաբանութի սր. վկային քի սրբոյն Սիրունին». արտագրութիւնը ստացել ենք Կարնոյ Սանասարեան վարժարանի Հայերէն լեզուի ուսուցիչ Մեծ. պ. Աստուածատուր Խաչատրեանի շնորհիւ։ Այս առթիւ աւելի ընդարձակ տեղեկութիւն տես մեր յառաջաբանում։

# 47.

## ՍՏԵՓԱՆՆՈՍ ԽՈՍՏՈՎԱՆՈՂ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԱԹԵՒՈՅ ՔԵՌՈՐԴԻ ԻՒՐ ԵՒ ՄՕՐԵՂԲՕՐՈՐԴԻ ՆՈՐԻՆ

† ՋԼԲ=1483

Որ էր եղբօրորդի մեծ վարդապետին Ծմաւոնի և յազատ տանէ և ի մեծ ազգէ. որ և յետ հօրեղբօրն իւրոյ կալաւ զաթոռ մեծափառ ուխտին Տաթևոյ։ Ի սորա յաւուրսն աբեղայ մի շարժեալ ի սատանայէ չար ցանկութեամբ ի սէր աղջկան միոյ։ Եւ եղբարցն բազում անգամ խրատեալ զնա և նա ոչ լուաւ նոցա, այլ գործակցութեամբն սատանայի՝ այլ մեծագոյն չարի դիպեցաւ, զի առեալ զաղջիկն և գնացեալ ի գեօղ մի այլազգեաց և մտեալ ի տուն դատաւորին՝ տաճկացաւ։

Իսկ ազատորդին Տէր Ստեփաննոս՝ քանզի ունէր բազում ճորտս այլազգիս, հեծեալ նոքօք ի ձի և գնացեալ ի գեօղն յայն, քարշեաց զաբեղայն և զաղջիկն բռնութեամբ և բերեալ զաբեղայն՝ կացոյց ի տեղի իւր, և զաղջիկն եմոյծ ի կուսանոցն և յանձնեաց ի հաւատաւոր կանայսն։ Եւ այնպէս արժանացոյց զերկոսինն ապաշխարութեան։

Իսկ յետ այնորիկ՝ ի ժամանակս Եաղուպ փատշահին, անցելոց ամաց ի վերայ, ի Թաւրէզ, տեղի գտեալ անօրինացն և կամեցան վրէժխնդիր լինել և մատնեալ չարա-

1. b և չունի. 17. C փաշային.

խօսեցին զնա առ իշխան այնմ կողմանն՝ որ էր աԹաբակ և Հայրագլուխ ուրդուց փատշահին, որոյ անունն էր Սօֆի Խալիլ։ Որ յղեալ կոչեաց զեպիսկոպոսն սիրով ի պատուենենգութեամբ։ Եւ ելեալ գնաց միաժամութեամբ. տարաւ ընդ իւր և զքուերորդին իւր՝ որ էր եպիսկոպոս, և քեռորդին իւր՝ որ էր աբեղայ։

Իսկ իբրև եմուտ նոքօք առ իշխանն՝ կանգնեցաւ իշխանն ի վերայ ոտից իւրոց և եկն ընդ առաջ եպիսկոպոսին և կալաւ զձեռանէ նորա և տարաւ զի նստուցէ ի տեղին իւր։ Իսկ նա յետս կացեալ՝ ասէ. «Վասն Աստուծոյ, մի՛ ամաչեցուցաներ զիս. զի չեմ արժանի նստել ի բազմոցի քում։»

Իսկ նա ասէ. «Վասն այնորիկ նստուցանեմ զքեզ ի բարձի իմում, զի գիտասցես զկատարեալ սէրն իմ զոր ունեմ առ քեզ։»

Եւ եպիսկոպոսն ոչ լուաւ նմա, այլ նստաւ յաջմէ նորա, որպէս և սովոր էր յառաջմէ։

Ասէ իշխանն. «Վասն սիրոյ քո, երդուեալ է իմ, զի զքեզ ինձ երկրորդ արարից և զամենայն հուքմ իշխանութեան իմոյ տաց ի ձեռս քո և կացուցից զքեզ վերակացու տան իմոյ և ընտանեաց և տիրեսցես գանձուց իմոց և ստացուածոց, և քսան և երկու որդիքն իմ և ես հեծելովք մերովք հնազանդ լինիմք քեզ. և քո այոն այո՛ լինի ի վերայ մեր և ոչն ոչ։ Եւ տաց զդուստրն իմ քեզ ի կնութեան և լինիս ինձ ի փեսայ, գերագոյն ամենայն իշխանաց, ի դրան փատշահին։ Զայս ամենայն և առաւել քան զայս արարից քեզ, միայն Թէ լուիցես ինձ և գայցես յօրէնս մեր։»

Ասէ եպիսկոպոսն Ստեփաննոս. «Այդ որպիսի՞ ինչ է. միԹէ բան ինչ լուեա՞լ է քո ի բերանոյ իմմէ վասն այդմիկ կամ ի համբաւոյ ուրուք լուեա՞լ է քո։»

3. Ch զոր. 5. Ch զքեւերորդին. 7. C չունի իբրև. 8. h չունի երկրորդ և-ը. 13. C քեզ. 24. C զդուստն. h զդուստր. | h կնութեան. 26. C ձախ գրուած փատաՀին, յետոյ ուղղուած փատաշՀին.

Digitized by Google

Ասէ իշխանն. «Ո՛չ, այլ ես ինձէն հրամայեմ քեզ կատարել զայդ, զոր խօսեցայ։»

Ասէ եպիսկոպոսն. «Բաւ լիցի. մի՛ սասասցես ընդ իս զայդ։»

Ասէ իշխանն. «Իմ երկոտասան կենն յինէն թողած լինի թէ այդ բանիդ այլ ճար կայ. կամ պիտի քեզ իմ բանիս հաւանել և կամ չարաչար տանջանօք մեռանել։»

Եւ տաց բերել առաջի նորա ազնիւ հանդերձս ոսկենկարս, ընդ նմին և անօթս տանջանաց և ասէ ցնա. «Զոր և կամիս ընտրեա՛։»

Ասէ եպիսկոպոսն. «Ես պատրաստ եմ ի մեռանել վասն անուանն Քրիստոսի։»

Եւ հրամայեաց արկանել ի բանտ ընկերօքն և թողին անսուաղ զաւուրս ութ. և ապա բերեալ առաջի իւր, հարցանէր. և նա անվեհեր տայր պատասխանի և դաւանէր զՔրիստոս Աստուած։ Եւ դարձեալ էարկ ի բանտ և եթող անսուաղ այլ ևս աւուրս երկոտասան. և սուրբքն տանէին ուրախ մտօք նեղութեանն, և ի փառաբանութենէն Աստուծոյ ոչ դադարէին։

Եւ դարձեալ կրկին բերեալ առաջի իւր, հարցանէր. և եգիտ զնոսա հաստատուն ի հաւատս Քրիստոսի։ Եւ ապա հրամայեաց եռացուցանել լի ջրով կատսայ և ի միւս կողմն հուր բորբոքել ուժգին. և ետ կապել զնորընծայ եպիսկոպոսն՝ զքուերորդի Տէր Ստեփաննոսին՝ պարսկօրէն զերկուս ոտսն ի մի և զերկուս ձեռսն ի մի և անցուցանել զկապ ոտից ի պարանոցն և այնպէս՝ որպէս զկծիկ արարին յեռանդս ջուրցն ի մէջ պղնձին։ Եւ զաբեղայն որ էր քեռորդի Տէր Ստեփաննոսին, նոյնպէս կապեցին և անցուցին երկայն ձող մի յոտսն և ի ձեռսն ընդ ողն և կալեալ զնա երկու արանց ընդդէմ կրակին։ Եւ այնպէս առաջի Տէր Ստեփաննոսին՝ զեպիսկոպոսն խարշեցին և զաբեղայն խո-

8. Ch ոսկէ նկարս. 10. C կամես. 14. C ութն. 24. C զքըւերորդի. h զքըւէրորդի. 25. C զևրկու. | երկրորդ անգամ h երկուս. C զերկու. 26. h ոտիցն. 27. C պըօղընծին. h պղընծին. 29. C ողսն.

Digitized by Google

րովեցին. որ մատուցանէ սուրբ ողջակէզ և զոհ ընդունելի և խունկ անոյշ Տեառն Աստուծոյ, իբրև զպատարագն Աբելի, զՆոյի և զԱբրահամուն, յոր հոտոտեցաւ Տէր Աստուած ի հոտ անուշից։ Եւ նոքա այնպէս կատարեցան ի Քրիստոս։

Իսկ զՏէր Ստեփաննոսն դարձեալ արկին ի բանտ. և տային նմա հաց և ջուր հօգեպահ, յետ երկուց և երից աւուրց։ Եւ զմարմինս սրբոց վկայիցն առեալ ազգականացն բազում կաշառատուութեամբ և տարեալ թաղեցին ի մեծափառ վանս իւրեանց ի Տաթև։ Եւ վասն արհեպիսկոպոսին ցրուեցին բազում գանձս ի դուռն փաշային, աւելի քան զերկու հազար դեկան կարմիր. և ոչ կարաց փաշայն ազատել զնա ի ձեռաց նորա. զի ասէր թէ՝ «Երդուեալ եմ և ոչ կարեմ զիմ հալալն հարամ անել և զկանայն իմ թողուլ, որ են մարք որդւոցն իմոց, վասն աբեղայի միոյ»։

Եւ յետ տարւոյ միոյ՝ հանեալ զեպիսկոպոսն ի բանտէն, տարեալ առաջի իւր, հարցանէր ողոքանօք և սպառնալեօք։ Եւ նա զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ՝ զոր ունէր յինքեան, համարձակ խոստովանէր զՔրիստոս Աստուած։ Ընդ որ բարկացեալ իշխանն և ետ բերել ատամնահանս և քարշեալ զերեսուն և երկու ատամունս նորա, և հարին շուրջանակի ի գլուխ նորա կռանով որպէս զպսակ. և տարեալ արկին ի բանտ։ Եւ եկաց այնչափ ի բանդին, մինչև ողջացաւ ատամնահար վէրք գլխոյ նորա։ Եւ դարձեալ կոչեաց առաջի իւր, հարցանէր. և նա զնոյն դաւանութիւն հաւատոյ դարձեալ երկրորդէր առաջի նորա։ Եւ նա ետ բերել բևեռաքարշս և քարշեալ զմիս ոսկերաց նորա, ի վաթսուն տեղաց. և այնպէս վիրաւորեալ մարմնով տարեալ արկին ի բանտ։ Եւ կացեալ այնքան, մինչև ողջացաւ ամենայն վէրք ոսկերացն. և դարձեալ ածին զնա յատենի

7. C հօգէ պահ. | C երկու և երեք. 11. C ցրուեցին. 12. Ն դահեկան. 21. C և չունի երկրորդ անգամ. 23. C սխալմամբ կրկնէ անգամ ունի. նախ «և եկաց այնչափ ի բանտ», զոր նշաններով ջնջած է եւ յետոյ գրել է ձեւով «և եկաց...»։ | Ն ի բանտին. 29. C այնքայն.

և հարցանէին. և նա ևս անդադար դաւանէր զՔրիստոս Աստուած և տայր ցիշխանն. «Զի որպէս սալն դարբնաց ոչ հոգայ ի կռանահարաց, նոյնպէս և ես անհոգ եմ ի չարչարանաց. արա զինչ և կամիս»

Եւ սրտմտեալ անիծեալն՝ եւ հուր բորբոքել և կապեալ ըստ նմանութեան աքեղային, կախեալ ի վերայ կրակին, խորովեցին զամենայն ոսկերս նորա. և նա դեռ ևս կայր կենդանի՝ զօրութեամբն Քրիստոսի։ Եւ այնպէս խորովեալ անդամօք տարեալ արկին ի բանտ. և կացեալ այնչափ ի բանտին, մինչ որ ողջացաւ ամենայն հրայրեաց վէրք մարմնոյն. բայց այնքան այլագունեցաւ մարմին նորա յաղագս չարչարանացն, մինչ զի ոչ բաւէր ակն մարդոյ հայել ի մարմին նորա։

Եւ այնպէս հինգ ամ բոլոր ի չարչարանս և ի բանտ կացեալ կապանօք, սովով և ծարաւով, տևեաց այնքան տանջանացն։ Եւ ապա բերեալ իշխանն առաջի իւր և ասէ ողոքանօք. «Ձանձրացար և նեղեցար ի տանջելոյ զքեզ և ի տեսանելոյ զաղխողորմ խորտակումն մարմնոյ քո. և դու ընդէր ոչ ողորմիս անձին քում. մին բան խօսեաց առաջի մեր և զերծեալ ի մէնջ՝ գնա ի տուն քո և պաշտեա զհաւատս քո։»

Ասէ սուրբն. «Անհնար է այդմ լինել, մինչ շունչս իմ առ իս է։»

Եւ նա հիացեալ զարմացաւ և ասէ. «Միթէ մինչ է զօրութիւն սորա»

Եւ կոչեալ զմօլայն իւր և ասէ. «Ո՛վ, դանիշման, և ի գրոց պատմեա մեզ նորագոյն տանջանս, զոր արարեալ են առաջին թագաւորքն։»

Եւ մօլայն հրամայեաց գերծուլ զգլուխ նորա և օծանել մեղրով. և բերեալ զնաստակլորն՝ որ է սեաւ բզէզն, և եդին յօթն տեղի ի վերայ գլխոյ նորա և պատեալ զըմպոյզն, կործեցին զկորճն ի վերայ նորա և պատեալ ծրարեցին։

18. Ի զաղխողորմն. | C քոյ. 30. C զնստակլրոն. | Ch բզէզն.

Եւ նոքա փորեցին յիւրաքանչիւր դիմաց և ծակեալ մտին ի գագաթ նորա. և յայնմանէ խիստ նուաղեցաւ սուրբն, զի քան զամենայն տանջանսն խիստ և դժնդակ էր. մինչ զի քաղեցաւ հոգի նորա և ոչ մնաց ի նմա շունչ կենդանութեան. և այնպէս անկաւ յերկիր՝ իբրև զմեռեալ, մինչև բազմաց ասել թէ մեռաւ։

Իսկ նա յետ պահու միոյ ուշաբերեալ դարձաւ ի հոգի։

Եւ ընթացեալ քոյր սորոյն՝ մեծաւ հառաչանօք և պաղատանօք անկաւ յոտս մօր փառշահին՝ ասելով. «Թէ անպարտ իցէ եղբայրն իմ, ընդէր չարչարի զանազան տանջանօք՝ իբրև զպարտական. և եթէ ինչ մնասակար է կամ պարտական, աղաչեմ զքեզ՝ վասն կենաց և յաջողութեան փառշահին, հրամայեա փութով սպանանել զնա, զի ազատի յանհնարին տանջանացն։»

Եւ յուզարկեալ Բակումն՝ զվերակացու տանն իւրոյ առ Սոֆի Խալիլն, լի բարկութեամբ և ասէ. «Քանի՞ անէծս շահիս մեզ և զաւակաց մերոց և թեթևութիւն հաւատոց մերոց. արձակեա զայրդ անմեղ. զի զի՞նչ շահ է մեզ ի հեղմանէ արեան դորա։»

Եւ նա ասէ. «Ո՛չ կարեմ թողուլ վասն երդմանն իմոյ. այլ դու առաքեա և հան զնա բռնութեամբ ի ձեռաց իմոց. զի անպարտ մնամ ես յերդմանէն։»

Եւ այնպէս արարեալ՝ ազատեաց զնա ի ձեռաց նորա. և յուղարկեաց ի վանս իւր։ Իսկ նա յոյժ տրտմեցաւ և մեղադրեաց քուերն իւրոյ՝ վասն խափան առնելոյն նմա զասպարէզ նահատակութեանն իւրոյ։

Եւ ապա յետ տարւոյ միոյ, գնաց փափագանօք յԵրուսաղէմ և երկրպագեաց տնօրինական տեղեացն Քրիստոսի։ Եւ դարձեալ եկն ի սեպհական աթոռն իւր ի Տաթև և բարեձևութեամբ և ճգնաւոր առաքինութեամբ վճարեալ զմնացեալ ժամանակս կենաց իւրոց, փոխեցաւ յերկիրն

1. C յիւրաքանչ. 3. Ch դրժընդակ. 15. h բահումն. 18. h մերոյ.
21. C առաքեա բռնութեամբ. 25. Ch քըւերն. 27. h տարոյ.

կենդանեաց ի վերինն Երուսաղէմ, ի կարգս նահատակացն և ի համարս հայրապետացն։

Գործեցաւ այս ի ՋՂԲ թուականիս մերում, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

Սոյն վկայաբանութիւնն ունի միայն C ձեռագիրը, Մեհեկի ԻԸ և Մարտի 6, Պորփիւրոս եպիսկոպոսի, Ս. Գրիգոր Աղուանից կաթուղիկոսի վկայաբանութիւններից և Թաթլոյ և Վարոսի յիշատակութիւնից յետոյ՝ այս վերնագրով. «Յայսմ աւուր վկայաբանութիւն արհ եպիսկոպոսին Տաթևոյ տէր Ստեփաննոսին», էջ էճծօ—էճծգ, այն է 750′—753″։ Նոյնը հրատարակեց նաև Ալիշան, Սիսական, էջ 526—528, հետևեալ յառաջաբանութեամբ. «Թէպէտ և ի կարգի պատմութեան առաջնորդաց թեմին Տաթևու, յիշատակեալ էր համառօտիւ խոստովանողական հանդէս Ստեփաննոսի եպիսկոպոսի, այլ քանզի թերևս սակաւուց ոմանց ծանօթ լիցին իրքն, վասն ոչ գտանելոյ ի սովորական Յայսմաւուրս, զգտեալս մեր ի միում միայն՝ հրատարակեմք անթերի աստանօր. այն զի և նշանաւոր են դէպք, թէպէտ դժնդակք ի կիրս և ի լուրս։» Վկայաբանութեանս վերնագիրն է Սիսականի յիշատակած Յայսմաւուրքի մէջ. «Յիշատակ Տէր Ստեփաննոս արհեպիսկոպոսին Տաթևոյ»։ Հարկաւոր համարեցինք համեմատութեան առնել նաև Սիսականը՝ որը նշանակեցինք Ն տառով։

3. C ինն հարիւր լբ. Ն թձբ.

# 48.

## ՄՈՒՐԱՏ ՎԱՆԵՑԻ

† ՋԼԴ մարգաց ժԴ=1485

Սորա հայրն տաճկացեալ էր. վասն որոյ ըմբռնեցին զնա այլազգիքն, և առեալ ածին առաջի Սուլէյման իշխանին, որ էր աթաբակ և հայրագլուխ Եաղուպ փադշահին։

Ասէ ցնա իշխանն Սուլէյման. «Դարձիր ի հաւատս հօր քո և ես մեծամեծ պարգևաց արժան առնեմ զքեզ. և թէ ոչ լսես ինձ, չարաչար սպանանեմ զքեզ»։

Իսկ նա յայտնապէս անարգեաց զհաւատս հօրն իւրոյ և զօրէնս նոցա։ Վասն որոյ հրամանաւ իշխանին հարին զնա սրով ի կուշտն և քարշեցին ընդ երկիր հարկանելով աքցի և բռնցի։ Եւ նա բարձրաձայն դաւանէր զՔրիստոս Աստուած և փառաբանութիւն մատուցանէր ամենասուրբ Երրորդութեանն, որքան շունչն ի մարմնի էր. և անդէն արտաքոյ քաղաքին քարկոծ արարին զնա բազմութիւն Տաճկացն։

2. B զսա. | C ածին զնա. | C սուլէման. 5. C սուլէման. B չուճի. 6. B քոյ. | B մեծաց. 7. B չուճի լսես ինձ. | B չուճի զքեզ. 9. C զնա սրով հարին. 11. B բռընցի. C բըռընցի.

«Ներկայանալով մեզ, ասուած է արտօնագրում, մեր Նաղլովեց քաղաքի հայերը մեզ խնդրամատոյց եղան, որ մենք, ինչպէս որ խոստացել էր հանգուցեալ Ցերոնիմ Նաղլովեցկին, Գօղոլիայի վոյեվոտը և որի յանկարծական մահի պատճառով խոստումը չկարողացաւ կատարուել, թոյլ տանք իրենց տուն ու տեղ շինելու, և գոյք ձեռք բերելու, և թէ իրենք՝ կամենալով աւելի բարեշէն դարձնել քաղաքը, մտադրութիւն ունին ուրիշ տեղերից հայեր բերելու։ Այս իսկ պատճառով մենք մեր համաձայնութիւնն ենք յայտնում. որ ո՛չ միայն նրանք, որոնք վաղուց ի վեր գաղթել են մեր քաղաքը, այլ և նրանք, որ պէտք է գան, իրաւունք ունին հողեր գնել, շինութիւններ անել և արտօնագրի բոլոր ազատութիւններից օգտուել։ Բայց եթէ պատահած է, որ մէկն այստեղ տուն ու տեղ է շինել և յետոյ այլ ևս չէ ուզեցել այստեղ մնալ, այդպիսիներին կամ նրանց յաջորդներին թոյլ է տրւում յօժար կամօք դուրս գալ քաղաքից, տալով միայն մի որոշ գումար դուրս գալու համար։ Մենք տալիս ենք հայերին արօտատեղիներ (ցոյց են տուած սահմանները) և նոյն ժամանակ հրամայում ենք մեր պաշտօնեաներին որ ոչ ոք չհամարձակուի վնաս հասցնել այս տեղերին։ Այլ և մենք թոյլ ենք տալիս հայերին ունենալ իրենց համքարները և դատաստանականգործերում Կամենեցի նման ղեկավարուել իրենց օրէնքներով։ Այս արտօնագրով մենք ազատ ենք թողնում նրանց տները հարկերից և հրամայում ենք որ մեր պաշտօնեաներից ոչ մէկը չհամարձակուի նեղել նրանց առևտրի մէջ, որի համար մենք նշանակում ենք հայերին շուկաներում ազատ տեղեր, որպէս զի նրանք զերծ մնան եբրայեցիների և ուրիշ ազգերի հալածանքներից։ Բացի սրանից մենք թոյլ ենք տալիս որ Հայերն ունենան իրենց գինետըները ազատ և առանց հարկի, որ ոչ մի պարտաւորեցուցիչ (ПОВИННОЕ) գործ քաղաքում չունենան և այլն և այլն»։

Այս արտօնագիրը հաստատեց Ստանիսլաւ Կոնիցպօլսկին, Կրակովի Կաստելանը և պետական մեծ հեթմանը 29 Դեկտ. 1643 թ։ Այն ժամանակ Հայերն ունէին արտասահմանի ապրանքների մեծամեծ պահեստներ, առանձին ինքնա-

փառութիւն տասներկու դատաւորներից բաղկացած վօյտ Բաղդասարի գահերէցութեան ներքոյ, մինչև անգամ Անդրէաս արքեպիսկոպոսն ունէր այստեղ իւր աթոռը։ Հայերն ունէին մի քարաշէն եկեղեցի բարձրաւանդակի վերայ յանուն սուրբ կուսին. այլ և մի վանք, ուր քահանայք միանակեացների կեանք էին վարում։ 1648 թուից յետոյ եկաւ Հայաստանից Բողդան Սեֆերովիչը, ուր նա իւր երիտասարդութեան ժամանակ մարզւում էր ասպետական գործերում և որոնցով նա մեծ հռչակ ստացաւ լեհաց աշխարհում։ Նա ձգեց իւր հայրենիքը, հրաժարուեց իւր հայրենիքի այն փառաւոր ապագայից, որը թէ նրա դրութեանը նայելով և թէ նրա նախնեաց փառքին, սպասում էր այս երևելի մարդուն։ Նա իւր բոլոր ընդունակութիւնները նուիրեց լեհական հասարակապետութեան։ Նրա գալուստը մի ցանկալի բան էր այն քաղաքի համար, որին սպառնում էր միացած կազակների և թաթարների յարձակումը։ Մինչ Կօնէցպօլսկին պատերազմում էր թշնամիների աւելի նշանաւոր ոյժերի դէմ, ամբողջ քաղաքի պաշտպանութիւնը ու ապահովութիւնը յանձնուած էր Սեֆերովիչին և նրա հաշուով ժողոված զօրախմբին։ Երբ սպանութիւնները և հրդեհներն ոչնչացրել էին գրեթէ ամբողջ Պօդոլիան, Եազլովեցը հանգստութեան մէջ էր, որովհետև Սեֆերովիչն իւր զօրքերով, առանց որ և է անձնական ակնկալութիւնների, յետ էր մղում թշնամիների ոյժերը։

Այս տեսակ առաքինութեան և քաջութեան համար Հայերն առաջարկեցին Սեֆերովիչին ցմահ վօյտութիւն (կառավարութեան գահերէցութիւն)։ 1669 թուին աւագերէց էր (proboszcz—probst—настоятель) Տէր Յովհաննէս Տէրակոբովիչը, որն ունէր երկու օգնական՝ Տէր Աստուր Տէր Ներսէսովիչին և Տէր Յովհաննէս Գասպարովիչին։ Մայիսի 20, 1671 թուի, Շահին Գրիգորովիչը կտակեց իւր բաղանիքը հասարակութեանը։ Քաղաքն ունէր հայկական կոչուած դռներ, որը պահպանում էին նոյն իսկ Հայերը. 1672 թ. գրուեցաւ կտակ Մինաս Տիրինովիչից, որի սերնդից յառաջացան Մինասովիչները։ Սա ոչ միայն հայոց եկեղեցիներին կտակեց

Digitized by Google

մեծամեծ գումարներ, այլև լեհաց և ռուսաց եկեղեցիներին։ 5 փետրուարի 1676 թուի Սեֆերովիչը լեհաց ազնուականութեան լիւբեչ զինանշանի աստիճանով պարգևատրուեցաւ և ազգանուան կցուեցաւ Սոլէնդովսկի յաւելուածը։ Այսպիսի էր Սեֆերովիչ-Սոլէնդովսկու փառքը։ Բայց երբ Տաճիկներն իմացան, որ նա ինչ ինչ պատճառներով այլ ևս կարողանալու չէ իւր զօրագնդի գլուխն անցած պատերազմել իրենց դէմ, նրանք եկան բռնեցին Եազլովեցը և քանդեցին քաղաքի պարիսպները։ Հայերի մեծագոյն մասը գնաց Եազլովեցից ուրիշ քաղաքներ՝ ի միջի այլոց և Բրօդի, ուր տարան նոյնպէս սուրբ Կուսի պատկերը։ Եազլովեցից հեռացան նոյնպէս Հայոց վանքի միաբան կոյսերը, որոնց մասին գրուած է՝ «Եազլովեցում կար օրիորդ Հռիփսիմէ Սոլէնդովսկան, Ստեփան Սոլէնդովսկու դուստրը. այս վերջինս ձգեց իւր տունը, ամուսնուն, զաւակներին և հարստութիւնը և գնաց Երուսաղէմ Տիրոջ գերեզմանին ծառայելու։ Այնտեղ բերել տուեց նաև իւր կնոջը և Հռիփսիմէ աղջկան, որին մայրը նուիրեց Տիրոջ գերեզմանին, իսկ օրիորդն ինքը սուրբ գերեզմանի առաջ խոստացաւ պահել ընդ միշտ կուսական սրբութիւն։ Սրանք ամենքն այցելեցին բոլոր նուիրական տեղերը, և երբ հայրը մեռաւ, սրան թաղեցին Երուսաղէմում. իսկ իրենք վերադարձան Եազլովեց, ուր օրիորդ Հռիփսիմէն ըստ ծիսի հին եկեղեցւոյ (լուսաւորչական) ձեռնադրուեցաւ սարկաւագուհի Նիկոլ Թորոսովիչ, Լվովի արքեպիսկոպոսից։ Դրա համար շինուեցաւ Հայոց եկեղեցուն կից մի բնակարան, ուր սա շրջապատուած աշխարհային փորձութիւններով՝ կարողացաւ դէմ կենալ սրանց։ Կոյս Հռիփսիմէի մօտ եկաւ Մարիանէ Բողդանովիչեան. իսկ Տաճկաց արշաւանքի ժամանակ Աննա Միկոլաենան, որ փախել էր Տաճկաց ձեռքից և պահուել էր կոյս Հռիփսիմէի մօտ։ Երբ Տաճիկներն եկան Եազլովեց, սրանք փախան Եազլովեցից Բրօդի, ուր գտան իրենց արժանի յարգանքը։ Այնուհետև հայերը նորից երևեցան Եազլովեց թէև շատ սակաւ թուով 1700 թ.։ Այս ժամանակուան հայերից երևելի եղաւ Եան Բոհդանովիչը, որը գրաւեց Եան Ալէքսանդր Կոնեցպօլսկիի ուշադրութիւնը։

Digitized by Google

Բայց այս Հայերն այլ ևս ինքնավարութիւն չունեցան. Նրանք դատւում էին լեհաց, ռուտենների հետ, բայց յաճախ Հայերի միջից էր ընտրւում Վօյտը։

Քահանաները գործում էին լատին ծխերում։ 1703 թ. աւագերէց էր Եան Ամիրովիչը, 1707 ին Շիմոն Սաեցկևիչը, որի օրով 8 Մայիսի 1709 թ. Տէր Դէօդատ (Աստուածատուր) Ներսէսովիչը, Տրայանուպոլսի եպիսկոպոսը և Լվովի Հայոց Սուֆրագանը (յաջորդ) նուիրեց եկեղեցուն 1000 ոսկի, ոսկեայ շղթայ, սկիհ, մաղզման և սուրբ Գէորգի մասունքը, որ բերել էր Նէապօլսից։ 1731 թ. աւագերէց էր Ղազար Գրիգորովիչը, իսկ սկսած 1747 թուից մինչև 1755 թիւը Տէր Յովհաննէս Բոհդանովիչը և սրա ժամանակ միայն 3 հոգի հայ տանուտէր էին մնացել Եազլովիցում, և աւագերէցը կատարում էր երեսփոխանի պաշտօնը։

Հիմա դեռ ևս վօյտութիւն են անում Եան Բոհդանովիչը, Պաւէլ և Ստանիսլաւ Ասլանովիչները։ Երբ որ անհետացան միւս Հայերը, եկեղեցին և վանքը բարձ ի թողի մնացին։ 1809 թ. Քրիստոֆ Գրուդնիցկին, որ Պշեմիսլի մատակարարն էր (մեր камергеръ-ի նման աստիճան է, կոչւում է նաև спундщены և officier du gobelet Ֆրանսիայում) վերանորոգեց եկեղեցին և յոյն կաթոլիկ ծիսակատարութեանց համար նշանակեց, թողնելով սակայն դռների քարերի և յատակի վերայ փորագրուած հայերէն արձանագրութիւնները։ Վանքը և հայկական դռներն աւերուեցան, և մի ժամանակ Հայերի մայրաքաղաք կոչուած քաղաքի շատ յիշատակարաններ և իրեր անխնայ ընկած են ջհուդների տներում։ Այս է Եազլովեցի Հայոց պատմութիւնը։

Այժմ դառնանք Մինասովիչներին։ Մինասովիչը և նրա սերունդը յայտնի են եղած ամբողջ Լեհաստանում թէ գիտութեան, թէ արհեստների, և թէ պետական բարձրագոյն ծառայութեան ասպարիզում։ Ինչպէս տեսանք Եազլովեցի պատմութիւնից, Մինասովիչները առաջ են եկած Եազլովեցի հարուստ վաճառական՝ Մինաս Շիրինովիչից։ Սա իւր կտակով 1672 թուի Մարտի 15-ից աւանդել է Էջմիածնի վանքին 50 տալեր, նոյնքան էլ Երուսաղիմայ հայոց վանքին, Եազ-

Ժոլկեցի եկեղեցուն 200, նոյնքան էլ Եազլովեցի հայոց վանքի վերանորոգման, Եազլովեցի դոմինիկեան եկեղեցուն 30 լեհական ոսկի, ռուսաց եկեղեցուն 10 ոսկի, արուարձանի 3 եկեղեցիներից իւրաքանչիւրին 5 ոսկի, Սուրբ խաչի կամ կուսակրօն եղբայրների ընկերութեան 30 ոսկի։ Հայկական կոչուած դռների շինութիւնը, որն ինքն էր սկսել, յանձնեց վերջացնելու իւր որդուցը։ Քաղաքի բարենորոգութեան 300 ոսկի, և բացի սրանից մի առանձին գումար քաղաքին, եթէ դիպվամբ նա աւերուի թշնամիներից։ Երբ 1672 թուին Տաճիկներն առին Եազլովեցը, Մինասովիչների ամբողջ տոհմը գաղթեց մասամբ Լվով, մասամբ Զլոչովա, մասամբ էլ Վարշաւա։ Զարմանալի է, որ Մինասովիչները լինելով մի ծագումից, ստորագրւում էին մերթ Մինասևիչ, մերթ Մինաշևիչ և մերթ Մինազևիչ։ [1]

Հիմա տեսնենք, թէ ինչ է ասում Հ. Ռ. Պարոնչը Վարշաւայի Հայերի մասին։ Նրա կարծիքով՝ Հայերը հաստատաբար այս քաղաքն ուշ են եկած. յայտնի է սակայն, որ 1670 թուին սրանք ունէին իրենց քահանայ Տ. Գաբրիէլ Զախնովիչին, և եկեղեցական պաշտամունքը կատարում էին Հ. Հ. Աւգուստինեանց եկեղեցում։ Յետոյ շինուեցաւ մի խորան յանուն Սուրբ Լուսաւորչի Հ. Հ. Բեռնարդինեանց վանքում, և Հայերն այնտեղ էին կատարում իրենց ժամերգութիւնը։ Վարշաւայի Հայերից յայտնի են Գրիգոր Լըիշկևիչը և Մինասովիչները։

Վերոյիշեալ տեղեկութիւններից պարզ երևում է, թէ ինչու Մինասը կամ Մինասովիչն իւր որդի Յակոբի հետ թաղուած է Վարշաւայի կաթոլիկ եկեղեցում։ Նախ, Մինասովիչների մի մասը գաղթել էր Վարշաւա, և երկրորդ, որովհետև Վարշաւայում հայոց եկեղեցի չկար, բայց միևնոյն ժամանակ կարևորութիւն կար այսպիսի մի հռչակաւոր ընտանիքի անդամին, կամ գուցէ նոյն իսկ բարեգործ

1. Protocollon actorum Consistorii Archiepiscopatus Leopoliensis nationis armenae ab anno 1684 ad 1700. in fol. pag. 68. Արձանագրութիւն գործոց Կոնսիստորի Արքեպիսկոպոսութեան Լեոպոլսի ազգին Հայոց ի 1684 թ. 1700 թիւ երես 68.

Բայց այս Հայերն այլ ևս ինքնավարութիւն չունեցան. Նըրանք դատւում էին լեհաց, ռուտեննների հետ, բայց յաճախ Հայերի միջից էր ընտրւում Վօյտը:

Քահանաները գործում էին լատին ծխերում: 1703 թ. աւագերէց էր Եան Աւիրովիչը, 1707 ին Շիմոն Սաեցկեւիչը, որի օրով 8 Մայիսի 1709 թ. Տէր Դէոդատ (Աստուածատուր) Ներսէսովիչը, Տրայանոպոլսի եպիսկոպոսը և Լվովի Հայոց Սուֆրագանը (յաջորդ) նուիրեց եկեղեցուն 1000 ոսկի, ոսկեայ շղթայ, սկիհ, մաղզման և սուրբ Գէորգի մասունքը, որ բերել էր Նէապօլսից: 1731 թ. աւագերէց էր Ղազար Գրիգորովիչը, իսկ սկսած 1747 թուից մինչև 1755 թիւը Տէր Յովհաննէս Բոհդանովիչը և սրա ժամանակ միայն 3 հոգի հայ տանուտէր էին մնացել Եազլովիցում, և աւագերէցը կատարում էր երեսփոխանի պաշտօնը:

Հիմա դեռ ևս վօյտութիւն են անում Եան Բոհդանովիչը, Պաւէլ և Ստանիսլաւ Ասլանովիչները: Երբ որ անհետացան միւս Հայերը, եկեղեցին և վանքը բարձ ի թողի մնացին: 1809 թ. Քրիստոֆ Գրուդնիցկին, որ Պշէմիսլի մատակարարն էր (մեր камергеръ-ի նման աստիճան է, կոչւում է նաև спундщены և officier du gobelet Ֆրանսիայում) վերանորոգեց եկեղեցին և յոյն կաթոլիկ ծիսակատարութեանց համար նշանակեց, թողնելով սակայն դռների քարերի և յատակի վերայ փորագրուած հայերէն արձանագրութիւնները: Վանքը և հայկական դռներն աւերուեցան, և մի ժամանակ Հայերի մայրաքաղաք կոչուած քաղաքի շատ յիշատակարաններ և իրեր անխնայ ընկած են ջհուդների տներում: Այս է Եազլովեցի Հայոց պատմութիւնը:

Այժմ դառնանք Մինասովիչներին: Մինասովիչը և նրա սերունդը յայտնի են եղած ամբողջ Լեհաստանում թէ գիտութեան, թէ արհեստների, և թէ պետական բարձրագոյն ծառայութեան ասպարիզում: Ինչպէս տեսանք Եազլովեցի պատմութիւնից, Մինասովիչները առաջ են եկած Եազլովեցի հարուստ վաճառական՝ Մինաս Շիրինովիչից: Սա իւր կտակով 1672 թուի Մարտի 15-ից աւանդել է Էջմիածնի վանքին 50 տալար, նոյնքան էլ Երուսաղիմայ հայոց վանքին, Եազ-

Digitized by Google

ջովեցի եկեղեցուն 200, նոյնքան էլ Եազլովեցի Հայոց վանքի վերանորոգման, Եազլովեցի դոմինիկեան եկեղեցուն 30 լեհական ոսկի, ռուսաց եկեղեցուն 10 ոսկի, արուարձանի 3 եկեղեցիներից իւրաքանչիւրին 5 ոսկի, Սուրբ խաչի կամ կուսակրօն եղբայրների ընկերութեան 30 ոսկի։ Հայկական կոչուած դռների շինութիւնը, որն ինքն էր սկսել, յանձնեց վերջացնելու իւր որդուցը։ Քաղաքի բարենորոգութեան 300 ոսկի, և բացի սրանից մի առանձին գումար քաղաքին, եթէ դիպվամբ նա ազատուի թշնամիներից։ Երբ 1672 թուին Տաճիկներն առին Եազլովեցը, Մինասովիչների ամբողջ տոհմը գաղթեց մասամբ Լվով, մասամբ Զլոչով, մասամբ էլ Վարշաւա։ Զարմանալի է, որ Մինասովիչները լինելով մի ծագումից, ստորագրւում էին մերթ Մինասեւիչ, մերթ Մինաշեւիչ և մերթ Մինազեւիչ։[1]

Հիմա տեսնենք, թէ ինչ է ասում Հ. Ռ. Պարոնչը Վարշաւայի Հայերի մասին։ Նրա կարծիքով՝ Հայերը համեմատաբար այս քաղաքն ուշ են եկած. յայտնի է սակայն, որ 1670 թուին սրանք ունէին իրենց քահանայ Տ. Գաբրիէլ Զախնովիչին, և եկեղեցական պաշտամունքը կատարում էին Հ. Հ. Աւգուստինեանց եկեղեցում։ Յետոյ շինուեցաւ մի խորան յանուն Սուրբ Լուսաւորչի Հ. Հ. Բեռնարդինեանց վանքում, և Հայերն այնտեղ էին կատարում իրենց ժամերգութիւնը։ Վարշաւայի Հայերից յայտնի են Գրիգոր Լըրիշկեւիչը և Մինասովիչները։

Վերոյիշեալ տեղեկութիւններից պարզ երևում է, թէ ինչու Մինասը կամ Մինասովիչն իւր որդի Յակոբի հետ թաղուած է Վարշաւայի կաթոլիկ եկեղեցում։ Նախ, Մինասովիչների մի մասը գաղթել էր Վարշաւա, և երկրորդ, որովհետև Վարշաւայում հայոց եկեղեցի չկար, բայց միևնոյն ժամանակ կարևորութիւն կար այսպիսի մի հռչակաւոր ընտանիքի անդամին, կամ գուցէ նոյն իսկ բարեգործ

1. Protocollon actorum Consistorii Archiepiscopatus Leopoliensis nationis armenae ab anno 1684 ad 1700. in fol. pag. 68. Արձանագրութիւն գործոց Կոնսիստորի Արքեպիսկոպոսութեան Լեոպոլսի ազգին Հայոց ի 1684 թ. 1700 թիւ երես 68.

Digitized by Google

Մինասին թաղել եկեղեցում, ուստի այս մի զարմանալի կամ ենթադրութիւններ ծագեցնող հարց չպէտք է երեւայ մեր աչքին։ Գուցէ՝ Յուսիկ սրբազանի յիշած Սվէնտի Եակսկի (?) եկեղեցին էլ այն 2—3 եկեղեցիներից մինը լինի, ուր Վարշաւայի Հայերը կատարում էին իրենց եկեղեցական պաշտամունքները։

Ընդունելով, որ 1666 թուի Հոկտ. 1 արդէն բոլոր հայ համայնքները միացել էին կաթոլիկ եկեղեցուն, պէտք է կարծել, որ Մինասովիչը՝ որ մեռել է Հ. սրբազանի մէջ բերած արձանագրութեան հիման վրայ 1677-ին, կաթոլիկ է եղած։ Այնուհետեւ, թէ որքան Մինասը կամ նրա որդի Յակովբը նպաստել են միութեան գործին եւ ըստ այնմ աջակից են եղած Պիդուին եւ Է. Գալանոսին, կարելի է ասել հետեւեալը. որքան որ մենք հետազօտենք հայ համայնքների պատմութիւնը, մենք կտեսնենք երկու տեսակ մարդիկ։ Սրանից առաջիններն ուղղակի թշնամի են իրենց ազգակիցներին, սրանք խորշում զզւում են հայ անուն կրելուց եւ շատ ուրախ կլինէին, եթէ մի որեւէ դէպք ներկայանար բոլորովին հզօրի հետ ձուլուելու միանալու։ Այս տեսակ մարդիկ ըստ մեծի մասին պատկանում են բարձր դասակարգերին։ Սրանք կան հիմա, եղել են եւ առաջ, կային եւ Լեհաստանում դեռ Նիկոլ Թորոսովիչը չեղած ժամանակ։ Սրանք ստացել էին Լեհական պետութիւնից ազնուականութիւն, պարծենում էին, որ իրենց ազգանուան վերջաւորութիւնը «ինչ»ից «սկի» է փոխուած։ Յիրաւի, սրանք գիտակցաբար, եգոիստական ամեն մի հնարներով աջակից եղան Հայերի համար երկնից արքայութեան դուռը բացող Պետու եւ Գալանոս վարդապետներին։ Յիշենք ծերունի հայ ազնուական Սլոնիմսկուն, որին Պիդուն իւր շնորհակալութիւնն է յայտնում միութեան գործին մեծամեծ օգուտներ տուած լինելու պատճառով. յիշենք կոմս Վակովսկիներին, որոնք նոյն ոգով էին գործում։ Սրանք Աւագովիչից դարձան Աւագովսկի եւ ապա կոմսութեան հետ միասին փոխեցին ազգանունը Վակովսկի։ Ես չեմ ուզում թուել մի առ մի այսպիսիներին. սրանց թիւը շատ մեծ է։ Սրանց կարելի է հա-

Digitized by Google

տարակութեան վնասակար անդամներ համարել ամեն ժամանակ և ամեն պարագաներում։

Երկրորդները մեր ազգի մեծագոյն մասն են կազմում։ Այս տիպարը, կարծեմ, յատուկ է միայն հայ ազգին։ Ազգային վերաբերմամբ սրանք անտարբեր են, եկեղեցւոյ տեսակէտից կոսմոպոլիտ են, եթէ միայն հարցը քրիստոնէական կրօններին է վերաբերում։ «Բոլորը մէկ է, նա էլ մեզ նման խաչապաշտ ազգ է,» ասում են սրանք, և առանց խըտրութեան յաճախում են օտար եկեղեցիներ։ Այս գեղեցիկ և քրիստոնէավայել, բայց արդի ժամանակին անյարմար, յատկութիւնը արգասիք է հայկական եկեղեցւոյ համբերող ոգուն, և առաջուան ժամանակները դա աւելի մեծ էր, քան թէ այժմ։ Ըստ իս, Լեհաստանի հայոց միութեան գործին ոչ այնքան Նիկոլի գործունէութիւնն ու բռնած քաղաքականութիւնը նպաստեց, որքան շատ ուրիշ պատճառների հետ և հայ հասարակութեան այսպէս կոչուած համբերող ոգին, քանի որ սոյնպիսի ձգտումներ ունեցող հոգիներ և մինչև անգամ հովուապետներ Հայերը շատ են ունեցել։ Միութեան հեղինակները այս բանը շատ լաւ գիտէին, և առանց վիրաւորելու Հայերի կրօնական զգացմունքները, աստիճանաբար, սակաւ առ սակաւ, առանց Էջմիածնի կամ նրա պետի վարկը ձգելու առաջ էին տանում իրենց գործը։ Նրանք օգուտ քաղելով վերը յիշած Հայոց յատկութիւնից, հող պատրաստեցին, շատ երիտասարդների Հռոմ էին ուղարկում և վարժեցնում իրենց դպրոցներում։

Այնպէս որ այս միութիւնը իւր սկզբում այնքան էլ բռնի չէր, որքան մենք մեզ երևակայում ենք, նա վերջը միայն շատ բռնի կերպարանք ստացաւ, երբ Լեհաց պետութիւնը խառնուեց այս գործի մէջ։ Հայերը միայն վերջերը տեսան՝ որ իրենք սակաւ առ սակաւ զիջանելով բարի կաթոլիկ վարդապետների առաջարկութիւններին, ցինի եկան, կամ ինչպէս ռուսերէն ասում են опростоволосились.

Եպլոփեցցի Մինասն անխտիր օգնում է, և ռուսաց եկեղեցւոյն, և կաթոլիկների, և Էջմիածնի և Երուսաղէմի

Digitized by Google

վանքերին և եթէ զէնք էլ է դառնում այս կամ այն եզուիտի ձեռքում, նա դառնում է անգիտակցաբար։

Ամփոփելով այս ամենը, հետևեալ եզրակացութիւններին կարող եմ գալ։

1. Թէև իմ բերած նիւթերից չէ երևում, որ իմ և Յուսիկ որբազանի յիշած Մինասները նոյնն են, յամենայն դէպս ակներև է, որ Վարշաւայի եկեղեցում թաղուած Մինասը Եաղլովեցի այն յայտնի Մինասովիչներիցն է, որոնք 1672 թուին գաղթել են Վարշաւա։

2. Մայրաքաղաքի կաթոլիկ եկեղեցում թաղուած լինելու պատճառն էլ այն է, որ Մինասովիչներն անուանի մարդիկ են եղած և գուցէ դա իմ յիշած կտակ անող բարերարն է։

3. Մահուան տարեթուից երևում է, որ սա նորընծայ կաթոլիկներիցն է (թէև ինքը գուցէ չէ էլ հասկանում) և այս պատճառով թաղուած կաթոլիկ եկեղեցում։

**Սահակ Թանգեան**

26 ապրիլ 1902
Ն.-Նախիջեւան

# ԵՐԿԱԹԷ ԴԻՄԱԿԸ

«Արարատի» այս տարուայ առաջին համարում Գեր. Յ. եպ. Մովսէսեանցը «Անցեալ դարերի յիշատակ» յօդուածի մէջ խօսելով Կ. Պոլսոյ հայոց Աւետիք պատրիարքի մասին, ի միջի այլոց յիշում է, թէ «կարծողներ կան, որ պատմութեան մէջ յայտնի Երկաթէ Դիմակով մարդը Աւետիք պատրիարքն էր», որով կարծես նորից ծագում է այն թիւրիմացութիւնը, թէ արդարև Երկաթէ Դիմակով մարդը կարող է նաև մեր Աւետիք պատրիարքը լինել։ Մինչդեռ պատմութեան մանրակրկիտ ուսումնասիրութեամբ արդէն պարզաբանուած է այդ խնդիրն, և այլ ևս ոչ մի կասկածի տեղիք չի մնում։

Բայց որովհետև Երկաթէ Դիմակը նոյն իսկ մինչև վերջին տարիներս գրաւել է եւրոպական յայտնի պատմաբաններին, գէտ-

Digitized by Google

նականների, վիպասանների ուշադրութիւնը և, մանաւանդ, Երկաթէ Դիմակի հետ կապուած է նաև մեր Աւետիք պատրիարքի անունը, ուստի կարծում եմ,՝ որ անհետաքրքիր չի լինիլ մեզ ևս ծանօթ լինել Երկաթէ Դիմակի պատմութեան հետ։

---

Ներկայումս Պարիզի հրապարակներից մէկը զարդարուած է վեհական արոյրէ արձանով, որի գլուխը պսակում է Ֆրանսիայի հանճարը։ Բայց մի ժամանակ այդ արձանի տեղը գտնւում էր հռչակաւոր ու սոսկալի Բաստիլը, որ միանգամայն թէ՛ ամրոց էր և թէ բանդ։ Սկզբում Բաստիլը Սենդ-Անտուան փողոցի բերանին շինուած երկու բուրգ էր միայն, որ նպատակ ունէր Պարիզը պաշտպանել անգլիացիների յարձակումներից, և հէնց այդ նպատակով էլ Կարոլոս V 1369-ին այդ աշտարակները՝ նորանոր յաւելուածներով, դարձրեց բերդ, ամրոց։ Տարիների ընթացքում Բաստիլը ամրանալով ու ընդարձակուելով դարձաւ մի այնպիսի զարհուրելի բանդ, որտեղ մտնողն այլ ևս դժուարութեամբ կարող էր դուրս գալ։ Այդտեղ բանդարկուել են յայտնի քաղաքագէտներ, բարձրաստիճան ազնուականներ ու հասարակական գործիչներ, տաղանդաւոր գիտնականներ. այդտեղ են բանդարկուել նաև բազմաթիւ գրքեր, նախագծեր, ձեռագրեր, որոնք զանազան նկատումներով հարկաւոր են համարուած գաղտնի պահելու։ Բաստիլը մի կենդանի գերեզման էր, ուր թաղում էին հասարակական, պետական և նոյն իսկ մասնաւոր անհատների շահերին վնասակար համարուած անձերին՝ օգտուելով «բանդարկութեան գաղտնի հրամաններից» (lettres de cachet), որոնք նշանաւոր չափով չարիք էին կազմում ֆրանսիական ժողովրդի համար։

Ինչպէս յայտնի է lettres de cachet կոչւում էին ֆրանսիական թագաւորների գաղտնի հրամանագիրները, որոնց տակ նախապէս ստորագրած էին լինում թագաւորը կամ մինիստրը։ Այդպիսի հրամանագիրների շնորհիւ բանդարկւում կամ երկրի սահմաններից աքսորում էին այն անձանց, որոնց հասարակական կեանքից հեռացնելը կարևոր էր նկատուած տէրութեան համար։ Այն մարդիկ, որոնք կապեր ունէին արքունիքի հետ, կամ որոնք հարուստ էին, միշտ հնարաւորութիւն ունէին ձեռք բերելու այդ հրամանագրերից և ըստ հաճոյից գործածել դրանք, որովհետև դրանց մէջ նշանակուած չէր լինում բանդարկութեան կամ աքսորի ենթարկուելիք անձը։ Կարելի է երևակայել, թէ ինչպիսի ընդարձակ դուռ էր բացուած անձնական շահերի կամ վրէժխնդրութեան համար։

Digitized by Google

Եւ Բաստիլը միշտ լի էր «գաղտնի հրամանով» ձերբակալուած կալանաւորներով, որոնցից շատերին պահում էին այդ արգելարանի խոնաւ խցերում, որոնք այրերի բնաւորութիւն ունէին։ Եւ շատ-շատերը 20—30 տարիներ հեծում էին այդտեղ՝ յաճախ ենթարկուելով կտտանքների ու տանջանքների. պատահում էին դէպքեր, երբ մի անմեղ կալանաւոր մոռացութեան էր տրւում և 30 տարիներ պէտք է սպասէր, որ իրեն քննութեան ենթարկէին։ Բնականաբար «գաղտնի հրամաններից» ընդարձակ չափով օգտւում էին նաև կաթոլիկ հոգևորականներն ու ճիզուիտները, որոնց համար ոչ գութ կար, ոչ արդարութիւն, որոնք չգիտէին խնայել մինչև անգամ 7—15 տարեկան երեխաներին։

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ մի այսպիսի հաստատութիւն, ինչպէս Բաստիլն էր, որի անուան հետ կապուած էին սոսկալի եղեռնական պատմութիւններ ու մարտիրոսական չարչարանքներ, կարող չէր զզուանք և զայրոյթ չառաջացնել ժողովրդի մէջ։ Եւ ահա ֆրանսիական մեծ յեղափոխութեան սկիզբը դրուեցաւ նրանով, որ 1789 թ. յունիսի 14-ին խուժանը յարձակումով տիրեց Բաստիլին, բոլոր կալանաւորներին ազատ արձակեց, իսկ շէնքը քարուքանդ արաւ։ Մի քանի օր յետոյ, յունիսի 29-ին, ազգային ժողովը բոլորովին վերացրեց «գաղտնի հրամանը»։

---

1698 թ. սեպտեմբերի 18-ին ահա հէնց այդ զարհուրելի Բաստիլը մտան մի խումբ զինուած մարդիկ, որոնց գլուխ էր անցել Սեն-Մարսը, որ Լուդովիկոս XIV-ի հրամանով Բաստիլի բերդապետ էր նշանակուած և այդ օրն առաջին անգամ լինելով իւր նոր պաշտօնն էր ստանձնում։ Բայց նա մենակ չէր. նա իւր հետ բերում էր նաև մի խորհրդաւոր կալանաւոր, որ իւր դէմքին սև դիմակ ունէր։ Ոչ ոք չգիտէր, թէ ո՞վ էր այդ մարդը, ինչի՞ համար էր այդպիսի անսովոր դրութեան մէջ ընկել։ Այսքանն միայն յայտնի էր, որ Սեն-Մարսը նրան բերում էր հարաւից, Պրովանսից և ամբողջ ճանապարհին գիշեր-ցերեկ, զէնքը ձեռքին, անքուն աչքերով հսկելիս է եղել կալանաւորին և չի թոյլ տուել, որ ոք մինի հետ յարաբերութիւն ունենայ կամ խօսի։ Բաստիլում կալանաւորի համար կանխաւ պատրաստուած է եղել խայտիկ սենեակներից մէկը. ուրեմն դա պէտք է որ նշանաւոր մի անձն լինէր։

Անցաւ մօտ հինգ տարի։ 1703 թ. նոյեմբերի 20-ին, երեկոյեան ժամը 5-ին Բաստիլի մի քանի ծառայողներ բանդից գաղտնապէս հանում են մի անյայտ դիակ և տանում թաղում ս. Պօղոս եկեղեցու գերեզմանատանը, ուր մատեանի մէջ հանգուցեա-

լին նշանակում են Մարշիալի (Marcialy) անունով։ Դա խորհրդաւոր Երկաթէ Դիմակաւորն էր, որին բանդում անուանում էին «Պրօվանսի կալանաւորը», որովհետև Սէն-Մարսը Պրովանսից էր հետը բերել և ոչ մի մարդու չէր թոյլ տուել, որ նրա հետ գործ ունենայ։

Ահա այն բոլորը, որ յայտնի էր «Երկաթէ դիմակով մարդու» մասին։

Անթափանցելի խաւարը պատել էր նրան և առատ նիւթ տալիս մարդկանց երևակայութեան ու հետաքրքրութեան։ Եւ մարդկային անհանգիստ միտքը, որ միշտ հետամուտ է դէպի խորհրդաւորն ու գաղտնին, կարող չէր դադար առնել, մինչև որ չմերկացնէր ճշմարտութիւնը։ Շատ գիտնականներ, իմաստասէրներ, պատմաբաններ, վիպասաններ ոչ միայն Ֆրանսիայում, այլ և Անգլիայում, Գերմանիայում, Իտալիայում հատորներ են նուիրել այդ խնդրին և չեն կարողացել ենթադրութիւնների սահմանից անցնել։ Վոլտեր, Ֆրերոն, Սենտ-Ֆուա, Լագրանժ-Շանսէլ, Դրէֆֆէ ուսումնասիրութիւններ են հրատարակել։ Մ. Տոպէնը իւր „L'homme au masque de fer" (Երկաթէ դիմակով մարդը) ուսումնասիրութեան մէջ յիշում է 52 հեղինակների անուններ, որոնք առանձնապէս զբաղուել են այդ գաղտնիքը պարզելու համար, բայց մեծ մասամբ անաջող։

«Երկաթէ Դիմակը» գաղտնիք է եղել ոչ միայն սովորական մահկանացուների համար, հապա և պետերի համար։ Նապոլէօն I շատ անգամ խօսելով այդ մասին ցաւ էր յայտնում, որ չգիտէ, թէ ո՛վ է այդ խորհրդաւոր կալանաւորը։ Լուի-Ֆիլիպ թագաւորը նոյնպէս յաճախ խօսք էր բանում այդ մասին և ամեն անգամ յայտնում, թէ իրեն համար էլ այդ գաղտնիքը միշտ գաղտնիք է մնացել։ Նոյն է եղել նաև Լուդովիկոս XV, XVI և ուրիշների համար։

Եւ քանի «Երկաթէ Դիմակի» մասին գրուածքները աւելանում էին, այնքան էլ աւելանում էին նաև զանազան ենթադրութիւններն, ու խնդիրը փոխանակ պարզուելու աւելի ու աւելի բարդւում էր։ Եւ, ըստ երևոյթին, ոչ մի յոյս չկար. գաղտնիքը լուծելու, մինչև որ Մ. Տոպէնը մանրամասն հետազօտութեան ենթարկելով Ֆրանսիայի արտաքին գործերի ու ծովային մինիստրութեան պաշտօնատներքի մէջ գտնուած բոլոր 1660—1710 թ. բանդարկեալներին վերաբերեալ տպուած ու անտիպ նամակներն ու գրութիւնները կարողացաւ պարզել ճշմարտութիւնը և 1869 թ. հրատարակել „L'homme au masque de fer" գրքի մէջ։ Նա այդ նպատակով ստիպուած էր քայլ առ քայլ հետևելու այն բոլոր անձանց կենցաղավարութեանը, որոնց մասին կասկած էր յայտ-

Եւ Բաստիլը միշտ լի էր «գաղտնի հրամանով» ձերբակալուած կալանաւորներով, որոնցից շատերին պահում էին այդ արգելարանի խոնաւ խցերում, որոնք այրերի բնաւորութիւն ունէին։ Եւ շատ-շատերը 20—30 տարիներ հեծում էին այդտեղ՝ յաճախ ենթարկուելով կտտանքների ու տանջանքների. պատահում էին դէպքեր, երբ մի անմեղ կալանաւոր մոռացութեան էր տրւում և 30 տարիներ պէտք է սպասէր, որ իրեն քննութեան ենթարկէին։ Բնականաբար «գաղտնի հրամաններից» ընդարձակ չափով օգտւում էին նաև կաթոլիկ հոգևորականներն ու ճիզուիտները, որոնց համար ոչ գութ կար, ոչ արդարութիւն, որոնք չգիտէին խնայել մինչև անգամ 7—15 տարեկան երեխաներին։

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ մի այսպիսի հաստատութիւն, ինչպէս Բաստիլն էր, որի անուան հետ կապուած էին սոսկալի եղեռնական պատմութիւններ ու մարտիրոսական չարչարանքներ, կարող չէր զզուանք և զայրոյթ չառաջացնել ժողովրդի մէջ։ Եւ ահա ֆրանսիական մեծ յեղափոխութեան սկիզբը դրուեցաւ նրանով, որ 1789 թ. յուլիսի 14-ին խուժանը յարձակումով տիրեց Բաստիլին, բոլոր կալանաւորներին ազատ արձակեց, իսկ շէնքը քարուքանդ արաւ։ Մի քանի օր յետոյ, յունիսի 29-ին, ազգային ժողովը բոլորովին վերացրեց «գաղտնի հրամանը»։

---

1698 թ. սեպտեմբերի 18-ին ահա հէնց այդ զարհուրելի Բաստիլը մտան մի խումբ զինուած մարդիկ, որոնց գլուխ էր անցել Սէն-Մարսը, որ Լուդովիկոս XIV-ի հրամանով Բաստիլի բերդապետ էր նշանակուած և այդ օրն առաջին անգամ լինելով իւր նոր պաշտօնն էր ստանձնում։ Բայց նա մենակ չէր. նա իւր հետ բերում էր նաև մի խորհրդաւոր կալանաւոր, որ իւր դէմքին սև դիմակ ունէր։ Ոչ ոք չգիտէր, թէ ո՞վ էր այդ մարդը, ինչի՞ համար էր այդպիսի անսովոր դրութեան մէջ ընկել։ Այսքանս միայն յայտնի էր, որ Սէն-Մարսը նրան բերում էր հարաւից, Պրովանսից և ամբողջ ճանապարհին գիշեր-ցերեկ, զէնքը ձեռին, անքուն աչքերով հսկելիս է եղել կալանաւորին և չի թոյլ տուել, որ ոք մինի հետ յարաբերութիւն ունենայ կամ խօսի։ Բաստիլում կալանաւորի համար կանխաւ պատրաստուած է եղել խպտիկ սենեակներից մէկը. ուրեմն դա պէտք է որ նշանաւոր մի անձն լինէր։

Անցաւ մօտ հինգ տարի։ 1703 թ. նոյեմբերի 20-ին, երեկոյեան ժամը 5-ին Բաստիլի մի քանի ծառայողներ բանտից գաղտնապէս հանում են մի անյայտ դիակ և տանում թաղում ս. Պօղոս եկեղեցու գերեզմանատանը, ուր մատեանի մէջ հանգուցեա-

Digitized by Google

լին նշանակում են Մարշիալի (Marcialy) անունով։ Դա խորհրդաւոր Երկաթէ Դիմակաւորն էր, որին բանդում անուանում էին «Պրովանսի կալանաւորը», որովհետև Սեն-Մարսը Պրովանսից էր հետը բերել և ոչ մի մարդու չէր թոյլ տուել, որ նրա հետ գործ ունենայ։

Ահա այն բոլորը, որ յայտնի էր «Երկաթէ դիմակով մարդու» մասին։

Անթափանցելի խաւարը պատել էր նրան և առատ նիւթ տալիս մարդկանց երևակայութեան ու հետաքրքրութեան։ Եւ մարդկային անհանգիստ միտքը, որ միշտ հետամուտ է դէպի խորհրդաւորն ու գաղտնին, կարող չէր դադար առնել, մինչև որ չմերկացնէր ճշմարտութիւնը։ Շատ գիտնականներ, իմաստասէրներ, պատմաբաններ, վիպասաններ ոչ միայն Ֆրանսիայում, այլ և Անգլիայում, Գերմանիայում, Իտալիայում հատորներ են նուիրել այդ խնդրին և չեն կարողացել ենթադրութիւնների սահմանից անցնել։ Վոլտեր, Ֆրերոն, Սենտ-Ֆուա, Լագրանժ-Շանսէլ, Գրիֆֆէ ուսումնասիրութիւններ են հրատարակել։ Մ. Տոպէնը իւր „L'homme au masque de fer" (Երկաթէ դիմակով մարդը) ուսումնասիրութեան մէջ յիշում է 52 հեղինակների անուններ, որոնք առանձնապէս զբաղուել են այդ գաղտնիքը պարզելու համար, բայց մեծ մասամբ անաջող։

«Երկաթէ Դիմակը» գաղտնիք է եղել ոչ միայն սովորական մահկանացուների համար, հապա և պետերի համար։ Նապոլէօն I շատ անգամ խօսելով այդ մասին ցաւ էր յայտնում, որ չգիտէ, թէ ո՛վ է այդ խորհրդաւոր կալանաւորը. Լուի-Ֆիլիպ թագաւորը նոյնպէս յաճախ խօսք էր բանում այդ մասին և ամեն անգամ յայտնում, թէ իրեն համար էլ այդ գաղտնիքը միշտ գաղտնիք է մնացել։ Նոյն է եղել նաև Լուդովիկոս XV, XVI և ուրիշների համար։

Եւ քանի «Երկաթէ Դիմակի» մասին գրուածքները աւելանում էին, այնքան էլ աւելանում էին նաև զանազան ենթադրութիւններն, ու խնդիրը փոխանակ պարզուելու աւելի ու աւելի բարդւում էր. Եւ, ըստ երևոյթին, ոչ մի յոյս չկար. գաղտնիքը լուծելու, մինչև որ Մ. Տոպէնը մանրամասն հետազօտութեան ենթարկելով Ֆրանսիայի արտաքին գործերի ու ծովային մինիստրութեան պաշտօնատների մէջ գտնուած բոլոր 1660—1710 թ. բանդարկեալներին վերաբերեալ տպուած ու անտիպ նամակներն ու գրութիւնները կարողացաւ պարզել ճշմարտութիւնը և 1869 թ. հրատարակել „L'homme au masque de fer" գրքի մէջ։ Նա այդ նպատակով ստիպուած էր քայլ առ քայլ հետևելու այն բոլոր անձանց կենցաղավարութեանը, որոնց մասին կասկած էր յայտ-

Digitized by Google

նուած, թէ «Երկաթէ Դիմակը» կարող են դրանք լինել: Եւ ահա նրա հետազօտութեան ԺԱ. գլուխը վերաբերում է Աւետիք պատրիարքին և որի հայերէն թարգմանութիւնը 1870 թ. հրատարակուած է Կ. Պոլսում Կ. Ս. Իւթիւճեանի աշխատասիրութեամբ, ծանօթութիւններով ու յաւելուածով: Այնուհետև ֆրանսիացի յայտնի պատմաբան և հրապարակախօս Ֆունկ-Բրենտանօն կարծեմ 1897 թուին հրատարակեց իւր „Légendes et archives de Bastille“ (Բաստիլի առասպելներն ու Դիւանը) ուսումնասիրութիւնը, ուր ի միջի այլոց պարզաբանուած է նաև «Երկաթէ Դիմակի» պատմութիւնը, հետևաբար նաև Աւետիք պատրիարքին վերաբերեալ մասը: Եւ այդ մասին նոյն ժամանակները ես գրել եմ «Նոր-Դարի» մէջ: Իսկ անցեալ տարի էլ անգլիացի Տայ Հոպկինսը հրատարակեց „The man in iron mask“ (Երկաթէ դիմակով մարդը) վերնագիրը կրող ընդարձակ ուսումնասիրութիւնը, որի մէջ ի մի են ամփոփուած Երկաթէ Դիմակի վերաբերեալ բոլոր հետազօտութիւններն ու դրանց արդիւնքը, բայց դա գլխաւորապէս հիմնուած է Տոպէնի ու Ֆունկ-Բրենտանօի վրայ:

Թէպէտ և ինքն ըստ ինքեան արդէն շատ հետաքրքրական էր առաջ բերել տեղեկութիւններ դէթ այն գլխաւոր անձերի մասին, որոնց վերաբերմամբ կարծիք կայ, թէ կարող են դրանք լինել Երկաթէ Դիմակը, որով մեր առաջ պարզ կպատկերանային անցեալ դարերից խիստ շահեկան դէպքեր, բարքեր, պալատական խարդաւանքներ, բայց դժբաղդաբար տեղի սղութիւնը այդ անել չի թոյլ տալիս. ուստի և ես կբաւականանամ առաւելապէս ծանրանալով Աւետիք պատրիարքի անցքերի վրայ՝ գլխաւորապէս հետևելով Տոպէնի հետազօտութեանը՝ որովհետև մինչև օրս էլ Երկաթէ Դիմակի վերաբերմամբ բոլոր հետազօտութիւնները, մանաւանդ Աւետիք պատրիարքի մասին, հիմնւում են նրա առաջ բերած փաստերի վրայ, իսկ Ֆունկ-Բրենտանօն գալիս է նորանոր վաւերագրերով հաստատելու նրա եզրակացութիւնները:

---

Որտեղի՞ց սկիզբն առաւ Երկաթէ Դիմակի մասին դրականութիւնը:

Ամստերդամ քաղաքում 1745 թուին լոյս տեսաւ մի գիրք, որ մի այսպիսի խորհրդաւոր վերնագիր ունէր. „Mémoires secrets pour servir à l'histoire de Perse“ (Պարսկաստանի պատմութեան վերաբերեալ գաղտնի յիշատակագրեր). հեղինակը յայտնի չէ. շա-

Digitized by Google

տերը կարծում են, թէ Վոլտերը (1694—1778) պիտի լինի։ Դրա բովանդակութիւնը հետևեալն է. Պարսից Շահ-Աբաս թագաւորը երկու որդի ունէր. մէկը հարազատ—Սեֆի Միրզա, միւսը՝ անհարազատ—Ջաֆար. Նրանք հասակակից էին։ Ջաֆարը դաժան, կամակոր էր և հօրն անհնազանդ, և շարունակ ժողովուրդը գրգռում էր թագաւորի դէմ։ Թագաւորը սիրում էր նրան և ներում։ Բայց երբ նա մի օր եղբօրը, որ թագաժառանգ էր, ապտակ խփեց, թագաւորը նրան դատի մատնեց. դատարանը մահուան դատապարտեց Ջաֆարին։ Բայց մինիստրներից մէկը դրա փոխարէն Ջաֆարին զօրքի հետ ուղարկեց Ֆելդրանի սահմանները պատերազմի։ Շուտով լուր տարածուեց, թէ Ջաֆարը ժանտախտից մեռել է և թաղուել, մինչդեռ նա կենդանի էր և գաղտնի կերպով ուղարկուել Օրմուզ կղզին ու բանդարկուել. Օրմուզի բերդապետին սաստիկ հրաման էր տրուած այդ բանը խիստ ծածուկ պահել. և երբ Շահ-Աբասը բերդապահին փոխադրեց Սպահան և նշանակեց միջնաբերդի կառավարիչ, նա իւր հետ բերաւ նաև Ջաֆարին, որը, ուրիշների հետ մի որ և իցէ գործ ունենալիս, պարտական էր դիմակ կրել։

Այդ պատմութիւնը բացատրեցին այսպէս.—Շահ-Աբասը—Լուդովիկոս XIV է, Սեֆի-Միրզան՝ թագաժառանգ Լուդովիկոսը, Ջաֆարը՝ Լուդովիկոս Բուրբոնը, Վերմանդուայի դուքսը (Լուդովիկոս XIV-ի ապօրինի որդին), Ֆելդրանը՝ Ֆլանդրիան, Օրմուզը՝ ս. Մարգարիտի կղզին, որտեղ խորհրդաւոր կալանաւորը բանդարկուած էր մնում մինչև Բաստիլ փոխադրուելը, Սպահանը՝ Պարիզն է, միջնաբերդը՝ Բաստիլը։

Այս պատմութիւնը եղաւ գլխաւոր պատճառներից մէկը, որ Երկաթէ Դիմակը դարձաւ ընդհանուր հետաքրքրութեան առարկայ։ Դրան աւելի ևս զարկ տուեց Վոլտերը, երբ 1751 թուին հրատարակեց «Լուդովիկոս XIV-ի դարը», ուր ի միջի այլոց պատմում է, թէ Մազարինիի մահից յետոյ (1602—1661 թ. Լուդովիկոս XIII-ի և XIV-ի միջոցին երկրի գլխաւոր ղեկավարը) մի անօրինակ դէպք պատահեցաւ, որը յայտնի չէ ոչ մի պատմաբանի. Ս. Մարգարիտ կղզին աքսորուեցաւ մի ազնուականի կերպարանքով մարդ, երեսը դիմակով ծածկուած. դիմակի ստորին մասը պողպատէ զսպանակներով էին ամրացրած, այնպէս որ նա կարող էր առանց դիմակը հանելու կերակուր ուտել։ Խստիւ պատուիրուած էր, որ եթէ դիմակը հանելու փորձ անի, իսկոյն սպանեն։ Նա այնտեղ մնաց մինչև թագաւորի վստահութիւնը վայելող մի սպայ, Սեն-Մարս անունով, Բաստիլի բերդապետ նշանակուեցաւ և դիմակաւոր կալանաւորին ս. Մարգարիտից

վերցնելով հետը Բաստիլ փոխադրեց. Ամեն բան, ինչ որ ուզում էր, տալիս էին նրան։ Ոչ մի կասկած չկայ, որ կալանաւորը, որի դէմքից երբէք դիմակը վար առնուած չէ, ականաւոր անձն էր. Նա մեռաւ 1703 թուին և թաղուեցաւ ս. Պօղոսի գերեզմանատանը։

Վոլտերի այս խօսքերից, թէ պողպատէ զսպանակներ ունէր դիմակը, տարածուեցաւ, թէ կալանաւորի դիմակը երկաթէ է, մինչդեռ դիմակը սովորական սև կտորից է եղել, և այդ միջոցին դիմել են լոկ կալանաւորի անձնաւորութիւնը գաղտնի պահելու համար։

Մի անգամ որ գաղտնիքը հրապարակ էր հանուած, պէտք էր արծարծուած հետաքրքրութեան բաւականութիւն տալ. Եւ ահա «Dictionnaire philosophique»ի մէջ Վոլտերի անունով հաղորդուած է, որ դա ոչ այլ ոք է, եթէ ոչ Լուդովիկոս XIV մեծ եղբայրը ի մօրէ։ Աւելորդ է այստեղ այդ խնդրի մանրամասնութեան մէջ մտնել, միայն այսքանս ասենք, որ այդ առասպելը երեք վարիանտ ունի, բայց և ոչ մէկն էլ ճշգրիտ ուսումնասիրութեան առաջ չի դիմանում և կարող չէ «Երկաթէ Դիմակի» հերոսի առարկայ լինել։ Բայց և այնպէս այդ ենթադրութիւններն ընդհանուր ընդունելութիւն էին գտել և մինչև անգամ Շամֆորի պէս մարդը (1741—1794, յայտնի հրապարակախօս և թատերագիր) հաւատում էր դրանց. Ֆուրնիէն և Արնուն (1734—1795) «Երկաթէ Դիմակը» դրամայի մէջ նոյն միտքն են արծարծում, Ալեքսանդր Դիւման (1803—1870) դրան հաւատում էր. մինչև անգամ յայտնի պատմաբան Միշլէն (1798—1821) միևնոյն հայեացքն է յայտնում իւր «Ֆրանսիայի պատմութեան» մէջ։

Այնուհետև փոքր ի շատէ հաւանականութիւն ունէր այն ենթադրութիւնը, թէ Երկաթէ Դիմակը Մոնմուտի դուքսն է։

Ջեմս Մոնմուտը անգլիացի Կարոլոս II-ի անհարազատ որդին էր, ծնուած 1649 թուին. Նա դաստիարակւում էր Ֆրանսիայում։ Բայց Կարոլոսի ժառանգը Իօրկի հերցոգն էր, որ և Յակոբ II անունով թագաւորեց և կաթոլիկների կուսակից էր։ Եւ որովհետև այդ ժամանակներն արդէն բողոքականութիւնը զօրեղ կուսակցութիւն էր կազմում և Մոնմուտի հերցոգը դեռ իւր հօր կենդանութեան ժամանակ մի քանի պատերազմների մէջ մեծ քաջութիւն էր ցոյց տուել, ուստի և երկրի բողոքական ժողովուրդը, մանաւանդ Շոտլանդիայում, գրկաբաց նրան պարագլուխ ընդունեց։ Եւ նա այդ ընդունելութիւնից խրախուսուած՝ յայտնի ապստամբութիւն առաջ բերաւ, բայց յաղթուե-

Digitized by Google

լով՝ 1685 թ. գլխատուեցաւ խռովարար և դաժան Յակոբ II-ի հրամանով։

Սակայն «Երկաթէ Դիմակի» պատմութիւնը յարմարեցրել են նրա վրայ հետեւեալ պատճառներով.—Կարոլոս II-ը սիրում էր իւր որդուն, բայց գիտէր, որ նա վաղ թէ ուշ պիտի ապստամբէր իւր օրինաւոր թագաւորի դէմ. ահա նա խնդրել է և խօսք է առել Յակոբից, որ եթէ, բան է, Մոնմուտի հերցոգը մի այդպիսի բան անէ և գերի ընկնի, խնայէ նրան։ Եւ Յակոբը, հաւատարիմ մնալով իւր խոստմանը, նրա փոխարէն գլխատել է տուել գերի ընկած սպաներից մէկին, իսկ նրան ուղարկել Լուդովիկոս XIV-ին խնդրելով, որ գաղտնի պահէ նրա անձնաւորութիւնը։ Նա վախենում էր իւր գերին աքսորել երկրից, կամ երկրի մէջ բանդարկել, որովհետեւ կարող էր նորից մի շփոթութիւն ծագել։

Աւանդութեան հիմք էր ծառայում և ժողովրդի մէջ պըտըտուող ենթադրութիւնը, թէ հերցոգը դեռ կենդանի է, թագնուած է և մի օր պիտի գայ ազատէ երկիրը։ Ասենք դա ամեն մի երկրի ժողովրդեան աւանդութեան որոշ գիծն է՝—միշտ կարծում են, թէ իրենց սիրելի հերոսը մի օր չէ մի օր պիտի երեւան գայ։ Այդպէս է նաեւ մեր Մհերի պատմութիւնը։

Ֆրանսուա դը-Վանդոմը, Բոֆորի հերցոգը նոյնպէս «Երկաթէ Դիմակն» էր համարւում։ Դա Հենրիկոս IV-ի ապօրինի որդու, Կեսարի որդին էր, ծնուած 1616 թ.,—մի ուժեղ և կոպիտ անձնաւորութիւն, որ միմիայն զզուանք էր առաջացնում Լուդովիկոս XIII-ի պալատականների մէջ։ Բայց նա շուտով պատերազմների մէջ հռչակ ստանալով՝ դարձաւ հայրենիքի պաշտպանութեան յոյսերից մէկը։ Լուդովիկոս XIII-ի մահից յետոյ ժառանգը մանուկ էր և երկիրը կառավարում էր Աննա թագուհին՝ յայտնի Մազարինիի օգնութեամբ։ Այդ միջոցին ծագեցան ներքին պատերազմներ, որի միջոցին Բոֆորը, կատարեալ խաղալիկ էր դարձել և ով ինչ ուզում էր, անել էր տալիս նրան։ Երբ որ Լուդովիկոս XIV-ը չափահաս դարձաւ, նա թագաւորի ամենահաւատարիմ հպատակը դարձաւ. Ուստի և ոչ մի առիթ չկայ կարծելու, որ Լուդովիկոսը նրան բանդարկէր և այն էլ մի այդպիսի խորհրդաւոր կերպով։ Բայց փաստն այն է, որ Բոֆորը ոտքով-գլխով անհետ կորաւ. և մինչեւ այժմս էլ յայտնի չէ, թէ ինչ եղաւ նա։ Ահա դէպքը։

Թուրքերը 1669 թուին պաշարել էին Կրետէ կղզին։ Լուդովիկոս XIV-ը ցանկանալով օգնել կղզու քրիստոնեաններին, Բոֆորի հրամանատարութեամբ, մի ամբողջ նաւատորմիղ ուղարկեց

Digitized by Google

Կրետէ։ Ֆրանսիացիք որ հասան, Թուրքերն արդէն բռնել էին կղզին և ամրացել։ Բայց Բոֆորը վճռում է գիշերային մի յանդուգն յարձակում գործել, բայց Թուրքերն այդ բանը հասկանալով, ֆրանսիական զօրքը մի որոշեալ տեղ հասնելուն պէս, նրանց ոտքի տակ պայթեցնում են ականը, և զօրքը սարսափահար եղած փախուստ է տալիս։ Բոֆորի և սպաների յորդորը անօգուտ է անցնում։ Երբ որ զօրքը վտանգից ազատուած կանգ է առնում, նոր նկատում են, որ գլխաւոր հրամանատարը չկայ. ձայն են տալիս, փնտրում են, բոլոր վիրաւորներին ու սպանուածներին նայում, Թուրքերի մօտ պատգամաւոր ուղարկում իմանալու, թէ նրանց գերիների կամ սպանուած ու վիրաւորների մէջ չէ՞ արդեօք—ի զուր. ոչ մի տեղ չի երևում։ Այդպէս էլ անյայտանում է։

Ահա այստեղից ենթադրում են, որ այս բոլոր աշխատանքը նախամտածուած էր Բոֆորին գաղտնի կերպով բռնելու և Բաստիլլում բանտարկելու համար։ Սակայն սա շատ թեթև և անհիմն ենթադրութիւն է, որովհետև Լուդովիկոս XIV-ի օրով ոչ մի դժուարութիւն չկար Բոֆորին այնպէս անհետացնելու, որ ոչ ոք ոչինչ չիմանայ։

Այս մի քանի դէպքերն իբրև նմուշ առաջ բերելուց յետոյ արդէն կդիմենք Աւետիք պատրիարքի պատմութեան, որը շատ և շատ կողմերից հաւանականութիւն կարող էր ունենալ Երկաթէ Դիմակի հերոսը լինելու։

---

Նախ քան Աւետիք պատրիարքի մասին իբրև Երկաթէ Դիմակի վրայ խօսելը պէտք է ասենք, որ այդ շրջանի վերաբերմամբ մեր պատմական աղբիւրները չափազանց պակասաւոր են և մութը, այնպէս որ Տոպէնը բաւական խոշոր ծառայութիւն է մատուցել մեզ՝ հրապարակ հանելով բազմաթիւ վաւերագրեր, որոնք պատկանում են նոյն այդ գործերին մասնակցող և ուղղութիւն տուող գլխաւոր անձանց։ Այստեղ անհետաքրքիր չի լինիլ նաև յիշել Կ. Պոլսոյ հայ ժողովրդի 1706 թ. Էջմիածնի Աղէքսանդր կաթողիկոսին ուղարկած խնդրագիրը, որի պատճէնը տպուած է 1863 թ. Թիֆլիսում հրատարակուող «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագրի սեպտեմբերի համարի մէջ։ Այդ վաւերագրի մէջ յիշատակուած դէպքերը հաստատում են Տոպէնի ուսումնասիրութեամբ, և մի քանի շահեկան մանրամասնութիւններ ևս պարունակում են իրենց մէջ։ Այդտեղ սկզբում տեսութիւն է արած հայոց և կաթոլիկների մէջ առաջացած մաքառման։ «Տասնեօթը տարի է, ասում են նրանք, որ Պրոպագանդայի ա-

Digitized by Google

Յայնժամ յարձակեցան ի վերայ նորա այլազգիքն և որախողխող կոտորեցին զնա ի բազում մասունս։ Եւ նա յօժար կամօք զչարչարանս յանձն առեալ, կատարեցաւ ի Քրիստոս և եղև պսակակից առաջին նահատակացն։

Այս գործեցաւ ի թուականիս Հայոց ՋԽԳ։

Ցարեան ի վերայ նորա որպէս գազանք ի վերայ որոճի՝ փայտիւ և խանչալով, և նահատակեցին զպատուական կինն Շնորհաւոր՝ բարի հաւատով։

Եւ եկեալ քրիստոնէիցն, և բարձեալ թաղեցին զնա պատուով ի փառս Քրիստոսի։

Սոյն վկայաբանութիւնն ունին միայն GHKLMRY ձեռագրերը, բոլորն էլ սահմի ԻԲ=հոկտեմբեր 31, Եպիմաքոսի և Մելասիպոսի վկայաբանութիւններից և Կեսարիոյ վկաների յիշատակութիւնից յետոյ, այս վերնագրով. «Պատմութի կնոջ միոյ որում անուն էր Շնորհաւոր.» (KL որոյ. GM անունն. KLM շնորհֆոր. HRY շնոհֆոր). G էջ 127 բ''—128 ա'', H 128 ա''—բ'', K 115 բ'—116 ա', L 105 ա''—բ', M 134 ա''—բ'', R 125 բ''—126 ա'', Y (հատ. Բ.) 113 ա'—բ'։

Նոյն վկայաբանութիւնը՝ գրուած տարբեր հեղինակից և անկախաբար՝ ունի Զաքարիա սարկաւագ, Վղրշպտ 1870, Բ. էջ 125-6, գլ. Կ. «Նահատակութիւն Շնորհաւորին», որը ինչպէս ինքը պատմում է, բառացի արտագրել է մի հին Յայսմաւուրքից. ահա իր բառերը. «Եւ ի թուին ՌՃԼԳ գնացի ես Ոսկուդար (յԻւսկիւտար) քաղաք, ի մէջ Այսմաւուրաց գտի դայս, և գրեցի

6. HKLMRY ի յանձն. 13. HRY ի թվականիս. 14. GKL Ջ և խգ. HM Ջխ և գ.

որպէս և էր.» (Անդ, էջ 126)։ Տարբերութիւնները և աւելի ու պակասները շեշտելու համար՝ հարկաւոր համարեցինք երկու գրութիւնները դնել դէմ դէմի առանձին սիւնակներով. առաջին սիւնակը ընդարձակ խմբագրութիւնը, երկրորդ սիւնակը Զաքարիա սարկաւագի մէջ բերածը։

Չամչեան, Գ. էջ 515-6 այս վկայուհու մասին հետևեալ տողերը միայն ունի. «Ի նմին ամի կատարեցաւ և կին մի Շնորհաւոր կամ Շնոհֆոր անուն ի Բաբերդ, զորմէ աւանդի և ի տպագրեալ յայսմաւուրս ի հոկտեմբերի 31։» Հմմտ. Նաև Ցայսմ. Ա. տպ. էջ 208′—208″, Բ. տպ. էջ 148″—149′, որոնք առաջին ընդարձակ խմբագրութեան հետ են գնում առհասարակ։

Digitized by Google

# 53.

## ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԵՂՈՅ

† ՋԽԹ=1500

Նոյն նահատակի մասին Հ. Ալիշան, Սիսական, էջ 76 ունի հետեւեալ համառօտ տեղեկութիւնը.

Յիշատակագիր մը ծանուցանէ զի յամի 1500 «Յովհաննէս աբեղէն մարտիրոսացաւ ի գեօղս (յայս)՝ որ կոչի Դրախտիկ, ի ղանութեան Ալվանդ փաթշահին, թվականի ՋԽԹ»։ Փափագելի է գիտել զօրինակ նահատակութեանն։

Digitized by Google

# 54.

## ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ, ՍԱՐԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՒ ԴԱՒԻԹ ԱՐԵՂԱՑ

### Նուիրակք Սուրբ Էջմիածնայ

† ԶԾԵ=1506 հոկտ. 17 շբ.

Ի թվին հարիւր Հայոց թուական,
Յիսուն և հինգ թիւ աւելեան,
Յէջմիածնէն նուիրակք եկան,
Բոլոր աշխարհս Հոռոմոց տան։

Յոլով մեռոն կայ ընդ իւրեան.
Մեծ նամակով և օրհնութեամբ.
Եկեալ հասին Բիւզանդիան,
Որ է Ստամպօլ՝ սրբոց կայան։

Ով որ տեսաւ զնոսա լըման,
Իբր ըզհրեշտակ ընդունեցան.
Մեծն Յօհաննէս՝ սրբոց նըման
Եպիսկոպոս աղնուական։

Վանք 'ւ անապատք ուրախացան.
Յորժամ տեսին ըզերեսեան,
Ըզտէր Սարգիս եպիսկոպոսն,
Եւ ըզԴաւիթ կոյս աբեղայն։

1. Թվական. 2. ծե. 4. աշխարհըս. 15. զտէր.

Digitized by Google

Անուանք նոցա համբաւեցան,
Սուրբ օրհնութիւնք որ կարդացան,
Եկեղեցիք բերկրեալք ցընծան,
Եւ ժողովուրդս որ օրհնեցան։

Նըւիրկեցին զքաղաքս լըման,
Եւ նաւեցին քաղաք Կաֆայն.
Կաֆայեցիք խիստ ցընծացան,
Իբր զառաքեալսն տէրունական։

Ելեալ գնացին Ղարապօղտան,
Սէչով քաղաք քրիստոնեայք կան.
Ամենն տեսին ուրախացան,
Մինչ ի պարոն և այթերնայն։

Սէչովացիք զնոսա տեսան,
Խիստ պատուեցին և օրհնեցան.
Իլով քաղաքն յուղարկեցին,
Շատ քրիստոնեայք որ ի հոն կան։

Իլովացիքն երբոր տեսան,
Հանց պատուեցին սրբոց նըման,
Զինչ սուրբ Գրիգոր պետ պարթևեան,
Լուսաւորչին թոռանց նըման։

Ցընծան նոքա ի ժողովն այն,
Շուրջառք և զգեստք խիստ պատուական,
Իլով քաղքէն առին ելան,
Դարձեալ եկին ի Աղքիրման։

Երբոր հասան ի Աղքիրման,
Խիստ խընդութեամբ բերկրեալ ցընծան.
Անտի նաւեալ եկան հասան,
Որ է Պօլիս Կոստանդիան։

Հիւրեր եկին մեզ աննըման,
Զինչ ըզհրեշտակք Աբրահամեան.

26· ցծան.

Ոնց Սամպօլցիք զնոսա տեսան,
Տեառն Աստուծոյ շատ գոհացան։

Անդ ժողովուրդք ժողովեցան,
Եւ ասացին ամենեքեան,
Թէ «Մի երթայք դուք միաբան՝
Կաթողիկոսն եղեալ վախճան»։

Յայնժամ նըստեալ և խորհեցան,
ԶԴաւիթ ղըրկեն ի տեսութեան,
Ոնց որ հասաւ յԱմասիան,
Լուք մատնեցին զինքն ի յատեան։

Անդ անօրէնք ժողովեցան,
Որդիքըն նեռ և կորըստեան,
Պիղծ Յուդայի եղեն նըման,
Որ մատնեցին զՏէրն ի յատեան։

Յասմամբ եկեալ զԴաւիթ տարան,
Պարոն որդոյն դուռն ի տիվան,
Սուտին չաշուտ են միաբան,
Սոֆին ղըրկել ի Ֆրանկիստան։

Եդին ի բանտ և ի զընտան,
Զինքն մատնեցին ի ըսկէնճան,
Ըզխեղճ մարմինն ի տաքացան,
Ի չարչարանքըն մաշեցան։

Անտի տուեալ ի զօրական,
Վիզն ի զէնճիլ, ձեռն ի կիլապչան,
ԶԴաւիթ բերին ի մեծ տիվան,
Տարին ձգեցին ղափուճոյն օտան։

Լուք, ղափուչիքն ամենեքեան,
Ի ձի հեծեալ վանքըն հասան.
Երբ նուիրակքն զնոսա տեսան,
Զահի հարեալ զերդ զուռ դողան։

Զ. յԱմասիան. 21. զխեղճ.

Եկեալ տարան զնոսա լըման,
Ի մեծ վէզիրին Ալի փաշան.
Յայնժամ տեսեալ ըզերրորդեան,
Ասէ. «Բերէք վաղն ի տիվան»։

Բերին զինքեանք վաղն ի տիւան,
Համսար նըստան երեք փաշան,
Հարցաքըննեն զամենեսեան,
Սուչ մի գըտնուն նոցա վերան։

Անտի ելեալ խոնտքար մըտան,
Նա էր աս՚ցեալ դիժար հրաման.
Ասաց. «Զգեցէք զափուճոցն օտան,
Մէկ քանի օր տան ըսկէնճան»։

Նոքա ելեալ ամենեքեան,
Ի խոնտքարէն առեալ հրաման,
Լուք կացուցին այլ մի տիվան,
Ըմբըռնեցին առեալ տարան։

Սուրբ Յովհաննու պէս բանտ տարան,
Զինչ Քրիստոսի օրն ըմբըռնման.
Ի չարչարանքըն զանազան,
Աւել աւուրս հնդետասան։

Օրն էր շաբաթ սուրբ կատարման,
Նահատակացըն երրորդեան,
Գըլխատեցին զամենեսեան,
Լոյս կիրակի՝ օր յարութեան։

Յովհաննու պէս գըլխատեցան,
Կամ Յակոբու առաքելեան,
Որ է մարմինն ի ըսպանման,
Զաւուրս երրորդ անթաղ մընան։

Սըրբոց մարմինքն որ հոն կեցան,
Ոչ յերեսներին թարշամեցան,
Լոյսն էր իջեալ աստղանըման,
Զայն լոյս տեսեալ շատ մըսըլման։

Յետոյ գնացեալ Էմին խանն,
Մօտ մեծ վէզիրին Ալի փաշան,
Իբր ըզՅովսէփ Արեմաթեան,
Խնդրել զմարմինն տէրունական։

Նա էր տուեալ աղէկ հրաման.
«Գրնա թաղէ զամենեսեան,
Զամէն ատէթն արէք լրման,
Զինչ ձեր օրէնքըն տայ հրաման»։

Իսկ վարդապետք ժողովեցան,
Եպիսկոպոսք հաւաքեցան,
Եւ կրօնաւորք շատ միաբան,
Սրբոց թաղումն գումարեցան։

Երիցանիք խիստ զանազան,
Մեծ ու կըրտսեր աշխարհական,
Ի հոն հասին ամենքեան,
Եւ սուրբ թաղմանն արժանացան։

Բամիւ կանգնին կարգ կատարման,
Եւ կատարեն զամէնն լրման,
Պատնեն զմարմինքըն միաբան,
Եւ տահմանեն ի մի տապան։

Կանայք բազում ժողովեցան,
Լալականներ ողբերգական,
Շատ լացուցին զամենեսեան,
Մինչ սար ու ձոր ի լաց ելան։

Երեք մանկանց սըրբոց նըման,
Երեքըն մի տապան եգան,
Արժանացան սուրբ հանգըստեան,
Դուք այլ կացէք ուրախութեան։

Բամիւ զամէնքըդ միաբան,
Զձեզ աղաչեմ կամենեանն,

15. ամենքենեան. 28. ուրախութեամբ.

Digitized by Google

Ես Յովհաննէսըս անարժան,
Իմ քահանայ գործովս ունայն։

Նըւիրկներուն որ կատարման,
Սակաւ բաներս որ գըրեցան,
Ով ոք ասէ ըզհայր մեղայն,
Յիշեալ լիցի յարքայութեան։

Այս գործեցաւ ի մեծ թուական,
Ինըն հարիւր թիւն էր լըման,
Յիսուն և հինգ թիւ յաւելեան,
Հոկտեմբերի եօթնևտասնեան։

Ձեզ աղաչեմ զամենեսեան,
Ո՛վ ընթերցողք տեարք սըրբազան,

Թաղծիկութիւն չանէք. Արարիչն Աստուած օրհնէ զձեզ. անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր։

Յիշեալ վկայաբանական տաղը հրատարակեց նախ Արարատ ամսագիր, 1869, էջ 223—5, հետևեալ վերնագրով. «Տաղ վասն Ս. Էջմիածնայ Նուիրակներու գլխատմանն»։ Թէև Արարատը ո՛չ մի տեղեկութիւն չէ տալիս թէ ո՛ր տեղից հանուած է նոյն տաղը, բայց անտարակոյս է թէ հանուած պիտի լինի Ս. Էջմիածնի մի ձեռագրից. դժբախտաբար մենք դրան այժմ չենք հանդիպել։—Տաղի հեղինակն է ոմն Յովհաննէս քահանայ, ինչպէս յատուկ յիշուած է էջ 345 տող 1։ Տաղի սկզբնատառերն էլ յօդում են «Ի ՅՈՎԱՆԷՍ ԻՑԵ ՀԱՑԱՑԵԱԼ Ե ԲԱՆՍ ԱՅՍ ՅՆԻԵՐԿԵՐՆԱ». սոցա մէջ անհասկանալի են ԻՑԵ և ՅՆԻԵՐԿԵՐՆԱ. Գալուստ Տէր Մկրտչեան կարծում է թէ առաջինը պէտք է կարդալ ԵՐԻՑԷ, ուստի ենթադրել թէ երկու տուն պակաս է, Ե և Ր սկզբնատառերով. իսկ վերջինը նա համարում է տեղի անուն, որտեղ ծնուել է Յովհաննէս քահանան։



Digitized by Google

## 55.

## ԱՒԵՏԻՔ ԿՐՕՆԱՒՈՐ

† 1509 դեկտ. 11 գշ.

Տաղ տէր Աւետիք կրօնաւորին որ նահատակեցաւ ի ձեռաց Թաթարաց աղեղնաւորաց ի նահանգին Ղրիմի, ի վերայ ճանապարհին սուրբ Նշանի վանիցն—և զոր շինեաց տէր Յոհաննէս Սեբաստացին, զոր կայ մինչև ցայսօր մեզ օգնական և պահապան։

Հիւսիսական կողմ աշխարհէ
Մինըն ընտրեալ Հայոց ազգէ,
Ինքն ի բարի շառաւիղէ,
Սուրբ և մաքուր յորովայնէ։

Բնութեամբըն քաղցր էր և բարի,
Կերպարանօք զարմանալի,
Գեղ երեսացըն հրաշալի՝
Լուսոյ նըման զերդ հրեշտակի։

Անձամբըն ճոխ գեղեցկալի,
Ստեղծեալ ձեռօքըն Քրիստոսի,
Երրորդութեանըն սիրելի,
Յամէն ազգաց էր գովելի։

1. Ա կրօնաւորի. 2. փխ. ի ձեռաց Թաթարաց աղեղնաւորաց Ա ի դաթարաց. | Ա ի հանգին. 3. Ա ի վերա. | Ա չունի վանիցն և. | Ա շինեալ է. 4. Ա չունի զոր կայ...պահապան. 17. Ա ամէն

Աքեղութեան կարգն ընկալեալ,
Ըզկուսութիւնն ամբողջ պահեալ՝
Քահանայ աստուածարեալ,
Աստուած անմահ պատարագեալ։

Անմարմնոց վարըս ըստացեալ,
Սիրով հրեշտակքըն ցանկացեալ,
Խորհըրդական անուն առեալ,
Տէր Աւետիք էր անուանեալ։

Ցեկեղեցին երբ մըտանէր,
Իբրև ըզլոյս ղամպար վառէր։
Երբ պատարագ մատուցանէր՝
Իւր սուրբ մատանցըն շող կաթէր։

Հոգոյն սըրբոյ էր բնակարան,
Շնորհօք լըցեալ էր եօթնարփեան,
Փիլիսոփայ էր աննըման,
Զուսումն ունէր աստուածական։

Զայնըն քաղցըր ազնըւական,
Գաբրիէլեան փողոյն նըման,
Ձեռաց շընորհըն զանազան,
Գրագիր ծաղկող աստղանըման։

Զարմանալի պատկերահան,
Դրոշմէր ըզտիպ տէրունական
Ըզտիրամօր սուրբ կուսական,
Բոլոր զամէն տնօրինական։

Որք ուղղափառ դաւանեցան՝
Զամէն սըրբոց համանըման,
Առաքելոցըն միաբան,
Մարտիրոսացն որք ճըգնեցան։

2. Ա անբողջ. 5. I վար· Ա վարս. 7. I խորհրդական. 8. Ա անվանեալ. 12. փխ. շող Ա լոյս. 13. I սրբոյ. 20. I աստղանման. 23. I ըզտիրամօրն. 24. Ա տնօրինական.

Digitized by Google

Հայոց մեծաց ի Թուականին
Ինըն հարիւր յիսնէութին
Ի տասնըմէկ դեկտեմբերին
Եւ ի յաւուր Երեքշաբթին՝

Արեան արքուքն Ուլլան խանին
Զար զինուորքն ի դէմ ելին,
Ըզաւուրն իւրեանց մերկացուցին,
Զոէր Աւետիքըն խոցեցին։

Եւ վարդագոյն արիւն հեղին,
Իբրեւ ըզՏէրըն խոցեցին,
Եւ սուրբ մարմինն յերկիր անկեալ՝
Ի մէջ արեան թաւալեցին։

Լոյսն ի յերկնից ճառագայթեալ,
Ըզսուրբ նըշխարացն պարփակեալ,
Զբոլոր զամէն լուսով լըցեալ,
Իբր ըզճըրագ լուսոյ փայլեալ։

Յայնժամ հըրաշ մի երեւեալ,
Ըզսուրբ մարմինըն իւր շարժեալ,
Զինքըն բոլոր ձեւացուցեալ,
Դէմ երեսին խաչակընքեալ,

Զաստուածութիւնըն դաւանեալ,
Իւր սուրբ արեամբըն մըկըրտեալ,
Սուրբ նահատակ վերագըրեալ,
Ի դըպրութիւն կենաց կարգեալ,

Ըզսուրբ հոգին իւր աւանդեալ,
Զերանութեան պըսակն առեալ,
Եւ յիշատակ նորին օրհնեալ,
Ի Քրիստոսէ փառաւորեալ։

2. Լ հարիւրա. | Ս իւսնէութին. 3. Լ ի տասնումէկ. | Լ դեկտեմբերին. 4. Ս ի աւուր. | Լ չորեքշափթին. Ս չորեքշափտին. 5. Ս արքաւնք. | Ս ա-լան. 6. Ս զինուորքն. 9. Լ չունի եւ. | Ս վարդագոյ. 11. Լ չունի եւ. 12. Լ թա-ւալեցաւ. 13. Ս լոյս. 16. Ս լոյսոյ. 17. Ս այնժամ. | Լ հրաշ. 18. Լ մարմինն. 24. Ս ի դպրութի. 25. Ս չունի ըզսուրբ....փառաւորեալ, տող 25-28.

Վարդապետ երգօղ բանիս,
Ո՛վ նահատակ տէր Աւետիս,
Անճառ լուսով լուսաւորիս,
Պայծառ փառօք դու պըսակիս։

Առաքելին գեղն երանեալ՝
Ձքո սուրբ նըշխարըդ հանգուցեալ.
Դու հիւանդաց բըժիշկ եղեալ,
Քրիստոս Աստուած փառաւորեալ։

Հօրըն փառք, Որդոյն պատիւ
Եւ սուրբ Հոգոյն այժմ յաւիտեանս,
Յաւիտեանըս յաւիտենից
Ժողովս օրհնեալ ի Քրիստոսէ։

Այս մկայաբանական տաղն ունին IԱ ձեռագրերը. I էջ 88 ա—89 ա, Ա 209 բ—210 բ։ Նահատակութեան թուականն է ըստ տաղի ՋԾԸ (=1509) դեկտեմբեր 11, չորեքշաբթի։ Սակայն 1509 թուի դեկտեմբեր 11-ին համապատասխանում է երկուշաբթի օրը, իսկ չորեքշաբթի օր դեկտեմբեր 11-ին ընկնում է 1510 թուին։ Կարելի է ենթադրել որ սկզբնական բնագրում գրուած է եղել. «Եւ ի յաւուր Դ-շաբթին», որ և յետոյ արտագրողներից շփոթմամբ կարդացուել է «Դ-շաբթին» ուրեմն և «չորեքշաբթին» փոխարէն «երկուշաբթին»։ Այս ենթադրութիւնը մեզ աւելի քան հաւանական է թւում։ Կարելի է և ուրիշ կերպ ճշտել նահատակութեան ժամանակը՝ ընդունելով Հայոց ՋԾԸ թիւը համապատասխան Հռոմէական 1510 թուին, որ համաձայն չէր լինի սովորական անշարժ տոմարի հաշիւներին։

1. Ա երգող. 6. Ա զքոյ. | I նըշխարհսըդ. 7. I յուճկ դու. | I բժիշկ.
11. I յաւց. Ա աւիտեանս.

Հայոց մեծաց ի Թուականին
Ինըն հարիւր յիսնէութին
Ի տասնեմէկ դեկտեմբերին
Եւ ի յաւուր ԵՐԵՔշաբթին՝

Արեան արբուքն Ուլլան խանին
Զար զինուորօքն ի դէմ ելին,
Ըզսուրն իւրեանց մերկացուցին,
Զտէր Աւետիքըն խոցեցին։

Եւ վարդագոյն արիւն հեղին,
Իբրև ըզՏէրըն խոցեցին,
Եւ սուրբ մարմինն յերկիր անկեալ՝
Ի մէջ արեան թաւալեցին։

Լոյսն ի յերկնից ճառագայթեալ,
Ըզսուրբ Նըշխարսըն պարփակեալ,
Զբոլոր զամէն լուսով լըցեալ,
Իբր ըզճըրագ լուսոյ փայլեալ։

Յայնժամ հըրաշ մի երևեալ,
Ըզսուրբ մարմինըն իւր շարժեալ,
Զինքըն բոլոր ձևացուցեալ,
Դէմ երեսին խաչակընքեալ,

Զաստուածութիւնըն դաւանեալ,
Իւր սուրբ արեամբըն մըկըրտեալ,
Սուրբ նահատակ վերագըրեալ,
Ի դըպրութիւն կենաց կարգեալ,

Ըզսուրբ հոգին իւր աւանդեալ,
Զերանութեան պըսակն առեալ,
Եւ յիշատակ նորին օրհնեալ,
Ի Քրիստոսէ փառաւորեալ։

2. l հարիւրա. | Ս իւսնէութին. 3. l ի տասնումէկ. | l դեկտեմբերին. 4. Ս ի աւուր. | l չորեքշափթին. Ս չորեքշափտին. 5. Ս արբունք. | Ս ուլան. 6. Ս զինուորքն. 9. l չունի եւ. | Ս վարդագոյ. 11. l չունի եւ. 12. l թաւալեցաւ. 13. Ս լոյս. 16. Ս լոյսոյ. 17. Ս այնժամ. | l հրաշ. 18. l մարմինն. 24. Ս ի դպրութի. 25. Ս չունի ըզսուրբ....փառաւորեալ, տող 25-28.

Վարդապետ երգող բանիս,
Ո՛վ նահատակ տէր Աւետիս,
Անճառ լուսով լուսաւորիս,
Պայծառ փառօք դու պըսակիս։

Առաքելին դէղն երանեալ՝
Զքո սուրբ նըշխարսըդ հանգուցեալ.
Դու հիւանդաց բըժիշկ եղեալ,
Քրիստոս Աստուած փառաւորեալ։

Հօրըն փառք, Որդոյն պատիւ
Եւ սուրբ Հոգոյն այժմ յաւիտեանս,
Յաւիտեանըս յաւիտենից
Ժողովս օրհնեալ ի Քրիստոսէ։

Այս վկայաբանական տաղն ունին l Ս ձեռագրերը․ l էջ 88 ա—89 ա, Ս 209 բ—210 բ։ Նահատակութեան ժամանակն է ըստ տաղի ՋԾԸ (=1509) դեկտեմբեր 11, չորեքշաբթի։ Սակայն 1509 թուի դեկտեմբեր 11-ին համապատասխանում է երեքշաբթի օրը, իսկ չորեքշաբթի օրը դեկտեմբեր 11-ին ընկնում է 1510 թուին։ Կարելի է ենթադրել որ սկզբնական բնագրում գրուած է եղել․ «Եւ ՚ի յաւուր Գ-շաբթին», որ և յետոյ արտագրողներից շփոթմամբ կարդացուել է «Դ-շաբթին», ուրեմն և «չորեքշաբթին» փոխարէն «երեքշաբթին»։ Այս ենթադրութիւնը մեզ աւելի քան հաւանական է թւում։ Կարելի է և ուրիշ կերպ ճշտել նահատակութեան ժամանակը՝ ընդունելով Հայոց ՋԾԸ թիւը համապատասխան Հռոմէական 1510 թուին, որ համաձայն չէր լինի սովորական անշարժ տոմարի հաշիւներին։

1. Ս երգող. 6. Ս զքոյ. | l նըշխարհսըդ. 7. l բուժիչ դու. | l բժիշկ. 11. l յաւց. Ս աւիտեանս.

Digitized by Google

# 56.

## ԽԱՉԱՏՈՒՐ ԿՈՂԲԵՑԻ

† ՋԿԶ=1517 ապրիլ 5, կիր.

Սա էր յերկրէն Կողբայ, որ եկեալ ընտանեօք իւրովք ի քաղաքն որ կոչի Ամիթ՝ և բնակեցաւ անդ ժամանակս ինչ։ Եւ յաւուր միում գնացեալ ի շուկայն առնուլ հաց վասն ընտանեաց իւրոց՝ և հանդիպեալ նմա Բ զօրականք՝ ասեն ցնա. «Հայ ես թէ Տաճիկ»։ Եւ նա ոչ գիտէր թէ զինչ ասեն նոքա։ Եւ ասաց թէ «Հայ եմ»։ Եւ նոքա ճիչ բարձեալ թէ «Այս Հայս տաճկացաւ», և բերեալ սուտ վկայս կացուցին ի վերայ նորա, և կալեալ կապեցին զնա, և առեալ տարան առաջի փաշային և դատաւորին։ Եւ նոքա ողոքանօք և սպառնալեօք շատ ջանացին և ոչ կարացին հաւանեցուցանել զնա. զի նա վառեալ էր ի սէրն Քրիստոսի և դաւանէր զՔրիստոս Աստուած։ Եւ նոյնժամայն հատին ի վերայ նորա վճիռ մահու, զի հրով այրեսցեն զնա։

Յայնժամ առեալ տարան զնա ի տեղի կատարմանն, և զրոհ տուեալ Տաճկայն՝ ժողովեցին փայտ և կուտեցին

1. B ընտանօք. | B իւրօք. 2. B յամիթ. 3. f չունի եւ. 5. փխ. ասեն ցնա f և ասին. | փխ. տաճիկ f այլազգի. 6. փխ. ասին f առնեն. 7. փխ. հայ եմ f հայիմ. | f բարեալ. | փխ. այս հայս տաճկացաւ f այս այլազգի եղև. 9. փխ. զնա f պձեռն յետս. | f տարան զնա. 10. փխ. եւ նոքա...ջանացին f եւ նք շատ ողոքանօք ջանացին. 11-12. փխ. զի նա վառեալ էր f այլ էր նա վառեալ. 13. f վճիռ. 14. f մահուան. 16. f տվեալ. | փխ. տաճկայն f այլազգկայն. | f կուտեցին.

Digitized by Google

իբրև զբլուր մի ընդդէմ արքային։ Եւ խրատ տային նմա թէ «Ուրացիր զՔրիստոս և եկ ի յօրէնս մեր»։ Եւ նա ամենևին ոչ խօսէր ընդ նոսա, այլ օրհնէր զԱստուած և ասէր թէ «Ես քրիստոնեայ եմ»։ Եւ նոյնժամայն բորբոքեցին զհուրն և արկին ի ձեռսն և յոտսն շղթայս, և բուռն հարեալ զօրականացն և տարան զնա մերձ հրոյն, զի խորովեսցեն և ապա այրեսցեն։ Եւ ճենճերէին ոսկերք անդամոց նորա, և նա էր ի մէջ նոցա՝ որպէս զգառն ի մէջ գայլոց։ Եւ օրհնէր զԱստուած և ասէր. «Աստուա՜ծ իմ, Աստուա՜ծ իմ, օգնեա՛ ինձ»։

Եւ մի ոմն ի զօրականացն հարցեալ թէ «Զի՞ աղաղակէ մարդն այն»՝ և նոքա ասեն թէ «Զայս ասէ—Աստուա՜ծ իմ, Աստուա՜ծ իմ, օգնեա՛ ինձ»։ Եւ նա քարշեալ զսուսերն իւր և հատեալ զգլուխ սրբոյն՝ և նա այնպէս կատարեցաւ ի Քրիստոս, բարի հաւատով, յապրիլ ի Ե, յաւուր Աւետեաց սուրբ Աստուածածնին, ի թուին Հայոց ՌՃԿԶ ամին. որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի։

Եւ այն զօրականքն որ մատնեցին զսուրբն՝ եհար մինն զմիւսն թրւանկօքն և եսպան։ Եւ զսպանօղ ընկերին բերեալ կապեցին ի ձիոյ ագի և ի Դ դուռն քաղաքին ի շուռ ածին՝ մինչև կոտորեցան ամենայն անդամք նորա։ Եւ զպեղծ մարմինն բերեալ զարկին ի չանկալն՝ որ հարեալ էին ի մէջ շուկային ի փառս սատանայի։ Եւ սուրբ վկային Քրիստոսի Խաչատուր հանգեաւ ի դասս մարտիրոսաց։

1. f զբլոր. | փխ. խրատ տային f խրատէին. 2. փխ. ի յօրէնս f յօրէնս. 4. f չունի թէ. 5. f ի ձեռն և յոտն. 6. f հարեալ զնա. | փխ. խորովեսցեն f խռովեսցին. 8. B գառն. 13. փխ. նա f նք. 14. փխ. և նա այնպէս f եւ նոյն ժամայն. 15. f ապրիլ. | Bf ի Է. 16. f յաւետեաց. | B աստուածածնին ի փառս քի. | f ի թկնս. | f չունի հայոց. 17. f ջ և ի կզ ամին. | B չունի ամին. | f յիշատակն. 18. փխ. զսուրբն f զնա. 19. f մին. | B չունի թրւանկովն. | f եսպան զնա. | փխ. եւ զսպանօղ ընկերին f եւ միւսն որ եսպան զընկերն. 20. f չունի բերեալ. | փխ. և ի Դ դուռն մինչև վերջ B ունի և քարշեցին մինչև սատակեցաւ։ Իսկ սուրբն խաչատուր ի քրիստոսէ պսակեցաւ։

Digitized by Google

Այս վկայաբանութիւնն ունին միայն Bf ձեռագրերը՝ քաղաք ա—դեկտեմբեր Զ, Իրիկէ սատակեալից և Դաւիթ Խարբերդցուց յետոյ, այս վերնագրով՝ «Ի սմին աւուր (f յայսմաւուր) յիշատակ (f յիշատակ է) սրբոյն Խաչատրոյ որ ի յամիթ կատարեցաւ»։ B էջ 165 ա'—'', f էջերը նշանակուած չեն։ Չամչեան, Գ. 516 այս նահատակի մասին ունի միայն յետևեալ փոքրիկ տեղեկութիւնը. «Ի թուին ՋԿԶ կատարեցաւ Հռով յԱմիդ քաղաքի Խաչատուր Կողբացի. յորում ժամանակի սոքին այլազգիք և զկաթուղիկէն Ամթայ զհոյակապ եկեղեցի սրբոյն Թովմայի և արարին իւրեանց մզկիթ»։

f ձեռագիրը տաճիկ բառի փոխարէն գրում է այլազգի։ Մեր վերևի ծանօթութեանց մէջ նոյնը նկատել էինք V ձեռագրի վերաբերմամբ (էջ 217)։

Մեր ունեցած այս երկու ձեռագրերի համաձայն՝ նահատակութեան թուականն է ՋԿԶ (=1517), «յապրիլ ի Է, յաւուր Աւետեաց տօնի Աստուածածնին»։ 1517 թուին Զատիկը ապրիլի 12-ին ընկնելով՝ Աւետեաց տօնը կլինի ապրիլի 5-ին կիրակի, ուստի և ձեռագրերի վկայութիւնը «յապրիլ ի Է» ուղղում ենք «յապրիլ ի Ե». այսպիսով կստանանք վկայաբանութեան ուղիղ ամսաթիւը և օրը՝ 1517 թ. ապրիլ 5, կիրակի։

## 57.

### ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԽԹԱՅԵՑԻ

† ՋԿԸ=1519

Վաճառական մի հայ և յոյժ ճարտասան՝
Մխիթար Բաղեշցի և աստուածածան,
Գընաց նայ ի սահմանս Ատըրպատական,
Ի Ղում և ի Շիրազ և ի Խորասան։

Եհաս ի Սամարղանդ և ի Պուխարայ,
Եմուտ ի Հընտուստան և անտի գընայ
Ի մէջ հըռչակաւոր քաղաքըն Խըթայ,
Ուր մուչքն է պատուական, երէոյ նաֆայ։

Խըթայ մերձ սահմանաց Չին և Մաչինայ,
Եւ անդ լինի ռավանդն, չըքնաղ չինին գայ.
Անդ է նահատակեալ Առաքեալն Թումայ,
Հարեալ ի մըշդեհէ, այսպէս գըրեալ կայ։

Եւ են աշխարհն ամէն կռապաշտ հաւատով,
Ոչ ճանաչեն զՈրդի, սուրբ զՀոգին կամ զՀայր.
Զանեղ աստուածութիւնն՝ անձինք հաւասար,
Ստեղծօղն արարածոց և ըղլյան անճառ։

2. l բաղիչեցի. 6. l հնտաւստան. 9. u խըթա. | u մաչինա. 10. u գա. 11. l առաքեալ. | u թումա. 12. l մշդեհէ. | u կա. 14. u ճանաչէն.

Զիջումըն Միածնին յերկիր հեզաբար,
Զմիանալն ի բնութիւնս՝ որ մարմին էառ,
Զբևեռիլն ի խաչին, զդըրժոխսցն աւար,
Նըստեալ Հօր ընդ աջմէ ի քրովբէից կառ։

Անտեղեակ 'ւ անծանօթ են այսըմ շնորհի.
Աշխարհըն Խըլթայու՝ զոր այժմ յիշեցի,
Զասեն ըզմիւսանգամ գալուստն Յիսուսի՝
Որ կեանք և փըրկութիւն է ամենայնի։

Ելեալ ի Խըլթայու զօրքըն հեծելին,
Եւ դէպ ի յարևելս չըւեալ գընացին.
Եւ ազգ մի բովանդակ զամէն գերեցին,
Զոր ի լեզուն իւրեանց Ղալմուխ կոչէին։

Զմանկունքըն գերելոցըն վաճառէին,
Յորմէ առեալ տըղայ մի Մըխիթարին,
Տանէր խընամք նորա զինչ իւր զաւակին.
Ապա դէպի յաշխարհըս մեր դիմեցին։

Ըզծով և ըզցամաք նոքա կոխեցին,
Եւ յԱլանաց երկիրըն ժամանեցին.
Մատնեցին ըզտըղայն երկրի իշխանին,
Եւ նայ ընչիւք իւրովք գընեաց երեք կէն։

Բերեալ ի բուն քաղաքըն Մըխիթարին
Զքարի մանուկն ընտրեալ և զառաքինին,
Հաճեալ հաւանեցաւ կամօքն իւրային,
Ասաց թէ «Մըկըրտիմ յանունն Յիսուսին։

«Հաւատամ ես ի Հայր և Որդի նորին,
«Երկրպագեմ հոգովս Հոգոյն ճըշմարտին,
«Մի կամք և մի բնութիւն որ ոչ բաժանին»։
Զանունն Աստուածատուր նորա կոչէին։

4. 1 Նստեալ հաւր. | 1 ի քըրոբէից. 5. 1 չընորհի. 8. 1 փրկութի. 9. 1 ի Խթայու. 10. Ա ի արևելս. | 1 դնացին. 14. Ա որմէ. | Ա տըղա. | Ա մըխիթարին. 16. 1 ապայ. | Ա ՚հըս. 18. Ա ալանաց. 20. Ա ընչիւքն. 22. Ա մանուկ. 24. 1 մկըրտիմ. | Ա անունն. 28. սկսեալ անունն բառից 1-ի մէջ բերք է ընկած։

Ուսաւ լեզու և գիր նա վաղվաղակի՝
Շնորհօքն Աստուածատուր և Հոգոյն տեղի,
Անձամբքն վայելուչ, բնութեամբն էր բարի,
Տեսլեամբն էր գեղեցիկ և զարմանալի։

Զընթացս երանելոյն տեսեալ սատանի՝
Զհաւատն որ առ Քրիստոս, զգնացսն բարի,
Լինէր հեղձամըղձուկ առաջին չարին,
Բորբոքեաց ըզնախանձ դառնութեան բոցի։

Ի չար նախանձ վառեալ զազգն Իսմայելի,
Թերևս յափըշտակէ զծառայն Յիսուսի.
Դըրդեաց ի բարկութիւն զորդիսն Հագարի.
Ասեն ըզմանկանէն՝ «Որդի է Թուրքի»։

Գնացեալ առ ամիրայն չարախօսեցին.
Եկեալ զԱստուածատուրն ատեան կոչեցին.
Զարգործ պըղծասէրքն և որդիքըն ժանտին՝
Նըման երբայական տիրասպան գընտին։

Ասեն. «Դու մըսըլման, ազգէ Մահմէտին.
«Ի բաց թող ըզՔրիստոս և զհաւատ Նորին.
«Թէ ոչ տանջենք ըզքեզ սաստիկ 'ւ ահագին»։
Ասաց. «Ես ո՛չ փոխեմ զլոյսն ընդ խաւարին։»

Ետուր նա համարձակ ըզպատասխանին՝
Թէ «Քրիստոս է Աստուած 'ւ ես ծառայ Նորին.
«Ինձ ուրանալ զՔրիստոս է անհընարին,
«Եւ կամ հընազանդել ձեր փէղամպէրին։

«Պատրաստ եմ մեռանել վասն անուան Նորին,
«Այնմ՝ Որ եբարձ ըզփուշ մեր պատուհասին.
«Եբարձ Նա ըզքացախ խառնեալ ընդ լեղին,
«Եհեղ զարիւն իւր սուրբ ի քառաթևին։»

Բազում թախանձանօք զնայ աղաչէին՝
Քաղցրութեամբ խօսելով և ոչ կարացին.

7. Ա հեղձամըխձուկ. 10. Ա ափըշտակէ. 11. Ա ագարի. 20. Ա զլուսն. 28. Ա էհեղ. 30. Ա խօսելով.

Կապեցին զձեռս ի յետս և հարկանէին.
Տանէր նա խնդութեամբ տանջանաց նոցին։
Ցաւուր ձմերայնոյ ընդ նա կացուցին,
Բերեալ դետն ի ներքոյ սառին անցուցին,
Որպէս սուրբ քառասունքն ի Սեբաստէին,
Անցաւ ընդ հուր, ընդ ջուր՝ ըստ երգոյ Դաւթին։
Ապա ի թիկնամէջըն հուր վառեցին,
Հըրով ըղհողաթափն ի ոտն ագուցին,
Սըրով զըոլոր մարմինըն ծակոտեցին,
Եւ կայծակունս հըրոյ ի յերկու ձեռին։
Ոչինչ նա համարէր կըսկիծն ահագին,
Սիրով էր նա վառեալ ի յոյսըն վերին.
Արիաբար եկաց դէմ Բելիարին,
Եղև նա պատարագ Հօրն երկնաւորին։
Բերեալ ըզբարեյաղթ վըկայ Քրիստոսի,
Ետուն զնա ի մօլլային զի օրէնքն ուսցի.
Ասեն «Մանկութիւն է սորա փոխելի,
«Դառնայ ի Քրիստոսէ սա վաղվաղակի»։
Մօլլա գֆթ բա փսար. «Ա՛յ սէիդի զատէ,
«Մա՛ քուն քում ըռահի բամի էմպիյա»[1])։
Ասաց թէ «Իմ Աստուած ըստոյգ է Յեսու.
«Ձի չար ու չի թադփիր քի շաւամ ճուտա»[2])։
Մօլլա գֆթ քի «Պիա, պըշաւ մըսըլման,
«Պը խաւան թու փէշի մա քըթապ ու ղուրան»[3])։

1) Պարսկերէն ملا کفت باپسر ای سیدیزاده مه کن کم راه بام انبیاً —Մօլլան ասաց տղային. «Ո՛վ սէիդի որդի. մի՛ կորցնի մարգարէների արշալոյսի ճանապարհը»։

2) Պարսկերէն چه چار و چه تدبیر که شوم جدا —«Չկայ ճար, չկայ հնար (Յիսուսից) բաժանուելու»։

3) Պրս. ملا کفت که بیا بشو مسلمان بخوان تو پیش ما کتاب وقرآن —Մօլլան ասաց՝ «Արի՛, դարձիր մահմետական, մեզ մօտ կարդա գիրք ու Ղուրան»։

6. Ո Թաւթին. 18. Ս զառնա. | Ակսում է այսքանից. 19. Լ մաւլլայ. | Ս ա. 20. Լ էմպիայ. 21. Լ յեսայ. 22. Լ ճուտայ. 23. Լ մաւլլայ. | Լ պիայ. 24. Լ մայ.

Digitized by Google

Ասաց թէ «Սընտաւի է քոյդ և ունայն.
«Պէ մաստի մն քուն ճըհէլ ու նատան»[1])։
Մօլլա տէտի. «Օլ կիլ փէղամպէրէ եար,
«Կեաւուրլարընկ տինին կօյնկլունկտէն չըխար»[2])։
—«Ի քեզ սատտէ Ցիսուս, մէնտէն իսրա վար,
«Սալիպ մէ փարըստամ, մէճնուն պէխապար»[3])։
Սովով և ծարաւով յոլով տանջեցին,
Ի հուր 'ւ ի ջուր ըզնա անցուցանէին.
Ամիսս ութ անխընայ զնա չարչարեցին,
Տարժել ի հաւատոցն զնա ոչ կարացին։
Նկեալ ժողովեցան չարքն ի միասին,
Պատեալ շուրջանակի և քարկոծէին,
Բան զշուն և ըզգազան զնա գիշատէին,
Էառ զվախճանն անդրէն ի յասպարիսին։
Ամաց էր ՌՃԸ վըկայս գովելի՝
Որ վըկայեաց անուն տեառնըն Ցիսուսի.
Էր թիւն ինըն հարիւր վաթսուն և ութի,
Ցորժամ Աստուածատուրն նահատակեցին։
Առ մեծ բարունապետն ճառս այս յարմարի,
Որ և անուն նորա Գրիգոր յորջորջի.
Սորին սպասաւորէ և աշակերտի
Գրիգորիս՝ մականունս եմ Աղթամարցի։

1) Պարսկերէն بستی مکن جاهل و نادان —«Անմտութեամբ մի՛ աներ (ինձ) տգէտ և անուս»։

2) Թուրք. ملا دیدی اول کل پیغامبره یار کاورلرك دینن کنکلدن چیقار —Մօլլան ասաց. «Արի՛, մարգարէին բարեկամ եղիր, անհաւատների կրօնը սրտիցդ հանի՛ր»։

3) Թուրք. եւ Պրս. مندن اسرع وار صلیب می پرستم مجنون بیخبر —«Հեռացի՛ր ինձնից շուտ. ես խաչն եմ պաշտում, ով յիմար անմիտ»։

2. Ա պէմ. | Լ նատէն. 3. Լ մօլլայ. | Լ ուլկիլ. | Լ փէղամպարէ. 4. Լ կեավուրլարունկտին կէնկլինտէն. 5. Լ իսրայ. 6. Ա փարստամ. 7. Ա յովով. 10. Լ զնայ. 13. Ա զգազան. | Լ զնայ. 14. Ա ի ասպարիսին. 18. Ա որժամ. 19. Լ բարունաբետն. | Ա արմարի. 22. ԼԱ ախթամարցի.

Սոյն վկայաբանական տաղն ունին միայն I և Ս ձեռագրերը․ առաջինը էջ 97 ա—98 բ, այս վերնագրով․ «Տաղ ածատուր նահատակին, որ և խըլթայեցի գրիգոր կաթղկոսէ ախթամարցոյ ասացել․»։ Իսկ երկրորդը էջ 213 բ—218 ա, այս վերնագրով․ «Տաղ խլաթեցի ածատուր նահատակի։» Տես և Սիսական 531, ուր մերի հետ համեմատութեամբ շատ պակասներ կան, ընդ ամէնը 31 տող պակաս․ այս յապաւումներն եղած են կրօնական բովանդակութեամբ տողերի, (յատկապէս միաբնակութեան վերաբերեալ մասերի) և պարսկերէնով ու թուրքերէնով խառն տների մէջ և Ալիշանի ձեռքով են՝ ինչպէս ցոյց են տալիս բազմակէտերը։ Սիսականից արտագրութիւն է Կոստանեանցի մէջ բերածը, Գրիգոր Աղթամարցի և իւր տաղերը, էջ 88, նոյն պակասներով։

Digitized by Google

## 58-

### ԿԱՐԱՊԵՏ ՓԱԿԱԿԱԼ ՄԱԼԱԹԻԱՑԻ

† ՋՀԳ=1524

*Սոյն վկայի մասին Չամչեան տալիս է հետեւեալ փոքրիկ ծանօթութիւնը, Գ. էջ* 516.

Ի *թուին ՋՀԳ նոյնպէս հրով կատարեցաւ ի Մելտինի քաղաքի՝ այն է Մալաթիա՝ Կարապետ փակակալ եկեղեցւոյ։*

Digitized by Google

# 59.

## ԳՐԻԳՈՐ ԱՄԹԵՑԻ

† ՋՀԳ=1524

Սա էր ի քաղաքէն Յամթայ՝ հաւատովն քրիստոնեայ և արուեստիւ նալպանտ, որդի առն արևորդոյ։ Եւ մայր սորա էր դուստր քահանայի ի Պարսից քաղաքէն՝ որ կոչի Մարաղա։ Ուք ելեալ ի Մարաղայէ և եկեալ բնակեցան ի Յամիթ իբրև ամս ԻԸ։ Եւ հայր սորա և եղբայրն երիթայրն յեկեղեցին Յակոբկաց և Պուտախ գայր յեկեղեցիս Հայոց և զհայ լեզու ոչ գիտէր, այլ զԹուրքին, զարապին և զաճամին ճարտար գիտէր։ Եւ գայր հանապազ յեկեղեցին և ունկն դնէր աստուածային գրոց և ոչ կարէր իմանալ։ Եւ յաւուր միում տրտմեալ էր և հառաչէր ի խորոց սրտէ և ասէր. «Երանի թէ լինէր ոք որ զասացեալն ի քահանայիցն զոր ընթեռնուն ի սուրբ գրոց, պատմէր ինձ, թէ աստուածային Գիրք և Աւետարան զինչ կու հրամայէ վասն մեղաց և արդարութեան, վասն դատաստանին և տանջանացն, վասն ճգնաւորաց և մարտիրոսացն, վասն առաքելոցն և մարգարէիցն, որ սիրտ իմ առնէր դադար ի տրտմութենէս զոր ունիմ, վասն չիմանալոյս զընթերցուածս սուրբ Գրոց։»

Եւ ես Մկրտիչ աբեղայ՝ էի լուսարար և աւելածու սուրբ Կիրակոսի եկեղեցւոյն, և գիտէի զարապ լեզուն։ Եւ յաւուր միում եկեալ առ իս Պուտախն, որ է Բարու-

նակ, և ասաց. «Տէր եղբայր, պարտ է քեզ պատմել ինձ զմեկնութիւնն աստուածային Գրոց, որ ես իմանամ թէ ինչ կայ ի նմա»։ Եւ բազում սէր և եղբայրութիւն եդ ընդ մեզ և ընդ քահանայից. և գայր հանապազ յեկեղեցին, քահանայքն ընթեռնուին և մեք պատմէաք նմա զամենայն։ Եւ նա խնդութեամբ ընդունէր և ի միտս իւր ամփոփէր։ Եւ այնքան հմտացաւ սուրբ Գրոց, որ և զԱյսմաւուրսն բոլոր ի միտ էառ և կամէր հետևիլ հետոց նոցա, որպէս և եղեն իսկ։

Եւ պնդեալ զինքն աստուածային օրինօքն, գայր անխափան յեկեղեցին և աղօթէր առ Աստուած։ Եւ հանապազ տանէր ի տուն իւր զքահանայս և զաղքատս և կերակրէր զնոսա. և բազում հարցափննութիւն առնէր ընդ քահանայից, ի հին և ի նոր կտակարանաց։ Այլ և զսովորական քունն ի կանգուն անցուցանէր ի վերայ չուանի։

Ասաց ցամուսինն իւր. «Ցայսմ հետէ լեր դու ինձ իբրև զքոյր»։ Եւ նա ասաց. «Որպէս դու, նոյնպէս և ես, թէ ի պահս և թէ յաղօթս»։ Եւ կացեալ 3 ամ այնպէս։

Եւ գային ի խանութ նորա այլազգիք, քանզի լսէին վասն նորա թէ լաւ նասիմիք կու աաէ վասն հոգւոյ և վասն Քրիստոսի. և լսէին ի նմանէ բան զարմանալի վասն Քրիստոսի և վասն անաչառ դատաստանի նորա։

Եւ զի տեղեակ էր օրինաց նոցին, տայր զրոյց նոցա ի հին և ի նոր կտակարանաց, թէ «բազումք ի յառաջնորդաց ձերոց մեռան վասն անուանն Քրիստոսի. որպէս զՄանսուրն, և զԹալիլն, և զՆասիմին, որ զմորթին տիկ հանին»։ Եւ նոքա երթեալ պատմէին միմեանց և իմաստնոցն ծածկաբար։ Եւ գային ի խանութն և ոչ տային թոյլ վաստակել և նա տանէր զնոսա գաղտ ի տուն իւր, կերակրէր և քարոզէր նոցա յԱդամայ և ի մարգարէից և յառաքելոցն, որ վասն Քրիստոսի քարոզեցին, զմարմնանալն Քրիստոսի, զմկրտութիւնն և զամենայն սքանչելիսն զոր արար։ Եւ նոքա զարմացեալ ասէին. «Ապա առաջնորդն մեր որպիսի՞ մարգարէ էր»։ Բարունակն ասէ.

«Առաջնորդն ձեր ոչ է մարգարէ, այլ կարապետ Նեռին. Քրիստոս՝ զոր ես Աստուած դաւանեմ, վասն մեղաց քրիստոնէից, էառ զԹագաւորութիւն նոցա և ետ ձեր առաջնորդին։ Վասն զի ոչ կացին ի պատուիրան նորա և ի կանոնս, զոր ետ Քրիստոս ձեռամբ առաքելոցն և հայրապետացն։»

Եւ հաւանեցան նմա աւելի քան զ90 այր և հաւատացին ի Քրիստոս քարոզութեամբ նորա։ Քանզի հմուտ առնէր զնոսա պատուիրանացն Քրիստոսի և զբանն կենաց սերմանէր ի սիրտս նոցա. և նոքա հաւատով ընդունէին. և բախէին զկուրծս իւրեանց. և ոմանք ի նոցանէ գլխաւորք և կարդացողք էին, և ոմանք տղայք. և բազումք ի նոցանէ յանձն առին մկրտիլ ի նմանէ։ Եւ նա առեալ զնոսա տանէր ի տուն իւր և ձգէր զփրկական խաչն Քրիստոսի ի ջուր և առեալ հեղոյր ի վերայ գլխոց նոցա, յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. և այլ ոչինչ ասէր։

Եւ ամենայն քաղաքն զարհուրեալ էր ընդ համարձակ քարոզութիւն նորա, քանզի 1000 նասիմի աւելի գիտէր։

Ցաւուր միում եկեալ 3 մանուկ յաշակերտաց իւր և ասեն. «Ուսթա Պուտախ, եկ երթիցուք ի Քասական Շեխն.» (քանզի միտ եդեալ էին մատնել զնա)։ Եւ նա ասէ. «Զի՞նչ կայ անդ զի երթիցուք։» Եւ նոքա ասեն. «Զամենայն բան գիտէ և առաւել զխորհուրդս մարդոյ։»

Եւ նա ելեալ գնաց ընդ նոսա և հեռի էր ի քաղաքէն տեղին՝ կիսոյ աւուր ճանապարհաւ։ Եւ մին ի նոցանէ յառաջ գնացեալ ասաց նմա, թէ «Բերաք զոմն քրիստոնեայ առ քեզ. մի՛ թէ դարձուցանես զնա յօրէնս մեր. քանզի ճրագ է լեզուն և տեղեակ օրինաց մերոց և իւրեանցն. և ոչ ոք կարէ յաղթել նմա, բայց դու միայն, զի զՔրիստոս Աստուած քարոզէ մեզ։»

Եւ հասեալ անդ սուրբն Պուտախ և զգիշերն ամենայն հարցաքննութիւն արարեալ ընդ միմեանս, մինչև ցառաւօտն։ Եւ ասէ Շեխն ցՊուտախ. «Զի՞ եկեալ ես առ իս։»

Ասէ սուրբն. «Լուեալ եմ վասն քո, թէ զխորհուրդ

մարդկան գիտես։»

Ասէ Շեխն· «Այո՛, գիտեմ։»

Ասէ սուրբն· «Զի՞նչ կայ յիմ խորհուրդս։»

Ասէ պիղծն· «Դու մեր եղեալ ես գալ ի յօրէնս մեր։»

Ասէ Պուտախ· «Քաւ լիցի ինձ այդ· սուտ է զոր լուայ վասն քո· դու խաբեբայ ես· զփօստդ պիտի առնուլ ի քէն· զի զմարդիկք կու խաբես, դրամ, ոչխար, ձի և ջորի ժողովես։»

Եւ Շեխն այն բարկացեալ եհար զսուրբն և հրամայեաց որբանեկացն՝ վարել զնա յերեսաց իւրոց։ Եւ գնացեալ ի քաղաքն, մատնեցին դատաւորին, թէ Պուտախն տաճկացաւ։

Կոչեաց զնա դատաւորն և ասէ· «Ուսթա Պուտախ, իրաւ է զոր ասեն վասն քո թէ տաճկացաւ։»

Եւ ասէ սուրբն· «Քաւ լիցի ինձ ուրանալ զՅիսուս Քրիստոս, զարարիչն երկնի և երկրի։»

Ասէ դատաւորն· «Եկ ի յօրէնս մեր և տաց քեզ բազում մեծութիւն։»

Եւ նա ետ պատասխանի և ասէ· «Ո՛վ դատաւոր, դատես զիս սուտ վկայիւք· առաջի ահեղ ատենին տաս զիմ պատասխանին։»

Եւ դատաւորն առ աչս մարդկան ետ արկանել զնա ի բանտ, զի կամէր արձակել զնա։ Եւ յետ 3 աւուր հանին զնա ի բանտէն և օրն կիրակի էր։ Եւ ժողովեցան բազմութիւն քաղաքին անդ և զօրական մի Տուղուտ անուն՝ կալեալ զմօրուացն, տարաւ առ դատաւորն բազում նախատանօք։

Ասէ դատաւորն· «Ո՛վ Պուտախ, գիտեմ զի իմաստուն մարդ ես և տեղեակ օրինաց մերոց· լաւ է լեր ինձ և եկ ի յօրէնս մեր· և մի՛ մատներ զմանկութիւն քո սուսերաց և հրոյ· այլ լեր ընդ մեզ պատուով։»

Պատասխանի ետ սուրբն և ասէ·«Ո՛վ դատաւոր և իմաստուն կարդացօղք· ասացէք ինձ, ո՞ւր է առաջնորդն ձեր։»

Եւ նոքա ասեն· «Ի Մաքքայն է։»

Ասէ սուրբն. «Կենդանի՞ է թէ մեռեալ։»

Եւ նոքա ասեն. «Ոչ ոք ի մարգարէիցն մնաց կենդանի։»

Ասէ սուրբն. «Քրիստոս զոր ես Աստուած հաւատամ, ո՞ւր է նա։»

Եւ նոքա ասեն թէ «Երկինս է նա։»

Ասէ սուրբն. «Կենդանի՞ է թէ մեռեալ։»

Եւ նոքա ասեն թէ «Կենդանի է։»

Ասէ սուրբն. «Ես զիա՞րդ թողում զարարիչն երկնի և երկրի, զկենդանին և զկենդանատուն ամենեցուն և հետևիմ մեռելոյն։ Դուք այսօր զո՞ր թագաւորի անուն կու յիշէք. և զդրամն զոր ունիք, յո՞յր անուն է. կենդանի՞ թագաւորին, թէ մեռելոյն։»

Եւ նոքա ասեն թէ «Ցանուն կենդանւոյն է դրամն։»

Ասէ սուրբն. «Այդ ամենայն զօրքդ և հեծեալքդ ո՞յր ի ծառայութիւն կային. ողջ թագաւորին, թէ մեռածին։»

Եւ նոքա ասեն թէ «Ողջ թագաւորին։»

Ասէ դատաւորն. «Թող փաշայն գիտենայ. օրէնք մեր զնա ոչ առնէ արժան մահու, զի վնաս և հայհոյութիւն ոչ խօսեցաւ։» Եւ ասաց տանիլ զնա առաջի փաշային։

Եւ փաշայն յոյժ գովեաց զնա, և ձգեալ զձեռն ի վերայ պարանոցի սրբոյն, համբուրեաց զնա և ասէ. «Զիա՞րդ կորուսանես զմանկութիւն քո ունայն և զգեղեցկութիւն երեսաց քոց յայրումն տաս հրոյ. եկ և ասա բան. և տաց քեզ զինչ հաճոյ է քեզ և մեծ իշխանութիւն։»

Պատասխանի ետ սուրբն և ասէ. «Ո՛վ թագաւոր. զայդ ամենայն մեծութիւնդ՝ զոր խոստացար ինձ, անցաւո՞ր է թէ մնացական. և մեծամեծ թագաւորքն որ մեռան՝ զայդ մեծութիւնդ ընդ իւրեա՞նս տարան, թէ աստ մնաց։»

Եւ նա ասէ թէ «Աստ մնաց։»

Ասէ սուրբն. «Ապա թէ աստ մնաց, ինձ չէ պիտոյ այդ մեծութիւնդ՝ որ այսօր է և ի վաղիւն ի դժոխս իջանէ. ինձ պիտոյ է Քրիստոս Աստուածն իմ և արքայութիւն Նորա։»

Եւ սուլտանն շատ ջանաց ողոքանօք և սպառնալեօք, և ոչ կարաց հաւանեցուցանել զնա և բարկացեալ ի վերայ

Digitized by Google

սրբոյն, ասէ· «Ո՛վ մարդ, այնչափ ազգի ազգի տանջանս ածեմ ի վերայ քո, որ չէ եղեալ ի բազում ժամանակաց»։

Ասէ սուրբն․ «Թէ զմարմինս ազգի ազգի տանջանօք մաշես, ո՛չ կարես խախտել զիս ի սիրոյն Քրիստոսի· հոգւոյս ոչ ունիս իշխանութիւն և զմարմինս որչափ կարես չարչարեա՛»։

Ցայնժամ հրամայեաց տալ զնա յայրումն հրոյ և ասաց իշխանին· «Մի՛ այրեր զդա մինչև ի սպառ· միթէ երկիցէ ի հրոյն և գայ յօրէնս մեր»։

Եւ ժողովեալ փայտ՝ դիզեցին իբրև զբլուր մի· և բերեալ զսուրբն հանդէպ փայտին՝ մերկացուցին զնա և կապեցին զձեռսն յետս· և բերեալ տախտակ մի, կապեցին ի վերայ կրծիցն· ոմանք խոցոտէին և ոմանք ապտակէին և զմորուսն փետէին և թքանէին յերեսս նորա· և բերին առաջի հրոյն։

Ցայնժամ սուրբն ի քարշ առեալ զնոսա և ի հուրն դիմեաց· և նոքա ոչ եռուն թողուլ, զի մի՛ արագ այրեսցի· և 4 զօրական բուռն հարեալ էին նմա, զի խորովեսցի և մի՛ մեռցի։ Եւ նա յոչինչ համարեալ զայրեցումն հրոյն և զօրհնութիւնս երից մանկանցն երգէր։ Եւ արարեալ զնա կիսերիեաց և տարեալ արկին ի բանտ։ Եւ մինչդեռ ի բանտին էր սուրբն, ի միում գիշերի տեսին զնա պահապանք քաղաքին ի մէջ չուկային պայծառ դիմօք· և նոքա զահի հարեալ ասեն· «Ո՛վ մարդ, ո՛չ վախես որ ի չուրջ կուգաս աստ»։ Եւ նա ասէ· «Ո՛վ անմիտք, ես ոչ եմ եկեալ, այլ այս 3 զօրականքս հանեին զիս և բերին աստ»։

Եւ նոքա առեալ զնա տարան ի բանտն և ումեք ինչ ոչ ասացին, զի երկնչէին յիշխանէն, բայց քրիստոնէից ասացին։ Եւ այլ ոմն ի զօրականաց փաշային՝ եկեալ պատմեաց մեզ, թէ «Ցայսմ գիշերի տեսի տեսիլ զարմանալի· ոչ թէ յերազի, այլ յարթնութեան։ Դուստր իմ հիւանդ կայր մերձ ի մահ· և ի հասարակել գիշերոյն ելեալ երթայի մօտ մօլնայ մի, զի գայ կարդայ ի վերայ դստերն իմ· և ընդ չուկայն անցանէր ճանապարհն իմ որ երթայի· և յորժամ հասի ի մէջ չուկային, ապշութիւն կալաւ զիս

և տեսի լոյս փայլատակեալ յերկնից. և պայծառացաւ տեղին՝ յորում հանդերձեալ էր այրիլ նահատակն. և ես յահէս ոչ կարացի զքայլս փոխել. և տեսի զշուկայն լցեալ լուսով, և ազգի ազգի ծաղկօք զարդարեալ և կանաչացեալ։ Եւ յետ այնորիկ տեսի յանկարծակի արք լուսաւորք, որք վրան հարին անդ լուսեղէն և բերեալ ոսկի աթոռ զարդարեալ ակամբ, զոր ոչ կարեմ պատմել. և տեսի զՊուտախն, որ եկն խոնջեալ և քրտնեալ իբրև զօրական՝ որ գայ ի պատերազմէ. և եկեալ լուսաւոր արքն և դաստառակօք սրբէին զհրաշագեղ պատկեր նորա. և բերեալ ջուր լուանային զերեսն և զձեռս նորա։ Եւ ես հարցի զնա թէ «Պուտախ, ո՞վ են սոքա, որ այդպէս սպառազինեալ են ընդ քեզ և այս գեղեցիկ երիվարքս ո՞ւմ են։» Եւ նա ասաց. «Սոքա այնոքիկ են՝ որ վասն Քրիստոսի չարչարեցան և մեռան։» Եւ ապա տարեալ զնա պատուով եդին ի վերայ ոսկիակազմ աթոռոյն, զոր պատրաստեալ էին և վերացան հրեղէն կառօքն յերկինս. և էանց տեսիլն յինէն. և տեսի զիս միայն ի մէջ շուկային։ Եւ ես կամէի երթալ պատմել փաշային և ոմանք ի դրացեաց իմոց ոչ թողին. այլ ասացին թէ «Նոքա ո՛չ հաւատան բանից քոց և սպանանեն զքեզ։»

Զայս տեսիլ յայն գիշերին տեսեալ էր, որ ի վաղիւն տարան զնա յայրել։ Եւ ընդ առաւօտն հանին զնա ի բանտէն և տարան առաջի փաշային. և ժողովեցան ի վերայ նորա բազմութիւն տաճկացն. և այնքան վիրաւորեալ էր մարմինն յառաջին այրմանէն, որ արիւնն և շարաւն ի միասին հոսէին. և ուսոցն ի վայր կեղևեալ էին մինչև ի մատունսն, և ջիլքն երևէին։ Եւ այնպէս տառապանօք առեալ զմորուացն ի քարշ տանէին։ Եւ սուրբն ի գնալն իւրում ասէր. «Դատ արա ինձ, Աստուած։»

Եւ ասէ թագաւորն ցուրքն. «Պուտախ, ուրացի՛ր զՔրիստոս և եկ ի յօրէնս մեր. և տամ քեզ մալ և խազինայ, գիւղ և քաղաք և հեծելազօր։»

3-4. գրում է լուսով լցեալ. բայց յետոյ վերաները բ. ա նշանակելով փոխում է կարգը:

Եւ այլ բազում բանս խօսեցան ողոքանօք և սպառնալեօք. և ոչ կարացին հաւանեցուցանել զնա։ Եւ սուրբն յանդիմանեաց զնոսա ասելով. «Ո՛վ անմիտք, ես զիմդ Թողում զարարիչն երկնի և երկրի, որ իջեալ յերկնից՝ մարմնացաւ ի սուրբ կուսէն Մարիամայ, մկրտեցաւ ի Յորդանան, խաչեցաւ, թաղեցաւ և յարեաւ ի մեռելոց, աւերեաց զդժոխս և համբարձաւ յերկինս, և ընդ աջմէ Հօր նստաւ. գալոց է միւսանգամ դատել զազգս մարդկան՝ ըստ իւրաքանչիւր գործոց. արդարքն ուրախանան, մարտիրոսքն պսակին, մեղաւորքն տանջին, ուրացողքն կոծեսցեն և սատանայ յամօթ լինի։»

Յայնժամ բարկացեալ փաշայն և ամենայն մեծամեծքն և հատին ի վերայ նորա վճիռ մահուան, զի հրով այրեսցի։ Եւ առեալ տարան զնա ի տեղի կատարմանն ի մէջ չուկային և բերեալ փայտ կուտեցին. և ոմանք հարկանէին և այլք խոցէին։ Եւ նա զաչսն ի յերկինս ամբարձեալ և զօգնութիւն ի Քրիստոսէ խնդրէր. Եւ բերեալ զերան մի հարին յերկիր ի մէջ փայտիցն որ դիզեալ էր ըստ հասակի սրբոյն. և բերեալ զսուրբն մերձ փայտին՝ զոր հարին յերկիր և սուրբն գովելով համբուրեաց զփայտն և բերեալ բևեռս հաստ և երկայն և բևեռեցին զոտսն ի պատուանդան փայտին. և զձեռսն ի վերայ գլխոյ փայտին ի վերայ միմեանց։ Եւ նայեցաւ սուրբն ի բևեռն և ասաց. «Օրհնեա՜լ է Քրիստոս Աստուած իմ, որ արժանի արար զիս չարչարակից իւր լինել։»

Յայնժամ անօրէնքն բերեալ 2 չուն, կախեցին զպարանոցէն։ Եւ նա ասէ. «Ո՛վ կատաղիք, թէպէտ ես դատապարտեալ եմ և արժանի եմ զոր առնէք, ապա այս գազանքս զի՞նչ մեղան ձեզ. ազատ արէք զդոսա։» Եւ նոքա ոչ լուան նմա։ Եւ ասաց սուրբն. «Դո՛ւք տայք զպատասխանին։»

Եւ բերեալ ձիւթ և ձէթ, ցանեցին ի վերայ սրբոյն և բորբոքեցին զհուրն. և նա զօրհնութիւն երից մանկանցն երգէր. և բարձրանայր բոց հնոցին 30 կանգուն։

Digitized by Google

Եւ մինչ օրհնութիւնն ի բերանն էր, աւանդեաց զհոգին իւր առ Աստուած. և զմարմինն այրեցին յերկու ժամէ աւուրն մինչև ցինն ժամն, որ փոշի դարձաւ. և բերեալ ջուր, արկին ի վերայ հրոյն, որ պաղեցաւ. և լցեալ ի խորգ զմոխիրն 5 բեռ և տարեալ արկին ի գետն, յարևելից կուսէ քաղաքին Ցամթայ։ Եւ զայս վասն այն արարին, զի մի առցեն քրիստոնեայքն ի նշխարաց սրբոյն։

Եւ ի գիշերին յայնմիկ, լոյս պայծառ ծագեաց ի տեղի կատարմանն և ի վերայ նշխարացն ի մէջ գետոյն։

Եւ այսպէս բարի խոստովանութեամբ կատարեցաւ ի Քրիստոս սուրբն Պուտախ, ի Թուականիս Հայոց ՋՀԳ ամին, ի փառս Քրիստոսի Աստուծոյ։

Սոյն վկայաբանութիւնն ունի միայն B ձեռագիրը, էջ 444 ա″—446 ա′, մարգաց 30, յուլիս 6, Ս. Սրապիոնի, Ս. Պրոկղի և Իլարիոնի, Ս. Պերեգրինոյ և Ղուկիանու վկայաբանութիւններից յետոյ, այս վերնագրով «Ցայսմ աւուր վկայաբանութիւն սրբոյն Պուտախայ։» Նոյն վկայի մասին Զամչեան Գ. 516 տալիս է հետևեալ փոքրիկ տեղեկութիւնը. «Ի նմին տարւոջ (ՋՀԳ) ի յունիսի 13 ըստ նմին օրինակի կատարեցաւ հրով ի յԱմիդ այր ոմն Պուտախ անուն, որ նորոգ էր հաւատացեալ ի Քրիստոս՝ դառնալով յաղանդոյ Արևորդեաց։» Միջոցներ չունինք Թուականների տարբերութիւնը ճշտելու։

Վկայաբանութեան գրիչն է Մկրտիչ աբեղայ՝ լուսարար և աւելածու Տիգրանակերտի Ս. Կիրակոս եկեղեցու. տես էջ 360, տող 19 ևն։

# 60.

## ԹՈՐՈՍ ԵԴԵՍԱՑԻ

† ՋՀԷ=1528

Սոյն նահատակի հետ ծանօթացնում է մեզ միայն Չամչեան, Հատ. Գ. 516՝ իւր հետևեալ համառօտ յիշատակութեամբ.

Ի թուին ՋՀԷ (=1528) նահատակեցաւ յԵդեսիա քաղաքի՝ այն է Ուռհայ՝ Թորոս վկայն։



Digitized by Google

61.

## ՀԱՅՐԱՊԵՏ ԱՐԵՂԱՑ

✝ 1528 կամ 1533

*Սոյն նահատակի մասին ունինք միայն Զամչեանի Հատ. Գ. էջ 516 տուած փոքրիկ տեղեկութիւնը, որ հետևեալն է.*

*Ի նմին ամի* (ՋՀԷ=1528) *կամ ըստ այլոց ի թուին* ՋՁԲ (=1533) *կատարեցաւ հրով ի Սեբաստիա աբեղայ ոմն Հայրապետ անուն ի վանացն Տևոյ։*

Digitized by Google

# 62.

## ԹԱԴԷՈՍ ԵՐԷՑ ՍԵԲԱՍՏԻԱՑ

† ՋՁԳ=1534

Սոյն նահատակի մասին էլ ունինք միմիայն Զամչեանի, Հատ. Գ. էջ 516 տուած փոքրիկ տեղեկութիւնը։

Ի թուին ՋՁԳ նահատակեցաւ նոյնպէս ի Սեբաստիա երէց մի Թադէոս անուն։

63.

## ԽՐԻՑ ՇՆՔՈՒՌԿՈՒ ԳԵՂՋ

† ՋՁԴ=1535

*Սոյն անանուն նահատակ քահանայի մասին մի-կարճ տեղեկութիւն է տալիս Սամուէլ երէց Անեցի, տպ. Վաղարշապատ, 1893, էջ 175, հետեւեալ ձեւով.*

*«ՋՁԴ. ի Շնքուռկու գեղէն քահանայ մի այրեցին։»*

*Նոյն տեղեկութիւնից քաղելով Չամչեան, Հատ. Գ. էջ 516, ասում է.*

*Ի թուին ՋՁԴ այլ ոմն երէց այրեցաւ հրով ի գեղջն Շնքուռկու։*

## 64.

### ՆԱՀԱՏԱԿՆ ԿՈԿՃԱՅ ՍԵԲԱՍՏԻՈՅ

✝ ՋՁԵ=1536

*Ոտանաւոր վասն Կոկճայ նահատակին Սեբաստիոյ տուն մը.*

Յինըն հարիւր Հայոց թուին
Ութսուն և հինգ աւելորդին՝
Խիստ մեծ կըսկիծ ողորմագին
Եղաւ մանկանըն Կօկճային։

Ով որ լըսեց զտանջանքն սորին՝
Սևաստ երկիր ամէն լացին.
Որ էր անմեղ ի տան միջին՝
Յանկարծակի ըզդուռն առին։

Վըրկայ մէկ ըզմէկ բըռնեցին,
Զէտ չար գազան բոլորեցին՝
Թէ «Միզի քուֆըր ասացին,
Մամլաքաթս է Ղըզըլպաշին»։

Առեալ տարան դատաւորին,
Նոցա լալուն ոչ լըսեցին՝
Թէ «Ուրացիր զՔրիստոս Որդին,
Ապա թէ քեզ ճար կու լինին»։

9. v ըզզմէկ.

Սէրն Յիսուսի ծաղկէր հոգւին,
Անվեհեր տար զպատասխանին
Թէ «Ես Քրիստոս խոստովանիմ
Սուրբ հաւատով Լուսաւորչին»։

Աղաչէին բազում բանին
Եւ շատ պարգևք խոստանային։
Նա ոչ խօսէր ամենևին,
Միայն օրհնէր զՀայր և զՈրդին։

Բայց չար զինուորքն այն փաշային՝
Լըցան թունոք իբրև օձին,
Վայր կոխեցին զնա ի գետին,
Զլեզուն հանեալ և կըտրեցին։

Մանուկն որպէս զառիւծ գոչէր,
Հայէր յերկինս և հառաչէր.
Ոչ ոք չըկայր բարեխօսէր,
Կամ մարդ կարէր որ ազատէր։

Գլուխն ի բաց, ձեռքն ի կապին՝
Արիւն թափէր ի բերանին.
Սիրտք բեկէին զնա տեսողին,
Երբ որ տարան ի մօյտանին։

Ոմանք ըզնա աղաչէին,
Եւ այլք ահիւ ըսպառնային.
Ոմանք փայտիւ հարկանէին,
Եւ այլք սըրով գաղտ խոցէին։

Կոկճան կապած կայր ի միջին,
Որպէս գառինս ի մէջ գայլին..
Հայէր ի յաջ դիհ և ձախին,
Լեզու չունէր ի բերանին։

Դարձեալ բերնէն ձող մի զարկին
Եւ գըլխիվար կանգնեցուցին,

1. v ծաղկեր. 7. v Նայ. 9. v զինուրքն. 14. v հառաջէր. 15. v բա-րէխօսէր.

Որպէս Պետրոս Առաքելին՝
Որ գլուխ ի վար զնա խաչեցին։

Յետոյ քարիւ քարկոծեցին՝
Ի վկայութիւն Ստեփանոսին,
Զարչարանօք նահատակեցին,
Ապա թողեալ ի բաց գնացին։

Երբ որ տեսան զնա ի փայտին՝
Բոլոր երկիրն ըզնա լացին,
Եւ ողբալով զնա գովէին,
Ըզքաջ մանուկն ափսոսացին։

Միմեանց պատմեալ նուաղէին,
Զարիութիւնըն գովէին,
Որ քաջութեամբըն տիրացաւ
Անանց լուսոյն և երկնային։

Տարեալ զմարմին սուրբ հանգուցին,
Հետ քառասնիցըն նըշխարին,
Ծառագայթեց մէջ գիշերին՝
Լոյսն ի վերայ գերեզմանին։

Զոր անօրէնքն զլոյսըն տեսին,
Եւ փոշիման վայր մընացին,
Եւ քրիստոնեայք մըխիթարին,
Օրհնեն ըզհայր և զիր Որդին։

Այս վկայաբանական տաղն ունի V ձեռագիրը՝ էջ 62 ա—63 բ։ Չամչեան, Գ. 516 սոյն վկայի մասին ունի միայն հետևեալ փոքրիկ տեղեկութիւնը. «Ի թուին ՋՁԵ նահատակեցաւ ի Սեբաստիա ազնուական ոմն՝ խօճա Ոգջայ, կամ Կէօկճան կոչեցեալ»։ Տաղի հեղինակը՝ ինչպէս առաջին եօթը տների սկզբնատառերը ցոյց են տալիս, Յովասափ Սեբաստացին է։

3. V յետո. 4. V ի վկաութի. 11. V միմիանց պատուեալ.

Digitized by Google

# 65.

## ՄԻՆԱՍԻՆ ԽԸՑԸՐԵՑՈՅ

† ՋԴ.=1541 (կամ ՊԴ.=1441)

*Տաղ Խըտըրըչայ մանկան որ ի Մարզըւան քաղաքն է նահատակեալ:*

Խըրատ մի տամ վասըն մեղաց,
Աղէկ լըսէ, ականջըդ բաց.
Աղաչեցէք ըզՏէր Աստուած՝
Որ զմեզ փըրկէ ի փորձանաց։

Երկու կենաք մեք եմք զըրկած,
Խիստ մեղաւոր, օրինազանց.
Ոչ կու դիմեմք յեկեղեցին,
Զայն այլ կերթամք ի վրայ մեղաց։

Մեք թագաւոր չունիմք դըրած,
Ո՛չ առաջնորդ ի վրայ խելաց.
Ամէնն խըմած են ու հարբած,
Ոտվին ի ջուրն ի վայր գընաց։

Վերեւի ձեւով է m ձեռագրի վերնագիրը. իսկ x ձեռագիրն ունի՝ «Վա. խտրչայ Նահատակին»: 1. x բանիկմ ասեմ ի վրայ մեղաց. 2. x լսէ. 3. x զքս փխ. ըզտէր. 4. x փրկէ. 5. x եմ եւ զրկած. 6. x եմ օրինաց. 7. x ոչ կուդիմենք յեկեղեցիս. 8. x այն. | x կերթանք. | x եկըս. m ի վերայ. 9. x չունիք. | x օծած փխ. դըրած. 11. x ամէն. | x խմած. 12. x ոտվին ի ջուրըն խոր գնաց.

Digitized by Google

Մեք թագաւորք ունէաք օծած,
Մեծ մեծ իշխանք. ան այլ գընաց.
Որ զմեզ թողին ի մէջ Տաճկաց,
Հուքմըն կառնէր ամէն խուզած։

Երբ լըսեցին ազգըն Տաճկաց՝
Ի վրայ եկին բուլք ի բուլաց,
Ձերդ քացխով տիկ չարով լըցած,
Զինչ ըզգազան նետով հարած։

Զինչ թիւնաւոր օձ դառնացած՝
Զմեզ կու խոցեն ամէն դիհաց։
Աղաչեցէ՛ք զՔրիստոս Աստուած՝
Որ զմեզ փըրկէ ի փորձանաց։

Մէկ անպատեհ բան մ՚ այլ արին՝
Զինչ չենք լըսեր մեք ի պապանց.
Զճերմակն առին ի գըլխընուս,
Կապուտ արին ոտից մատանց։

Յայնժամ Հայոց ազգըն վախեցաց,
Մեծ ու պըղտիկ զէտ զուռ դողաց.
Վա՜յ թէ մեր մեղքըն ըզմեզ որսաց՝
Ըզմեզ ի վայր տան անկասկած։

Տէրն ողորմած էր և գըթած,
Անտես չառնէ զգործըս ձեռաց.
Ըզխըտըրչան մեզ պարգևեաց՝
Որ ըզմեր փակ դըռվին իբաց։

Թէ զխըտըրչին բաներն ասեմ՝

1. x ունինք. 2. x և մեծ իշխանքըն գրնացած. 3 x ըզմեզ փխ. որ զմեզ. 4. x հուքում կանէր. 5. x Նա փխ. Երբ. 6. x Թունկա եկաւ ազգն ու գընաց. 7. x զինչ քացախով տիկ չարով լցված. 8. x այլ չիչեցին օրմ ադուհաց. 9-12. x Եւ հանց եղան ի մեր դիմաց | զէտ ըզգազան նետով խոցած | զմեզ կու խոցեն ամէն դիհաց | զէտ թունաւոր օձ էն դարձաց. 13-16. x Հանց անպատեհ բանմ այլ արին | չէինք տեսեր ի վրյ երկրին | զկապուտն առին ու վայր դրրին | զճերմակըն տւին ու ցից մատին. 18. x և մեծ ու փոքր քանց զուռ դողաց. 19. x հանդիսաց փխ. որսաց. 21. x է և ըթած. 23. x ըզխըտըրչայն. 24. x որ զմեզ փակած դռվինն եբաց. 25. x զխըտրչի.

Յինքն Յայսմաւուրք պիտէր գըրած,
Որ ամէն օր զինքն կարդային՝
Թէ ինչ եղաւ կամ ինչ գընաց։

Այս Խըտըրշան մանուկ գոված,
Աղէկ կըտրիճ անունն ելած,
Ինչ որ մըտաւ ի Մարզիվան,
Շուն չի մընաց որ զինքն չիխած։

Դեռ չէր խըմեր ի իւր ջըրէն,
’Ինչ էր նըստեր ուղուրդ ի հաց,
Բուխտան դըրին ի վրայ նորա՝
Թէ «Խըտըրշան յիշոցք ասաց»։

Յոր տեղ որ կայր հանած փարած՝
Լուք մէկ մէկի արին իմաց,
Ժողովեցան ազգըն Տաճկաց,
Ի վրայ եկին զինչ շուն կատղած։

Նայ Խըտըրշան ի վայր մընաց,
Յիշեց զեղբայրքն և խիստ իլաց.
Ասաց թէ «Վա՜յ ղարիպութեանս,
«Այս այլ ուր կայր ինձի պահած»։

Շատ աղաչեց զայն Տաճկընին՝
Թէ «Թողէք զիս պահ մի ձեռաց.
«Խիստ ճանփուհներեր եմ դադրած,
«Դեռ եմ եկեր հեռու տեղաց»։

Երկու վընաս մարդ կայր ի հոն,
Այն երկուքն այլ առաջ եկին՝
Մէկ մուխթասիպ աչից ելած,
Մէկ չարագործ աստուածուրաց։

1. x գրած. 2. x յամէն. | x զնայ ինս. զինքն. 3. x երեկ փխ. եղաւ. 4. x չունի այս. | x խրտրշան. 5. x կտրիճ անուն եղած. 6. x ի մարզուան. 7. x չէ. | m մնաց. | x որ զնա չկխած. 8. x դեռ չէր խըմեր նա այն ջրրէն. 9. x նստել. | x ողորդ. 10. x պուխտան դրին ի վրյ. x-ը այստեղ վերջանում է, որովհետև ձեռագրի միջից մի խանի թերթ դուրս են ընկել. 15. m ի վերայ.

Նայ երկուքն այլ առաջ եկին,
Մերկիկ արին ու գըլխիբաց,
Առին տարան ի դատաստան՝
Երկու ձեռկունքն յետին կապած։

Թուր ու դանակ ամէն քաշած՝
Լուք ամէն հետ բուլք ի բուլաց,
Կու կանչէին ամէն դիհաց՝
Թէ «Խըտըրշան յիշոցք տաաց»։

Երբ դատաւորըն նայեցաւ
Եւ իւր յամէն աչքըն վախեաց՝
Ասաց թէ «Մուռ բան էք արեր.
«Դուք մի՛ վախեր ի պարոնտաց։

«Այդ մարդըն խև է կամ՝ հարբած,
«Կամ անօրէն կընկան դեղած.
«Ջսայ պահեցէք օր մի քանի,
«Մինթէ գայ խելքն ի վրայ գըլխաց»։

Նայ Խըտըրշան զբերանն իբաց,
Բան մի քանի այլ նա ասաց՝
Թէ «Ո՛չ խև եմ և ո՛չ հարբած,
«Ի ոչ անօրէն կընկան դեղած»։

Լուք դատաւորն զբերանն իբաց,
Բան մի քանի այլ նա ասաց.
«Տանք քեզ հազար կարմիր դեկան
«Եւ կապանի ոսկով կարած.

«Աղէկ տոլպանտ՝ բարակ գործած,
«Եւ այլ պարգևք ցեղք ի ցեղաց.
«Եկի՛ գարձիր ի մեր հաւատս,
«Եւ ազատիս ի տանջանաց»։

Երբ Խըտըրշան զբերանն իբաց՝
Բան մի քանի այլ նա ասաց.

15. m գըսայ.

Digitized by Google

«Եւ ես ունիմ կապայ կարած,
«Աղէկ տօլպանտ ոսկով գործած.

«Շատ մի դեկան կայ ինձ պահած,
«Աղէկ հալաւ գոյնս ի գունաց՝
«Ամէն ի տուն ի վայր ձըգած.
«Անոնք յիմնէ անտէր մընաց»։

Դատաւորին դըռնէն հանին,
Յօժար կամօք ի հետ գընաց.
Առին տարան ի յայն տեղին՝
Ուր որ կըրակըն վառէին։

Մէկ չուն ծառայ մի կայր ի հոն,
Որ իւր անունն Դալալ կոչած՝
Նա ճըվըրդեց զօղն անկըճէն,
Արիւնն ի վրայ յուսին գընաց։

Առին տարան ի յան տեղին՝
Հոն որ կըրակըն վառէին՝
Տարան ի հոն կանգնեցուցին
Ձինքըն մերկիկ ու գըլխիբաց։

Երկու ձեռկունքն ի վեր վերուց,
Դէմ Աստուծոյ ինքըն իլաց,
Ասաց թէ «Տէ՜ր իմ և Աստուած,
«Դու զիս փըրկէ ի փորձանաց։

«Դու ողորմած ես և գըթած.
«Ես եմ տըղայ ի մէջ մեղաց.
«Տէ՜ր, արա՛ ինձ ողորմութիւն՝
«Յորժամ գայցես փառօք մեծաց»։

Ձայն մի եկաւ ի երկընուց՝
Թէ «Զօրացի՜ր իմ քաջ գոված.
«Քեզ այն տեղիքն եմ պատրաստել՝
«Որ ի մարդոյ սիրտ չէ անկած»։

2. m գաւրծած. 5. m ձըգայ. 7. m դըռնեն. 25. m արայ.

Պեղծ Տաճկընին եկին յառաջ՝
Թէ «Խըտըրշըմյ մանուկ գոված,
«Արի եղիր դու մուսուրման՝
«Թէ քո արևն է քեզ պիտած»։

Դանըշմաներն աչից ելած
Եւ մոլնաներն չար կարդացած՝
Ասեն. «Եկոյ զմատըդ վերուր,
«Կըրակըս քեզ համար վառած»։

Պեղծ դատաւորն յառաջ երեկ,
Բանի բան մի այլ նա ասաց.
«Ուսուցանեմք զամէն Թուրք՝
«Զինչ որ մեզի է ուսուցած»։

Ասաց թէ «Ինձ հանց մի ասէք,
«Այդ ինձ թըւի քան զչուն դեղած.
«Հոգոյս չունիք իշխանութիւն,
«Ահա մարմինս հատիր կանգնած։

«Ես դաւանիմ ըզՀայր Աստուած,
«Բանն ի Հօրէ յառաջ ծընած,
«Հոգին՝ բըխումըն Հօր փառաց,
«ԶԱստուածածինն որ կոյս մընաց։

«Ես քրիստոնեայ եմ ի յազգաց,
«Ունիմ ըզխաչըն պարծանաց,
«Աւազանին շնորհք ունիմ,
«Զերդ ըզձեզ չեմ հոտած նեխած»։

Հընցկուն կըսկիծ բաներ ասաց՝
Թէ «Դուք ու ձեր հաւատ կորած.
«Հընցկուն հաւատ ո՞վ է տեսեր
«Ի վրայ մարդոյ ճօրով ձըգած»։

Իւրեանց մեծվորըն բարկացաւ,
Գաղտուկ եկաւ ի յետևանց,

16. m ահայ. 21. m քրիստոնեա. 23. m չնոյք.

Փայտով խզարկ ի վրայ գըլխուն՝
Ջեռուին չորցաւ ի յարմընկաց։

Բերին ձգեցին զտուրըն կըրակին,
Երկու ձեռկունք յետին կապած.
Ջինչ որ պիւլպիւլն ի վրայ վարդին՝
Կու շըրջմըրջէր կամաց կամաց։

Անանց լուսուն նա տիրացաւ,
Ի մէջ կրակին որ նա դիմացաւ։
Միթէ հօրէ նա չէր եղել,
Կամ ի մօրէ նա չէր ծըներ։

Տէրըն երետ համբերութիւն՝
Ի մէջ կրակին որ նա գընաց.
Լոյսն ի վերան ճառագայթեաց,
Հաղորդ եղև մարտիրոսաց։

Մի մեղադրէք Մեծ Պարոնին,
Որ զայս սակաւ բաներս ասաց.
Ժամանիկիս դառնութենէն՝
Միտքըն մոլոր ամէն դինաց։

Այս Խըտըրշան եղև պատճառ,
Որ լոյս ծագեաց Հայոց ազգաց։
Ո՛վ որ ասէ ըզհայր մեղան՝
Նա զինքն օրհնէ Քրիստոս Աստուած։

· Այս տաղն ունին m և x ձեռագրերը· m էջ 101 ա—109 ա, x 79—82 (որ պակաս է)։ Հմմտ. և Զամչեան, Գ. 516. «Ի Թուին ՋՂ կատարեցաւ հրով ի Մարգուան այր ոմն Խըտըրշայ անուն. այլ զսա դնեն ոմանք ի Թուին ՊՂ։» Տաղիս հեղինակն է Մեծ Պարոն, ինչպէս յայտնի կերպով յիշուած է էջ 382, տող 15։

8, 12. m կըրակին.

## 66.

### ՍԱՐԳԻՍ ՄԵԼԻՏԻՆԵՑԻ

† Ռ=1550 ապրիլ 15 գշ.

Ի ամին կայ ի պարածածկի՝
Մարմին ուրումն նոր վկայի՝
Որ և Սարգիս գոլ ճանաչի,
Ցերկրորդ Հայոց Մելտինացի.
Երբեմն ի տիս մանկականի՝
Թողեալ զաւիթ կենաց անտի,
Ամօք բազմօք նովիմբ վարի. ,
Բայց իւրովի դարձեալ կորզի,
Չի յատենի համարձակի,
Ի Զըմիւռինս Ասիայի
Մեծ համդիսիւ նահատակի,
Ընդ տէրութեամբ Իսմայէլի,
Հարաւականն եղեալ տոհմի,
Ցամի հազար հայկեանս թուի,

Եւ զնոյն անուն խոստովանի.
Ապրիլի ժե օրըն նոր
Կիրակի երեքշաբթի
Օրըն նահատակեցաւ։

Սոյն նահատակի տապանագիրը միայն ունինք, որը արտատպում ենք Քօսեանի «Հայք ի Զմիւռնիա և

17. աբրիլ. | Նոր. 18. երեգշաբթի. 19. Նահատկեցաւ.

Digitized by Google

ի շրջակայս» աշխատութիւնից, Հատ. Ա. Վիեննա, 1899, էջ 82։

Սուրբի Նահատակութեան թուականը բաւական կասկածելի է. տապանագրի 14րդ տողը ասում է «Ցամի հազար Հայկեանս թուի». բայց սորա յաջորդ 15րդ տողը՝ որ դարձեալ թուականին պիտի պատկանէր՝ Քոսեանի գրքի մէջ բաց է թողուած՝ առանց յիշելու թէ արդեօք բուն տապանագիրը ոչինչ չունի՞ այստեղ, թէ ունի՝ բայց գրութիւնը անընթեռնլի է։

Նահատակութեան ամսաթիւը պահանջուած չափով կատարեալ է՝ ապրիլ 15, Նոր Կիրակուայ յաջորդ երեքշաբթին, որ և իբր արձանագրութիւն՝ չի էլ կարող գրչագրական սխալմունք ունենալ։

Արդ՝ որպէսզի Նոր Կիրակուայ երեքշաբթին ապրիլի 15-ին գայ, պէտք է որ Զատիկը ապրիլի 6-ին եկած լինի։ Սկսեալ 1550-ից մինչև այժմ Զատիկը ապրիլի 6-ին է պատահում ՋՂԹ=1550, ՌԺ=1561, ՌԻԱ=1572, ՌՂԴ=1645, ՌՃԵ=1656, ՌՃՁԴ=1735, ՌՃՁԹ=1740, ՌՄԿԸ=1819 և ՌՄՀԹ=1830 տարիներում։

Եթէ տապանագրի 15րդ տողում մի անընթեռնլի բան կայ՝ Նահատակութեան թուականը կարող էր բոլոր այս թուերից մինը լինել (բացի 1550-ից), ենթադրելով թէ այդ անընթեռնլի տողը լինէր «Որ և տասն յարաբարդի» (1561) կամ «Քսան և մի յարաբարդի» (1572) ու. շարունակաբար։

Իսկ եթէ յիշեալ տողը ոչինչ չունի և տապանագիրը պէտք է առնել այնպէս ինչպէս որ է, այն ժամանակ հարկաւոր է հաշուի տարբերութիւն ընդունել։—Հայկական Ռ թիւը ըստ սովորական հաշուի համապատասխանում է փրկչական 1550 նոյ" 3—1551 նոյ" 2 թուին. իսկ 1551-ին Զատիկը գալիս է մարտի 29-ին, ուստի չենք կարող ընդունել Ռ=1551 թուականը։ 1550 թուականը համաձայն է, որովհետև այս թուին էլ Զատիկը ապրիլ 6-ին է գալիս։ Արձանագիրը կարող էր Հայկական թուականի յաւելուածը միայն 550 հաշուել և դնել Ռ=1550 ապրիլ 15 գշ.։

# 67.

## ՀՌԻՓՍԻՄԷ ՍԻԼԻՎՐԻՑԻ

† ՌԳ=1554 փետրվ. 14 դշ.

*Թվին ՌԳ Սիլիվրիլի Խոռոմըն նահատակ արին, որն Դշ. տիրնտասին ընդ արշալոյսն։*

Սոյն վկայաբանական հատուածն ունի Ս. Էջմիածնի մատենադարանի թիւ 864 ձեռագիրը՝ Գիրք հարցմանց Տաթեւացւոյն, էջ 357 բ, իբր լուսանցագրութիւն երկրորդական մի գրչից։ Հռիփսիմէի ձեւափոխութիւնն ու համառօտութիւնը Հռուփսիմա, Հռումսիմա, Հռուփ, Հռում ևն սովորական են ժողովրդական բարբառներու մէջ։



Digitized by Google

# 68.

## ՊԱՐՈՆ ԼՈՅՍ ԿԱՖԱՑԻ

† ՌԺԶ—1567 մայիս 15 եւ.

Ի ժամանակս թագաւորութեան Սուլտան Սէլիմին՝ որ նստէր ի քաղաքն Կոստանդինուպոլիս, ազգէն Թուրքաց՝ որ տիրէր բազում աշխարհաց, ազգաց և ազանց, բարի մանուկ մի երևեցաւ Պարոն Լոյս անուն, յաշխարհն Հոնաց, ի քաղաքն Կաֆայ, յազգէն Հայոց, հաւատով քրիստոնեայ, դաւանութեամբ սուրբ Գրիգորի Լուսաւորչին, բարի ծնողաց զաւակ, հօրն անուն Աստուածատուր։ Ի ձմեռնայեալ ժամանակի անուշահոտ վարդ երևեցաւ ի մէջ աշխարհի, վառեցաւ որպէս հուր ի սէրն Քրիստոսի, ի թուականութեանս Հայոց ՌԺԶ ամի, ի հինգ յունվարի, յաւուր ճրագալուցի Յայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Յանկարծակի շրջապատեցին զնա անօրէնքն և ըմբռնեցին զսուրբ նահատակն Պարոն Լոյս՝ որ էր ամաց տասնևութից, մանուկ տիօք, տեսլեամբ գեղեցիկ, հասակաւն վայելուչ, լեզուաւն ճարտար, աստուածային շնորհօքն զարդարեալ։ Ի մէջ առին զնա այլազգիքն և ասացին թէ՝

1. w սէլումին. 2. w կոստանտինուպօլիս. 4. w աշխարհն. 5. w յազգէ. 6. w գրիգոր. 7. d ծնողաց. d հաւր. 10. d ի թվականութես. w թվկւթես. 13. w զնայ. w ըմբռանեցին. 14. d լուս. w ժբիցն մանուկն. 16. d լեզւաւըն. w լեզուովն. 17. w զնայ. w չուեն և.

«Դու տաճկացեալ ես ի Կէզլով քաղաքին. և աստ եկեալ ես և պաշտես զհաւատս քրիստոնէից։»

Յայնժամ սուրբն Պարոն [Լոյս] լցեալ Հոգւովն սրբով. ոգւոց եհան և հառաչելով հայեցեալ ի վեր յերկինս. և յիշեաց ի սրտի իւրում զՔրիստոս ]կենդանին և ապաւինեցաւ յաղօթք սուրբ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին՝ պինդ և սերտ հաւատով, պատասխանի ետ նոցա և ասաց. «Ես հաւատովս քրիստոնեայ եմ և հաւատամ զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին. և զՔրիստոս Աստուած հաւատամ. ես ոչ տաճիկ եղեալ եմ և ոչ կու լինիմ։»

Յայնժամ գրոհ տուեալ անօրինացն ժողովեցան ի միասին և առեալ տարան զնա ]առաջի դատաւորին։ Եւ մինչդեռ տանէին զսուրբ նահատակն, բարձր ձայնիւ աղաղակէին և որպէս դիւահար, բողոքէին ըստ իւրեանց օրինին։ Եւ յորժամ հասին յատեան դատաւորին, բերեալ կացուցին սուտ վկայք՝ որք ասացին առաջի դատաւորին. «Թէ Մեք վկայ եմք, որ այս մանուկս տաճիկ եղաւ առաջի մեր։»

Յայնժամ եհարց դատաւորն զսուրբն Պարոն Լոյս և ասէ. «Վասն քո այսպէս ասեն թէ տաճիկ եղեալ ես. վասն էր ուրանաս զմեր օրէնքն և հաւատաս օրինաց քրիստոնէից. մեք մըսլման եմք, մեր բանն ուղորդ է. թագաւորութիւնն մեր է. եկ լսէ մեզ և հաւանիր մեր օրինացն, շատ բարութեան հասանիս. և եթէ ոչ լսես մեզ, բազում չարչարանս կրես կամ հրով կու այրեմք կամ սրով կու սպանանեմք. բայց կու խնայենք զմանկութիւնս քո։»

Յայնժամ պայծառացեալ երեսն սուրբ նահատակին և սուրբ Հոգւովն զօրացեալ. եբաց զբերանն իւր ի մէջ ատենին, պատասխանի ետ դատաւորին և ամենեցուն՝ որք

1. w ի կեզլով. 2. w յուշն և. 4. w ոգոց. 6. w աղաւթք. 7. dw պինտ. 8. d քրիստոնեամ. | d յուշն պհա.ր ...հաւատամ. 11. w գռոհ. 12. w ըզ-նայ. | d յուշն Եւ. 13. w ըզօր. 14. d յուշն և. | w անաւրինին. 15. w ատեան. | w յուշն կացուցին. 19. w ըզօրն. 21. w յաւրինաց. 22. w մըսըլմանենք. | w ըղորդ. 23. d թագաւորութի. | w յուշն և. 25. w կու-այրենք. 26. w բայց կու խնայեմք. 28. w զբերան. | w ատեանն.

կային յատենին, թէ «Ես քրիստոնեայ եմ և Քրիստոսի ծառայ և քրիստոնեայ ծնողաց զաւակ. ես չեմ ուրանալ զՔրիստոսի հաւատն և չեմ հաւատալ ձեր օրինացն. որպէս կամիք, այնպէս արարէք. եթէ սպանանէք և եթէ կրակով այրէք, ես զՔրիստոս Աստուած ոչ ուրանամ։»

Յայնժամ իմացեալ դատաւորին զչարութիւն ամբոխին և սուտ վկայիցն՝ ոչ հաւանեցաւ նոցա։ Յայնժամ յառաջ մատուցեալ քրիստոնէից, երաշխաւորք եղեն և առեալ տարան զնա ի տունս ծնողաց իւրոյ։ Յայնժամ անօրինացն խորհուրդ արարեալ գնացին առ մուֆտին իւրեանց և ասացին թէ՝ «Մանուկ մի Հայոց ազգէն հաւանեալ է մեր օրինացս և տաճիկ եղեալ՝ զորոյ ունիմք վկայք, և մեք զնա առեալ տարաք դատաւորին և վկայեցաք եթէ մանուկս ի Կէզլով քաղաքին տաճիկ եղեալ է և սատ եկեալ քրիստոնեայ շրջի. և դատաւորն ոչ արար ուղիղ դատաստան և ոչ ետ ի ձեռս մեր, այլ դարձեալ արձակեաց զնա ի բաց. և մեր ոչ գտեալ մխիթարութիւն, դիմեցաք առ քեզ. և այժմ աղաչեմք զքեզ և խնդրեմք ի քէն, մի ամօթով առներ զմեզ ի մէջ քրիստոնէից. այլ տուր մեզ թուղթ հրամանաց քոց, թէ որպէս է հրամանքն օրինաց մերոց։»

Եւ նորա գրեալ թուղթ մի առ դատաւորն, թէ «Պարտ է որ զդա վերստին դարձուցանէք. և եթէ ոչ դառնայ, պարտ է սրով գլխատել։»

Եւ նոցա առեալ տարան զթուղթն առ դատաւորն և ծանուցին նմա. և առեալ հրաման ի դատաւորէն, գնացին ի տունն ծնողաց սրբոյն և խնդրէին զնա և ծնօղքն կամեցան թագուցանել զնա։ Եւ գիտացեալ սուրբ մանկանն, ոչ կամեցաւ թագչել, այլ վաղվաղակի ձայն տուեալ

1,2. d քրիստոնեա. 2. d ուրանար. 3. w ինչպէս կուզէք այնպէս արէք. 4. d թէ կրակով. 5. w չեմ ուրանալ. 6. w ու ացաւ փխ. իմացեալ. | w դատաւորն. | w ամպոխին. 8. w քրիստոնէիցն երեշխաւորք. 9. w զնայ. | d իւրոյ. 10. w մուֆդին. 11. w ասեն. 12. w չունի է. 13. w զնայ. 14. d թէ. | d ի կէզլաւով. w ի կեզլով. | w տաջիկ. 15. d քրիստոնեա. w քրիստնեայ. 16. w զնայ. 18. w յամաւթով. 19. d թուխթ. 22. d ըզդայ. w զդայ. | w վերըստին. | d դառնա. 24. d զթուխտն. 26. w զնայ. 27. w զնայ. | w մանկան ոչ կամեցան.

Digitized by Google

կոչողացն, թէ «Աստ եմ։» Եւ նոցա կալեալ զերանելին մանուկն, տարան առ դատաւորն. և դատաւորն բազում անգամ հարցափորձեալ զսուրբն՝ ոչ կարաց շարժել զնա ի հաւատոյն Քրիստոսի։

Յայնժամ վճիռ հատեալ՝ եթէ ոչ դառնայ ի մեր օրէնքն, մահապարտ է։ Եւ զերանելի մանուկն տուեալ ի ձեռս նոցա. և նոքա ձայն տուեալ միմեանց, ժողովեցան առհասարակ ի միասին։ Եւ առեալ զերանելին ի մէջ, նեղէին զնա և կոփահարէին, զգլուխն ծեծէին և յերեսն թքանէին և ապտակէին. և նա էր ի մէջ նոցա որպէս գառն ի մէջ գայլոց։

Եւ ապա առեալ տարան առ մուֆտին. և նա կոչեաց առաջի իւր, բազում ողոքանօք խրատեաց զնա և խոստացաւ նմա բազում պարգևս և մեծութիւն և ոչ կարաց զնա խախտել և մեկնել ի սիրոյն Քրիստոսի։ Եւ ապա սպառնացաւ նմա զանազան տանջանս և ոչ այնու կարաց զնա երկեցուցանել. և զի Հոգին սուրբ բնակեալ էր ի նմա և զօրացուցանէր զնա, զի զուարթ և պայծառ դիմօք անահ և աներկիւղ տայր պատասխանի իւրաքանչիւր հարցուածոյ նոցա։ Եւ կոչեաց Դանիշմանն զսուրբն Պարոն Լոյս մերձ առ ինքն և ասէ. «Ե՛կ, դարձիր ի մեր օրէնսն, զքեզ ինձ որդեգիր առնեմ և բազում պարգևօք մեծացուցանեմք. և հանապազ յիշեմք զքեզ ի մեր աղօթքն ի յուրբաթի։»

Եւ սուրբն Պարոն Լոյս ասէ. «Ես քրիստոնեայ եմ և քրիստոնեայ ծնողաց զաւակ. զձեր օրէնքն չուզեմ։»

Յայնժամ բարկացեալ ամբարիշտն այն, ապտակ էած ծնօտի սրբոյն և նա խնդութեամբ մատուցեալ զմիւս ծնօտն

3. d չունի անգամ. | d և փխ. զսուրբն. | w զնայ. 5. w վիճիռ հացեալ նմա եթէ. | d դառնա. 6. w մահայպարտ. 7. w ի ձեռն. 9. w զնայ և կոբահարէին. | w զերեսն. 10. w նայ. 12. w ապայ. | w մուֆդին. | w նոցա փխ. նա. 13. w ողոգանաւք. 15. w զնայ խաղտել. | w ապայ. 17. w զնայ. | w բնակէր. 18. w զնայ. 19. d հարցւածոց. w հայցուածոց. 21. w դինն. 22. w ինձի որդի գրեմ. | d որդէգիր. 23. w չունի զքեզ. 25. w լոյսն. 26. w ծնաւղաց. 28. w նայ. | w զմիուս.

և ասէ. «Հա՛ր զմիւս ծնօտս իմ 3 անգամ՝ ըստ հրամանի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, թէ որ հարկանէ զծնօտ քո, մատո՛ նմա և զմիւսն։»

Յորժամ ոչ կարացին յաղթել նմա և դարձուցանել ի սիրոյն Քրիստոսի, յայնժամ՝ առեալ տարան առ Սանճախ պարոնին։ Եւ՝ պարոնն չատ ջանաց ողոքական բանիւք և խոստմամբ պարգևաց հաւանեցուցանել զնա և ոչ կարաց. և դարձեալ բարկութեամբ սպառնացաւ նմա և ոչ այնու կարաց մեկնել զնա ի սիրոյն Քրիստոսի։ Եւ ապա ետ ի ձեռս դահճապետին և նա տարեալ եդ ի բանտի. և պնդեաց զոտան ի կոճեղս մինչև աւուրս երիս. և յետ երից աւուրց՝ դարձեալ տարան զնա և կացուցին առաջի ատենին բռնաւորաց և բազում ողոքանօք խրատ ետուն նմա թէ՝ «Ի բաց լեր ի քրիստոնէութենէ և հաւատա՛ օրինաց մերոց։» Եւ ամենևին ոչ լսէր նոցա, այլ հաստատուն և անշարժ կայր ի հաւատս Քրիստոսի։ Եւ դարձեալ հրամայեցին տանել ի բանտն. և բազում անգամ ժողովէին առ հասարա՛կ այլազգիքն ամենայն, որպէս կատաղի գազան և դիմէին ի վերայ նորա։ Ոմանք ողոքէին և այլք կռփահարէին, ոմանք զգլուխն ծեծէին և այլք զերեսն թքանէին. և միմեանց գրոհ տուեալ բարձր ձայնիւ աղաղակէին ըստ իւրեանց օրինին և բնաւ ոչ կարացին չարժել զերանելի նոր նահատակն Քրիստոսի։

Բայց դահճապետն հրամանաւ իշխանին բռնութեամբ եհան և կորզեաց ի ձեռաց նոցա և տարեալ եդ ի բանտի և բազում քրիստոնեայք, քահանայք և ժողովուրդք և հաւատակիցք մանկունք երթային առ երանելի մանուկն Պարոն Լոյս և քաջալերէին զնա հանապազօր։ Եւ նա զուարթ

1. w զմիւս. 2. w ըզծնաւտ քո մատոյ. 4. w յայնժամ. | w յախտել. 6. w ողոքական. 7. w զնայ. 9. w չուժի զնա. | w ապայ. 10. w նայ. | w ի բանդի. 11. d պնտեաց. | d ի կոճիղս. | dw գ. 12. dw գ. | w զնայ. 13. w ողոքանաւք. 14. d հաւատայ. w հաւատ. 21. w գռոհ. 23. w քէայ մերոյ. 25. w կորեաց ձեռաց. | d ի բանդի. 28. w քաջալ-լերէին. | w զնայ. | w նայ.

Digitized by Google

սրտիւ և պայծառ դիմօք և սերտ հաւատով պատասխանեաց ամենեցուն թէ՝ «Վասն իմ մի ինչ հոգայք. ես պատրաստ եմ մեռանել ի սէրն Քրիստոսի. բնաւ ոչ երկնչիմ ի նոցանէ և ոչ ցանկամ պարգևաց նոցա. եթէ սրով հատանեն զգլուխս իմ և կամ կրակով այրեն զմարմինս իմ, ես պատրաստ եմ ի սէրն Քրիստոսի։ Բայց դուք եթէ կարող էք դրամով և կամ աղաչանօք հանել զիս ի ձեռաց նոցա, նա բարի է. ապա թէ ոչ՝ ի մեռանել պատրաստ եմ և դուք զիս ի յաղօթից մի մոռանայք»։ Բայց ստէպ և հանապազ աղօթս լինէր վասն նորա առ քահանայն և ժողովուրդն ի տաճարի Տեառն, վասն համբերութեան սրբոյ վկային Քրիստոսի։

Եւ այլազգիքն հանապազ երթային ի բանտն և խրատտային նմա և ողոքէին պէս պէս բանիւք և ահացուցանէին զնա և ոչ կարէին խաբել զսիրելին Քրիստոսի։ Ի յունվարի ամսոյ հնգէն մինչև ի մայիսի 15, հանապազ նեղէին զնա և չարչարէին բանտիւ և կապանօք և պէս պէս կտտանօք. և ոչ կարացին հաւանեցուցանել։ Եւ սուրբ մանուկն Գարօն Լոյս եւս քան զեւս զօրանայր սուրբ Հոգւովն և հաստատուն կայր ի սէրն Քրիստոսի։

Եւ ի տեսլեան երևեցաւ նմա սուրբ հայրն մեր Գրիգոր Լուսաւորիչն և քաջալերեալ մխիթարեաց զնա և ասէ. «Հաստատուն և պինդ կաց ի սէրն Քրիստոսի. և բնաւ մի երկնչիր ի սպառնալեաց նոցա, զի հանապազ Քրիստոս Աստուած ընդ քեզ է։» Եւ հրեշտակք Աստուծոյ ըստ նմանութեան մանկանց երևէին նմա և քաջալերէին զնա ի բանտին։ Այլ և Տէրն մեր Յիսուս Քրիստոս բազում զօրօք հրեշտակաց իջանէր յերկնից ի բանտն և զօրացուցանէր

3. w ոչ երկընչիմ. 7. d կարօղ. 8. w նայ. | w ապայ. | w ի մեռանելոյ. 10. dw ըստէպ. 11. w տն միրոյ յի քի. 14. w ահայցուցանէին. 15. w զնայ. 16. w ի սուրէն մինչև ի մայիս, ի ժե. 17. w զնայ. 18. w կալտանաւք բայց ոչ. 22. w քաջայլերիալ. | w գնայ. 23. dw պինտ. 24. w երկընչիր. 25. d հչկ. 26. w մանկանց տղայոց. | w գնայ. 27. d տէր. 28. w հրեշտակաւք. | w ի յերկնից.

զծառայն իւր զսուրբն Պարոն Լոյս։ Բայց ծնօղքն շատ վշտացան և շատ ջանացին եթէ աղաչանօք և եթէ կաշառօք, ոչ կարացին հանել և ազատել ի ձեռաց այլազգեաց։ Դարձեալ մտին ի նաւ և գնացին ի Կոստանդնուպօլիս և ծանուցին թագաւորին. և առեալ թուղթ ի թագաւորէն և դարձեալ եկին ի Կաֆայ. և տարեալ զթուղթն ետուն ի ձեռս բռնաւորաց. և նոցա բարկութեամբ լցեալ խորհուրդ արարին կամ դարձուցանել կամ սպանանել։

Եւ այլազգիքն առ հասարակ ժողովեցան և գնացին ի միասին առեան դատաւորին. և ասեն նմա թէ «Տուր մեզ զմանուկն Պարոն Լոյս ի ձեռս մեր. կամ դարձուսցուք և կամ սպանցուք, զի մի նախատինք լիցուք քրիստոնէից. զի յոյժ նախատինք է մեզ, որ մանուկ մի քրիստոնէից յաղթէ մեզ ամենեցուն։»

Յայնժամ հրամայեաց դատաւորն երթալ հանել ի բանտէն և բերել առ նա. և նոցա գնացեալ հանին ի բանտէն և բերեալ կացուցին յատեանն և հարցափորձեալ գտին զնա անշարժ և հաստատուն ի հաւատս Քրիստոսի։ Եւ դատաւորն վճիռ եհատ գլխատման, եթէ ոչ դարձցի յօրէնս Մահմետին։ Եւ դահճապետն առեալ զմանուկն կապեաց և առեալ տարաւ առ իշխան քաղաքին։ Եւ իշխանն շատ ջանաց խրատելով և ահացուցանելով, և առեալ 500 դահեկան կարմիր և եդ առաջի նորա և ասէ. «Միայն բանիւ ասա թէ հաւատամ օրինաց ձերոց և զերծիր ի մահուանէ. և յետոյ ծածուկ պահեա զհաւատս քո. զի դեռ մանուկ ես, խնայեմ զքեզ։»

Եւ սուրբ մանուկն Պարոն Լոյս պատասխանի տուեալ թէ «Ես պատրաստ եմ ի մեռանել վասն անուանն Քրիստոսի։» Յայնժամ տեսեալ իշխանին եթէ ոչ դառնայ,

7. w ի ձեռն. 10. w յունին ի միասին. 13. d քրիստոնէիցն. 15. w երթեալ. 16. w բերեալ. | d հանեալ. 18. w զնայ. | w քի այ մերոյ. 19. w վճիռ. | w գլխատմանն. | w ոչ դարձի. | w աւրէնս. 20. w կապեցին. 21. w տարան. 22. w ահայյուցանելով. 24. w ասայ. 25. d յետո. | w պահեայ. | w դես. 26. w խնայեայ. 28. w յունին ի. 29. d դառնա.

Digitized by Google

հրամայեաց գլխատել զնա։ Եւ նոցա առեալ տարան ի տեղի գլխատմանն. և սուրբ մանուկն ուրախութեամբ երթայր ի կատարումն։ Եւ բանակք հրեշտակաց Աստուծոյ շուրջ եղեն զնովաւ և Տէրն մեր Յիսուս Քրիստոս յայտնապէս երթայր առաջի նորա. և ցուցանէր նմա զանթառամ պսակն. և սատանայ ամենայն դիւօքն իւրովք ի հեռաստանէ կացեալ և կրճտէր զատամունս իւր և ողբայր զկործանումն իւր՝ որ յաղթեցաւ ի փոքր մանկանէ միոջէ. և զօրք հրեշտակաց ուրախանային և զուարճանային ի կատարումն սուրբ մարտիրոսին և նոր նահատակին։

Եւ 3 տեղ փոխեցին, մինթէ երկնչի և ոչ երկեաւ. և դահիճն առեալ զսուրն, վերացոյց 3 անգամ և ասէ. «Ահա գլխատեմ զքեզ, եթէ ոչ դառնաս։» Եւ սուրբն ասէ. «Բազում անգամ ասացի՝ ձեզ թէ ես քրիստոնեայ եմ. և զձեր օրէնքն ոչ ընդունիմ։» Եւ ապա գլխատեաց զերանելի մանուկն։

Յայնժամ աւանդեաց զհոգին իւր երանելի սուրբ նահատակն ի ձեռն Աստուծոյ. և հոտ անուշ բուրեաց ի սուրբ մարմնոյն և ելից զքիմս ամենեցուն։ Եւ ուրախացեալ քրիստոնէիցն, փառք և գոհութիւն տային համբերութեանց տուողին։ Բայց ոչ ետուն հրաման բառնալոյ սուրբ մարմնոյն, այլ հրամայեցին մինչև 3 օր մնալ անթաղ. և այնպէս կայր անթաղ սուրբ նշխարքն անկեալ ի մէջ փողոցին, և 2 տաճիկ լրբութեամբ գնացին և ոտիւք հարին զգլուխն երանելոյն և պատուհասեցան ի Տեառնէ։ Մինն գնաց առ ափն ծովուն՝ զի լուասցէ զարիւնն որ թաթախեցաւ ի յոտսն. և առժամայն անկեալ խեղդեցաւ ի ջուրն. և միւսն չորացեալ դօսացաւ ոտքն։

Ի մէջ գիշերին լոյս պայծառ ծագեաց ի վերայ սուրբ

2. w երթար. 3. d չունի աստուծոյ. 6. w սատանայն ամ դիմուքն. 7. w կրճըտէր. 11. w երկընչի. 12. w ահայ. 14. d քրիստոնեա. 15. w ձեր. | w ապայ. 18 w ի ձեռն այ և ոտն մերոյ յի քի. 19. w ի քիմս. | w քրիստոնէից փխ. ամենեցուն. 20. w ամքն փխ. քրիստոնէիցն. 21. dw տըւողին. 23. w չունի անթաղ. 24. w հարկանէին. 27. w թաթխեցաւ. 29. w եւ ի գիշերին այնմիկ լոյս.

Digitized by Google

նշխարաց երանելոյն. և ի վաղիւն ոչ իշխէին խնդրել զսուրբ մարմինն։ Բայց ծնողացն և այլ հաւատարիմ արանցն մատեան առ բդեշխ քաղաքին և խնդրեցին զմարմինն երանելի մանկանն։ Եւ առեալ տարան ի վանքն սուրբ Յովակիմայ և Աննայի. և անդէն հանգուցին զսուրբ նշխարքն։

Բայց ի ժամ նահատակութեան էջ լոյս պայծառ ի վերայ սուրբ մարմնոյն և այլ ոչ մեկնեցաւ ի նմանէ. այլ միշտ և հանապազ կայր ի վերայ նորա։ Եւ ի ճանապարհին երթայր ի վերայ սուրբ նշխարացն, մինչև տարեալ եդին ի տապանի։ Բայց ի ժամ թաղմանն զարմանալի նշան երևեցաւ ի յերկինքն, մերձ արեգական. զի լոյս կամարաձև երևէր և խաչ լուսափայլ ամպեղէն եկաց ի վերայ սուրբ մանկանն։ Եւ իջեալ հրեշտակք Աստուծոյ ողջագուրէին զսուրբ մարմինն երանելի նոր մարտիրոսին։ Եւ ժողովեցան ամենայն քրիստոնեայքն, քահանայք և ժողովուրդք, ֆռանգք և հոռոմք, մինչև հրէայք և այլազգիք ի տեսութիւն սուրբ վկային։ Եւ սքանչանային ամենեքեան և փառս տային Աստուծոյ։ Եւ բազմաց երևեցաւ տեսիլ սքանչելի, որք պատմէին վասն նորա։

Եւ ես անպիտան Վրթանէս՝ տրուպս ի վարդապետաց և յետինս ի քարոզողաց, ականատես եղէ այսու ամենայնի և անմաքուր բազկաւ իմով գրկեցի և եդի ի տապանի. և ըստ կարի աղկացեալ մտաց իմոց գրեցի զպատմութիւնս զայս։

1. w զմարմինն փխ. զսուրբ մարմինն. 3. w մատեան բըդեշխն. | w զմարմին նոր նահատակին և առեալ. 5. w ովակիմայ և սբ աննայի և անտէն. 6. w նշխարհքն. 8. w ի նմանէ և ոչ հեռացաւ. 11. w ի տապանին. 12. w նշան մի. | d արեգականն. 13. d համարձակ. w կամարայձև. | w լուսա,փայլ ամբեղէն. 14. w իջեալք այ. հրեշտակք այ. | d հրեշտակ. 17. w ֆռանգ. 18. w սբբոյ. 19. w մս նահատակութե սբբոն փխ. և փառս ... աստուծոյ. 21. d վարդապետաց. 24. d տաղտկացեալ. 25. d չունի զայս.

Սոյն վկայաբանութիւնն ունին միայն ձ և w ձեռագրերը. առաջինը մարերի Ը. և մայիսի 15, այս վերնագրով. «Ցայսմ աւուր վկայ" Գարոն Լոյս Նոր Նահատակին։» Իսկ երկրորդը՝ w էջ 69 ա—84 ա, այս վերնագրով. «Մարերի Ը, մայիսի ժե։ Այսմաւուր վկայաբանութի. պրն. Լոյս Նոր Նահատակին։ Աւրհնեալ է ամենասբ. երրորդութի. հայր և որդի և ամ. սբ. հոգին»։

Ջամչեան, Գ. 516 այս վկայի մասին հետևեալ տեղեկութիւնը միայն ունի. «Իսկ ի թուին ՌԺԶ կամ ըստ այլոց ՋԺԶ նահատակեցաւ ի Կաֆա իշխան ոմն Գարուն Լոյս կոչեցեալ, յորոյ վերայ գրեաց ողբ ոտանաւոր Վրթանէս վարդապետ՝ որ ամփոփեացն զնա. վամն որոյ և ասէ իսկ. «Ես ձեռօքս զգուեցի, 'ւ ի գերեզմանն հանգուցի։» Նոյնպէս Սամուէլ Անեցի, Վաղարշապատ, 1893, էջ 175 գրում է. «ՋԺԶ. զԳարուն Լոյսն նահատակեցին։»

Երկուսի մէջ էլ սխալ է ՋԺԶ թուականը. պէտք է ընդունել ՌԺԶ. Նախ որովհետև այսպէս են դնում թէ՛ վերի արձակ վկայաբանութիւնը և թէ յաջորդ երեք տաղերը. երկրորդ որովհետև ՋԺԶ չի յարմարում էջ 406 գրուած ամսաթուին, այն է մայիս 15, Համբարձման տօնի յաջորդ հինգշաբթի օրը՝

Մայիս ամսոյ տասնուհընկին
Յետ Համբարձման՝ հինկշաբաթին.

քանի որ ՋԺԶ=1467 թուականի Համբարձման տօնի յաջորդ հինգշաբթին մայիս 16-ին է գալիս. իսկ միայն ՌԺԶ=1567 թուին է որ Համբարձման տօնի յաջորդ հինգշաբթին մայիսի 15-ին է համապատասխանում և երրորդ, որովհետև վկայաբանութեանս սկիզբը յիշուած ժամանակակից Սուլթան Սէլիմն է Սէլիմ Բ. որ գահակալեց 1566—1574. միւս Սէլիմները նստան՝ Սէլիմ Ա. 1512—1520 և Սէլիմ Գ. 1789—1808։ ՋԺԶ=1467 թուին Սէլիմ թագաւոր չկայ. այդ թուին սուլթանական գահի վրայ նստում էր Ֆաթիհ սուլթան Մէհէմմէդ Բ. (1451—1484)։

Վկայաբանութեանս հեղինակն է Վրթանէս վարդապետ, յետոյ եպիսկոպոս, Կաֆացի։

Նոյն նահատակ Լոյս Գարունի մասին են յաջորդ երեք տաղերը։

Digitized by Google

Աստուած, Հայր երկնաւոր, զքէն գոհանամ, տէր,
Որ դու զօրացուցեր ըզքո ծառայն, տէր,
ԶՊարոն Լոյս նահատակըն սիրեցեր, տէր,
Որ մարտիրոսացաւ առ քեզ եկեալ. տէր։
Բազում ազգ և ազինք ըզքեզ օրհնեն, տէր,
Յորժամ լըսեն զհանդէս քո ծառային, տէր,
Խընդան, ուրախանան, հոգւոց ցընծան, տէր,
ԶՊարոն Լոյս նահատակն յորժամ յիշեն. տէր։
Գովեն ազգ և ազինք ըզքեզ պատուեն, տէր,
ԸզՊարոն Լոյս վըկայն յորժամ յիշեն, տէր,
Զի տասն և ութ ամաց նա զօրացաւ, տէր,
Յաղթեաց սատանայի և վերացաւ. տէր։
Դուռըն կենաց Աստուած Յիսուս Քրիստոս, տէր,
Դու ընտրեցեր այսօր ըզքո ծառայն, տէր,
Անթառամ պըսակաւ զարդարեցեր, տէր,
ԶՊարոն Լոյս նոր վըկայն դու կոչեցեր. տէր։
Երանելի բնութիւն երրորդութիւն, տէր,
Երկին 'ւ երկիր ամէն դու արարեր, տէր,
Այսօր ըզքո ծառայն զօրացուցեր, տէր,
Սուրբ Պարոն Լոյս վըկայն դու սիրեցեր. տէր։
Զօրացաւ Պարոն Լոյսն ի յատենին, տէր,
Պատասխանի տանէր Հոգւով սըրբով, տէր,
Յորժամ հարցանէին ոչ երկընչէր, տէր,
Այլ դաւանէր զԱստուած Յիսուս Քրիստոս. տէր։
Էակից փառակից Հօր և Որդոյ, տէր,
Դու լոյս և ճըշմարիտ կենդանարար, տէր,
ԸզՊարոն Լոյս վըկայն մեծարեցեր, տէր,
Յերկիրէ յերկինս տարեր և պատուեցեր. տէր։

10,27. ε զպարոն լոյս. 15. ε զարդարոցեց. 18. ε արերեր. 28. ε տարէր.

Digitized by Google

Ընտրեցեր ըղձառայն և սիրեցեր, տէր,
Ընտիր և անուանի զնա արարեր, տէր,
Եւ ի յանօրինաց ազատեցեր, տէր,
Հրեշտակաց հաւասար զնա կացուցեր. տէր։

Թագաւոր երկնաւոր Յիսուս Քրիստոս, տէր,
Պարոն Լոյս Նոր վըկայ քեզ բարեխօս, տէր,
Ըզմեզ դու ազատեա յանօրինաց, տէր,
Բարեաց արժան արա և ողորմեա. տէր։

Ժամանակի բարւոյ պատահեցաք, տէր,
Ուրախութեամբ ձայնիւ ըզքեզ օրհնեմք, տէր,
Սուրբ Պարոն Լոյս վըկայն առ քեզ միջնորդ, տէր,
Ըզմեզ ազատեսցէ յամէն չարէ. տէր։

Ի քէնէ զօրացաւ հաստատեցաւ, տէր,
Անօրինաց յաղթեաց և քաջացաւ, տէր,
Սուրբ վըկայն Պարոն Լոյս պարծանք եղաւ. տէր.

. . . . . . . . .

Լուսաւորիչըն մեր երևեցաւ, տէր,
Պարոն Լուսին ասաց «Մի վախենար, տէր,
Քրիստոս քեզ օգնական և պահապան, տէր,
Այլ և ըզքեզ յիշէ Հայրն երկնաւոր. տէր։»

Խաչեալ Քրիստոս Աստուած, զքէն գոհանամք, տէր,
Որ Նոր ծաղիկ բուսաւ ի քո խաչէն, տէր,
Պայծառ և գեղեցիկ երևեցաւ, տէր,
Նոր վըկայն Պարոն Լոյս քեզ քաղցրացաւ. տէր։

Ծառայն քո պատուական գեղեցկացաւ, տէր,
Որպէս դառն անարատ ընծայեցաւ, տէր,
Զի զվարդագոյն արիւնըն յերկիր եհեղ,
Մարտիրոս կոչեցաւ և քեզ վըկայ. տէր։

Կամաւոր պատարագ քեզ մատուցաւ, տէր,
Նաման յօժարութեամբ ըզքեզ սիրեաց, տէր,
Կենդանարար ձայնիդ հետևեցաւ, տէր,
Կենացն յաւիտենից ժառանգ եղաւ. տէր։

14. չյանօրինաց. 16. այս տունը ձեռագրի մէջ այսպէս միայն երեք տող.

Հաւատաց քո բանիդ բոլոր սրտէ, տէր,
Հաստատեցաւ յուսով որպէս վըկայ, տէր,
Հայաստանեաց ազգի պարծանք եղաւ, տէր,
Համօրէն ընտրելոցըն դասեցաւ. տէր։

Ձայնիւ աւետաւոր զքեզ կոչեցեր, տէր,
Ձայնիդ հետեւեցաւ քո սուրբ ծառայն, տէր,
Ձըմեռնացեալ ժամոյս ծաղիկ բուսաւ, տէր,
Որպէս վարդ մանուշակ երեւեցաւ. տէր։

Ղամբարափայլ ջահիւք պայծառացաւ, տէր,
Ղեկօք ղծով աշխարհիս ցամաք անցաւ, տէր,
Ղեկավարիդ կենաց հետեւեցաւ, տէր,
Ղօղեալ ընդ այլ սըրբոց հետ վերացաւ. տէր։

Ճանապարհին կենաց հետեւեցաւ, տէր,
Ճըշմարիտ մարտիրոս գըլխատեցաւ, տէր,
Ճըշմարտութեան բանին սիրող եղեւ, տէր,
Ճըշմարտութեան կենաց արժանացաւ. տէր։

Մանուկըն Պարոն Լոյս դու ընտրեցեր, տէր,
Մանուկ քաջ և յաղթօղ դու արարեր, տէր,
Մանուկ տիօք այսօր զնա կոչեցեր, տէր,
Մանկանցն առագաստի զնա դասեցեր. տէր։

Յաւիտենից Աստուած, զքէն գոհանամք, տէր,
Յաւիտեանս յաւիտենից բարեաց պատճառ, տէր,
Յաւիտենիւ յառաջ զնա ընտրեցեր, տէր,
Յաւիտենից կենաց ժառանգ արարեր. տէր։

Նախանձելի սիրով բորբոքեցաւ, տէր,
Նախանձ բարի բուսաւ առ քո ծառայն, տէր,
Նըմանեցաւ սըրբոյն Ստեփանոսի, տէր,
Նըմանեալ Հաբէլի քեզ հաճեցաւ. տէր։

Շնորհօք թագաւորիդ նա զօրացաւ, տէր,
Շնորհօք Հոգւոյդ սըրբոյ պարգեւեցեր, տէր,
Շնորհօք պայծառագոյն գեղեցկացաւ, տէր,
Շնորհօք իմաստութեամբ պատասխանեաց. տէր։

28. = յաբէլի.

Digitized by Google

Ուրախութեամբ ձայնիւ երգաբանեմք, տէր,
Ուրախալի դիմօք զուարճանամք, տէր,
Ուրախութեամբ յիշեմք ըզքո ծառայն, տէր,
Ուրախացոյց այսօր զօրքն երկնային. տէր։

Զարչարանօք իւրովք քեզ հաճեցաւ, տէր,
Զարչարակից եղև, հաղորդեցաւ, տէր,
Զարաց անօրինաց յաղթահարեաց, տէր,
Զարեացըն համբերեաց, բարեաց հասաւ. տէր։

Պըսակակից եղև քո ընտրելոց, տէր,
Պըսակըն անթառամ դու շնորհեցեր, տէր,
Պարծանք քրիստոնէից զնա արարեր, տէր,
Պայծառ ահեղ փառօք զնա հանդուցեր. տէր։

Ջահազգեստիւք փառօք զարդարեցեր, տէր,
Ջահիւք և լապտերօք զնա պատուեցեր, տէր,
Ջըրէն անմահութեան զնա արբուցեր, տէր,
Ջանիւ իւրով մեծաւ ընդունեցեր. տէր։

Ռահ կենաց Քրիստոս, քեզ գոհութիւն, տէր,
Ռահիդ կենդանութեան հետևեցաւ, տէր,
Ռամկական մարդկան որոշեցեր, տէր,
Ռահին կենաց երկնից արժան արեր. տէր։

Սիրով փափագանօք քեզ ցանկացաւ, տէր,
Սիրով չարչարանաց նա համբերեաց, տէր,
Սիրով գըլխատեցաւ, կատարեցաւ, տէր,
Սերովբէին նըման պայծառացաւ. տէր։

Վըրդանէս վարդապետըն քո ծառայ, տէր,
Վասըն Պարոն Լուսին զայս բանըս երէ,
Ով որ յօժար սըրտիւ զայս եղանակէ,
Թող մէկ բերան մեզի Հայր մեղայ ասէ։

Տանըս հայաստանեայց մեծ աւետիս է,
Լուսաւորչին ցեղին շատ խընդութիւն է,
Որ Պարոն Լոյս վըկայն նահատակեր է,
Եւ ամենայն սըրբոց ընկեր եղեալ է։

24. ε սէրովբէին. | ε պայծառածօ.

Digitized by Google

Րամեալ որդւոց մարդկան ընտիր եղեր է,
Սուրբ Պարոն Լոյս վըկայն փառաւորեր է,
Վերայ գերեզմանին հանապազ լոյս է,
Հոգին երկնից խորանըն հանգուցեալ է։
Ցանկացան զօրք երկնից ընդ Պարոն Լուսին,
Ցանկալի օր մահուան սուրբ նահատակին,
Ցընծան և զուարճանան ընտրեալքըն առաջին,
Ցընծութեամբ եղանեն ի դիմաց նորին։
Իւծեալըք մաչեցան որդիք մարդկային,
Իւծեալըք ծուլացան, զքարին ատեցին,
ԸզՊարոն Լոյս մանուկն յորժամ որ տեսին,
Ուրախութեամբ մեծաւ փառաւորեցին։
Փառըք քեզ, Հայր, Որդի և Սուրբ Հոգի, տէր,
Փառք քեզ, երրեակ անձինք և մի բնութիւն, տէր,
Փառօք զարդարեցեր ըզքո ծառայն, տէր,
Փառաց պըտուղ տուեր ըզԼոյս Պարոն. տէր։
Քրիստոս Աստուած, փըրկիչ և ապաւէն, տէր,
Քեզ գոհութիւն և փառք յամէն լեզուէ, տէր,
Աղաչանօք սըրբոց մեզ ողորմեա, տէր,
Յաւիտենից կենաց արժան արա. տէր։
Վասըն անուանըդ քո չարչարեցաւ, տէր,
Վասըն սիրոյ քոյին գըլխատեցաւ, տէր,
Վանեաց ըզթըշնամին և զօրացաւ, տէր,
Վերացաւ յերկինս և ըզքեզ տեսաւ. տէր։
Անուն մարտիրոսին սուրբ Պարոն Լոյս է,
Անուն երգօղ բանիս տէր Վըրթանէս է,
ՅԱյրարատեան յերկրէն Կաֆա եկեր է,
Անմիտ աւուր բանիւ զայս ասացեր է։

Սոյն վկայաբանական տաղն ունի միայն Վիեննայի Հայոց մատենադարանի ε (=344) ձեռագիրը, էջ 220 բ—226 բ. Համմտ. Տաշեանի Ցուցակը, էջ 796 բ։ Տաղի օրինակը մեր խնդրանօք հաճեցաւ արտագրել և մեզ

II. ε զպարոն լոյս. 16. ε չունի ըզլոյս. 24. ε զերկինս.

ուղարկել Վիեննայի ձեռագրատան մատենադարանապետ Գեր. Հ. Բ. Պիլէզիկճեանը: Տաղի երգիչն է Վրթանէս եպիսկոպոս Կաֆացի՝ նախորդ արձակ վկայաբանութեան հեղինակը:

## Տաղ Պարոն Լոյս Ամատունին ասացեալ ի Վրդանէս վարդապետէ:

Հայաստանեաց հազար թըվին
Եւ տասնումեց աւելորդին՝
Քաջ նահատակ մի ընտրեցաւ
Աստուածաշէն Կաֆայ քաղքին։

Սուրբ Պարոն Լոյս անուն նորին,
Ծառաւիղէ Հայոց զարմին,
Դաւանութեամբ Լուսաւորչին
Եւ Քրիստոսի արեանըն գին։

Եւ իւր ծընողքն էին բարի,
Աստուածասէր և հոգելի,
Ամենեցուն յոյժ պիտանի,
Աստուածատուր անուն կոչի։

Ինքն էր ամաց տասն և ութից,
Երբ անօրէնքըն բըռնեցին,
Տարան առջև դատաւորին
Թէ «Տաճկացաւ սա եռանդին»։

1. l նահատատակին. | վերնագիրը m ձեռագրի մէջ այսպէս է՝ «Տաղ պարոն լուսին է յածաշէն կաֆայ քաղաք նահատակեայ». 3. m թվին. 6. m քաֆայ. 8. l շառաւիղայ. | l ազգին. 10. l արեան գընդին. 15. l ութի. 16. l անօրէնքն ըմբռնեցին. 18. m տաճկացեր. | l սայ.



Digitized by Google

Նա դատաւորն ընդնա հարցաւ
Թէ «Ի՞նչ կասես վասն այս բանիս,
«Դու տանճկացեր ես Կեղլովլին.
«Է՞ր չես հաւնիր մեր օրէնքին»։
Սուտ վըկաներն յառաջ եկին,
Կանգնան դիմաց դատաւորին
Թէ «Մենք վըկայ եմք այս բանին,
Որ հաւատաց մեր օրէնքին»։

Յորժամ հարցան Պարոն Լուսին,
Երանելի Նահատակին՝
Պայծառացաւ դէմքըն նորին՝
Որպէս սըրբոյն Ստեփաննոսին։

Արիաբար պատասխանեաց
Անօրինաց հրապարակին
Թէ «Ես ծառայ եմ Քրիստոսին՝
Դաւանութեամբ Լուսաւորչին»։

Նա անօրէնքըն կատաղեցան
Քան զշար գազան այլ աւելի.
Եւ զատամունս կըրճըտէին
Ի վերայ սուրբ անմեղ դառին։

Սուրբ Պարոն Լոյսըն զօրացաւ,
Պատասխանի տանէր նոցին,
Ոչ երկընչէր ի նոցանէ,
Վառեալ էր սէրն աստուածային։

Անթիւ Տաճիկ ժողովեցան,
Սուրբ Պարոն Լոյսն ի մէջ առին,
Ոմանք ըզգլուխըն ծեծէին,
Ոմանք զերեսըն կըռփէին։

1. l նայ. | m եհարց. 3. m տաճկացել. | l կիզլովին. 4. l յէր. | m հաւատին փխ. օրէնքին. 5. m վըկայներն. | m առաջ. 7. l բանիս. 12. l ստեփաննոսին. 14. m անօրինացն. 15. m ծառ փխ. ծառայ. | l քի. 17. l նայ. | m կատղեցան. 18. l քանց չար. 19. l կըճըտեցին. 21. l լուսըն. 26. l լուսն. 27. m զգլուխըն: | m ծէծէին. 28. l զերեսն. | m կռփէին. l թքանէին.

Digitized by Google

Հինկ յունվարի ծրագալուցին
Սուրբ Պարոն Լոյսըն բըռնեցին.
Մինչ ի մայիս տասն ու հընկին
Բանտ և զընտան զնա պահեցին։

Բազում անգամ զնա հարցուցին,
Պէս պէս պարգևք խոստանային.
Ո՛չ հաւանէր ամենևին,
Զ՛ի նմա բնակեալ էր Սուրբ Հոգին։

Շատ Տաճկըներ ժողովեցին,
Գնացին ի դուռըն Պարոնին,
Ասեն. «Պարտ է տաճկըցընես,
«Թէ սիրելի ես Մահմատին»։

Երբ Պարոն Լուսն յառաջ բերին՝
Դէմքն էր պայծառ զէտ արևին,
Նա աներկիւղ պատասխանեաց
Թէ «Ես ծառայ եմ Քրիստոսին»։

Շատ զանազան պարգևք տային,
Բընաւ չարժել ոչ կարացին,
Յետոյ տանջանք ըսպառնացան.
Եւ ոչ այնու զնա յաղթեցին։

Իշխանն ասաց Պարոն Լուսին.
«Ե՛կ հաւանիր մեր օրէնքին.
«Թէ չէ՝ կուտամ ըզքեզ դահճին,
«Որ կու մատնէ ըզքեզ սըրին»։

Սուրբ Պարոն Լուսըն զօրացաւ,
Զի բընակեալ էր Սուրբ Հոգին,

1. m ունվարի. | l ճրագալուծին. 2. l լուսն. | l ըմբըռնեցին. 3. m ժ ու ե ին. 4. lm բանդ. 8. l չունի նմա. 9. m ժողովեցան. 10. l գընացին. | m ի դուռն. | m պարոնին ասին. 12. m մեր դընտին փխ. մահմատին. 13. m յերբ. | m առաջ. 14. m դէմքըն փխ. դէմքն էր. 15. l Նայ. 17. m ասին փխ. տային. 18. m բնաւ. | l չկարացին փխ. ոչ կարացին. 20. l այնով այլ փխ. այնու զնա. 22. l հաւանիր. 23. m զքեզ. | m դահիճին. 24. m սրին. 25. m չունի սուրբ պարոն...սուրբ կըտակին, այն է տող 25-2.

Որպէս Փըրկիչըն մեր ասաց
Յառաջագոյն սուրբ Կըտակին։

Պարոնն ասաց Տաճկըներուն
Թէ «Հարբած էք ամենևին.
«Տարէ՛ք դըրէք բանտըն ներքին՝
«Մինչև ի վաղն առաւօտին»։

Պիղծ անօրէնք խորհուրդ արին՝
Ասեն. «Երթանք մօտ ի մուֆթին»։
Գնացին ասին դանըշմանին
Թէ «Ճարըն դու ես այս բանին»։

Պատասխանի ետ ամբոխին
Թէ «Իմ գըլուխն ի յայդ ճանփին.
«Թէ չի՛ դառնայ ի Քրիստոսէ,
«Ես ըսպանեմ ի հանդիսին։

«Մի՛ երկընչիք ամենևին,
«Գնացէ՛ք բերէք իմ առաջին,
«Ես հարցանեմ պատասխանին՝
«Մի՛թէ լինի որ հաւանի»։

Գնացին բերին առջև մուֆթին
Սուրբ Պարոն Լոյս զաւակ բարին։
Նա խընդութեամբ յառաջ երթայր.
Որպէս փեսայ յառագաստին։

Պատասխանի ետ չար մուֆթին
Երանելի Պարոն Լուսին,
Թէ «Ե՛կ դարձիր քո հաւատոյդ,
«Եւ հաւանիր մեր օրէնքին։

1. l փրկիչըն. 4. l է փխ. էք. 5. m դրէք. | m բանդըն. 7. m պեղծ. | m զատաւորն փխ. անօրէնք. 8. l ի մուֆտին. 9. l դանիշմընին. 11. m պատասխանին. 12. l գրլուխս. m գլուխն. | m ի այտ. 13. m նա. փխ. ի. 14. l սպանանեմ. 15. l երկնչիք. | m ամենեքին. 16. m գընացէք. 17. l պատասխանի. 19. m գընացին. | l մուֆտուն. 21. l նայ. | m խնդութբ. | m առաջ. 22. m փեսա. | m առագաստին. 23. l պիղծ անաւրէնք խորհուրդ արին փխ. պատասխանի ետ չար մուֆթին. 25. m հաւատոյս.

Digitized by Google

«Ըզքեզ պատուեմք զերդ մեր որդին,
«Ըզքեզ յիշեմք ի յուրբաթին.
«Թէ չհաւանիս դու մեր բանին՝
«Ըզքեզ կուտանք ի կեր սըրին»։
Յերբ Պարոն Լոյսըն զայս լըսեց՝
Ո՛չ վախեցաւ ամենևին,
Զ՚ի նմա բնակեալ էր Սուրբ Հոգին՝
Տաճար կազմեալ Երկնաւորին։

Արիաբար զբերանն իբաց,
Պատասխանեաց ի հանդիսին
Թէ «Ես ծառայ եմ Քրիստոսի,
«Զե՛մ հնազանդիր ձեր օրէնքին»։

Յայնժամ ապտակ էած մուֆթին
Ցերեսըն սուրբ Պարոն Լուսին.
Այլ առաւել պայծառացաւ
Ցերեսըն սուրբ նահատակին։

Ասին. «Ըզքեզ կրակով կայրեմք»։
Ասաց. «Ես տամ գինըն փայտին»։
Ասին. «Սըրով կըսպանանեմք»։
Ասաց. «Յօժար է իմ հոգին»։

Դարձեալ տարան տունըն Գընտին,
Ուր սոխտաներըն բնակէին՝
Բարձըր ձայնիւ բողըքէին,
Աղաղակաւ որոտային։

Բարի ծընօղքըն լըսեցին,
Թէ Պարոն Լոյսն ըմբըռնեցին՝

1. m Զզքեզ. | l զէտ փխ. զերդ. 2. m յիշեմ. | m ի ուրբաթին. 3. m չի հաւնիս. | m մեր օրէնքին փխ. դու մեր բանին. 4. m զքեզ. | m կուտամք. | m սրին. 5. l լուսըն. | m լսեց. 7. l նմայ. 8. m յերկնաւորին. 9. m պատասխանեաց փխ. զբերանն իբաց. 10. m զբերանն իբաց փխ. պատասխանեաց. 13. l մուֆտին. 14. m երեսըն. 17. l կայրենք. 18. m Թէ ես. 19. m կուըսպանեմք. 20. m աւժար. | l հոգիս. 21. l տուն. m տունն. | l կըտակին փխ. գընտին. 22. m սոխդաներն. | m բընակէին. 23. m բարձրայձայնիւ. l բարձր ձայնիւ. | l փողլոքէին. m բողոգէին. 24. m որոյտային.

Digitized by Google

Աղաղակաւ դուրս վազեցին,
Լալով գնացին ի այն տեղին։

Յանժամ ծընողքըն վարեցին,
Ըզքրիստոնեայքն հալածեցին.
Մեծ տըրտմութիւն եղև քաղքին,
Որ արտասուէ գետեր հանին։

Դարձեալ տարան բանտըն դըրին,
Մահու վըճիռ նըմա հատին,
Մինչ ի մայիս տասնուհընկին՝
Ապա սըրով գըլխատեցին։

Կատարեցաւ մեծ նահատակ,
Սուրբ Պարոն Լոյս արդար հոգին,
Մայիս ամսոյ տասնուհընկին,
Յետ համբարձման հինկշաբաթին։

Սուրբ Պարոն Լոյս, քեզ երանի
Եւ քո ծնողացն որ են մարմնի.
Դու Քրիստոսի վըկայ եղեր,
Պարծանք եղար Հայոց ազգին։

Քեզ երանի, Կաֆայ քաղաք,
Որ նոր նըշան քեզ երևի.
Քո քահանայքըն ժողովին,
Տօնեն ըզտօն Պարոն Լուսին։

Սուրբ Պարոն Լուս, դու դովելի,
Քրիստոնէից համազարմի,
Պարծանք եղար դու աշխարհի,
Եւս առաւել Կաֆայ քաղքին։

2. l ի յատենին փխ. ի այն տեղին. 3. m զծնողքըն. 4. m ըզքրիստոնեայքըն. | m հալածին. 5. m եղաւ. 6. m արտասուօք. 7. m բանտըն. 8. m վճիռ. | m նմա. 10. lm ապայ. | m գլխատեցին. 14. m ետ. 15. l լուս. 16. m չունի եւ. | m ծնողացդ. | m որք փխ. որ են. 17. m եղար. 20. m նորաչէն փխ. նոր նըշան. 22. m զտօն. 23. m ձեռագրի մէջ չկան այս (սուրբ պարոն լուս, դու գովելի) եւ յաջորդ ութը տները.

Սուրբ Պարոն Լուս, նոր մարտիրոս.
Եւ նոր վըկայ դու Քրիստոսի.
Երկինք երկիր ուրախացան,
Ըզքեզ գովեն ամենեքեան։

Գունդք հրեշտակաց ուրախացան,
Ըզքեզ յիշեն ամենեքեան,
Երկնից երկիր իջանէին,
Ըզքեզ տանին յեկեղեցին։

Ուրախանայ Հայրըն վերին,
Որ վասն արեանն ի հանդիսին.
Դասք հրեշտակացըն ժողովին՝
Ըզքեզ պատուեն ի մէջ նոցին։

Դասըք Սըրբոցըն ժողովին,
Ուրախանան ի միասին,
Կանդնին դիմաց Պարոն Լուսին,
Տարին փառօք յերկրէ յերկին։

Այսօր ցընծան զօրք երկնային,
Այսօր խընդան դասք մարդկային,
Օրհնեն զԱստուած զՀայրն երկնային՝
Վասըն սըրբոյ նոր վըկային։

Այս մըթացեալ ժամանակիս
Դու լոյս եղար մէջ աշխարհի
Եւ սառնացեալ ձմերայնի՝
Վարդ և շուշան մէջ պարտիզին։

Քեզ աղաչեմք ամենեքեան,
Ո՛վ նոր վըկայ, պայծառ այդի,
Սուրբ Յովաննու նըմանեցար,
Գըլխատեցար նըման նըմին։

Դու նմանեցար սուրբ վըկային
Նախայվը . . . .

30. 1 Հասցնում է մինչև Նախայվը բառը. այնուհետև թերթ է պակաս.

. . . . . .

. . . . . .

Մի մոռանար երգող բանիս՝
Ըզվարդանէս անպէտ հոգին,
Ըզվարդապետն Հայոց ազգին,
Եպիսկոպոսըն Կաֆային։

Քրիստոս Աստուած, քեզ գոհութիւն,
Որ դու տվեր համբերութիւն.
Արդ ողորմեա զսա երգօղին,
Այլ և գրողին, ընթերցողին։

Քրիստոս Աստուած, Տէր յերկնային,
Դու ընտրեցեր զքո սիրելին.
Արդ ողորմեա ամենեցուն՝
Աղաչանօք քո ծառային։

Ով զՊարոն Լոյս վըկայն յիշէ
Եւ կամ նըվէր տացէ նորին՝
Քրիստոս յիշէ զինքըն բարին,
Եւ իւր ամէն բանն աջողի։

Այս վկայաբանական տաղն ունին l և m ձեռագիրները, l էջ 91 ա—93 բ, m էջ 109 ա—115 բ. Երկուսն էլ միջից կամ վերջից պակաս։ Տաղի հեղինակն է նախորդ երկու գրութիւնների՝ արձակ վկայաբանութեան և վկայաբանական տաղի հեղինակը՝ Վրթանէս եպիսկոպոս Կաֆացի։

3. m վերսկսում է մի մոռանար տնից. 10. m գըրողին. | m ընթերձողին. 18. m ձեռագրի յաջորդ թերթը պատռված է, բայց այնպես է թվում թե տողը այստեղ էլ վերջանում է:

Digitized by Google

Տաղ ի վերայ Պարոն Լոյս նահատակին Կաֆայեցւոյ ի Թովմայ գրոց աշակերտէ ոգեալ՝ խիստ ազնիւ եւ պիտանի:

Օրհնեալ Հայր երկնաւոր, Աստուած անքննելին,
Էակից փառակից միածին Որդին,
Որ ետ կարողութիւն քաջ նահատակին՝
Պարոն Լոյս վկային՝ սուրբ մարտիրոսին։

Հայրն երկնաւոր ծագեաց ի սիրտըն նորին,
Որ քաջացաւ դիմացըն բռնաւորին՝
Յաղթեաց անօրինաց և սատանային՝
Սուրբ վկայն Պարոն Լոյս՝ ծառայն Քրիստոսին։

Որպէս գարնան ծաղիկն որ երևեցին՝
Պարոն Լոյս սուրբ վկայն ի մէջ Քաֆային։
Օրհնեմք ըզքեզ, Աստուած, ի խորոց սրտի,
Որ Դու զօրացուցիր զծառայն քո բարի։

Գովեմք ըզքեզ. վկայ Տեառնըն Յիսուսի,
Պարոն Լոյս նահատակըդ քաջ և արի.
Նըման ես դու հաւու քաղցրաձայն ձագի,
Որ միշտ դու բարբառիս ի սէրն Յիսուսի։

Քեզ գոհութիւն տամ ես, Աստուած ամենի,
Փառաւորեմք ըզքեզ միածին Որդի,
Որ ընկալար զվըկայս ի ժամանակի՝
Պարոն Լոյս նահատակըդ քաջ և արի։

Զարիւն քո գեղեցիկ հեղեր ի յերկրի,
Արեամբ ներկեալ եղար ի սէրն անմահի,

22: k անմահին.

Դու միշտ փառաւորիս աջոյն հայրենի,
Սուրբ Գարոն Լոյս վըկայ՝ անուանըդ բարի։

Զըմեռն էր ժամանակն՝ երբ ըմբըռնեցին,
Տարան զնա հարցուցին չար դատաւորին։
Նա աներկիւղ երետ ըղպատասխանին,
Դաւանեցաւ զՔրիստոս միածին Որդին։

Գարոն Լոյս նահատակըդ զարմանալին,
Որ նահատակեցար ի մէջ Կաֆային,
Ցընծայ Հայրըն վերին և ուրախ լինին,
Որ քաղցրացար դիմացըն բըռնաւորին։

Գեռաբուսիկ ծաղիկ և քաղցր աղաւնի,
Գարոն Լոյս մարտիրոսըդ քաջ և արի,
Որ դու զարմացուցիր զազգ քրիստոնէի
Եւ մարտիրոսացար ի մէջ Կաֆայի։

Դու վառեցար հոգով ի սէրն անմահի,
Զարչարեցար 'ւ եղար վըկայ Քրիստոսի,
Մանուկ սուրբ Գարոն Լոյս՝ պարծանք աշխարհի,
Եւ վարդագոյն արիւնդ քո հեղաւ յերկրի։

Որպէս ըղդառն անմեղ ըղքեղ զենեցին,
Եւ դուն ուրախ էիր ի զենման քոյին։
Ցընծան այսօր հրեշտակք և ուրախ լինին,
Օրհնեն ըղԱրարիչն Աստուածն անքըննին։

Գունդք հրեշտակացն այսօր ըղքեղ գովէին,
Եւ պար առեալ ըղքեղ եղանակէին.
Գարոն Լոյս սուրբ վըկայ, բարբառ քաղցրադին,
Ուրախ էին 'ւ օժար կատարման քոյին։

Ցընծան սուրբ մարտիրոսքըն և ուրախ լինին,
Հըրճուին սուրբ մարգարէքըն և պայծառացին,
Որ խառնեցար կամաւ ի յերամ նոցին,
Մարտիրոս կոչեցար ի մէջ Կաֆային։

22. k ըզԱրարիչն.

Մանուկ քաղցրատեսակ և զարմանալի,
Դու մարտիրոս կոչիս ազգիս Հայ զարմի,
Արթուն անուն բարի սրբոյն Գրիգորի,
Որ եկեալ երազիդ և էր ընդ քեզի։

Ասաց. «Մի՛ վախենար, իմ քաջ սիրելի,
«Եկի ես որ օգնեմ մարտ պատերազմի,
«Եւ մարտիրոս լինիս ազգիս իմ բարի,
«Եւ Լոյս դու անուանիս ի մէջ Կաֆայի»։

Փառք քեզ, Քրիստոս Աստուած, Տէ՛ր ամենայնի,
Որ ի ձմեռնացեալ ցուրտ ժամանակի
Բուսուցեր հոտ անուշ՝ վարդըս պատուելի,
Եւ դու հոտոտեցար ի հոտ անուշի։

Իակից միածին Որդին քաղցրացաւ,
Եւ ի սուրբ Գարոն Լոյսըն իւր դըլթացաւ,
Որետ կարողութիւն և նա զօրացաւ,
Ցաղթեաց ըզթըշնամին և պայծառացաւ։

Ի թուականիս Հայոց ի հազար ամի
Եւ տասնեւվեցն եղեալ ի յաւելորդին՝
Գըլխատեցար մայիսի տասն և հընգին,
Տարան զքեզ հանդուցին ի սուրբ Աննային։

Վըրդանէս վարդապետ և անուն բարի,
Թող դու պայծառ կենաս ի մէջ աշխարհի,
Որ ես առի հրաման և գտաղս ասացի,
Թումայ խիստ մեղաւոր ի յայսմ աշխարհի։

Արդ աղաչեմ ըզքեզ, սուրբ վըկայ բարի,
Որ բարեխօս լինիս զայս բանս ասօղի՝
Մեղապարտ Թումայի և անպիտանի,
Եւ բարեխօս լինիս համայն աշխարհի։

17. k ի Թվականիս. 27. k մեղայպարտ.

*Այս վկայաբանական տաղն ունի միայն* k *ձեռագիրը, էջ* 87 *բ*—88 *բ։ Տաղի հեղինակը՝ ինչպէս վերնագիրն ու վերջին երկու տները ցոյց են տալիս՝ Նախորդ Վրթանէս եպիսկոպոսի աշակերտը Թումայ Կաֆացին է։*

Digitized by Google

## 69.

### ՄԱՐԳԱՐԷԻ ՍԱՐԿԱՒԱԳ ԵՒ ՅԱՀՐՄԱՆ ԹՈՒՐԿԱՒՐԱՆՑԻ

† ՌԻԹ = 1580 սեպտ. 6

Օրհնեալ մարդասիրութիւնն Աստուծոյ, որ յամենայն ժամանակս ոչ առնու անտես զհաւատացեալ հօտս իւր, բաշխելով զշնորհս Հոգւոյն սրբոյ։ Եւ հայրական գթով խնամէ զարարածս իւր՝ և ոչ նախատէ, այլ ձրի տայ խնդրողացն, և բուսուցանէ զանազան ծաղիկս անուշահոտս։ Ոչ թէ ի ժամանակս գարնանայինս, այլ ի սառնասառոյց և ի սպառել ամենայն պտղաբերութեան ժամանակացս, որ այժմ տեսանիւր, որ երևեցան ի ժամանակս յետինս՝ այս երկու բանաւոր և անուշահոտ ծաղկունքս, ի վերջի սառնացեալ և ձմեռնային եղանակիս, որ բարձրացան նահատակութեամբն իւրեանց, և անուշահոտ առաքինութեամբն ուրախացուցին զհրեշտակս ի յերկինս, և եղեն ախորժ կամացն Աստուծոյ, և են պարծանք քրիստոնէից։

Ի Թուականիս Հայոց ՌԻԹ, ի սեպտեմբեր ամսոյ ի Զ, ի թագաւորութեանն Տաճկաց խոնթքար փատշահին՝ որ Սուլթան Մուրատ ասի՝ որ նստէր ի Բիւզանդիայ, որ է Կոստանդնուպօլիս, զոր Ըստմպօլ ասեն։ Որ և յայսմ ամի բազում զօրս առաքեաց ի Պարսկաստան. և գնացեալ պաշարեցին զերկիրն ամենայն՝ զքաղաք և զգաւառ.

7. ւ այժըմ. 14. ւ ի Թվկնիս.

էառ և զմեծ քաղաքն Տփխիս. և հասեալ ի Տրուանատունն և աւերեցին զբազում երկիր՝ և զամենեսեանսն ի սուր սուսերի մաշեցին. և ի քրիստոնէից բազում և անթիւ գերի վարեցին. առին և զՓայտակարան քաղաքն և զՂարս քաղաք՝ որ ի վաղուց ժամանակաց աւերակ էր շինեցին. առին զԽոյ և զՍալամաստ իւր երկրովն. զոմանս սրոյ ճարակ տուին, և զբազումս դերեցին, զայր և զկին, զմեծ և զփոքր, զաղջկունս և զանմեղ տղայս ի քրիստոնէից. և այլ բազում ոճիրս գործեցին, զոր ոչ կարէ ոք ընդ գրով արկանել կամ լեզուով ճառել զդառնութիւն և զնեղութիւն ժամանակիս։ Եւ ոչ թէ մի ամ գործեցաւ ոճիրս այս, այլ Գ-Դ տարի այսպէս վրդովումն եղև աշխարհիս։

Եւ ի վերայ այսր ամենայնի՝ յաւել Թագաւորն խոնթքար և խստացոյց զսիրտ իւր թէ մի քրիստոնէիցն, որ ընդ ձեռամբ իւրով էր, և եհան հրաման սաստիկ յայսմ ամի ի ձմեռնային եղանակին, և բարձին ի գլխոց քրիստոնէից զխոյր որ է փակեղ. և եդին ի գլուխ քրիստոնէից սեաւ գտակ զոր զգենուն ազգն Լատին. և այլ ազգի ազգի փորձութիւնս և չարիս զոր ոչ պատմի. զի մեղք մեր բազմացան. եւ հրաման Թագաւորին սաստկացաւ ըստ մարգարէին որ ասէ թէ «Այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց». ոչ թէ մէկ քաղաքի կամ մէկ գաւառի եղև հրամանս այս, այլ ի Բիւզանդիոյ մինչև ի Տիգրանակերտ՝ լայնանիստ երկրով և գաւառով, զգեցան ամենայն քրիստոնեայքն ի սուգ Թագաւորութեան նորա։ Եւ այս՝ ոչ ի կամաց Թագաւորաց լինի, այլ ի կամացն Աստուծոյ՝ և ի մեղաց մերոց. և աստ կրկին կատարեցաւ մարգարէութիւն Եսայեայ թէ «Գլխոց ձերոց կնդութիւն վասն հպարտութեան և գոռոզութեան մերոյ և ցոփագնացութեանն»։ Մի՛ թէ այց առնէ Տէր Աստուած վասն ծառայից իւրոց. և որ տառապեցոյց՝ նոյն և ինքն ողոր-

1. i տպխիս. 7. i տրուին. 10. i կդառն. 16. i հըրաման. 23. i կամ ա. 30. i հըպարտութ.

մեացի և ազատեացէ զբանաւոր հօտս իւր ի գէլ գազանացեալ թագաւորացն Նետողաց ազգին և բառնայ զթագաւորութիւն նոցա ի մէնջ. ամէն։

Չի այս միջոց երկիրս ամենայն հեծելակոխ եղեալ և աւերեալ և պակասեալ բերդք երկրին ի սմբակաց՝ որ եղև սղութիւն հացին և ամենայն պտղոց՝ ոչ սակաւ. բայց երկիրն Օսխոյ լի էր հացիւ՝ ի ձեռս Աստուածային ողորմութեանցն. այս լիութիւնս եղև պատճառ նահատակութեանց սոցա։ Զոր ասացից կարճ ի կարճոյ տկար մտօք իմով՝ զպատմութիւն քաջ և արի նահատակացն և Մարգարայ սարկաւագին և զՃահրիմանին։

Այս պատուելի վկայքս էին յՈսխս երկրէն՝ բուն ազգաւ քրիստոնեայք, օրինօք սուրբ Լուսաւորչին. և է Ոսխ երկիրն ի Միջագետս Ասորւոց, ի մէջ Տիգրանակերտոյ և Մերդնայ և Եդեսիոյ, ի հռչակաւոր դեղջէն Թուրգուրանայ։ Ի սոցա երկիրն կայր անիրաւ դատաւոր մի, Մահմետ անուն. տեսեալ զքեր երկրին Թուրգուրանայ՝ զի բազում և անպակաս էր եկեալ ցորեան նոցա. և մախայր ընդ միտս իւր ագահութեամբ, թէ որպէս յափշտակեսցէ ի նոցանէ անիրաւ հասս կամ պահեկանս՝ աւելի քան զհրամայեալն։ Կոչեաց զտանուտեարսն գեղջին և էառ հնարիւք ի նոցանէ դահեկանս ի փոխ՝ և յետոյ յայտնի արար զագահութիւնն իւր ասելով՝ թէ «Այսչափ ցորեան է տուեալ ձեզ Աստուած. պարտ է ձեզ ինձ բաժին տալ։»

Ասեն տանուտեարքն միաբան՝ թէ «Զինչ որ գրեալ կայ քեզ ի կայսերէն, զայն պահանջիր ի մեզանէ՝ աւելեօք դեռ ևս առ. և պակաս մի առնուր։»

Յորժամ լուաւ դատաւորն զայն՝ բարկացաւ յոյժ. և սկսաւ հայհոյել և անիրաւութեամբ առնել ի գիւղն. և օր քան զօր աւելի նենգէր տանուտերացն և գեղջն առ հասարակ։ Տեսեալ զանիրաւութիւն դատաւորին՝ և

5. i ի սըմպակաց. 7. i օսխո. 12. i վըկայքս. 15. i ի յըռչակաւոր. 19. i յափըշտակեսցէ. 26. i գըրեալ.

առաքեցին առ զօրագլուխն ի Կարս քաղաք, զի բազում զօրօք եկեալ էր ի կայսերէն և հասեալ ի Թէոդուպօլիս, զի երթիցէ ի պատերազմ։ Եւ բերին հուքմն և հրաման առ դատաւորն, թէ «Զինչ հրամայեալ է քեզ կայսրն՝ զայն առ. այլ աւելի մի առնուր ի դոցանէ»։

Իբրև զայն հրամանն տեսաւ որ բերեալ էին քրիստոնեայքն, այլագունեցաւ երեսն նորա, և դարան գործեաց ի սրտի իւրում. և ել գնաց ի Տիգրանակերտն ի Ցամիթ՝ առ Ցամթայ դատաւորն, զի նա մեծ էր քան զինքն։ Եւ իմացեալ քրիստոնէիցն՝ գնացին զկնի նորա, զի մի նենգութեամբ դարան գործեսցէ նոցա։ Եւ յորժամ ետես դատաւորն զնոսա որ եկեալ էին, ետ ըմբռնել զնոսա, և դնել կապանօք ի բանտի։ Եւ եդիտ իւրն համախոհք ի քաղաքին. և մտին առ մեծ դատին Ցամթայ. և ի ծածուկ խորհուրդ արարին քրիստոնէիցն՝ զի զոմանս ի նոցանէ հրով այրեսցեն։

Եւ բերին երկու ոչինչ գռեհիկ Թուրք՝ որք ետուն սուտ վկայութիւն, թէ «Սոքա զմեր մեծն և զճշմարտութեանն հայհոյեցին»։ Փառք Աստուծոյ ներողութեանն՝ որ այնչափ համբերող է Աստուած, որ ոչ էած հրացան անձրև և սատակեաց զնոսա, որ ետուն սուտ վկայութիւն։ Եւ դատաւորն գրեաց զայն, և առաքեաց առ տանուտէր փաշային, զի այրեսցէ զնոսա. զի այն ժամանակն որ գործեցաւ, փաշայն որ տիրէր Ցամթայ՝ ոչ էր ի քաղաքն, այլ գնացեալ էր ի պատերազմ։ Եւ իշխէր քաղաքին Մուստաֆայ տանուտէրն իւր։

Եւ յորժամ այրելոյ հրաման երեւ դատաւորն՝ յայնժամ դուքսն և մեծամեծք քաղաքին ուրախացան, զի այրելոյ հրաման եղև։ Եւ յորժամ երեկոյացաւ օրն այն՝ յայնժամ եմուտ բանտապանն ի բանդն՝ և սաստկագին ձայնիւ գոչեաց՝ թէ «Մարգարէն և Ճահրմանն որ է ի միջի ձերում» զի տանուտրայքն տասն էին ըմբռնեալք ի Թուր-

10. i զինքըն. 16. i այրեսցին. 25. i ի պատերազմըն. 29. i երեկոյացաւ.

Digitized by Google

դուրանայ, և կապեալք ի մետաղս. վասն որոյ բաժանեաց զերկուսն ի նոցանէ՝ զՄարգարէն և զՇահրիմանն. և սկսաւ կողոպտել զնոսա. էառ զմատանիսն ի ձեռացն. և եհար ապտակ յերեսս նոցա. և էարկ զձեռն ի ծոցս նոցա և էառ զդահեկանս զոր եգիտ ի ծոցս նոցա։ Եւ ահացուցանելով զնոսա՝ ասէր. «Եթէ ուրանայք զՔրիստոս Աստուածն ձեր զոր հաւատայք, և դառնայք ի կրօնս Մահմետի՝ զերծանիք ի տանջանացս։ Եւ թէ ոչ հաւանիք՝ չարաչար մահուամբ մեռանիք հրով»։

Եւ յորժամ լուեալ զայս ամենայն ի բանդապետէն՝ զարհուրեցան և ահ կալաւ զնոսա։ Եւ նոյնժամայն զօրացեալ Մարգարէայ սարկաւագն զօրութեամբն Քրիստոսի, և ասաց ընկերացն. «Մի երկնչիք, եղբարք, զի ես և Շահրիմանն միայն վկայելոց եմք, և դուք զերծանիք։ Այլ աղօթս արարէք վասն մեր։»

Եւ ինքն սկսաւ սաղմոսել և վճարեաց զԾ եւ Ծ սաղմոսն. և աղօթեցին երկոքեանն մինչև ցառաւօտն. և յառաւօտունն զարթուցին զընկերս իւրեանց և ասացին. «Արիք, եղբարք և սիրելիք, յաղօթս կացէք, զի այլ ոչ տեսանեմք մարմնաւոր աչօք զմիմեանս։» Եւ սկսան աղօթել՝ մինչ որ լուսացաւ. և սակաւիկ մի նստեալ զմիմեանս մխիթարէին։

Ցանկարծակի հարին զդուռն բանդին՝ արեանարբուչար զինուորքն, և մտեալ ի բանդն՝ կապեցին զսուրբ վկայքն՝ զՄարգարէայ սարկաւագն և զՇահրիմանն։ Եւ արկին չղթայս ի պարանոցս նոցա. և բրօք և սուսերօք առեալ տանէին զնոսա։ Եւ շրջապատեալ էին զնոսա արեանարբուչար ազգն Մահմետականքն, հազարք և բիւրք, որպէս Հրէից ազգն զՔրիստոս։ Եւ ասէ թէ «Ուրացիք զՔրիստոս Աստուած, և դարձարուք ի յօրէնքն մեր, և ազատիք ի տանջանացս։»

Իսկ նոքա վառեալ էին ի սէրն աստուածային, զահն

21. i նըստեալ. 24. i մըտեալ. 25. i վկայքըն. 26. i չըղթայս. 28. i մահմետականքըն. 29. i ըզքս.

*և զերկիւղն և զսպառնալիք զինուորայն և զմեծամեծացն յոչինչ համարէին. և դիմէին ի յայրումն հրոյ՝ որպէս թէ ոք երթիցէ ի հարսանիս. և տանէին սակաւիկ մի ի ճանապարհ և դադարեցուցանէին զնոսա, և դարձեալ խոստանային պարգևս և մեծութիւնս. զի հաւանեսցին օրինաց նոցա, և փրկեսցին ի տանջանաց։ Եւ նոքա՝ լի էին Հոգւովն սրբով. ոչ պարգևացն հաւանեցան, և ոչ մեծութիւնն յանձն առին. զամենայն ինչ որ յաշխարհի կայր՝ ոչինչ համարեցան, և ասէին թէ՝ «Մեր յոյսն Քրիստոս Աստուած է՝ որ տայ մեզ զպարգևս և զմեծութիւնն յաւիտենական՝ որ ոչ սպառի։ Եւ Քրիստոս Աստուածն մեր զոր մեք հաւատամք՝ ընդ ուրացողսն ասէ. «Երթայք յինէն, անիծեալք, ի հուրն յաւիտենից». և մեք որ հաւատացեալ եմք և հաւատամք զՅիսուս Քրիստոս Աստուած և երկիր պագանեմք, և ակն ունիմք միւսանգամ գալստեան նորա, որ դատելոց է զկենդանիս և զմեռեալս, և թէ զմարմինս մեր այրէք հրով, յայնժամ պայծառացուսցէ զհոգիս և զմարմինս մեր Քրիստոս Աստուած և վերացուսցէ յերկնային խորանսն լուսոյ։»*

*Իբրև զայս լուան Մահմետականքն՝ բարկացան և հարին զնոսա ուժգին, և տարան առ ի յայրել։ Իսկ սուրբ վկայքն երթային զհետ նոցա պայծառ երեսօք, և հայէին յաջ և յահեակ, և զոր տեսեալ ի քրիստոնէիցն՝ ասէին. «Աղօթս արարէք վասն մեր»։ Եւ տարան զնոսա արտաքոյ քաղաքին. և բևեռեցին ի փայտի զոտս և զձեռս նոցա՝ նման Քրիստոսի և աջակողմեան աւազակին։ Եւ հայեցեալ միոյն ի նահատակացն՝ ետես զսուտ վկայսն՝ որք վկայեցին նոցա, և ասէ ցնոսա. «Զինչ շահ եղև ձեզ՝ որ սուտ վկայեցիք վասն մեր։ Ահաւասիկ ժամ է մեզ պսակ առնելոյ. և ձեզ մնաց խաւարն աղջամղջին՝ ընդ Յուդայի՝ ձեզ և դատաւորին ձերոյ և այլ համախոհաց ձերոց։»*

*Եւ նոքա յամօթի հարեալ կարկեցան նման Յուդայի։ Եւ բորբոքեցին զհուրն նաւթով։*

8. ի յանձրն. 19. ի խորանսըն. 30. ի ողջամըղջին.

Digitized by Google

Յայնժամ Շահրմանն մռնչեաց ի մէջ հրոյն, և լուաւ ձայն նորա Մարգարէն ընկեր իւր. և նոյնժամայն թռեաւ ի վեր և կծկեցաւ ի գլուխ փայտին և ասաց. «Մի՛ երկնչիր, եղբայր Շահրման. սակաւիկ մի համբերեա՛ զի ժամ է յաղթութեան։»

Եւ շրջապատեալ այլազգիքն և ստէպ ստէպ արկանէին փայտ ի հուրն. և նոքա հայեցեալ յերկինս, և գոհութեամբ աւանդեցին զհոգիս իւրեանց առ Աստուած. և զմարմինս նոցա այրեցին մինչև ցերեկոյն։ Եւ իբրև երեկոյ եղև՝ երթեալ քրիստոնէիցն գաղտ պահէին զնոսա՝ զի ակն ունէին հրաշս տեսանելոյ։

Եւ իբրև անց մէջգիշերն՝ յանկարծակի տեսին լոյս պայծառ իջեալ յերկնից ի վերայ սուրբ նահատակացն. և որք տեսին՝ փառս ետուն Աստուծոյ։ Եւ ընդ առաւօտն ժողովեցին զմնացեալ նշխարս նոցա որ ոչ էր այրեցեալ, և տարեալ ծածկաբար եդին պատուով ի տապանի սաղմոսիւք և օրհնութեամբ և երգօք հոգևորօք։ Եւ իբրև էանց Գ. օր՝ դարձեալ յառաւօտու պահուն եկեալ ճանապարհորդք անցանէին ընդ այն. և տեսին լոյս պայծառ ծագեալ կրկին ի տեղին ուր նահատակեալ էին սուրբքն. և ընդ լուսանալ առաւօտուն եկեալ ի քաղաքն և պատմեցին մեզ. և մեր լուեալ փառաւորեցաք զԱստուած։

Եւ ես Սիմէօն զոր տեսի և լուայ՝ արարի զպատմութիւն սուրբ նահատակացն Քրիստոսի՝ զՄարգարայ սարկաւագին և զՇահրմանին՝ որ նոյն ինքն Քրիստոս տայ շնորհս ծառայից իւրոց. և կայ նշխարք սուրբ նահատակացն եդեալ ընդ ննջեցեալսն և առնեն բժշկութիւն ամենայն ցաւոց ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

Սոյն ընդարձակ վկայաբանութիւնը մեր յատուկ խնդրանքով արտագրուած է Կարին գտնուած մի Յայսմաւուրքից, և մեզ է ուղարկուած՝ նոյն քաղաքի Սա-

3. i ի գլուխ. | i մի՛ երկընչիր. 6. i այլազգիքըն. 8. i ըզմարմինս. 15. i եժողովեցին.

Նաւասարդեան վարժարանի Հայերէն լեզուի ուսուցիչ Մեծ. պր. Աստուածատուր Խաչատրեանի շնորհիւ։

Վկայաբանութեան վերնագիրն է. «Ի սմին աւուր վկայաբանութի. նոր վկայիցն քլ. մարգարէ տարկաւագին և շահըրմանին, որք կատարեցան հրով ի տիգրանակերտն ի յամիթ»։

Նահատակներիս մասին Չամչեան Գ. 516 տալիս է միայն հետևեալ տեղեկութիւնը. «Ի թուին ՌԻԹ կատարեցան հրով ի յԱմիդ Մարգար և Շահրիման»։

Նկատելի է վկաների հայրենիքը՝ որ երեք տեղ երեք տարբեր ձևով յիշուած է. այն է Օսխոյ, Ծօխօ և Ոսիտ, էջ 415, որի մէջ է Թուրգուրան գիւղը և որ գտնուում է Եղեսիոյ, Տիգրանակերտի և Մերդինի մէջտեղ. չկարողացանք դժբախտաբար մեր ձեռքում եղած միջոցներով ստուգել դորա ուղիղ ձևը. Kiepert-ի և Weiland-ի հրատարակած մեծ Ատլասը (Thübingen, 1873) այդ սահմանի մէջ այդպիսի մի տեղ չէ նշանակած։

Վկայաբանութեան հեղինակն է Սիմէոն, Թերևս Տիգրանակերտցի, տես էջ 419, տող 23։

Digitized by Google

# 70.

## ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԴԱՐԱՆԱՂԵԱՑ

† ՌԽԱ=1591—2

*Սոյն նահատակ եպիսկոպոսի մասին ունինք միայն Զամչեանի (Գ. 516) հետեւեալ յիշատակութիւնը.*

Ի *թուին ՌԽԱ նահատակեցաւ ի Կարին Յովհաննէս եպիսկոպոս Դարանաղեաց՝ որ նստէր առաջնորդութեամբ ի քաղաքի անդ Կարնոյ։*

Digitized by Google

# 71.

## ԱԲՐԱՀԱՄ ՔԱՀԱՆԱՅ ԵՒ ՍՔԱՆՏԱՐ ՈՒՌՀԱՅԵՑԻ

† Ռ.ԽԹ=1600 յունվար 22 դշ.

Սոյն նահատակների մասին Սամուէլ Անեցի, Վաղարշապատ, 1893, էջ 176, ՌԽԹ թուականի տակ տալիս է հետևեալ տեղեկութիւնը.

Ղարայեազիճէն գլխատեաց յՈւռհայ զմի քահանայ Աբրահամ անուն, և զոմն տանուտէր Սքանտար անուամբ, յունվարի ԻԲ, յաւուր երեքշաբթու։

Digitized by Google

# 72.

## ԱՆԴՐԷԱՍ ՔԱՀԱՆԱՅ

† ՌԿԶ Տրէ Ժ = 1617 Յոյ. 18

Եւ եղև զի մեծ և առաջին Շահաբաս Թագաւորն Պարսից ունկնդիր լեալ զրպարտողաց արանց՝ որք խօսեցան բանս չարս վասն բնակչացն Նախչուան քաղաքին, որ և բարկութեամբ մեծաւ ցասեաւ ի վերայ նոցա շահն և հրամայեաց հանել զամենայն բնակիչս քաղաքին, և արտաքսահման արարեալ վարել և տանել ի քաղաքն Ցահրապատ․ և զքաղաքն Նախչուան աւերել, զտունսն և զամենայն շինուածսն քանդել, և զայգեստանսն կոտորել․ որ անխափան կատարեցաւ առ նոսա հրաման Թագաւորին․ զի զամենայն բնակիչսն հանեալ վարեցին ի Ցահրապատ։ Իսկ ի բնակչացն Նախչուանայ արք աննշանք և սնլիքօրք փախուցեալք ի շրջակայ գեղօրայսն՝ Թաքեան աստ և անդ, յորոց մի էր և ծնօղքն տէր Անդրէասին, որք գնացեալ ի գիւղն Ագուլիս, և անդէն զետեղեցան, և մինչ էր ի տիս մանկութեան տէր Անդրէասն՝ ետուն զնա յուսումն դպրոց, և ուսաւ զամենայն եկեղեցական ուսմունս։ Իբրև զարգացաւ՝ և եհաս ի չափ հասակի, մուծին զնա ի կարգ աշխարհի և արարին նմա հարսանիս։ Եւ որպէս գրեալ է թէ ըստ վկայութեան անձին իւրոյ, և ամենայն ժողովրդեանն, օրհնեցին զնա քահանայ, և նա պաշտէր զքահանայութիւնն՝ որպէս և վայելէ կարգի քահանայութեան։

Digitized by Google

Եւ ի սոյն ժամանակս վարդապետն Մովսէս՝ որ յետոյ եղև կաթուղիկոս Էջմիածնի, և վարդապետն Պօղոս՝ որ ի վերոյ պատմեցաք, յայտնեալ եղեն յարևելեան աշխարհն Հայոց, ամբիծ և պարկեշտ վարուք, զի շրջէին յերկրէ յերկիր և անխափան քարոզէին, շինէին զեկեղեցիս, կարգէին քահանայս ըստ կարգի առաքելոցն։ Եւ վասն հաստատութեան հաւատոյս և կրօնից մերոյ՝ հաստատեցին դպրատուն ի պատշաճաւոր տեղիս՝ ի գիւղն Աստապատ, և ի Շոռօթ. զի ի շրջակայ գեղօրէիցն անդ ժողովեսցին մանկունք առ ի յուսումն։ Սոյնպէս և ի գիւղն Ագուլիս հաստատեցին դպրատուն, և կարգեցին ի վերայ մանկանցն դպրապետ զտէր Անդրէասն, յորում տեղւոջ ժողովեցան մանկունք որպէս թէ յիսուն կամ վաթսուն, և տէր Անդրէասն էր վերակացու, որ հովուէր զմանկունսն և ուսուցանէր զուսումն հասարակաց մերս եկեղեցւոյ։

Եւ եղև գալ Շահաբաս թագաւորին ի գիւղն Ագուլիս յայսպիսի իմն պատճառէ, զի յազգէն Օսմանցւոց ելեալ ոմն սարդար՝ անուամբ Օքուզ Ահմատ փաշայ, բազում զօրօք եկն ի վերայ բերդին Երևանայ, զի առեալ ի Պարսից՝ դարձուսցէ ի կողմն Օսմանցւոց. վասն որոյ թագաւորն Պարսից Շահաբաս ժողովեալ զամենայն զօրսն Պարսից՝ եկն յԵրևան յօգնութիւն բերդին. և Նստաւ սարդարն ի վերայ բերդին և պատերազմեցաւ մինչև ցերկու ամիս և կէս՝ և ոչ կարաց առնուլ։ Ժամանեաց ի վերայ ցուրտ աշունն՝ և վշտացեալ ի ցրտէ և ի սովէ, դարձ արարեալ ամենայն բանակաւն իւրով՝ և չուեալ գնաց ի քաղաքն Կարին, յաշխարհն Օսմանցւոց։ Զկնի դառնալոյ սարդարին, շահն ևս դարձաւ յԵրևանայ և գնաց ի Նախչուան, և անտի յԱգուլիս. արդ՝ այսու պատճառաւ եկն շահն յԱգուլիս։ Եւ սովորութիւն էր շահին, զի ուր և մտանէր թէ ի քաղաք, թէ յերկիր, ամենայն բնակիչք տեղւոյն միահաղոյն ընդ առաջ ելանէին, իշխանք և ժողովուրդք, արք և կանայք և աղջկունք, երիտասարդք և մանկունք, ամենեքեան զարդարեալք ազնիւ և մեծագին զարդուք, քաղցրահամ մրգօք,

և համադամ ճաշակելեօք և անուշահոտութեամբ և ծաղկեհամ գինեաւ, և փայլչահասակ և գեղեցկատես մանկունք և աղջկունք և կանայք ի ձեռս առեալ զգինին ոսկի բաժակաւ մատուցանէին շահին։ Այլ և մարմնաւոր գուսանք և երգեցողք առաջի ընթանալով, և արուեստական երգարանօք քաղցրանուագ երգէին։ Այլ և եկեղեցականք՝ քահանայք և պաշտօնեայք, զգեցեալ շուրջառ և շապիկ, և առեալ զխաչ և զաւետարան, և ամբարձեալ խաչալամ, խնկօք և մոմեղինօք, և զանգակօք և ծնծղայիւք ելանէին ընդ առաջ շահին, և երգելով գնային մինչև հասուցանէին յիւր իջևանն։

Արդ՝ յորժամ Ագուլիս գեղջ քահանայքն եկին առաջի շահին՝ զգեցեալ զգեստուք, կային ընդ նոսա և ոմանք ի մանկանց դպրատանն՝ որք զգեցեալ էին շապիկ և բարձեալ շամադան և մոմ, և երթային առ ընթեր խաչալամին. և մինչ երթային քահանայքն երգելով առաջի շահին, և շահն հայէր այսր և անդր. և ըստ չարայուշ մտաց և բարոյից իւրոց զննէր զամենեսեան, և ի զննելն հայեցեալ ի մանկունսն՝ ետես զի ածելեալ էին կուլակք մանկանցն, և այն յոյժ ծանր և դժուարին թուեցաւ ինքեան, զի համարեցաւ թէ վասն ինքեան արարեալ իցեն զայն. որպէս զի մի վայելչագեղ երևեսցին մանկունքն յաչս նորա, և հաճեալ ի նոսա առցէ ի նոցանէ։ Եւ անդէն շարժեցաւ ի ցասումն բարկութեան շահն ի վերայ առնն՝ որ ածելեալ իցէ զկուլակս մանկանցն։ Այլ և արք ոմանք մահմետական հաւատով որք բնիկ բնակիչք են Ագուլեաց գեղջն՝ երևելի իշխանք, որք ընդ շահին շրջէին, և մերձ նմին ի սպասու կային նորա, և վասն բնական նախանձուն, զոր ունէին ընդ քրիստոնէից՝ առաւել ևս գրգռեցին և զայրացուցին զսրտմտութիւն թագաւորին ի վերայ քրիստոնէիցն, վասն որոյ ստէպ յուզմամբ հրամայեաց շահն զննել և գտանել, որ զայն արարեալ իցէ և սպանանել. և թէ ծնօղք մանկանցն արարեալ իցեն զայն, զնոսին սպանանել՝ և զինչսն յափշտակել՝ և զմանկունսն գրաւել ի ծառայութիւն թա-

գաւորին։ Իսկ առաջիկայք թագաւորին սկսան զննել և հայցանել ի սմանէ, և ի նմանէ, թէ ո զայն արարեալ իցէ, և ամենեքեան զոչ գիտելն պատասխանէին. ապա ի մէջ առեալ զտէր Անդրէասն և ստիպելով պահանջէին, թէ «Ասա մեզ՝ զի ես վերակացու մանկանցն, և դու ես գիտակ»։ Իսկ տէր Անդրէասն խոկայր ի միտ «Թէ զծնօղսն պատճառեմ, զնոսա սպանանեն, և զմանկունսն յափշտակեն. և թէ զայլ ոք պատճառեմ, զնա սպանանեն, և լինի այն ինձ խիղճ մտաց և ստգտանք անփարատելի. ըստ վկայութեան սրբոյ Աւետարանին թէ, լաւ է զի այր մի մեռանիցի և մի ամենայն ժողովուրդս կորիցէ». վասն որոյ լաւ համարեցաւ մատնել զանձն և փրկել զբազումս. վասն որոյ ի կարի ստիպելն զինուորացն, տէր Անդրէասն առ ի փրկելոյ զայլս ասաց, թէ «Ես եմ արարեալ զայն». և զինուորքն ծանուցին զբանն նորա շահին, և շահն հրամայեաց ունել զնա և պահել ի կալանս։ Եւ զկնի աւուրց՝ հրամայեաց շահն ածել զնա առաջի իւր, և հարցանէր թէ՝ «Զստոյգն ասա. ո՞վ ոք է արարող այդմ գործոյ»։

Եւ տէր Անդրէասն ասաց. «Ո՛չ ոք, այլ ես միայն»։

Իբրև ետես շահն թէ զայլ ոք ոչ մատնեաց, յոյժ բարկացաւ ի վերայ նորա, և հրամայեաց տարածել ի վերայ գետնոյ և բրածեծ առնել անխնայաբար. և զկնի յոլով հարուածոցն՝ ասաց շահն. «Զայդպիսի վնաս և զպարտաւորութիւն արարեալ է քո, եթէ կամիս զկենդանութիւն անձին քոյ, ուրացիր զհաւատն քրիստոնէութեան ձերոյ, և լեր օրինօքն մերովք՝ դաւանութեամբ մոլար առաջնորդին մերոյ. և ես տաց քեզ պատիւս և մեծութիւնս. և թէ ոչ հաւանիս, շանց և գազանաց առաջի արկանեմ զքեզ»։

Եւ նա ոչ կալաւ յանձն զուրանալն, այլ ետ պատասխանի թէ «Քրիստոնեայ եմ և Քրիստոսի ծառայ»։ Եւ թագաւորն իբրև լուաւ զայն, զայրագին բարկութեամբ հրամայեաց դարձեալ ի բանտ արկանել։

Եւ ի վաղիւն վերստին եած առաջի իւր. և հարցա-

Digitized by Google

նէր թէ «Ուրանա՞ս զհաւատն քո». և տէր Անդրէաս ասաց. «Ոչ ուրանամ»։ Կրկին անգամ՝ ասաց արքայ. «Տամ քեզ պատիւ և մեծութիւնս՝ թէ ուրանաս զհաւատն ձեր». և նա ոչ հաւանեցաւ. և դարձեալ հրամայեաց ի բանտ արկանել։

Իսկ քրիստոնեայքն մատեան առ նախարարս Թագաւորին, և խոստացան գանձս բազումս, զի գուցէ ազատեսցեն զնա. և թէպէտ նախարարքն խնդրեցին երկիցս և երիցս, ոչ լուաւ արքայ։ Այլ և Ցղնեցի խոջայ Անձրևի կինն՝ որում մայր էր ասացեալ շահն, և ունէր պատիւ առաջի շահին, սա մեծաւ աղաչանօք անկեալ առաջի շահին, խնդրեաց արձակել զնա. սմա ևս ոչ լուաւ։

Եւ դարձեալ ածին զտէր Անդրէաս առաջի արքային, յետ բազում անգամ հարց և փորձ առնելոյ, խոստմամբ պարգևաց և սպառնալեօք տանջանաց. իբրև ետես Թագաւորն թէ ոչ հաւանի, հրամայեաց սպանանել։ Իսկ քաջ նահատակն և ճշմարիտ քահանայն տէր Անդրէաս հաստատուն հաւատով կայր ի վերայ անշարժ հիման հաւատոյս քրիստոնէութեան։

Իսկ զինուորացն առեալ զտէր Անդրէասն կապանօք տարան ի տեղի կատարման, և նա ուրախութեամբ և յօժար կամօք գնայր. և յորժամ եհաս ի տեղի կատարմանն՝ իւրովի արձակեաց զգօտին իւր. և մերկացաւ զհանդերձն իւր, և ասէր դահճացն՝ կատարել ի վերայ ինքեան զհրամանս Թագաւորին. բայց դահիճքն յամեցուցանէին, զի գուցէ հաւանեսցի հրամանաց արքային։

Եւ մինչ կայր սուրբն ի տեղի կատարմանն, առաքեաց առ նա Թագաւորն ի նախարարացն զոմանս երկիցս՝ թէ «Մի կորուսաներ զգեղ և զմանկութիւն քո. եկեալ հաւանեաց իմոց բանից. և առ յինէն պարգևս և զմեծութիւնս»։ Իսկ քաջ նահատակն՝ ամենայն բանից նոցա տայր պատասխանի թէ «Ընդունայն խոստմանց ձերոց ոչ հաւանիմ, և զճշմարիտ հաւատն իմ ոչ ուրանամ»։ Եւ դահճացն հանեալ զսուրն խաղացուցանէին ի վերայ նորա՝ և ածէին

ի վերայ ուրովայնին առ ի երկեցուցանել զնա՝ և նա ոչ երկնչէր։

Եկին ի տեղի նահատակութեան ծնօղք սրբոյն և կային առ ընթեր՝ և աղիողորմ և յորդաբուխ արտասուօք լային, և աղաչանօք ասէին առ սուրբն. «Քաղցրիկ որդեակ մեր, որ առեր զկարգ քահանայութեան և եղեր զինուոր Քրիստոսի, մի՛ երբէք լիցի քեզ ուրանալ զՔրիստոս և լինել զինուոր տիրատեաց, մի՛ թողուցուս զլուսապայծառ հաւատս Քրիստոսի, և մի՛ վասն առժամանակեայ կենացս զրկեսցիս ի յաւիտենական կենացն. այլ յիշեա՛ զճշմարիտ վկայսն Քրիստոսի, զորոց զպատմութիւնսն հանապազ ընթերցեալ՝ պատմէիր մեզ, համբերեա՛ որպէս և նոքայն. զի և նոցին պսակացն արժանասցիս». զայս և որ սոցին նման փղձկեալ սրտիւ և յորդաբուխ արտասուօք աղերսալի ասէին ծնօղք սրբոյն առ նա։ Իսկ դահճացն զբազում ժամս յամեցուցին անդէն. զի թերևս երկմտեալ թուլասցի. և սուրբն անդրդուելի կայր ի վերայ ճշմարիտ հաւատոյս. և ի խաչակնքելոյ զդէմս ոչ դադարէր։ Իբրև տեսին զհաստատութիւն մտաց նորա դահիճքն, թէ ոչ դառնայ, յայնժամ ձգեալ զսուրն պատառեցին զորովայնն նորա, և վաթեցաւ աղիքն արտաքս ի փորէն, և սուրբն միով ձեռամբն ժողովէր զաղիսն ի փորն, և միով ձեռամբն խաչակնքէր զերեսն, և յիշէր զանունն Քրիստոսի. և ապա ծակեալ զջիլս սրունից ոտիցն, և պարանօք բարձրացուցեալ ի բարձունս, և կախեցին զսուրբն գլխիվայր. և նա կայր կենդանի մինչև ի մուտս արևուն. և ընդ երեկոյն աւանդեաց զմաքուր հոգին ի ձեռս Աստուծոյ, որպէս զխունկ անոյշ և զճշմարիտ զոհ ընդունելի։ Եւ յետ մահուան սրբոյն հրամայեաց շահն ձգել զմարմին նորա արտաքոյ շինութեան, զի կերակուր լիցի գազանաց և թռչնոց։ Իսկ քրիստոնէիցն բարձեալ անտի և բերեալ յԱգուլեաց ներքին եկեղեցին, որ այժմ ասի Ցաձորի եկեղեցի, և անդ թաղեցին. և այժմ անդէն կայ թաղեալ պատուական նշխարք ոսկերաց նորա, ի բարեխօսութիւն ամենայն քրիստոնէից։

Եւ եղև կատարումն և մարտիրոսական մահ սրբոյ քահանայիս Աստուածոյ տէր Անդրէասիս ի մեծ թուականիս Հայոց ՌԿԶ, Տրէ ամսոյ ի տասն, և Նոյեմբեր ամսոյ ի տասն և յութն։ Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի. և աղօթիւք նորա Տէր մեզ ողորմեսցի ամէն։

Եւ յետ կատարման տէր Անդրէասի, իբրև անցին ի վերայ ամիսք երեք կամ չորք, ի մէջ խօսից և զրուցաց վերստին յիշեալ եղև առաջի Շահաբասին որպիսութիւնք և իրակութիւնք անցուածոյ տէր Անդրէասի։ Եւ անդէն ոմն ի Նախկի չարախօսացն ի բնակող մահմետականացն Ագուլեաց՝ զորոց վասն կանխաւ յիշումն արարաք, և սորա անունն էր Շահռուղ բէկ. ասաց առաջի շահին, թէ տէր Անդրէասն, որ զկուլակս մանկանցն ածելեալ էր, ոչ թէ յիւրոց մտաց ինչ, այլ խրատով վերակացուին իւրոյ, քանզի ունի ինքեան խրատիչ. և անդէն արարին հարցումն վասն խրատողին թէ ով ոք իցէ։ Եւ որպէս ի համեմատութիւնս մարդկան և անասուն կենդանեաց, համեմատին Տաճկաց ազգն ի յօձ, վասն նախանձուն և նենգութեան, զոր բնական ունին ընդ ազգս և ընդ հաւատս քրիստոնէից. յորոց և ոմն այս Շահռուղ բէկս նովին կրիւքն ախտացեալ մատնեաց շահին զՄովսէս վարդապետն ասելով. «Է ոմն այր, որոյ է անունն Մովսէս, որ է վարդապետ օրինաց քրիստոնէից, որոյ բնակութիւնն է ի վանքն Տաթևու և է ինքն յերկրէն Սիւնեաց, և նա է օրէնսուսոյց և դաստիարակ տէր Անդրէասին»։ Յաղագս որոյ հրաման եղև ի թագաւորէն առաքել զզօրականս և ունել զՄովսէս՝ և կապանօք ածել առ թագաւորն. և զօրականացն գնացեալ կալան զՄովսէս վարդապետն, ընդ նմին և զՊօղոս վարդապետն՝ և ՚նդին զօղամանեակ զուգեալ ի փայտից ի պարանոցս նոցա, և երկաթ ոտնակապ յոտս նոցա. յաւուրս ցրտութեան ձմերայնոյ, և բերին զերկոսեան վարդապետսն ի բանակն շահին, և ծանուցին նմա։ Եւ ի խոհարանս խորհրդոց իւրոց քննեալ էր շահն, թէ սպանանեմ արս երկուս՝ սակաւ լինի վնաս քրիստոնէից և օգուտ մեզ. այլ

առից զյոլով տուգանս արծաթոյ ի նոցանէ, որով լինի աւելի օգուտ մեզ և վնաս նոցա։ Եւ այսպէս վասն ագահութեան և արծաթսիրութեան, էարկ տուգանս ի վերայ վարդապետացն՝ թէ հինգ հարիւր թուման տան և ապա գնան ազատ. բայց քրիստոնէիցն աղերս մատուցեալ առ նախարարս արքայի, զի խնդրեսցեն յարքայէ թեթևացուցանել զտուգանսն, և վասն միջնորդելոյ նախարարացն իջաւ մինչ յերեք հարիւր թումանն, և անդէն վճիռ եհատ թէ անպատճառ տացեն. որ և կարգեաց ի վերայ նոցա զզօրականս, զի առցեն։ Իսկ վարդապետքն վասն ոչ ունելոյ ինչս, զի տացեն ի տուգանս, վասն որոյ եղին ի շրջագայութիւնս և ի խնդիր ողորմութեան յամենայն ազգս Հայոց։

Իսկ աստուածասէր քրիստոնեայքն, թէպէտ աղքատք և չքաւորք էին, այլ ըստ կարողութեան իւրեանց աղքատք և հարուստք, արք և կանայք, անխնայաբար թափէին զինչս և զողորմութիւնս առաջի վարդապետացն։ Եւ նոքա առեալ զողորմութիւնն՝ ուր և լինէր, գերի և բանտարգել, և անզերծանելի պարտատէր, և այլ պակասաւոր, նախ նոցա տային և ազատէին. և յոյժ պատճառէ բազում գերիք և բանտարգելք և պարտատեարք ազատեցան. և ապա զմնացեալն տային իւրեանց ունող զօրականացն ի սակս տուգանին իւրեանց։ Եւ այսպիսի շրջագայութեամբ մինչև ի չորս և ի հինգ ամիս վճարեցին զերեք հարիւր թումանն. և ինքեանք զերծան ի կապանաց՝ ողորմութեամբն Աստուծոյ և տրօք քրիստոնէից։ Բայց մինչ զերեք հարիւր թումանն վճարեցին ի գանձարանս արքային, չորս հարիւր թուման նաևս աւելի գնաց, որ այսր և անդր խարճ գնաց. և ապա զերծան վարդապետքն։

Իսկ Շահռուղ բէկն՝ որ մատնեաց զՄովսէս վարդապետն, յետ սակաւ աւուրց սպանեալ եղև սրով ի զօրականաց շահին, ընկալեալ աստէն զհատուցումն վաստակոց իւրոց զսատակումն մարմնոյ, և անդէն զկորուստն հոգւոյ և զտանջանսն յաւիտենից. յորոց փրկեաց զմեզ Քրիստոս Փրկիչն մեր, որում փառք յաւիտեանս ամէն։

Digitized by Google

Սոյն[1] ընդարձակ վկայաբանութեան հեղինակն է Առաքել վարդապետ Դաւրիժեցի. մենք արտատպել ենք իւր Պատմութիւնից, տպ. Վաղարշապատ, 1884, էջ 272—279, գլուխ ԻԷ. «Վասն նահատակութեան տէր Անդրէաս քահանային»։ Միակ փոփոխութիւնը որ մտցրել ենք այդ արտատպութեան մէջ՝ կէտադրութիւնն ու նոր տողերն են. որովհետև պէտք է նկատել թէ սոյն տպագրութեան մէջ չափազանց քիչ են նոր տողերը, չակերտներ ամենևին չկան, իսկ կէտադրութիւնը թոյլ է։

Անդրէասի վկայաբանութիւնը ունին նաև մեր Յայսմաւուրքներից երկուսը, այն է G և M ձեռագրերը. առաջինը G՝ էջ 165 ա′—167 ա″, Ս. Լուսաւորչի երկու պատմութիւններից յետոյ, Տրէ ԺԱ=Նոյեմբեր 18, այս վերնագրով. «Պատմութի նահատակութե տէր Անդրէաս քահանային»։ Երկրորդը՝ M, յաջորդ օրը՝ Տրէ ԺԲ—Նոյեմբեր 20, Ս. Աղէքսի վկայաբանութիւնից յետոյ՝ էջ 171 բ″—173 ա″, այս վերնագրով. «Յայսմաւուր յիշատակ նահատակութեն տեառն Անդրէի քհնյին»։ G ձեռագիրը լուսանցքի վրայ ունի նաև Շահաբասի պատկերը՝ թագակալ սատանայի ձևով՝ պոչաւոր։ Հմմտ. նաև Չամչեան, Գ. 589-591, Սամուէլ Անեցի, Վղրշպտ. 1893, էջ 177, երեք տող յիշատակութիւնը։

Վկայաբանութիւնը Առաքել պատմագրից է անցած Յայսմաւուրքների մէջ. ըստ այսմ էլ GM և Առաքել բառացի նոյն են. երկուսի մէջ էլ յապաւուած է միայն «Եւ յետ կատարման տէր Անդրէասի, երբև անցին ի վերայ ամիսք ...» ևն հատուածը, էջ 429, տող 6, մինչև վկայաբանութեան վերջը, որ բուն նիւթին էլ չի պատկանում արդէն։ Այս պատճառաւ և մենք աւելորդ համարեցինք երկու Յայսմաւուրքների մէջ տեսնուած աննշան տարբերութիւնները, գրչագրական սխալները, թիւր ընթերցումները (օրինակ G անարից, փխ. արունից, էջ 428 տող 24) ևն նշանակել բնագրի տակ։ Բայց հարկաւոր ենք համարում յիշել այստեղ նոցա արած դիտաւորեալ փոփոխութիւնները, որոնք հետաքրքիր են ձեռագրաց քննութեան տեսակէտով։

G գրեթէ անփոփոխ է պահում բնագիրը, տեղ տեղ միայն մէկ երկու բառ աւելացնելով կամ պակասեցնելով, առանց իմաստի փոփոխութեան. երեք տեղ բնագրի համառօտ խօսքերը յայտնի չափով ընդարձակում է՝ վկայաբանութեանց սովորական ոճի համեմատ յաւելուածներով. այդ յաւելուածները հետևեալներն են.

1. էջ 427, տող 3—5 բնագիրն ունի «Եւ նա ոչ հաւանեցաւ. և դարձեալ հրամայեաց ի բանտ արկանել». իսկ G այդ տողը ընդարձակում է.—Ասաց տէր Անդրէաս. «Ես վասն մարմնական փառաց զլոյս հաւատն իմ ոչ ուրանամ։» Եւ թագաւորն իբրև ետես զհաստատուն միտս սրբոյն և դարձեալ հրամայեաց ի բանտ արկանել:

2. էջ 428, տող 14—15 բնագրի «... աղերսալի ասէին ծնօղք սրբոյն առ նա.» հատուածից յետոյ G իրանից աւելացնում է. «Եւ սուրբն տէր Անդրէաս տայր պատասխանի ծնողացն և ասէր. «Մի՛ ինչ հոգայք, ո՛վ սիրելիք, զի ես ուրախ եմ մտօք, և ցնծամ հոգւովս և պատրաստ եմ մարմնովս մեռանիլ վասն սիրոյն Քրիստոսի։»

3. էջ 428, տող 30 բնագրի «զի կերակուր լիցի գազանաց և թռչնոց» հատուածից յետոյ աւելացնում է իրանից. «Եւ ի գիշերին յայնմիկ Տէրն Քրիստոս փառաւորեաց զնահատակն իւր. քանզի լոյս մեծ էջ ի վերայ սուրբ մարմնոյ նորա, վկայ անմեղութեանն և սերտ հաւատոյն՝ զոր ունէր առ Քրիստոս։ Զոր տեսեալ բազմաց զլոյսն, փառաւորեցին զԱստուած ի վերայ անպատում սքանչելեացն։»

M սիրում է միշտ համառօտել. Նա ո՛չ միայն G-ի յիշեալ երեք յաւելուածները, այլ և միւս աննշան յաւելումներն էլ չունի. բնագրից բազմաթիւ տողեր նա հանում, կրճատում է, այնպէս որ ամբողջ վկայաբանութիւնից մի քառորդ մասը ջնջում է։ M-ի արած համառօտումների մէջ ամենակարևորն է վկայաբանութեան հէնց սկզբի մասը. «Եւ եղև զի մեծ և առաջին ... այսու պատճառաւ եկն չահն յԱգուլիս». այն է էջ 423 տող 1—էջ 424 տող 29, որը M վե-

րածում է հետևեալ ձևին.

«Ի ժամանակին յորժամ Մովսէս կաթուղիկոսն և Պօղոս վարդապետն կարգ և սահմանք հաստատեցին ի վերին աշխարհիս Հայոց, սահմանեցին դպրատուն և ուսուցիչ մանկանց, ի հաստատութիւն հաւատոյ քրիստոնէութեան։ Ընդ որս և ի գիւղաքաղաքն յԱգուլիս հաստատեցին դպրատուն և կարգեցին դպրապետ զտէր Անդրէասն, որ էր ի Նախչուանայ քաղաքէն, նորընծայ սրբասնեալ քահանայ։ Առ որ ժողովեցան մանկունք որպէս թէ Ծ. Կ տղայք և տէր Անդրէաս ուսուցանէր զնոսա և հովուէր և վարժէր, ոչ միայն ի գիրս, այլ և ի կարգս և ի կրօնս աստուածպաշտութեան։ Դէպ եղև գալ մեծ Շահաբասին ի գեօղն Ագուլիս։»



Digitized by Google

## ԳՐԻԳՈՐ ԱՐՓԱՅԵՑԻ

† Ռ․ՀԱ=1622

Այր ոմն քրիստոնեայ՝ անունն Գրիգոր, որ էր նախկին նա ի Վայոց ձորոյ՝ զոր Եղեգաձոր ասեն, ի գեղջէն Արփայու. և այժմ ի գաւառին Փարիոյ գոլով բնակէր ի գիւղն զոր Ներքին Խոյիկան ասեն. և էր սա մարմնովն պարթևահասակ և յաղթանդամ և սրտիւն արի, բանիւք և խելօքն հանճարեղ, և հաւատովն և սիրովն Քրիստոսի հաստատ և ջերմագոյն։ Այս Գրիգոր եկեալ շրջեցաւ ի գեղօրայս գաւառին՝ և քաջալերեալ յորդորեաց զամենայն ժողովուրդսն և եղև գլուխ և առաջնորդ նոցա. էառ ընդ իւր արս եօթն և եկն ի քաղաքն Ասպահան, և գնացեալ էառ զբազում գանձս ի փոխ և բերեալ ետ իշխանաց շահին կաշառս, և հաւանեցոյց զամենեսեան, զի ի պատեհ ժամու բարիս խօսեսցին վասն նոցա առաջի թագաւորին։

Ապա ինքն գրեաց արզայ աղաչանաց և մատոյց առ թագաւորն՝ ոչ թէ միանգամ կամ երկիցս, այլ հնգիցս և վեցիցս. այնքան խօսեցաւ յատեան և ի դիւան թագաւորին՝ մինչև ձանձրանալ թագաւորին և ասել. «Թողի զձեզ ի կամս ձեր, գնացեալ պաշտեցէք զհաւատն ձեր». և Գրի-

Digitized by Google

զոր աղաչէր, պաղատէր, ի ծունր իջեալ լալով խնդրէր ի շահէն՝ և ասէր, թէ «Զհրամանդ, զոր բանիւ ասես, մատամբ միով թղթիւ շնորհեա մեզ»։

Եւ յաւուր միում յորում շահն ելեալ յապարանից իւրոց գնայր ի Հազարաջրիպ այգին, ասացին թէ հինգ անգամ եկեալ առաջի շահին և զնոյն թուղթն խնդրեաց, յորոյ անձանձիր խնդրոյն ձանձրացեալ շահին, գրեալ նմա թագաւորական կնքով ետ ցԳրիգորն, թէ «Հրաման ետու ամենից քրիստոնէից բնակելոց ի գաւառին Փարիոյ և ի Բուրվարի՝ զի համարձակ պաշտեսցեն զքրիստոնէութեան հաւատն իւրեանց»։

Այլ և յետ այսորիկ խնդրեաց Գրիգորն ի շահէն, զի այցելութիւն արարեալ ողորմեսցի թագաւորն, և շնորհեսցէ նոցա զիւրեանց գրեանսն, զորս յափշտակեալ բերեալք են. և զայն ևս շնորհեաց նոցա արքայ։ Եւ Գրիգորն և ընկերքն իւր առեալ զթուղթն և զգրեանսն իւրեանց և ուրախութեամբ գնացին յերկիր և ի ժողովուրդ իւրեանց։

Ցաղագս պատճառիս այսմիկ թագաւորն Շահաբաս էարկ տուգանս ի վերայ քրիստոնէիցն՝ ասելով. «Որովհետև ոչ հնազանդեցան հրամանաց թագաւորի, տացեն տուգանս ի դիւանն թագաւորի հազար թումանս»։ Եւ յերևելի իշխանաց իւրոց առաջակայից զոմն՝ զոր Խօսրով սուլթան կոչէին, կարգեաց վերակացու՝ զի առեալ ի ժողովրդենէն յանձնեսցէ ի գանձապահս թագաւորին. որ և եկեալ Խօսրով սուլթանն բազում զօրականօք, արար և կատարեաց զհրամանս թագաւորին։

Եւ ողորմելի քրիստոնեայքն վասն քրիստոսական հա-

5. Հազարաջրիպ անուան մասին Պատմութիւն Նոր Ջուղայու, հատ. Ա. էջ 72, տալիս է հետևեալ ծանօթութիւնը. «Հազարաջրիբ է թագաւորական այգի մեծատարած յարևելեան կողմն հանդստարանին Ջուղայու։ Այդ այգի բարելի էր և վայելչակարգ ի ժամանակս թագաւորութեանն Շահաբասայ, այլ զկնի նորա եղև ամայի դաշտ աւազուտ վասն ցամաքելոյ ջրոյ նորին, այլ յամի 1842 Մանուչար խան Մօհթամմ-էդ-Դօվլայ կոչեցեալ կրկին եբեր զջուր նորա և նովաւ մասնաւորապէս եղև նորոգումն նոյն այգւոյ»

Digitized by Google

ւառոցն՝ զայս հազար թումանս, և զայն պարտքն՝ զոր Գրիգորն և ընկերքն իւր յԱսպահան տարին, և այլ ևս զոր ինչ ծախք լեալ էին, զամենայն վճարեալ հատուցին, և եղեն չքաւորք և աղքատք կարի յոյժ, բայց կալով ի հաւատս Քրիստոսի՝ ուրախ են և գոհանան զՏեառնէ Աստուծոյ։

Իսկ Գրիգոր այրս այս օր յաւուր յաւելոյր ի հաւատս և ի բարեգործութիւնս, նա և հաստատէր զայլս ի վերայ հաւատոյն Քրիստոսի՝ և նախանձախնդիր լինէր վասն քրիստոսական օրինաց. առ որ նախանձաբեկ լեալ արիւնարբու մահմետականաց, և զրպարտեցին ի մահ զԳրիգորն՝ քանզի զոմն մահմետական յիւրեանց ժողովրդենէն ինքեանք սպանին, և բերեալ ի ծածուկ արկին յանդն Գրիգորին, եկին դատախազք և բերեալ կացուցին սուտ վկայս թէ Գրիգորն սպանեալ է զայս մեռեալս։ Եւ առեալ տարան յանուղղայ դատաստանն իւրեանց առաջի դատաւորաց, որոյ վերայ վճիռ հատին՝ թէ «Որովհետև զայդ արարեալ է դորա՝ կամ ուրասցի, կամ սպանցի». և այսու զըրպարտութեամբս դատապարտեալ սպանին զքրիստոսասէր զայրն Գրիգոր։ Եւ բազումք վկայեցին վասն նորա՝ թէ Տէր փառաւորեաց զնա երկնաւոր նշանօք լուսոյ երկնից։ Որում տացէ Քրիստոս զխոստացեալ արքայութիւնն իւր, և զմեզ ևս ընկալցի ի մասնակցութիւն սրբոց իւրոց իւրով ողորմութեամբն. ամէն։

Սոյն նահատակութեան պատմութիւնը արտատպել ենք Առաքել պատմագրից, Վղրշպտ. 1884, գլուխ ԺԴ. էջ 127—8. Նոյնն ունին նաև քիչ համառօտելով Զամչեան, Գ. 586—7 և Պատմութիւն Նոր Ջուղայու, հատ. Ա. էջ 71—72. երկուսն ևս հանուած Առաքել պատմագրից։

Digitized by Google

# 74.

## ՍԱՐՈՒԽԱՆ ՀԻԶՆԱՑԻ

✝ ՌՁ=1631 փետր. 4 ուր.

Այս երանելի վկայս Քրիստոսի սուրբս Սարուխան էր ազգաւ հայ՝ ի քաղաքէն Հիզնայ՝ սնեալ և վարժեալ ի մանկութենէ ի վարս քրիստոնէութեան և ի հաւատս աստուածպաշտութեան, ուղիղ վարուք և մաքուր գործով, քրիստոսասէր գոլով և երկիւղած, կրթեալ ի կրօնս լուսաւորչաւանդ դաւանութեանն՝ սրտի սիրով և պինդ հաւատով։ Այլ և էր ուսեալ զարուեստս երաժշտական և զերգս տաւղի և քնարի և էր արուեստիւ կօշկար։ Եւ տարագնաց եղեալ յերկրէ Հիզնայ, և եկեալ բնակեցաւ ի Բդեշխաշէն ի մայրաքաղաքն Բաղէշ՝ ամուսնաւն իւրով և որդովք. և կացեալ ժամանակս ինչ, եղև մեռանել ամուսնոյն, և մնաց Սարուխանն այրի՝ ունելով Բ որդիս որբացեալք ի մօրէն։

Դէպ եղև նմա հանդիպիլ կնոջ մի քրդոյ և օտարի, և հարց նա թէ «Ո՞վ ես դու կամ ուստից»։

Եւ նա ասէ. «Կին եմ այրի, և հաւատովս քրիստոնեայ»։ Եւ ոչ իմացեալ քահանայից և դրացեաց թէ այլազգի է կինն, և ապա պարզմտութեամբ՝ ամուսնացուցանեն ընդ Սարուխանին զնա, խաչիւ և աւետարանաւ և սուրբ օրինօք, ի սուրբ եկեղեցւոջն՝ դաւանելով կնոջն

15. i հր ցնա.

զհաւատն Քրիստոսի, և ոչ ոք ի նոցանէ կարաց գիտել զօրպէսն։

Իսկ յետ Դ. ամաց մնալոյ Սարուխանին ընդ կնօջն, յաւուր միում հարցեալ թագնաբար զկին իւր, և գտանէ զնա ազն ազգաւ քուրթ, և օրէնօքն Մահմետի։ Եւ հարցեալ զպատճառ դառնալոյն նորա ի Քրիստոս, և նա ասէ. «Զոմն յազգէն ձերմէ յերկրի մերում անպարտ սպանին ազգն մեր և իմ տեսեալ ի գիշերի լոյս Աստուծոյ ծառ ծաւալեալ ի վերայ նորա, և իմ տեսեալ զայն՝ ցանկացայ կրօնից և օրինաց ձերոց. վասն այնորիկ փախեայ և եկի յերկիրս յայս՝ զի յայտնապէս պաշտեցից զՔրիստոս Աստուած։» Եւ ստէպ ստէպ երթայր յեկեղեցի, և առնոյր խոստովանութեամբ զսուրբ հաղորդն. և եղեն ի նմանէ Բ զաւակս և մկրտեալ զնոսա քրիստոնէական հաւատով. և ի մեռանել տղայոցն թաղել զնոսա քրիստոնէութեամբ։

Իսկ Սարուխանն ոչ կարաց յայտնել զբանն, վասն ահի անօրինացն. այլ ի միտս իւր հաշէր և մաշէր յահէն Աստուծոյ։ Եւ հանապազ ասէր յայտնապէս ի մէջ քրիստոնէիցն, թէ «Ինձ պարտ է մեռանել վասն սիրոյն Քրիստոսի, և հրով այրիլ վասն անուան նորա»։

Եւ յետ Դ ամաց անցելոց Սարուխանին ընդ կնօջն, յաւուր միում ի ձմերայնոջ նստեալ առ դուրս իւր ի տեղի արևու, և երգէր զտաւիղս իւր քաղցր եղանակաւ։

Եւ ժողովեալք էին բազումք ի քրիստոնէից, առ ի լսել զձայն երգոյն, և ուրախանային յոյժ։ Յայնժամ ազդեալ ի նա Հոգին սուրբ՝ ասէ. «Ո՜վ եղբարք, ի վաղիւն ես հրով կատարելոց եմ»։

Եւ ի նոյն օրն՝ գայ որոնելով առաջին քուրթ այր կնօջն, և տեսեալ զկինն իւր ծանեաւ, և ի վաղիւն զաղաղակ բարձեալ առ ազգն իւր և ասէ. «Եկայք տեսէք զգործ քրիստոնէից, որ զկինն իմ խաբեալ են, և բռնութեամբ ի հաւատս իւրեանց դարձուցեալ»։

8. ի ծառ. երկ պետք է կարդալ պայծառ. 14. ի քեական.

Եւ գնացեալ առ խանն Աւդալ, և առ եղբայր նորին Մահմատ բէկն, և ազդեցին նոցա, թէ «Քրիստոնեայ ոմն անուն Սարուխան, յափշտակեալ է զկին տաճկի և արարեալ քրիստոնեայ. որ է յոյժ պակասումն օրինաց մերոց. և թեթևութիւն անուան առաջնորդին մերոյ»։

Եւ նոքա վաղվաղակի առաքեալ կոչեցին առաջի իւրեանց, և հարցաքննեալ գտին զնա անշարժ ի հաւատս Քրիստոսի, և բևեռեալ յերկիւղ և ի սէր նորա։ Եւ ետուն տանել զնա առ դատաւորն։

Ասէ դատաւորն. «Ո՛վ այր դու, դարձիր ի Քրիստոսէ, եւ եկ յօրէնս մեր. և մեք շնորհեմք քեզ զխասն քո, զոր արարեալ ես՝ ազգի և հաւատոյ մերում. ապա թէ ոչ՝ չարաչար մեռանիս ի ձեռաց մերոց»։

Ասէ սուրբն Սարուխան. «Ես քրիստոնեայ եմ և Քրիստոսի ծառայ. զհաւատն ձեր ոչ պաշտեմ, և զսուրբ հաւատն ոչ ուրանամ, և վասն Բ և Գ ամի ունայն կենացն՝ զանմահական կեանսն ոչ կորուսանեմ»։

Ասէ ցնա դատաւորն. «Ուրացիր զՔրիստոս, և ա՛ռ զկին քո. և զերծիր ի տանջանացն»։

Ասէ սուրբն Սարուխան. «Զիա՞րդ թողից զլուսաւորիչն հոգոյ իմոյ զՔրիստոս Աստուած, և զլոյս օրէնս նորա, և հաւանիմ սուտ և մոլար օրինաց ձերոց»։

Եւ դատաւորն եհատ ի վերայ նորա վճիռ այրման. և ապա առեալ տարան զնա առ պա՛րոն Մահմատ բէկն։ Եւ նա շատ ջանաց ողոքանօք և խոստմամբ ընչից և պարգևաց, և ոչ կարաց խախտել զմիտս նորա. զի հաստատեալ էր սիրտ նորա իբրև զվէմ անդամանդեայ ի սէրն Քրիստոսի։ Եւ ապա տարեալ արկին զնա ի ժահահոտ և ի նսեմ բանդի, որպէս զի երկիցէ և զղջացեալ ուրասցի զՔրիստոս։ Եւ ոչ այնու կարացին յաղթել սրբոյն։ Եւ դարձեալ կոչեցին զնա յատենի, և սպառնալեօք ահացուցանէին զնա, մահ խոստանալով նմա, այրել, և կամ

12. i զասգի. | i մերոյմ.

Digitized by Google

կատամահ սպանանել։ Եւ ոչ այնու կարացին մեկնել ի սիրոյն Քրիստոսի։

Ասէ ամիրայն. «Տաճկացիր և դարձիր յօրէնս մեր, և ես տաց քեզ պարգևս մեծամեծս, գիւղս, մեծութիւնս, իշխանութիւնս, գանձս և կանայս գեղեցիկս. եթէ ոչ՝ դառն տանջանօք սպանանեմք զքեզ»։

Պատասխանի ետ սուրբն և ասէ. «Նզովեալ է Մահմետ, և սուտ օրէնք նորա. զՔրիստոս իմ ոչ ուրանամ. և օրինաց և խոստմանց ձերոց ոչ հաւանիմ, և ի սպառնալեաց ձերոց ոչ զարհուրիմ. արդ՝ զոր ինչ առնելոց էք՝ արարէք վաղվաղակի»։

Յայնժամ բարկացեալ ամիրայն՝ ետ հուր բորբոքել, և արկանել անդ զերանելին. և նա ուրախ սրտիւ մերձեցաւ առ հուրն, և կնքեալ զինքն քրիստոսական նշանաւն, և եմուտ ի հուրն ասելով. «Հուր կենդանի Քրիստոս, զհուր սիրոյ քո զոր արկեր յերկիր, բորբոքեա յանձն իմ»։ Եւ պարեալ ի մէջ բոցոյն՝ օրհնէր և գովէր զԱստուած, որ արժանի արար զնա մասին ժառանգութեան սրբոցն ի լոյս։

Իսկ մի ոմն անօրինացն որ մերձ կայր, առեալ կոճ մի փայտի՝ եհար ուժգին զգլուխ նորա և ընկէց յերկիր. և այնպէս ի մէջ հրոյն այրեցեալ, աւանդեաց զհոգին իւր բարի խոստովանութեամբ առ Քրիստոս։

Գործեցաւ այս ի քաղաքս Բաղէշ, ի թվին Հայոց Ռ և Զ, յաւուրս Առաջաւորաց պահոց, Յովնանու տօնին, յաւուր ուրբաթի, ի կաթողիկոսութեան տեառն Մովսէսի Տաթևացոյ, և Նորին աշակերտի Փիլիպպոս ճգնազգեաց վարդապետի, որ յետ Բ ամաց յաջորդեաց զաթոռ նորա, ամս ԻԳ. որ ի յաւուրս յայսոսիկ եկեալ էր ի քաղաքն Բաղէշ, և հանդիպեալ այսմ իրողութեանս։ Եւ Նորին հրամանաւ բարձին զմնացեալ մարմին, և եդին ի վկայարան սրբոյն Սարգսի՝ հուպ առ խորանին, և առնէ բազում հրաշս ի հիւանդս և յախտաժետս, և բազում անգամ ի մթան գիշերոյ տեսեալ քահանայից լոյս ի վերայ սրբոյն, և տան փառս Քրիստոսի Աստուծոյ։

Digitized by Google

Սոյն վկայաբանութիւնը գտնուում է Կարնոյ Սանասարեան վարժարանին սեպհական մի Ցայսմաւուրքի մէջ՝ հետևեալ վերնագրով. «Ի սմին աւուր վկայաբանութ և յիշատակ է նոր վկային քի սրբոյն Սարուխանի»: Վկայաբանութեան արտագրութիւնը ստացել ենք նոյն վարժարանի Հայերէն լեզուի ուսուցիչ մեծ. պր. Աստուածատուր Խաչատրեանի միջոցաւ:

Վկայաբանութեանս մէջ կասկածելի է էջ 437 տող 10 Բղեշխաշէն բառը՝ որ կարող է թէ՛ իբր ածական գործածուած լինել Բաղէշի համար և թէ լինել յատուկ անուն մի գիւղի. վերջինը թուում է աւելի հաւանական:

Digitized by Google

# 75.

## ԵՐԿՈՒ ՄԱՆԿՈՒՆՔ Ի ԿՈՏԷԻՑ

✝ ՌՁԸ—1638—9

Չև ևս էին փախուցեալք Օսմանցիքն ի սուտ համբաւոյն, ըմբռնեալ էին երկուս մանկունս ի Կոտէից. և ի փախչելն իւրեանց կապեալ զմանկունս զձեռս յետս՝ և առաջի արկեալ վարէին զնոսա. և հասեալ ի գիւղն Արծնի՝ ի գլուխս բարձր քարանցն՝ որ ասի Դժուարադէմ, ասեն մանկունքն ցվարիչսն. «Արձակեցէք զձեռս մեր, զի մի նեղիցուք. քանզի փախչել ես ոչ կարեմք. վասն զի մին կողմն քարափն է՝ և մի կողմն դուքս»։ Եւ նոքա արձակեցին զձեռս նոցա։

Իսկ մանկունքն միաբանեալ՝ գնացին մինչ ի գլուխ քարին, յիշեցին զանուն Աստուծոյ, և անկան ի քարանցն ի վայր՝ և մեռան։ Յաղագս երկուց իրաց ընկալան կամաւ իւրեանց այնպիսի դառն մահ. նախ՝ զի զերծցին յանառակ պղծութենէ. երկրորդ՝ զի քրիստոնէութեամբ մեռցին՝ քան թէ ուրացութեամբ կեցցեն։ Վասն որոյ ոչ վարկպարազի համարիմ զմահ սոցա։ Այլ պսակփկից Վիլանի եպիսկոպոսին, որ անկաւ ի բարձանց՝ և մեռաւ վասն այնպիսի գործոյ. և Հազար կուսանքն՝ որք անկան ի գետն վասն Քրիստոսի, և մեռան։ Նոյնպէս և սոքա կատարե-

15. տպ. վարկպարիզի.

Digitized by Google

ցան երանելի մահուամբ։ Եւ էին ի ձոր անդր արք թաքուցեալք, և տեսին զանկանել մանկանցն, մնացին մինչև ի միւս վաղիւն. և եկեալ բարձին զնոսա, և տարեալ ի գիւղն Արծնի թաղեցին։

Յիշեալ վկայաբանութիւնն ունի միայն Զաքարիա սարկաւագ, Վղրշպտ. 1870, հատ. Բ. էջ 22—23, գլուխ ԺԵ. «Նահատակութիւն երկուց մանկանց»։

# 76.

## ՂԶԼԱՐ ԿԻՆ ՆՈՐԱԳԱՒԹԵՑԻ

✝ ՌՁԸ—1638—9

Ի փախչելն Թաթարաց յերեսացն Պարսից՝ երկու Թաթար գնացին փախստեամբ մինչև ի գիւղն Նորագաւիթ. և էր մթացեալ օրն։ Եւ Ղզլարս այս ելեալ ի տանէ իւրմէ՝ երթայր առ դրացիսն՝ բերել ճրագ ի տուն իւր. և պատահի երկուց Թաթարացն, որք իջեալ ի ձիոցն՝ կալան զկինն և հանին ի ձին. և նա անկաւ ի վայր. և դարձեալ հանին ի ձի. և նա դարձեալ անկաւ. և երրորդ անգամ նստուցին զնա ի ձի. իսկ սրբասէր կինն դարձեալ անկաւ։ Իսկ տաճիկքն ձանձրացեալ, քանզի և երկիւղ կրէին ի Պարսիցն, վասնորոյ սրախողխող արարին զերանելի կինն Ղզլար, թողին կիսամահ և փախեան։ Եւ Պարսիկքն պատահեցան նոցա, զմինն սպանին, և մինն կալեալ տարին։ Եւ կինն մնաց աւուրս հինգ և եկեալ քահանայք հաղորդեցին զնա. և յետ երկուց աւուրց հանգեաւ ի Քրիստոս։ Սա կին էր առն միոյ՝ որ ասէին Սեաւ-Զաքարիա, ի նոյն գեղջէն Նորագաւթայ, որ դայր ի վաճառականութենէ, և աւազակքն սպանին զնա երկու ընկերօք ի Մուշաղբիւր գիւղ։

Յիշեալ նահատակուհու պատմութիւնն էլ ունի միայն Զաքարիա սարկաւագ, տպ. Վղրշպտ. 1870, հատ. Բ. էջ 23—24, այս վերնագրով. «Նահատակութիւն Ղզլար անուն կնոջ»։

Digitized by Google

77.

## ԳԱԼՈՒՍՏ ԵՐԷՑ

✝ ՌՂԹ=1640

Յորժամ եղև հաշտութիւն ի մէջ երկուց թագաւորացն Պարսից և Տաճկաց՝ երթևեկութեամբ Ջաղաթայ-Քօթուկ-Մահմատ խանի, թագաւորն Շահ-Սաֆի ետ ի պարգև նմա զխանութիւնն Երևանայ. զի մեռեալ էր Քալպալի խանն ի թուին ՌՁԸ։ Ի սորա երկրորդ ամին եկն այր մի կնաւ իւրով ի Բասենայ, և բնակեցաւ ի Կոտէս գաւառ՝ ի գիւղն Արախուս։ Եւ կինն այն ծնաւ որդի, և ետուն զնա մկրտել Գալուստ երիցուն. որպէս ծնունդ քրիստոնէի մկրտեաց, և ոչինչ էառ ի նոցանէ վասն աղքատութեան նոցա. այլ ետ նոցա ԺԲ լիտր ցորեան, զի հաց արասցեն իւրեանց։

Եւ յետ աւուրց ինչ եկին հայր և եղբայր կնոջն՝ և ասեն ցայր նորա. «Դու զաղջիկն մեր առևանգ արարեալ՝ փախուցեալ եկիր աստ. զաւակն ընդէր դողացաք և բերիք ընդ ձեզ»։ Եւ նոքա ուրացան և ասեն. «Ո՛չ գիտեմք զոր ասէքդ»։ Եւ ի բազում ասելն և ի լսելն՝ և նոցա ուրանալն, ձանձրացան արքն, և գնացեալ գրեցին գիր դանդատանաց ի փեսայէն և յաղջկանէն իւրեանց, և ետուն խանին։

Եւ կոչեալ զնոսա՝ ասէ. «Տուք ի դոսա զինչս իւրեանց»։ Իսկ նոքա՝ զի վստահեալ էին, ոչ կարացին հա-

տուցանել, տանջացան այրն և կինն, և յաւելին չարեաւ մատնել զԳալուստ երէց, թէ «Մեք վաղ ուրեմն կամէաք տանջանալ, Գալուստ երէցն ոչ եթող. այլ և մկրտեաց զորդին մեր. և ետ մեզ կաշառ՝ ցորեան, և ասէ. Ես պահեմ զձեզ, և դուք մի տանջանայք, զի մի կորիցէ հոգի ձեր»։

Եւ խանն առաքեաց արս խիստ՝ և բերին զանմեղ քահանայն, և կացուցին առաջի նորա։ Ասէ խանն. «Դու ընդէ՞ր ես մկրտեալ զորդի Թուրքիս»։

Ասէ երէցն. «Ես զնոսա ոչ գիտէի՝ թէ Թուրք իցեն. զի նոքա աղաչեցին ինձ, և ես որպէս օրէն էր մեր՝ արարի առ նոսա։ Քանզի բազումք ի քրիստոնէից տանջանան, նոյնպէս և դոքա տանջացան, և մեք զի՞նչ մեղաք»։

Ասէ խանն. «Ապա ընդէ՞ր ես առեալ դոցա ցորեան և կաշառս»։

Ասէ երէցն. «Միթէ ողորմութիւն տալն կաշառ իցէ. զի սովորութիւն է քրիստոնէից՝ տալ ողորմութիւն ամենեցուն ըստ հրամանի Աւետարանին մերոյ»։

Ասէ խանն. «Զայդ ասելով կամիս զերծանի՞լ յինէն. ոչ է այդպէս. կամ տանջացիր՝ և կամ չարչարանօք սպանանեմ զքեզ»։

Ասէ երէցն. «Աստուած մի արասցէ թողուլ ինձ զհաւատն իմ. բայց թէ առանց յանցանաց սպանանես զիս, պատրաստ եմ ի մեռանել»։

Ասէ խանն. «Զի՞նչ յանցանք իցեն մեծ քան զայս՝ որ ծնունդ տաճկին քրիստոնեայ արարեր»։

Ասէ տէր Գալուստն. «Ասացի՝ թէ ես ոչ գիտէի զնա տաճիկ, և թէ գիտէնայի զնա տաճիկ՝ ի գալ նորա ի գիւղն մեր՝ ո՞չ թողուի մտանել մոլորելոյն այնմիկ առ ուղիղ հաւատն մեր»։

Եւ բարկացեալ խանն՝ հրամայեաց ձաղանօք տանել զնա ի բանտ։ Եւ առաքեաց երկու Մուղրի՝ և ասէ. «Խրատ

23. տպ. առանձ.

տուք՝ թերևս կարիցէք դարձուցանել։

Եւ գնացեալ խօսեցան ընդ նոսա բազում մարմնական բանիւք։ Իսկ երանելի քահանայն Գալուստ տգէտ էր ի գրոց գիտութենէ. այլ աշխարհօրէն բանիւ յանդիմանեաց զնոսա՝ և ասէ. «Առաջնորդն ձեր ի դժոխս ամենայն համախոհիւք իւրովք ընդ սատանայի, և զիս ևս հրաւիրէք առ նա գնալ»

Եւ բարկացեալ մօլնայքն՝ և ելեալ հարին զնա ոտամբ. և գնացեալ պատմեցին խանին։ Եւ առաքեաց խանն զօրականս, զի կապեսցեն զձեռս նորա յետս. «և տարէք ի դուռն արևմտեան՝ և քարկոծ արարէք»։

Եւ գնացեալ չար զինուորքն՝ և հանին զնա ի բանտէն. և առաջի արկեալ տանէին զնա ի տեղի սպանմանն, մերթ ի քարշ, մերթ ի յոտին. ոմանք հարկանէին և ոմանք կոփահարէին. ոմանք ձաղէին և ոմանք խթէին. ոմանք փետէին զմօրուսն և ոմանք զգանգուրսն. ոմանք թքանէին զերեսսն, և ոմանք հայհոյէին. ոմանք նախատէին և ոմանք չար խրատ տային. վասնորոյ ձանձրացեալ սուրբ քահանայն Գալուստ՝ սկսաւ նախատել զառաջնորդս նոցա՝ ասելով. «Անիծեալ լիցի նա՝ և ընդունօղ նորին, և ով ոք զնա մարգարէ դաւանէ»։

Եւ ապա ասացին բերել քրիստոնեայս, զի քարկոծեսցեն զնա. և փախեան ամենայն քրիստոնեայքն։ Եւ նոքա կալան այր մի՝ բօշայ ազգաւ, և ասացին նմա. «Հար զդա քարամբ՝ զի մեռցի»։ Եւ նա ոչ եհար։ Եւ եդին ի ձեռն նորա զծայր չուանին՝ և ասեն. «Քարշեա զդա,» և ոչ կալաւ զչուանն. և հարին զբօշայն մինչև եղև կիսամահ. և թողին զնա։ Եւ յարեան ի վերայ երիցուն՝ որպէս գայլք մարդախանձ, և քարկոծեցին զերանելին Տէր Գալուստ. և կատարեցաւ բարի դաւանութեամբ ի Քրիստոս. և էր մթացեալ զօրն, թողին զնա ի մէջ քարանցն՝ և գնացին։ Եւ պահապանք պարսպաց բերդին Տաճկունքն տեսին ի վերայ մարմնոյ սրբոյն որպէս կայծակունք հրոյ, և կարծեցին՝ թէ նենգաւոր տաճկունք այ-

Digitized by Google

րեն զմարմինն նորա, և ձայնէին առ խանութպանն՝ և ասէին. «Զի՞նչ է՝ զոր առնէք»։

Եւ նոքա ասեն. «Լոյս է և ոչ հուր»։

Եւ ի լուսանալն՝ գնացեալ բերդապահացն՝ և պատմեցին խանին։ Եւ ասաց խանն. «Ես բռնութեամբ առաքեցի զերէցն յարքայութիւնն Աստուծոյ»։ Եւ հրամայեաց քրիստոնէից բառնալ զնա և թաղել ըստ օրինաց իւրեանց։ Վասնորոյ եկին բազում քահանայք և ժողովուրդք, բարձին զմարմինն՝ և զքարինս և զհողն արենաշաղախ, և տարեալ թաղեցին յանապատն Երևանայ՝ մերձ Անանիա առաքելոյն։

Կատարեցաւ սուրբ քահանայն Գալուստ ի թուին ՌՋԹ՝ յաւուրս Բառամանորդաց պահոցն, յաւուրս Տեառն Փիլիպպոսի Կաթուղիկոսի Հայոց։

Յիշեալ վկայաբանութիւնը արտագրել ենք Զաքարիա սարկաւագից, տպ. Վղրշպտ. 1870, հատ. Բ. էջ 29—32, «Նահատակութիւն Գալուստ երիցուն»։

# 78.

## ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՆԹԻԿ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՑԻ

✝ Ռ.Ղ.Ա.—1642 ապրիլ 15

Այս երանելի նահատակս Նիկողայոս էր ի քաղաքէն Տիգրանակերտոյ, որ այժմ ասի Ցամիթ,—ծնեալ և սնեալ ի նոյն քաղաքին. և էր մանուկ տիօք իբրև տասն և հնգից ամաց, տեսլեամբն գեղեցիկ և հասակաւն վայելուչ, զաւակ քրիստոնէից և ազգաւ ի Հայոց։

Եւ յաւուր միում՝ մինչդեռ շրջէր Նիկողայոս ի մէջ շուկային ըստ հանապազորդ սովորութեան իւրոյ, յայնժամ այր ոմն հաւատովն մահմետական՝ որոյ այլևի անունն Մահմետ էր, մերձեալ առ Նիկողայոս՝ ձեռն ածէր զերեսօքն և փարէր ախտաւոր ցանկութեամբ, որպէս հանապազ տեսանի ունակացեալ առ մահմետականս։ Իսկ Նիկողայոս սաստիկ բարկութեամբ դժուարացեալ ընդ այն, ի բաց վարէր յինքենէ։ Եւ էր այլ ոմն այր որ նա ևս անուամբն Մահմետ էր և հաւատովն մահմետական։ Այս Մահմետ՝ որ այժմ խաղայր ընդ Նիկողայոսին, ասաց նմա վասն այնմ Մահմետի թէ «Զիա՞րդ է զի ընդ. այն Մահմետն առնես զսէր և յարակցութիւն և ընդ իս ոչ առնես»։

Եւ Նիկողայոս ասաց. «Զքո մայրն և զնորա մայրն այսպէս առնեմ»։

Եւ նոյնժամայն այս Մահմետս ասաց մերձակայ աւրանցն և խանութպանացն. «Վասն Աստուծոյ վկայք լերուք, զի դուք ձեզէն լուայք, որ հայհոյեաց զօրէնսդիրն մեր և զմարգարէն Մահմետ»։

Եւ ժողովեցան բազում մահմետականք իբրև զչուն կատաղիք անդր ի վերայ նոցա և յափշտակեցին զՆիկողայոս և տարան ի դատարանն առ դատաւորն. և ի նոցանէ լինէին ոմանք դատախազք և ոմանք վկայք և ոմանք վրէժխնդիրք և դատապարտէին ի մահ զՆիկողայոս։

Եհարց դատաւորն ի Նիկողայոսէ թէ արդարև հայհոյեա՞ց զպատգամաբերն զՄահմետ։

Ետ զպատասխանի Նիկողայոս. «Ես ոչ հայհոյեցի և ոչ բան ինչ ասացի պատգամաբերին Մահմետի. այլ այրս այս ախտաւոր ցանկութեամբ փարէր զինև ի մէջ մարդկանց և ամօթով առնէր զիս. վասն որոյ և ես զմայր սորա քֆրեցի»։

Իսկ այս Մահմետս՝ որ խաղայր ընդ Նիկողայոսի, դատախազ լինէր թէ զՄահմետ զպատգամաբերն քֆրեաց. այլ և ասաց «ունիմ ահաւասիկ երկու այր վկայ», զոր և ածեալ կացոյց զայսն առաջի դատաւորին, միոյն անուն ասէին պաղալ Ալլահվերտի և միւսոյն հալվաչի Սէյիդ. որոց եկեալ առաջի դատաւորին, վկայեցին թէ «Մեք լուաք ի դմանէ որ քֆրեաց Մահմետին»։

Ասաց դատաւորն Նիկողայոսին. «Որովհետև այդքան մահմետականք ժողովեալ են ի վերայ քո և այդու կերպիւ դատապարտեն զքեզ, գիտեմ զի ոչ թողուն զքեզ կենդանի, այլ սպանանեն. վասն որոյ լուր բանից իմոց և լեր մուսուլման, զի զերծցիս ի մահուանէ»։ Եւ Նիկողայոս ոչ կալաւ յանձին լինել հաւատոյն Մահմետի։

Բազում անգամ ասաց դատաւորն. «Տամ քեզ բազում գանձս և ստացուածս պատուականս և կին գեղեցիկ, եթէ գաս ի հաւատս Մահմետի»։

Եւ Նիկողայոս ասաց. «Ես զլոյս հաւատս իմ ոչ թողում և զուղիղ օրէնս Քրիստոսի Աստուծոյ իմոյ ոչ փոխանակեմ ընդ ձերդ օրինաց. և դուք թէ անպարտ սպանանէք զիս, դո՛ւք գիտէք»։

16. KM, ինչպէս եւ Ոսկանի տպագրութիւնն Ամստերդամում՝ չունին միոյն անուն ... հալվաչի սէյիդ. 18. տպ. վկայիցեն. KM վկայեցին.

Digitized by Google

Իսկ որք վրէժխնդիր մահմետականքն էին՝ հարկէին զդատաւորն առնել սիճիլ մահուան ի վերայ Նիկողայոսի, զի սպանցեն զնա։ Եւ դատաւորն արար սիճիլ։ Իսկ մահմետականքն՝ որք իբրև չշար գազան ծարաւի են արեանց քրիստոնէից, առին զսիճիլն և զՆիկողայոսն տարան առաջի փաշային՝ որում անունն էր Մուստաֆայ փաշայ և ծանուցին նմա զամենայն, յոլով ամբաստանութեամբ։

Եւ փաշայն ասաց առ Նիկողայոս. «Լո՛ւր բանից իմոց և դարձիր ի պայծառ հաւատս Մահմետի, որով պայծառացեալ է ամենայն աշխարհ, որպէս և տեսանես. և ես կարգեմ զքեզ ինձ հանապազորդ աւաջակայ սպասաւոր և իբրև զորդի ընդունիմ զքեզ և տամ քեզ բազում գանձս և պատուական ստացուածս և կին գեղեցիկ, զդուստր իշխանաց զորոյ և կամիս. և պետական իշխանութիւնս և այլ բարութիւնս բազումս»։

Եւ պատասխանի Նիկողայոս. «Ի բարութեանցդ այդի ոչինչ պիտոյ է ինձ ամենևին. այլ թէ առնես ինձ բարութիւնս, թո՛ղ ինձ կեալ իմովս հաւատով. և թէ ի զուր դատապարտէք զիս և սպանանէք, դուք գիտէք»։

Բազում անգամ ասաց փաշայն. «Տամ քեզ մեծութիւն և փառս, եթէ դառնաս ի քոյդ հաւատոց ի հաւատս Մահմետի». և Նիկողայոս ոչ դարձաւ։ Իսկ մահմետականքն բազում բանիւ թախանձէին զփաշայն, տալ հրաման և վճիռ սպանանել զՆիկողայոս։ Իբրև գիտաց փաշայն թէ ոչ դառնայ Նիկողայոս, ապա ետ վճիռ և հրաման սպանանել զնա։

Յայնժամ ժողովեցան դունդք դահճացն ի վերայ նորա, և մերկացուցին զնա ի հանդերձից, և գլուխ ի բաց և բոկոտն, և ձեռս ի յետս կապեալ, և առեալ տարան զնա ի շրջեցուցանել յամենայն տեղիս քաղաքին. և մունետիկն՝ առաջի նորա հրատարակելով գնայր։ Եւ բերին զնա ի մէջ

20. փխ. բազում անգամ ...սպանանել զնիկողայոս՝ M ունի բազում անգամ պէսպէս խոստմունս արարեալ հարցանէին թէ ուրացցի և նա զնոյնն առնէր պատասխանի.

Digitized by Google

մեծ մէջդանին, ի տեղին ուր զմահապարտաց զոտս և զձեռս խորտակեն ի վերայ վիմին, որ կայ հաստատեալ անդ։

Եւ անդ եւս բազում անգամ ասացին դահիճքն. «Դարձիր ի քոյդ հաւատոց ի հաւատս Մահմետի. և մի եւս յամառիր, զի ահաւասիկ այժմ խորտակեմք զձեռս քո և զոտսդ»։ Սոյնպէս և այլ մահմետականքն ասէին. և Նիկողայոս ոչ ումեք հաւանեցաւ բնաւ։ Եւ յայնժամ պահու յերիցանց քաղաքին Մարտիրոս անուամբ ոմն քահանայ եդեալ հաղորդ ի մէջ արմաւոյ և բերեալ ետ ցՆիկողայոս, զոր առեալ ճաշակեաց։

Եւ ի տեսանելն զայն դահճացն՝ աղմկեցան և սկսան հարցումն առնել թէ «Զի՞նչ էր այն, զոր երէցն ետ ցՆիկողայոս»։ Եւ երէցն փութով խոյս տուեալ փախեաւ ի տեղւոջէն և փրկեցաւ։

Իսկ դահճացն ի բազում անգամ ասելն ցՆիկողայոս թէ «Ե՛կ դարձիր յօրէնս Մահմետի և փրկիր ի մահուանէ», իբրև ոչ դարձաւ, ապա ասացին դահիճքն ցՆիկողայոս. «Որովհետև ոչ լսես մեզ և ոչ հաւանիս մտանել յօրէնս Մահմետի, արդ՝ տարածեա զձեռս քո ի վերայ վիմիդ, զի խորտակեսցուք»։

Եւ երանելին Նիկողայոս ինքն իւրովի տարածեաց զերկոսին ձեռսն ի վերայ վիմին, և դահիճքն հարին կացնաւ և խորտակեցին զբազուկս երկոցունց ձեռացն. և ապա խնդրեցին զոտսն և նա տարածեաց. և դահիճքն խորտակեցին զոլորս երկոցունց ոտիցն։ Եկաց Նիկողայոս այնպէս խորտակեալ անդամօք յայնժամ աւուր անդէն ի մէջ թէատրոնին անկեալ։

Եւ յերկրորդումն աւուր մատուցեալ· քրիստոնէիցն առ փաշայն և առ դատաւորն և խնդրեցին տալ հրաման բառնալոյ զնա անտի և տանել ի տունն իւրեանց։ Եւ նոքա ետուն հրաման. և եկեալ քրիստոնէից բարձեալ զնա տարան ի տունն իւրեանց։ Եւ մնաց կենդանի Նիկողայոս յետ

13,14. տպ. երեցն.

խորտակելոյ զձեռսն և զոտսն՝ աւուրս երիս. և ապա աւանդեաց զսուրբ հոգին իւր, իբրև զխունկ անոյշ ի ձեռս Աստուծոյ։

Եւ ի գիշերին յայնմիկ Տէրն Քրիստոս փառաւորեաց զնա երկնային լուսովն, որ էջ ի վերայ նորա. զոր քրիստոնեայքն ամենեքեան՝ որք անդր էին ժողովեալք, ակներև տեսին և ուրախացան մեծաւ խնդութեամբ և ցնծութեամբ փառաւորէին զԱստուած։

Այլ և ինքն սուրբն Նիկողայոս՝ մինչ կենդանին էր, պատմեաց թէ «Ի ժամուն յորում խորտակեցին զձեռս իմ և զոտս, տեսի զի լոյս պայծառ շողացեալ յերկնից իջեալ եմուտ ի բերանս իմ»։

Եւ յետ մահուան սրբոյն՝ ի վաղիւ անդր ժողովեցան բազմութիւնք քրիստոնէից, բարձեալ զնահատակն Քրիստոսի սաղմոսիւք և օրհնութեամբ, և տարան ի դիրս գերեզմանացն Հայոց և անդ ի կարգս սուրբ նահատակացն հանգուցին ի գերեզմանի։

Եւ այժմ ցաւագարք և հիւանդք գնան ի սուրբ գերեզմանն նորա և գտանեն զառողջութիւն իւրաքանչիւրոց ցաւոց, աղօթիւք սուրբ նահատակին Նիկողայոսի և շնորհօքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որում փառք յաւիտեանս. ամէն։

Եւ եղև կատարումն նահատակութեան սրբոյն Նիկողայոսի ի թուականութեան Հայոց ՌՂԱ, յապրել ամսոյ ԺԵ, ի թագաւորութեան ազգին Օսմանցւոց սուլթան Իբրահիմին, որ նստէր ի մեծ քաղաքն Ստամբօլ և ի կաթուղիկոսութեան բարձրագահ աթոռոյն սրբոյ Էջմիածնի Տէր Փիլիպպոսի պատուական հայրապետի։

Այլ և մինչ կենդանի էր սուրբն Նիկողայոս՝ պատահեցաւ անդ ի Ցամիթ քաղաքի վարդապետ ոմն, զորոյ զանունն ոչ գտաք, որոյ եկեալ առ սուրբն Նիկողայոս և կալեալ զջախջախեալ աջն նորա և համբուրեաց և խնդրեաց ի նմանէ թէ «Սուրբ աջ քո զայս շնորհեա ինձ, զի ես հանդերձեալ եմ եկեղեցի շինել և դնեմ ի հիմն եկեղեցւոյն յայնմիկ զսուրբ աջս»։

23. տպ. տասն հինգ. 27. M չունի այլ և մինչ ... մինչեւ վերջ.

*Եւ սուրբն Նիկողայոս յօժարութեամբ ետ, քանզի ասաց. «Արդէն իսկ կտրեա և առ ի քեզ»։ Եւ մինչ կենդանի էր՝ ոչ կտրեցին, այլ յետ մահուանն կտրեցին։ Եւ վարդապետն յինքն էառ զսուրբ աջն Նիկողայոսի մեծաւ փափագանօք և տարեալ եդ ի հիմն եկեղեցւոյն, զոր շինեաց։ Այլ և զվէմն զայն ևս յորոյ վերայ խորտակեցին զձեռս և զոտս սրբոյն Նիկողայոսի, զայն ևս գողացաւ վարդապետն և տարեալ եդ ի հիմն եկեղեցւոյն՝ զոր շինեաց. որով փառաւորի անունն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, յաւիտեանս յաւիտենից ամէն։*

Սոյն վկայաբանութիւնը արտատպում ենք Առաքել պատմագրից, տպ. Վղրշպտ. 1884, էջ 405—409, գլուխ ԽԴ. «Պատմութիւն նահատակութեան անմեղ մանկանն Նիկողայոսին» վերնագրով։ Առաքել պատմագրի գրած սոյն վկայաբանութիւնը անցել է նաև Յայսմաւուրքների մէջ. մեր տեսած Յայսմաւուրքներից երկուսը K և M ունին այն, առաջինը K՝ ահկի Ա=ապրիլ 8, Սահակ և Համազասպ իշխանների, և Պարսից գերութեան մէջ նահատակուած սրբերի վկայաբանութիւններից յետոյ, էջ 405 ա′—406 բ″. երկրորդը M՝ հոռի ԺԴ=սեպտ. 24, սրբուհւոյն Իրայիտայ վկայաբանութիւնից յետոյ, էջ 75 բ′—76 բ″. երկուսի մէջ էլ Առաքելի վերնագիրը անփոփոխ մնացել է։ Անփոփոխ է մնում նաև ամբողջ վկայաբանութիւնը. տարբերութիւնները միայն տառական են. իսկ բառական կարևոր տարբերութիւնները արդէն նշանակել ենք։

Վկայաբանութիւնս ունի նաև Յայսմ. Գ. տպ. Ա. 167″—168′. հմմտ. նաև Չամչեան, Գ. 653։

# 79.

## ԽԱՉԱՏՈՒՐ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՑԻ

† Ռ·ՃԱ=1652 օգոստոս 20

Այս երանելի նահատակս Խաչատուր՝ էր ի քաղաքէն Տիգրանակերտու՝ որ այժմ ասի Յամիթ, ծնեալ և սնեալ ի նմին քաղաքի։ Եւ էր ինքն յազգէն Հայոց. և կային սմա ծնօղք և եղբարք և այլ ընտանիք բազումք։ Եւ էր ինքն իբրև ամաց քսանից՝ աւելի կամ պակաս, գեղեցկատես և վայելչահասակ։ Այլ և էր յոյժ աղօթասէր և ունկնդիր գրոց ընթերցման, զոր ինչ և կարդան քահանայքն յեկեղեցիս, Աւետարան և Ճաշու գիրք և մանաւանդ թէ Յայսմաւուրք և Պատմութիւնք Վկայից։ Եւ յամենայն աւուր անպակաս էր նա յեկեղեցւոյն և յաղօթից իւրաքանչիւր կարգեալ ժամու։ Եւ մերձ ատենին՝ ուր ընթեռնուն զամենայն գիրս, կալեալ էր իւր տեղի աղօթից։

Եւ յորժամ ընթեռնուին զպատմութիւն նահատակութեան վկայից, իբրև զյորդառատ աղբիւր բղխէին արտասուքն յաչացն, և ցանկայր ինքն մեծաւ յօժարութեամբ նահատակակից լինել սրբոց վկայիցն։ Եւ հանապազ ի տան իւրեանց իւրոց ընտանեաց, և արտաքոյ ընդ իւրում յարակից ընկերացն ասէր թէ «Ես ոչ կամիմ իմով բնական մահուամբ մեռանիլ, այլ կամիմ նահատակիլ, և ի վերայ իմոյ ճշմարիտ հաւատոյս մեռանիլ»։

12. տպ. ի տեղի. GK տեղի.

Digitized by Google

Եւ էր սա աշակերտեալ առն ումեմն քրիստոնէի՝ որ ունէր արուեստ չլնկարութեան, որ չինէ կօպղայս և այլ այսպիսի մանր իրք. և հանապազ ընդ իւրում վարպետին նստեալ ի խանութն ի մէջ շուկային գործէին զարուեստն իւրեանց. և էր խանութ սոցա մերձ մեծ մզկթին՝ զոր Ջումայ մաչիթ ասեն։

Եւ յաւուր միում ի մէջ խանութին ասաց Խաչատուրն ընդ իւրում վարպետին՝ թէ «Աւասիկ իջեալ ի խանութէս գնամ. բայց կարծեմ թէ այլ ոչ ևս դամ ի խանութս»։ Եւ ոմանք ասացին թէ ասաց Խաչատուրն. «Ցայսմ գիշերի տեսիլ երազոյ երևեցաւ ինձ, և հրամայեցաւ ինձ նահատակութիւն. և երթամ ես ի նահատակիլ. վասն այն ասեմ, թէ ոչ ևս դառնամ ի խանութս»։ Ապա ,յետ այսց բանից՝ իջեալ ի խանութէն՝ գնաց ի մեծ մաչիթի բակն, և կացեալ առ ընթեր ջրոյն՝ լուանայր զձեռն ջրովն՝ որ հեղանի ի բարձր տեղւոջէն։ Եւ ,յայնմ ժամու եկեալ այր ոմն մահմետական, որ էր ինքն ամիր և կանաչագլուխ, հայհոյեաց զԽաչատուրն, և ասաց. «Ի բաց գնա ի տեղւոջէդ, զի և ես լուացայց»։

Եւ Խաչատուրն հայհոյեաց զնա և զկանաչն նորա։ Եւ ի խօսիլ սոցա երկոցունց ընդ միմեանս, ժողովեցան բազում մահմետականք ի վերայ նոցա, և յափշտակեցին զԽաչատուրն և տարան առ դատաւորն։ Եւ սկսան ոմանք դատախազ լինել և ոմանք վկայք և ոմանք վրէժխնդիրք, և դատապարտէին ի մահ զԽաչատուր։

Եւ ի մէջ դատարանին խօսեցաւ դատաւորն ընդ Խաչատրոյն և ասաց. «Որդեա՛կ, դու մանուկ ես և նորոգ երիտասարդ. խնայեա՛ ի մանկութիւն քո, և փրկեա՛ զանձն քո. քանզի այսքան մահմետականք՝ որ ժողովեալ են ի վերայ քո, ոչ թողուն զքեզ մնալ կենդանի։ Այլ հաւանեա՛ բանից իմոց. դարձի՛ր ի ձեր մոլար օրինացն, և մուտ ի հաւատս Մահմետի, որ բարի է և երանելի, որպէս և տեսանես զամենայն մահմետականս, որք բարգաւաճեալք են բարեկեցիկ կենդանութեամբ, և հզօրացեալք են թագաւորութեամբ, և ժառանգօղք են աստի կենացս և հանդերձելոյն»։

Իսկ երանելի Խաչատուր ետ պատասխանի և ասաց. «Մոլար օրէն՝ ձեր օրէնքն է, որպէս և է մարգարէն և պատգամաբերն ձեր սուտ մարգարէ։ Իսկ մեր օրէնս ճշմարիտ է և քրիստոսադիր, որպէս և ինքն Քրիստոս ճշմարիտ է, որում դուք ես վկայէք։ Եւ ես զՔրիստոս Աստուածն իմ ոչ ուրանամ, և զլոյս հաւատոյ իմ ոչ թողում, և սուտ օրինաց ձերոց ոչ հաւանիմ. եթէ թողուք զիս և եթէ սպանանէք, և թէ իբրև զՆասիմի քերթէք զիս, ես ի հաւատոյս իմոյ ոչ դառնամ»։

Եւ դատաւորն բազում բանս խօսեցաւ ընդ նմա և բազում բարութիւնս խոստացաւ տալ նմա, գանձս և ստացուածս և կին և պետական իշխանութիւնս. և Խաչատուրն բնաւ ոչ հաւանեցաւ։

Եւ ոմանք ի մահմետականացն գնացեալ առ մուֆթին՝ ծանուցին թէ «Այր՝ որ զպատգամաբերն զՄահմետ և զնորին հաւատն հայհոյէ՝ զի՞նչ պարտ է նմա առնել»։

Եւ մուֆթին ետ ֆաթվայ. «Որովհետև զպատգամաբերն զՄահմետ և զնորին հաւատն հայհոյեաց, և ինքն ասաց թէ «Իբրև զՆասիմի քերթէք զիս, յիմոյս հաւատոյս ոչ դառնամ», պարտ է զնա քերթել»։

Եւ զայս ֆաթվայս առեալ մահմետականացն, բերին առ դատին, և սիջիլ արարին։ Եւ ապա առեալ զԽաչատուրն՝ տարան առ փաշայն և ծանուցին նմա զամենայն։ Իսկ փաշայն իբրև ետես զվայելուչ մանկութիւն Խաչատրոյ, բազում խանդաղատական բանիւք խօսեցաւ ընդ նմա և ասաց. «Տամ քեզ բազում գանձս և զպատուական ստացուածս և պետական իշխանութիւնս, և կին գեղեցիկ՝ դուստր իշխանաց, որում և դու հաւանիցիս. եթէ դառնաս ի քոյդ հաւատոյ և ընդունիս զհաւատս Մահմետի, լինի՛ս այսքան բարեաց տէր, նաև զանձն քո փրկես ի մահուանէ»։

Իսկ երանելին Խաչատուր ետ պատասխանի. «Զայդ ամենայն բարիքդ, զոր խոստացար տալ ինձ՝ սուտ է և ընդունայն, քանզի անցաւոր է։ Նաև հաւատն ձեր սուտ է, զի սուտ

մարգարէի է կարգեալ։ Իսկ իմս հաւատ ճշմարիտ է և սուրբ, զի ի Քրիստոսէ է կարգեալ, որոյ ճշմարտութեան դուք իսկ վկայ էք։ Ո՛չ թէ հարևանցի սպանանէք զիս, այլ թէ կենդանւոյն քերթէք զիս, ես զՔրիստոս Աստուածն իմ և զնորին ճշմարիտ հաւատն ոչ ուրանամ։»

Ասաց փաշայն. «Գուցէ բանդագուշեալ և ի խելաց թափեալ իցէ. տարեալ պահեցէք, զի թերևս ի խելս և ի զգօնութիւնս դայցէ։»

Եւ տարեալ պահեցին ժամս երկու. և մահմետականքն ամենեքեան առ նա եկեալ աւաղէին և խնայէին և ասէին. «Մի կորուսաներ զվայելուչ մանկութիւն քո»։ Եւ նա ոչ հաւանեցաւ բանից նոցա։

Դարձեալ կոչեաց փաշայն զԽաչատուրն առաջի իւր, և քան զառաջինն բարութիւնս աւելի խոստացաւ տալ նմա, միայն թէ ուրանայ զքրիստոսական հաւատն, և դաւանի զմահմետական հաւատն. և Խաչատուր ոչ ուրացաւ. ապա այնուհետև փաշայն ետ հրաման և զվճիռ սպանանել զնա։

Յայնժամ եկեալ դահճացն՝ իբրև զգազան արիւնախանձ պատեցան շուրջ զնովաւ, և մերկացուցին զնա ի զգեստուցն և կապեցին ձեռս ի յետս, և առեալ տանէին ի տեղի սպանման. և մունետիկն՝ որ է ջառչի, հրատարակելով գնայր առաջի նորա։

Եւ ժողովեցան ի վերայ նորա բազմութիւնք մահմետականաց՝ իբրև զաւազ ծովու անթուելի, որ ոչ բաւէր վայրն տանիլ զնոսա. և իբրև զգազան կատաղի կրճտէին զատամունս իւրեանց ի վերայ նորա. հար-

3. վկայ էք բառից յետոյ G աւելացնում է. Ես վասն գանձի և մեծութեան ձեր սուտ հաւատն ոչ ընդունիմ և զիմ ճշմարիտ հաւատս ոչ ուրանամ. այլ պատրաստ եմ մեռանիլ վասն անուանն Քրիստոսի։ 6. փխ. ասաց փաշայն G ունի և փաշայն իբրև ետես զհաստատութիւն միտս նորա, թէ ոչ կամի ուրանալ զՔրիստոս, ասաց ցամբոխն վասն սորոյն թէ ... | տպ. և K բանտագուշեալ. 7. տպ. պահիցէք. 9. տպ. պահիցին. 11. G քո-ից յետոյ շարունակում է. հաւանեմ հրամանաց փաշային և մեծ փառաց հասանիս։ Եւ նա ոչ ...

կանէին, կափահարէին և ընդ քարշս տանէին։ Եւ այնպիսի հանեին զնա ի միջին բերդէն. և իբրև ելին ի դրանէ բերդին, անդէն առաջի դրան միջին բերդին, որում Նոր Դուռն ասեն, ասաց սուրբն Խաչատուր դահճացն թէ «Քերթեցէք զիս վասն հաւատոյ իմոյ և սիրոյ՝ զոր ունիմ առ Քրիստոս Աստուածն իմ»։

Յայնժամ անօրէն և մարդադէմ գազան դահիճքն պատառեցին զմորթ մարմնոյ նորա՝ յաջոյ ուսէն մինչև ցձախոյ ուսն. և քերթեցին զկաշին թիկանցն և իջուցին մինչև ցքամակն, և շրջեցին զկաշին ի վերայ միջացն. այլ և յառաջուստ կողմանէ քերթեցին զմորթ լանջացն՝ մինչ ի ներքոյ ստեանցն, և շրջեցին զմորթն ի վերայ փորին։

Եւ ապա տարեալ շրջեցուցանէին ի մէջ քաղաքին՝ ի շուկայս և ի պողոտայս, ի փողոցս և ի հրապարակս. և ի տեսիլ զարմանալի գործոյն ամենայն որք ճեպով ընթանայր, այր և կին, ծեր և տղայ, միանգամայն և տնարգել աղջկունք. և ամենայն տեսողաց մարմինքն դողացեալ սարսռէին։ Իսկ տեսիլ կերպարանաց սրբոյն Խաչատրոյ զուարթ էր և պայծառ, իբրև զհրեշտակի Աստուծոյ, և ոչինչ կասիր յայնքան տանջանացն։ Այլ և ինքն Խաչատուր յառաջագոյն ուսեալ էր բազում Նասիմի խաղեր, զոր Նասիմին ինքն ասացեալ է ի վերայ իւրում նահատակութեանն և ի վերայ տնօրէնութեան Քրիստոսի աստուածաբանութիւն, զայն խաղերն արդէն այժմ այս Խաչատուրս ի վերայ իւրում քերթելոյն բարձրաձայն եղանակաւ երգէր և շրջէր ի մէջ քաղաքին յամենայն տեղիս, ուր և տարան զնա դահիճքն։

Իբրև աւարտեցաւ շրջեցուցանելն, ապա ածին զնա դահիճքն ի մէջ մեծ մէյդանին, ի տեղին՝ յորում զմահապարտաց զգլխատս և զոտսն խորտակեն. և մահմետականքն

4. տպ. Թէ Թէ. 13. G փոքրին բառից յետոյ շարունակում է. և երանելին խաչատուր զայսպիսի դառն տանջանաց համբերէր վասն սիրոյն քրիստոսի։ Եւ ապա տարեալ ...

*պահէ ի պահ առաւել ևս ժողովէին և բազմանային. այլ և քրիստոնեայք ևս բազումք եկին, և ժողովեցան ի տեղին՝ և տեսանէին զայն։*

*Խօսեցան դահիճքն ընդ Խաչատրոյն թէ «Մի ևս յամառիր և դիմանար հրամանաց իշխանաց. դարձիր յօրէնս մեր, և փրկեա զանձն քո ի մահուանէ, զի տակաւին դոյ քեզ հնար կելոյ՝ և դեղօք բժշկելոյ»։ Սոյնպէս և այլ մահմետականքն և իշխանք ասէին՝ թէ «Գոնեա բան մի միայն ասա ի դաւանութենէ մերոյս հաւատոյ, և այն բաւական է մեզ առնել զպատճառ՝ և այնու ապրեցուցանել զքեզ»։*

*Այլ և ոմանք ի մօլլաներացն ասէին ցԽաչատուր. «Թէպէտ և մեռանիս և կորուսանես զմանկութիւն քո և զրկիս յայսմ կենացս, այլ զի մի և զհոգի քո մեռուցես և յայնմ կենաց ևս զրկիցիս, արդ՝ ի զրաւ քոյոյ կենացդ տուր դաւանութիւն հաւատոյն Մահմետի, զի կեցցէ հոգի քո, և ժառանգեսցէ զանանց կեանսն»։*

*Եւ սուրբն Խաչատուր բնաւ ոչ ումեք հաւանեցաւ, այլ իւրաքանչիւրոց ըստ պատշաճին տայր պատասխանի, և անշարժ կայր ի վերայ հաւատոյս քրիստոնէութեան, և համարձակ և անխափան զՔրիստոս Աստուած դաւանէր։*

*Եւ յառաջ ժամանակաւ հաստատեալ էին ի մէջ մէյդանին վէմ մի՝ յորոյ վերայ խորտակէին զձեռս և զոտս մահապարտաց։ Ասացին դահիճքն ցԽաչատուր. «Որովհետև յամառիս և ոչ լսես մեզ, արդ՝ տարածեա զձեռսդ քո ի վերայ վիմիդ՝ զի խորտակեսցուք»։*

*Եւ նա յօժար կամօք իւրովք տարածեաց զձեռսն ի վերայ վիմին, և դահիճքն հարին կացնաւ և խորտակեցին զբազուկսն երկոցունց ձեռացն։ Ապա խնդրեցին զոտսն, և նա տարածեաց զերկոսին ոտսն. և դահիճքն խորտակեցին զոլոքս երկոցունց ոտանցն. և սուրբ արիւն նորա՝ որ յորդառատ հեղանէր յանձնէն, թաթաւեալ էր զամենայն մարմինն, և թացեալ*

8. տպ. բան. GK բան մի. 31. տպ. յորտառատ.

Digitized by Google

էր զվայրն ամենայն։ Այնուհետև ոչ ևս կարաց նստիլ, այլ անկեալ պարզեցաւ ընդ երեսս գետնոյն։

Իսկ քրիստոնեայք, որք շրջապատեալ հայէին, աղիողորմ ողբօք և արեան արտասուօք լային։ Սոյնպէս և մահմետականք բազում լային արտասուօք՝ և հայհոյէին զօրէնս և զառաջնորդս և զիշխանս և զդատաւորս իւրեանց, և ամենեքեան սոսկացեալք զարմացեալք ապուշ մնային. և հարցանէին զմիմեանս թէ «Արդեօք իցէ ումեք ի ձէնջ տեսեալ այսպիսի գործ». քանզի յոյժ սարսափելի էր տեսիլ գործոյն։

Եւ այնուհետև սուրբն Խաչատուր յոյժ նուաղեցաւ ի սաստիկ և ի կարծրագոյն տանջանացն. և տապէր և պապակէր ի ծարաւոյ. վասն որոյ աղաչեաց զարսն, որ շուրջն կային, և խնդրեաց ի նոցանէ ջուր. և գթացեալ առ նա ոմանց՝ գնացեալ բերին նմա ջուր խեցեաւ ամանոյ ինչ՝ և այնու խեցեաւն էարբ զջուրն։ Այլ և աղաչեաց սուրբն Խաչատուր զմերձ կացեալ քրիստոնեայսն՝ գնալ առ քահանայս և բերել ինքեան հաղորդ։ Եւ քահանայքն վասն երկիւղի մահմետականաց՝ ինքեանք ոչ եկին, այլ զհաղորդն եդին ի մէջ հացի, և ետուն ցքրիստոնեայսն. և նոքա բերեալ ետուն ցԽաչատուր. և նա առեալ ճաշակեաց զհացն հաղորդաւն՝ և գոհացաւ զԱստուծոյ. և այնպիսի խողխողեալ անդամօք անկեալ կայր ի մէջ թէատրոնին՝ մինչ ի նսեմանալ երեկոյին։

Իսկ Բաղիշեցի Խաչատուր վարդապետն և Բալուեցի Սամուէլ աբեղայն ի նսեմանալ երեկոյին եկին առ սուրբն Խաչատուր, և ի վերայ սրբոյ մարմնոյն անկեալ՝ կսկծագին այրմամբ լային և համբուրէին զսուրբ գլուխն նորա. և արդահատեալ մխիթարէին զնա յուսադրական բանիւք՝ և հաստատէին ի հաւատս։

Ասաց սուրբն Խաչատուր ցԽաչատուր վարդապետն. «Գիտես իսկ զի ոչ ունիմ ձեռն՝ որով կալեալ զսուրբ աջն քո համբուրեմ. վասն որոյ խնդրեմ ի քէն, մատո

2. տպ. ընդ ընդ երեսս. 6. տպ. իւր. GK իւրեանց։

Digitized by Google

զսուրբ աջդ քո ի շրթունս իմ, զի համբուրեցից»:

Եւ վարդապետն մատոյց զաջն իւր ի սուրբ շրթունս Խաչատրոյ, որ համբուրեաց փափագանօք: Այլ և ասաց սուրբն Խաչատուր առ վարդապետն. «Խնդրեմ ի քէն աղօթել վասն իմ»:

Պատասխանեաց վարդապետն. «Որդեակ, մեք թէպէտ ունիմք զկարգ և զաստիճան քահանայութեան, այլ մեղաւոր եմք և պարտական առաջի Աստուծոյ. իսկ դու շնորհօքն Քրիստոսի և քոյով նահատակութեամբն գտեր ողորմութիւն ի Տեառնէ և բացեր քեզ զճանապարհ արքայութեան Աստուծոյ, և ունիս համարձակութիւն առաջի Քրիստոսի.՝ վասն որոյ դու բարեխօսեա վասն մեր»: Եւ վասն երկիւղի մահմետականացն ոչ կարացին յոլով ժամս կալ առ նա, այլ առին զաղօթս սրբոյն և փութանակի դարձան ի տեղիս իւրեանց:

Եւ մնաց սուրբն Խաչատուր այնպէս խողխողեալ մարմնով կենդանի, մինչ որ էանց մէջ գիշերոյն. և ապա աւանդեաց զսուրբ հոգին իւր առ Աստուած որպէս խունկ անոյշ:

Եւ յետ աւանդելոյ հոգւոյն սրբոյ, փառաւորեաց զնա Տէրն Քրիստոս. զի լոյս պայծառ էջ յերկնից ի վերայ նորա, և եկաց յօդուտ ժամս. զոր և տեսին զօրականքն, որք մերձն կային և պահէին զնա. այլ և խանութպանք յոլովք, որք մերձ էին և արթունք, այլ և արքն՝ որք ի մէջ մզկթանին ի վերայ տախտակացն ննջեալք էին, զի ամառնային էր ժամանակն, ամենեքեան տեսանէին զլոյսն, և փառաւորէին զԱստուած, և երանի տային սրբոյն Խաչատրոյ, և վկայէին վասն հաւատոյս քրիստոնէութեան ճշմարիտ գոլ, որոյ վասն այսպիսի նշան յերկնից երեւեցաւ: Եւ ի ծագել լուսոյ առաւօտուն ընդ ամենայն տեղիս հռչակեցաւ համբաւս այս. և որք լսէին, փառաւորէին զԱստուած:

Իսկ ի լուսանալ աւուրն՝ քրիստոնեայքն մատեան առ զադին և առ փաշայն, և խնդրեցին հրաման տալ թաղել

17. GK մէջ. տպ. ի մէջ.

Digitized by Google

զսուրբն. և նոքա եառուն հրաման. այլ և տասն և հինգ ղուռուչ էառ սուպաշին։ Եւ ապա քահանայ մի և ութն աշխարհական եկին և բարձին զմարմին սրբոյ նահատակին ի վերայ դագաղի և տարան ի գերեզմանատունս Հայոց. ուր ժողովեցան անթիւ բազմութիւնք քրիստոնէից, ոչ միայն Հայք, այլ և Հոռոմք և Ասորիք և Եաղուբիք, այլ և յոլովք մահմետականք, ոմանք ի զբօսնուլ և ոմանք ի զննել։ Եւ քրիստոնեայք ամենեքեան ջերմեռանդ փափագանօք համբուրէին զսուրբն, որ և պահեցին զնա մինչև ցվերջին աւուրն վասն համբուրելոյ ժողովրդոցն. զի գրեթէ ոչ էր մնացեալ ժողովուրդ ի քաղաքին, որ ոչ էր եկեալ ի թաղումն սրբոյն. որք ողբային զինքեանս և երանէին զսուրբն և մխիթարէին զծնողս նորա. և մեծաւ փառօք թաղեցին զսուրբն ի կարգս նահատակացն։

Իսկ ի գիշերին յայնմիկ միւսանգամ Տէրն Քրիստոս փառաւորեաց զնահատակն իւր, զի միւսանգամ լոյս պայծառ էջ յերկնից ի վերայ սրբոյ գերեզմանին նորա, զոր տեսին պահնորդ քրիստոնեայքն, որք վասն խորամանկելոյ մահմետականացն զգուշացան գերեզմանին, զի մի նենգեսցեն։ Այլ և բազում արք քրիստոնէից՝ որք վասն սիրոյ սրբոյն մնացին զգիշերն զայն անդէն ի գերեզմանատունսն, տեսին զլոյսն, և յառաւօտուն եկեալ պատմէին ամենեցուն։

Եւ արդէն իսկ բժշկութիւնք բազում կատարին ի սրբոյ գերեզմանէ նորա ի վերայ ցաւագարաց և հիւանդաց, որք հաւատով դիմեն առ նա։ Այլ և խեցին այն, որով ջուր էարբ սուրբն Խաչատուր՝ բժշկութիւն կատարէ. զի հիւանդաց որոց վերայ հեղուն ջուր խեցեաւն այնուիկ, գտանեն առողջութիւն աղօթիւք սրբոյ Խաչատրոյն, և շնորհօքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. որում փառք յաւիտեանս ամէն։

Այլ և շնորհքն աստուածային վասն պատուոյ և սիրոյ

1. տպ. տասնհինգ. GK ժե. 32. Այլ և շնորհք...Աստուծոյ բարեբարին հատուածը, այն է տող 32—էջ 464, տող 28 չունին GKMp ձեռագրերը.

նահատակին իւրոյ սրբոյն Խաչատրոյ՝ արար այսպիսի խնամս ի վերայ ժողովրդեան իւրոյ քրիստոնէից, զի յաւուր թաղման սրբոյն՝ մահմետականք՝ որք եկեալ էին անդ ի գերեզմանատունսն, ոմանք ի նոցանէ զչարացան և նախանձաբեկք եղեն ընդ փառաւոր թաղումն սրբոյն Խաչատրոյ, և գնացին առ փաշայն և չարախօսք եղեն զքրիստոնէից, թէ «Ժողովեցան քրիստոնեայքն ամենեքեան ի վերայ սպանելոյն այնորիկ, և իբրև զվկայ և զնահատակ բազմախումբ հանդիսիւ և մեծաւ փառօք թաղեցին զնա. և այնու ցուցանեն զիւրեանց հաւատն ճշմարիտ գոլ, և զմեր հաւատս սուտ»։ Վասն որոյ հրամայեաց փաշայն, թէ «Զգոյշ կացցեն զօրականք յանցս ճանապարհաց, զի ի վաղուեան աւուրն՝ յորժամ գնասցեն քրիստոնեայք ի գերեզման սպանելոյն վասն այգահող կատարելոյ, յայնժամ զամենեսեան կալեալ և բերեալ արասցեն ի կալանս, զի ես դատապարտեալ զնոսա տուգանեցից»։ Իւ զայս չարախօսութիւնս և զխորամանկութեան խորհուրդս ոչ գիտէին բնաւ քրիստոնեայքն, այլ Աստուած փրկեաց զժողովուրդն իւր սուղ ինչ պատճառաւ։ Զի յայնմ աւուր այր մի փաշային և այր մի քաղաքացի սպահի պատուաւոր՝ կռուեցան ընդ իրեարս, և որք քաղաքացի սպահիք և ենկիչարիք էին զինուորական դասք, քամահանս ինքեանց համարեալ զայն՝ վրէժխնդիրք եղեն, և կանգնեցան ի կռիւ ընդ փաշային, և արգելեալ փակեցին զփաշայն զօրօքն իւրովք ի մէջ միջին բերդին շաբաթ մի. և փաշայն և քաղաքացիքն այնու խռովութեամբն պատաղեալք եղեն, և քրիստոնեայքն ազատեցան բարեխօսութեամբ սրբոյն Խաչատրոյ և ողորմութեամբն Աստուծոյ բարերարին։

Եւ եղև նահատակութիւն սրբոյն Խաչատրոյ ի թուականութեանս Հայոց ՌՃԱ, յօգոստոս ամսոյ Ի, ի կաթուղիկոսութեան տեառն Փիլիպպոսի՝ որ ի բարձրագահ աթոռն ի սուրբ Էջմիածին, և ի թագաւորութեան Օսմանցւոց սուլթան Մահմատին, որ նստէր ի Կոստանդնուպօլիս մեծ քաղաքին։

Digitized by Google

Եւ արդ խնդրեսցուք մեք հաւատացեալքս, զի զամենայն քրիստոնեայս ազատեսցէ ի մարդադէմ գազանաց և յանիրաւաց, բարեխօսութեամբ սրբոց իւրոց Տէրն մեր Յիսուս Քրիստոս. որում փառք յաւիտեանս ն ամէն։

Սոյն արտառուչ վկայաբանութիւնը արտատպում ենք Առաքել վարդապետ Դաւրիժեցու Պատմութիւնից, տպ. Վղրշպտ. 1884, էջ 410—418, գլուխ ԽԵ. «Պատմութիւն նահատակութեան խոստովանող վկային Քրիստոսի սրբոյն Խաչատրոյ»։

Առաքելի գրած սոյն վկայաբանութիւնը անցել է նաև Յայսմաւուրքների մէջ. մեր Յայսմաւուրքներից միայն GHK ունին այն. բացի սոցանից նաև p ձեռագիրը որ սրբերի վարքագրութեանց մի փոքրիկ ժողովածու է, Յայսմաւուրքներից արտագրուած։ Այսպէս՝ G Նաւասարդ ժ-օգոստոս 20, որբունհի Վասայի և Տիրամօր պատկերի պատմութիւններից յետոյ՝ այս վերնագրով. «Յայսմ աւուր նահատակութիւն նոր վկային քի սրբոյն Խաչատուրի», էջ 23 բ′—26 բ′. H արաց Բ-մարտ 10, Թէոդոսիայի, Հիւսիքոսի և Անդամալոյծի պատմութիւններից յետոյ՝ այս վերնագրով. «Յայսմ աւուր յիշատակ նահատակութե խոստովանօղ վկային Խաչատուր սրկգին», էջ 333 ա′—334 բ″. K ահկի Թ ապրիլ 16, Արդալոնի կատակողի և ս. Սմբատ Բագրատունի Թագաւորի պատմութիւններից և ս. Անոյշի յիշատակութիւնից յետոյ՝ այս վերնագրով. «Պատմութի նահատակութե խոստովանօղ վկային քի սրբոյն Խաչատրոյ», էջ 419 ա″—422 ա″. p մարտի 10, այս վերնագրով. «Պտմուի նոր վկային քի սրբոյն

1. Եւ արդ ... վերջաբանութիւնը, որը յապաւում են HKp ձեռագրերը. G ընդարձակում է հետեւեալ ձեւով. Եւ արդ եկայք մեք հաւատացեալքս Քրիստոսի Աստուծոյ խնդրեսցուք հաւատով, զի կմեզ ազատեսցէ Տէր Աստուած մեր ի չար փորձանաց, ի մարդադէմ գազանաց, ի քարասիրտ բռնաւորաց, ի յանիրաւ պահանջողաց, ի սատանայական հնարից, ի մարդկան որոգայթից, բարեխօսութեամբ քաջ և յաղթող վկային, մեծահա-դէս և բազմաչարչար նահատակիս այս՝ սրբոյս Խաչատուրիս, խոստովանօղ վկայիս Քրիստոսի Աստուծոյ։



Digitized by Google

Խաչատրոյ որ մս քրիս՝ էջ 64 ա—69 բ։ Հմմտ. նաև Յայսմ. Բ տպ. էջ 420 բ—422 ա, Դ. տպ. հատ. Բ. 89′ 90″ և վերջապէս Զամչեան, Գ. էջ 654—655։

Աւելորդ համարեցինք սոյն չորս ձեռագրերի, ինչպէս և տպագրեալ Յայսմաւուրքների ձեռագրական տարբերութիւնները նշանակել, երբ մեր իսկական բնագրի երկրորդական փոփոխութիւններ։ Բայց կարևոր ենք կարծում դնել այս տեղ չորս ձեռագրերի առնչութիւնը իրարի և Առաքելի բնագրի հետ։

G ձեռագիրը այստեղ էլ (ինչպէս Ընդրէաս քահանայի վկայաբանութեան մէջ) բնագրի հետ գրեթէ համընթաց գնում է. մէկ երկու աննշան յաւելուածները, որ իրանից մտցրել է բնագրի մէջ, արդէն նշանակել ենք վերևում։ G-ի հակառակ դիրքն ունի K, որ փոխանակ նոր յաւելուածներ մտցնելու՝ աշխատում է երբեմն երբեմն բնագրից մի քանի բառ կամ մի քանի տող ողել, համառօտել։ K-ից յետոյ գալիս են H և p ձեռագրերը, որոնք ընդարձակ յապաւումներով բնագրի գրեթէ կէսն են պահում. բայց կրճատման, կամ աւելի ճիշտ խօսելով նոր խմբագրութեան մէջ, այս երկու ձեռագրերը իրարից բոլորովին անկախ են. այսպէս Բաղիշեցի Խաչատուր վարդապետի և Բալուեցի Սամուէլ աբեղայի այցելութեան միջադէպը, որ մեր վկայաբանութիւան ամէնից աւելի սրտաճմլիկ մասն է ապահովապէս (տես վերը, էջ 461—2), ամբողջովին ջնջուած է H-ի մէջ, բայց p-ի մէջ գրեթէ անփոփոխ պահուած է. ընդհակառակը p շատ համառօտում է Խաչատուրի դատաւարութիւնը. նա բոլորովին անհետ ջնջում է մուֆթիի դատաստանն ու տուած ֆաթվան՝ ինչպէս և փաշայի երկրորդ դատաւարութիւնը. մնացեալն էլ կրճատում է մի քանի տողի, մինչդեռ այս բոլորը միայն թեթև համառօտութիւն են կրած H-ի մէջ։

Digitized by Google

80.

## ՍԻՐՈՒՆ ԱԼԻՒՐՑԻ

✝ Ռ․ՃԴ․ = 1655 օգոս․ 5

Այր ոմն՝ որում անունն էր Սիրուն, և էր սա յաշխարհէն Վասպուրականի, ի գաւառէն Գնունեաց՝ որ այժմ ասի Ամուկ, ի գեղջէն՝ որ կոչի Ալիւր. և էր ինքն ազգաւ Հայ և հաւատով քրիստոնեայ, և քրիստոնէից զաւակ, ունէր մայր և եղբարք, որք մուծին զնա ի կարգ աշխարհի, և ածին նմա կին. և վասն մարմնաւոր կարեաց իւրոց այրս այս Սիրուն յարեցաւ առ այլազգի մահմետական ոմն, առնոյր ի նմանէ վարձս, և ծառայէր նմա պաշտականութեամբ վասն վարձուն։ Եւ եղև յաւուրս գարնայնոյ, զի տէրն Սիրունին առաքեաց զնա ի քաղաքն Ղլաթ, զի բերցէ միրգ վասն ընտանեաց իւրոց առ ի ուտել. և նա գնացեալ էառ կեռաս, եբարձ ձիոյն, և եբեր ի Վան քաղաք։ Եւ մինչդեռ ի մէջ քաղաքին Վանայ քարշէր զձին բեռամբն ի մէջ պողոտային, եկին ժողովեցան ի վերայ նորա մանկունք մահմետականաց, և իւրաքանչիւր ոք ընթացեալ յափշտակէր կեռաս ի բեռանէ անտի. իսկ Սիրուն ոչ թողոյր յափշտակել, այլ հալածէր զմանկունսն։ Եւ ոմն ի մահմետականաց մանկանցն առեալ բռնաքար և եհար զՍիրուն քարիւն. իսկ Սիրուն առեալ զքարն ձգեաց առ ձգօղն, և դիպեցաւ քարն ի գլուխ

տղային և վիրաւորեաց, և այնու պատճառաւ անկաւ մանուկն ի մահիճս և հիւանդացաւ ամիսս երկու, և յետոյ սատակեցաւ տղայն ի պատճառէ վիրացն։ Իսկ տէրն Սիրունին փախոյց զՍիրունն, զի թերևս փրկեսցի ի ձեռաց մահմետականաց. իսկ Սիրունն գնաց ի գիւղն իւր յԱլիւր ի տուն իւր։

Իսկ Ալիւր գեղջ շահնէքն՝ որք էին մահմետականք, ըմբռնեցին զՍիրուն և տարին ի կալանս. իսկ քրիստոնեայք գեղջն յոլով կաշառս ետուն շահնացն, զի թողցեն զՍիրուն, և նոքա ոչ թողին, այլ զգացուցին ընտանեաց սատակեալ մանկանն. և նոքա լեալ վրէժխնդիր արեան մեռելոյն՝ գնացին առ փաշայն, առին զօրականս և առաքեցին զկնի Սիրունին. որոց գնացեալ ածին զՍիրունն ի քաղաքն Վան առ փաշայն։ Իսկ փաշայն առաքեաց առ դատաւորն և առ մուֆթին, և եհարց թէ «Զինչ հրամայեն օրէնքն Մահմետի վասն առնս այսորիկ. մահապարտ գոլ և մեռանիլ, թէ անպարտ գոլ և ազատիլ։» Եւ նոքա ոչ համարեցան զՍիրունն մահապարտ, այլ անպարտ և ազատ. վասն որոյ և փաշայն ոչ սպան զՍիրունն։

Բայց սուխտէք քաղաքին, որք ծարաւիք են արեան քրիստոնէից, ոչ անսացին փաշային և դատուն և մուֆթոյն, այլ գումարեալք ի միասին երկու և երեք հարիւր սուխտայք և գրոհ տուեալ ժողովեցան ի վերայ անպարտ երիտասարդ Սիրունին, ամենեքեան մերկացուցեալ զսուրս իւրեանց ի վերայ Սիրունին՝ թուր և խանջալ, մեծաձայն խրոխտանօք ահացուցանէին զնա՝ թէ «Դարձիր ի հաւատս Մահմետի և տաճկացիր. ապա թէ ոչ սրախողխող և քարկոծ լեալ մեռանիս ի ձեռաց մերոց»։ Այլ և բերին բարակ պարան, և նովաւ ամրագոյն պատեցին զերկոսին բազուկսն յուսոցն մինչև ցթաթս ձեռացն՝ սաստիկ պնդու-

2. տպ. յամիսս երկու. KL ամիսս երկուս. G բ ամիս. 22. տպ. գումարեալք. KL գումարեալ. G ժողովեցան. 28. G մերոց բանից յետոյ ունի. Եւ սուրբն Սիրուն ասէր. «Ես զՔրիստոս Աստուածն իմ ոչ ուրանամ. և դուք զինչ և կամիք առնել՝ արարէք»։ 30. տպ. ուսոցն. G ուսուցն. KL յուսոցն.

Digitized by Google

թեամբ. և ի սաստիկ պնդութենէն պայթեալ հերձան բերան եղնգացն, յորոց հոսեալ արիւնն հեղանէր ի ձեռացն. այլ և զբազմազոյն աեսակս տանջանաց ածին ի վերայ նորա, հարկանել և կառափնատել և ընդ քարշս տանել, և անսուաղ պահել ի կալանս, և ամենեքեան իբր զկատաղի գազան զատամունս ի վերայ կրճտել, և իւրաքանչիւր ոք զսուր իւր ի վերայ նորա շողացուցանել, և ասել թէ «Տաճկացիր, ոչ միայն փրկիս ի մահուանէ, այլ և բազում արդիւնս և բարութիւնս հասուցանեմք քեզ»։

Իսկ Միրուճն ոչ հաւանէր ասելով. «Զկրօնս հաւատոյ իմ ոչ թողում, և խաւար օրինաց ձերոց ոչ հաւանիմ»։ Այլ և մայրն և եղբարքն և այլք բարեկամք նորա հանապազ ասէին նմա լալով թէ «Այժմ վասն փրկելոյ զանձն քո առ երեսս դաւանեա զնոցա դաւանութիւնն, և յետոյ գնասցես յայլ յաշխարհս և յիշխանութիւնս քրիստոնէից, և անդ պաշտեսցես համարձակ զքրիստոնէական հաւատն քո»։ Եւ թէպէտ բազում աղաչեցին, սակայն նա ոչ էառ յանձն ասելով, թէ «Առօրեայ մահս՝ որ արդ հասեալ է ի վերայ իմ, նաև անդէն ուր և լինիմ պատահելոց է ինձ. և վասն սուղ ինչ ամաց կենացս զիարդ կորուսից զհաւատս իմ, և եղէց դատապարտեալ յԱստուծոյ»։ Եւ ինքն Միրուճ ուրախ էր և բերկրեալ սրտիւ վասն իւրոյ խոստովանութեանն և նահատակութեան, և վկայ էր դոյն երեսացն, որ օր յաւուր առաւել պայծառանայր տեսիլ երեսացն և դիմացն։

Իսկ մարդադէմ գազանք սուխտայքն յաւուրս քսան կապեալ զձեռս ի յետս, գլուխ ի բաց շրջեցուցանէին ի մէջ քաղաքին Վանայ, զի փաշայն և ղադին և մուֆթին ոչ տային հրաման սպանանելոյ. և վասն քինու նոցին միակամ եղեալ սուխտայիցն ամենեցուն՝ յաւուրս երիս արգելեալ խափանեցին զկանչելն, զոր ի գլխոյ մինարային կանչեն ի ժամ աղօթիցն իւրեանց, ասելով թէ «Խանդա-

2. G ի ձեռացն բառից յետոյ աւելացնում է. Եւ սուրբն Միրուճ համբերէր տանջանացն վասն սիրոյն Քրիստոսի.

րեալ խափանեցաւ և յերկիր սուզաւ հաւատս մահմետական, զի անհաւատ Հայ զմուսուրման՝ սպանեալ էր։

Եւ ըստ հանապազորդ սովորութեան, զոր կապեալ շրջեցուցանէին զՍիրուն, բերեալ հասուցին ի Նալբանդնոցի շուկայն. և անդէն ի սուխտայիցն ումն չարագոյն, որ ի ձեռին իւրում ունէր մերկ զխանջալն, ուժգին բախմամբ եհար ի թուլակուշտն Սիրունին, և նա անկաւ ի վերայ երեսացն. և այլ ոմն սուխտայ առեալ ծանր վէմ մի՝ եզորկ ի վերայ գլխոյ Սիրունին և ջարդեաց զգլուխն, և ի բաց ցնդեցաւ ուղեղ գլխոյն, և այնու էառ Սիրուն զվախճան կենաց, և մեռաւ։ Ապա եդին պարան յոտսն, և քարշեցին տարան արտաքոյ քաղաքին ի տեղին ուր զմահապարտսն սպանանեն. և անդէն զմեռեալ մարմինն քարկոծեցին, այնքան՝ մինչ որ ծածկեցաւ ի քարանցն, և ապա թողեալ ի բաց գնացին արեանարբու գազան սուխտէքն։

Եւ ի նմին գիշերի Տէրն Քրիստոս փառաւորեաց զնա լուսովն երկնային, որ էջ ի վերայ նորա, զոր ոչ միայն քրիստոնեայք, այլ և յոլով մահմետականք տեսին՝ և առ ամենեսին պատմէին. մինչև եհաս համբաւն առ նորին սպանօղ սուխտայսն, յորոց ոմանք եկեալ հաւաստեաւ տեսին՝ և գնացեալ պատմեցին այլոցն. և նոքա առաքեցին ի սպասաւորաց իւրեանց արս, որոց եկեալ գտին զմարմինն շանց մեռելոց, և բերեալ արկին ի վերայ սրբոյ մարմնոյ Սիրունին, զի թերևս ամփոփեսցի լոյսն. այլ լոյսն ոչ ամփոփեցաւ մինչև ցլուսանալ տունջեան՝ շնորհօքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ Իսկ ի վաղուեան աւուրն մատուցեալ քրիստոնէիցն առ փաշայն և առ ղադին՝ խնդրեցին հրաման թաղելոյ, որոց հրամանաւ եկին քրիստոնեայքն և բարձեալ տարան ի դիրս հասարակաց քրիստոնէից, և անդ թաղեցին զՍիրուն անուն խոստովանողն հաւատոյս քրիստոնէութեան։

16. տպ. փառաւորեանց. 20. G պատմեցին այլոցն և անաստուած սուխտայքն խորհուրդ արարին թէ զինչ հնարս արասցեն զի ծածկեսցի լոյսն և առաքեցին ի սպասաւորաց ...

Digitized by Google

Եւ եղև նահատակութիւն Միրունին ի ՌԾԴ թուական-նիս մերոյ, յամսեանն օգոստոսի, որ օր հինգն էր ամսոյն, ի կաթուղիկոսութեան տեառն Յակոբայ, որ ի գերագահ աթոռն ի սուրբ Էջմիածին, և ի թագաւորութեան Օսման-ցւոց սուլթան Մահմատին, որ նստէր ի Կոստանդնուպօ-լիս մեծ քաղաքին։ Իսկ վէմն այն՝ որով ջարդեցին զգլուխ սրբոյ Միրունին, այժմ լուանան և ի վերայ հիւանդաց հեղուն զջուրն, և հիւանդն առողջանայ շնորհօքն Քրիս-տոսի Աստուծոյ մերոյ, որում փառք յաւիտեանս ամէն։

Սոյն վկայաբանութիւնը արտատպում ենք Առա-քել Դաւրիժեցու Պատմութիւնից, տպ. Վղրշպտ. 1884, գլուխ ԽԶ. «Պատմութիւն նահատակութեան Միրուն անուամբ քրիստոնէին», էջ 418—421։ Նոյնը անցած է նաև Յայսմաւուրքներին. մեր Յայսմաւուրքներից ունին GKL. առաջինը G հրատից Լ= օգոստոս 5, Տա-պանակի և Ս. Ներսէս Կլայեցու պատմութիւններից յետոյ՝ այս վերնագրով. «Պատմութի նահատակութե քրիստոնէի միոյ, որոյ անունն Միրուն կոչի», էջ 600 ա′—601 բ′։ Երկրորդը K՝ էջ 474 բ′—475 ա″ և եր-րորդը L՝ էջ 416 ա′—417 ա″, մարերի ԺԱ= մայիս 18, Ս. Սողոմոնի, Պամփամիրի և Պամփալոնի վկայա-բանութիւնից յետոյ, նոյն Առաքելի վերնագրով։ Հմմտ. նաև Յայսմ. Գ. տպ. հատ. Բ. էջ 62″—63′, ինչպէս և Չամչեան, հատ. Գ. էջ 651։

Երեք ձեռագրերն էլ անփոփոխ պահում են Ա-ռաքելի բնագիրը. G-ի աւելցուցած ինչ ինչ տողերը՝ արդէն նշանակել ենք վերևում։

2. տպ. չունի օգոստոսի. GKL ունին.

Digitized by Google

# 81.

## ՄԽԻԹԱՐ ՎԱՆԵՑԻ

† ՌՃԴ=1655 Յուլ. 12

Այր ոմն Մխիթար անուամբ քրիստոնեայ՝ որ էր ի քաղաքէն Վանայ և յազգէն Հայոց, քրիստոնեայ ծնողաց զաւակ, և էր այրս այս Մխիթար երևելի ի մէջ քաղաքին Վանայ առաջի փաշային, և զաղուն և ենկիչար աղասուն և այլոց իշխանացն ամենեցուն, վասն զի կարի ձիավար էր և զինախաղաց և ուժեղակ, այլ և խելօք, կորովի, և խօսիւք քաղցրաբան, վասն որոյ ամենայն ենկիչարիքն և սպահիքն և յոլովք յիշխանացն նմա բարեկամք էին։

Եւ եղև զի ասացեալ Մխիթարս յաւուր միում ընդ իւրոց յարակից արանց նստեալ ի տան իւրում քնարիւք և երաժշտական նուագարանօք գինի ըմպեալ ուրախանային. և ի լսել երաժշտական եղանակին ժողովեալ յոլով տղայք մահմետականաց ի դուրս և յերդիս և ի վերայ որմոց զքօսնուին։ Իսկ հայրն Մխիթարայ ելեալ առ տղայսն՝ ի բաց վարէր ի տեղւոջէն, և ոմանք ի տղայոցն հակառակեալ հարին զնա, և նա գնացեալ ի տուն պատմեաց թէ «Տղայքն հարին զիս»։

Յայնժամ Մխիթար ըստ արիական քաջութեան իւրոյ շարժեալ ի ցասումն բարկութեան՝ ելեալ ի տանէն մերկ ունելով զխանջալն ի ձեռին իւրում, և սկսաւ հետամուտ լինել զկնի մանկանցն, և հալածելով հայհոյութեամբ անարգէր զհաւատս և զօրէնս մահմետականաց։ Եւ ի նմին ժամու

Digitized by Google

այր ոմն մահմետական՝ անունն Հաջի Էիբ, որ էր մերձակայ դրացի Մխիթարին, տեսանէր և լսէր զհայհոյանս և զանարգանս, զոր տայր Մխիթար մահմետական մանկանցն. ասաց մեղադրանօք առ Մխիթար. «Լուեալ ի հայհոյանացդ, զի անպատեհ է զայդքան հայհոյանս տալ մանկանց, որք են մահմետական հաւատով»:

Իսկ Մխիթար թողեալ զմանկունսն, և սկսաւ հետամուտ լինել զկնի Հաջի Էիբին և հալածելով հայհոյէր. և ի հալածելն պատահեցաւ անդէն եղբայր Ղուլլար աղասուն. և նա ևս մեղադրանօք ասաց Մխիթարին. «Մի՛ առներ զայդպիսի անպատեհ գործդ». իսկ Մխիթար դարձեալ ի նա, և սկսաւ բարկութեամբ զնա ևս հայհոյել:

Իսկ որ Հաջի Էիբն էր՝ գնացեալ առ սուխտային և ամբաստան լինելով զՄխիթարէն, սկսաւ վշտագին սրտիւ պատմել նոցա զբանս և զգործս Մխիթարի: Ցայնժամ ժողովեալ բազում սուխտայք ի միասին՝ եղեն վրէժխնդիրք անարգանացն հաւատոյ Մահմետի. գնացեալ ծանուցին փաշային, և առին ի նմանէ զզօրականս և եկեալ կալեալ կապեցին զՄխիթարն և տարան ի բանտն փաշային, և արարին բանտարկել:

Իսկ Վանայ Վերին բերդի ենկիչարիքն՝ որք էին բարեկամք Մխիթարին, անտեղեակք էին այսոցիկ. և յորժամ լուան թէ կալան զՄխիթար և արկին ի բանտ, յայնժամ յիսուն ենկիչարի և երկու չօրվաջի եկեալ՝ ի գուրս հանին ի բանտէն զՄխիթար, և առեալ տարան ի Վերին բերդն ի մէջ իւրեանց, և անդ պահեցին աւուրս երկուս. իբրև տեսին թէ հանդարտեցան սուխտայքն և այլ մահմետականքն, և ոչինչ ասեն զՄխիթարէն, թողին զնա, որ գնաց ի տուն իւր:

Իսկ անօրէն սուխտայքն վերստին ժողովեցան, և գնացեալ կալան զՄխիթար, կապեցին և տարան առ փա-

4. G լուեալ ի հայհոյութեանցդ. դու հայ լինիս և զայդքան անպատեհ հայհոյանս տաս տղայոց՝ որք են մահմետական հաւատով:
31. M տարան առ փաշայն, և ամբաստան եղեն զնմանէ թէ «Դա յայտ-

շայն. և փաշայն առաքեաց առ մուֆթին և առ ղադին, եհարց թէ «Զի՞նչ հրամայեն օրէնքն Մահմետի վասն առնս այսմիկ. սպանանե՞լ թէ ոչ»։ Եւ նոքա ոչ ետուն զհրաման սպանման, վասն որոյ և փաշայն ոչ սպան, այլ հրամայեաց թողուլ ազատ։

Իսկ որ սուխտէքն էին՝ ոչ թողին, այլ կապեալ զձեռսն ի յետս և գլուխ ի բաց և բոկոտն, այսր և անդր շրջեցուցանէին ի դրունս իշխանաց, հարկանէին, կառափնատէին, թքանէին, և պէսպէս կերպիւ տանջէին, և ասէին. «Ուրացիր զհաւատն քո, և պաշտեա զմեր հաւատս. ապա թէ ոչ սրախողխողեալ և քարակոծ լեալ մեռանիս ի ձեռաց մերոց»։ Զայսպիսի բանս ասելով մերկացուցեալ զսուրս իւրեանց, զոր ի ձեռսն ունէին, խաղացուցանէին ի վերայ նորա։

Իսկ Մխիթար յամենայն տեղիս ուր և շրջեցուցին զնոսա, բարձրաձայն և համարձակ առաջի ամենեցուն հայհոյէր զՄահմետ և զնորին հաւատն և զօրէնսն. և բազում բանիւք անարգէր, ոչ թէ զմի օր՝ այլ յամենայն աւուր, և արիութեամբ սրտի իւրոյ ասէր. «Վասն սնոտի և դուզնաքեայ մահուան միթէ երկուցեալ ի ձէնջ ուրանա՞մ զհաւատն իմ ճշմարիտ, և զՏէր Աստուածն իմ զՔրիստոս»։ Այլ և ամենայն բարեկամք Մխիթարին և ծնողքն և յարակից երիտասարդքն եկեալ առ նա՝ մաղթելով ասէին թէ «Առ ի հաճել սուխտայիցն՝ առ երեսս և առ ժամաւս տամ բան ինչ, և յետոյ գնացեալ յայլ աշխարհ պաշտեսցես զհաւատն քո»։ Իսկ Մխիթար ամենեւին ոչ հաւանեցաւ բանից նոցա, այլ արիական սրտիւ և պայծառ դիմօք և համարձակ դաւանէր զՔրիստոս Աստուած առաջի սուխտայիցն՝ և անարգէր զօրէնս Մահմետի։ Այլ և փաշայն և ենկիչար աղա-

նապէս անարգեաց և հայհոյեաց զօրինադիրն մեր զՄահմետ»։ 3. GK եւ տպ. այսմիկ. միայն M ուղղում է այսօրիկ. 22. G զՔրիստոս բառից յետոյ դիտ. շարունակում է. ոչ ուրանամ, այլ պատրաստ եմ մեռանիլ վասն անուանն Քրիստոսի։ 23. տպ. և K յարակիցք. G յարակից.

Digitized by Google

սին տաւաքեցին առ Մխիթար և խոստացան տալ նմա բազում գանձս և ստացուածս, և պատուական ձիս և զէնս, և պետական իշխանութիւնս, զի թերևս առասցէ զբան ինչ ի հաճոյս սուլտայիցն, և զերծուսցէ զանձն իւր ի մահուանէ. քանզի կարի յօժար կամօք խնայէին ի նա վասն արիագոյն և զարմանալի քաջութեան նորա. և Մխիթար ոչ հաճեցաւ ի բանս նոցա վասն քրիստոսական հաւատոցն։

Իսկ սուլտէքն հանապազօր այսր և անդր ի դրունս իշխանացն շրջեցուցանէին, քանզի փաշայն և ղադին և մուֆթին ոչ ետուն հրաման սպանանելոյ. որոյ վասն զայրացան սուլտէքն, և զամենայն մաչիթաց կանչելն արգելին, զոր ի ժամ աղօթից իւրեանց ելեալ ի գլուխ մինարային կանչեն. զայս կանչելս յաւուրս երիս խափանեցին ասելով. «Հաւատն Մահմետի խանգարեալ խափանեցաւ և յերկիր սուզաւ, զի այր անհաւատ զհաւատն մարգարէին Մահմետի յայտնի և համարձակ հայհոյէ»։

Եւ յաւուր միում մինչդեռ շրջեցուցանէին ի պողոտայս քաղաքին, ոմն չարագոյն ի սուխտոցն, որ և մերկ ի ձեռին ունէր զխանջալն, ուժգին բախմամբ եզարկ ի թիկնամէջն Մխիթարին, և թռուցեալ ցայթեցաւ արիւնն ընդ երեսս որմոյն՝ որ մերձ էր. յորմէ բախմանէ անկաւ Մխիթար ի վերայ երեսացն. և միւս ևս սուխտայիցն դիմեալ ի վերայ՝ սրախողխող արարեալ ծակոտեցին զնա՝ և անդէն մեռաւ։

Եւ ապա եդին զպարան յոտս նորա և քարշեալ տարան արտաքս ի քաղաքէն ի տեղին, յորում զամենայն մահապարտսն սպանանեն. և անդէն ժողովեալ բազում անթիւ մահմետականաց՝ քարկոծեցին զմեռեալ մարմինն. այնքան, զի ի ներքոյ քարանցն ծածկեալ ան-

17. տպ. հայհոյէր. GK հայհոյէ. 24. G ծակոտեցին զամենայն մարմինն։ Եւ երանելին Մխիթար աւանդեաց զհոգին իւր առ Աստուած. M ծակոտեցին և սպաննին զնահատակն Մխիթար. և այնու աւանդեաց զհոգին իւր առ Աստուած բարի հաւատով։

Digitized by Google

յայտ եղև մարմինն. և ապա թաղեալ ի բաց գնացին արիւնարբու և մարդադէմ գազան սուխտէքն։

Իսկ ի նմին գիշերի գիշերապահ ենկիչարիքն, որ ի վերին բերդին էին, տեսանէին զի լոյս մեծ փայլատակեալ և ճառագայթեալ կայր ի վերայ նորա. որոց ընդլուսանալ առաւօտուն եկեալ ի մէջ քաղաքին ամենեցուն պատմէին զտեսիլն զայն։ Եւ յերկրորդումն աւուր միաբանեալ քրիստոնեայքն առ փաշայն և առ ղադին, խնդրեցին հրաման թաղելոյ զսուրբն. և նոքա ետուն հրամանս։ Վասն որոյ գումարեալ ամենայն եկեղեցւոյ քահանայք և և ժողովուրդք բազմախուռն հանդիսիւ, բարձին զպատուական մարմին նորա, և տարեալ ի դիրս Հայոց, ի կարգս քրիստոնէից թաղեցին զնա սաղմոսիւք և օրհնութեամբ ի փառս Քրիստոսի պսակողին զնա։

Եւ եղև նահատակութիւն սորա ի թուականիս մերում ՌՃԵ, ի նոյեմբեր ամսոյ ԺԲ, ի կաթուղիկոսութեան մեծափառ Աթոռոյն սրբոյ Էջմիածնի տէր Յակոբայ, և ի թագաւորութեան Օսմանցւոց սուլթան Մահմատին, որ նստի ի Կոստանդնուպօլիս մեծ քաղաքին։

Արդ՝ խնդրեսցուք ի Քրիստոսէ, զի բարեխօսութեամբ սրբոց իւրոց ողորմեսցի ամենայն քրիստոնէից և նմա փառք յաւիտեանս ամէն։

Սոյն վկայաբանութիւնը արտատպում ենք Առաքել Պատմագրից, տպ. Վղրշպտ. 1884, էջ 421—425, գլուխ ԽԷ. «Պատմութիւն նահատակութեան Մխիթար անուամբ քրիստոնէին»։ Առաքելից արտագրում են նաև GKM Յայսմաւուրքները. G արէ Դ=նոյեմբեր 12, Ս. Մելիք Պարսկի վկայաբանութիւնից յետոյ, էջ 149

3. G Իսկ ի նմին գիշերի Տէրն Քրիստոս փառաւորեաց զնահատակն իւր, զի լոյս ծագեաց յերկնից ի վերայ նորա։ Եւ գիշերապահ ենկիչարիքն ... 7. G զտեսիլն զայն. իբրև լուան քրիստոնեայքն փառս մատուցանէին Աստուծոյ, և յերկրորդումն աւուր .... 20. GKM չունին արդ խնդրեսցուք ... վերջաբանութիւնը, տող 20—23։

Digitized by Google

բ''—151 բ', այս վերնագրով. «Ցայսմաւուր պատմութիւն նահատակութեան նոր վկային Քրի Մխիթար անուամբ քրիստոնէին»: K արեգ. ԻԹ—ապրիլ 6, Սաքա ստրատելատի և Ս. Ռուսիննոսի պատմութիւններից յետոյ, էջ 400 ա''—401 բ'', նոյն Առաքել Պատմագրի վերնագրով: Երրորդը M ըստ G-ի տրէ Դ=նոյեմբեր 12, Ս. Մելի·Պարսկի վկայաբանութիւնից յետոյ, էջ 156 բ'—157 ա'', այս վերնագրով. «Ցայսմաւուր յիշատակ է նահատակութեան Մխիթար անուն քրիստոնէի»: Հմմտ. Նաև Զամչեան, Գ. 652—653:

Ձեռագրերից K գրեթէ անփոփոխ պահում է Առաքելի բնագիրը. G ըստ սովորականին անում է փոքրիկ փոքրիկ յաւելումներ. M ընդարձակ կտորներ ջնջելով՝ բնագիրը վերածում է կէսին. աւելորդ համարեցինք նշանակել բնագրի սոյն երկրորդական արտագրութեանց կամայական տարբերութիւնները, և բաւականացանք միայն դնելով G-ի փոքրիկ յաւելուածները:

Digitized by Google

# 82.

## ԱՒԵՏԻՍ ՈՍՏԱՆՑԻ

† ՌՃԵ=1656 մարտ 20

Այր ոմն ազգաւ Հայ և հաւատովն քրիստոնեայ, որում անունն էր Աւետիս, և էր յերկրէն Ոստանայ, և վասն կարեաց աղքատութեան իւրեանց ամենայն ընտանեօք իւրեանց ելեալ գնացին յերկիրն Բարմայ, որ այժմ ասի Աղբակ, և բնակեցան ի գիւղն Բաբլասան։ Եւ այրս այս Աւետիս վասն մարմնաւոր կարեաց իւրոց յարեցաւ առ քուրդ իշխան ոմն, որում անունն էր Բաքդար աղայ, որ էր իշխան բերդին, որ Լօռիքան կոչեն. և եկաց Աւետիս ի սպասաւորութիւն Բաքդար աղայ իշխանին ամս երկուս։

Իւ եղև զի ոմանք ի ծառայից Բաքդար աղային, որք էին հաւատով մահմետականք և ազգաւ քուրդ, և ծառայակիցք Աւետսի, նախանձեալ ընդ նմա, յաւուր միում կացին առաջի Բաքդար աղային ասելով զԱւետսէ, թէ «Մեք բազում անգամ լուաք ի դմանէ, զի ասէր դառնամ ի քրիստոնէական հաւատոցս՝ և լինիմ մահմետական հաւատով». կարի ճշդիւ լինէին վրէժխնդիրք, և ստիպէին զպարոնն դարձուցանել զԱւետիսն ի քրիստոնեական հաւատոցն։ Իսկ իշխանն Բաքդար աղայ եհարց յԱւետսէն վասն ճշմարտութեան իրացն, և լուաւ պատաս-

5. GK աղբակ. տպ. Ախբակ. 8. G և տպ. որ. K զոր.

Digitized by Google

խանի թէ՝ «Ո՛չ ուրանամ զքրիստոնէական հաւատս իմ. այլ դուք զուր ասեն ի վերայ իմ զբանդ զայդ»։ Վասն որոյ ոչ լուաւ Բաքդար աղային վկայութեանց իւրոյ ծառայիցն, այլ սաստեաց իւրոց ծառայիցն լռել, և ներեաց Աւետսին ասելով. «Թող տուք դմա կեալ ի հաւատս իւր»։ և թէպէտ Բաքդար աղային սաստեաց չարախօսացն, զի խանգարեսցի բանն, սակայն ոչ խանգարեցաւ, այլ օր յաւուր առաւել ճարակեցաւ բանն՝ մինչև եհաս առ մեծ իշխանն Խոսրով փաշայ։

Եւ էր Խոսրով փաշայ եղբայր Եզդիչէր մեծ պալտոնին՝ և տէր աշխարհին, և իշխան ի վերայ Բաքդար աղային. զոր և վկայքն չար՝ կալեալ զԱւետիսն՝ տարան առաջի Խոսրով փաշային, որ բնակէր ի բերդին՝ որ կոչի Փիզան, և զնոյն վկայութիւն վկայեցին առաջի նորա։

Եհարց Խոսրով փաշայ զԱւետիսն վասն իրացն ճշմարտութեան, և նա դաւանեաց զքրիստոնէական հաւատն. և Խոսրով փաշայ հրամայեաց ունիլ զնա ի կալանս. և զկնի աւուրց բերեալ առաջի իւր՝ եհարց զնա, և եգիտ հաստատուն ի հաւատս Քրիստոսի, դաւանելով զինքն քրիստոնեայ։ Եւ ասէր ի պատասխանիսն իւր թէ «Զիա՞րդ մարթ է ինձ թողուլ զլոյս և գնալ զհետ խաւարի. զի Քրիստոս ինքն լոյս է, սոյնպէս և հաւատն՝ որ առ ի նա. իսկ առաջնորդն ձեր՝ զոր մարգարէ ասէք, ինքն պատրիչ է և խաբեբայ, և ամենայն բանք իւր սուտ են»։

Այնուհետև կամեցան նախ ողոքական բանիւք և հնարիւք որսալ զնա. զի ասաց Խոսրով փաշայ. «Տամ քեզ պարգևութիւն և գիւղ, և զդուստր իշխանի, որում և դու հաւանիս»։ Եւ բերեալ զպատուական երիվարն իւր ամենայն ոսկիակազմ սարուքն և կացոյց առաջի նորա, և ասաց. «Ընդ իս հանապազ պահելով փառաւոր և մեծապատիւ իշխան ունիմ զքեզ, եթէ հաւանեսցիս իմոց բանից»։ և Աւետիս ոչ հաւանեցաւ։

4. K ծառայիցն իւրոց. G նոցա. 17. K և տպ. ունիլ. G ունել. 31. K ունիմ. G արարից.

Ապա կոչեաց Խոսրով փաշայն զառաջնորդս ընդունոյն օրինաց իւրեանց. հարցանէր ցնոսա թէ «Զիա՞րդ հրամայեն օրէնքն գրոց ձերոց վասն առնս այսորիկ»:

Որոց պատասխանի արարեալ՝ «Թէ ասացեալ բանքն, որ զդմանէ՝ իրաւացի և հաստատեցի վկայիւք, անհնարին է կեալ դմա, եթէ ոչ հաւատովն Մահմետի, և կամ թէ անպատճառ մեռանիլ»:

Եւ առ այս բան նախկին սուտ վկայքն եկեալ անդէն առաջի նոցա ևս վկայեցին զառաջին սուտ վկայութիւնն իւրեանց: Եւ Խոսրով փաշայն բազում անգամ առաջի իւր բերեալ զԱւետիսն. և զնոյն բանն հրամայեաց նմա, թէ «Ուրացի՛ր զքրիստոնէական հաւատն քո, և ընկալ զմահմետական հաւատն. և ես զոր բարիս և խոստացեալ եմ՝ պատուելաբար տամ քեզ». և Աւետիս ոչ ուրացաւ զքրիստոսական հաւատն իւր: Իսկ Խոսրով փաշայն, իբրև ետես թէ Աւետիս պինդ կայ ի հաւատս քրիստոսական, և ոչ կամի դառնալ ի նմանէ, վասն որոյ հրամայեաց արձակել ի կապանաց և թողուլ ի կամս իւր՝ կեալ հաւատովն Քրիստոսի:

Իսկ կարդացողք օրինացն Մահմետի՝ մոլլայք և մուդառիսք ժողովեցան առ Խոսրով փաշայն, և ի բանից գրոց իւրեանց խօսէին ընդ նմա՝ թէ «Պարտական ես դու բռնութեամբ ածել զնա ի ճշմարիտ հաւատս մեր. և եթէ ոչ հաւանեսցի՝ սպանանել»: Եւ Խոսրով փաշայն թօթափելով զձեռն իւր՝ ասաց. «Անպարտ եմ ես յարենէ առնդ այդմիկ, և անմասն յայդմ դատաստանաց. եթէ լսէք բանից իմոց, թողէք զդա, զի անպարտ է. և թէ ոչ թողուք՝ դուք գիտէք»:

Իսկ մոլլայք և մուդառիսք ամենեքեան գումարեալք ի վերայ Աւետսին, յափշտակեցին և տարան ի մէջ իւրեանց և սկսան զարդարել զնա ազնիւ և պատուական հանդերձիւ և անուշահամ կերակրօք և ըմպելեօք, և ախորժ բանիւք զուարճացուցանել զնա, և զամենայն խոստացեալն Խոսրով փաշային և կրկնակի տալ նմա խոստա-

ցան. և Աւետիս ոչ դարձաւ ի քրիստոսական հաւատոյն։

Այնուհետև իբրև տեսին թէ ոչ դարձաւ, սկսան չարչարել զնա պէս պէս օրինակաւ, և մանաւանդ զի ի պարանոցէն մինչև ցոտսն զամենայն փափուկ տեղիս մարմնոյն ծակոտեցին ծայրիւ սրոյ, յորոյ մարմինն ոչ մնաց ձեռնաչափ տեղի մի անծակ, յորոյ յարենէն ներկեցաւ ամենայն մարմինն և զգեստ անձինն, որ զտեսողաց մարմինսն սոսկացուցանէր։ Իսկ Թօսրով փաշայն միւսանգամ խնդրեաց զԱւետիսն։ Իբրև ածին զնա առաջի նորա, տեսեալ զնա այնպիսի արիւնաթաթաւ մարմնով, սոսկացեալ զարմացաւ, և սաստիկ բարկութեամբ մեղադիր եղև մոլլայիցն. և յայնժամ նա հրամայեաց թողուլ զԱւետիսն կեալ ի հաւատս իւր։

Իսկ արիւնարբու մոլլայքն ոչ թողին, այլ առեալ տարան ի մէջ մէյդանին արտաքոյ բերդին, և անդ նա բազում անգամ ստիպեցին զնա ասելով. «Ուրացիր զքո հաւատն՝ և ընկալ զմեր հաւատն. ապա թէ ո՛չ՝ հատանեմք զգլուխ քո»։ Եւ նա ոչ հաւանեցաւ և ոչ ուրացաւ. վասն որոյ սրով հատին զգլուխ երանեալ առն Աւետսի։

12. տպ. յայժամ. GK յայնժամ. 16—1. այս տողերն այսպէս ընդարձակուած է G. ստիպեցին զնա ուրանալ զՔրիստոս և կեցուցանել զանձն իւր. «ապա թէ ոչ հաւանիս, ասեն, բանից մերոց և ոչ ուրանաս զՔրիստոս Աստուածն քո, մեռանիս ի ձեռաց մերոց»։ Իսկ երանելի նահատակն Աւետիս բազում քաջութեամբ ընդդէմ եկաց դիւաբնակ մոլայիցն, յանդիմանէր զնոսա համարձակ և ասէր. «Ես զկենդանի Աստուածն իմ զՅիսուս Քրիստոս ոչ ուրանամ և զլոյս հաւատն իմ ոչ թողում. և ձեր խաբեբայ և սուտ հաւատն ոչ ընդունիմ. այլ պատրաստ եմ ի մեռանել վասն անուանն Քրիստոսի Աստուծոյն իմոյ։»

Իսկ գայլաբարոյ մոլէքն և մոլորական մահմետականքն իբրև տեսին զհաստատուն միտս նորա, կրճտեցին զատամունս իւրեանց ի վերայ սրբոյն։ Եւ իբրև զգայլ՝ արեան ծարաւիք դիմեցին ի վերայ նորա։ Եւ երանելին Աւետիս էր իբրև զգառն անմեղ ի մէջ կատաղեալ շանց. և ուրախ էր՝ ի վերայ նահատակութեան իւրոյ։

Եկեալ շնորհաց սուրբ հոգւոյն և հանգեալ ի վերայ նորա և նովաւ պայծառանայր տեսիլ երեսաց նորա. վասն որոյ համարձակ տայր պատասխանի և յանդիմանէր զանաստուած մոլորութիւն նոցա։ Եւ անօրինացն հարին սրով և հատին զգլուխ սրբոյն Աւետիսի։



Digitized by Google

*Եւ ի ժամ նահատակութեան իւրոյ՝ Աւետիս զերեսն իւր դէմ ընդ արեւելս ունէր. և չարեաց արքաննեակ մոլլայքն բռնութեամբ դարձուցանէին զդէմս նորա ի կողմն հարաւոյ, և սուրբն ոչ անսաց նոցա, այլ ուղղեաց զդէմս իւր ընդ արեւելս, և այնպէս կատարեցաւ ի վերայ քրիստոսական հաւատոյ՝ դաւանելով զՔրիստոս Աստուած ճշմարիտ։*

*Եւ ի գիշերին յայնմիկ Տէրն Քրիստոս փառաւորեաց զվկայն իւր նշանաւ երկնային լուսոյ, որ էջ ի վերայ նորա, որում եղեն ականատեսք ամենեքեան բնակիչք Փիզանայ բերդին, և որք շուրջ զնովաւ էին. այլ և ինքն Խոսրով փաշայ՝ որ ի բարձրաւանդակէ տան իւրոյ հայեցեալ տեսանէր զսիւնաձև ճառագայթեալ լոյսն ի վերայ նորա. այլ և սպանող մոլլայքն. վասն որոյ սպանող մոլլայք փութացեալ բարձին անտի զմարմինն Աւետսին, և տարան յայլ իմն տեղի ի տան ուրումն պահեցին մինչև լուսացաւ օրն. և ապա կոչեցին զեղբայր Աւետսին, որում անունն էր Թաքառուկ, հրամայեցին նմա բառնալ զմարմին Աւետսին և տանել թաղել։ Որոյ ժողովեալ արս քրիստոնեայս, քահանայս և աշխարհականս՝ բարձեալ զնահատակն տարան ի գիւղն, զոր անուանեն Առակ, և անդ հանգուցին զնա ի դիրս տապանին սաղմոսիւք և օրհնութեամբ և երգօք հոգևորօք։*

*Եւ եղև կատարումն նահատակութեան երանելի առնս Աւետսի ի թուականութեան մերում ՌՃԵ, յամսեանն մարտի Ի, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ օրհնելոյն յաւիտեանս յաւիտենից ամէն։*

Սոյն վկայաբանութիւնը արտագրում ենք Առաքել պատմագրից, տպ. Վղրշպտ. 1884, էջ 425—428, գլուխ ԽԸ. «Պատմութիւն վասն նահատակութեան Աւետիս անուամբ քրիստոնէին»: Նոյն պատմագրից արտագրութեամբ ունին նաև մեր G և K ձեռագրերը. առաջինը G արեգ ԺԴ և մարտ 22, Ս. Բենետիքդոսի և «վեցերորդ աւուր արարչութեան» պատմութիւններից յետոյ՝ այս վերնագրով. «Յայսմ աւուր նահա-

Digitized by Google

*տակութի նոր վկային քի Աւետիսի», էջ 394 բ՛—396 ա՛՛։ Իսկ երկրորդը* K *արեգ Ի և մարտ* 28, *Ս. Վահան Գողթնացւոյ վկայաբանութիւնից յետոյ՝ այս վերնագրով. «Պատմութի վս նահատակութեան Աւետիս անուամբ քրիստոնէին.» էջ* 381 *բ՛՛*—383 *ա՛՛։—Հմմտ. նաև Ջամչեան, Գ.* 652, *և Սամուէլ Անեցու (Վղրշպտ.* 1893, *էջ* 179) *հետևեալ փոքրիկ տեղեկութիւնը. «ՌԾԴ. նահատակեցաւ ի Մարաց ոմն հայ Աւետիս անուամբ և երկնայնով լուսով փառաւորեաց զնա Աստուած։» Այս տեղ յիշուած թուականը մերից մի տարով կանուխ է։*

*Ձեռագրերի համեմատութիւնը Առաքելի բնագրի հետ նախորդների նման է. այսինքն* K *գրեթէ անփոփոխ պահում է բնագիրը. իսկ* G *ունի աննշան տարբերութիւններ, որոնցից կարևորները վերևը նշանակեցինք։*

Digitized by Google

# 83-

## ԳԱԲՐԻԷԼ ՂԱԼԱԹԻԱՑԻ

† Ռ·ՃԺԱ—1662 սեպտ. 17 դշ.

Սա էր հաւատովն քրիստոնեայ, բարեպաշտ ծնողաց զաւակ, անուն հօրն . . . . . . և մօրն Կուլխաթուն, ազգաւ հայ, ի ժամանակս իշխանութեանն Տաճկաց՝ սուլտան Մուհամմատի։ Եւ էր յերկրէն Տիւրիկոյ, այլ ի գեղջէն Խուռնաւիլոյ, ծնեալ և սնեալ ի մայրաքաղաքն Խալաթիայ՝ որ է յանդիման Կոստանդնուպօլսի։

Իսկ ոմն գոլով սորա՝ որ ի մանկութեան իւրում տաճկացեալ էր և կարգեալ ի գունդս զօրականաց՝ որ ասին էնկիչարիք։ Եւ յերթեւեկ առնելն սորա առ եղբայրն իւր՝ յազգմանէն սատանայի ըմբռնեալ զսա Տաճկացն՝ թլփատեցին, և կարգեցին ի նոյն գունդս եղբօրն իւրում. որ և քանիցս անգամ գնաց ի պատերազմ ընդ զօրացն Տաճկաց՝ ի Կրիտէս։

Իսկ զի ունէր սա զսէրն Քրիստոսի վառեալ ի սրտի իւրում՝ ոչ կալաւ յանձին զայսպիսի հաւատս, այլ յետ ժամանակի ինչ փախուցեալ աստի՝ գնաց յերկիրն Ֆռանկաց՝ զի պահեսցէ զանբիծ հաւատս իւր քրիստոնէականս։ Որ և շրջեալ ի տեղիս ուխտից որ անդր կան, առ տապանի սրբոյն Յակոբայ տեառնեղբօրն, և ուխտս արարեալ

1. յ սայ. 2. այսպէս բաց է բնագրում անուան տեղը.

Digitized by Google

առ սուրբ Աստուածածինն՝ որ Եղր ասի, և առ սուրբ առաքեալքն Պետրոս և Պօղոս, և այսպէս շրջեալ յերկիրս Յունկաց զամս երկոտասան բազում վշտօք և տառապանօք և պանդխտութեամբ, թերևս զի ներումն լիցի յանցանացն իւրոց զոր մեղաւն։ Եւ ոչ շատացաւ սիրտ նորա այսպիսի մխիթարութեամբս՝ ասելով. «Ես ուր կորուսի զանբիծ և զանարատ հաւատս իմ, անդր երթեալ գտանեմ»։

Եւ մտեալ ի նաւ՝ եկն դարձեալ ի Կոստանդնուպօլիս՝ առ ծնօղս իւր՝ մինչ կենդանի էին։ Եւ կեցեալ ի տան հօր իւրում աւուրս հնգետասան, և ասաց՝ եթէ «Ես վասն այսր իրաց եկեալ եմ աստ՝ զի յայտնի խոստովանեցայց զՔրիստոս Աստուած ի մէջ հեթանոսաց»։

Եւ նոքա ըստ գթոյ ծնօղաց՝ ասացին թէ «Ո՛չ կարես ժուժել տանջանաց, որդեակ, այլ երթ դարձեալ յերկիրն քրիստոնէից, և կեաց բարեպաշտութեամբ»։

Իսկ նա ոչ լուաւ նոցա, այլ գնաց յաւուր տօնի Վերացման սուրբ Խաչին ի գերեզմանս Հայոց ըստ սովորութեան նախնեաց յօրհնումն գերեզմանաց, ունելով ի գլուխ իւր զձև քրիստոնէից։ Եւ ոչ ոք ինչ ասաց ցնա զայն օր։

Եւ ի միւս օրն՝ որ էր երկուշաբաթի, եկեալ յեկեղեցի և գտեալ զմի ոք ի քահանայիցն սրբոց՝ խոստովանեցաւ զյանցանս իւր, և հաղորդեցաւ ի պատուական մարմնոյ և յարենէ որդւոյն Աստուծոյ։ Եւ գնաց նոյն քրիստոնէական ձևովն եկաց ի շուկան ի մէջ Տաճկացն։

Իբրև տեսին՝ ասացին. «Այդ որպիսի կերպարան է զոր զգեցեալ ես. ո՞չ ես դու այն զօրականն՝ զոր այսչափ ժամանակ կացեալ ես ի միջի մերում»։

Եւ նա զօրացեալ ի Հոգւոյն սրբոյ՝ ասաց. «Այո՛, ես եմ. այլ ոչ գտայ զօգուտ հաւատոցն ձերոց՝ զոր այսքան ժամանակ կացի ի հաւատոն ձեր. այլ հաւատ ճշմա-

6. յ կորուսից. 22. ի մեւս. 30. այո՛յ.

Digitized by Google

րիտ քրիստոնէութիւնն է՝ զոր հաւատացեալ էի և հաւատամ զՔրիստոս Աստուած և որդի Աստուծոյ»։

Իսկ անօրէնքն իբրև լուան զայս՝ զայրացան և կրճտեցին զատամունս ի վերայ նորա. և արկեալ ի նա ձեռս՝ առեալ տարան առ դատաւորն, և ասացին զպատճառս իրացն։

Եհարց դատաւորն և ասէ. «Զիա՞րդ համարձակիս արհամարհել զօրէնս Մահմէտի և ոչ կաս ի պատուի քում՝ զոր ունիս յառաջագոյն»։

Եւ նա ասէ. «Օրէնք քո ընդ քեզ լիցի ի կորուստ. և զպատիւս քո ոչ ընդունիմ, որ առ ժամանակ մի է. այլ ես գտեալ եմ պատիւ՝ որ անանց է և յաւիտենական»։

Ընդ որ բարկացեալ դատաւորն՝ հրամայեաց հարկանել զբերան նորա, և տանել առ վէզիրն։ Եւ նա կացեալ առաջի՝ խոստովանեցաւ համարձակ զՔրիստոս Աստուած։ Եւ յորժամ լուաւ զհամարձակ դաւանութիւն նորա՝ ասաց. «Խելագարեալ է. արկէք զդա այսօր ի բանտ. թերևս թափեսցի ի յիմարութենէ իւրմէ»։

Եւ արկին զայն օր ի բանտ։

Եւ յորժամ ածին ի միւս օրն յատեան, և նա զնոյն բանս խոստովանեցաւ աներկիւղ և անկասկած՝ թէ «Քրիստոնեայ եմ և Քրիստոսի ծառայ. և ո՛չ եմ խելագար՝ որպէս դուք և ուսուցիչն ձեր՝ զոր ես ոչ ընդունիմ»։

Առ այս յոյժ սաստկացեալ փաշային՝ հատ ի վերայ նորա վճիռ սպանման, և ետ տանել զնա և կախել առ փողոցս քաղաքին. զոր և վաղվաղակի կատարեցին զհրամանս նորա։

Եւ յորժամ տանէին զնա ի տեղի կատարմանն՝ ի ճանապարհին ուսուցանէր զհաւատացեալսն հաստատուն կալ ի հաւատս Քրիստոսի. և ինքն ի փառաւորելոյ զՔրիստոս Աստուած ոչ դադարէր։

Իսկ անօրէնքն փութացուցեալ վաղվաղակի կատարեցին զհրամանս փաշային, վասն յայտնի և համարձակ յանդիմանելոյն զնա։

9. յ առ քեզ. 19. յ ի մեւս. 20. յ աներկեղ.

Digitized by Google

Եւ կացեալ ի կախաղանին զաւուրս երկու, լուսափայլութիւն երեսաց նորա ոչ նուազեցաւ, այլ որպէս ի քուն կայր զայն երկու աւուրսն, վկայ անմեղութեան նորա։ Եւ տեսեալ անօրէնքն եթէ գրահ տուեալ հաւատացեալքն ի տեսանել զհանդէս մարտիրոսութեան նորա, իջուցեալ ի կախաղանէն՝ արկին ի ծով։

Եւ այսպէս եղև կատարումն սուրբ վկային Գաբրիէլի, որ ըստ անուան իւրոյ դասեցաւ ի դասս դասուն Գաբրիէլի, որ մարմնովն իբր զվարդ փթթեալ յաւուրս ձմերայնի, և հոգովն դասեցաւ ի դասս հրեշտակի։ Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի։

Զոր և ես Յակոբ ծառայ Աստուծոյ և սրբոյս՝ տեսեալ զեղեալսն և լուեալ զպատասխանիսն՝ գրեցի ի փառս Աստուծոյ։

Գործեցաւ այս ի թուականիս Հայոց ՌԾԺԱ ամի, սեպտեմբեր ամսոյ 17, օրն չորեքշաբաթի։

Սոյն վկայաբանութեան իսկական բնագիրը՝ գրուած բուն իսկ ժամանակակից և ականատես հեղինակի՝ Ակնեցի Յակոբի ձեռքով՝ գտնւում է յ ձեռագրի մէջ, էջ 116 բ′—118 ա′։ Յակոբը ստացող է այդ ձեռագրին (Գրիգոր Տաթևացու Լուծմունք գրոց Յոբայ) և իւր ժամանակի դէպքերից, ի մէջ այլոց և Գաբրիէլ նահատակի պատմութիւնը, հեղինակել և դրել է իւր ձեռագրի մէջ։ Այս մասին տես և մեր յառաջաբանում։ Վկայաբանութեան վերնագիրն է «Պատմութի Նոր վկային Քի սրբոյն Գաբրիէլի. Յայսմ աւուր նահատակութի նոր վկային Քի սրբոյն Գաբրիէլի»։ Վկայաբանութիւնը վերջանում է այսպէս. «Տէր Աստուած, բարեխաւսութբ սրբոյս, ողորմեայ ստացաւղի գրոյս՝ նմ և գծողիս. ամէն»։ Այս երկու հատուածներն էլ յապաւեցինք մեր բնագրից՝ միօրինակութեան համար։

3. յ աւուրն. առանց պատիւի. 15. յ ի թվականիս.

## 84.

### ՊԱՏՈՒՇԱԿԱՆ ԿԱՄ ԱՂԻՉ ԿԻՆ ԱՐՓԱՅԵՆՑԻ

† Ռ·Ճ·Ժ·Ը·=1668—9

Կինս այս Պատուական՝ էր ի Վայոց ձորոյ, ի գեղջէն Արբայ, դուստր Խաչկայ. և եղև խօսեցեալ ընդ ումեմն երիտասարդի Միրման կոչեցելոյ։ Ցաւուր միում անկաւ երիտասարդն ընդ նմա. որ և յղացեալ՝ և ծնաւ որդի։ Իսկ և իշխանն Նախչուանայ Մուրատ—խան—Սուլթան կամեցաւ ըմբռնել զերիտասարդն. և նա իմացեալ փախաւ և գնաց յԱրարատ՝ ի Նորագաւիթ գիւղ։ Եւ իշխանն առաքեալ տարաւ առ ինքն զկինն Աղիզ, քանզի այս էր անունն նորա, որ թարգմանի Պատուական։

Ասէ ցնա սուլթանն. «Դու ընդէր արարեր բոզութիւն, և ծնար չնութեամբ որդի»։

Ասէ կինն. «Ես ընդ ամուսնոյ իմոյ անկայ, և ի նմանէ ծնայ. եթէ ամուսնութիւնն մեղս իցեն, ապաքէն դուք ամենեքեան ամուսնացեալ էք»։

Ասէ իշխանն. «Մեք օրինօք եմք ամուսնացեալ՝ և ոչ որպէս դու բոզութեամբ»։

Ասէ կինն. «Օրինօք ամուսինն մին լինի, և դուք բազումս առնուք. վասն որոյ ամենեքեան բոզ էք»։

Ասէ իշխանն բարկութեամբ. «Հա՛յ ղախպայ, դու ի պատերազմ մտեր ընդ իս. ինձ չէ ինչ փոյթ. այլ եկ տաճկացիր. ապա թէ ոչ՝ չարաչար սպանից զքեզ»։

Digitized by Google

Ասէ կինն. «Բաւական էր ինձ մեղանչումն պոռնկութեամբ. իսկ թէ ուրանամ զհաւատս իմ, լինիմ ուրացող՝ և բազում մեղաց պարտապան»։

Ասէ իշխանն. «Զայդ ասելով ոչ գոյ քեզ հնար զերծանելոյ՝ բայց թէ ոչ գայցես ի հաւատս մեր»։

Ասէ Ազիզն. «Ուղիղ հաւատ և օրէնք այս որ ունիմ ես, այլ հաւատ ոչ գիտեմ»։

Հրաման ետ իշխանն դահճացն՝ և ասէ. «Կապեցէք տոռ զմէջս դորա, և տարեալ կախեցէք ի մինարայէն, և սպառնացէք. և թէ ոչ ուրանայ, կտրէք զպարանն՝ և արկէք ի վայր, զի անկեալ մեռցի»։

Եւ առեալ տանէին զնա կոփահարելով և հարկանելով. և հանին ի գլուխ մինարային արտաքոյ քաղաքին, կախեալ՝ հարկանէին ծայրիւ թրոյն, և ասէին. «Սալաւաթ սաս Մահմատին, ահա մեռանիս»։

Ասէ կինն. «Ցաւուր միում մեռանելոց եմ, բարւոք է փութով մեռանիմ իմով հաւատովս՝ քան թէ ուրացութեամբ՝ օտար հաւատով և չար անուամբ»։

Իբրև տեսին դահիճքն զհաստատ միտս նորա, հատին զպարանն, և անկաւ յերկիր Պատուականն այն կինն գովելի, և վախճանեցաւ։ Եւ ժողովեցան Նախչուանայ մեծամեծ քրիստոնեայքն, և գնացին առ Սուլթանն, և խնդրեցին զերանելին թաղել. և առեալ տարան ի հասարակաց գերեզմանն, և թաղեցին մեծաւ պատուով ի ՌՃԺԲ թուին։

Սոյն վկայաբանութիւնն ունի միայն Զաքարիա սարկաւագ, տպ. Վղրշպտ. 1870, հատ. Բ. էջ 126—8, գլուխ ԿԱ, հետևեալ վերնագրով. «Նահատակութիւն Պատուական կնոջ։» Հմմտ. նաև Սիսական, էջ 184, ուր նահատակութեան թուականը սխալմամբ նշանակուած է 1679, Զաքարիայից տասը տարի աւելի ուշ։

Digitized by Google

# 85.

## ԲԱՂՏԱՍԱՐ ԹՈԽԱԹՑԻ

ՌՃԻԱ—1672 յունիս 4 գշ.

Սուրբ և սիրելի վկայն Քրիստոսի մանուկն Բաղտասար էր ի մեծ քաղաքէն Հայոց Եւդոկիոյ, որ այժմ ասի Թօխաթ, որդի առն բարեպաշտի Հայ ազգաւ՝ Փիրզատայ անուն։ Եւ ի մեռանիլ հօրն՝ մնաց Բաղտասարն որբ հանդերձ մեծագոյն եղբարբն Անտոնիւ. որոյ տուեալ զեղբայրն իւր զԲաղտասարն յայր ումն կօշկար՝ ուսուցանել նմա զարուեստն։ Եւ ուսթայն առեալ զԲաղտասարն և երթայ ի Զմիւռին, քաղաք Լիկէացւոց՝ առ ի գործել զգործ արուեստին։ Եւ անդէն թողեալ զԲաղտասարն միայն և ինքն ել.թայ ի Կոստանդնուպօլիս։ Իսկ հարկահանքն, որք առնուին զհարկն՝ տեսեալ զԲաղտասարն պահանջէին զհարկս՝ այսինքն զխարաճն։ Իսկ նա զի ոչ ունէր ինչս որ տայր նոցա՝ վասն որոյ կալեալ եդին ի կոճեղս և շատ ողոքելով և բռնադատելով պատրեցին զմանուկն Բաղտասար և յոչ կամաց թլփատեալ՝ անուանեցին Դաւուդ։ Եւ էր յայնժամ ԺԴ ամաց. և զայն իբրև զսլաք հարաւ ի սիրտ մանկանն։ Եւ հանապազ խղճմտանք իւր նեղէր զնա, և վարանեալ տւաղէր, և վա՜յ և եղո՜ւկ կարդայր, և փղձկեալ սրտիւ հեծէր, և տրտմութիւն սրտին ոչ փարատիւր։ Այնուհետև յուսացաւ յայն որ լուծիչն է տարակուսանաց, և ելեալ ի Զմիւռնայ՝ դիմեաց յարևելս ի քաղաքն իւր Եւդոկիա, և պատմեաց եղբարցն զչար գործն իւր։

Եւ եղբարք նորա խրատեցին զնա և յուսով հաստատեցին գնալ ի վերին աշխարհն Հայոց և անդ համարձակ պաշտել զՔրիստոս Աստուած։ Իսկ նա ելեալ մեծաւ տրտմութեամբ և գնաց յԱրարատեան գաւառն։ Եւ մտեալ ի Վաղարշապատ՝ երկիր եպագ ի տեղի իջման Միածնին և շրջէր յամենայն վանորայսն Հայոց, որպէս զՎահան Գողթնացի, երկիրպագանէր սուրբ տեղեացն և յոգւոց հանելով խնդրէր զներումն մեղաց իւրոց։

Եւ գնացեալ աշակերտեցաւ ումեմն վարդապետի. և ուսեալ զՍաղմոսն և զՇարականն և կացեալ առ նա է ամ և վախճանեալ վարդապետն նորա։ Իսկ Բաղտասարն շրջեալ աստ և անդ երկու ամ, բայց տրտմութիւն սրտին ունէր և միշտ ցանկայր հասանել մարտիրոսութեան և նովաւ լնուլ զիղձս ցանկութեանն, և փափագէր բարի մահուամբ ելանել յաշխարհէս։

Եւ գնացեալ յԵրևան քաղաք և յարեցաւ ընդ ումեմն համարուեստի և գործէր խոնարհութեամբ։ Արդ՝ այս իր յայտնի եղև ուրումն Տաճկի Արզրումցւոյ ի ձեռն ումեմն Հայի Թոխաթցւոյ։ Եւ գիտացեալ թէ երբեմն տաճկացեալ է և աստ քրիստոնէութեամբ կեայ, և զի ի մէջ Հայոց էր՝ ոչինչ կարաց յայտնել. այլ մթերեալ ի սրտի իւրում զթոյնս դառնութեանն՝ կամէր թափել ի վերայ մանկանն. ուստի պատրեալ զնա համաշխարհիկ զինքն անուանելով ասէ. «Եկ երթիցուք աշխարհն մեր»։ Իսկ երանելի մանուկն Բաղտասար ելեալ եկն ընդ նմա մինչև ցԱրզրում, ոչինչ գիտելով զնենգութենէ նորուն։ Եւ գնացեալ Տաճիկն այն առ դուքսն՝ ասէ. «Է՛ աստ այր մի՝ որ երբեմն Տաճիկ լեալ է և այժմ քրիստոնեայ է եղեալ»։ Եւ զայս ազդ առնեն նմա համարուեստքն իւր և քաղաքացիքն և ասեն. «Ե՛լ և գնա՛ աստի, զի մի՛ վնասեսցիս»։

Իսկ բարի պատանին Բաղտասար ասէ. «Ես պատրաստ եմ ի մեռանել վասն անուանն Քրիստոսի և ի սպանմանէ ոչ երկնչիմ»։

Եւ գնացեալ յեկեղեցին յաւուր մեծահրաշի կիրա-

կէին՝ հաղորդեցաւ մարմնոյ և արեանն Քրիստոսի և պատրաստեցաւ ի մեռանիլ։

Եւ դուքսն առաքեաց զինուորս, որք եկեալ հարցին զնա, և նա զուղիղն խոստովան եղև թէ «Ես քրիստոնեայ եմ»։ Եւ նոքա կապեցին զնա և տարան առ դուքսն։ Եւ հարցեալ նմա խստութեամբ և սպառնալեօք՝ իսկ սուրբն պայծառ դիմօք և հաստատուն հաւատով դաւանեաց զՔրիստոս Աստուած։

Եւ հրամայեաց արկանել զնա ի բանտ և պնդել զոտսն ի կոճեղս և ծանր շղթայ ի պարանոցն և յամենայն աւուր առաքէր հարցանել թէ ուրանա՞յ զՔրիստոս։ Իսկ նա իբրև զվէմ անդամանդեայ անշարժ կայր ի հաւատս Քրիստոսի, և տային նմա կերակուր և նա ոչ առնոյր։

Եւ ոմանք տային նմա խրատ թէ «Ժամանակ ինչ անսա՛ դոցա և զերծի՛ր ի մահուանէ և երթ յայլ աշխարհ և պահեա՛ զհաւատս քո»։

Եւ սուրբն ասէ. «Այդ խրատդ կորուստ հոգւոյ իմոյ է և ոչ օգուտ»։

Եւ յետ չորից աւուրց ի ձեռն հաւատարմաց խնդրեա՛ց հաղորդութիւն։ Եւ քահանայ մի Յակոբ անուն գնացեալ գաղտ հաղորդեաց զնա։ Եւ յելանել երիցուն՝ եկն հրաման ի փաշայէն Ուսուփայ՝ կոչել զնա առաջի իւր։ Եւ կացեալ սուրբն ի ներքոյ ապարանից իշխանին և իշխանն անկեալ ի վերայ պատշգամին՝ հարցանէր. «Զքեզ ո՞ բռնադատեաց լինիլ Տաճիկ որ այժմ քրիստոնեայ եղեր»։ Պատասխանի ետ սուրբն և ասէ. «Ես փոքր գոլով՝ տհաս և անվարժ՝ պատրեցայ ի ձէնջ և արդ զհաւատս իմ պահեմ»։ Ասէ ամիրայն. «Տա՛ց քեզ մեծութիւնս և փառս, և դու հաւատա՛ օրինաց մերոց և լեր մահմետական»։

Ասէ սուրբն. «Ես զհաւատս իմ պահեմ և հաստատուն ունիմ զսա. և դու զոր ինչ կամիս՝ արա ընդ իս»։

Ասէ փաշայն. «Զի՞նչ պակասութիւն գտեր օրինաց մերոց»։

12. z կեար. 26. z տըհաս. 29. z հաւատոյ.

Digitized by Google

Ասէ սուրբն, եթէ «Պակասութիւն ոչ գտի, սակայն թէ բարի և թէ չար՝ ինձ ոչ է պիտոյ»։

Իսկ իշխանն խօսի ընդ խորհրդակցին և ասէ. «Զի՞նչ օգուտ ոք խօսելով ընդ նա»։ Եւ հրամայեաց զօրականացն հրով այրել զսուրբն։ Բայց օրինադիրքն ոչ կամեցան և հրամայեցին գլխատել զսուրբն։ Եւ կապեալ զձեռսն յետս՝ երեք դահիճք տանէին։ Մինն աղաղակէր ձայնիւ. «Եթէ ոք օրինաց մերոց ոչ հաւանի՝ այսպէս մահացուցանեմք, որպէս զմուրթատս այս»։ Իսկ երկուքն ողոքելով խրատտային հաւանիլ օրինաց իւրեանց և զերծանիլ ի մահուանէ և լինիլ փառաւոր քան զբազումս։

Իսկ երանելի նահատակն ոչ լուաւ նոցա, այլ ի բերան առեալ զՍաղմոսն և ասէր. «Երթալով երթային և լա...»։

Եւ հանեալ արտաքս ի քաղաքէն ի դուռն Կանայ. բայց ինքեանք ոչ սպանին, զի մի արենապարտք լիցին. այլ կալեալ այր մի Սեբաստացի Ղումրի անուն՝ ետուն սուրն ի ձեռն նորա, զի սպանցէ։ Իսկ նա լայր և աղաղակէր և ոչ կամէր։ Իսկ անօրէնքն հարկանէին զնա քարիւ և փայտիւ թէ «Հա՛ր և սպա՛ն զդա»։ Իսկ սուրբն ասէր. «Հա՛ր եղբայր և մի՛ երկնչիր, զի դու անպարտ ես յարենէ իմմէ»։ Եւ նա դողալով եհար երեք անգամ և անկաւ սուրբն յերկիր։ Բայց ոչ գծեաց ի նա սուրն, այլ թիւրեալ կրկնեցաւ։ Եւ ապա Տաճիկ մի եհատ զգլուխ սրբոյն։ Եւ այնպէս կատարեցաւ ի Քրիստոս, և մնաց մարմինն մինչև ցերեկոյ։

Եւ հրամայեաց փաշայն հանել արտաքս ի քաղաքէն և արկանել շանց և բազում արք պահեցին զնա։ Եւ ի գիշերին յայնմիկ տեսին բազմութիւնք արանց, զի տեղին ուր հեղաւ արիւն սրբոյն՝ լոյս տարածիւր՝ որպէս զաստեղս պաղպաջունս։

Եւ ի վաղիւն ժողովեալ քրիստոնեայքն՝ բազում արծաթ ետուն իշխանին, և զքարինս և զհողս ժողովեալ, ուր հեղաւ սուրբ արիւնն՝ ընդ սուրբ մարմնոյն եդին ի



Digitized by Google

նրբոյ որմոյ եկեղեցւոյն բազում քահանայիւք։ Եւ մինչ չեւ էր մտեալ արեգակն՝ տեսին ամենայն բազմութիւն քաղաքին՝ քրիստոնեայք և Տաճիկք վերակացուք գործոց, զի ի պարզոյ լոյս բոլոր և գնդաձեւ իջեալ յերկնից և հարեալ զեկեղեցեաւն՝ ցնդաւ ընդ հանդստարան սրբոյն։ Եւ լուր եղեւ ի քաղաքին, մինչ զի իշխանն եւս լուեալ զպայծառութիւն լուսոյն։ Եւ այսպէս Աստուած փառաւորեաց զսուրբ վկայն իւր Բաղտասար։

Կատարեցաւ բարեյաղթ նահատակն Քրիստոսի ի Թէոդուպօլիս քաղաք ի թագաւորութեանն Տաճկաց սուլտան Մահմետի որդւոյ Իպրահիմի և ի կաթուղիկոսութեանն սուրբ Էջմիածնի տեառն Յակոբայ Ջուղայեցւոյ, ՌՃԻԱ թուին, յունիսի Դ, ի վեց ժամու աւուրն, երեքշաբաթի, ի տօնի սրբոց Գայիանանցն։

Այս վկայաբանութիւնն ունի միայն Z ձեռագիրը՝ մարերի ԻԸ = յունիս 4, Մետրոփանոս Հայրապետից յետոյ. վերնագիրն է «Յայսմաւուր վկայաբանութի սրբոյն Բաղտասարայ նոր վկային քի»։

Նոյն վկայաբանութեան մի այլ անկախ խմբագրութիւնն է յաջորդը՝ որը իւր պարունակած մի խումբ մանրամասնութեանց համար կը դնենք ստորեւ։

Պատանիս այս Բաղդասար էր յԵւդոկիա քաղաքէ՝ որ այժմ ասի Թուխաթ։ Ազգաւ հայ. և էր քրիստոնեայ ծնողաց զաւակ։ Գոյր սոցա դրացի մի տաճիկ, արուեստիւ կօշկակար. և ետուն զԲաղդասարն նմա աշակերտ։ Եւ առեալ տաճիկն զԲաղդասարն՝ և գնաց ի Զմիւռին. և անդ վաստակէին զարուեստն իւրեանց։

Եւ յաւուր միում ելեալ ուսթայն գնաց ի գործ ինչ, և յամեցաւ։ Եւ եկին հարկահանքն՝ որք յօտարաց առնուն, և ասի սա խարաճ, և ասեն ցԲաղդասար. «Տուր զխարաճն»։

Ասէ Բաղդասարն. «Թոյլ տո՛ւք՝ զի գայցէ ուսուցիչն իմ, և տացէ զոր ինչ խնդրէք»։ Իսկ նոքա ոչ ներեցին, այլ առեալ տարին առ հարկապետն։

Եւ ասէ հարկապետն. «Ընդէ՞ր ոչ տաս զխարաճն քո»։

Ասէ երանելի պատանին. «Ասացի, ներեցէք մինչ գայցէ ուստայն իմ, և նա տացէ»։

Ասէ հարկապետն. «Ե՛կ տաճկացիր, և մեք թողումք զխարաճն քո. այլ և յաւելումք տալ քեզ դրամս բազումս»։

Ասէ Բաղդասարն. «Վասն հինգ մարչլի զհաւատն իմ ո՛չ թողում»։

Եւ ապա անօրէնքն կալեալ անմեղ մանուկն, արկեալ յերկիր, բռնութեամբ թլփատեցին, և եդուն ի շալակ համալի, և տարեալ արկին ի խանութն իւրեանց։ Եւ եկեալ ուսթայն՝ ետես զաշակերտն իւր այնպէս վիրաւորեալ, բարկութեամբ ելեալ գնաց առ խարաճչին, կագէր և հայհոյէր զնոսա՝ ասելով. «Միթէ անօրէնութեամբ ուրացուցանելն օրէ՞նք ինչ են»։ Եւ հրամայեաց հարկապետն՝ հանել զնա արտաքս։

Եւ գնացեալ ի խանութն իւր, և ամենայն օր տեսանէր, զի լայր մանուկն, և կայր տրտմութեամբ։ Ապա ասէ վարպետն ցաշակերտն իւր. «Որդեա՛կ իմ Բաղդասար, ահա յայտնի եղև և վասն քո. վասնորոյ ոչ կարես կալ աստէն քրիստոնէութեամբ. արի՛ և գնա՛ առ ծնօղսն քո, և անդ որպէս կամիս՝ այնպէս կա՛ց»։ Եւ ետ նմա դրամս, և յանձնեաց զնա կարաւանապետին։

Եւ եկեալ առ ծնօղսն, և պատմեաց լալով։ Եւ ծնօղքն ասացին. «Որդեա՛կ, ահա ամենեքեան իմացան զքէն, և դու ո՛չ կարես ծածկաբար պաշտել զհաւատս քո. երթ գնա՛ դու յաշխարհն Հայոց ի սուրբ Էջմիածին և յամենայն վանօրայքն, և անդ համարձակ պահեա՛ զհաւատ. մի՛ գուցէ աստ կալեալ զքեզ, վշտացուցանեն զքեզ»։

Իսկ երանելի մանուկն Բաղդասար՝ որպէս երկիր բարի՝ ընկալաւ զսերմն ուրախութեան, և ետ զպտուղն

հազարաւոր. և առեալ զօրհնութիւնս ծնօղացն՝ և թօշակ ինչ վասն պիտոյից ճանապարհին՝ և ուղղեաց դէմս իւր գնալ յԱրարատ։

Եւ ելեալ լալով և խնդութեամբ գնաց և եհաս ի սուրբ Էջմիածին. և յամենայն վանորայս շրջագայեալ՝ որպէս Վահան Գողթնացին, և ապա գտեալ վարդապետ մի Զաքարիա անուն, աշակերտեցաւ նմա, և ուսաւ Սաղմոսն և ի բերան ունէր։

Եւ եղև ի մեռանել վարդապետին, և գնացեալ նորա յԵրևան քաղաք, և յարեցաւ առ ումն քրիստոնեայ համարուեստ իւր, և կայր անդէն միամտութեամբ։ Իսկ չարն սատանայ յարոյց ումն տաճիկ ի վերայ նորա. և եկեալ առ երանելին՝ և ասէ. «Ես եմ Թուխաթեցի, և ծնօղք քո բազում աղաչեցին ինձ ասելով, թէ «Վասն Աստուծոյ՝ յորժամ գնաս յԵրևան, զմեր տղայն որոնեա, ուր և իցէ գտեալ՝ ընդ քեզ բերցես». և շրջեցայ յամենայն վանորայս. և ահա աստ գտի զքեզ. եկ՝ զի երթիցուք»։

Իսկ միամիտ պատանին Բաղդասար զնենգութիւն նորա ոչ իմացաւ. այլ և զգութն ծնօղաց անկաւ ի միտն, և պատրաստեցաւ ի գնալ։

Ասէ տաճիկն. «Թէ գոյ քեզ դրամ՝ տուր ի փոխ, զի տաց զմաքսն իմ. և գնամք յԱրզրում. անդ վաճառեցից ապրիշումս՝ և տաց զփողն քո»։

Եւ անմեղ մանուկն հանեալ ետ միամտութեամբ՝ զոր ինչ ունէր. և ելեալ ընդ կարաւանի, և գնացեալ հասին ի Կարին։ Եւ ետես Բաղդասար զումն տաճիկ՝ մերձակայ դրկից հօր իւրոյ՝ և համարուեստ ինքեան. որ ի տեսանելն զմիմեանս՝ խնդացին յոյժ։ Եւ ասէ տաճիկն. «Ես կամէի գալ յԵրևան վասն քո ըստ խնդրոյ ծնօղաց քոց. և որովհետև աստ եկիր, ի միասին գործեսցուք և ի միասին գնասցուք»։ Եւ կային սիրով, և գործէին զարուեստն։

Իսկ անիծեալ տաճիկն՝ որ պատրանօք եհան զնա՝ և եբեր յԱրզրում, իբրև ետես՝ թէ մնաց աստ, և ոչ կամի գնալ ընդ ինքեան, զչարեցաւ։ Եւ վասն դրամին՝ զոր

էառ, վարանէր թէ զի՞րդ ուրասցի։

Յաւուր միում գիտաց՝ թէ ընկեր նորա գնացեալ է ի գիւղ՝ բերել զպիտոյս իւրեանց. գնացեալ առ փաշայն, և մատնեաց զերանելի մանուկն Բաղդասար, և ասէ. «Տաճկի որդի մի ի Թուխաթոյ՝ գնացեալ յԵրևան՝ առնէր հայութիւն. և առեալ բերի մինչև ցաստ. աստ ևս առնէ հայութիւն»։

Եւ փաշայն եդ ընդ նմա երկու զօրականս՝ և ասէ. «Գնացեալ բերէք զնա»։

Իսկ անիծեալն այն անկեալ առաջ և զօրականքն զկնի, և յորժամ մերձ եղեն՝ ուր էր մանուկն, և պիղծն այն կացեալ ի բացեայ, և մատամբ եցոյց զկրպակն՝ և ասէ. «Ա՛յն է բնակութիւն նորա». քանզի անիծեալն այն երկնչէր յընկերէ նորա։

Եւ տեսեալ զնա զօրականքն՝ ասեն. «Դո՞ւ ես Թուխաթեցի Բաղդասարն»։

Ասէ պատանին. «Այո՛, ես եմ»։

Ասեն զօրականքն. «Արի՛ զի խնդրէ զքեզ փաշայն»։

Իսկ պարկեշտ մանուկն գիտաց՝ զի պիղծն այն վասն դրամին իւրոյ մատնեաց զնա. և ելեալ ի խանութէն՝ ետ բանալին ի միւս խանութպանն՝ և ասէ. «Յորժամ ընկերն իմ գայցէ, տո՛ւք զբանալիդ ի նա»։ Եւ ինքն ելեալ խնդութեամբ գնաց ընդ զօրականսն. և եմուտ առ փաշայն, և ետ ողջոյն։

Ասէ փաշայն. «Դու ի մեր աշխարհին տաճիկ ես եղեր. և գնացեալ ես յԱճմստան՝ դարձեալ ես քրիստոնեայ. արդ դարձեալ դարձի՛ր ի տաճկութիւն, և ես կարգեմ զքեզ զօրագլուխ»։

Ասէ մանուկն. «Ես քրիստոնէից ծնունդ եմ, և սնեալ եմ քրիստոսական հաւատով, և բնաւ ո՛չ գիտեմ տաճկութիւն»։

Ասէ փաշայն. «Զայդ՝ զոր ինչ և ասես՝ սուտ խօսիս։ Դու մի՛ զդք յոյս և ապաւէն առնուլ, այլ եկ ի ճշմարիտ հաւատս մեր. և թէ ո՛չ գաս, չարաչար մեռանիս»։

Ասէ Բաղդասարն. «Ես զհաւատս իմ ո՛չ թողում. և դու զոր ինչ առնելոց ես ընդ իս՝ արա»։

Եւ հրամայեաց իշխանն տանել զնա ի բանտ՝ և դնել զոտսն ի կոճեղս՝ որ է թօմրուղ։ Եւ ապա եկեալ տաճիկ ընկեր նորա, և տեղեկացաւ՝ թէ եկեալ տարին առ փաշայն. և գիտաց՝ որ վասն հաւատոյն են տարեալ. և գնացեալ առ իշխանն՝ աղաչէր՝ զի թողցէ զնա. և ասէ. «Թոյլ տուր դմա երթալ ի դժոխս. զի՞նչ օգուտ է Թուրքութիւն դորա մեզ»։ Զայս ասէր՝ թերևս զերծուցեալ փախուսցէ զնա գնալ յԵրևան։ Եւ ոչ լուան նմա, այլ անարգանօք սաստեցին նմա։ Եւ գնացեալ ի բանտն, և անկաւ զերեսօք նորա, լայր և ասէր. «Վա՜յ որդեակ, լաւ էր թէ չէի տեսեալ զքեզ, քան թէ տեսի ի տառապանս»։

Եւ ասէ ցնա երանելին Բաղդասար. «Աղաչեմ զքեզ, ուստայ, վասն Աստուծոյ և քո որդւոյ արևուն՝ բեր ինձ երէց մի, զի հաղորդեսցէ զիս. գիտեմ՝ զի ոչ թողուն զիս կենդանի»։

Եւ ելեալ Թուրքն գնաց եգիտ երէց մի Ցակոբ անուն, որ երբեմն լեալ էր մաքսապետ. որ եկեալ հաղորդեաց, և զգուշացոյց մի՛ երկնչել ի մահուանէ։ Եւ ի վաղիւն հանեալ ի բանտէն՝ կացուցին առաջի իշխանին։

Եհարց իշխանն, թէ «Ի խելս եկի՞ր, թէ դեռ ևս կաս ի խելագարութեան»։

Ասէ Բաղդասարն. «Ես ի բնէ խելօք էի. բայց թէ լսեմ քեզ, յայնժամ խելագարիմ»։

Ցայնժամ սրտմտեալ իշխանն՝ ասէ. «Դու ոչ ընկալար զբանս իմ, զի ես զքեզ մեծացուցանել կամէի, և դու զայն անարգեցեր»։

Ասէ մանուկն. «Ես վաղուրեմն ասացի, թէ արա զոր ինչ կարող ես, զի ահա կամ պատրաստ»։

Եւ բարկացեալ իշխանն՝ հրամայեաց Տաճկաց հանել զնա արտաքոյ քաղաքին՝ և սպանանել։ Եւ առեալ տանէին զնա. և ի ճանապարհին հարկանէին և կափահարէին, թքանէին։ Իսկ նա գնայր սաղմոսելով, և ասէր.

«Երանի՜ ամենեցուն՝ որ երկնչին ի Տեառնէ, և գնան ի ճանապարհս նորա»։ Եւ առեալ տարին ի բլուրն՝ որ ասի Սուրբ Նշան, և անդ հատին զգլուխ սրբոյն։

Եւ քրիստոնեայքն հրամանաւ իշխանին վեր առեալ զպատուական մարմին սրբոյն գլխովն՝ և արիւնաշաղախ հողն՝ և տարեալ ի հասարակաց գերեզմանն՝ ի հարաւակողմն եկեղեցւոյն ի ներքոյ որմոյն հանգուցին զսուրբն։ Եւ էր ժամն ութ աւուրն, և պայծառ արեգակ։ Եւ ահա գունդ մի բոլոր՝ որպէս հուր վառեալ՝ պատառելով էջ յերկնից, և հարաւ յեկեղեցին, և ցնդեալ ի վերայ գերեզմանի սրբոյն։ Եւ տեսեալ զայն բազում Տաճկաց, և երկմտեցան ի հաւատոցն։ Իսկ իմ գոլով անդ ամ մի, բայց ի ժամ նահատակութեան սրբոյն ոչ պատահեցայ. այլ ի վաղիւն հարցի ցԹուրք ընկեր նորա. և նա պատմեաց զամենայն ի ծննդենէն մինչև ի նահատակութիւնն. և ես գրեցի որպէս լուայ։

Կատարեցաւ սուրբն Բաղդասար ի թուին ՌՃԺԳ, յաւուր տօնի սրբոց Հռիփսիմեանց։

Յիշեալ խմբագրութիւնը որ նախորդից բոլորովին անկախ է երևում, ունի Զաքարիա սարկաւագ, Բ. էջ 120։

Digitized by Google

# 86.

## ՅԱԿՈԲ ՈՐԴԻ ՂՈՒԼԵԿԻ

† ՌՃԻԲ—1673 *մայիս 27 գշ.*

*Դարձեալ ի միւս ամին ՌՃԻԲ թուին ըմբռնեցին զմին Ղուլեկի որդի Յակոբ անուն։ Եւ եկեալ չար դանիշման մի վկայեաց թէ «Սա խոստացաւ ինձ տաճկանալ»։*

*Եւ տարեալ ի ղատին և ի փաշային՝ և նա համարձակ եկաց յատենի և ասաց. «Քաւ լիցի, ես ոչ եմ ասացեալ զայդ բան և ոչ ասեմ. այլ զՔրիստոս Աստուած պաշտեմ և ոչ ուրանամ»։*

*Եւ տարեալ եդին ի բանտի։ Եւ էր յետ Զատկին յաւուրս Յինանցն։ Եւ բազում աւուրս սոփալըլուկ չարչարեցին և երեք անգամ կացուցին յատենի և բազում պարգևս և մեծութիւնս խոստացան նմա, և ոչ կարացին խախտել զնա ի հաւատոցն և ի սիրոյն Քրիստոսի։*

*Եւ յետոյ հրաման ետուն քարկոծել զնա։ Եւ տարեալ ի տեղին ուր զԲաղտասարն սպանին և անդ քարկոծեալ՝ կատարեցաւ ի Քրիստոս ի նոյն աւուր սրբոց Գայիանեանց կուսանաց տօնին։*

*Այս վկայաբանութիւնն ունի z ձեռագիրը Մեսրոփանոս հայրապետից և Բաղտասար Նոր վկայից յետոյ։ Սրբոց Գայիանեանց տօնը 1673 թուին ընկնում է*

9. z սոփալըլուկ. 10. z երեգ.

*մայիս 27 դշ.՝ ուստի և Նահատակութեան ամսաթիւն ու օրը որոշւում է։*

*Այս Նահատակիս մասին Զաքարիա սարկաւագ Բ. էջ 125, ունի հետևեալ տեղեկութիւնը Բաղտասար պատանու Նահատակութեան պատմութեան վերջը. «Յետ երից ամաց (=1667) Նահատակեցաւ դպիր Յակոբն, և եղաւ մերձ ի գերեզման Բաղդասարին։»*

# 87—Գ.

## ԵՐԵՔ ԱՆԱՆՈՒՆ ՎԿԱՅՔ

† ՌՃԻԲ=1673

*Սոյն անանուն վկաների մասին Չամչեան, հատ. Գ. էջ 656, ունի հետեւեալ անորոշ տեղեկութիւնը։*

*Նահատակեցան և երեք ոգիք ի Հայոց ի Թուին Հայոց ՌՃԻԲ. մին ի Կարին, և միւսն ի Սեբաստիա, և երրորդն ի Կամուրջ գեղջ, այն է Քեօփրիւ գեղ։*

Digitized by Google

# 90.

## ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ ՄԱՆՈՒԿ

✝ ՌՃԻԵ=1676

*Սոյն վկայի մասին տեղեկացնում է Չամչեան, հատ. Գ. էջ 655, հետեւեալ հատուածով։*

Չկնի այսոցիկ փոքր մի յետոյ քան զմահ Առաքելի եղև և նահատակութիւն աքանչելի մանկանն Գրիգորի Տաթևացւոյ՝ ի թուին Հայոց ՌՃԻԵ։ Սա էր ի գեղջէն Ստաթևու՝ կայտառ և գեղեցիկ դիմօք, և գովելի վարուք. որոյ գնացեալ յուխտ ի սուրբ Կարապետ՝ որ ի Մուշ, ըմբռնեցաւ ի ձեռս այլազգեաց, որք բազում ողոքանօք և խոստմամբք ընծայից գուն գործէին հաւանեցուցանել զնա, զի դարձցի ի հաւատոց. այլ նա բացէ ի բաց հերքեաց զյորդորանս նոցա՝ աղաղակէր. «Ես քրիստոնեայ եմ, և ծառայ Քրիստոսի Աստուծոյ իմոյ օրհնելոյն ի բարձունս»։

Ապա սկսան խոշտանգել զնա և չարչարել ազգի ազգի տանջանօք. և տեսեալ զանփոփոխելի միտս նորա՝ հատին զգլուխ նորին սրով։ Եւ գլուխ երանելի մանկանն անկեալ յերկիր, և ի բաց թռուցեալ՝ բարբառեցաւ կենդանի ձայնիւ ի լուր ամենեցուն. «Օրհնեալ է Աստուած, օրհնեալ է Աստուած»։ Եւ բարձեալ զմարմին նորա՝ թաղեցին յեզր գերեզմանատան վանիցն։

Եւ այս աւանդի ի ժամանակակից անձնէ՝ լուեալ ի բազմաց ականատես եղելոց։

Digitized by Google

# ԳԻ.

## ԴԱՎԻԹ ՍԵԲԱՍՏԱՑԻ

† ՌՃԻԶ=1677 փետր. 22

Ի պատմութիւնս երգոյ տաղաչափական՝
Կամիմ ըզքէն ճառել, վըկայդ պատուական.
Արտօսրածին ձայնիւ և հառաչական,
Ցերես անկեալ հայցեմ զքէն աղերսական։

Խընդրեմ ի Քրիստոսէ տալ մըտաց իմ բան՝
Վիպասանս յարմարել քեզ ներդաշնական.
Թէպէտ մեղապարտ եմ և ոչ եմ արժան՝
Ներբողել զքաջութիւն քոյդ վըկայութեան։

Սակայն փափագ սըրտիս ըստիպէ յայս ջան՝
Լինել ինձ ձեռնամուխ վեհիդ պատմութեան։
Ընկալ մեծդ ի փոքրէս ընծայ 'ւ աղերսան,
Ի տարտամ անձնէս քեզ յիշատակարան։

Ի բըռնակալութեանն ազգացըն տաճկի,
Եւ ի յարքայութեանն Սուլտան Մահմետի,
Ի թըւաբերութեանս Հայկասեր ազնի
Հազար հարիւր քըսան և ի չորրորդի,

Տըւաւ իշխանութիւնն Սեբաստ քաղաքի՝
Ամիրայի ումեմն՝ որ Մահմէտ կոչի.
Բայց ինքն էր յարեմուտս ի պատերազմի,
Եւ ի ձմերոց նըստեալ ի նոյն աշխարհի։

Եւ զայլ ոմն ոստիկան յըղեաց յիւր տեղի՝
Իշխել Սեբաստիոյ և իւր Թումանի.
Ցորոց աւուրան արի մանուկս ըմբըռնի՝
Ի ձեռն ազգին Տաճկաց սա զըրապարտի։

Որ և զայս չարութիւնս բընական ունին,
Եւ ըստ կարծեաց իւրեանց վարձըս համարին.
Զայսպէս բարուրս հաստել յո զուրն աջողին,
Որպէս և այսմ սըրբոյ որոգայթեցին։

Էր սուրբ վըկայս Դաւիթ ի Սեբաստիոյ,
Որդի Մելիքոնի ումեմն աղքատոյ,
Մանուկ նորահասակ ի յազգէս Հայոյ,
Ամաց իբր եւթնեւից՝ յըստամբակ տիոյ։

Եւ վասն աղքատութեանն զարուեստն իւր թողեալ՝
Ի բաղանիս չեխին վարսաւեր մըտեալ.
Ընկերքն ամենեքին էին տաճիկ լեալ,
Ի միում բաղանւոջ նովաւ աշխատեալ։

Ըստ աւուրց ըստ աւուրց բաժան առնէին
Ըզվաստակըն իւրեանց՝ զինչ հաւաքէին.
Եւ իւրաքանչիւր ոք առնոյր զիւր բաժին.
Ապա ի բաղանեացն ելեալ գընային։

Սոյնպէս յաւուր միում բաժան արարեալ
Ընկերքն ամենեքին զփողըն ժողովեալ,
Եւ կոչեն ըզԴաւիթ ըզբաժինն ի տալ՝
Ասելով թէ «Մէլո՛ւն կեաւուր, եկ և առ։»

Իսկ նա վըստահաբան նըզով կարդացեալ՝
Թէ «Ո՞վ իցէ կեաւուր, ես էրմէնի լեալ»։
Եւ զայս լըւեալ նոցա և ուրախացեալ,
Եւ ծափս հարկանելով զայս բան սաացեալ.

15. է լիեալ. 26. էրմէնի բառի է-երի վրայ մի երկրորդ ձեռք աւելացնում է ա, իբր արմանի. | է լիեալ.

Թէ «Զի՞ եւս են պիտոյ այլ ոք մեզ վըկայ
«Ահա մեք իսկ լըւաք ի բերնոյ դորա՝
«Զի սա ասաց եթէ «Նէլլէթ կեաւուրայ.
«Տաճիկ եմ»—ասելով սալաւաթ կուտայ»։

Նոյն ժամայն ըմբըռնեալ ըզդառըն անմեղ՝
Գայլքն արիւնանախանձ և բարուք տըգեղ՝
Առեալ ըզնա տարան ի Միհէանի չեխ,
Թէ «Զոր լըւաք չասեմք՝ արդեաք չէ՞ մեզ մեղ։

«Զի մեք ամենեքին եմք բանիս վըկայ՝
«Զի նըզովըս Հայոււն իւքնին ասաց դա.
«Եւ ի մեր առաջի տաճիկ եղև սա.
«Փառք եւ մեր հէզրէթին. զի՞նչ ասես սըմա»։

Եւ չեխըն այն հարցեալ Դաւթի և ասէ՝
Թէ «Զոր վկայեն դոքա ըստոյգ այդպէ՞ս է»։
Եւ սուրբն ասաց՝ թէ «Իմ զայդ ասացեալ չէ.
«Եւ այդպիսի զըրոյց իմ խօսեցեալ չէ»։

Եւ նա բազում պարգևս խոստացաւ նըմա՝
Թէ «Ե՛կ ի մերս հաւատ, զըարիքս վայելեա.
«Ի սոցանէ փըրծնուլ քեզ ճարակ չըկայ.
«Ե՛կ դու, որդեակ, ի մեր օրէնս հաւատա»։

Եւ սուրբն ասաց՝ «Թէ ինձ լաւութիւն կ՚առնես՝
«Զան դիր որ հաւատովս դու զիս ազատես.
«Ապա թէ ոչ զհաւատս չեմ ուրանար ես,
«Եւ ոչ ձերդ օրինաց տեղիք կուտամ ես։»

Եւ չեխն ասաց տանել ըզսուրբն առ ղատին.
Նոքա ըզնա տարեալ դատաստան մուծին։
Հայեցեալ դատաւորն ի յերես Նաւին՝
Եւ խօսեցաւ ընդ նա հեզ և մեղմագին։

«Ո՛րդեակ, յառաջագոյն դու տաճկացեալ ես,
«Եւ փառք օրինադրին մերոյ տըւեալ ես.

30. Այս տողից յետոյ է սխալմամբ գրում եւ նշաններով չնշում և յաջորդ տան առաջին տողը.

«Իսկ այժմ վասն էր զբան քո դու զըլացեալ ես.
«Մերս օրէն քան զՀայուն միթէ գէ՞շ կարծես։

«Տես զի արքայութիւն և մեծ փառք կայ մեզ.
«Ե՛կ դարձիր՝ զի բազում բարութիւնս տաց քեզ։»
Ասաց թէ «Քրիստոնեայ եմ և եղէց ես,
«Եւ զԱստուածն իմ Քրիստոս չեմ ուրացեալ ես։»

Եւ մերկացաւ զհանդերձն յանձնէն իւրովի՝
Թէ «զինչ կամիս արա դու վաղվաղակի։»
Իսկ դատաւորն տեսեալ զհաստատ միտսն Դաւթի,
Մատնեաց ըզնա բդեշխին՝ պահել ի բանտի։

Բըդեշխն տարեալ պընդեաց զոտսըն ի կոճի՝
Ձերիս աւուրս պահեաց, միթէ երկընչի։
Ապա հանեալ ըզնա՝ տարան կըրկնակի՝
Յատեան դատաւորին՝ թերևս ուրասցի։

Եւ դատաւորն ասաց. «Մինչ ցե՞րբ յամառիս.
«Ե՛կ դու ի մերս օրէն, տաց քեզ զինչ կամիս։»
Նա «Անհընար, ասէ, թէ խըզի հոգիս.
«Արա վաղվաղակի զոր ինչ և խորհիս։»

Ապա առ յոստիկանն ըզնա յուղարկեաց՝
Միթէ կեղակարծի նորին յերեսաց.
Եւ նա տեսեալ զԴաւիթ՝ գըթաբար ասաց.
«Ո՛րդեակ, եկ հաւատա մերում օրինաց.

«Վասն էր մատնես մահու զհասակդ գեղապանծ,
«Եւ զմանկութիւնդ չըքնաղ զըրկես ի կենաց.
«Ընդ մեզ լեր ի հաւատս մեր փառաւորած,
«Եւ լեր երևելի ամենայն մարդկաց։»

Ասաց թէ «Ինձ հնար չէ ի ձերն հաւատ գալ,
«Եւ ոչ զիմ հաւատըս կամիմ ուրանալ.
«Զի ես քրիստոնեայ եմ՝ սոյն հաւատ ծընեալ,
«Եւ ի սոյն մեռանիմ յուսով կատարեալ։»

22. t հաւատայ՛.

Digitized by Google

Իշխանըն բարկացեալ՝ բըրածեծ առնէ.
Իսկ սուրբն ասէ. «Գանս այս ոչինչ և դոյզն է»։
Այլ և զգողըն բանտեալ՝ նա բերեալ զանէ,
Զի զսուրբն ահարկութեամբն սարսափեցուսցէ։

Այնու ևս ոչ կարաց յողդողդել ըզնա.
Վասն այն. ետ ի կոճեղս պընդել զոտ նորա.
Եւ ի գիշերին յայն զմարմինն կըտտել տայ,
Ունելեօք երկաթի կեղեքել ըզնա։

Եւ նա ի յըմբըռնելն սաստիկ նըւաղէր,
Միոյ միոյ ի դուռն մահու հասանէր։
Ի վաղիւն ըզսուրբն առ դատաւորն յըղէր,
«Ես անպարտ եմ. արա զինչ կամիս» ասէր։

Եւ ի տանիլն ըզնա ՚ի դատարանի,
Ցուղին զոմն տաճկացած բերին առաջի,
Ծափահար խընճոյիւք ՚ւ ասացին Դաւթի.
«Տես զի սա տաճկացաւ և փառաւորի։»

Եւ սուրբն ասաց. «Բարեաւ զհաւատն վայելէ.
«Ես տաճիկ չեմ լինար. սէրս առ Քրիստոս է։»
Անցեալ անտի՝ յատեան բերեալ մուծանէ
Ամբոխն՝ որ ծարաւի նորին արեան է։

Դատաւորն կամեցաւ զի հաստատեսցէ,
Բարուք փնասու գըրել զի մըճիռ տացէ.
Բայց առ Սեահ էֆէնտին ըզնա յուղարկէ,
Զի թէ և անդ չդառնայ՝ «Քարեցէք» ասէ։

Եւ ի ճանապարհին ոմըն հարկանէր,
Եւ ոմն ածեալ ապտակ ի նա թըքանէր.
Այլ ոմն ահաբեկեալ զնա սըխրացընէր,
«Թողէք զի զդա քարկոծ արասցուք» ասէր։

Եւ գընացեալ մըտին Սիեահի յորդին.
Եւ նա տեսեալ ըզսուրբն՝ ասաց տըխրագին.
«Որդեակ, յէր չանսացիր դու իմ խըրատին.
«Զքեզ ինձ որդի կարծեմ, դու չես հնազանդ իմ։

4. t ըզօրն.

Digitized by Google

«Արդ եկ ի մերս հաւատ՝ եթէ ինձ լսես.
«Զի պարգեւըս բազում քեզ ընձեռեմ ես։»
Եւ ասէ պաշտակլին «Արծաթ յոյժ բերցես,
«Թամբեալ ձի և ըզգեստ, ինչք բազում ածցես։»

Եւ զնոսին առեալ՝ եդ առաջի Նորին,
Թէ «Ե՛կ դարձիր ի մեզ, ինչքս այս քեզ լիցին.
«Այլ և ծանուցանեմ զքեզ թագաւորին՝
«Զի քեզ դեօղըս տացէ և սըպայութին։»

Սուրբըն պատասխանեալ և այսպէս ասէ.
«Թէ տաս ինձ յոլով ինչք, նա վերջըն մահ է.
«Քոյդ փառաց՝ զոր դու տաս, իմ հաւանում չէ.
«Ինձ քան լիցի դառնալ յիմոյ հաւատէ։»

Իսկ չեխն ասաց ի բանտ ըզնա արկանել,
Եւ զաւուրըս երիս անսըւաղ պահել.
Եւ զինուորք բըդեշխին առան ի տանել
Ի զընդան բըդեշխին ըզնա արգիլել։

Գըրոհ տըւեալ տաճկացն և անդէն կուտին,
Յարկոծել կամեցան ի ճանապարհին.
Զինուորքըն փութացեալ հազիւ հասուցին
Ի բանտըն շուպաշուն՝ զի մօտ էր տեղին։

Գըլխիվայր կախեցին ի նոյն գիշերին,
Եւ զնա թողեալ այնպէս ինքեանք գընացին.
Եկեալ ի պատուհանն կինն այն բըդեշխին՝
Գիտել թէ զի՞նչ առնէ ի կախաղանին։

Տեսանէր լոյս վառեալ որպէս ըզղամբար,
Եւ սուրբն զըւարթերես ի յարձակի կայր.
Տեսեալ զըզքանչելիսն կինն և հիանայր,
Գնացեալ առըն իւրոյ զպատմութիւնըն տայր։

Ասէր մեղադրանօք՝ թէ «Զի՞նչ գործեցեր՝
«Բերել զանմեղն ի քո տունըդ չարչարել։»
Վասն որոյ ի վաղիւն ետ ըզնա հանել,
Եւ առ միւս շուպաշի յընկերքն իւր տանել։

Նոքին տարեալ եդին զոտսըն ի փայտի,
Լըցին ջուր ի ներքոյ՝ զի սառեալ պաղի.
Եւ ի յերեկոյին առ զինուորսն խօսի՝
Իբր ահ արկանելով՝ միթէ կակղասցի։

«Երթայք պատրաստեցէք տեղի ըսպանման,
«Ըզխորըն փորեցէք վաղուեան քարկոծման։»
Սըրբոյն լըւեալ ասաց «Ընդէ՞ր ինձ չասան,
«Զի ես երթեալ բրէի զտեղին իմ մահուան։»

Եւ ոմն ի բըդեշխոյն՝ այր չարաբարոյ՝
«Ինձ զի՞նչ տայք», ասէ նա ընկերացն այլոյ,
«Զի զնա ես դարձուցից ի յիւրն հաւատոյ։»
Նոքա դըրաւ եդին նըմա պայմանոյ։

Յուրացընել ըզսուրբն ելեալ գընաց նա,
Եւ յորժամ ոչ կարաց, յամօթ հարաւ նա.
Բարկացեալ և ասէ զինուորացն իւր նա,
Դըրէք զոտսն ի կոճեղն, յոյժ պընդեցէք զնա։

Ապա բերեալ չըւան ի թևսն կապել տայ,
Քարշեալ ի յառաստաղն ամրացընել տայ,
Եւ բերեալ բազում քար ի կոճին կուտել տայ,
«Պինդ մընասցէ, ասէր, և մի թուլցի դա։»

Եւ որպէս ի յորսայս պըրկեալ եղև նա,
Ընդ կոճն և յառաստաղն ի կախ մընայ նա.
Ապա երթեալ բերեն չըւան կանափեայ
Ոլորեալ խարազան՝ ջըրիւ թացին զնա։

Սաստիկ և անողորմ նովաւ ձաղեցին,
Կիսամահ արարեալ թողեալ գընացին.
Ի մօտն հաւախօսի եկեալ՝ զնա տեսին
Զըւարթացեալ, օրհնէր զԱստուածն միածին։

Եւ իջուցեալ ըզսուրբն ի կախատեղէն,
Ոլորեալ ի յետոյն ըզձեռսըն կապեն,

29. t ի կաղատեղէն.

Չըւան ի պարանոց նորին արկանեն,
Ի կատարման տեղին երթեալ դադարեն։

Գընան ի բաղանիսն, ասեն Սիեահին.
«Ահա բերաք ըզնա յըսպանման տեղին.
«Արդ զի՞նչ հըրամայես դու վասըն նորին։»
Եւ նա ասէ. «Բերէք առ իս յայս տեղին։»

Յորժամ առեալ տարան ըզսուրբըն առ նա,
Բարդաւաճեալ կերպիւ արգահատեաց զնա.
Խընամարկեալ զՊաւլթիւ՝ խանդաղատի նա,
Աղաչեաց ողոքմամբ և ասաց նըմա.

«Ո՛րդեակ, մի՛ տար ի մահ ըզքոյդ մանկութիւն,
«Ըզհասակդ վայելուչ ի յըսպանութիւն.
«Եւ ես տաց ըզդուստր իմ քեզ ի կընութիւն,
«Եւ ըզքեզ դըրեցից ինձ յորդիութիւն։»

Եւ սուրբըն ամենևին նըմա ոչ անսաց,
Եւ ըզխոստմունք նորա յոչինչ համարեաց.
Իսկ չեխն տանիլ յոտիցն կախել զնա ասաց,
Մինչև ելանիցէ ինքն ի բաղանեաց։

Ըստ հրամանաց չեխին արարին նըմա.
Տարեալ ի մի ոտիցն կախեցին ըզնա.
Սուսերօք և զինուք խըծըծէին զնա,
Հարկանէին քարիւ և փայտիւ նըմա։

Ի բաղանեացն ելեալ չեխն և եկն առ նա՝
Մորմոքագին դիմօք փայփայէ ըզնա,
Իբր բարիս առնելով օժանդակ լինայ,
Տայ ի կախաղանէն իջուցանել զնա։

Շողոքորթմամբ խօսի ընդ սըրբոյն արի.
«Արի՛ ի մեր օրէնս, որդեա՛կ իմ արի,
«Արի՛ ի պատուիրանս մեծի արդարի,
«Զի՛ յերկու կեանըս քո դըտցես ըզբարի։»

Եւ սուրբըն ո՛չ նայեցաւ յերեսըն նորա,
Այլ լըռութեամբ եկաց առաջի նորա.

Վասն որոյ զայրացեալ և մահ ըսպառնայ,
Զի թէ ոչ ուրասցի զնա քարկոծել տայ։

Պատասխանի ետ սուրբն և ասէ նըմա.
«Զոր ինչ առնելոց ես, նա փութով արա.
«ԶՔրիստոս Աստուած ասեմ և պաշտեմ ըզնա.
«Յօժարի եմ մեռանել վասն անուան Նորա։»

Ապա հըրամայեաց չեխըն ամբոխին՝
Քարկոծ առնել ըզնա՝ ըստ դատաւորին.
Նոքա տարեալ ըզնա ի վիհն իջուցին,
Եւ հանեալ ի գըլխոյն և փաղաքշէին.

Երեք անգամ ի խորխորատն իջուցին,
Դարձեալ ի վեր հանեալ և յոյժ նեղէին.
«Եկ ի յուղիղ և ջիտ հաւատս, ասէին,
«Զի մի մեռցիս, ի նանիր կեանք քո կորիցին։»

Եւ յոչ լըսել սըրբոյն՝ ձանձրացան նոքա,
Ասեն թէ «Սատանայն կապեր զմիտ դորա։»
Եւ ի հորն իջուցեալ՝ հողափակեն զնա,
Եւ քըստմընեցուցեալ հըրըշտէին զնա։

Իսկ սուրբն յայսկոյս և յայն մինչդեռ ակնարկէր,
Կոյտն ըսկըսեալ խըճիւ քարընկէց լինէր.
Բարեկամ մի յէմիր յառաջմէ ունէր,
Նա եկեալ առ Դաւիթ զայս խըրատս ասէր.

«Եթէ չես ուրանար զՔրիստոս Աստուած դու,
«Ասա եպերանս ինչ մեր հաւատոյս դու,
«Զի մի յամս և կամկար քարկոծիցիս դու,
«Այլ ճեպով ըսպանցեն՝ զի ազատիս դու։»

Սուրբն ասէ. «Մի տացէ Աստուած ինձ խօսել
«Հենգն ինչ, և մեղաց ձեր իմ կըցորդ լինել.
«Ես անպարտ եմ. խընդրէք զարիւն իմ վաթել.
«Արարէք անձին իմ՝ զինչ կամիք առնել։»

Տաճիկ մ՚ երթեալ ասաց. «Ինձ հալալ կ՚անես՝
«Որ քեզ քարինըս հինգ հարկանիցեմ ես։»

Սուրբն ասէ. «Ի քեզնէ խնդիր մ՚ ունիմ ես.
«Քեզ թողութիւն լիցի՝ թէ զայն կատարես։

«Ե՛րթ դու և բեր առ իս ըղմըկաններս իմ,
«Որպէս եղեն առիթ հեղլոյ արեանս իմ.
«Զի նախ նոքա արկցեն քար ի վերայս իմ,
«Ապա դուք քարաձիգ լիջիք մարմնոյս իմ։»

Այր ոմըն անօրէն, խիստ և ժանտաբար՝
Առ սուրբն եկեալ ցասմամբ՝ անողորմաբար
Ըռըմբով հինգ անգամ ուժգին զնա եհար,
Անդ ի խորափըտին կիսամեռ արար։

Կալեալ զվարսից սըրբոյն և ի վեր առեալ՝
«Փառք տուր առաջնորդին մերոյ», ասացեալ,
«Զի ի միւս կենացն ես չըլինիս զըրկեալ։»
Եւ սուրբն ուշաբերեալ «Ո՛չ կամիմ» գոչեալ։

Եւ խուռն ամբոխն անդէն ըզնա քարկոծեաց,
Յաւուր տօնախըմբման սըրբոց Վարդանեանց,
Սուրբս այսպէս քաջութեամբ զընթացն աւարտեաց,
Եւ առ Քրիստոս Աստուած զհոգին աւանդեաց։

Ցոլմունք լուսոյ հեղեալ հրաշաւորական,
Փայլեալ ծիրանագոյն ի տիպ աղեղան,
Ծաւալեալ ի վերուստ կամարանըման,
Ի վերայ սուրբ մարմնոյն ի տեղւոջն կատարման։

Եւ յետ երկուց աւուրց դատաւորն ասաց՝
Երթալ զնա յօշատել և արկանել շանց.
Զինուորքն եկեալ հատին զթևան գըլխոյն ի բաց՝
Առ ի կերակուր տալ ըզնա գազանաց։

Եւ այր մի կաշառօք զմարմինն սուրբ թափեալ՝
Եկեալ քրիստոնէիւք և ըզնա բարձեալ՝
Հանդերձ քահանայիւք ի տապան եդեալ,
Ի գերեզմանսն որ Սուրբ Քառասունք կոչեալ։

14. է գոչեալ.

Եւ էր Թիւըս բարդեալ Հայոց տումարի՝
Երից եռ հարիւրից և մին հարիւրի,
Եւ այլ եռ երեսնից եռ երկոտասնի,
Ցամնոյ փետըրվարայ երկ մետասանի։

Իբրև զխաղող խայծեալ կըթեցին ըզսա,
Բերեալ ի հընծանոյ գուբ արկին ըզսա,
Գինի բերկրանաց մեզ ճըմլեցին ըզսա՝
Մենքենայիւք վիմաց և ռըմբին ըզսա։

Բնաւին պըտուղք տընկոց սիրուն երևի,
Ի տես և ի ճաշակ գեղեցիկ թըւի,
Բայց իւրն այգւոյ տընկոյ բերքըն թէ լինի,
Առաւել վայելուչ ’ւ ընտիր տեսանի։

Այսպէս և սուրբս այս մեզ քաղցր և համեղ է,
Որ ի մեր ժամանակ նահատակեալ է.
Թեպէտ ընտրեալք բազում և սուրբք յոլով է,
Սակայն մերում ծառոյ բերքըն սուրբս այս է։

Մեծ զարմացումն ունիմ և կամ հիացեալ՝
Իբր ի՞մ իմիք եղև այդքան զօրացեալ.
Քանզի աշխարհական սոսկ ունկամբ լըւեալ,
Աստուած է Քրիստոս կարծեօք ծանուցեալ։

Յուսով հաստատագոյն այնքան քաջացեալ,
Ի խոստմանց կամ յահէ զիա՞րդ ոչ կասեալ.
Լըլկման չարչարանաց հի՞պէս տոկացեալ,
Ի սէր դըստեր չեխին հի՞մ ոչ տարփացեալ։

Բարեյաղթ քաջ վըկայ, յումէ վարժեցար.
Արդ զի յաւուրս քոյ զոք վըկայ ո՞չ տեսար՝
Նորմէ զի կարծիցի թէ վըստահացար,
Եւ կամ թ’ ի գրոց ուսեալ և հանդիսացար։

Առ Տէր բարեխօս լեր վասն ամենայնի,
Միանգամայն ազանց քրիստոնեայ տոհմի,

8. t մենքեննայիւք. | t ըռըմբին. 28. թէ փխ. թ’.

Թողութիւն շընորհել մեղացըն պարտի,
Այլ և Միքայէլի՝ զարմ Բարղամ գըրչի։

Յետ այսց ամենայնի աւուրք ինչ անցեալ՝
Քահանայ մի անուն Յովանէս կոչեալ՝
Վասըն վաճառելոյ շեղջ գարւոյ կուտեալ՝
Մօտ ի տեղին յայն՝ ուր Դաւիթն քարկոծեալ։

Եւ զոմըն մականուն Ապըրկեր կոչեալ՝
Ըզնա գարւոյն պահակ ի վարձու կալեալ.
Սա ի մի գիշերացն հինգ ժամուն տեսեալ
Դաւթի քարկոծման տեղն՝ զի լոյս ցոլացեալ։

Առ յայն առաւօտին ծանօթքըն տեսեալ՝
Զի էր Ապըրկերն այն յոյժ այլագունեալ,
Նոքա հարցեալ թէ «Քեզ զի՞նչ է պատահեալ՝
«Որ այդպէս այլադէմ դու կաս շըրտուցեալ։»

Ասէ. «Մինչ պահէի, յանկարծ լուսացաւ,
«Տեղիքն պայծառացեալ ի ցերեկ դարձաւ.
«Եւ ես ապշեալ՝ անդէն միտս յիմարեցաւ,
«Եւ անձն իմ զարհուրեալ և յոյժ դողացաւ։

«Զի լոյս սափորաձև ի յերկնից եկեալ,
«Գաղոց կախատեղւոյն ի մօտըն իջեալ,
«Զորոյ պայծառութիւնն միտք իմ ոչ բաւեալ,
«Եւ չէ լոյս արևոյս նորա նըմանեալ։

«Զի ինձ անծանօթ էր լոյսն որ հանդիպայ,
«Եւ զի միայն էի և ես յոյժ երկեայ.
«Եւ ոչ գիտեմ թէ ի տեղին յայն ինչ կայ՝
«Որ այնպիսի լուսոյ արժանի է նայ։»

Զի սա չէր ի քաղքէն, այլ գաւառակայ.
Վասն այն չգիտէր զտեղին քարկոծման նորա,
Եւ չէր սըմա ինչ փոյթ որ հարցանէր զնա,
Եւ կամ զնահատակման տեղին քըննէր սա։

Տեսիլս էր շաբաթ լոյս մեծի Պասեքին՝
Ուր Սըրբոց Քառասնից տօնըն կատարին.

Digitized by Google

Եւ նախ քան զայս՝ բազում շատ անգամ տեսի
Ի կատարման տեղին և գերեզմանին։

Եղև սուրբս այս Դաւիթ ցուպ և գաւազան
Ումեմն ուրացելոյ յետուն ծերութեան,
Զի զսա խրախոյս առեալ իւր և ախոյան,
Եւ կանգնեալ դիմակայ իւրն ուրացութեան։

Սոյն վկայաբանական տաղն ունի միայն t ձեռագիրը, էջ 218 բ—228 ա, այս վերնագրով. «Պատմութիւ տաղիւ չափեալ ոտանաւոր նահատակութեան Դաւթի Սեբաստացւոյ»։ Սորա անմիջական և անբաժան շարունակութիւնն է կազմում Գասպար Կռուանէ տաղը՝ որը իբրև առանձին նահատակի պատմութիւն մենք բաժանելով դնում ենք ներքևում։

Տաղի հեղինակն է ոմն Միքայէլ որդի Բարզամ դրչի, որ և իր անունը յայտնապէս յիշում է էջ 515, տող 2։

Հեղինակի անունն են կազմում նաև էջ 514, 17—28 տողերի սկզբնատառերը, որոնք մենք յայտնի անելու նպատակով հաստ ու սև տառերով ենք տպագրել տուել. այսպէս Մ Ի Ք Ա Ց Ի Լ Ի Բ Ա Ն Ն։ Հեղինակն անշուշտ այդպիսի մի անորոշ տեղ դնելով իր ստորագրութիւնը, նպատակ է ունեցել պաշտպանուել խաբդախող գրիչներից, որոնք կարող էին տողերի կամ բառերի շարքը փոխելով՝ հեղինակի ստորագրութիւնը անհետացնել։

Այդպիսի մի խարդախութեան հետաքրքիր դէպք ծանօթ է մեզ Գրիգոր Աղթամարցու «Գարունն երեկ պուլպուլն այգին, ծաղկունք ամէն շատլըխ արին, և մուշտուլուխ ....» տաղի վերաբերմամբ։ Այդ տաղը ութը տուն է և սկզբնատառերը կազմում են Գրիգորիս անունը, տես Կ. Կոստանեանց, Գրիգորիս Աղթամարցին և իւր տաղերը, Թիֆլիս, 1898, էջ 46—47։ Բայց ահա՝ Խաչիկ վրդի. ժողովածուի թ. 27 ձեռագրի

մէջ (էջ 139 բ) այդ տաղը կրճատուելով վերածուած է չորս տների, և այն՝ տողերը խախտած կարգով. Նորան կցուած է նաև իբր անբաժան շարունակութիւն մի տաղի՝ Գրիգորիս Աղթամարցու մի այլ տաղը «Ծաղկունքն առեն հերիք արա» (տես Կոստանեանց, Գրիգ. Աղթ. էջ 48). այնպէս որ Գրիգորիս անունը իսպառ անհետ է եղած (հմմտ. Յ. Թոփճեան, Ցուցակ Ձեռագրաց Խաչիկ վարդապետի, Վղրշպտ. 1898, էջ 42 ա)։

# 92.

## ԴԱՍՊԱՐ ԿՌՈՒԱՆ

† ՌՃԻԶ=1677 ապրիլ 29

Այրս այս անուն Դասպար՝ ի յազգէս Հայկայ.
Մականունըն Կըռուան կոչեցեալ սորա,
Ի փորձանաց իրիք զհաւատն ուրանայ,
Յետոյ փոշիմանեալ և յոյժ զըղջանայ։

Զի էր ինքըն տեղեակ քրիստոնէութեան,
Եւ ոչ որպէս զԴաւիթս տըգէտ Թերական.
Վասն այն լայր և կարդայր վայըս եղկական՝
Հանապազ անձինըն իւրոյ կորըստեան։

Պահէր և առնէր սա պահս աղօթական,
Որքան և յաջողիւր, բայց գաղտագողեան.
Եւ հասեալ էր տարիքն սոյր ուրացութեան՝
Իբրև քըսան և հինգ մինչև յայս ամեան։

Բայց ինքն վաղուց հետէ հասանել ցանկայր
Հեղմամբ արեանն վճարել զպարտին իւր ջանայր.
Սակայն պատճառ յուսոյ Դաւիթըն լինայր,
Լի աւուրբք ծերութեանն, ապա քաջանայր։

Զի ընկէց սա ի բաց զփակեղն ըսպիտակ,
Եւ կապեաց ի գըլուխն գօտի կապուտակ.

15. է դաւիթըն.

Digitized by Google

Գրնացեալ ի շուկայն, շրջեալ համարձակ,
Ցետոյ եկեալ նըստաւ ի տեղւոջ յայտնակ·

Տեսեալ ոմ մի տաճիկ և հարցմամբ խօսի·
«Ցէ՞ր կապեր ես կապուտ՝ Թողեալ զձևն տաճկի»·
Եւ նա ասաց թէ «Զի՞նչ ասես դու ինձ·
«Զի ես քրիստոնեայ եմ, այլ և մահտեսի»։

Եւ նա ձայնեալ տաճկացն անդէն կուտեցան·
«Սա չէ՞, ասէր, արդեօք ալևորն Կրուանն»։
Բայց նա ասէր թէ «Ես չեմ տաճկացողն այն·
«Ես հայ եմ ի վաղուց քրիստոսադաւան»։

Եւ զնա կալեալ տարան յիշխան քաղաքին,
Ցետոյ ի դատաստան բերեալ դատէին·
Դաւանեաց նա զՔրիստոս Աստուած յատենին,
Եւ զինքն քըրիստոնեայ և ծառայ նորին։

Եւ առեալ զնա բերին ի տեղին կատարման՝
Մօտ ի տեղւոջն Դաւթի նահատակութեան·
Եւ նա զՔրիստոս Աստուած լինէր խոստովան,
Կընքէր նշանաւ խաչին ըզդէմսըն իւրեան։

Կախեալ զնա փայտէ և շուտով իջուցին·
«Տաճի՞կ ես և թէ հայ» զնա հարցանէին·
Իսկ նա դաւանելով զՑիսուս կենդանին,
Արհամարհեաց զօրէն և զհաւատ նոցին։

Անդէն կախեալ զփայտէն ըզնա խեղդեցին,
Եւ քարկոծ արարին ի կախաղանին։
Եղև այս յապրիլի քըսան և ըննին՝
Ցետ երկրորդում ամսոյ կատարման Դաւթին։

Սոյն վկայաբանական տաղն ունի միմիայն t ձեռագիրը՝ էջ 228 ա—229 ա, բայց ո՛չ իբր առանձին տաղ, այլ իբր անմիջական շարունակութիւն նախորդ տաղին,՝ որի մասին մանրամասնօրէն տես վերը՝ էջ 516։

18. t կնքէր.

# 93.

## ԳՐԻԳՈՐ ԿՌՆՑԻ (ԿՌՐՆԵՑԻ)

✝ ԹՎ. ՌՃԼԱ=1682 *մայիս* 19

*Սոյն վկայի մասին խօսում է միայն Զամչեան, հատ. Գ.* 656, *տալով միայն հետևեալ փոքրիկ տեղեկութիւնը.*

*Քանի մի ամօք յետոյ քան զսա (Գրիգոր Տաթևացի) նահատակեցաւ ի թուին հայոց ՌՃԼԱ, ի մայիսի* 19 *և այլ ոմն հայ Գրիգոր անուամբ ի Կոստանդնուպօլիս, որ էր ծնընդեամբ ի Կարին գաւառէ ի գեղջէն Կանայ. որ և ըստ ասելոյ ոմանց առնէր զքեռնակրութիւն։*

Digitized by Google

# 94.

## ԹԱՄԱՄ ԿԱՄ ԿԱՏԱՐԵԱԼ ԿՈՅՍ ՇԱՂԿԵՐՑԻ

✝ Ռ·ՃԽ=1690-1

Կոյս այս էր ի գաւառէն Գողթանայ՝ ի գեղջէն Շաղկերտոյ, և էր անուն նորա Թամամ, որ է կատարեալ կամ լցեալ, դուստր առն միոյ անզգամի՝ Մալխաս անուն. և էր տանուտէր Շաղկերտոյ։ Իսկ գեղականքն ասացին ցնա. «Ե՛կ տո՛ւր զհամար տանուտէրութեան քո»։ Եւ նա զհամարն, և մնաց ի վերայ նորա բազում ևս, և խնդրէին ճնշելու։ Իսկ նա պատրեաց զնոսա՝ և ասէ. «Թո՛յլ տուք ինձ աւուրս երկս, և ես հատուցից»։

Եւ նա ելեալ փախստեամբ և գնաց յԱստապատն՝ առ իշխանն Նախչուանու Մահմատ-Ռզայ-խանն՝ և ասէ. «Դուստր իմ տաց որդւոյ քում, և դու զերծո՛ զիս ի գեղականաց անտի»։

Իսկ իշխանն արար ըստ կամաց նորա. գրեաց առ շինականսն Շաղկերտոյ, թէ «Ես առի զհամար դորա, և ինձ եհաս զամենայն. և դուք չունիք հրաման խօսել ընդ դմա»։

Եւ որդին իւր Մուրթուզայ-Ղուլի էր յԵրևան նստեալ տեղապահ յետ Զալին. գրեաց առ նա, թէ «Առաքեա՛ ի Շաղկերտ՝ և բե՛ր առ քեզ զդուստր տանուտէր Մալխասին»։

Digitized by Google

Եւ լուեալ զայս ի Հօրէն, առաքեաց զարս հանդերձ կնաւ տաճկի՝ ածել զկոյսն Թամամ։ Եւ գնացին հրաւիրակքն. մատուցին զչար աւետիքն։ Եւ մինչև ցայժմ ոչ էին լուեալ զայս աղջիկն և մայրն։ Յորժամ լուան, աղաղակէին, ճանկէին զերեսս, ճողէին զհերս, լային և հառաչէին։

Իսկ Տաճիկքն կալեալ զերանելի կոյսն Կատարեալ, մերթ ի քարշ, մերթ ի յոտին, և տարեալ մուծին ի ժանուարն։ Իսկ պիղծն Մալխաս պատուէր առաքեաց առ Մուրթուզայն՝ և ասէ. «Ա՛յնքան մի խօսեսցիս ընդ դստեր իմոյ, մինչև ես եկեալ արարից զհարսանիսն»։

Եւ առեալ տարին զնա յԵրևան՝ և ցուցին Մուրթուզայ-Ղուլուն։ Եւ տեսեալ զգեղեցկութիւն նորա, զարդարեաց զնա ոսկւով և արծաթով և դիպակով և այլ ևս զարդուք պճնեցոյց, և մնայր դալստեան Հօր նորա, զի արասցէ զհարսանիսն։ Իսկ երանելի կոյսն Կատարեալ ոչ ուրախանայր, ոչ ուտէր և ոչ ըմպէր։ Այլ միշտ զմտաւ ածէր, թէ որո՛վ հնարիւք կարիցէ զերծանել։ Եւ նստէր հանդէպ ձորոյն. և ի գլուխս բարձր քարանցն զննէր, գտանեա՛յ խոնարհ տեղի ինչ գտցէ, զի իջեալ փախիցէ։ Եւ ոչ եգիտ ցած տեղի։

Եւ ապա ի գիշերի միում խորհեցաւ ի միտս իւր, թէ «Անկայց ի քարանցս ի վայր. բարւոք է իմով կամաւ և Քրիստոսի հաւատովս մեռանել, քան ուրացութեամբ մնալով կենդանի»։

Եւ կնքեալ խաչ զերեսն, անկաւ ի բարձր քարանցն ի վայր, և ուշաթափ եղև սակաւ մի. և ապա յարուցեալ հայի ընդ կամուրջն՝ որ ի վերայ Հուրաստան գետոյն, և անցեալ ընդ նոյն՝ ուղղէ զինքն գնալ ի Կարբի։

Եւ ահա պատահեաց տաճիկ մի, և աղաչեաց առ նա կոյսն. և ետ նմա ապազի մի՝ և ասէ. «Ցո՛յց ինձ զճանապարհ Կարբւոյ»։ Եւ նա եցոյց նմա՝ և ասէ. «Պատեա՛ զայս գետանաւդ և մո՛ւտ ի Նորագեղ, և անդ ցուցանեն քեզ ճանապարհ»։

Եւ նա գնացեալ էանց զգիւղն, և առապար ճանա-

Digitized by Google

պարհաւ երթայր՝ և ո՛չ գիտէր թէ ո՛ւր գնայր։ Եւ հայեցեալ տեսանէ՝ զի առաջի իւր գնան բազմութիւն Տաճկաց՝ այր և կանայք՝ բեռնակիր անասնօք՝ հանդէպ լերինն Արայի լեռնանալ։ Եւ փութացեալ եհաս նոցա, զմտաւ ածեալ՝ թէ ի չէն ինչ երթան նոքա։ Ո՛չ նոքա հարցին ցնա՝ թէ «Ո՞վ ես, կամ ո՞ւր երթաս», և ո՛չ նա եհարց ցնոսա ինչ. և անմռունչ գնայր ընդ նոսա զկնի նոցա։

Եւ գնացեալ հասին հանդէպ գեղջին Եղափարդայ. Եւ սուրբ կոյսն եհարց տաճկացն վասն գեղջն. և նոքա ասացին. «Գեղ է Հայոց՝ և կոչի Եղափարդ»։ Եւ ապա մեկնեցաւ ի նոցանէ, և ուղղեաց զինքն դէպ ի գիւղն. և եմուտ ի տուն քրիստոնէի միոյ, և ասաց զամենայն՝ զոր ինչ վասն իւր. և աղաչէր նոցա՝ կոչել քահանայ մի, «զի հաղորդեսցէ զիս. գիտեմ՝ զի ահա սպանանեն զիս»։

Եւ նոքա գնացեալ բերին այրի երէց մի՝ Մկրտիչ անուն, և խոստովանեցաւ և պատմեաց նմա զամենայն վարս ի ծննդենէ մինչև ցօրն՝ յորում էր, և հաղորդեցաւ մարմնոյ և արեանն Քրիստոսի։

Եւ տէր գեղջին տաճիկ Ուզարլու, ասաց արձակել զնա, ուր և կամի՝ գնասցէ։ Իսկ ոմն պիղծ՝ Սահակ անուն, որ էր տանուտէր գեղջին Եղափարդայ, ասաց. «Ես երկնչիմ յիշխանէն, զի մի՛ վտանգ ինչ կրեսցից սակս դորա»։

Եւ գնացեալ պատմեաց իշխանին։ Եւ ասէ իշխանն. «Ես փոյթ ինչ արարի վասն նորա. որովհետև այդպէս է, գնացեալ մերկացուցէք զնա, և կորուսէք զինքն»։

Եւ եդ երկու տաճիկ ընդ պղծոյն Սահակայ, որ գնացեալ կապեցին զերանելին, և հեռացուցին ի գեղջէն, և մերկացուցին ի զարդուցն. և արձակեցին զանկապան ոտիցն իւրեանց, որ չաշուրբաղի, և ետուն ցՍահակ. և նա խեղդեաց զսուրբ կոյսն Թամամ Կատարեալն՝ բարի մահուամբ և ուղիղ հաւատով, մաքուր մտօք և ճշմարիտ սիրովն Քրիստոսի։ Եւ կուտեցին զքարինս ի վերայ նորա, և թողեալ գնացին։

Եւ ի վաղիւն եկն պիղծ հայր սորոյն՝ և ասէ ցիշ-

Digitized by Google

խանն. «Ցոյց ինձ զգուսարն իմ»:

Ասէ իշխանն. «Գուսարն քո գիտանս իւր քեզ շնորհեաց». և պատմեաց նմա զամենայն:

Ասէ այրն. «Դու ոչ կարացեր պահել կին մի, որդընդէր սպաներ. տուր զմարմին նորա»:

Եւ եառ նմա զնոյն Սահակն, և գնացեալ եհան ի ներքոյ քարանցն, և տարեալ ի գիւղն Եղավարդ, և ժողովեցան քահանայք և ժողովուրդք բազում, և թաղեցին ի ի ներքոյ որմոյն եկեղեցւոյ հարաւոյ: Եւ եմուտ արեգակն, և մտին յեկեղեցին՝ պաշտել զերեկոյեան ժամն: Եւ յառաւօտ ժամուն՝ գնացին ոմանք՝ զի համբուրեսցեն զգերեզման նորա. և տեսին որպէս մանր կայծ հրոյ ի վերայ գերեզմանին, և գրոհ տուեալ միմեանց՝ գնացեալ տեսին լոյսն ի վերայ գերեզմանին. և այնքանք տեսին անդ՝ մինչև նուազեցաւ լոյսն: Եւ իմ լուեալ՝ գնացեալ իմացայ հաւաստեաւ ի Մկրտիչ երիցոյն. և գրեցի զանուն ի վերայ տապանին և զթուականն ՌՃԻ:

Սոյն վկայաբանութիւնը արտատպում ենք Զաքարիա սարկաւագից, տպ. Վղրշպտ. 1870, Բ. էջ 128—131, գլուխ ԿԲ, «Նահատակութիւն Կատարեալ կուսին»: Ստորագծեալ տառերը աւելցուած են ո՛չ թէ մեր, այլ հրատարակչի կողմից:

1. տպ. ինչ.

Digitized by Google

# 95.

## ՊՕՂՈՍ ՍԱՐԿԱՒԱԳ ԵՂԵՐՑԻ

† ՌՃԽ=1691

Որ էր ի քաղաքէն Եղերդու, որդի քրիստոնէի, հայ ազգաւ, ուսեալ զՍաղմոսն և զՇարականն, ուշիմ և ճարտար և քաջասիրտ և յաջողակ յամենայնի։

Յաւուր միում ի տօնի սուրբ Լուսաւորչի մուտն ի վիրապին, որ յաղուհացն կատարի, մինչդեռ ի պաշտաման և յաղօթս կային առաւօտեան քահանայք և ժողովուրդք և վարդապետ ոմն, ընդ որս էր և Պօղոս սարկաւագն և երգէր, և յանկարծակի զրոհ տուեալ այլազգիքն, կուտեցան ի վերայ եկեղեցւոյն և քարկոծ առնէին իբրև զայր մարդ։

Քանզի Նեստորական ասորի մի տաճկացեալ էր, մեծաւ հանդիսիւ շրջեցուցանէին ընդ քաղաքն, ուրախութեամբ և խնջոյիւք. և բերեալ ի վերայ եկեղեցւոյն, զի ուրացական քար արկցէ ընդդէմ եկեղեցւոյն. և յարկանելն քար ուրացողին յեկեղեցին, ամենայն տաճիկք զնոյնն արարին, քարիւ քարկոծէին զեկեղեցին։ Յորմէ զարհուրեալ ահաբեկ եղեն, որք ի ներքս յեկեղեցւոջն էին, համարելով թէ ի սպառ կործանեն զեկեղեցին ի վերայ ինքեանց։

1. M սղերթու. 5. M ի պաշտաման.

Իսկ քաջասիրտ պատանին Պօղոս սարկաւագն ոչ հանդուրժեալ մոլութեան նոցա, ելեալ արտաքս յեկեղեցւոյն, մարտնչէր ընդ նոսա և ի բաց վարէր. և հարեալ քարամբք խորտակեաց զթուղն և զդրօշ նոցա։

Յայնժամ անօրինացն թողեալ զեկեղեցին և առին ի մէջ զՊօղոս պատանին և հարկանէին չարաչար հարուածով և կապեալ տարան առ ղադին. և ասեն թէ «Հայր տղայս այս խորտակեաց զդրօշն մեր. զի՞նչ արժան է առնել դմա»։ Եւ ղատին վճիռ հատեալ ասէ. «Կամ տաճկացի և ազատեսցի ի մահուէն, և կամ հրով այրեսցի կենդանւոյն»։

Ապա այնուհետև սկսան ողոքանօք և սպառնալեօք խրատ տալ նմա և ասել. «Ե՛կ դարձիր յօրէնս մեր և մի կորուսաներ զգեղեցիկ մանկութիւն քո. և մեք տացուք քեզ խիլայս և մեծութիւնս.» զի դեռ նորապատակ էր Պօղոս սարկաւագն։

Իսկ նա աղաղակէր և զՔրիստոս Աստուած դաւանէր և ոչ հաւանէր խոստմանց պարգևացն նոցա, և ոչ ի սպառնալեացն երկնչէր և ասէր. «Ես պատրաստ եմ ի մահ վասն անուան և հաւատոյն Քրիստոսի Աստուծոյ իմոյ»։

Եւ այնպէս պահեցին աւուրս բազումս ի բանտի և հարցանէին թէ «Ուրանա՞յ զՔրիստոս»։ Եւ իբրև տեսին զհաստատութիւն մտաց նորա, զի ոչ կարացին խախտել զնա ի սիրոյն և ի հաւատոցս Քրիստոսի, ապա կուտեցին փայտ բազում յոյժ և կապեցին զոտսն ի ցից և այրեցին զծառայն Աստուծոյ զՊօղոս սարկաւագն։

Եւ նա սաղմոսելով զերգս երից մանկանցն, աւանդեաց զհոգին իւր առ Աստուած, բարի խոստովանութեամբ։

Եւ ժողովեալ զայրեցեալ զոսկերսն և եդին յեկեղեցւոջն, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

Կատարեցաւ սուրբն Պօղոս սարկաւագն, ի թուականիս մերում հազար հարիւր և քառասուն ամին։

9. M դմայ.

Digitized by Google

Սոյն վկայաբանութիւնը ունի միայն M ձեռագիրը, Սահմի ժէ և հոկտեմբեր 26, Անփիլոս եպիսկոպոսի վկայաբանութիւնից և Ցովհաննէս Հոսաւացու յիշատակութիւնից յետոյ, էջ 127 ա''—բ'', այս վերնագրով. «Ցայսմ աւուր յիշատակ Նոր վկային Պօղոս սարկաւագին»։

Սրբի Նահատակութեան օրը որոշ չէ. բայց որովհետև բանտարկութիւնը եղել է Ս. Լուսաւորչի մուտն ի Վիրապն տօնի օրը (տես վերը էջ 525, տող 4—5), որ 1691 թուին գալիս է մարտի 28-ին, և որովհետև «աւուրս բազումս ի բանտի» պահելուց յետոյ են նահատակում սրբին (տես վերը, էջ 526, տող 21 ևն), ուստի պիտի ընդունենք թէ նահատակութիւնը եղել է մօտաւորապէս ապրիլի վերջերին։

Digitized by Google

# 96.

## ՍԱՐԳԻՍ ՍԱՐԿԱՒԱԳ ԿԱՐՍԵՑԻ

† ՌԽՃԱ=1691-2

Սա էր ի քաղաքէն Ղարսայ, հայ ազգաւ, որդի բարեպաշտ քրիստոնէից. որոյ անունն յառաջ Սաֆար էր, որ իբրև կարդաց և ուսաւ զՍաղմոսն և զՃարականն, եառուն նմա ատիճան և անուանեցին Սարգիս։

Եւ էր Սարգիսն պատանի 18 ամաց, գեղեցիկ տեսլեամբ և ճարտար յուսումն գրոց։ Եւ եղև յաւուր միում հրամանաւ մօրն իւրոյ գնաց ի գիւղ ուրումն Տաճկաց, ի կարիս պիտոյից իւրեանց. եւ տես անդ զի մօլլայ մի նստեալ գովաբանէր զօրէնադիրն իւրեանց՝ ասելով թէ «Այնպիսի ազ էր, որ այսքան հազարաց ետ զանձն ի պղծութիւն»։

Առ այս բան զարմացեալ պատանին, ասէ ցմօլլայն. «Ամօթ է ձեզ ասել զայդ. այլ ևս առաւել ձեզ նախատինք է. լռիր»։

Իսկ անօրէն նենգաւորն ոխս կալեալ՝ առ ժամայն ոչինչ ասաց։ Եւ Սարգիսն զգործ իւր հոգացեալ՝ գնաց նստաւ ի խանութն իւր։ Եւ ապա եկեալ մօլլայն յետ աւուրց ինչ, ասէ ցՍարգիսն. «Տուր ինձ ի մուշտակաց և ի մորթոցդ զոր ունիս»։

Ասէ Սարգիս. «Տո՛ւր զգիրն, և ես տաց քեզ զոր ինչ կամիս»։

Եւ նա ասէ. «Այնպէս ձրի տուր ինձ. ապա թէ ո՛չ մատնեմ զքեզ ի կորուստ, զի դու այն օրն հայհոյեցեր զօրինագիրն մեր զՄահմետ»։

Եւ զայս ասացեալ՝ աղաղակեաց առ մերձակայ եղեալ տաճիկսն և ասէ. «Եկա՛յք, տեսէ՛ք, որ այսպիսի մանուկ քֆրէ փեղամբարին մերոյ, և դուք ներէք»։

Եւ առժամայն գրոհ տուեալ յենկիչարիքն՝ ըմբռնեցին զպատանին և կապեցին և չարաչար հարկանէին։ Եւ Սարգիսն լայր և աղաղակէր՝ ասելով թէ «Զուր ասէ դա ի վերայ իմ. ես ոչ գիտեմ զոր ասէ զբանդ զայդ»։ Սակայն նոքա ոչինչ ունկն դնէին նմա. այլ առեալ տարան առ դատին և ասեն. «Պատանիս այս հայհոյեաց օրինադիրն մեր. զի՞նչ հրամայես»։

Եւ նա վճիռ եհատ ասելով. «Կա՛մ տաճկասցի, կամ քարկոծեսցի»։

Եւ ապա դատին ողոքական բանիւք խրատէր զՍարգիսն և ասէր. «Ե՛կ յօրէնս մեր և ուրացիր զհաւատն քո. և ես ազատեմ զքեզ ի դոցանէ. և այսքան պարգևօք խիլայեմ զքեզ, եթէ դառնաս յօրէնս մեր»։

Եւ Սարգիս ասէ. «Ես զիմ լոյս հաւատն և օրէնքն ոչ թողում. և դուք զուր տեղն զիս կու սպանէք. դո՛ւք գիտէք. ես անպարտ եմ յամենայնի, զոր դոքա ինձ վերայ ասացին»։

Յետ այսորիկ առեալ տարան զվկայն առ փաշայ քաղաքին, զի և ի նմանէ հրաման առցեն սպանանել զնա։ Եւ եղեն ամբաստան զնմանէ, թէ «Հայհոյի՛չ է դա օրինադրին մերոյ»։ Յուցին և զվճիռն դատւոյն։

Եւ տեսեալ փաշային զգեղեցկութիւն մանկանն, գթացաւ ի նա և ասաց. «Ե՛կ, որդեակ, խնայեա ի մանկութիւն քո և դարձիր յօրէնս մեր. և ես տաց քեզ զինչս և զե-

4. M ի կուրուստ. 8. M քըֆրէ.

րիվարս. և կարգեցից զքեզ ինձ առաջիկայ սպասաւոր և պաշտօնեայ»։

Ասէ Սարգիս. «Դու գիտես որ զդքա զոր կու վկայեն վասն իմ. և ես անպարտ եմ յամենայնի. թէ ուղիղ դատաստան կ՚անես, զիս կ՚ազատես, բարի է. և թէ ոչ՝ ես զիմ հաւատն ոչ թողում և զՔրիստոս ոչ ուրանամ»։

Եւ ապա հրաման ետ փաշային հանել արտաքոյ քաղաքին և քարկոծել զծառայն Քրիստոսի զՍարգիս։

Ցայնժամ իբրև զկատաղի չար գազանք դիմեցին ենկիչարիքն ի վերայ անմեղ գառին, և հարկանէին սրով և թրով, փայտիւ և քարիւ. և ի բազում հարուածոյն անդէն ի ճանապարհին հարին խանջալով ընդ սնակուշտն. և սուրբն սաղմոսելով աւանդեաց զհոգին առ Աստուած։

Եւ ի քարշ տարեալ ի տեղի կատարմանն՝ այրեցին հրով զմարմինն։

Եւ այնպէս բարի խոստովանութեամբ կատարեցաւ ի Քրիստոս Սուրբն Սարգիս Սարկաւագն։ Եւ ի գիշերին փառաւորեաց Աստուած զվկայն իւր տեսլեամբ երկնային լուսոյ։ Եւ առեալ հաւատացելոցն զայրեցեալ նշխարսն, ամփոփեցին յեկեղեցւոջն։ Այլ սիրտն սրբոյն անարատ և ամբողջ մնացեալ, ոչ այրեցաւ բնաւ։

Եւ խոճայ ոմն տուեալ ինչս, գնեաց զնա և տարաւ յերկիր իւր. և տայ առողջութիւն հաւատով դիմողացն, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

Կատարեցաւ սուրբ վկայն Քրիստոսի Սարգիս ի թուականիս մերոյ ՌՃԽԱ, ի հայրապետութեան Տեառն Նահապետ կաթուղիկոսին։

Սոյն վկայաբանութիւնը ունի նոյնպէս միայն M ձեռագիրը, Սահմի Զ և հոկտեմբեր 15, Ուղկիանոս քահանայի, Դասխոսի, և Սալինոս աքանչելագործի վկայաբանութիւններից յետոյ; էջ 111 բ''—112 բ', այս վերնագրով. «Ցայսմ աւուր յիշատակ նոր վկային Քի, սբյն Սարգսի սկզբին»։

## ՆԻԿՈՂԱՅՈՍ ՌԵՎՈՋ ՊՐՈՒՍԱՑԻ

✝ ՌՃԽԳ=1694 մարտ 14 դշ.

Սա էր ի քաղաքէն Պրուսայու, ազգաւ հայ և սուրբ լուսաւորչածին, որոյ անուն հօրն Աթանան և մօրն Շուշան, բարեպաշտ ծնողաց զաւակ։ Եւ վախճանեալ հօրն՝ մնաց սա որբ ի հօրէն Ը ամաց. և մայրն աղքատ գոլով՝ սնոյց զսա բազում վշտօք և տառապանօք. և եւս զորդին իւր յուսումն դպրութեան և իկճութեան (իկն, զոր իլիկ ասեն, որով պառաւունք զբամբակն մանած առնեն)։

Եւ յետ ուսման արուեստին և հասեալ յարբունս՝ նստէր ի խանութի ի շուկայն՝ որ կոչի Թահթաղալէ Բոզազի։ Եւ խանութի սորա մերձակայ տաճկունք ըստ սովորութեան իւրեանց բազում անգամ հետաքրքիր լինելով յորդորէին զնա լինիլ օրինօքն իւրեանց և դառնալ ի Քրիստոսէ։ Եւ նա զայն ամենայն ոչինչ համարելով՝ հաստատուն կայր ի կրօնս քրիստոնէութեան։

Եւ քանզի յոյժ գեղեցկատես էր, վայելուչ և բարեհասակ երկայնութեամբ, վասն որոյ ստէպ զչարացեալ նեղէին, հակառակէին և խրոխտանօք սպառնային, և դարձեալ աղաչէին թէ «Զի՞նչ է խափան հաւատն՝ զոր պաշտես. եթէ դառնաս ի դէնս մեր, զքեզ փեսայացուցանեմք մեծամեծ իշխանաց դստերաց, զորոյ և կամիս. և

6. L յետ. 9. L յուսման. 20. K եթէ. |K փեսացուցանեմք. 21. K զորոց.

լինիս ի մէջ մեր փառաւոր ընչիւք և մեծութեամբ. զի ահա ի դառն աղքատութեան կեաս»։

Եւ սուրբն Նիկողայոս այնչափ ոչ համարէր զխօսս նոցա, մինչ զի և պատասխանեաց անգամ արժան ոչ առնէր զնոսա. այլ միամիտ զիւր արուեստին զգործն կատարէր։

Եւ յորժամ ոչ կարացին ամենևին պատասխանի առնել ի բերանոյ նորա, սկսան իբրև զկատաղի դազան զրպարտել զանմեղ դառն Աստուծոյ և ասել թէ «Առաջի մեր ուրացաւ զհաւատն իւր և յօրէնս մեր դարձաւ»։

Եւ նա համարձակ, անահ և անկասկած ձայնիւ ասէր. «Ես իմ հաւատոյս շնորհակալ եմ և ոչ թողում. և զօրէնս ձեր ո՛չ կամիմ և ո՛չ առնեմ. թէ ձերն լաւ է՝ ձեզ լիցի, և իմ հաւատն ինձ լիցի»։

Եւ յետ այսորիկ այլ տաճկունք որ նորա դրացիք և մերձաւորք էին, ասեն ցսուրբն Նիկողայոս. «Ո՛վ այվազ (քանզի այս էր մականուն նորա), եկ և արա պատիւ խրախութեան նոցա կերակրոց և ըմպելեաց, զի և նոքա մոռասցին զայս խօսք ուրացութեան քո և զրպարտութեան»։ Եւ առ այս ի հարկէ յանձն առեալ զպատիւ կերակրոց ընծայել նոցա զանազան խորտկօք։ Զոր կերեալ մոռացան զայն զրպարտութիւն, մինչ ի հինգ տարի։

Եւ յետ այսորիկ մայր նորա ամուսնացուցեալ զնա ի կարգ աշխարհի. և մնաց մինչև ի ԺԶ ամիս. և եղեալ դուստր մի Աննա անուամբ։ Եւ կային միամիտ և օրհնէին զԱստուած։

Այլ որ ի սկզբանէ բանսարկուն սատանայ, դրդեաց և կրկին յարոյց զառաջին թշնամիսն ի վերայ սրբոյն Նիկողայոսի, որք յանկարծակի դիմեցին ի վերայ նորա և ասեն թէ «Դու առաջի մեր թողեր զհաւատն քո և ընդ

2. K կաս. 3. L Նիկօղայոս. 5. L արուեստն. 12. K հաւատոյս. 14. L իմն փիս. իմ հաւատն. 16. L էին և մերձաւորք. | L Նիկօղայոս. 23. K մայրն. 27. L զրգեաց. | Ցոյամ. Գ, ալ. ասձկաց բերանը դնում է «ավ զու, զինչ է այդ զոր առնես, ո՛չ աւանիկ առաջի մեր ամենեցուն ընկալար զդենս

*օրինօք մեր մտեր»։ Եւ այսու բանիւ ամբոխ արարին և գրոհ տուեալ միմեանց, դիմեցին ի վերայ սրբոյն։ Եւ ըմբռնեալ տարան առաջի դատաւորին, և վկայեցին թէ «Սա առաջի մեր ուրացաւ զհաւատն իւր և դաւանեաց զհաւատն մեր»։*

*Եւ դատաւորն պնդագոյն քննութեամբ հարցափորձեալ զնա, գտաւ հաստատուն ի հաւատս Քրիստոսի. և սկսաւ ողոքանօք և խոստմամբ պարգևաց և դարձեալ սպառնալեօք՝ կտտամահ չարչարանօք դարձուցանել զնա։*

*Եւ սուրբն ամենևին անվեհեր և համարձակ կալով, ոչ ի սպառնալեացն երկեաւ և ոչ խոստմանցն հաւանեցաւ. քանզի հաստատեալ էր ի նա Հոգին սուրբ։ Ապա հրամայեաց դատաւորն տանել զնա ի բանտ և պնդել զոտս նորա ի կոճեղս։ Եւ մնաց ի բանտին զաւուրս 10։*

*Եւ երթային առ նա բազումք ի սիրելեաց և ի բարեկամաց նորա, մխիթարել և յուսադրել զնա՝ մի երկնչել յիմեքէ, զի ժողովուրդք ամենայն քաղաքին յանձն առեալ էին կաշառօք և ընչիւք ազատել զերանելին՝ թէ հնար իցէ։*

*Եւ քահանայ մի հրամանաւ եպիսկոպոսին իւրոյ Սուքիասայ՝ որ անդ հանդիպեցաւ, գնաց ի բանտն առ սուրբն Նիկողայոս, և բազում խրատական բանիւք մխիթարեաց զնա, հաստատուն կալ ի հաւատս Քրիստոսի և համբերել չարչարանաց և ձաղանաց, հրոյ և սրոյ և առնուլ զպսակն յաղթութեան ընդ ամենայն սուրբս։ Եւ հաղորդեաց զնա ի կենարար մարմնոյ և յարենէ Որդւոյն Աստուծոյ։*

*Եւ ի նմին աւուր՝ յետ ելանելոյ անտի քահանային,*

մեր, և այժմ արհամարհեալ զայն՝ պաշտես զնախնի հաւատն քո. համարիցիս արդեօք եթէ իրաւունք և դատաստան բարձեալ իցէ ի քաղաքէ աստի» Այս տարբերութիւնը կարող է կարծել տալ թէ Գր. Փէշթի-մալճեանը իւր առաջ ունեցել է մեր օրինակից մի քիչ ընդարձակ խմբագրութիւն, գոնէ այս մասում. մանաւանդ երբ նկատելու լինինք որ Ցայմ. Գ. տպ. առհասարակ համառօտուած է. վկայաբանութեան մնացեալ մասերը մերի հետ զոյգ են ընթանում: 3. L տարցին փխ. վկայեցին. 9. K կըտտամահ. 10. L անվեհէր. 12. K զնա. 13. K պնտել. L պնդեալ. 16. L նոցա. 27. L ի մին.

ժողովեցան ուլամէք և ռամիկք ոմանք ի Տաճկաց՝ ի տուն դատաւորին և խնդրեցին վասն քննութեան հաւատոյ արդարոյն վրէժխնդիր լինել։ Եւ թէպէտ ոմանք ի մերձաւորաց խանութից տաճկացն՝ որք բարեբարոյք էին, գնացին առաջի դատաւորին և վկայեցին վասն անմեղութեան սրբոյն Նիկողայոսի, թէ «Մեք գիտեմք և վկայ եմք որ առաջի մեր երկու լիտր միս խնդրեցին այդ սուտ վկայքդ ի քրիստոնէէդ, և դա յանձն ոչ էառ զմիսն, ասելով թէ «Քանի՞ և քանի՞ պատիւ առնեմ ձեզ». վասն այնորիկ ի զուր պարտաւորեն զդա թէ ուրացաւ. մեք աւասիկ դիպացի եմք դոցա. և մեք ոչ լուաք զուրացութիւն դորա. մեք անպարտ եմք» ասելով գնացին։

Բայց դատաւորն զառաջնոց զսուտ վկայութիւնն ընկալաւ, և հրամայեաց զերանելին տանել ի բանտէն առ ինքն։ Եւ կրկին հարցափորձեալ ի մէջ ատենին՝ սիրով և ողոքանօք խօսեցան ընդ Նմա. և մինչև յերկու հազար ղուրիշ տուլին Նմա առաջի դատաւորին։ Եւ Նա ոչ ընկալաւ և ոչ հաւանեցաւ և ասէր. «Այդչափ դրամ և այլ աւելեօք ես ձեզ տամ, եթէ թողուք զիս ի բնական հաւատս իմ, որ առ Քրիստոս, կալ. ապա թէ ոչ, զայս գիտասջիք, զի որպէս զաղբ անպիտան է այդ ամենայն յաչս իմ. զի ես զհաւատս իմ զոր ունիմ առ Քրիստոս Աստուած, ոչ ուրանամ, և պատրաստ եմ ի մեռանել վասն օրհնեալ անուան Նորա. և դուք զոր ինչ առնելոց էք, արարէք վաղվաղակի»։

Յայնժամ ամենեքեան դատապարտեցին զսուրբն, թէ «յառաջ ուրացաւ զՔրիստոս և տաճկացաւ և այժմ կրկին դարձեր է ի քրիստոնէութիւն. մուրթատ է» ասելով մահապարտ գրեցին զնա, և վճիռ ետուն գլխատմանն։ Եւ դահիճն մերկացուցեալ զնա ի հանդերձիցն, և միայն

1. K ռձամիկ ոմանք. L դամիկք. 2. L հաւատոցն. 3. L վրէժխնդիրք. | L ի մերձաւորացն. 6. L Նիկղայոսի. | L չունի թէ մեք ... գնացին. տես և տող 6-12. 13. L զաջնոյ սուտ. 16. L մինչ երկու ռ, 17. L ոչ ընկալաւ. 18. L չունի և այլ աւելեօք. 22. L աչս. 30. L չունի զնա.

Digitized by Google

ըանճկոնաւն թողեալ, բոկ ոտօք և գլխիբաց, ձեռս ի յետս կապեալ, հանին յերեսաց դատաւորին։ Եւ շրջեցուցանէին ընդ փողոցս և ընդ հրապարակս քաղաքին։

Եւ մունետիկն աղաղակէր առաջի նորա, թէ «Ո՛վ ոք որ տաճկանայ և դարձեալ դառնայ ի տաճկութենէն, մուրթատ է. և այս է պատիժ նորա» ասելով։ Երթայր և դահիճն և սուր մերկ ի ձեռին։ Եւ պատանին Նիկողայոս զուարթ սրտիւ և ուրախ մտօք համարձակ երթայր զկնի. և գոյն երեսաց նորա փայլէր որպէս զկարմիր վարդ. և զաչսն ի յերկնից ոչ խլուցանէր. և բերանովն օրհնէր զԱստուած և ասէր. «Տէր իմ Յիսուս Քրիստոս, տո՛ւր ինձ համբերութիւն, և ընկա՛լ զիս առ քեզ, զի վասն քո հեղում զարիւնս իմ»։

Եւ անթիւ գունդք ամբոխից երթային առաջի և զկնի. և ամենեքեան աղաչէին զնա թէ «Մի՛ կորուսաներ զվայելուչ մանկութիւն քո. ուրացի՛ր զՔրիստոս և զերծի՛ր ի մահուանէ»։ Եւ նա խնդալով վաղէր ի գնացս և ոչ կառնոյր ի մահուանէ. և ոչինչ պատասխանէր ումեք։

Եւ եկեալ մայրն և մօրաքոյրն և զոքանչն և ամենայն ազգականքն, և վասն անհի տաճկացն աղաչէին զսուրբն և ասէին. «Դո՛նէ խօսք մի ասա և զերծի՛ր ի մահուանէ. և գնասցես յայլ երկիր և պահեսցես զհաւատն քո»։ Եւ նա բնաւ ոչինչ պատասխանեաց նոցա, այլ առ մայրն միայն խօսեցաւ և ասաց թէ «Տո՛ւր զձեռն քո, զի համբուրեցից»։ Եւ առեալ համբուրեաց զձեռս մօրն և ասաց. «Երթ գնա՛, մայր իմ և մի՛ կալ առ իս. զի ես ետու զանձն իմ ի մահ՝ վասն սիրոյն Քրիստոսի»։

Եւ հասեալ ի տեղին գլխատման, ամբարձ զաչս իւր ի յերկինս և ասաց. «Տէր իմ և Աստուած իմ Յիսուս Քրիստոս, որ վասն իմ հեղեր զպատուական սուրբ զարիւնդ քո, փա՛ռք քեզ. զի և զիս արժանացուցեր այսօր

1. L պաճկոնաւն. 6. L և դահիճն երթայր. 7. L Նիկօղայոս. 10. L բերանն. 14. L ամբոխին. 18. L ումէք. 26. L զես փխ. զի ես. ¦ KL կեալ. 29. L չունի երկրորդ իմ-ը. 30. K արիւնդ փխ. սուրբ զարիւնդ.

Digitized by Google

հեղուլ զարիւն իմ վասն անուանդ քում սրբոյ։ Ընկալ, Տէր, զարիւն իմ, որպէս զպատարագ առաջի աստուածութեանդ քո»։ Եւ իբրև զայս ասաց սուրբն, չոգաւ ի ծունկս առաջի դահճին։

Բայց դահիճն և ամենայն ազգն Թուրքաց կրկին ստիպէին զսուրբն, թէ «Ուրացիր զՔրիստոս և զերծիր ի մահուանէ»։ Յայնժամ դարձաւ սուրբն առ դահիճն և ասաց. «Ո՜վ անհաւատ, ընդէր ոչ հատանես զպարանոցս իմ. զի ես զՔրիստոս հաւատացեալ եմ և հաւատամ»։ Եւ իսկոյն խոնարհեցուցեալ զգլուխն և մեկնեաց առաջի չողացեալ սրոյն զպարանոցն։ Եւ դահիճն վերացուցեալ զսուրն և եհար ուժգին զպարանոց սրբոյն և ոչ կարաց հատանել. և կրկին և երեքկին եհար զսուրն և ոչ կարաց հատանել, զի թուլացան ձեռք դահճին։ Եւ այլ ոմն դահիճ առեալ զսուրն և ստիպէր զերանելին, թէ «Ուրացիր զՔրիստոս և ես դեղօք բժշկեմ զայս խոցուած սրոյս ի պարանոցէդ»։ Եւ սուրբն Նիկողայոս կրկին զօրացաւ Հոգւովն սրբով և ասէր. «Ես զՔրիստոս Աստուածն իմ ոչ ուրանամ. և դու հատանելոց ես, ընդէր յամես և ոչ հատանես զգլուխ իմ»։

Այսպէս ասէր և արիւնն որպէս զառու հոսէր և ներկէր զամենայն մարմին նորա և ոռոգէր զերեսս երկրի։ Եւ երկրորդ դահիճն ևս եհար ուժգին և ոչ կարաց հատանել։ Յայնժամ ամբոխ Թուրքին ասացին ամենեքեան թէ «Անմեղութիւն մանկանն ոչ թողու մեռանիլ նմա»։

Ապա առեալ դահիճն զդանակն և որպէս զգառն եղեն յականջէ յականջ զսուրբն Նիկողայոս։

Այսպիսի դառն և կսկծալի մահուամբ կատարեցաւ ի Քրիստոս սուրբ նահատակն Նիկողայոս։ Զի դրեթէ ընդ ամէն հարկանելոյ դահճին, ուրիշ ուրիշ մահ մի ընդունէր։

2. L նախապէս իւր. եւ յետոյ արտագրուած իմ. | L զպատարագ. 3. K քոյ. 5. L եկին փխ. կրկին. 14. L այլ փխ. զի. 16. L սրոյ. 17. L Նիկողայոս. 18. K քս փխ. զքրիստոս. 21. L զարիւնն. | L առու. 22. L առոգէր. 23. L դահիջն. 27. L Նիկողայոս. 28. K կըսկծալի. 29. L դրէ թէ. 30. K ուրիշ որիշ.

Եւ այսպիսի բարի խոստովանութեամբ նահատակեալ ի յետնեալ աւուրս՝ նոր վկայ գտաւ Քրիստոսի սուրբն Նիկողայոս. և ի վերջացեալ դարուս նորաքանչ լուսով պայծառացոյց զսուրբ զեկեղեցիս, և ի ձմեռնացեալ սաստկասառոյց յեղանակիս նոր վարդ փթթեցաւ ի սուրբ եկեղեցիս Պրուսայու՝ ի պարծանս տառապեալ ազգիս Հայոց։ Եւ մնաց սուրբ մարմին նորա ի տեղի կատարմանն ժամս ԻԸ։

Եւ գնացեալ քրիստոնեայք առին հրաման ի դատաւորէն, և բերին զսուրբ մարմինն յեկեղեցի սուրբ Աստուածածնին։ Եւ լցաւ եկեղեցին երկու ազգօք Հոռոմոց և Հայոց. որք գումարեցան ի թաղումն սրբոյն և ոչ բաւեաց օրն այն դնել զնա ի հանգիստ։ Վասն որոյ մնաց սուրբ մարմինն յեկեղեցին ժամս ԺԶ և ամենեքեան առհասարակ ուխտ արարեալ համբուրեցին զսուրբ նշխարս նորա։ Եւ յերրորդումն աւուր եդին ի գերեզմանի սաղմոսիւք և օրհնութեամբ և երգօք հոգևորօք։ Ցորմէ բազում բժշկութիւնք կատարին ամենայն ցաւոց, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

Կատարեցաւ սուրբն Նիկողայոս ի թուականիս Հայոց ՌՃԽԳ ամին և յամսեանն մարտի չորեքտասաներորդի, յաւուր չորեքշաբաթի յաղուհացից քառասնորդաց պահոցն, չորրորդումն շաբաթու միջնացն, ի թագաւորութեանն Հագարացւոց Սուլտան Ահմէտին և ի հայրապետութեան սրբոյ աթոռոյն Էջմիածնի՝ Տէր Նահապետ կաթուղիկոսին և վերատեսչութեան քաղաքին Պրուսայու՝ Սուքիասայ եպիսկոպոսի։ Որոյ սրբոյ Նիկողայոսի յիշատակն օրհնութեամբ եղիցի։

Եւ աղօթիւք նորին և բարեխօսութեամբն Քրիստոս Աստուած մեր տացէ աշխարհի խաղաղութիւն, քրիստո-

3. L ի չունի. 4. L պայծառացեալ սբ. զեկղցի. 5. L փթթեալ. | L յեկղցիս. 7. L մարմինն փխ. մարմին նորա. 10. L հռոմոց. 14. L զնշխարս սբ. չունի նորա. 18. L չունի մերոյ. 20. L չորեքտասան երորդի. 21. L չորէք շաբաթի. 22. L չորրդում. 26. L Նիկօղայոսի.

Digitized by Google

նէից անդորրութիւն, թագաւորաց սէր և հանդարտութիւն, մեղաց թողութիւն և քրիստոնէից ննջեցելոց հանգիստ և արքայութիւն։

Սոյն վկայաբանութիւնն ունին միայն K և L ձեռագրերը. առաջինը K՝ թերթ. Ձ և մարտ 14, Ադամայ պատմութիւնից յետոյ, էջ 340 ա՛—342 ա՛, այս վերնագրով. «Ցայսմ աւուր վկայաբանութի սրբոյն Նիկողայոսի, Նոր նահատակին քի»։ Իսկ երկրորդը L՝ նոյն օր, նոյն վերնագրով, էջ 321 բ՛—313 ա՛։ Հմմտ. նաև Ցայսմ. Գ. տպ. Ա. 215''—218', որ թէրևս մի քիչ աւելի ընդարձակ բնագիր է ունեցել. այս մասին տես վերևը էջ 532-3 ծանօթութեան մէջ։

1. L յանդորութի. K յանդորրուի.

Digitized by Google

98.

## ԼՈՅՍ ԳՐԻԳՈՐ

† ՌՃԾԲ=1703 յուլիս 20

Էր նոյն Գրիգոր ի բնակչաց Երևան թաղի, գեղեցկատեսիլ և վայելչահասակ պատանի ութն և տասնամեայ, զաւակ աղքատ ծնողաց։ Եմուտ ի ծառայութիւն Անգղիացի վաճառականի ումեմն եղելոյ ի քաղաքն Սպահան։ Քղանցք հանդերձի հօրն նորա յաւուր միում յանցանել ի շուկային՝ անկանեն ի վերայ ջուրըմպու անօթոյ խանութպանի ումեմն. որ վասն զայրացեալ խանութպանին՝ ուժգնապէս գանակոծեալ զնա վիրաւորէ վասն պղծելոյ զանօթն։

Նա այնպիսի վիրաւորեալ կերպարանօք գնայ ի տուն Անգղիացի վաճառականին՝ և պատմէ որդւոյ իւրում Գրիգորի զանցսն։ Ընդ աղէտս հօրն ի գութ շարժեալ որդւոյն՝ առնու ընդ իւր զերկու զայլազգի ծառայսն Անգղիացի պարոնին՝ եւ գնացեալ ի վաճառանոցն՝ գտանեն զհարկանօղ կրպակատէրն, և հարեալ զնա վիրաւորեն և ընդ քարշ տանեն ի դուռն Անգղիացւոյն։

Սրտմտեալ կրպակաւորացն ընդ այնպիսի գործ ծառայիցն Անգղիացի վաճառականին՝ կամեցան վնաս մեծ հասուցանել Գրիգոր ծառային նորա, որ եղև պատճառ խռովութեան այնորիկ։ Ուստի կարկատեցին զզրպարտութիւնս վասն նորա, և առեալ զսուտ վկայս՝ գնացին առ

դենպետս իւրեանց, և ծանուցին թէ Գրիգորն այն հայհոյեալ է զօրէնս իւրեանց. ուստի խնդրեցին ի նմանէ վճիռ ըստ օրինաց։

Պատասխանի ետ դենպետն. «Եթէ ստոյգ իցեն բանք ձեր՝ այրն այն կամ պարտի մեռանիլ, կամ պարտի դառնալ յօրէնս մեր և կեալ»։

Բողոքողքն ի ձեռն սուտ վկայից հաստատեցին զբանս իւրեանց, և ընկալան ի նմանէ զվճռագիրն մահապարտութեան կամ ուրացութեան։ Զայն վճիռ տարեալ առ Ղազի դատաւոր քաղաքին, վաւերացուցին զայն և կնքով նորա. և ապա առեալ զայն՝ դիմեցին առ քաղաքապետն, որ էր Թոռն Շահնուազ խանին, յազգէն Վրաց, և յայտնեցին նմա։ Տեսեալ նորա զբազմութիւն խանութպանացն և զնախանձախնդրութիւնն նոցա վասն օրինաց, հաճեցաւ ընդ նախանձն նոցա, և եկաց նոցա ջատագով. ուստի և առաքեաց ի ծառայից իւրոց առ տունն Անգղիացի պարոնին ի բերել զԳրիգորն և զհարկանօղ ծառայակիցն նորա։ Հասեալ ծառայիցն անդր և ծանուցեալ զհրամանն՝ խնդրեցին զարսն։

Յաւուրսն յայնոսիկ վաճառականն Անգղիացի հիւանդացեալ՝ վախճանի, և մնան երկու Անգղիացի պարոնայք, որք անծանօթ լինելով լեզուի և օրինաց Պարսից, երկուցեալ տան ծառայից քաղաքապետին զայլազգի երկու ծառայակիցսն Գրիգորի, որք կցորդէին ընդ նմա ի հարկանել խանութպանին, զորս հասուցեալ ի քաղաքապետն՝ եդին ի բանտի. իսկ զԳրիգոր պահեն առ իւրեանս։

Ոչ դադարեալ բազմութեանն՝ դիմեն հանդերձ քաղաքապետիւն առ եպարքոս արքային, ուր ի ձայն բարձր բողոք բարձեալ աղաղակեն. «Խնայեա ազգ քո, Տէր, և գթա ի մեզ. զի այրն անհաւատ (Գրիգոր) զհաւատակիցն մեր սաստիկ գան հարեալ և վիրաւորեալ, մեծաւ անարգանօք և հայհոյութեամբ ընդ քարշ ածեալ զնա տարեալ է մինչև ի դուռն Անգղիացի պարոնին իւրոյ, և ոչ այսու միայն շատացեալ նորա՝ հայհոյեալ է և զկրօնս մեր և

զդեն». զոր ի հաստատել՝ հանեալ զփօթփայն դենպետի՝ ցուցանեն նմա, և դարձեալ ձայն բարձեալ աղաղակեն. «Ա՛ռ զվրէժ արհամարհանաց օրինաց մերոց, զի պախարակեալ անարգեցաւ այն, և հաւասարեալ հողոյ յերկիր սուզաւ. վասն զի այր անհաւատ՝ զհաւատ և զպատգամաբեր մեր յայտնի և համարձակ հայհոյեաց»։

Յաճախէին զնոյն ձայն աղաղակի իւրեանց նովին բանիւք լու ի լու և ի լսելիս ամենեցուն. պարտաւորեցաւ Եպարքոսն ունկն մատուցանել բողոքոյ նոցա, և խոստացաւ նոցա քննել զդատն այն ի վաղիւ։ Իսկ ի հետևեալ աւուրն՝ դարձեալ ժողովեալ բազմութեանն ի դուռն եպարքոսին՝ աշխատ առնէին զնա նովին բանիւք։

Տեսեալ Անգղիացի պարոնացն թէ օրըստօրէ ղայրանայ վրէժխնդրութիւն կրից խանութպանացն՝ երկուցեալ ի հետևութեանց գործոյն՝ արձակեցին զԳրիգոր, և պատուիրեցին նմա գնալ թագչիլ ի միում ի գիւղօրայս, «մինչև դադարեսցի, ասեն, չփոթութիւն ամբոխին»։

Չոգաւ Գրիգոր ի տուն հօր իւրոյ, և մնաց անդր աւուրս երիս՝ ոչ երթալով այլ ուրեք պատսպարիլ թաքստեամբ։ Յայն աւուրսն յաճախէին ի դուրս եպարքոսին բողոքօղքն, և աշխատ առնէին զնա ստէպ։ Կոչեալ նորա զԹարգմանն Անգղիացի իշխանին, ահիւ և սպառնալեօք պահանջէր ի նմանէ զԳրիգորն։ Որում պատասխանի առնէր Թարգմանն, թէ «Յորմէ հետէ սպասաւորքն մեր յարուցին զայն աղմուկ, մեք արտաքսեալ զնոսա ի տանէ մերմէ՝ վարեցաք ի բաց, ընդ որս էր և Գրիգորն»։ Այլ ոչ լուեալ եպարքոսին բանից նորա՝ ստիպմամբ պահանջէր ի նմանէ զԳրիգորն, «զի հարցաքննեսցէ զնա, ասէր, վասն գործոյս այսմիկ». և յուսադրէր զնա, զի «թէ անպարտ գտցի՝ արձակեսցէ առանց վնասու»։ Հայրն Գրիգորի որ վիրաւորեալն էր, կայր ի տան Անգղիացի իշխանին. զոր յայտնեաց եպարքոսին Թարգման պարոնն Անգ-

13. տպ. Անագղիացի.

ղիացի, առ ի ազատ կացուցանելոյ զինքն ի գործոյ անտի, և ասաց. «Դու գիտէ զտեղի որդւոյն իւրոյ և մեք ոչ գիտեմք ուր իցէ նա»։

Առաքեաց եպարքոսն զարս՝ ի բերել զհայրն Գրիգորի. որոց եկեալ և տեսեալ զԱնգղիացիս՝ անփոյթս զնմանէ կալեալ կապեցին զնա և տարան առ եպարքոսն, որ հրամայեաց դնել զնա ի բանտի, որում և զմահ սպառնային, թէ ոչ յայտնեսցէ զտեղի որդւոյն իւրոյ։ Տեսեալ արքունի ծառայիցն զանփոյթ լինելն Անգղիացի պարոնացն վասն այնմիկ գործոյ՝ զգացուցին զայն բողոքարկու խանութպանացն, քաջալերելով զնոսա զի մի թուլացուսցեն զդատն, մինչև զԳրիգոր դարձուսցեն ի հաւատս իւրեանց։

Իսկ հօրն Գրիգորի մերթ սպառնալեօք և ահաբեկութեամբ զարհուրեցուցանէին, և մերթ ողոք և խաբուսիկ բանիւք յուսադրէին առ ի չերկնչելոյ վասն որդւոյ իւրոյ. «զի չէ յանցաւոր, ասէին, նա, վասն զի այրն վիրաւորեալ ի նմանէ՝ ահաւասիկ, ասէին, շրջի ողջանդամ, և չիք ինչ վնաս յանձն նորա. և արդ մի երկնչիր դու, այլ ցոյց զորդին քո. և մեք ոչ թողցուք թէ մազ մի ի գլխոյ նորա պակասեսցի, այլ արձակեսցէ զնա եպարքոսն յետ սակաւ ինչ հարցաքննելոյ զնա վասն գործոյս այսմիկ»։ Եւ զայս ամենայն բանս իւրեանց երդմամբ հաստատեալ՝ հաւանելի կացուցին հօրն Գրիգորի։

Կոչեցեալ նորա զայր մի յազգէ Հայոց՝ ետ գրել կնոջն իւրում (զի ինքն գրել ոչ գիտէր) զի անկասկած լիցի նա վասն Գրիգորի, և արձակեսցէ զնա գալ։ Զայն թուղթ առեալ ծառայից եպարքոսին՝ եկին և ետուն մօրն Գրիգորի. որոյ ընթերցեալ, և պատրեալ ըստ իւրոյ պարզմտութեանն՝ տայ ի ձեռս նոցա զորդին իւր զԳրիգոր։ Որոց առեալ զնա բազում խնդութեամբ դարձան ի քաղաքն։

Լուեալ դատախազից Գրիգորի զըմբռնելն նորա՝ խնդացեալ խռնեցան զնովաւ բազմութիւն յոյժ, և պակուցանողական ահարկութեամբ զարհուրեցուցանէին զնա

Digitized by Google

մահու սպանանել, եթէ ոչ դարձցի ի հաւատս իւրեանց։ Այլ նա պատասխանի տուեալ նոցա՝ ասէր. «Ես զլոյս հաւատն իմ ոչ թողում և զուղիղ զօրէնս Քրիստոսի իմոյ ոչ փոխանակեմ ընդ օրինաց ձերոց»։

Իբրև տեսին նոքա թէ Գրիգոր անարգեաց զբանս նոցա, առեալ զնա կացուցին առաջի իշխանին, որում յանձնեալ էր եպարքոսն զվճիռ գործոյն։ Տեսեալ նորա զԳրիգոր, բազում աղդու և խանդաղաշարժ բանիւք խօսեցաւ ընդ նմա, խոստանալով նմա զբազում գանձս, զպատուական ստացուածս, և զկին գեղեցիկ, «եթէ դարձցիս, ասէ, ի հաւատն մեր»։

Որում հաւատարիմ ծառայն Քրիստոսի Գրիգոր պատասխանի տուեալ ասէր. «Բարիքդ զոր խոստացար տալ ինձ՝ անցաւոր են, սուտ և ընդունայն. իսկ հաւատն իմ ճշմարիտ է և սուրբ, զի ի Քրիստոսէ հաստատեցաւ, որոյ ճշմարտութեանն և դուք իսկ վկայէք։ Ա՛րդ՝ լուարո՛ւք ինձ. Ես զԱստուածն իմ ոչ թողում, և զճշմարիտ հաւատն իմ ոչ ուրանամ»։

Իբրև լուան զպատասխան Գրիգորի՝ ասեն. «Բանդադուշեալ է այսօր. տարեալ պահեցէք, թերևս ի խելս եկեալ զգաստասցի»։ Եւ տարեալ պահեցին զնա այն օր։

Ի վաղիւն դարձեալ կացուցեալ զնա յատենի, հարցանէին բանիւք սպառնալեօք և խոստմամբ պարգևաց, թէ «Ուրանա՞ս զհաւատն քո»։ Իբրև ետես իշխանն զհաստատութիւն Գրիգորի ի վերայ հաւատոյ իւրոյ, և զհամարձակ պատասխանիս նորա, առաջադրեաց յայտնել զայն եպարքոսին. զոր զգացեալ խանութապանացն՝ ժողովեցան առ նա և ասէին, թէ «Քեզ յանձն եղև կատարումն գործոյս, և դու պարտիս բռնութեամբ ածել զնա ի հաւատ մեր. յոր թէ ոչ յօժարեսցի դառնալ՝ արժան է մահու»։

Բազմապիսի բանիւք հաւանեցուցին զիշխանն լինել կամակից իւրեանց, որում և ասեն. «Յայտնեսջիր եպարքոսին, թէ կամիմք զԳրիգորն տանել ի հրապարակ քաղաքիս, և անդ հաշտութիւն ձգելով ընդ մէջ խանութա-

պանացն և Անգղիացի պարոնաց՝ վախճան տալ գործոյն. և մեք պատրաստ եմք սպանել զնա՝ յորժամ հասանիցի ի հրապարակն»։

Այսպիսի դաւաճանութեամբ կազմեալ զխորհուրդ իւրեանց, հանդերձ բազմութեամբն գնացին յատեան եպարքոսին, և անդ կրկնելով զաղաղակս իւրեանց և զբանս բողոքոյ, ասէին. «Պատանիս այս անարգու գտաւ օրինաց մերոց, և զհաւատակից մեր շուկամիջի գանեալ վիրաւորեաց, և ընդ քարշ էած զնա. և արդ եթէ հաճոյ իցէ Տէրութեան ձերում, զի մեք ի յայլասեռ պատանւոյ յայսմանէ զայսչափ անարգանս կրեսցուք, թողեալ լիցի իշխանութեան ձերում. իսկ եթէ ոչ, դատ արա ընդ մէջ մեր և դորա, և պահանջեա զվրէժ օրինաց մերոց»։

Սոյն օրինակ աղմկայոյզ գանգատանօք մեծացուցանէին զդատն զայն, և խնդրէին յեպարքոսէ զհրաման վասն շրջեցուցանելոյ զԳրիգորն ի մէջ քաղաքին՝ ի տեսիլ ամենեցունց։ Իբրև լուան զամենայն բանս նոցա, որք շուրջ զեպարքոսիւ կային բազմեալք՝ ամենեքեան իբրև վրէժխնդիրք օրինաց՝ ասէին. «Ոչ է պարտ նմա կեալ»։

Յայնժամ հրամայեաց եպարքոսն ծառայից իւրոց, զի զԳրիգոր կապեալ տարցեն ի հրապարակ քաղաքին, և գուն գործեսցեն թուլացուցանել զնա ի հաւատոց. իսկ թէ ոչ հաւանեսցի նա՝ յայտնեսցեն ինքեան, զի և ինքն զեկուսցէ Արքային զնմանէ. զայս հրամայեաց նա, զի անտեղեակ էր զդաւաճանութենէ խորհրդոյ ամբոխին։

Ըստ հրամանին այնմիկ մատուցեալ դահճաց մերկացուցին զԳրիգոր, թողլով նմա միայն զշապիկ և զվարտիկ, և մղեցին զնա ի հրապարակն կոյս, դրոհ տալով ամբոխին շուրջանակի զնովաւ, որք ոչ դադարէին ահիւ սպառնալեաց ահաբեկել զնա և ասել թէ «Դարձիր ի հաւատս Իսլամի. ապա թէ ոչ՝ քարկոծմամբ և սրախողխող մեռանիս ի ձեռաց մերոց». և զբազուկսն այնպիսի պնդութեամբ էին կապեալ ի յետուստ կողմանէ՝ մինչև արեանց հեղանիլ ի կապիցն. և գանեալ զնա հարկանէին, և կառափնա-

տէին զգլուխն ստէպ ստէպ հանդերձ այլ բազմապիսի չարչարանօք։ Եւ խառնեալ զնովաւ բազմութեանն յոյժ յոյժ՝ շրջեցուցանէին զնա ի մէջ հրապարակին ի մէջ շուկայի քաղաքին, և ամենայն ոք յորդորէր զնա մերթ սպառնալեօք և մերթ քաղցրութեամբ դառնալ ի հաւատոց։

Իսկ ծառայն Քրիստոսի Գրիգոր արիական համբերութեամբ տանելով ամենայն վշտացն՝ առ ամենեսեան պատասխանէր համարձակ, ջատագով լինելով Քրիստոսական հաւատոյ, և ասէր. «Ի զուր կարծէք թէ ահացուցանելով ձեր զիս մահուամբ, երկուցեալ իմ ի բանից անտի՝ ուրանամ զհաւատոն իմ ճշմարիտ և զՏէր Աստուածն իմ զՔրիստոս»։ Առ այս բան նորա կրճտէին նոքա զատամունս իւրեանց։ Եւ տեսիլ կերպարանաց երանելւոյն զուարթ էր և պայծառ, և ոչինչ իւիք արտայայտէր զնշան երկիւղի կամ ստրկութեան՝ ի բանից սպառնալեաց բազմութեանն և շրջեցուցանելն զնա։ Հասուցին ի խան վաճառականացն Հայոց, որ մերձ էր մեծի հրապարակի քաղաքին։ Յանցուցանելն զնա անդէն, տեսեալ ծառային Քրիստոսի զծանօթս և զդրացի համազգիս իւր՝ ասէր ցնոսա. «Եղբարք, յաղագս հաստատ մնալոյ իմոյ ի վերայ ճշմարտութեան հաւատոյ մերոյ՝ դուք մի ինչ երկբայիք. զի ես ի տանջանս պատրաստ եմ և ի մեռանելս յօժար»։ Զայն լուեալ քրիստոնէիցն եղելոց անդր, և տեսեալ զերանելին Գրիգոր ի դառն կապանս տանջանաց, աղէկիզեալ դառնակսկիծ արտասուօք լային հառաչանօք։

Անցուցեալ դահճացն զԳրիգոր ընդ այն, հասուցին ի մէջ մեծի հրապարակի քաղաքին, ուրանօր ի տեսանել զնահատակն Քրիստոսի բազմութիւն այլազգեաց ի չորեքկուսէ հորդան սուեալ կուտէին։ Անտի յառաջ վարեալ տարան ի պանդոկն Շահի, որ է հանդէպ Դրամահատին, և հանին զնա ի վերնագոյն կողմն նորա։ Մերձեցեալ առ նա աւագ խանութապան ոմն, և պատեալ զնովաւ այլոց բազմութեանց, սկսաւ նա խօսել ընդ նմա քաղցրութեամբ այսու բանիւք. «Որդեակ, դու մանուկ ես և նորահասակ,



Digitized by Google

«խնայեա՛ ի մանկութիւն քո, և փրկեա՛ զանձն քո. քանզի «այսքան մահմեռակամք՝ որք ժողովեալք են ի վերայ քո՝ «ոչ թողուն զքեզ միայն կենդանի. ուստի հաւանեա՛ց բա-«նից իմոց, և դարձի՛ր ի մոլար օրինաց քոց, և մո՛ւտ ի «հաւատ Մահմեդի՝ որ բարի է և երևելի, որպէս և տե-«սանես զամենայն մահմեդականս՝ որք բարգաւաճեալք «են բարեկեցիկ կենցաղավարութեամբ, և զօրացեալք են «թագաւորութեամբ, և ժառանգօղք են բարեաց աստի «կենաց և հանդերձելոցն։ Եւ արդ լո՛ւր բանից իմոց և «ես կարգեմ զքեզ խանութապան, և յանձնեմ քեզ զե-«րևելի կրպակն իմ, ընդունեմ՝ զքեզ իբրև զորդի իմ, «տամ՝ քեզ զերեք հարիւր թուման, զպատուական ստաց-«ուածս, և զկին գեղեցիկ ի դստերաց մեծամեծաց զոր «դու հաճիս»։

Եւ այլ պէս պէս բարութիւնս խոստանալով նմա, բերին առ ժամն զվերարկու մի ազնիւ, և հանդերձ այլովք կրպակաւէր բազմութեամբն ասացին նմա. «Ահա-«ւասիկ քեզ նշան խոստմանս մերոյ. և արդ զգեցի՛ր դու «և մի՛ յամառեսջիր. և գնա՛ համբուրեա՛ զձեռն փառաւո-«կանապետին»։ Զայս ամենայն ասացեալ, ստիպեցին զնա ընդունիլ զվերարկուն։

Այլ հաւատարիմ պաշտօնէին Քրիստոսի մերժեալ զայն ի բաց, ի պատասխանի բանից նոցա ասէր. «Ի բա-րութեանց այտի՝ զոր ինչ խոստանայք ինձ, չեն ինչ պի-տոյ ամենևին. իսկ թէ դուք կամիք զբարիս առնել ինձ, արձակեսջիք զիս կեալ իմով հաւատով. իսկ եթէ ի զուր դատապարտելով զիս սպանանէք, դուք գիտասջիք»։ Զայս ասացեալ բանայր լինքնին զզգօտին իւր, և բացեալ զփոր իւր՝ ասէր. «Արարէք զոր ինչ հաճոյ է կամաց ձերոց»։ իսկ դահիճքն յամեցուցանէին զմահ նորա, յուսով թէ թերևս թուլասցի նա ի հաւատոց իւրոց։

Կային անդ և ոմանք յուրացելոց Հայոց ծանօթք

6. տպ. բարգաւաճեալք.

Digitized by Google

նորա. սոքա ազգային բառիւք խօսէին ընդ նմա և ասէին. «Այժմ վասն փրկելոյ զանձն քո առ երես դաւանեա զհաւատ նոցա, և յարձակիլդ գնա յայլ քաղաքս ի սահմանս քրիստոնեայ Տէրութեանց, և անդ պաշտեա զհաւատ քո համարձակ»։ Զայս աղաչելով ասէին նմա։

Պատասխանէր նոցա երանելին Գրիգոր. «Մահս այս՝ որ այժմ հասեալ է ի վերայ իմ, յոր քաղաք և գնայցեմ՝ կայ անդ, և ուր և իցեմ՝ պատահելոց է ինձ այն. ընդէ՞ր ապա վասն առօրեայ կենաց իմոց կորուսից զճշմարիտ հաւատ իմ, և եղէց դատապարտեալ յատենին Քրիստոսի յաւուր յահեղ վերջնում դատաստանին նորա»։ Զայս ասելով Գրիգոր ցուցանէր զինքն ուրախ և զուարթ վասն ի վերայ հասեալ ժամու նահատակութեանն իւրոյ, զոր վկայէր գոյն երեսաց նորա, որ առաւել քան զառաւել պայծառանայր ժամ ըստ ժամէ։

Իբրև անյուսացաւ բազմութիւնն այլազգեաց զդարձէ նորա՝ մի ոմն ի նոցանէ եհար ուժգին գաւազանաւ զթիկունս նորա. զոր տեսեալ բազմութեանն, գրոհ ետուն ի վերայ նորա և ի բարձրաւանդակէ անտի գլորեցին զնա ի վայր. և մի ոմն ի նոցանէ մերկեալ զսուր իւր եհար ի մէջ կրծոց նորա. իսկ այլ արանցն կորզեալ զնա ընկեցին ի սենեակ մի խանին և փակեցին զդուռն, զի խնայէին սպանանել զնա, յուսալով թէ մարթ իցէ յետ այնր որսալ զնա. ուստի յարտաքուստ ասէին նմա. «Այժմ հաւանեա՛ց բանից մերոց, զի ապրեսցիս թերևս»։ Իսկ նա ի ներքուստ արիական սրտիւ խոստովանէր զՔրիստոս Աստուած։

Զայն լուեալ ամբոխին՝ աղաղակեցին մեծաձայն և դիմեցին ի վերայ սենեկին, կործանեցին զդուռն, և հորդան ետուն ի ներս։ Անդ մի ոմն ի նոցանէ եհար սրով զերեսս նորա և այլք սրով ծակոտէին զանձն նորա. կէսքն քարաձիգ լինէին, որոց չառաւչիւն զինուց, աղաղակ քարաձգողաց զմերձ կացողսն պակուցանէին ահիւ։ Իսկ սրբոյն յարիւն թաթաւեալ՝ զտեղին այն ոռոգանէր նո-

վաւ։ Ընդ այն աղիողորմ տեսարան ոմանց յայլազգեաց ի գութ շարժեալ ողբային, և զարմացմամբ հարցանէին զիրեարս, թէ «Տեսեալ էիք այսպիսի ինչ». և անդոսնէին զթշուառութիւնն դատաւորաց։

Յայնմ ժամու ոչ ոք գտաւ անդ յազգէն Հայոց, զի ամենեքեան առ ահի խոյս տուեալ էին ի տեղւոջէն յայնմանէ։ Բայց Հայ մի զգեցեալ զզգեստ տաճկաց, կայր անդ մերձ սրբոյ նահատակին և տեսանէր զհանդէս կատարմանն նորա։ Յետ թափելոյ ի նմա զզօրութիւն վրէժխնդրութեանն իւրեանց՝ ընկեցին զնա ի մէջ խանին. և ի նսեմանալ յաւուրն՝ կապեալ զպարան յոտից նորա, ընդ քարշ ածեալ տարան զերանելին ի հրապարակ քաղաքին և ձգեցին ի տեղւոջ մահապարտ սպանելոց։ Հայն՝ որ կայր առ սրբոյն ի հանդիսի նահատակութեանն նորա, յայնմիկ գիշերի տեսանէ զերանելի նահատակն Գրիգոր՝ որ երևեալ ինքեան տայր զվառեալ մոմեղէնս, որում և ասէր թէ «Ահաւասիկ առեր զխնդրելին քո». որոյ զարթուցեալ ի քնոյ՝ գոհանայր զՏեառնէ.

Յայնմ գիշերի Հայք կալան զչորս այլազգի պահապանս վասն մարմնոյ նահատակին՝ մինչև ցլուսանալ աւուրն. որք ի նմին գիշերի տեսանէին զի լոյս մեծ ծագեալ և շրջապատեալ կայր ի վերայ բոլոր մարմնոյ սրբոյն, որք ընդ լուսանալ առաւօտուն՝ պատմեցին քրիստոնէից և մահմետականաց։

Լուեալ եպարքոսին զամենայն անցս և զծագելն լուսոյ զնովաւ, վաղվաղակի ի լուսանալ աւուրն առաքէ զհեծեալ առ քրիստոնեայսն Ջուղայու՝ պատուիրելով զի վաղվաղակի եկեալ բարձցեն զմարմին նորա. և ինքն ստրջանայ վասն մատնելոյ զնա ի ձեռս բազմութեանն։

Եկեալ Հայոց բարձին զմարմին նահատակին Գրիգորի ի հրապարակամիջոյ քաղաքին, և տարեալ յԵրևան թաղն՝ ի սուրբ Ամենափրկիչ եկեղեցի տեղւոյն՝ ամփոփեցին զերանելի մարմին նորա մեծաւ փառօք։ Ի հասուցանելն զնա անդր՝ Հայք դառնակսկիծ արտասուօք ողբային և հառ-

Digitized by Google

բուրքէն զսուրբ մարմին նորա ջերմեռանդ փափագանօք։ Իսկ ոմանք որք ի սէր Նահատակին մնացին առ դերեզմանն նորա՝ տեսին ի գիշերին զպէսպէս նշանս, զորս պատմեցին ի լուսանալ աւուրն։

Արդ այսպիսի բարի մահուամբ կատարեցաւ Նահատակն Քրիստոսի երանելին Գրիգոր, յութներորդ ամի թագաւորութեանն շահ Սուլթան Հօսէյնի, ի թուականին Հայոց ՌՃԾԲ (1703), ի 20 Յուլիսի ամսոյ, ի տօնի սրբոյն Ներսիսի Հայրապետին և Խադայ եպիսկոպոսին։

Գերեզման նորա կայ առաջի սեղանոյ Մատրան կամ Ամառան եկեղեցւոյն Երևանայ Թաղին՝ սովին տապանագրով.

Նահատակ վասն Քրիստոսի՝ որդի Ասադղի,
Գանձ կայ եդեալ աստ ի շիրմի,
Նշխար մաքուր պատուականի
Ումեմն մանկան նահատակի,
Որ էր ամաց տասն և ութի,
Առոյգ տեսլեամբ յոյժ բաղձալի,
Որ սուրբ Գրիգոր վերաձայնի։
Նման եղեալ զուարթնոյն մեծի,
Սրախողխող ճգամբ մեծի,
Եւ մարտիրոս ի դարս վերջի,
Գառն և դժնեայ ամմանակի,
Կատարեցաւ մահուամբ բարի,
Անուշահոտ բուրմամբ խնկի,
Մինչ առաջի կայ Քրիստոսի,
Բարեխօսէ իւր յիշողի,
Եւ գյիշատակն կատարողի։
Ի Թուոյ հայկազանի

6. տպ. յուԹերրորդ. 8. տպ. 1153 փխ. ռճծգ. 13. տպ. Ասադղի, որ անշուշտ տպագրական սխալ է. ուղղեցինք Ասադղի. ասադ (اسد) արաբերէն նշանակում է Առիւծ (համմտ. Ասլան, Լևոն, Ղևոնդ յատուկ անունները)։

Digitized by Google

Ոճ յիններորդի,
Ի Թիւս երիս մակադրի,
Ի վերայ միւս յոբելինի.
Յուլիս ամսոյ էր երրորդի,
Եւ տօն էր մեծ Ներսէս Հայրապետի։

Մինչև ցայսօր պատուի ի Ջուղայեցւոց գերեզման նորա իբրև գերեզման սրբոյ և նահատակի. վասն որոյ բազում հիւանդք՝ մանաւանդ կանայք՝ արկանեն զջուր ի վերայ տապանաքարի նորա և ըմպեն ի ջրոյ անտի. և բազումք ըստ հաւատոց իւրեանց ընկալնուն զբժշկութիւն։

Յիշեալ վկայաբանութիւնը քաղած ենք Նոր Ջուղայու պատմութիւնից, Ա. էջ 210—221, գլուխ ԻԹ, «Նահատակութիւն Գրիգորի խոստովանող վկային Քրիստոսի, որ հասարակապէս կոչի Լոյս Գրիգոր, եղելոյ ի ժամանակս շահ սուլթան Հուսէյնի, յամի 1703:» Նոյն տեղը, էջ 221, ծան. 3 ասուած է թէ «Բնագիր պատմութեանս էր տետրակ մի փոքրիկ, որոյ պատմօղն ոչ էր յայտնի. այլ էր ժամանակակից, և թերևս նոյն ականատես Հայն՝ որ ներկայ էր ի ժամ նահատակութեանն Գրիգորի: Շարադրութիւնն էր խառն ու շփոթ:» Յարութիւն Թ. Տէր Յովհանեանց (Նոր Ջուղայի պատմութեան հեղինակը) էջ 220 դնում է հետևեալ ընդարձակ ծանօթութիւնը՝ իւր կողմից·

«Աւանդութեամբ այլազգ պատմի այս պատմութիւնն. զի ասի թէ յանցանելն Գրիգորի յաւուր միում ի շուկային, քղանցք հանդերձի նորա անկանեն ի վերայ շուշայի (զոր ապակէգործն գլզեալ ի կողմ անցուցանէր անդէն վասն վաճառելոյ) և լինին պատճառ անկանելոյ այնր յերկիր և բեկանելոյ. յայնմանէ առիթ առեալ այլազգեացն, և հարեալ ի գեղեցկատեսիլ կերպարանաց նորա խռնին զնովաւ և բռնադատեն զնա դառնալ յօրէնս իւրեանց, զոր ոչ յանձն առեալ Գրիգորի, ասեն, նահատակի: Ինձ հաւանական

3. տպ. հոբելինի.

թուի յաւէտ վերոյգրեալ պատմութիւնն, զի անհաւատալի է թէ վասն դոյզն պատճառի բեկանելոյ շուշայի կնիք լեցի այնչափ բռնադատութիւն՝ մինչև ի մահ անդր ածել զվախճան գործոյն, թէպէտ և ի քաղաքի յորում թաղաւորեալ եղէ բռնութիւն: Իսկ վերոյգրեալ պատմութիւնն որոյ գրողն է ժամանակակից՝ յաւէտ ստուգապատում երևի ըստ յարմարութեան գործոյն զոր պատմէ: Ցուցամ զի վասու-նարիւն երիտասարդք զգուշացեալ յայսմանէ ուսցին չառնել աւելի այսպիսի կատաղութեան կռիւ այլազգեաց, զի մի՛ և ինքեանք մատնեսցին ի նմանօրինակ փորձանս զրպարտութեան:»

Ամբողջութեան համար մէջ ենք բերում նաև հրատարակչի երկրորդ ծանօթութիւնը (էջ 220)· այսպէս. «Ահա՛ քեզ նկարագիր բողոքոյ խառնիճաղանճ ամբոխի այլազգեաց, որք զգածեալք էին կատաղութեամբ, զոր ճարտար նկարագրէ առաջին պատմողն (թէպէտ ճապաղ բանիւք), որ և հաստատէ զժամանակից լինելն իւր անցիցն այնմիկ:»

# 99.

## ՍԱՀԱԿ ԲՐԸԻՏՆԵՑԻ

✝ ՌՃԿԴ=1715 հոկտ. 17

Յարմարեցից ճառս վկայաբանութեան սրբոյն Սահակայ նոր վկային, որ վկայեաց վասն Քրիստոսի ի մէջ խուժադուժ ազգին։ Սա էր մանուկ ամաց եօթնևտասնից, յերկրէն Գողթնայ, ի գեղջէն Բրուտու։ Գայ ի սահմանս Ղրիմու՝ ի պահնորդ քաղաքն Թուրքաց, որ կոչիւր ամենայն լեզուաւ Ազախ, վասն վաճառականութեան, զհետ իւրոյ մերձակայի։ Սա լեալ դիմօքն գեղեցիկ, արօքն վայելուչ, հասակաւն երևելի, տեսլեամբն ազնուադոյն, նախանձին ազգն անօրինաց վասն գեղեցկութեան և դիմացն, հնարին հնարս չարութեան, և ասեն ընդ միմեանս. «Զի՞նչ արասցուք մանկանս այսորիկ՝ զի դարձցի յօրէնս մեր, և զհետ մեր եղիցի»։ Խրատատուն ամենայն չարեաց սատանայ խրատէ զնոսա. ասեն. «Հնարեսցուք այսպէս և կացուսցուք վկայս, թէ սա խոստացաւ պաշտել զօրէնս մեր և ուրանալ զիւրն. այսպէս վկայեսցուք առաջի դատաւորաց և մեծամեծաց»։ Եւ հաճոյ թուեցաւ բանս ընդ միմեանս՝ զոր խորհեցանն խորհուրդ չար, և ոչ կարացին հաստատել, ըստ ասողին։

Մինն ի խորհրդակցաց դնայ առ դատաւորն և ասէ՝ թէ «Սա խոստանայ զօրէնս իւր ուրանալ և դառնալ յօրէնս մեր, և ոչ առնէ. զի՞նչ պարտ իցէ առնել նմա»։

Digitized by Google

Ասէ դատաւորն. «Կամ դառնալ պարտ է յօրէնս մեր, և կամ սրով մեռանել»։

Ասէ անօրէնն. «Մանուկ մի է սա ազգաւ հայ՝ յերկրէն արևելեան, խոստացաւ պաշտել զօրէնս մեր, այժմ ուրանայ»։

Յայնժամ կոչեցին զսուրբ մանուկն յատեան Յուսուֆ ամիրային. և կացին սուտ վկայքն՝ որպէս խորհեցանն, վկայեցին թէ «Լուաք ի դմանէ որ ասէր, թէ յօրէնս ձեր դառնամ»։

Եհարց ամիրայն ցսուրբն Սահակ. «Իրաւ՞ է զոր դքէն ասեն դոքա»։

Յայնժամ լցեալ մանուկն Հոգւովն սրբով, շարժեալ ի խնամոց վերնոյն, ի բաց ընկենլով զերկիւղն սնոտի, անվեհերապէս խօսեցաւ քաղցրաձայն բարբառովն. «Ա՛միրայ, ո՛չ գիտեմ զդոքա, և ոչ ճանաչեմ. և զոր խօսինն ես չգիտեմ. բայց միայն զՔրիստոս գիտեմ և ոչ զայլ ոք»։

Բանիցս անգամ դարձուցին զբանս սուրբ մանկանն, մանուկն անփոփոխ ունէր զդաւանութիւն որ առ Քրիստոս։ Յայնժամ դատաւորն գրեաց զբանս սուտ վկայիցն. և հրամայեաց արկանել զսուրբն Սահակ ի բանդ։ Ամենայն օր կացուցանէին առանձինն, ողոքէին և խրատէին, և նա շնորհօքն Քրիստոսի անշարժ կայր ի հաւատս և ի դաւանութիւն ի Քրիստոս։

Եւ յերրորդում աւուրն արար մեծ հանդէս հրապարակաւ Իւսուֆ ամիրայն՝ որ էր իշխանաց իշխան, հանդերձ դատաւորօք և այլ մեծամեծօք։ Զգովելի մանուկն հանին ի բանտէն, խոնարհ ունելով զգլուխն, և կացին սուտ վկայքն։ Դարձեալ զնոյն բան առաջարկին, թէ «խոստացաւ զօրէնս մեր պաշտել և զիւրն ուրանալ»։ Մանուկն երանեալ կայր որպէս գառն ի մէջ յոքնակոյտ գայլոց, և զՔրիստոս դաւանելոյ ոչ դադարէր։

Ասէ ամիրայն ցսուրբ Սահակ մեղմ մեղմ. «Մանուկ, լո՛ւր զոր ասեմ. ահա վկայեն վկայքն քո. զբանս վկայիցն

Digitized by Google

գրեալ է. եկ որդի, դարձիր յօրէնս մեր, և տամ քեզ պարգևս բազումս, և զշնորհս գտցես առաջի իմ, և զքեզ ինձ որդեգիր արարից, ապա թէ ոչ՝ կտտամահ առնեմ զքեզ»:

Ցայնժամ մանուկն հոգիալընկալ ասաց. «Ո՛չ այդպէս, ամիրայ, եթէ մեռանել ևս հասանիցէ՝ որպէս ասես՝ ոչ ուրանամ զՔրիստոսն իմ. քանզի զնա գիտեմ և ոչ զայլ ոք. դոքա ո՛րք վկայեն վասն իմ՝ սուտ վկայեն. ես ոչ ճանաչեմ զդոքա»:

Եւ ոչ կարացին կասեցուցանել ի հաւատոյն զոր հաստատ ունէր անդրդուելապէս. քանզի հիմն ի վերայ վիմի էր, և ոչ կարացին հեղեղքն անօրէնք սասանել և յատակել, այլ միայն անսասան։ Փառք բարերարին Աստուծոյ:

Եւ դարձեալ հրամայեցին արկանել զսուրբն ի բանդ. և անսուաղ պահէր զինքն և ոչ ուտէր զկերակուր նոցին. և քրիստոնեայքն տալ ոչ կարէին. այլ կամաւ էր անսուաղութիւն նորա մինչև եօթն օր: Ամենայն օր ահացուցանէին զերանելի սուրբ վկայն, թէ «Ահա վաղիւն հատցեն զգլուխ քո». զայս առնէին վասն ահի մանկանն՝ որ ուրանայ. իսկ նա ևս առաւել պնդէր և զօրանայր: Եւ կոչեաց դատաւորն զմի առաջակայիցն քրիստոնէից, և ասէ. «Ասացէք ցմանուկն, թէ այսպէս ասէ դատաւորն, միայն թէ ուրանայ և գնայ յիւր աշխարհն, և պաշտէ զհաւատս իւր»:

Եւ զայս բան դատաւորին ծանուցին սուրբ մանկանն. և նա ոչ էառ յանձն, ասելով. «Թէ սպանցեն զիս վասն Քրիստոսի՝ պատրաստ եմ և ոչ ուրանամ»: Եւ եկեալ ծանուցին զբան սուրբ մանկանն՝ դատաւորին, թէ «ոչ առնու յանձն զոր ասացեր»:

Եւ հնարեցին զայլ հնարս. գրեցին զվճիռն մահուն, և զհրաման ամիրային և զսուր. առաքեցին առ սուրբ վկայն Քրիստոսի, մինչդեռ ի բանտին էր: Ասեն ցսուրբ մանուկն. «Ահա վճիռն մահուն քո և հրաման ամիրային, և ահա սուրն»: Զայսոքիկ եդին առաջի սրբոյ վկային, և

նա ոչինչ ասաց. զայս միայն՝ թէ «պատրաստ եմ մեռանել վասն անուանն Քրիստոսի»։ Եւ զայս ծանուցին ամիրային, թէ «ոչ ինչ երկեաւ, ոչ ի հրամանաց ձերոց և ոչ ի սրայն»։

Եւ ի յեօթներորդ գիշերին շատ չարչարեցին զսուրբ վկայն Քրիստոսի. մինչ երկաթեայ ունելեօք փետտեցին զմարմինն։ Եւ յեօթներորդ աւուրն յերրորդ ժամուն՝ զգլուխ զօրուն՝ որ էր մեծ իշխան և զօրավար, և նա իբրև զգազան ահագին կատաղեալ՝ կամեցաւ եւս դատ առնել սուրբ մանկանն. ոչ հանդուրժեաց ի դատարանին առնել, այլ եւ ի հրապարակն փողոցին, և նստաւ յատենի, և ժողովեաց զզօրս իւր զամենայն։ Եւ կոչեաց զգլուխ զօրուն ի նոյն ատեանն, զդատաւորքն, զմեծամեծքն ամենայն. և եղև մեծ դղրդումն ահագին. և ամենայն ժողով քաղաքին կուտեցան համանգամայն, հաւատացեալք և անհաւատք, և ամենայն եկքն ի միասին։

Գլուխ զօրուն հարցանէ ցդատաւորն. «Զինչ արասցուք մանկանս այսորիկ՝ եթէ ոչ դարձցի յօրէնս մեր»։

Ասէ դատաւորն. «Ըստ օրինաց մերոց պարտ է կամ դառնալ յօրէնս մեր, կամ սրով մեռանել, որպէս գրեցաւն ըստ վկայիցն». ապա... և հրամայեաց... «զօրէնս մեր որպէս խոստացայն»։

Պատասխանեալ մանուկն ասէ. «Քաւ լիցի ուրանալ զՔրիստոս իմ և դառնալ յօրէնս ձեր»։

Եւ ասէ գլուխ զօրուն. «Թէ դարձցիս յօրէնս մեր՝ բազում ոսկի տաց քեզ և շատ բարութիւնս. ապա թէ ոչ դառնաս՝ մահու մատնեմ զքեզ»։

Եւ երանեալ մանուկն բացեալ զշնորհալի բերանն՝ ասէր. «Ո՛չ ուրանամ զհաւատ իմ. ձեր ոսկին ձեզ լիցի. պատրաստ եմ եթէ մատնես զիս մահու»։ Ծիծաղեաց զնոքօք ըստ ասողին, զօրացեալ յԱստուծոյ. և ոչ ի գան-

21. Կէտադրեալ պակասների համար II ծանօթագրում է թէ «պակասէին յօրինակի մերում իբրև չորս տողք. ըղձալի է՝ որոց ունիցին այլ օրինակ՝ լնուլ զթերին»։

ձուցն պատրեցաւ, և ոչ ի սրոյն երկեաւ, այլ յաղթեաց երկուց կողման. ցածեաւ առաջի նորա ամենայն՝ որ ինչ յաշխարհին էր, ըստ Դաւթի. այլ խաղայր ցնծալով մանուկն հոգւով. ընդդէմ եկաց ճակատուն, պնդելով վանէր զախոյեանն չարին։

Յայնժամ ասէ գլուխ զօրուն ցդատաւորն. «Ահա ոչ դառնայ. հատ զվճիռն մահուն»։ Յայնժամ եհատ դատաւորն զվճիռն։ Եւ ել յոտին զգլուխ զօրուն, և հրամայեաց տալով սաստկագոյն ձայնիւ. «Մերկացուցէք զդա և սպանէք»։ և չար զինուորքն մերկացուցին և զձեռս յետս կապեցին։

Ո՜վ երանեալ մանուկ. զայդ մեծ պատերազմ ուստի՞ ուսար. կամ ո՞ ցոյց քեզ. զիարդ իշխես զայդ առնել. ո՞ւմ վասն մերկանաս. ո՞ւմ վասն կապեցար. ո՞ւր դնաս. քանզի յիշատակ մահուն դողացուցանէ զմեզ. փոխանակ կաթին բաժակ մահու ըմպես։ Երանելի վկայն Քրիստոսի լցեալ անապական գինեաւ, զխորհուրդ անօրինացն որպէս կաւ գռեհաց կոխէր ճմլէր և նկուն առնէր. մերկացաւ, զի մերկ ընդ անմարմին թշնամւոյն կռուէր. երկնաւոր արքային հաճութեան կամաց զինու պսակեալ. այսինքն վահանն հաւատոյ, սաղաւարտն յուսոյ, աւետարանական ամրամերարկուն, իբրև զկօշիկ դարշապարացն ունելով գնայր աներկիւղ կոխելով զօձս և զկարիճս, և զամենայն խորհուրդս չարին. զհետ մտեալ հետոցն Քրիստոսի՝ յօրինէր և կազմէր զպատերազմն. վառէր անշիջանելի վառմամբ սիրոյն Քրիստոսի. ոչ գիտաց զինչ է գան, զինչ է տանջանք, զինչ է երկիւղ, զինչ փառք. այլ զՔրիստոսն ի վերայ ամենայնի լաւ և բարձրագոյն համարեցաւ, որպէս առաջին մարտիրոսքն։

Եւ իբրև տարան ի տեղի կատարման՝ հանդէպ դրան ամիրային, զինչ ի սպանդանոց զորոջն Քրիստոսի, մերկ, ձեռս յետս կապեալ, ոչ ինչ խօսէր, այլ զմայլեալ էր բաժակաւն մահուան. յայսկոյս և յայնկոյս հայելով՝ ի գութ շարժէր զամենեսին։ Ամենայն ազգ ժողովեալ հայէին

զկատարումն սուրբ վկային. Թուրքաց, Թաթարաց, Հայոց և Հոռոմոց և Ռուսաց։ Եւ դահիճն իբրև վերացոյց զսուրն՝ թէ հատցէ զգլուխ սուրբ մանկանն, յայնժամ դողումն եմուտ ի նա, և ոչ կարաց հատանել զպարանոցն, այլ ընդ մերկ թիկամբն եհար և ճեղքեաց, և ել արիւն շատ։ Եւ սկսաւ երանելին արտասուել. քանզի զարտասուս ընդ արեան խառնէր։

Ո՞վ կարասցէ զաղէտս սուրբ մանկանս պատմել. ո՞վ սքանչելեացս լուր. ո՞վ հիացման արժանի։ Եւ մի ոմն ի զինուորացն ձայնեաց առ դահիճն՝ իբր ի գութ շարժելով. «Ո՞վ անիրաւ, ընդէ՞ր չարչարես. արագ հար»։ Այլ և վերացուցեալ դահիճն զսուրն՝ թէ հատցէ, և ոչ կարաց ի դողմանէն. ընդ ականջն հանդերձ երեսօքն էհար. և եղև մանուկն արեամբ ներկեալ. և ոչ ինչ խօսէր, որպէս գառն նորածին, այլ զարտասուս ընդ արեանն հեղոյր։ Յայնժամ ամիրայն ոչ կարաց տանել զաղէտն. ձայնեաց ի պալատէն ասելով, թէ «Իբրև զոչխար զենեսցի»։ Յայնժամ դահիճն իբրև զոչխար զենեաց։ Դարձաւ դահիճն՝ զսուրն եդ ի պատեանն. քանզի այնպէս ահագին ձայն զարհուրման ել ի սրոյն, որ ոչ կարացին զձայնն տանել որք մերձն էին, փախեան ամենեքեան յերկիր ընկնելով. և սկսաւ անձրև մանրամաղ տեղալ, եւս և զօրանալ սաստկագոյն զերիս տիւս և զերիս գիշերս. զի մի պատուական արիւն սուրբ վկային լիցի կոխան անօրինաց, այլ լուացեալ ջնջեաց յերկրէ. և մնաց մարմին սուրբ վկային անթաղ. և հրամայեաց դատաւորն զմարմին սուրբ վկային ընկենուլ ի գետն մեծ որ կոչիւր Թէն (Տօն)։

Այլ երկիւղածք և աստուածապաշտք գնացին առ դատաւորն և ետուն գրամս բազումս, և առին հրաման թաղելոյ։ Եւ մինչդեռ տանէին զսուրբ մարմինն սայլիւ՝ ի դիրս հանդստեան, տեսին անօրէնքն զի կանգուն կայր սուրբ մարմինն ի մէջ սայլին. հիանալով յետս դարձան. քանզի այնպէս երևեցաւ յաչս նոցա։ Եւ եդին ի տապանին սաղմոսիւք և օրհնութեամբ և երգօք հոգևորօք. և

յիշատակն օրհնութեամբ եղիցի. ի տեղի կատարմանն մինչև ի դուռն հանգստեան՝ լոյսն ծիրանագոյն կամար կապեցաւ ի մէջ սաստկագոյն անձրևին, ակներև ամենեցուն։ Այլ ոմն քրիստոնեայ և աստուածապաշտ՝ բամպակով էառ զսուրբ արիւն վկային, և եդ ի գիշերին ի տան անդր իբր զկրակ անբոց։ Գիշերապահքն քաղաքին տեսին զլոյսն ակներև. եկեալ պատմեցին քրիստոնէից, աւետիս տալով, թէ տեսաք զլոյսն բոցաճաճանչ ի վերայ մանկանն. և երանեցին քրիստոնէից զհաւատոյ պայծառութիւնն։

Ի թուականիս հայոց ՌՃԿԴ ի հոկտեմբերի ԺԷ, կատարեցաւ սուրբ վկայն Սահակ, ի փառս Քրիստոսի օրհնելոյն. ամէն։ Ի ձմերայնի զբաղեալ սուղ ժամանակի՝ երևեցաւ վարդ մի փթիթ և զարմանալի և անուշահոտ, որ ելից զտեղերս ամենայն։ Քեզ աւետի՛ս երկիրդ Գողթնաց, և ուրա՛խ լեր, որ ունիս արմատս բարութեան և ճիւղս օրհնութեան. ուրա՛խ լեր երկիրդ Ղրիմու, որ թռեաւ յարևելից աղ մի պատուական, և հանգեաւ ի քեզ։

Շնորհիւ հեղման սրբոյ արեան վկայիս, Տէր Յիսուս, թող զյանցանս զպարտիս զյարմարողի ճառիս, Կաֆայեցւոյ Ստեփաննոսի որում յետին բանասիրի։

Յիշեալ վկայաբանութիւնը հանում ենք Սխականից, որ էջ 345 նահատակիս մասին համառօտիւ խօսելուց յետոյ, էջ 528, ասում է. «Սահակ Բուհրուտեցի մանուկ նահատակ.—ծանուցաւ փառք ի շատէ ի տեղագրի հայրենեացն՝ նահատակութիւն մանկանս այլ չքնաղ առաքինութիւն նորին և սրտառուչ ողորմամանութիւն, նա և զգայուն պատմաբանութիւն ականատես գրողին, միանգամայն և ցարդ բազմաց զանխուլն մնալ հռչակելի դիպացն, արդեօք և արեյական գոչումն արեանն ընդ կիսուսականին հնգաբանելոյ, պահանջեցին զլիակատար հրատարակութիւն վկայաբանութեանն: Ի վերնագրին անուն գեղջն յաւելմամբ նտառի՝ կարծեցուցէ Բրտուոն կամ Բուրտոն,

Digitized by Google

ի կարգին Բրուտ· այլ զի ի Գողթն ծանօթ է միայն Բուհրուտ, աներկբայ սա է համարելի հայրենիք վկային։» Այս տողերից յետոյ մէջ է բերուում մեր արտատպած վկայաբանութիւնը՝ հետեւեալ վերնագրով. «Նահատակութիւն նոր վկային Քրիստոսի Ս Սահակայ Բրուտնեցւոյ։»

Վկայաբանութեան հեղինակն է Ստեփաննոս Կաֆայեցի, տես վերը՝ էջ 558, տող 19-20։

Digitized by Google

## 100.

### ՍԱՄՈՒԷԼ ՄԱՆԻՍԱՑԻ

† ՌՃՀԲ 1723 յուլիս 15 գշ.

Սոյն նահատակի տապանագիրը միայն ունինք մեր ձեռքում, արտագրուած Քօսեանի Հայք ի Զմիւռնիա և ի շրջակայս աշխատութիւնից, հատ. Ա. Վիեննա, 1899, էջ 89, այսպէս՝

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԱ-
ՆԻՍԱՑԻ ՆԱՀԱՏԱԿ
ՍԱՄՈՒԷԼԻՆ. ՋԵՐ-
ՄԵՌԱՆԴ ՀԱՒԱ-
ՏՈՎ ԳԼԽԱՏԵՑԱՒ.
ՍԱ ՈՐԴԻ Է ՏԷՐ ԵՂԵԱ-
ԻՆ. ՌՃՀԲ Թ[ՈՒ]ԻՆ
ՅՈՒԼԻՍԻ ԺԵ. ՕՐՆ Գ
ՇԱԲԹԻ։

Քօսեան, նոյն էջ, ծան. 1 ունի նաև հետևեալ տեղեկութիւնը. «Նահատակին գերեզմանաքարին վերի երկու անկեանց կողմերը խաչներ փորուած են։ Զմիւռնացի թէ՛ հայ և թէ՛ յոյն ժողովուրդը սովորութիւն մ'ունի, երբ ջերմէ կը բռնուի, տեղական հողէ սափոր մ'առած, զանգակատան աշտարակին տակը գտնուած ջրհորէն ջուր լեցնելով, կու գայ այն խաչներուն մէջ քիչ մը կը լեցնէ, կը չօքի կը խմէ քիչ մը և յետոյ սափորը կը զարնէ գերեզմանաքարին վրայ կը կոտրէ և կը դառնայ տունը։ Այսու կը յուսայ և կը հաւատայ թէ ջերմը զինքը կը թողու»։

Digitized by Google

Տապանագրիս մէջ յիշուած թուականը անորոշ է. ՌՃՀԲ յուլիս 15, ըստ սովորական հաշուի համապատասխանում է քրիստոնէական 1723 յուլիս 15-ին. բայց այս օրը երեքշաբթի չէ գալիս, ինչպէս ասում է տապանագիրը, այլ երկուշաբթի. նոյն օրը 1722-ին կիրակի է գալիս, 1724-ին չորեքշաբթի, 1725-ին հինգշաբթի, 1726-ին ուրբաթ, և առաջին անգամ միայն 1729-ին է որ յուլիս 15-ը երեքշաբթի է գալիս։



Digitized by Google

# 101-

## ԽԱՆՈՒՄ ՎԿԱՅՈՒՀԻ

† ՌՄԴ=1755 մայիս 3 դշ.

Տաղ ի վերայ սրբուհւոյ կուսին՝ որ անուն նորա կոչի Խանում, որ ի Թուին Հայոց ՌՄԴ.ին եւ ի ամսոյն մայիսի Գ, օրն չորեքշաբաթի նահատակեցաւ վասն անուանն Քրիստոսի եւ ի գաւառին Բագրեւանդու՝ որ Վաղարշակերտ, որ այժմ ասի Ալաշկերտ:

Պարծանք՝ Հայոց, սրբուհի կոյս,
Սուրբ նահատակ վերջի դարոյս,
Զխաչն Յիսուսի բարձեր ի յուս,
Ի փառս մըտեր անտարակոյս։
Սրբուհի Խանում նահատակ,
Սրբուհի Խանում,
Տանջանքդ անպատում։

Օտար ազինքն այս կենցաղոյս,
Խորհեցան քեզ առնել կորոյս.
Ասեն «Եկ, լեր մեր ազանդոյս,
Եւ փառակից փառաց մերոյս»։

2. Յ ի Թվին. 3. Յ դ. չրթի. | Յ անվանն. 4. Յ բագրեվանդու. | վերնագիրը Հ այսպէս տաղ սրբուհի կուսին որ անուն նորայ կոչի խանում ... (այսպէս կէս). 8. Յ ի յոյս. 9. Հ ի փառըս մտեր անտարատ կոյս. | Յ անտարայկոյս. 12. Հ տանջանքըդ. 14. Հ խորհեցան.

Սըրբուհի Խանում նահատակ,
Սըրբուհի Խանում,
Տանջանքդ անպատում։

Ղամբարաբար դու փայլեցար,
Եւ սիրով Փըրկչին վառեցար.
ԶՔրիստոս Աստուած դաւանեցար,
Սուրբ կուսանաց հետեւեցար։
Սըրբուհի Խանում նահատակ,
Սըրբուհի Խանում,
Տանջանքդ անպատում։

Որժամ առեալ ըզքեզ տարան
Ի այն տեղին քո կատարման,
Բազում պարգեւըս խոստացան,
Թէ «լեր կրօնին մերոյ հաւան»։
Սըրբուհի Խանում նահատակ,
Սըրբուհի Խանում,
Տանջանքդ անպատում։

Սարսըռելի չար տանջանաց,
Համբերեցեր ըստ Հռիփսիմեանց.
Ո՛չ հաւանեալ նոցին խոստմանց,
Արծաթ ոսկոյ, ունայն փառաց։
Սըրբուհի Խանում նահատակ,
Սըրբուհի Խանում,
Տանջանքդ անպատում։

Իսկ բարբարոս չար գազանն,
Զի ոչ եղեր իւրեան հաւան.
Զիւր սուրն ի պատեանէն էհան,

1. բոլոր տների վերջի եղած սրբուհի խանում… եռատողերի տեղ՝ ԲՀ ձեռագրաց մէջ գրուած է մինչ «սրբուհի խանում…» (երկու բառ). 4. Հ ղամբարափայլ. 5. Հ դու վառեցար. 13. Բ պարգեւքս. 14. Բ կրսին փխ. կրօնին. 19. Բ հըռիփսիմեանց. Հ հռիմսիմեանց. 20. Բ կամաց փխ. խոստմանց. 21. Հ յունայն. Բ յոյնան. 25. Բ գազան. 26. Բ որ փխ. զի. 27. Բ իւր փխ. զիւր.

Խոցեալ ըղկող քո պատուականն։
Սրբուհի Խանում նահատակ,
Սրբուհի Խանում,
Տանջանքդ անպատում։

Բամբեալ դահիճքն ի միասին,
Ծուրջանակի պաշարեցին.
Զկատաղութիւն չարին լըցին,
Անդամ անդամ յօշոտեցին։
Սրբուհի Խանում նահատակ,
Սրբուհի Խանում,
Տանջանքդ անպատում։

Եղև այլազգեաց տըրտմութիւն,
Եւ մեզ Հայոցս ուրախութիւն,
Թուլասըրտից համատատութիւն,
Թերամըտաց ամօթ իսկոյն։
Սրբուհի Խանում նահատակ,
Սրբուհի Խանում,
Տանջանքդ անպատում։

Յամաքեցեալ Հայոց ազգին
Բարեխօսեա դու քաղցրագին,
Ցիսուսի և մօրն իւր կուսին,
Փըքր ի չատէ տէր Պօղոսին։
Սրբուհի Խանում նահատակ,
Սրբուհի Խանում,
Տանջանքդ անպատում։

Սոյն վկայաբանական տաղն ունին միայն Վիեննայի Մխիթարեան Հարց մատենադարանի թիւ 156 (=Բ) և թիւ 412 (=Ն) ձեռագրերը. առաջինը էջ 63

1. Ն զկող. Բ ի կող. 7. Բ կատաղուի չարիք. 8. Ն օշատեցին. Բ օշոտեցին. 12. Բ այլ ազգեայց տրտմութի. 15. Բ թերամտից. 20. Բ բարեխոսեայ. Ն բարեխօսեաց. 21. Ն չուսի իւր. 22. ԲՆ պողոսին.

ա—64 ա, իսկ երկրորդը էջ 71 բ—73 ա. տես Հ. Տաշեանի Ցուցակը, էջ 460 ա։ Տաղի արտագրութիւնն ու համեմատութիւնը ստացել ենք մատենադարանապետ Հ. Բ. Գիւլէզիկճեանից։

---

### Տաղ ի վկայուհի սուրբ Խանում Համադանի ի Թոփրաք Քալէ.

Իմ սիրտս էլ վառեցիր սիրովդ, սուրբ Խանում,
Հեռուվանց մայլեցայ հոտովդ անպատում.
Փարատեց ցաւերս, սիրտըս լըցվաւ խընտում.
Ցաւոց դարման տըւուար մարդկանց, սուրբ Խանում։

Վարդ բուսար փըշոց մէջ, գոյնըդ աննըման.
Գեղեցիկ պատկերիդ աշխարհք զարմացան.
Փայլուն և նախշունիկ աչքերուդ վերան՝
Սև ունքերըդ սիրտ կու տաղէր, լոյս Խանում։

Ձերդ տատրակ ողջախոհ մընչէիր ի խղիդ.
Երգիդ մըրմունջք լըսողք մայլեցան ձէյնիդ.
Քեզ ձէյնէկից դասին խումբք հըրեշտէկիդ,
Խայտան ցընծան բերկրին ձէյնովդ, կոյս Խանում։

Ռահան, նարկիզ, քըրքում, ծաղիկ նունափար.
Թոփրաք խալայ պարտէզ դու մէջ ծաղկեցար.
Հեռացար մարդկանցմէ, տան մէջ փակվեցար,
Բայց սըրբութեան հոտըդ յայտնեց քեզ, Խանում։

Թագաւորին երկնից քեզ նըւիրեցիր,
Գըլխուդ զարդարանքնին արիր ցան եւ ցիր,
Թողեր վարդ մանուշակ, շուշան քաղեցիր,
Ծոմ, պաք աղօթք քոյ զարդք, ճըգնող սուրբ Խանում։

Վերջապէս արիւնովըդ հոգիդ գնեցիր,
Կուսան և մարտիրոս անուն թողուցիր,
Հայրենիքըդ քեզմով պայծառացուցիր,
Գերեզմանըդ ցաւոց բըժիշկ, սուրբ Խանում։

Յիշեալ վկայաբանական գեղեցիկ տաղը հրատարակեց նախ Բազմավէպ, 1859, էջ 70, թերևս Ալիշանի հրատարակութեամբ. հարկաւ հրատարակիչը աննշան փոփոխութիւններ մտցրած պիտի լինի տաղի մէջ. օրինակ անգիր ը տառերը. բայց մենք բոլորովին անփոփոխ արտատպել ենք Բազմավէպից։ Կոյսի նահատակութեան թուականը չէ յիշուած տաղի մէջ. այդ պակասն էլ լրացուած է նախորդ տաղի միջոցով։

---

(Ալաշկերտու) գերեզմանատան աղբիւրի քիչ բարձրն, եկեղեցւոյ և աղբիւրի միջավայրը կայ մի քարակոյտ, որ Կոյս Խանումի նշխարաց վայրն է, որ 1730–35 թուականներուն նահատակուած է անտանելի չարչարանօք։

Կոյս Խանումի գերեզմանը յիշատակարան չունի, կոշտ քար մի անգամ վերան չկայ. սակայն նորա կեանքն և նահատակութիւնը նկարուած է իւր սեռի սրտին մէջ, պատկառանօք և հառաչանօք կը յիշեն նորա անունը։

Կոյս Խանումի կենսագրութիւնից հազիւ մասնաւոր ինչ միտս պահած եմ կորուսած դրութիւններէս։

—Խամուրայ վիճակն Կոյս Խանումի միջոցին ամբողջովին հայ կը լինի, նորա մայրը մահմետականութիւնը կընդունի, Խանում խոյս կտայ այս այն տեղ, որպէս զի մօրը բռնութեան տակ չընկնի, մայրը խուզարկուներ կը հանէ բէկերու ձեռքով, կը գտնեն, ջրէն անցնելու միջոցին Խանում ինք զինք Արածանին կը ձգէ, Արածանին կիսախեղդ Մանազկերտի աջ ափերն դուրս կը ձգէ, կապաւէնի Անդափ. մայրը գտնել տալով կը բռնանայ.որ մահ-

մեռական կրօնը ընդունի, Խանում չընդունիր, մայրը չէյլխերու կը դիմէ, որք ատեան կենթարկեն, կը բռնանան. Նա խիստ պատասխաններ կուտայ, գիշեր մի կը չարչարեն, և յօշոտելով գազանաց առջև կը ձգեն. ուրիշ գիշեր մի հայեր Խանումի նշխարներն կը հաւաքեն, քանի անգամ նորա նշխարաց վերայ լոյս իջած տեսնելէ յետոյ, կամփոփեն գերեզմանատան մէկ անկիւնն, որպէս ասացի։

Ամեն գերեզմանատուն մտնող երբ կանգնի աղբիւրի մօտէն առաջին անգամ Խանումի փոքրիկ քարակոյտին կը պատահի, եթէ իգական սեռից է «Աստուած օղորմի» մի պիտի ասէ ու անցնի։

Սոյն հատուածը՝ Ս. Կոյս Խանումի նահատակութեան և նորա գերեզմանի մասին՝ արտատպում ենք Ս. Հայկունու Բագրևանդ Ջրաբաշխ գաւառ աշխատութեան (Վղրշպտ. 1894) երկու տարբեր տեղերից։ Հատուածիս առաջին չորս տողերը հանում ենք նոյն աշխատութեան 58 էջից, իսկ մնացեալը էջ 60—61։ Հայկունու մէջ բերած թուականը (1730—35) լոկ ենթադրաբար է, ուստի և չի կարող կասկածի ենթարկել առաջին տողի տուած ստոյգ թուականը՝ 1755։

Digitized by Google

## 102.

### ՓՌԱՆԿՕՒԼ ՈՐԴԻ ԱՂԻՂ ՊԷԿԻ

✝ ՌՄԶ=1757 յունիս 1

Տաւրիկեան նահանգի Ղարասուբազար քաղաքի ս. Աստուածածին եկեղեցու գաւթում ի թիւս այլ գերեզմանների գտնւում է և մի նահատակի գերեզման, որի տապանաքարի վերայ ուռուցիկ գրերով քանդակուած է հետևեալը։

Այս շիրիմս է հանգիստ
Ի յերկրէն արևելից,
Ի գիւղէն Շրջըվանց,
Եւ է որդի Աղիղ պէկ,
Իւր անունն Փռանկուլ.
Քսան ամեայ նահատակ.
Կախիւ մահուամբըն կատարի,
Վասն հաւատոյ սուրբ ճշմարտի,
ՌՄԶ թվականի,
Յունիսի ամսոյ մէկին։

Սոյն գերեզմանն անխտիր ուխտատեղի է տեղական բոլոր ազգերի համար։ Յատկապէս ջերմի բուժիչ է համարւում։

Սոյն ամբողջ հատուածը մեզ տուել է գեր. Մխիթար վրդ. Տէր Մկրտչեան, քաղելով իւր ճանապարհորդական անտիպ յուշատետրից։

Digitized by Google

# 103.

## ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՂԱԹԻԱՑԻ

† ՌՄԻԴ=1775

*Մալաթացի նոր նահատակին վրայ,*
*որ Թխաթ մարտիրոս եղաւ.*
*Թխաթցի Սէֆէրօղլուվէն*
*քեարամի.*

Մալաթիու քաղքէն դու էկար Թխաթ,
Երեք օրէկ դուն գործեցիր Յօհաննէս.
Գիշեր ցորեկ հէչ դադարում չունէիր.
Դուն մեռնիլըդ ընտըռեցիր, Յօհաննէս։

Խարաճճուն զօլճիքը բռնեցին տարին,
Անտեղը զուրուցցուցին խէփիս արին.
Քանի մը օր հոն կեցար մեախկաման բերին,
Ճշմարիտը զուրուցեցիր, Յօհաննէս։

Ըսիր այլազգ դրացինըս տուն տարաւ,
Ջօռօվէն Թլփատեց զիս, ասանկ արաւ.
Հաւատուս սէրը զիս ատեղվանքը բերաւ.
Ղատուն մուֆտուն զայս ասացեր, Յօհաննէս։

Զօրս հարիւր չափռաստը զարկին՝ չիմացար.
Ան չարչարանքներուն ի՞նչակ դիմացար.
Վէք խոստումիչ արին տօմրուխը՝ կեցար.
Մէկ անգամ մը դուն չի լացիր, Յօհաննէս։

Digitized by Google

Վէքը պաթմիշ արաւ քու պաշխընէրուդ.
Շատ երանութիւններ տըւին քո տիրուդ.
Քաշէ աս տանջանքը, տիրանաս բարուդ.
Աս ցաւերուն դուն դիմացիր, Յօհաննէս։

Բերին դատաւորին քեզ զուրուցցուցին.
Ըսին թէ դուպայ անինք քու անձին.
Ըսիր ոսկիս ես չեմ փոխեր պղնձին.
Ղատին մուֆտին հօդնեցուցիր, Յօհաննէս։

Տըվին թէլլալներուն, ժուռ բերին շուկան.
Դուն եղար Հայոց հաւատու ճշմարիտ վկան.
Քըրիստոնեայ ազգըն մեզի ուխտ էկան.
Տեսնօղները դուն լացուցիր, Յօհաննէս։

Իշխանք գնացին դատէն առնել հրաման.
Քեզ ալ վերցընելու իղլին չէրէտ ան.
Լուս իջաւ քու վըրատ ըզար սուրբ Յօհան.
Երեք օր դուսը մընացիր, Յօհաննէս։

Գանձով իղլին առին քեզ ալ վերուցին.
Տարին քեզ ալ Խ մանուկ հանեցին.
Եօթն ութ տասը քահանայով թաղեցին.
Այս Դոկիայն Թունթ հանեցիր, Յօհաննէս,

Սուրբ կոյս Աստուածածին եկաւ քու դիմաց,
Դու բանտին մէջ իքէն առիր ճաշակ հաց,
Բերնէ բերան ըզար աշխըրքին իմաց,
Շատ նահատակ նորոգեցիր, Յօհաննէս։

Հազար երկու հարիւր քանը չորսին,
Դուն արժանի եղար մարտիրոսաց դասին.
Լսօղ քրիստոնեայ հայր մեղայ ասին.
Հայոց ազգըն ուրախացուցիր, Յօհաննէս։

Օրբուկ Սէֆէրօղլին քեզ գովեց լացաւ,
Աստուած քեզի արքայութեան դուռը բացաւ.

Երկընուցը լուսը վըրադ սուն կեցաւ.
Շատ հայ ու Թուրք զարմացուցիր, Յօհաննէս։

Այս եշխին մէջը մըտայ,
ՅԱստուծոյ շնորհք գտայ.
Ով որ Հայր մեղայ մը ասէ,
Սուրբ Կարապետ մուրատը տայ։

Սոյն գեղեցիկ աշուղական երգը Յովհաննէս Մալաթիացու մասին ունք միայն Վիեննայի Մխիթարեան Հարց ձեռագրատան Թիւ 442 (=դ) ձեռագիրը, ԺԳ. 4. օրինակը առացել ենք մատենադարանապետ գեր. Հ. Բ. Պիլէզիկճեանից, որ բարեհաճել էր մեր խնդրանքով և իւր իսկ արտագրութեամբ նոյնը ուղարկել մեզ։ Երգիս մէջ սովորական ուղղագրութիւնից տարբեր բազմաթիւ կէտեր կային. լաւագոյն համարեցինք մենք այդ կէտերը անփոփոխ թողնել. ուստի մեր հրատարակածը ներկայացնում է ճիշտ ու ճիշտ ձեռագրի օրինակը՝ բացի Սբ, Ած և յԱյ համառօտագրութիւններից։ Տես և Տաշեան, Ցուցակ, էջ 913 բ։

Digitized by Google

# 104.

## ՍԱՀԱԿ ՄՍԸՐ ԿԱՐՆԵՑԻ

✝ ՌՄԻԷ=1778 յուլիս 23

*Բան առ վսեմախոհ ընթերցօղսն, վասն փոքրագոյն տետրակիս·*

Աստուածային սիրոյն վառեալ գոլով սոյն երանելի Մսըր կոչեցեալ Սահակ մանուկս՝ որ զրպարտանօք մատնեցաւ ի ձեռս անօրինաց, ո՛չ ի յանծանօթ ումանց, այլ ի չար և յանգութ մօրէն իւրմէ։ Տես դու զջերմութիւն սիրոյ սորին՝ որ առ Աստուած. զի գտանին այնպիսի թուլամորթք՝ որք մինչ ի ծանօթաց և ի յազգաց նոցա մատնին ի ձեռս անօրինաց՝ չկարելով տանել արարմանց նոցա, յառաւել բարկութենէ իւրեանց իսկոյն եղանեն ի հաւատոյ և ակամայ ուրանան, որպէս զի գոնէ ուրացութիւնն այն լիցի նախատինք այնց՝ որք մատնեցինն։

Իսկ քաջակորով երանելի մանուկս այս ամենևին ոչ կասեցաւ յիւրոց արիական ընթացից, և ոչ յաղթահարեցաւ ի կրից իմիք, ո՛չ ի բարկութենէ, ո՛չ ի յանձկութենէ փառաց և մեծութեան աշխարհի, և ո՛չ ի խղճութենէ մանկական տիոյն իւրոյ։ Ո՛չ խախտեցաւ ի հաստատուն

4. Օ մանկնս. 7. Օ նախ գրուած զգտանին, յետոյ գ-ի վերի մասը ջնջելով՝ ս, այն է սգտանին փխ. զի գտանին. 8. Օ ի յազգդ. 10. Նոյն յ-երի տեղ Օ ունի ւ. որ. խկուն փխ. իսկոյն. իսկ շեղագրուերը մեզնից են աւելցուած. 15. Օ ի յանցկուէ. 16. Օ ի խղջուէ.

Digitized by Google

հաւատոյն, ո՛չ ցրտացաւ ի ջերմագոյն սիրոյն որ ունէր դէպ առ Քրիստոս, և ո՛չ երկմտեաց ի յաներկբայ յուսոյ արքայութեանն։ Այլ կամաւ և յօժարութեամբ յանձն էառ զտանջանս և զչարչարանս, վասն սիրոյն Քրիստոսի, ետ զանձն ի մահ և ի սպանումն։

Ուրեմն չէ՛ յանդգնութիւն, այլ կարելի է համարձակ ասել սմա նահատակ և մարտիրոս. առ այս ոչ ոք կարէ եպերել զմեզ և զգրութիւնս մեր։ Ըստ որում զի ծոցածին Բանն Հօր՝ էակից և փառակիցն սուրբ Հոգւոյն՝ ճշմարիտ Տէրն մեր Յիսուս Քրիստոս տեսեալ զջերմութիւնն սիրոյ վկային իւրոյ, արիացոյց զնա ի յընթացս նահատակութեան, և յետ կատարմանն զսուրբ մարմին նորա և զշիրիմն փառաւորեաց լուսով յերկնից, զիա՛րդ կարիցէ ոք եպերել զմեզ։ Այնպիսի եպերողն յառաջ կացցէ և փորձիւ միայն զմին մատն իւր մատուսցէ ի հատումն վասն սիրոյն Քրիստոսի, և տեսցէ զցաւն և իմասցի զկսկիծն և զիւր համբերութիւնն. ապա զմեզ անբասիրս արասցէ և մի ընդ վայր հարցէ զաշխատութիւն երկասիրութեանս մերոյ, զի այսպիսի երանելեաց և վասն սիրոյն Քրիստոսի զչարչարանս յանձն առնօղ վկայից ո՛չ միայն պարտիմք նահատակ և մարտիրոս ասել, այլ և պարտիմք ընդունել զայնպիսին իբրև զմին ի յառաջին մարտիրոսաց։ Եւս պարտիմք գովասանութեամբ արձանագրել զպատմութիւն նոցա առ յիշատակ ապագայ ժամանակի և օրինակ բարի հաւատացելոց. որպէս զի իմանալով և լսելով զպատմութիւն նոցա, այնու եռանդ սիրոյ լսողացն վառեսցի Աստուածային սիրով և պինդ կացցեն ի սէրն Քրիստոսի և հաստատուն ի յանբիծ հաւատսն Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյն։

Քանզի յետ անցման քանի մի տարեաց սոյն քաղաքացի Ջինիզցի կոչեցեալ Տէր Մելքոն հանճարաշատ քահանայի Պալի անուն որդին վասն իմիք ինչ ընդունայն

2. օ ի յայնքայ. 4. օ եղ զանցն. 7. օ սմայ. 9. օ Հօգոյն. 17. օ ամբասիրս.

Digitized by Google

պատճառի մատնեցաւ ի ձեռս անօրինաց, որք և վասն գեղեցկութեան և արիական երիտասարդութեանն՝ չար չարչարանօք ստիպեցին զնա ուրանալ. և նա տեսեալ գո-լով զարիական նահատակութիւն սոյն Մարր մանկանս, վասնորոյ և ինքն ևս արիութեամբ հաստատուն մնալով ի հաւատս և ի սէրն Քրիստոսի, ոչ տաճկացաւ. վասնորոյ կախեցին զնա, որոյ վերայ և լոյս էջ յերկնից: Եւ այլ այսպիսի բազումք եղեն:

Վասնորոյ զպատմութիւն սոյնոյ Մարր կոչեցեալ Սա-հակ մանկան երանելի նոր նահատակին Քրիստոսի ի նոյն իրագործութեան տարոջ ի ՌՄԻԷ թուոյն ի տղայական ի նորավարժ ժամանակի իմում անյարմար ստաշարութեամբ գրեալ էի, իսկ յետ անցանելոյ միջոցաց ի ՌՄԼԷ թուոյս՝ ի խնդրոյ և ի հարկադրութենէ սիրելի բարեկամաց և սրտակից եղբարց իմոց, փոյթ յանձին կալեալ ըստ տկար կարի իմումն՝ վերստին ընդլայնմամբ և տասնավանկեայ ոտաչափութեամբ շարադրեցի, և պարբերութեամբ տրո-հեցի, ի գլուխս գլուխս բաժանեալ, յորոց գլխոց նախա-տառիցն յայտ եղանի անունն չնչնոյս:

Ուրեմն աղերսեմ զհանդիպօղսդ ի մաքուր մաղթանօք ձեր յիշել զմեղօք զառածեալ Յօհաննէս նօտարս հանդերձ ծնօղիւք իմովք, և խնդրել ի Քրիստոսէ Աստուծոյ նե-րումն բազում յանցանաց իմոց. որ և յիշօղքդ և յիշե-ցեալքս գտցուք այցելութիւն ի Քրիստոսէ Փրկչէն մերմէ, աստ և ի հանդերձելումն, որում փառք յաւիտեանս յա-ւիտենից. ամէն:

---

Ի սոյն դառնագոյն դարուս դաժանեալ,
՚Ի ի ժամանակիս այսմիկ թըշուառեալ,
Յոր չարութիւնք մեր յոյժ չափազանցեալ,
Սիրելութեան սէրն ի սպառ ցամաքեալ:

2. օ երիտասարթութեւն. 14. օ սիրելւլի. 16. օ վերըստին.

Ցորում չար նախանձ է առաւելեալ,
Ոխ, ատելութիւն առարմատացեալ,
Գութն խընամական բնաւ վերջացեալ,
'Ի անողորմ բարուք սիրտք են քարացեալ։

Ուր բարեպաշտ այր ոք չէ մընացեալ,
Բոլորքն ամբարիշտ ոճրիւ առլըցեալ,
Ուր ճըշմարտութիւնն ի լեզուաց բարձեալ,
Սուտն խաբէական յայնըս տարածեալ։

Համայնք առ միմեանս թըշնամիք եղեալ,
'Ի անհնազանդութեամբ յիրարս ոխացեալ,
Ընկերն առ ընկեր նենգիւ մախացեալ,
Եղբայր ընդ եղբօրն իբր օտար զինեալ։

Աւագունք զըստրուկս են միշտ կեղեքեալ,
'Ի ոչ ծագիւ մատին այնց խընամ տարեալ,
Եւ ստրուկք աւագաց չեն հընազանդեալ,
Եւ ոչ սոսկ բանիւ ըղձոսա յարգեալ։

Նաև արուեստք իսկ են բարդեցեալ,
Կերտիչք և կերտուածք բոլորք են կեղծեալ,
Ի յառս և ի տուրս սուտըն բազմացեալ,
Ժիրն հանճարացեալ, խեղճն հազիւ ապրեալ։

Նեռին գալըստեան ժամանակ հասեալ,
Եւ նեռինք բազումք իսկ յառաջ եկեալ,
Օձական բարուք խորամանկ վարժեալ,
Պատրել և խայթել զռամիկս զորս գըտեալ։

Իսկ վիշտք և վտանգք արդ յոլովացեալ,
Սովք և սրածութիւնք ցասումք առհասեալ,
Ցամենայն կուսէ արհաւիրք պատեալ,
'Ի ահագին շարժմունք յոյժ դողացուցեալ։

Սոյնպէս եղանակք դարուն խանդարեալ,
Եւ փայելչութիւնք աշխարհիս անցեալ,

4. Օ 'ւանողորըմ. 9. Օ միմիանս. | Օ էղեալ. 11. Օ նեքիւ. 12. Օ ստո''ր. 13. Օ կեղեկե''լ. 21. Օ նիռին.

*Ուստի ամենայն գլուխ ի ցաւս հարեալ,*
*Եւ յամենայնն սիրտք տրտմութեամբ հաշեալ։*

*Եղև այս դարում գործ իմըն գործեալ,*
*Զոր տեսօղք և լսօղք սարսեալ դողացեալ,*
*Զի կին մի զորդին իւր մահացուցեալ,*
*Աւասիկ զորպէսն յետագայս պատմեալ։*

*Վասն քաղաքին եւ տեղւոյն՝ յորում զործեցաւ այն, եւ վասն որպիսութեան ծնողաց մանկանն եւ վարուց նորա·*

*Յէրզըրում ի սոյն մայրաքաղաքի,*
*Ի Կանանճամբայ կոչեցեալ թաղի,*
*Կայր անդ այր ոմըն հաւատով իսկ լի,*
*Որ և համայնից վըկայիւր բարի։*

*Ունէր զաւակունս 'ւ օրինօք կըրթէր,*
*Եւ ի պարկեշտ վարս վարժեցուցանէր,*
*Որ միուն անունն Սահակ անուանէր,*
*Ըստ հօրըն իւրոյ և նա բարի էր։*

*Գեղեցիկ տեսլեամբ էր յոյժ ցանկալի,*
*Հասակաւն առոյգ, կարի բաղձալի,*
*Բարուքն հեզ, խոնարհ, մաքուր և արի,*
*Մըսըր մականուն արժան իրաւի։*

*Հայր սորա մեռաւ գործով բարելի,*
*Եւ մընաց Սահակն որբ և խղճալի,*
*Սըգալի սըրտիւ և յոյժ ողբալի,*
*Եւ եղբարքն իւրովք եղև ցաւալի։*

*Իսկ մայրըն սորա է յոյժ եղկելի,*
*Զար և անըզգամ, խենդ և լըրբենի,*

7. օ յուրայմ. 8. օ զայն. 9. օ վարուրուրց, 11. օ ֆկանաջամբայ. 19. օ բախձալի. 22. օ սորայ. 23. օ խղջալի. 26. օ սորայ. 27. օ անըսգամ.

Վարուքըն զագիր, համայնց ատելի,
Եւ օձալեզու, խայթօղ, թունալի։

Զունէր նա բընաւ սէր սուրբ օրինաց,
Եւ ոչ հաւատոց և պատուիրանաց,
Բնակարան եղեալ էր նա չար դիւաց,
Եւ կամակատար էր նոցին կամաց։

Կայենի նման և այլ անգութ էր,
Խըղճող ցաւալեաց բնաւ ոչ ողորմէր,
Զի յոյժ նախանձոտ և նենգամիտ էր,
Ստայր և բիրտ, կոպիտ և կամապաշտ էր։

Էր նա սընափառ, հըպարտ և գոռոզ,
Վավաշոտ վարուք, տըղմաթաւալ խոզ,
Ցայիչէ, ջատի, ոռոսպի և բոզ,
Խրատոց ոչ անսայր, ոչ լըսէր քարոզ։

*Վասն դիմելոյ Սահակ մանկան յԻստամպօլ եւ անդ հիւանդանալոյն եւ առողջանալոյն եւ անտի առ այսր դառնալոյն·*

Օձատիպ կինս այս զՍահակն ոչ սիրէր,
Եւ ոչ բնաւ ընդ նա բանիւ խօսակցէր,
Զարաշունչ խօսիւք ըզսիրտն խոցոտէր,
Եւ ոչ տայր հանգիստ, այլ միշտ աղմըկէր։

Ուստի խեղճ մանուկն կարի վըշտացեալ,
Ի ձեռն մօրն եղև յոյժ դառնացեալ,
Թունալի բանից նորա ոչ ժուժեալ,
Եւ ընդ նմա նա կեալ սիրտն ոչ հանդուրժեալ։

Ապա ինքն յինքեան խորհուրդ մըտանէր,
Զար մօրէն զերծման հընար որոնէր,

2. օ յօձալեզու. 8. օ բընաւ. 12. օ վայվայչոտ. 16. օ հիւանդանալուն. |օ առողջանայլոյն. 17. օ այսրր. 20. օ խօսիւք. 26. օ յինքըն.



Digitized by Google

«Արեւս առնեմ ես, երթամ տար երկիր,
«Գոնէ ի նմանէ զերծանիմ» ասէր։

Որ ելեալ չուեաց ի յօտար յերկիր,
Հեռացեալ յիւրոցն եղեւ տարագիր,
Գընաց Ըստամպօլ կենօք վըշտակիր,
Ներ զարիպութեան եղեւ ցաւակիր։

Եւ ցաւ իւր անդէն նըմա պատահեալ,
Որ չընորհ խէչըքան նա ինքն առձայնեալ,
Որ և այնու իսկ նա հիւանդացեալ,
Եւ անտիրական կենօք դառնացեալ։

Խնամքն Աստուածային առ նա ծաւալեալ,
Իւր հօրեղբայրն անդ Ըստամպօլ հասեալ,
Որ աղէտալի սըրտիւ փութացեալ,
Եւ խնամածութեամբ նըմա պաշտպանեալ։

Շնորհիւն Յիսուսի նա իսկ ողջացեալ,
Ի ցաւուն անտի փոյթ առողջացեալ,
Եւ քանի մ' աւուրց անդէն մընացեալ,
Եւ ապա առ այսր դառնալ յօժարեալ։

Հօրեղբայրն առեալ զնա ի նաւ նըստեալ,
Այսր ի հայրենիս բերել կամեցեալ,
Ցընծալի սըրտիւ ընթացս արձակեալ,
Հանդարտ գընացիւք որ ոչ նեղացեալ։

Իսկ խեղճ մանուկս այս Յօբայ նըմանեալ,
Փորձութիւնքըն միշտ ըզկընի անկեալ,
Զի անդ ի նաւին խոր հիւանդացեալ,
Մինչ զի ի դուռըն մահու մերձեցեալ։

Եւ այնու կերպիւ Տրապիզոն հասեալ,
Զմարմին և զարիւն Փըրկչին ճաշակեալ,
Եւ յետ ինչ աւուրց առ այսըր հասեալ,
Զազգայինս տեսեալ և ուրախացեալ։

12. օ հօրեղբայրըն. 16. օ անտի. 18. օ այսըր. | օ ժօժարեալ. 20. օ այսըր. 21. օ ընդացս. 22. օ հանդարդ. 30. օ զազգազայինս.

*Վասն մեծի կազոյն որ եղեւ ընդմէջ որդոյն եւ մօրն՝ սակս իմիք զօտւոյ. եւ մայրն որոշեցաւ ի չարէն՝ արգունաւ եւ զապիծին, ի թիվիրէ դնելով ի վերայ որդոյն, մատնեաց ի ձեռս նոցա.*

Հընացեալն չարեօք մայրըն դըժնային՝
Ոչ ուրախացաւ ՚նդ գալուստ Սահակին,
Եւ նա տըրտմեցաւ սըրտիւ ցաւագին,
Խորոց հառաչէր յոյժ ողորմագին։

Եւ յետ այնորիկ աւուրըք անցեալ,
Մէջ որդոյն և մօրն աղմուկ·իմն անկեալ,
Լեզուագար մայրըն յոյժ դիւաբախեալ,
Գարշելի կերպիւ զորդին անարգեալ։

Քանզի մանուկս այս փոքր ինչ պարտք ունէր,
Զոր ի Ըստամպօլ այլմէ առեալ էր.
Եւ փոխատուն այն եկեալ պահանջէր,
Խըղճալի մանուկն կարի ամաչէր։

Որ և աղերսիւ առ մայրն աղաչէր,
Եւ օգնութիւն ինչ ի նմանէ խընդրէր.
«Զհօրն իմոյ մնացեալ գօտին տուր, ասէր,
«Տաց իմ փոխատուին՝ առըն բարեսէր»։

Սակայն չար կինն այն զինչքըն վատնեալ էր,
Կերեալ և ըմպեալ և ՚նդ վայր մըսխեալ էր,
Զնոյն գօտին ևըս ՚նդ այլ ազնիւ իրաց,
Իւր չար հոմանեաց բաշխեալ օժտեալ էր։

Եւ որդին ծանեաւ զարարմունք նորին,
Վրէժխընդիր եղեալ մեղադիր նըմին,
Ասելով նըմա բանիւ մեղմագին,
Օրինօք խօսէր ըստ գըրոց բանին։

1. 0 կաքոյն. 2. 0 գօտւոյ. 6. 0 ոչ ուրխաց ընդ. 8. 0 խորհոց. 11. 0 լեզուագայր. 12. 0 չունի կերպիւ. աւելացրինք մեզնից՝ չափի պակասը լրացնելու համար. 13. 0 փոքրը. 14. 0 ստամպօլ. 16. 0 խղճալի. | 0 ամաչէրչէր. 22. 0 ընդ. 23. 0 գօտին. | 0 ընդ. 26. 0 նմինին. 28. 0 խօսէր. | 0 գրւոյց.

Digitized by Google

«Դու ըզհոմանիսդ, ասէ, պատուեցեր,
«Բան ըզմեզ աւել զնոսա սիրեցեր,
«Զմեր հօրն ամէն զինչքն վասն այնց մըսխեցեր,
«Զիս և եղբարքն իմ զուրկ դատարկ թողեր։

«Ըզմեզ որբացեալքս թողեր խըղճալի,
«Կարօտ ամենի, եղեալ յոյժ լալի,
«Փոքրիկ եղբարքն իմ՝ որք են ցաւալի,
«Մերկ, նօթի մնացեալ են ողորմելի։

«Հայր իմ աշխատեալ կենօք վըշտագին,
«Ցայգ ցերեկ գործէր քըրտամըբք դառնագին.
«Մինթէ վասըն քոյ, հոմանեաց քոյին
«Սակաւիկ ապրանքն թողեալ ըզնոսին,

«Որ դու զամենայն չուտով ցըրուեցեր,
«Ունայն և ընդ վայր ի զուր մըսխեցեր,
«Ուտելով զեխեալ ոչընչացուցեր,
«Զքեզ ընդ հոմանեացդ ուրախացուցեր»։

Ուստի չար կինն այն զգարշ բերանն բացեալ,
Զըզուելի բանիւք ըզնա անարգեալ,
Որպէս զմոլի շուն հաջիւք կատաղեալ,
Ի վերայ անմեղ որդւոյն արձակեալ։

Բազում ժամս բոռայր, գոչէր, ո՛չ լըռէր,
Եւ անլըսելի հայհոյանս խօսէր,
Խիստ բարուրանօք զորդին զըրպարտէր,
Եւ գո՛զ անառակ զնա առհամբաւէր։

Առ որս դըրացիքն եղեն ժողովեալ,
Եւ Հայք և Տաճիկք ամբոխիւ կուտեալ,
Մեղադրեալ ըզնա և յոյժ նախատեալ.
Ո՛չ անսաց նոցա լիրբ կինըն մոլեալ։

5. o զմեզ. 8. o նոտի. 10. o ցայք ցերեք. 11. o քոյ? 13. o զամն. 17. o բացել. 19. o հաչիւք. 22. o հայհուանս խոսէր. 26. o ամբողիւ. 28. o անսաց.

Digitized by Google

*Եմուտ ի նա դեւն և դըրդեաց ըզնա,*
*Որպէս և երբեմն ի մատնիչն Յուդայ,*
*Ի չար խորհուրդըն փութացուց ըզնա,*
*Եւ զկերպ չարութեանն իսկ դաս ետ նըմա։*

*Արզուհալ գրեցոյց և ետ փաշային,*
*Զարաչար բարուրս բարդեց ի նըմին,*
*Յոյժ մեծ իֆթիրայս և անասելիք՝*
*Որ ոչ էր լըսեալ մարդկան լըսելիք։*

*Թէ «Կըռուարար է և չար, հարամի,*
*«Բոզարած, մըսխօղ իմըս դըրամի,*
*«Որովք և հասուց զսիրտ իմ վէրէմի.*
*«Ա՛րդ՝ դա՛տ արա ինձ ըստ քոյդ քէրէմի։*

*«Հովարտա, լըպիրշ, գող և ըսպանօղ,*
*«Սըրով հարկանօղ և արեան հեղօղ,*
*«Շամբուշ, վավաշոտ, ծուռ է և խային,*
*«Մինչ զի այս գիշերս եկն յիմ անկողին։*

*«Զօր յոյժ զըզուեցայ չարութեանց նորին,*
*«Զկարացի ժուժել արարմանց նորին,*
*«Զըգտի յուստեքէ հընար մի նըմին,*
*«Այլ քեզ յայտնեցի սըրտիւ լալագին։*

*«Արդ պաղատի՜մ քեզ, մեծազօր փաշայ,*
*«Զի բարակ չուանով կախեսցես ըզնա.*
*«Քեզ հալա՜լ լիցի արիւնըն նորայ.*
*«Գոնէ սակաւ մի սիրտն իմ զովանայ»։*

*Զապիթ քաղաքիս Հաճի փաշան էր,*
*Թէֆթիշ քաղաքաց նա գընացեալ էր,*
*Ի տեղի նորա ոմն միւսէլիմ էր,*
*Որ Ցայատ Օղլի Խալիլ փաշան էր։*

2. օ յութայ. 5. օ յետ. 10. օ դրամիմի. 15. օ վայվաշոտ. 17. օ զըզ-ուեցեա. 18. օ չըկարացի. 22. օ չըվանով. 26. օ Թէֆթիչ.

Digitized by Google

*Վասն առնելոյ փաշային զարզուհալն, ընթեռնու եւ զարհուրի ընդ այն գործ եւ փութով թուանկչի յղեալ կալան զանմեղ մանուկն·*

Առեալ ընթերցաւ փաշայն զգիր արզին,
Զարհուրեալ ընդ այն մեծ էֆտիրէին,
Ափշեալ զարմացաւ կարի սոսկագին,
Քըննութիւն եմուտ ընդ խորհըրդակցին։

Կէաք խորհըրդակցաց մեծի փաշային՝
Ասեն թէ «Ջուր է բանք ֆայիշէին.
«Չէ ոք լըւեալ զայդ ի յաւիտենին՝
«Թէ որդին ծուռ մտօք մերձի իւր ծնօղին»։

Բայց կէաք զփաշային միտըն հաճելով
Զազգ քըրիստոնէիցս կոյր անուանելով՝
Ասեն. «Քէֆիրք են, շատ վատ գործս ունին,
«Զի մինչ առ ծընօղսն խային նայելով»։

Իսկ կինն բողոքէր ի մէջ սարային,
«Բերէք, ասելով, զիմ ըզչար որդին».
Եւ փաշայն բարկացեալ ըրտիւ ցաւգին,
Իսկոյն յըղեաց մարդ վասըն Սահակին։

Իսկ մանուկըն կայր ի տանն միամիտ,
Զգիտէր զինչ գործեաց մայրըն նենգամիտ,
Որպէս և երբեմն Աբէլ պարզամիտ՝
Սպանաւ եղբօրէն իւրմէ գողամիտ։

Ապա թուանկչիք զտունըն պատեցին,
Բայց ըզմանուկըն ոչ ճանաչեցին.
Շտապաւ աստ և անդ շըրջեալ խընդրէին,
Ի տունս դըրացեաց մըտեալ յուզեցին։

1. օ ընդեռնու. 2. օ զարհուրհի. 10. օ զայտ. 11. օ մըտօք. 13. օ զազք. 17. օ բերեք. 23. օ ըսպանաւ. 26. օ ըշտապաւ.

Խըղճալի մանուկն երբոր զայն լըւաւ,
Իսկօյն բեկաւ սիրտն ու ուժն վերացաւ,
Դողալով փախեաւ և թագեաւ,
Սասանման եղեալ շունչն ըսպառեցաւ։

Թուանկչիք գնացեալ եղբօրըն հարցին,
Եւ նա մատամբըն եցոյց ըզտեղին.
Կալեալ ըզնա փոյթ և պինտ կապեցին,
Եւ կըշտամբելով յանդիմանեցին։

Խիստ նախատելով և անարգեցին,
Թըքելով երեսն և զայս ասէին.
«Ա՜յ խմանըզ դու, մէղլուն, չըրափուֆ.
«Այդ ի՞նչ գործել ես քոյին ծընօղին»։

Ո՜հ, այս վըտանգիս որ մանուկս դիպաւ,
Յանկարծ զըրպարտեալ ի զուր մատնեցաւ,
Ո՛չ ի յօտարաց և յանծանօթից,
Այլ ի չար մօրէն ի մահ վարեցաւ։

Վասն տանելոյ զմանուկն եւ ցուցնելոյ յատեան փաշային, հարցանելոյ փաշային զորպէսն բանէն եւ պատասխանելոյ մանկանն զստոյգն, բողոքելոյ մօրն, եւ փաշային հրամայելոյ զմանուկն ի բանդ արկանել·

Նոյն ժամայն ըզնա առին և գնացին,
Հանդէպ զապիթին ներկայացուցին,
Երբ փաշայն տեսեալ զհասակ Սահակին,
Ափսոսեաց ըզնա սըրտիւ ցաւագին։

Խօսիլ ըսկըսաւ փաշայն և ասէ.
«Զի՞նչ է բանքըս այս՝ զոր քո մայրդ ասէ.

1. օ խղճալի. 4. օ ըսպառացաւ. 12. օ այտ. 13. օ մանկունս.
17. օ յայտեն.

Digitized by Google

«Զի զայս գործեալըդ ծանըր վընաս է,
«Որ և համայնից անձըն իսկ սարսէ»։

Ծնօրհն աստուածային արագ հասանէ,
Ըզխըղճուկ մանուկն զօրացուցանէ,
Հանճարեղ բանիւ և ճարտար խօսիւք՝
Հանդէպ փաշային պատասխան առնէ։

Նուաղեալ ձայնիւ խորոց հառաչէ,
Եւ խոնարհ բանիւ նըմա զայս ասէ.
«Էֆէնտիմ, բանդ այդ բընաւին զուր է,
«Ի վերայ խըղճուս չէռեալ բարուրէ։

«Ամենատեսին Աստուծոյ յայտ է,
«Որ գաղտնիք մարդկան նըմա բայց յայտ է,
«Զար մայրդ իմ այժմիկ որ զիս զըրպարտէ,
«Ի յայնց ասութեանց ծառայդ անպարտ է։

«Զի ի միջի մերում կռիւ ինչ յարեաւ,
«Սաստկացաւ մեծ ժամս և ոչ վերջացաւ,
«Մայրդ իմ ի սըրտէն չարեաք լըլկեցաւ,
«Եւ դիմեալ առ քեզ յինէն գանգատեցաւ»։

Իսկ ֆայիչէ մայրն, չար և լըրբենին,
Փութացեալ եմուտ ի մէջ ատենին,
Աղաղակ բարձեալ ասէ փաշային.
«Ըսպանեմ զորդիդ իմ մահուամբ սաստկին։

«Արդ՝ թէ չըսպանես այս չար որդին իմ,
«Եւ չըկատարես ըզխընդրելիս իմ,
«Ապա դնամ առ մեծ փաշայն բողոքեմ,
«Մեծամեծ արզիւ ըզքէն գանկըտիմ»։

Փաշայն նըրբապէս մըտախոհ լինէր,
Եւ ի մեծ վարանս զինքըն արկանէր,

3. Օ արագ. 4. Օ զխղճուկ. 6. Օ որ հանդէպ. | Օ առնէր. 9. Օ բանըդ. 10. Օ և բարուրէ. 11. Օ յԱյ. 14. Օ ի յայնձ. | Օ ամպարտէ. 16. Օ ժամըս. 19. Օ վայիչէ. 23. Օ որդիմ. 24. Օ ըսխնդրելիս.

Ցանմեղ տղայն նայէր՝ աղէքն գալարէր,
Իսկ արձակել զնա բընաւ ոչ իշխէր։

«Թէ սպանեմ, ասէ, սիրտ իմ մորմոքի,
«Եւ թէ չըսպանեմ, կլինդ այդ բորբոքի.
«Գուցէ մեծ փաշային արգիւ բողոքի,
«Եւ զիս հաստուցէ յոյժ մեծ վըտանգի»։

Ցասմամբ հրամայեաց զկինն արտաքս վարել,
Եւ զանմեղ մանուկն ի բանդ արկանել,
Ծանօթըր շըղթայիւք ըզնա շըղթայել,
Զձեռս և զոտս նորա ի կոճեղս պընդել։

Վասն մտանելոյ որդւոյ փաշային առ նա ի բանտն
եւ հրաւիրեալ զնա յօրէնս իւրեանց.

Նոյն ժամայն մըտեալ որդի փաշային,
Առ նա ի բանտին խօսէր մեղմագին.
«Եթէ դարձցիս դու յօրէնս մեր կրօնին,
«Զքեզ եղբայր առնեմ յատուկ իմ անձին։

«Մեծամեծ փառաց զքեզ հասուցանեմ,
«Ոսկով արծաթով զքեզ լըցուցանեմ,
«Շատ փարթամութեամբ ճոխացուցանեմ,
«Ներ բազմաց զանունդ բարձրացուցանեմ»։

Նա խոնարհ բանիւ զայս պատասխանեալ.
«Ձեր ունայն փառացն չեմ ես ցանկացեալ,
«Զհաւատն իմ անգին գանձ եմ համարեալ,
«Եւ անանց փառաց հասնիլ յուսացեալ։

«Փառք և մեծութիւն մարդկան ունայն է,
«Անոտի և ոչինչ և ընդունայն է.

3. o սպանանեմ. 6. o փտան՚քի. 7. o արտաք". 9. o շըխթայիւք. o շըխթայել. 10. o պընտել. 15. o կրօտին. 16. o եղպայր. | o յայտուկ. 22. o յունայն. 24. o հասանիլ.

Digitized by Google

«Անցաւոր և սուտ երազոյ պէս է,
«Իբր ըստուեր ամպոյ փութով անցանէ։
«Իսկ դըրախտին փառքն որ յոյժ անճառ է,
«Հըրճուանքն անըսպառ և կեանքն զըւարթ է.
«Թէ պահեմ զհաւատս՝ որ սուրբ ամբիծ է,
«Յուսամ յայն մտանել՝ զոր խոստացեալ է»։

Ուստի զարմացաւ որդի՝ փաշային
Ընդ աներկիւղ տալ ըզպատասխանին.
«Որքան վառեալ է ի սէր իւր դինին,
«Մինչ անձն ի մահ տայ յաղագըս նորին»։

Եւ ի դուրս ելեալ յոյժ ափսոսալով,
Ըզհասակ մանկանն խիստ կըսկըծալով,
Կերպ կերպ այպանօք մօրն անարգելով,
«Քէֆիր, մըլթանի» նըմա ասելով։

Իսկ մանուկըն կայր ի մէջ տան բանտին,
Աղօթէր առ Տէր սըրտիւ լալագին,
Հաւատով, յուսով հայցէր 'ւ աղերսէր,
Զօրացուցանել զինքն ի նոյն մարտին։

Զերջանիկ սուրբսըն դոչէր յօգնութիւն,
Զմայրն ողորմութեան և զսուրբ Ամլորդին,
Ըզսուրբ Նախավկայն հանդերձ իւր գընտին,
Բազմերախտ հայրն մեր ըզսուրբ լուսատուն։

*Վասն հրամայելոյ փաշային որ հանեալ զնա ի բանդէն եւ կրկին կացուցին յատեան եւ հրաւիրեցին յօրէնս իւրեանց· եւ նա չառեալ յանձն, ապա հրամայեաց տանել առ դատին եւ վճիռ հատանել մահուն·*

Իսկ փաշայն արար հրաման քաղցրագին,
Հանեալ ի բանդէն 'ւ ի յատեան բերին.
Փաշայն և աղայքն սիրով դոչեցին,
Ի դինըս իւրեանց զնա հրաւիրեցին։

5. օ ամբից. 8. օ աներկուղ. 21. օ զսուրբ. 22. օ լուսատունն. 24. օ յատեն. 28. օ քաղցրայգին. 29. օ իյատեան.

Digitized by Google

Զի մանուկըն էր կարի ցանկալի,
Տեսլեամբ գեղեցիկ, համայնից ըղձալի,
Զի նորաբողբոջ էր և նազելի,
Քսան և մէկ ամաց կամ այլ աւելի։

Ասեն «Թէ ի մեր յօրէնըս դարձցիս,
«Յայդ չար մահուանէդ դու իսկ զերծանիս.
«Բազմակերպ փառաց փութով հասանիս,
«Եւ սեղանակից ի մէջ մեր լինիս»։

Առ որս ճէվապ ետ մանուկըն խոհեմ.
Ասաց «Ձեր խոստման ես ցանկացող չեմ.
«Յայսըմ մահուանէս ես երկընչող չեմ.
«Յիմ սուրբ հաւատոյս ես ելանող չեմ։

«Մահն ի վերայ մեր անդարձ վըճիռ է.
«Կամայ ակամայ օր մի հասանէ.
«Համարիմ այսօր թէ յետին օրս է.
«Սակս դենիս մեռանիլ սիրտն իմ յօժար է»։

Փաշայն և աղայքն ափշեալ մընային,
Ընդ բանսըն նորա յոյժ հիանային,
Հասակն հայէին և ափսոսային,
Եւ չըլ տաճկանալն խիստ բարկանային։

Իսկ մայրն մինչ ետես թէ բանն երկարեաց,
Գուցէ բաց թողցեն մըտօքըն կարծեաց.
Հանդէպ փաշային կըրկին բողոքեաց,
Թէ «է՞ր չես հաներ ըզդա ի կենաց»։

Երբ ետես փաշայն՝ թէ ոչ դոյ հընար
Ի բաց թողուլ զնա և փըրկելոյ ճար,
Քանզի կինն էր լիրբ 'ւ անըզգամ և չար,
«Մի գուցէ, ասէ, հասուցէ ինձ չար»։

2. o համայնցալի. 3. o նորաբողբոճ. 6. o յայտ. 8. o սեղանայկից.
14. o կամակ այկամա. I6. o դ''նիս. 23. o բողոքեալ. 24. o ի կեննաց.
27. o 'ւանըսգամ.

Digitized by Google

Յայնժամ հրամայեաց տանել առ ղատին,
Հատանել վըճիռ մահուանըն նորին,
Եւ զինուորքն առեալ ըզնա և տարին,
Կացուցին ըզնա ի դատարանին։

Լիրբ մայրն հըրճուելով անդէն ժամանեալ,
Զանմեղ որդին իւր անդ ևս զըրպարտեալ,
Յատեան փաշային զոր ինչ էր խօսեալ,
Ըզնոյնան առաջի ղատուն երկրորդեալ։

Ղատին երբ լուեալ՝ յանձըն սոսկացեալ,
Լիրբ կընոջն որոյն իսկոյն ստացեալ,
Ըստ իւրեանց դինին զիլամըն տըւեալ,
Զանմեղ մանուկն այն կախել վըճըռեալ։

Վասն տանելոյ զնա ի կախել եւ նա ուրախութեամբ եւ աղօթելով ընթանայր՝ ի ծանօթից եւ ի սիրելեաց հալալութիւն խնդրելով։

Սըտայօդ բանիւ մինչ վըճիռ հատին,
Թուանկչիք փուլթով ի վերայ հասին,
Կալեալ կապեցին 'ւ առեալ տանէին,
Ի կախել ըզնա ի խեղդարանին։

Եւ ամբոխք բազում ըզկնի երթային,
Հայք և այլազգիք ի տեսն փութային,
Որք զայն լըսէին ափշեալ լինէին,
Ըզտղայն ափսոսալով մօրն վայ տային։

Իսկ նա զուարթ դիմօք խընդութեամբ գընայր,
Իբր ի հարսանիս ուրախ ընթանայր,
Ծանօթից 'ւ եղբարց սիրով բարև տայր,
«Հալալ արէք ինձ, ասէ, իմ եղբարք»։

5. o մայրըն. 8. o զնոյնսն յառաջի. 16. o սըստայօթ. 18. o և. 19. o կախել (չունի ի). 20. o ամբողք. 21. o ի տեսըն. 23. o զտղայն.

Digitized by Google

Նա և Շնորհալւոյն աղօթքն ըսկըսէր,
Քըսան և չորս տունն կատարեալ ասէր,
Եւ այլ բազում բանս աղօթից խօսէր,
Աղերսիւ զինքըն Աստուծոյ յանձնէր։

«Տէր իմ 'ւ Աստուած իմ, քեզ եմ յուսացեալ,
«Եւ ի քոյ խընամքդ եմ ապաւինեալ.
«Մի կորուսաներ զծառայս վըշտացեալ,
«Որ մաքուր արեամբըդ դու ես գընեալ։

«Գոհանամ ըզքէն, գըթած, մարդասէր,
«Որ այս աւուրս զիս արժան արարեր՝
«Վասըն քոյ անուանդ զչարչարանս կըրել,
«Եւ հեղլով զարիւնս՝ զյանցանս իմ ջընջել։

«Ուստի աղերսիւ ի քէն իսկ խընդրեմ,
«Զօրացո՛ զծառայս որ արդ կապեալս եմ,
«Զի համբերեցից այսըմ տանջանաց,
«Եւ մեռանելոյս որ հանդերձեալս եմ։

«Ընկալ զպաղէտս իմ 'ւ արագ ողորմեա՛,
«Զբազում և անթիւ զյանցանս իմ ներեա՛,
«Ցանգերծ տանջանաց զծառայս ազատեա՛,
«'Ի անճառ խընդութեանդ արժանի արա՛»։

Զսուրբ Աստուածածինն յիշեալ աղաչէր,
Եւ սուրբն Յօհաննէս աղերսիւ գոչէր,
Զսուրբն Ստեփանոս և սուրբ Լուսաւորչն,
Մարտակից ինքեան լինիլ իսկ խընդրէր։

Ըզսուրբ առաքեալք և ըզ մարգարէս,
Ըզսուրբ հայրապետսն և զսուրբ ճըգնաւորս,
Զմարտիրոսս, զկուսանս և սուրբ նահատակս,
Հասանիլ յօգնութիւն ինքեան պաղատէր։

3. Օ խօսէր. 4. Օ չունի աստուծոյ. անհլագրին իմաստից գուշակելով եւ չափի համար. 5. Օ և. 10. Օ աւուրըս. 14. Օ զօրացոյ. 15. Օ յայսըմ տանճանաց. 17. Օ ողորմեայ. 18. Օ զյանցանըս իմ ներեայ. 19. Օ տանճանաց. | Օ ազատեայ. 21. Օ ըզսբ. 23. Օ ըզսբ (երկու անգամն էլ). 27. Օ զկուսանսս.

«Երկնայի՜ն սուրբ զօրք՝ որք բնութեամբ վեհ էք,
«Զօրութեամբ ձերով Դուք ինձ օգնեցէք.
«Ի մարտի իմում Դուք ինձ օգնեցէք,
«Քաջալերօղք ինձ այսօր փութացէք»։

Եւ մինչ անցանէր 'նդ դուռն եկեղեցոյն,
Եկիր եպագ նմա անդ խոնարհագոյն.
«Սուրբ եկեղեցի, լեր ինձ օգնական,
«Որ ծնար զիս, սաէ, շնորհօք սուրբ Հոգւոյն»։

Այսպիսի հոգելի բանս խօսելով,
Երթայր կրապանումն ուրախանալով,
Ամբոխքըն ըզկնի որք զայն լըսէին,
Հիացեալք առ այն յոյժ զարմանալով։

Վասն հասանելոյ նմա ի տեղի կախարանին եւ մայրն տըւեալ զգլին պարանին եւ մանուկն հալալութիւն խնդրելով ի մօրէն եւ մայրն ոչ լուաւ նմա. եւ յետ այնր կախեալ խեղդամահ արարին զանմեղ մանուկն. եւ մայրն գնացեալ ջուր էարբ ասելով թէ «վա՜շ, զի սիրտն իմ զովացաւ».

Եւ երբ մայրըն եւս ընդ նըմա շըրջէր,
Վա՜շ վա՜շ ասելով զսիրտն ուրախ առնէր,
«Իբր թէ զվրէժս իմ առի նմանէ»,
Վասնորոյ խընդայր, պարէր, կաքաւէր։

Եւ իբրեւ հասին հանդէպ բաց խանին,
Փըլչելոյ խանութ այն ղասապխանին,
Անդութ մայրըն ետ ըզգլին պարանին,
Կախեցուցանել զիւր անմեղ որդին։

Թւանկչիք 'ւ այլազգիք աղէխարշ եղեն,
Վասըն զուր մահուն մանկանն աւաղեն.

4. օ թութացէք. 5. օ ընդ. 9. օ բանրս. 10. օ յերթայր. | օ յուրախանալով. 11. օ ամբոխքըն. | օ լըսէին. 13. օ նմայ. 16. օ այրն. 27. օ ալասկիք.

Digitized by Google

Ասեն ցնա. «Բա՛ն ինչ ասա մեր կրօնէն,
«Ըզքեզ ազատեմք յա՛յդ դառն մահուանէն»։

Իսկ նա իբրև զվէմն կայր անշարժելի,
Ի սուրբ հաւատոյն յոյժ անշեղելի,
Քանզի վառեալ էր սիրովն Յիսուսի,
Չվախէր մահուանէն այն անցանելի։

Այլ սրտի մտօք առ Տէր աղօթէր,
Նշանաւ սուրբ խաչին զերեսըն կընքէր,
Զսուրբ Աստուածածինն բարձրագոյն գոչէր,
Եւ զինքն Աստուծոյ, սրբոց իսկ յանձնէր։

Ապա շուրջ նայէր զչար մայրն որոնէր,
Զի վերջին զըրոյցն նըմա առնիցէր.
Իբրև ետես զնա ի մէջ ամբոխին,
Ողբալի դիմօք նըմա զայս ասէր.

Թէ «Հալա՛լ արա դու ինձ, ո՛վ մայր իմ,
«Զի շատ աշխատանք ունիս վերայ իմ.
«Ձեռըդ համ՛ ինձ որ ես համբուրեմ,
«Հարաթովըդ քոյ մի մեռանիցեմ։

«Զի ինն ամիս զիս յարգանդիդ կրեցեր,
«Եւ ցաւօք ծընար, զըրկովըդ բարձեր,
«Կաթամբ դիեցուցեր, գթով պահեցեր,
«Մեծ աշխատանօք յայս չափս հասուցեր։

«Այսօր բարկութեամբ դիւին լըսեցեր,
«՚Ի այսքան էմէկըդ դու ընդ վայր հարեր.
«Զըրպարտելով զիս ի մահ մատնեցեր,
«Դըժուարաւ գըտեալս դիւրաւ կորուսեր»։

Իսկ անիրաւ մայրն բնաւ ոչ գըթացաւ,
Ապառաժ սիրտըն իսպառ քարացաւ,
Խըղճալի որդւոյն ձայնին ոչ լըւաւ,
՚Ի ամենևին ի նա ոչ նայեցաւ։

17. օ հասոյ. 30. օ և.

Երբ ետես մանուկն թէ չետ պատասխան
Անգութ ծընօղըն գարշն և յոյժ դաժան,
Դարձեալ ասէ ցնա սըրտիւ ցաւական.
«Ո՛վ դու եղկելի, լե՛ր ինձ պարտական։

«Այսօր այս մահուամբս յաստեացս՝ ելանեմ,
«Եւ Փըրկչին յանճառ կեանսըն մըտանեմ.
«Ապա դու մընաս կենօք յերերման,
«Խընդրես զիս ՚ւ ասես թէ Երբ գըտանեմ»։

Իբրև կատարեաց խօսըն ցաւագին,
Ապա Թըւանկչիք ի նա ձեռն արկին,
Ըզբարակ պարանն ի վիզըն արկին,
Զանմեղըն ի զուր խեղդամահ արին։

Յայնժամ չար մայրըն յոյժ ուրախացեալ,
Պարեալ խընդութեամբ յընթացս արձակեալ,
Գնացեալ յաղբիւրէն թասով ջուր խըմեալ,
«Վա՜շ զի զովացաւ սիրտ իմ» ասացեալ։

Մերձ եղեալ տաճիկք երբոր զայն լուեալ,
Քարամբք քարկոծել ըզնա կամեցեալ,
Իսկ չարն այն իսկոյն ի փախուստ առեալ,
Ուր դիմեալն նորա ոչ ոք գիտացեալ։

Վասն ամբոխին՝ որք զնա տեսեալ աղէկիզեալ մորմոքէին. եւ կանայք ոմանք եկեալ կանգնեալ ի դէմն՝ աւաղէին, եւ կերպ կերպ լանէթս տային չար մօրն.

Եւ հոյլք ժողովոց՝ որք տեսանէին,
Մեծամեծք և փոքունք յոյժ ափսոսային,
Իշխանք և ռամիկք ի յողբ չարժէին,
Վա՜խ վա՜խ ասելով մօրն անիծէին։

4. Օ այսօր այօր այս. II. Ո բարանն. I8. Օ խաւն փխ. իսկոյն. I9. Օ յուր. 20. Օ ամբողին.

Digitized by Google

Եւ կանայք բազումք առ նա փութային,
Ի դէմըն կանգնեալ հառաչմամբ լային,
Զանազան կերպիւ ողբս յօրինէին,
Իբրև ազգային ըզնա սըգային։

«Ա՜յ ազնիւ մանուկ, դու դեռաբուսիկ,
«Նազիկ և սիրուն և յոյժ գեղեցիկ,
«Ո՞րպէս քո մայրն ըզքեզ զուր մահացոյց,
«Այ դու դառնագոյն տանջանօք սատակ։

«Վա՜յ հազար աւա՜ղ ազնիւ հասակիդ,
«Բաղձալի տեսոյդ և լոյս երեսիդ,
«Զիա՞րդ անգութ մայրդ զքեզ ընդ վայր կորոյս,
«Անարգ սպանելով ի կախարանին։

«Ո՞րպէս քարացեալ էր սիրտըն նորին,
«Ո՞րքան անգութ էր դարշ աղիք նորին.
«Կուրանալոյ էր տեսարանք նորին,
«Որ ի հանդէպ իւր կախել ետ զորդին։»

Դառնան և խօսին դէպ առ կինըն այն,
Կերպ կերպ լանէթներ նըմա իսկ կարդան.
«Ո՜վ անգութ ծընող դու թըշուառական,
«Զատի և վատթար դու դաժանական։

«Ո՛վ դու անողորմ ծընող դարշելի,
«Դիւահար և խենդ, յիմար և մոլի,
«Այսօր նախատինք եղեր աշխարհի,
«Դու Մըլթանոյ դուստր զալըմ ֆաիշէ։

«Կին դու զըլրասաց, բերանըդ փակի,
«Լեզուդ պապանձեալ և կարկամեսցի.
«Ո՛րպէս զորդիդ քո զուր մահացուցեր,
«Քեարէմսըզ ղալը զալըմ ֆաիշէ։

4. օ ասգային. 6. օ սիրոյն. 8. օ տանճն"ք. 11. օ ըզը փխ. զքեզ ընդ. 26. օ լեզուտ. | օ պապանծե"լ.



Digitized by Google

«Կի՛ն դու, դէշ խոցով պատժիս և մաշիս,
«Բարակացաւերով հալիս և հաշիս,
«Վիրացդ հոտերոյն հիւծիս և հաշիս.
«Կայէն որդեսպան, զալըմ փախչէ։

«Կի՛ն դու, շշուկ ցաւօք ըզքեզ տիրեսցեն,
«Եւ զարշ անձամբ քով սատանիկ պատեսցեն,
«Խըստագոյն վայիւք բառաչեցուսցեն.
«Ա՛յ քէֆիր միլիոն զալըմ փայիշէ։

«Կի՛ն դու, պատառօղ գազան քեզ դիպի,
«Առիւծ և վարազ, արջ քեզ հանդիպի,
«Գէշ գէշ պատառեն ըզքեզ և գըզեն.
«Է՛ եզըրոյ զաւակ զալըմ փայիշէ։

«Որպիսի՜ լանէթըս քեզ չարադրեմք.
«Ո՞ր անարգանօք ըզքեզ անարգեմք,
«Ի՞նչ նախատանօք ըզքեզ նախատեմք.
«Ա՛յ դու խիմնսըզ զալըմ փայիշէ։

«Ո՞չ արդեօք դու ծնար զսա և սընուցեր,
«Աշխատանս կրելով յայս չափս հասուցեր.
«Ապա ո՞րպէս սիրտդ ոչ գալարեցաւ,
«Որ պախարակեալ զուր մահացուցեր։

«Անբան անասունքն զաւակս ծընանին,
«Գըթան ի նոսա և սընուցանեն,
«Ի վնասակարաց պահեն պահպանեն.
«Դու քան ըզնոսա անգութ փայիշէ։

«Թըռչունք օդային՝ որք ըզձագս հանեն,
«Փափուկ բոյն շինեալ՝ անդ հանգուցանեն,
«Զթըռչիլ ուսցընեն, թեւօք վեր հանեն.
«Դու քան ըզնոսա անբան փայիշէ։

1. օ մայչիս. 3. օ վիրացըդ. 4. օ կային. 6. օ պատեսցին. 7. օ բառաչեսցուցեր. 12. օ չփայիչէ. 14. օ անարբանօք. 17. օ ծընար. 20. օ բախարկեալ. 25. օ յօդային. 27. օ ուսցընեն.

«Շունք, վայրի գազանք՝ որք են պատառօղ,
«Բայց կորեանց խուրեանց այնք եւս են սխրօղ.
«Ինքեանք նօթի մնան, զնոսա կերակրեն.
«Դու գէշ քան ըզշուն զալըմ՝ փայիչէ։

«Սողունք թունաւորք, լողակք ծովականք,
«Սոքա համայնքըն ըզձագս ըստանան,
«Պահեն և խնամեն գըթով ծնօղական.
«Դու քան ըզնոսա վատթար փայիչէ»։

Այսպիսի 'ւ աւելի քան զայս ասէին,
Զչար կինն անիծիւք վատաբանէին,
Ցաւալի ողբով մանուկըն լային,
Զլըսօղսն ամենայն լացուցանէին։

Զի տղայն կախանին պայծառացեալ էր,
Ճերմակ մարմինըն ձիւնափայլեալ էր.
Զի զլուխ հաւատ իւր որ պինդ պահեալ էր,
'Ի ինքն հոգւով մարմնով ի լոյս դարձեալ էր։

*Վասն իջանելոյ լուսոյն ի վերայ նորա ի գիշերին այնմիկ, զի քրիստոնեայք եւ այլազգիք տեսեալ վկայեցին.*

Այլ արքայն Քրիստոս՝ ստեղծօղն համայնից,
Զվկայն իւր արար լուսալից,
Զ'ի գիշերին այն լոյս մեծ էջ յերկնից՝
Յայտնի 'ւ ակներև ի ցոյց ամենից։

Եւ բազում անձինք՝ որք անդ պատահեալ,
Քրիստոնեայք, այլ և տաճիկք յիմարեալ,
Սքանչելի հրաշ լուսոյն որ տեսեալ,
Ի վաղիւն ելեալ ամենից պատմեալ։

3. օ նօտի մընայն. 7. օ ծընօղական. 15. օ պինտ. 17. օ լուսոյն 19. օ վըկայեցին. 26. օ ըզքանչելի.

Digitized by Google

Քրիստոնէից ազգ կարի բերկրեցան,
Եւ Քրիստոսէ Փրկչէն գոհացան,
Ճշմարիտ հաւատոյս յաւէտ ամրացան,
Ըսթափեալ ի սգոյ և ուրախացան։

Ազգ տաճկաց ևըս երբ որ զայն լուեալ,
«Անմեղ լինիլըն, ասեն, արդ յայտնեալ».
Ուստի թուրք կանայք ի նախանձ շարժեալ,
Եւ ըզչար կինն այն սպանել կամեցեալ։

Ասեն. «Դա մեր մարցս զանուն աւերեաց,
«Եւ չար յիշատակ յաշխարհի տընկեաց.
«Լըրբենի կանանց ճանապարհ եբաց,
«Զուր ըսպանել տալ ըզզաւակս իւրեանց։

«Զի գործս այս մեր մարցս նախատինք եղև,
«Ի մէջ աշխարհի ասութիւն եղև,
«Որ միշտ այպանեն ըզմեզ և ասեն,
«Թէ մարց սէրն և գութն այժմ նախանձ եղև։

«Այսօր ըմբըռնեալ ըզնա ըսպանցուք,
«Նէլ մոմեր վառեալ ըզնա այրեսցուք,
«Եւ յուղտոյ բարձեալ և շրջեցուսցուք,
«Տեսող լըսողաց զսա խըրատ ցուցցուք։

«Ցետ այնր կենդանոյն զորովայն հերձցուք,
«Զաղխըն քարշեալ ի դէմն ընկեսցուք,
«Եւ զըստինս կտրեալ՝ զաչսըն բըրեսցուք,
«Ցօշելով զմարմինն և շանց կեր արկցուք»։

Եւ յայնժամ ելեալ զնա որոնէին,
Շըրջեալ ըզքաղաքն 'ւ ոչ գըտանէին,
Եւ սըրտիւ իւրեանց կարի ոխային,
«Եթէ գըտանեմք՝ կտրատեմք» ասէին։

2. o գուացան. 3. o յամրացան. 9. o զու. 13. o մարձս. 21. o յետ այնր ընդ կենդանուն. 23. o ըզստինս կտրալ 24. o զանչ. 25. o որոնէինցուք.

*Վասն զարհուրելի երազոյն զոր փաշայն տեսեալ*
*եւ հրաման արարեալ որ իջուցին ի կախարանէն․*

Ցայն առաւօտըն մինչ զայն լըսեցին,
Թէ լոյս իջեալ է ի վերայ Նորին,
Քրիստոնեայք փութով անդ հասանէին,
Ցոյժ մեծ գոհութիւնս Աստուծոյ տային։

Անխախտ սահման էր սոյնոյ քաղաքին,
Ըզմնասապարտ ոք զորս և կախէին,
Մինչ յերիս աւուրս այնպէս թողուին,
'Ի ապա վայր առման հրաման առնէին։

Իսկ փաշայն տեսեալ զերազ ահռելի
Վասըն սոյն մանկան, և քունն հատանի,
'Նդ առաւօտն խսկոյն գըրեալ պուրուլթի,
'Ի իջուցանելոյ տայ հրաման յայտնի։

Գըրեալ էր ի մէջ այն պուրուլթիին,
Զէնէթով բառնալ ըզմարմին Նորին,
Դառք քահանայիւք և վարդապետօք՝
Ըստ օրինի դնել ի գերեզմանի։

Ցայնժամ քրիստոնեայք եկեալ իջուցին
Զմարմինն դեղեցիկ և Նոր վըկային,
Լալով հըրճուանօք եդին դագաղին,
Եւ բարձեալ բերին ի յեկեղեցին։

Ժողովք ըռամկին ընթացեալ եկին,
Եւ արք և կանայք, ծերքն ընդ տըղային,
Աղէտիւ մեծաւ ողբս առեալ լային,
Մինչ զի ըզքարինս լացուցանէին։

13. 0 ընդ. 17. 0 վր''դապետօք. 18. 0 ընդ. 21. 0 լալոլով. 23. 0 ընդացեալ. 26. 0 քարինք.

Քանզի սուրբ վըկայն էր սպիտակացեալ,
Ըզձեռսն ի սըրտին խաչանիշ եդեալ,
Եւ երկայն գանգուրն վըզին շուրջ պատեալ,
Եւ երես նորա ծաղկադէմ եղեալ։

Այսպիսի կերպիւ որք տեսանէին,
Աղէխարշ սըրտիւ մորմոքմամբ լային,
Հայելով ի նա յոյժ հառաչէին,
Եւ չար մօր նորա լանէթներ տային։

Վասն թաղման նորա որ յոյժ փառաւորութեամբ եղին ի գերեզմանի· եւ ի նոյն գիշերին եւս լոյս իջեալ ի վերայ նորա·

Սուրբ եկեղեցւոյ դէտըն պանծալի,
Շնորհազարդ պետօք ըզգեստաւորի,
Եւ համայն ուխտիւ իւրով զարդարի,
Թաղումըն սըրբոյն պատրաստեալ լինի։

Դասք քահանայից խըմբիւ պարառեալ,
Միաբան զեցեալ մոմեղէնս վառեալ,
Սարկաւագք զբուռվառս, դըպիրք խաչվառեալ,
Եւ քաղցըր ձայնիւ դաս դաս երգ առեալ։

Խընկօք անուշիւք 'ւ ազնիւ կընդըրըկօք,
Եւ պայծառ ջահիւք և մեծ կերօնօք,
Սպիտակ հանդերձիւ, սուրբ պատմուճանօք,
Պէսպէս ճոխութեամբ և զարդարանօք,

Կենսատու խաչիւ, աւետարանօք,
Դաւթեան սաղմոսիւք և շարականօք,
Եւ այլ հոգելի քաղցր եղանակօք,
Ջուարճախառն ողբովք և մեծ հըրճուանօք,

Բարձեալ ըզմարմինն սըրբոյ վըկային,
Եւ տարեալ ի դիր իւրոյ տապանին,

6. մումոքմամբ. 12. եկեղեցէյ. 15. սըրբւոյն. 18. սարկաւաքք.

Սաղմոսիւք 'ւ երգօք գերեզման եդին,
Խաչիւ կընքեցին ըզշիրիմ Նորին։

Նոյն գիշերըն եւըս լոյս էջ յերկնից,
Մերձակայ բնակիչք տեղւոյն վկայեցին,
Որով ամենից միտսն հաստատեցաւ՝
Թէ ճըշմարտապէս է վըկայ Փըրկչին։

Սահակ Մըսըրս այս որ կատարեցաւ,
Զար մօրէն իւրմէ ի զուր մահացաւ,
Արին զլոյս հաւատն իւր ոչ ուրացաւ,
Այլ ի փառս Յիսուսի նահատակեցաւ։

Հազար 'ւ երկերիւր քսան և եօթ թըւի,
Ի քսան և երեք ամսոյ յուլիսի,
Մակաբայեցոցըն աւուրն տօնի,
Որ և սա ևըս ընդ նոսա դասի։

Արդ թըչուառ ծառայս Փըրկչին Յիսուսի,
Յօհաննէս չըպէտ նօտարս Կարնեցի,
Զկատարումն սըրբոյս աչօք իմ տեսի,
Եւ որպիսութեանն իսկ վերահասի։

Ի խընդրոյ ոմանց եղբարց հարկեցայ,
Զանց առնել ըզնոյնն ոչ բարւոք վարկայ,
'Ի ի սիրոյ սըրբոյս ես բոտիպեցայ,
Եւ չարադըրեալ զբանս յօժարեցայ։

Ուստի աղերսեմ զեղբարսդ յարգելի,
Յիշել զիս ըզհէքս մաղթմամբ հաճելի,
Տեսութեան Փըրկչին լինիլ արժանի,
Ընդ ձեօք վայելել զփառս անպատմելի։

5. օ միտսըն. 7. օ սահակս. 13. օ մանկաբայեցոցըն. 15. օ րդ. փխ. արդ. 19. օ եղբարձ. 20. օ բարուք. 21. օ բոտիսեցայ. 23. օ ւստի փխ. ուստի.

Digitized by Google

*Տաղս այս ի վերայ սոյն նոր նահատակիս յօրինեալ ի նոյնոյ նօտարէ՝ ի գոյն որ ասէ․ Պաշընտայ վար ֆինօ ֆէսի էման, ալտի ալէնի ալէնի խու․․․․։*

Ի չար մօրէդ զուր մատնեցար, աւա՜ղ,
Գառնըրդ անմեղ անմեղ ըմբռնեցար,
Ի բանդ և ի գանս տագնապեցար, աւա՜ղ,
Ազնիւ Մըսըր, Մըսր, սիրո՜ւն Սահակ,
Արի Սահակ և քաջ Սահակ, աւա՜ղ,
Մանուկ տիօք, տիօք քաղցրատեսակ։

Ցատեան չարեաց որ դու կացեր,
Շնորհիւ Հոգւոյն լըցեալ եղեր,
Լոյս հաւատոյդ անխախտ մնացեր,
Ազնիւ Մըսըր, տեսլեամբ պայծառ որպէս հուր։

Համարձակեալ բարբառեցար,
Խոստմանց նոցին ոչ նայեցար,
՚Ի ի մահուանէ ոչ վախեցար,
Ազնիւ Մըսըր, այսօր արբեր Փրկչին բաժակ։

Նորբուս վարդ այսօր բացար,
Փըրկչին սիրով սիրով բողբոջեցար,
Ի կախարանըն բարձրացար,
Ազնիւ Մըսր, մարմինդ եղև շուշան ճըրագ։

Սիրոյդ կանթեղ դու կախեցեր նոր նահատակ,
Զարիւնդ ի նմա իբր իւղ արկեր,
Զկախարանն լուսով լըցեր,
Ազնիւ Մըսըր, սիրով Փրկչին լուցեալ ճըրագ։

9․ o քաչ․ 13․ o հաւատույդ․ 15․ o բառբառեցար․ 17․] o Ու․ 21․ o բացրացար․ 23․ o կանթեղ․

Digitized by Google

Էրանեցար յազգաց 'ւ ազանց Նոր Նահատակ,
Ի չիրիմ քոյ էջ լոյս գերազանց,
Այսօր մըտեր ի կեանս անանց,
(Ի ՌԺԷՄ) այս թիւ վկայեալ Սահակ,
Արի Սահակ, Նոր Նահատակ,
Վասն իմ հայցեա առ Տէր միակ։

Սոյն վկայաբանական երկու տաղերն ունի միայն Օ ձեռագիրը, էջ 43 ա—65 բ. ամբողջը յառաջաբանով միասին մի առանձին տետրակ է նոյն ձեռագրի հետ կազմուած։ Տետրակի վերնագիրն է. «Տետրակս այս, յաղագս ումեմն Մըսըր կոչեցեալ Սահակ մանկան, որ ի չար և յանգութ մօրէն զըպարտեալ մատնեցաւ ի ձեռս անօրինաց որք շատ ստիպեցին զնա յուրանալ և նա սիրովն Քրիստոսի վառեալ, ոչ տաճկացաւ. վասնորոյ կախեալ խեղդամահ արարին զնա։ Եւ Քրիստոս Աստուածն մեր փառաւորեաց զվկայն իւր լուսով յերկնից։ Արարեալ և շարադրեալ յումեմնէ Նոտարէ Յօհաննէսէ Կարնեցւոյ, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, և ի պատիւ Նոր Նահատակիս Նորա։»

Այս տետրակի վերջն է նաև Յարութիւն Կարնեցի Նահատակի տաղը, որը տես առանձին։

Սահակ Մսըրի տաղի հեղինակն է մահտեսի Յովհաննէս (կոչւում է նաև Հաննէս, Հաննա) Կարնեցի վարժապետ՝ Նոտար մականունով. հեղինակը իւր ժամանակի բեղմնաւոր գրիչներից է. Նրանից ունինք տասնեւինը աշխարհական գեղեցիկ տաղերի մի հաւաքածոյ, գրուած 1777—1788 թուականներին. չհաշուած Սահակ Մսըրի (գրուած 1778 թուին), Յարութիւն Կարնեցու (գրուած 1806-ին) և Վասվառէ կոյսի (գրուած 1810-ին) տաղերը՝ որոնք տես վարը։

Սահակ Մսըրի տաղի 14 գլուխների առաջին տների սկզբնատառերը կապում են հեղինակի անունը. Ի ՅՈՀԱՆՆԻՍԷ Ե ԱՅՍ։ Ինքը հեղինակը իւր յառաջաբանի մէջ՝ էջ 574 անում է իւր տաղի գրութեան պատմու-

թիւնը․ հեղինակը տաղը գրել է հէնց սրբի նահատակութեան տարին՝ այն է ՌՄԻԷ=1778 թուին, եւ «տաղայական» և «նորաւարժ» ժամանակին։ Տասը տարի յետոյ ՌՄԼԷ=1788 թուին բարեկամների խնդրով վերստին ձեռք է առնում աշխատութիւնը՝ և նորանոր սրբագրութիւններով և յաւելուածներով վերածում է այժմեան վիճակին։

Digitized by Google

# 105.

## ՊԱՂԻ ԿԱՐՆԵՑԻ

✝ 1781—1786

*Սոյն նահատակի մասին անցողակի խօսուած է Սահակ Մըըր Կարնեցու վկայաբանական տաղի յառաջաբանի մէջ, տես վերը էջ 573—4. բայց որովհետև կաղմում է մի ամբողջութիւն, ուստի և աւելորդ չենք համարում նոյն մասը ամբողջովին մէջ բերել այստեղ։*

Յետ անցման քանի մի տարեաց (ի վերայ նահատակութեան Սահակ Մըըր Կարնեցւոյ) սոյն քաղաքացի Ջինիզցի կոչեցեալ Տէր Մելքոն հանճարաշատ քահանայի Պալի անուն որդին վասն իմիք ինչ ընդունայն պատճառի մատնեցաւ ի ձեռս անօրինաց, որք և վասն գեղեցկութեան և արիական երիտասարդութեանն՝ շատ չարչարանօք ստիպեցին զնա ուրանալ. և նա տեսեալ զոլով զարիական նահատակութիւն սոյն Մըըր մանկանս, վասնորոյ և ինքն ևս արիութեամբ հաստատուն մնալով ի հաւատս և ի սէրն Քրիստոսի, ոչ տաճկացաւ. վասնորոյ կախեցին զնա, որոյ վերայ և լոյս էջ յերկնից։

*Վկայիս նահատակութեան թուականը յիշուած չէ. բայց որովհետև Սահակ Մըըր նահատակուած է 1778-ին, իսկ Պալի «յետ անցման քանի մի տարեաց»,*

Digitized by Google

ուստի ապահովաբար 1781-ից յետոյ։ Միանգամայն Սահակ Մռըրի վկայաբանութեան յառաջաբանը գըրուած լինելով 1788-ին, Պալիի նահատակութիւնը չի կարող 1786-ից յետոյ լինել, որովհետեւ հակառակ դէպքում հեղինակը պէտք էր ասէր «անցեալ տարի, հերու» կամ նման մի ձեւ։ Ուստի նշանակում ենք մօտաւորապէս 1780-6։

Ձեռագրական տարբերութիւնները եւ տես վերեւը, էջ 573 –4։

# 106.

## ԹՈՒԽՄԱՆ ՄԱՆՈՒԿ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՑԻ

† ՌՄԼԳ=1784

Հազար երկու հարիւր թվական,
Եր՚սուն երեք աւելորդեան,
Հիանալի իրս գործեցան,
Որ ազգ և ազինք զարմացան։

Մանուկ անուն ումըն Թուխման,
Որ էր երկրէս նա Տիգրանեան,
Աւուր միում յանկարծական,
Փայլեաց իբր աստղ առաւօտեան։

Կացեալ ընդդէմ բռնաւորաց,
Մեծամեծաց, դատաւորաց,
Զօրէնս նոցա արհամարհեաց,
Դաւանելով զՔրիստոս Աստուած։

Ըզնա կալեալ ըմբռնեցին,
Բըրածեծեալ յոյժ սաստկագին,
Մինչ զմիս ոտիցըն թափեցին,
Ըզնա յաղթել ոչ կարացին։

Դարձեալ կըրկին ի բանտ արկին,
Թերևս միտքըն շըփոթեսցին.

2. ձ երեսուն երեկ. 7. ձ հանկարծական. 13,16. ձ զնա.

Digitized by Google

*Իսկ նա կացեալ արիապէս,*
*Պատասխանեաց առոց նոցին.*

*«Քրիստոնեայ եմ, հաւատս պայծառ,*
*«Զեմ ես նըման մութ և խաւար,*
*«Ցառաջնորդ ձեր կոյր և յիմար,*
*«Եւ հետևօղք իւր հաւատար»։*

*Ցայնժամ ցասեալ բըռնաւորին,*
*Եւ ետ հրաման մահու նորին.*
*Առեալ ի դուռ ժամու բերին,*
*Ըզնա անդէն գըլխատեցին։*

*Արիական քաջ նահատակ,*
*Հեղեր զարիւնդ իբըր վըտակ,*
*Սիրով արբեր զմահու բաժակ,*
*Ի հանդէս քո հըրճուլին հրեշտակք։*

*Սէր աշխարհիս ի բաց թողեր,*
*Եւ մասնակից սըրբոց եղեր,*
*Սակս Քրիստոսի արիւնդ հեղեր,*
*Եւ քաղցրացար իբր ըզմեղր։*

*Երանելի մանուկ Թուխման,*
*Մարմինդ ետուր հոգւոյդ փըրկան,*
*Մահ քո եղև քեզ բանալի,*
*Երաց ըզդուռն արքայութեան։*

Սոյն վկայաբանական տաղն ունի միայն Վիեննայի Մխիթարեան Հարց մատենադարանի թիւ 304 ( Ծ) ձեռագիրը, էջ 18 բ. հմմտ. Տաշեանի Ցուցակը, էջ 732 բ։ Տաղի արտագրութիւնը շնորհակալութեամբ ստացել ենք մատենադարանապետ գեր. Հ. Բ. Պիլէզիկճեանից։

4,6. խաւար, հաւատար բառերի ընթերցուածքը տարակուսական է Ծ-ի մէջ. 10. Ծ զնա. 13. Ծ արբէք.

Digitized by Google

# 107.

## ԴԱՆԻԷԼ ԲԷԿ ԽԱՉԵՆԵՑԻ

† ՌՄԽ—1790-1

Ցարձանիս շիրմի ամփոփեալ դնի
Մարմին իշխանին Խաչեն գաւառի,
Վեհ իշխանազնեայ Դանիէլ բէկի,
Որդւոյ Մէլիք բէկ իշխանապետի,
Ի տանէ հայկազն մեծ Ջալալ Դօլի,
Տեառն Արցախայ Հայոց աշխարհի,
Որ Ղարապաղայ կամ Շուշւոյ Նահանգ
Նա սովորաբար արդ վերաձայնի,
Առ սուրբ հաւատոյ սա լուսահոգի
Նահատակի աստ յամրոցիս Շուշի՝
Դառն տանջանօք Իբրահիմ խանի՝
Որ թշնամի էր Խաչին Քրիստոսի.
Ի ՌՄԽ. կանգնեաց զայս արձան
Վշտալի որդին այս Նահատակի
Բաղդասար արհին տէր Մետրապօլիտն
Հասան Ջալալեանց արթուն հովուապետն
Աղուանից երկրին, որք հանդիպիք այսմ տապանի
Տուք հօրն և որդւոյն Աստուած ողորմին ի 1851։

Սոյն տապանագիրը արտատպում ենք Մակար եպիսկոպոս Բարխուդարեանցի Արցախից, տպ. Բաքու, 1895, էջ 150—151. Նահատակի տապանաքարը ըստ սոյն աշխատութեան գտնւում է Շուշի քաղաքի Հին-հանգստարանի հարաւային կողմում։

6. տպ. արցախայ. 11. տպ. իմրահիմ.

# 108.

## ԱՆՏՈՆ ՆԱՀԱՏԱԿ ԹԻՖԼԻՍԵՑԻ

† ՌՄԽԴ=1794-5

(Շուշի) քաղաքում եղած Հին-Հանգստարանի վարի կողմին մօտ կայ մի գերեզման, որ կոչւում է Նահատակ։ Սորա տապանաքարի վերայ գրուած է. «Այս է տապան Թիփլիսեցի նահատակ Անտօնին. ՌՄԽԴ-ին։ Ես Թիփլիսեցի Սիմոնի որդի Սարկիս այս քարս հոկացի սէրս Նահատակին»։

Սոյն տեղեկութիւնը արտատպում ենք Մակար եպիսկոպոս Բարխուդարեանցի Արցախից (տպ. Բագու, 1895), էջ 150։

5. տպ. այսպէս սարկիս, հոկացի.

Digitized by Google

# IO9.

## ՌՕՍԻԿ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏՓՂԻՍԵՑԻ (ՍԱՅԵԱԹ—ՆՈՎԱ)

† 1795 *սեպտեմբեր*

*Հարիւր յիսուն տարի առաջ (այսինքն 1700-ին) մէկ խեղճ աննշան հայ գալիս է Հալէբից*[1]*, երևի բախտ որոնելու՝ Վրաստան, ու բնակվում է Թիֆլիզ քաղաքում, որ տեղ պսակվում է մէկ Հավլաբարցի*[2]*) աղջկան վրայ։ Սրանց ըլում է տղայ*[3]*), որոյ տալիս են Արութիւն (Յարութիւն) անունն։ Էս Հալեբցու վրայ չ'ունինք ոչինչ տեղեկութիւն.*

---

1) Թուրքերէն ասած խաղերում Սայեաթ—Նովէն խօսում է իր վրայ՝

Վաթանըմ Թիֆլիզ դուր, սամթի Գուրջիստան,
Անամ Հավլաբարլու, աթամ Հալաբլու։

(Հայրենիքս Թիֆլիզն է, կողմն Վրաստան. մէրս Հավլաբարցի, հէրս Հալաբցի)։

2) Հավլաբարն հին ժամանակին Թիֆլիզու արուարձանն էր. հիմի քաղաքի հետն է հաշվւում։

3) Հնարք չը կայ իմանալու Սայեաթ—Նովու ծնընդեան տարին. ինքն ԻԳ խաղի տակն ունի գրած թէ՝ ինչօրի հարսունն ծարին գյուխ դրի ամենան խաղին. թէպէտ անկարելի է որ մինչև իր երեսնամեայ հասակն չ'ունենայ բան ասած, բայց համարձակ կարող ենք ասել, որ էս հասակից առաջ չ'ի ըլել գլուխ դրել նշանակելու իր խաղերու ասելու օրն, ամիսն ու տարին։ Մէ քանի Թուրքերէն ասած խաղերու տակն ունի նշանակած Վրաց քրօնիկօնի 430 Ն, որ է 1742 Փրկչական թիւն։ Թէ ընդունենք՝ որ Սայեաթ—Նովէն էս



Digitized by Google

միայն նրա որդու՝ Արութինի խօսքից իմանում ենք, որ էլել է նա մղդըսի։ Պատիկ Արութինին տալիս են աշկերտ մէկ ջուլհակի մօտ. խիստ աչքաբաց ըլելով՝ կարճ ժամանակում էնքան վարպետանում է Արութինն, որ ինքն իր համար մէ մեքենայ է հնարում, որով՝ կտաւը երկայն փողոցի մէջ հինելու տեղ, հինում ու գործում է էլել իր սենեակումն։ Մեր վարպետ ջուլհակն երևի շատ վաղ է նկատում իր մէջ քերթողական շնորհքն, որ «սպառնոց» պաս պահելով «գլուխ է դնում ամենայն խաղին», ու «ասէք Կաթալիկոսի կարողութեանով» սովրում է «քամանչէն, ու չօնգուրն ու ամբուրեն»։

Դեռ լաւ չը չափած իր հանճարի ուժն, Արութինն անց է էլել կացնում իր օրն կտաւ գործելումն ու սազ ածելումն. իր մեքենայի առջևն հորում նստած՝ մըքուքի ճէնի վրայ առաւօտեան հանած խաղն գեղգեղում է էլել գիշերն իր քաղցր ձայնով իշխաններու բարձր ու լէն դարբասումն։ Վերջն մըքուքն փոխած քամանչի վրայ, սրան «ձեռ քաշ» տեանիլն խոստանալով՝ համարձակ դուրս է եկել մէյդան, որ տեղ իր աշուղական հռչակաւոր Սայեաթ—Նովա անունով մոռացնել է տըւել ջուլհակ Արութինին էնպէս, որ ժողովուրդն մինչև էս օրս էլ միայն աշուղական անունով է ճանաչում իր սիրեկան երգչին։

Բանից երևում է որ Սայեաթ—Նովէն աշուղութիւնն կցել է թուրքերէն ասած խաղերով. սրանցմով սկսվում է նրա դավթարն։ Էն գլխէն մտածելով խաղն ասելու տարին նշանակելու համար, առաջ սրանց համար է հոգացել. իր դավթարումն էլ ամէնից հին խաղն՝ թուրքերէնն է, որն որ հանած ունի 1742-ին. հետն էլ տեսնում ենք, որ էս խաղերուց յետոյ՝ սկսելով հայերէն խաղն, սրա տակն

ժամանակին ունեցել ըլի աւէլ պակաս երեսնամեայ հասակն, յայնժամ նա ծնած պիտի ըլի 1712 ին։ Էս հաշւով մեր երգիչն իր մահուան օրն (1795 ին) պիտի էլել ըլի 83 տարեկան, որ բանն յարմար է գալիս նրան տեսնօղ մարդկերանց ասմունքի հետ, ովք միտն ունին Սայեաթ—Նովուն ինչպէս մէկ լաւ ծերացած ալեոր մարդ։

չը նշանակելով սազելու տարին, գրում է՝ «Բիլմի փ․ռզիմ Թէ ճույէփար ռափմ»։ Էս խօսքերն լաւ ցոյց են տալիս, որ Սայեաթ—Նովէն՝ Թուրքերէն, կարելի է և վրացերէն՝ սազ խաղերով անուն ճարելուց յետոյ, ուզում է և հայերէն սազել. ու տարին նշանակած ունեցող հայերէն հանած խաղերուց ամէնից հինն սազած է Թուրքերէնից տաս տարով յետոյ—1752-ին։ Ուրեմն մեր երգիչն էլ ուրիշներու պէս հռչակել է իր անունն առաջ Թուրքերէն խաղերով. Թէպէտ անկարելի է որ էս տաս տարուան մէջ չ'ըլլի սազել հայերէն գոնէ մէկ հատ խաղ։ Կարելի է՝ որ տարին նշանակած չ'ունեցող խաղերն հէնց էս միջոցումն ըլլին սազած։ Էլ ինչ խօսիմ ուրիշ կորած կամ հրապարակում յանկարծ սազած խաղերու վրայ, որք կտոր կտոր ու աղաւաղած պահվել են աւանդութէնով. Թէ հնարք կ'ունենամ՝ որ սրանց ամբողջ վերականգնեցնեմ, ժամանակով կու հաղորդեմ և սրանց ազգակիցներուս։ Սայեաթ—Նովէն արդիւնաշատ աշուղներուց մէկն է. իր տասն ու եօթն տարուան երգօղական ծիր կենաց մէջ բաց ի 114 Թուրքերէն ու 46 հայերէն խաղերուց, որք յայտնի են մեզ նրա դավթարից (Թողնենք չը գրածն ու կորածները) ունի սազած վրաց գեղջուկ լեզուով անթիւ աշխոյժ խաղեր ու անհամար ազդու բաներ, որոց կտորներն՝ էն էլ մաս մաս արած երբեմն միտն է բերում շուտ սովրօղ ու հեշտ մոռացող ժողովուրդն։ Թէ որ Նախախնամութիւնն չէր պահպանել երգչի դավթարն, անկարելի կու 'լէր գոնէ մէկ Թեթև դատողութիւն անելն էս անուանի աշուղի մտաց ճարտարութեան վրայ. մանաւանդ երբ տեսնում ենք, որ մեր ժամանակակիցներն քիչ բան են իմանում նրա վարքի վրայ։ Թիֆլիզու հայոց, վրաց ու Թուրքաց ուրախացնող երգչի կենցաղավարութեան վրայ չը կարօղացայ ոչ ովից իմանալ մէկ մանրամասն տեղեկութիւն. զարմանալի չ'է. Սայեաթ—Նովէն իր կենաց վերջի քսան ու հինգ տարին կէնում էր միանձնացած, Թիֆլիզից դուս, հեռացած սրա ժողովրդէմէն։ Նրա փառքի ու չքե-

ղութեան ականատեսներից մէկն էլ չը կայ. ժամանակին թէ լինայել է մէ քանի ցամքած ծերերուն, սրանք էլ Սայեաթ—Նովուն՝ աչուղ են տեսել, երբ հէնց իրանք էլել են վեց կամ ութ տարեկան. բայց լաւ միտն ունին, ինչպէս՝ երբ նա իր կրօնաւորութեան ժամանակն հազրէն մէկ անգամ գալիս է էլել Թիֆլիզ, խաղասէր երեխերքն նրա էդնէն վազելիս՝ մատով մէկ մէկու չանց են էլել տալիս ասելով. «Տօ՛, գիժիս Սայաթ—Նովէն ա»։ ու մեծերուց լսածն ասելով պատմում են, որ էս՝ Էրէկլէ Թագաւորի ու սրա արքունեաց սիրեկան աչուղն՝ ըլում է մէկ անհօգ զօղ ու քէֆի սիրօղ, սիրուն աղջկերանց ուրախացնօղ ու որբևերի կանանց մխիթարիչ, և ըլելով հիանալի քամանչայ ածօղ, մանաւանդ իր քաղցր ձայնի հետ՝ էլել է միշտ Թագաւորի ու ազգի խրախճանքներու պատուական ու անհրաժեշտ զարդն։ Հէնց ինքն էլ իր քամանչէն գովէլիս ուղիղ է նկարագրում իր կեանքն ասելով

Բօլօրքըդ գօզալնիր չարած՝ մէջլիսի կէսն իս, քամանչա.

Իրաւ, պիտի հաւատանք Սայեաթ—Նովուն, երբ սա ասում է մեզ, թէ՝

Հէքիմնիրըս ափսուսում են, ծընգան տալօվ վա՛յ են ասում.
Կանչօղըս դարդակ է գընում. Ա՛խ Սայաթ—Նովա, է ասում։

Քանի անգամ՝ կարդալիս սրա խաղերն հարիւր տարեկան պառաւներու առջևն, ուզելով՝ հրապուրած սրանց թմրած յիշողութիւնն դուրեկան հնուց բաներով, հանեմ նրանցից մէ տեղեկութիւն մեր երգչի վրայ, միշտ լսել եմ ծնգան տալով ասած խօսքերն. «Էտ խօ մեր Սայաթ—Նովէն խաղն ա. վա՜յ քի Սայաթ—Նովա, ի՛նչ զօղիր խու չանգ տուռի»։

Թէ շատ զօղ է չանց տուել, շատ անգամ էլ էս հանճարեղ յանկարծախօսն կատարել է հոգևոր բժշկի պաշտօնն։ Լսել եմ ծերերուց, որ մէկ օր Էրէկլէ Բ, Վրաց Թագաւորի գերդաստանն ու իշխաններն նեղանալով իրանց

Պարնին եկած տխրութեան համար, (որն որ երբեմն պատահում էր էս՝ միշտ իր թշնամիներու արշաւանքներն մղելու համար հոգած քաջ պատերազմողին) ու նրանք դադրեցնելով իրանց կանացի գգուանքն ու պալատական շողոքորթանքն, ճարերն կտրած՝ ստիպած են ըլում գործ դնել Սայեաթ—Նովու հոգեզուարճ խօսքն. սա քամանչէն ածելով մտած թագաւորի սենեակն ու մոտիկ չը տալով նրա ողորմած հայեցուածին, սկսում է բանն համարձակ ասելով

Մտկվարո ամղ'վրեուլո, արագիանո,
Մե չեն վեր դագիմլեբ. միզեղիանո[1])

ու էսպէս իր սիրեկան Պարնի տխրած ճակատն պսակում է խաղաղ խնդութէնով։

Ամէն տեղ ուրախութիւն ցանող Սայեաթ—Նովէն, ինչպէս տեսնում ենք իր խաղերուցն, իրան էլ չ'է զրկել ցնծութէնից. սրա աշխոյժ ու սիրատենչակ հոգին՝ շատ գեղեցկանազին գերի կու՛լի արել իր կաթոգին խօսքերով

Ղ'ուրբան իմ ծուցիդ նըռանն,
Հօքիս տամ չիմչատ կըռանն.
Թաք պառկիմ եարի դըռանն՝
Գըլխօքըս քար իմ ասում.

ինքն էլ սիրու գերութեան մէջ տարփանքով վառված՝ առանց սիրեկնի մէկ օր էլ չ'է ուզում էս աշխարհքից՝

Դուն գըլուխըդ մահի կու տաս, ես էլ քիզ իդ կու մէռնիմ.
Միր էզնէն թամամ աշխալըս սօվ քաշէ, հաց չը տէսնէ։

Բայց չէ մնում միշտ էս սիրատարփ մոռացմունքի մէջ. պահելով իրան հեռու մարմնամոլ զգացմունքից, աւելի հաւան է՝ յայտնել իր անձկութիւնն որպէս նուագածու քերթող՝

---

1) Քուռ դու պղտորած Երասխի ջրով, չ'եմ դիմանալ քեզ՝ պատճառանքներ ունեցողին (մահանաւորին)։

Ծանօթ. Անձրեւային ժամանակն՝ էն տեղ, ուր Երասխն խառնըվում է Քռի հետ, ջուրն բռնում է մէկ թուխ կարմրադեղին գոյն։

Digitized by Google

Թէ մէ շափաթ քիզ չ'իմ տէսնի, կու կըտրիմ քամանչի սիմըն,

ու նկարագրելիս իր բաղձանքն, միալով զուրկ հեշտասէր ցանկութէնից՝ չէ վիրաւորում նուրբ զգացմունքն։ Ինչքան պարզ է էլել հասկանում սիրու սրբութիւնն՝ ցոյց է տալի մեզ նրա խոստմունքն՝

Թէզուզ անմահութին ուզիս սիրօվ կու ճարիմ քեզ ամա,

ընպէս որ համարձակ կարելի է ասել թէ՝ Սայեաթ—Նովու հոգին

Ջընի տակէն նուր դուս էկած արիվ դիբած սընբուլի պէս պայծառ
ու մաքուր է։

Սայեաթ—Նովու ցնծութիւնն չէ քաշում շատ ժամանակ։ Համարեա թէ հէնց էն գլխէն գրաւում է սրան տխրութիւնն. իր սէրն ու բաղձանքն յայտնում է մէ տրտում ու վշտալի ոճով, որ ցաւ է տալի սրտին. տեղ ու տեղ էլ շանց է տալի իր հոգւոյ ձանձրանալն կեանքից, աշխարհքից, երգերուցն եւ՝

Է՛րէգ լավ էր կանց մուր էսօր,—վաղէրումէն բէզարիլ իմ.
Մարթ համաշա մէկ չ'ի ըլի,—խաղէրումէն բէզարիլ իմ։

Էսպէս զզուած աշխարհքից, գանգատուելով թէ՝ «ղուրթն ճամփայ չի գնում», ընդուր որ՝ «շատացել է բալքի սուտն», Սայեաթ—Նովէն խրատում է իր «դիլխանա» սիրտն ու քարոզում է սրան սիրել «Աստուած, հոգի, հաւր, պարկեշտութիւն, գիր, խրատ, համբերութիւն, դաղաստան, խոնարհութիւն, աղքատ, ղօնաղ, օտար». ու վերջումն յայտնելով իր սրտի տխրութեան հիմն՝ ահեղ դատաստանից վախենալն, խորհուրդ է տալիս իրան մնաւանդ սիրել «փառք, ամրապատ, քար»։ Սայեաթ—Նովու խրատական Դ. խաղն, որն որ բովանդակում է իր մէջ կեանքի ամէն բարոյական ու մարդկային տարերքն, ու անպաճոյճ ու կարճ խօսքով յայտնում է մէկ ժողովրդի ամէն կարիքն, վկայում է ազգային երգչի բարոյական ու կրօնական մտաց աճման։

Իրաւ, էս ազգային երգիչն հասկանում է էլել իր կոչումն, ու նրա միտքն լաւ հասնում է էլել իր պաշտօնին, երբ իր գլխին «խալխի նօքար» ասելով՝ թելադրում է իրան «Սամով դուլլուղ» անել ժողովրդին, որն որ անուանելով «ծուռն թիէկո», գիտէ որ սրա դլատէլն քերթողի սուրբ պարտքն է, էնդուր էլ սիրուն կոչում է իրան դուրգար (հիւսն)։ Ազգի բարոյական դուրգային էն էլ է հասկանում, որ քերթողն՝ պահպանելով իր սիրտն «քար խփէլուց» ու «կռուրէլուցն», պիտի չը վիրաւորվի ժողովրդի ապերախտութէնից ու բրտութէնից, ու ամէն շէղի պարգևօղին պատասխան տայ շարաֆով, լաւ իմանալով՝ որ ազգն իր կրթութիւնն ու խրատն ըստանալու է երկնուց՝

Թէգուզ դըպրատանըն պահ տաս՝ ծեծօվ չ՚ի խըրատվի խիվըն.
Ինչըու անձնէն չըր գուս էհայ անախտէլի էն չար գիվըն.

բայց ինքն վիզ է առնում միայն քարոզչի պաշտօնն, ու սովրեցնում է սիրել ու անել «բարի գործն», որն որ դասում է բարձր ամէն իմաստութեան ու գիտութեան վրայ, ասելով

Թէգուզ իմանաս, գիդէնաս աստղերու համարքըն սիրուն,
Անբարի գործըն կորած է՝ կարթա՛ Հարանց վարքըն սիրուն.

ու իր անպատ հոգին՝ թէպէտ զգում է էլ էն կենաց պայծառութիւնն, բայց միշտ նեղացած մնում է տարակուսանաց մէջ՝

Վուր տիղ՝ հասնիք, վուր տիղըն՝ սուք, վուր տիղ՝ սօյքաթ խաղ է ըլում.
Վուր տիղ՝ ժամ, վուր տիղ՝ պատարագ, վուր տիղ՝ սիրօվ տաղ է ըլում։
Թէ վուր հօքուդ կամքն իս անում՝ մարմինդ ջէգամաղ է ըլում.
Վո՛ւր մէ դարդին կու դիմանաս, դուն ջըրատար Սայեաթ—Նովա։

Հէնց էն գլխէն հոգուն ու մարմնու խնդիրն չ՚է տալի սրանց դադար, ու շատ ժամանակ պահում է տագնապում. վերջապէս ձանձրացած էս երազական կեանքի վայելչութիւններից Սայեաթ—Նովու խանդակաթ սիրտն, ասելով

Կու հաքնիմ մազեղէն, կու հաքնիմ չուլըն,
Կ՚էրթամ ու ման գու քամ վանքիրըն մէկ մէկ,

Digitized by Google

պտռում է միայնակեցութիւնն, որոյ ծարաւն էնքան սաստիկ է ըլում, որ իր զաւակներու Թիֆլիզում թողած՝ գնում, հեռանում է Հաղպատու Սուրբ Նշանի վանքն, որ տեղ կրօնաւորված ձեռնադրվում է աբեղայ։

Սայեաթ—Նովու կրօնաւորվելու տարին ոչ ով չ'է իմանում։ Դժուար թէ նա մտած ըլի վանքն իր կնոջ մահից առաջ. միայն շատ կարելի է որ մէ քանի տարի իր կնոջ մահիցն էլ առաջ հրաժարած ըլի խաղ ասելուցն, էնդուր որ դավթարում չ'է պատահում 1759ից յետոյ հանած խաղ։ Աշուղութիւնն մեղք բան համարելով

Բաս դէիլար՝ դունիա վազ'ա իմիչ,—
Օնու իչուն սօյլամ սազդան ղ'օրխարամ.1)

ունենալով երկիւղած ու կրօնասէր բնաւորութիւն, որն որ յայտնվում է ևս Թուրքերէն ասած խաղերուցն

Սայեաթ—Նօվա դինըսիա ինքար էթմազ՝ Էլմանի դուր.2)

սրտումն էլ կրելով կրօնաւորվելու փափագն, կարելի է որ Սայեաթ—Նովէն՝ դեռ իր կնոջ մահն չը տեսած, վեր ըլի առել ձեռն աշուղութէնից։ Կարծիքս հաստատվում է ևս դավթարում պատահած յիշատակարանով, որն որ 1765ին գրում է Պէնտէլենց Եօվանէն՝ երևի երգչի բարեկամն։ Սրա աղաչանքի ոճն ցոյց է տալիս՝ աշուղի խաղ ասելուց հրաժարիլն։ Էս յիշատակարանն գրած է երեք տարի առաջ մահից Սայեաթ—Նովու կնոջ, որն որ թաղած է Խօջենց վանքի գերեզմնատանն։ Գերեզմնաքարի վրայ գրած է վրացերէն՝

1) Բաս ասում են թէ՝ աշխարհս երազ է էլել, էնդուր էլ վախում եմ սոյրաթից սազից։

2) Սայեաթ—Նովէն հաւատն չ'ի ուրանալ՝ Հայ է։

Քո ունվ,
ք սափլավսա
ամասա շինա վա
ր սախաթնովի
ս մեուղ՛լե
մարմար շե
՛նդօքա մի
բձանեթ

(Քրօնիկօնի 456. էս գերեզմնում կամ Սայեաթ—Նովու կողակից Մարմարն, ինձ ողորմի ասէք։) Տապանագրի տարին՝ երկրիս սովորութենով, պիտի իմանանք չէ թէ քար դնելուն, բայց որպէս մահուան տարին՝ որ է 1768։ Երբեք չ՛ենք կարող հաշուել Սայեաթ—Նովու կրօնաւորվելն էս ժամանակից առաջ. թէ մէ երկու տարի էլ յետ դնենք ու ընդունենք 1770ն, յայնժամ մեր երգիչն կրօնաւորվէլիս էլել պիտի ըլի 58 տարեկան։

Սայեաթ—Նովու վանական կեանքի վրայ չ՛ունիմ ոչինչ տեղեկութիւն։ Հաղպատում մէ ծեր էլ չը կայ, որն որ իմանում ըլի գոնէ մէկ աւանդութիւն էս աննշան կրօնաւորի վրայ։ Սրա աշխոյժ երևակայութիւնն տըւել է արդեօք մէ պտուղ՝ յարմար իր նոր վիճակին, չ՛է յայտնի։ Թէ բան էլ ունենայ ասած, ով կու քաշէր հոգսն նրա պահելու համար. Նրա անպաճոյճ տաղերու զ չ՛ունեցօղ խօսքերն դուր չ՛էին գալ մեր՝ քերականութիւն սովրած գիտնական վարդապետներուն։ Գիտեմ միայն, որ Թիֆլիզու խաղ սիրօղ տղերքն վանքումն էլ չ՛են տըւել դադար իրանց երգչին, ու խստակրօն վարդապետի վեղարի տակն էլ կարծելով իրանց զուարճ աշուղի վառվըռուն գլուխն, դարսել են զրուցք, իբր թէ Սայեաթ—Նովի ականջն ընկնում է մէկ երևելի օտարական աշուղի Թիֆլիզ գալն։ Նա վախենալով իր քաղաքի յաղթվելու համար, սաստիկ ձմեռին մտիկ չը տըւած՝ շտապով գալիս է Հաղպատից Թիֆլիզ. ձեռաց վէր է գալի Մեծ Բերդի

եկեղեցում. ու ոչ ովքին բան չ'ասած՝ թաքուն դուս է սըլքըլվում առաջնորդարանից: Հաղպատու առաջնորդ՝ Դաւիթ եպիսկոպոսն, որն որ լսել էր նրա գալն, չը տեսնելով նոր եկած վարդապետին՝ պահանջում է նրան. ու իմանալով նրա առաջնորդարանում եւս չ'ըլնելն, շատ նեղացած՝ հրամայում է իր սպասաւորներուն, որ նրան գտնեն: Սրանք պտըռտելիս տեսնում են որ Սայեաթ—Նովէն՝ աշխարհականի շորերն հագին, իր հին ընկերներու ու բարեկամներու մէջն՝ կամրջի տակն սառած Քուռի վրայ նստած, քամանչէն-ձեռին՝ բաց է արել նոր եկած աշուղի հետ վէճն (կաա): Հէնց յաղթելու վրայ է ըլում, որ վրայ են համնում իր եպիսկոպոսի սպասաւորներն: Բայց էս գրուցքն ու սրան նման զուարճ Թիֆլիզեցւոց մտաց ցնորքն իսկի հաւատալու բան չ'են, էնդուր որ մեր մեղօք հնացեալ կրօնաւորն անց կու 'լէր կացնում կեանքն իր վաղեմի մեղքերու՝ աղօթքով ու պաս պահելով քավելումն:

Միայն շատին յայտնի է Թիֆլիզում, որ Սայեաթ—Նովէն՝ լսելով Աղա-Մահմէդ-Խանի հեծելազօրի Վրաստանու սահմանին մօտենալն, միտն է բերում իր զաւկներուն (ունեցել է երկու տղայ՝ Մելքիսեդ, Օհան ու երկու աղջիկ՝ Սառա ու Մարիամ) ու գալիս է Թիֆլիզ: Էս տեղաց ուղարկում է նրանց Մօզդօկ, ուր սրանք գցում են իրանց հաստատ բնակութիւնն: Սայեաթ—Նովէն դնում է իր զաւկներուն ճանապարհ թէ չէ, Պարսիկքն մտնում են Թիֆլիզ: Հաղպատու առաջնորդարանն հէնց բերդի տակն ըլելով՝ թշնամիքն տուն են ընկնում եկեղեցու գաւիթն, ու կցում են կոտորելն ու կողոպտելն: Սայեաթ—Նովուն վրայ են համնում եկեղեցում աղօթք անելիս: Սրանից պահանջում են դուս գալն ու հաւատն ուրանալն. բայց կրօնաւորն Պարսից թրերու տակն աւանդում է հոգին՝ ասելով

Չըլխմանամ քլիսադան, դօնմանամ Իսադան[1]:

---

1) Եկեղեցուց չ'եմ դուս գալ, չ'եմ ուրանալ Յիսուսին:

Digitized by Google

Էսպէս խալխի նզարն նահատակվում է որպէս ծառայ Աստուծոյ սեպտեմբեր ամսին 1795-ին [2])։

Մէ քանի օրից՝ Պարսից Թիֆլիզէն դուս գնալուց յետոյ, վեր են առնում նրա մարմինն ու թաղում են Մեծ Բերդի եկեղեցու հիւսիսային փոքր դրան առջևն։ Թէպէտ Սայեաթ—Նովու գերեզմանն չ'ունի քար դցած, բայց էսպէս պատմում են նրա թաղման պատահօղներն։

Ցիշեալ ամբողջ գլուխը անփոփոխ վերցրել ենք Գ. Ախվերդեանի հրատարակած Սայեաթ—Նովայ աշխատութեան յառաջաբանից, Մոսկվա, 1852, էջ Ջ—ԺԳ. էջերի տակ դրուած ծանօթութիւնները հեղինակից են. միայն էջ 613 և էջ 617 դրուած վրացերէն տողերը՝ որոնք Ախվերդեանի աշխատութեան մէջ վրացերէն տառերով էին, մենք դրել ենք հայերէն տառադարձութեամբ՝ վրացերէն տառերու չգոյութեան պատճառաւ։

---

2) Երևի էս պատահմունքն ունէր մտքումն Շամչի Մէլքօն՝ առնելով իր Թիֆլիզու 1795-ին աւերվելու վրայ հանած խաղում՝

Վարդապետներ կոտորեցին, լեշիր էր ածած տէրտէրի։

Digitized by Google

# IIO.

## ՅԱՐՈՒԹԻՒՆ ԿԱՐՆԵՑԻ

✝ 1806 փետր. 26

*Կարնեցի ոմն Յարութիւն անուն երիտասարդ նահատակեալ ի յԻզմիր քաղաքի 1255 Թուոջ եւ փետր. 26։ Եղելութեան լուրն հասեալ աստ ի Կարին՝ ըստ այնմ լրոյ շարադրեալ եղեւ քանս յումեմնէ նոտարէ։*

Ի սոյն յետնեալ ժամանակի,
Զըմեռնացեալ եղանակի,
Վարդ մի բուսեալ որ և ծաղկի՝
Իբր հոտաբոյր մանուշակի։

Հըրաշագեղ տիպ ցանկալի,
Յարութիւն ոմն մանուկ բարի,
Որդի գոլով բարեպաշտի,
Որ չարուխչի Սանդոյ կոչի։

Աստ յԱրզըրում լինի ծընեալ,
Յորում սընեալ և զարգացեալ,
Արիութեամբ նա քաջացեալ,
Ի մէջ բազմաց յաղթօղ գըտեալ։

Նա ինքն ի տես իւր մանկական
Հըռչակաւոր էր ի մըրցման,

9. o հոտաբուր. 13. o սանդոյ.

Անճնեայ, առոյգ, ուժեղական,
Եւ յաղթանդամ հըսկայական։

Ներկըրթեցեալ արհեստաւոր,
Եւ գործունեայ աշխատաւոր,
Թէպէտ ջանայր նա մըշտաւոր,
Բայց ոչ շահէր արդիւնաւոր։

Էր համածին եղբայր սորին,
Որ Կարապետ անուն նորին,
Վաղուց գնացեալ էր նա Զմիւռին,
Եւ մընացեալ անդ յիւր գործին։

Ներ խորհըրդեան սա ևս խորհեալ,
Գընալ առ նա իսկ կամեցեալ,
Ի հայրենեաց իւրոց ելեալ,
Եւ յազգայնոցըն հեռացեալ։

Օր իւր վըշտօք ցաւօք լըցեալ,
Շատ նեղութեամբ Պօլիս հասեալ,
Որ և անտի ի նաւ նըստեալ,
Եւ ի յԻզմիր նա ժամանեալ։

Տեսեալ զեղբայրն ուրախացեալ,
Եւ առ միմեանս գիրկըս արկեալ,
Զորպէսն ինքեանց միմեանց պատմեալ՝
Ի միասին անդէն կացեալ։

Աւուր միում յանկարծակի
Մեծ փորձութեան մի պատահի.
Ի վաճառանս գինարանի
Ընդ այլազգեաց յըմպել նըստի։

Րամքըն այն ըղնա յորդորեալ,
Մինչ նա կարի էր արբեցեալ,
Ի կրօնս իւրեանց զնա հրաւիրեալ,
Եւ նա զբանս այնց իբր ընդունեալ։

8. o անոյն. 9. o վաղոյց. 27. o յորդորեալ.

Ելեալ անտի գինեաւ արբեալ,
Ի կացարանն իւր գընացեալ,
Յառաւօտին գինւոյն թափեալ,
Եւ խելքըն իւր ի գլուխն եկեալ։

Կերպ իւր տեսեալ, ցիւրսըն հարցեալ,
«Կանանչ հանդերձ էր իմ հագեալ»․
Յայնժամ իւրքըն զբանըն պատմեալ
Թէ «Զկրօնս նոցա ես ընդունեալ»։

Առ այն կարի ցասմամբ լըցեալ
Թէ «Զեմ երբէք զայն ընկալեալ»։
Ուստի խրատով եղբարցն ելեալ,
Պալխօզաց զօնախն անկեալ։

Բամք այլազգեաց ի կուռ վառեալ,
Հետաքըրքիր լեալ · որոնեալ,
Եւ մինչ անդ գնալ նորա լըւեալ,
Կըռուիլ ընդ այնսըն կամեցեալ։

Նոյն պալխօզքն ոչ կամեցեալ
Թէ վասըն այնմ լիցին կըռուեալ,
Ապա զմանուկն ի նաւ եդեալ,
Յիւրեանց աշխարհն յըղել հաճեալ։

Եւ նոյն ժամայն մանուկն խորհեալ
Դառնալ յԻզմիր՝ զմահ յանձն առեալ․
«Ուր որ հաւատս ՚մ եմ կորուսեալ՝
Անդ գըտանել ինձ հարկ եղեալ»։

Ցընծուն դիմօք յԻզմիր ելեալ,
Ի հրապարակս նորա շըրջեալ,
Եւ այլազգիքն ըզնա կալեալ
Եւ ի վերայ նորա կուտեալ։

Իիւսեալ ամբոխք զըրոհ տըւեալ,
Առեալ ըզնա յատեան տարեալ՝

23․ Օ հաւատս մեմ. 25․ Օ ցընծոյն. 29․ Օ ամբողք.

Ասեն. «Դու մեր կրօնս ես դարձեալ.
Այժմըս վասն էր ես փոշմանեալ»։

Ուստի ձայնիւ նա բարբառեալ.
«Յիմ հաւատոյս չեմ ես շեղեալ.
Այլ եմ ի նա միշտ հաստատեալ,
Ի սէր նորա զանձս եմ եդեալ»։

Յայնժամ ըզձեռս ի նա արկեալ,
Զարչարանօք ուժգին տանջեալ,
Երկաթեայ ճաղս յըղունգս հարեալ,
Ծայրէ մատանց ի ներս մըխեալ։

Իբրև տեսին կայր հաստատեալ,
Ի յօրէնս իւր անխախտ մնացեալ՝
Յայնժամ զտապակս հըրացուցեալ,
Ի վերայ այնմ զնա նըստուցեալ։

Սիրով Փըրկչին նա իսկ վառեալ,
Զսաստիկ տանջանսըն զայն կըրեալ
Եւ առ նոսա պատասխանեալ.
«Զթողում զկրօնս իմ թէ մահ հասեալ»։

Եդեալ ի գլուխն թաս ջեռուցեալ
Եւ շանթս հրոյ ի նա արկեալ,
Յետ այնր և գըլխիվայր կախեալ
Եւ անողորմ գանակոծեալ։

Բոտեալ զնովաւ շըրջապատեալ,
Բազմիցս ըզնա հարցափորձեալ
Թէ ողոքանօք թէ սպառնացեալ՝
Տեսին թէ չէ հնար ուրանալ։

Սոյն այս տանջանքս նըմա տալով,
Տասուերկու օր չարչարելով,
Թէ ի բանտի շըղթայելով
Եւ թէ այլ կերպ զնա տանջելով։

3. Օ բարբարեալ. 8. Օ յոյժգին. 9. Օ յղունկս. 16. Օ զսաս

Digitized by Google

Ռամեալ սիրով ուրախ դէմօք
Կըրէր տանջանս յօժար կամօք,
Թողոյր զաշխարհս անարգանօք,
Անանց կենաց փափագանօք։

Բոյլք տանջողաց յոյժ հիացեալ,
Արիութեանըն զարմացեալ,
Բայց յամառիլ նորա ցասեալ
Եւ զատամունսըն կըրճըտեալ։

Ուր մերայինքն ոչ երևեալ,
Այլ ի բացուստ գաղտ նայեցեալ.
Նոյնպէս եղբայրն կայր ողբացեալ,
Մինչ տեսանէր զեղբայրն տանջեալ։

Յայնժամ վըճիռ մահու հատեալ
Եւ յըսպանման տեղին տարեալ։
Որ և նա ինքն արիացեալ,
Ուրախութեամբ յայն ընթացեալ։

Սիրով նա անդ յաղօթս կացեալ
Եւ զերես իւր խաչակընքեալ՝
Դահճին իսկոյն զնա գըլխատեալ,
Յայնժամ քաղաքըն շարժ եղեալ։

Արի վըկայս նահատակեալ,
Սուրբ արիւն իւր յերկիր հեղեալ,
Մարտիրոսաց թիւըն խառնեալ
Եւ ի դասըս սըրբոց դասեալ։

Սուրբ մարմինըն արեամբ ներկեալ
Եւ վարդագոյն կարմրափայլեալ,
Անուշահոտ բուրմունք բուրեալ,
Ամենեցուն քիմըն լըցեալ։

Այլ և յերկնից լոյս ցոլացեալ,
Մարմնոյն վերայ կամարացեալ,

Մինչ յերեք օր այնպէս մնացեալ,
Տեսօղս համայն հիացուցեալ։

Յուցմամբ հրաշից ուրախացեալ,
Քրիստոնեայ ազգք յոյժ ցընծացեալ,
Որ զապիթին զանձ շատ տըւեալ՝
Զմարմին սըրբոյն փառօք բարձեալ։

Եպիսկոպօսք զգեստաւորեալ
Եւ վարդապետք շուրջառս առեալ,
Քահանայիւք, սարկաւագօք,
Այլ և դըպրօք ջահաւորեալ։

Առեալ պատուով ըզնա տարին
Սուրբ Ստեփաննոս եկեղեցին.
Ի մէջ նորա շիրմի եդին,
Կանթեղ լուսոյ անդ կախեցին։

Լուրըն հասեալ աստ ի Կարին՝
Լուան ազգ և երամք նորին.
Մորմոքանօք մեծ կոծս արին
Եւ սըգալով ուրախացին։

Երանի է ծնողաց նորին,
Զի նահատակ որդի ունին.
Թէ աստ թէ անդ փառաց դիպին,
Անանց կենաց արժան լինին։

Բերկրեսցուք մեք, ազգ Արամեան,
Կարնեցիքըս ամենեքեան,
Զի մեծ պարծանք է բարձրութեան
Լեալ յազգաց յազգս մինչ յաւիտեան։

Այս գործեցաւ ի մեր թուին
Քըսան և հինգ յոբելինին,
Այլ և հընգեակ մի յայնս յարեն,
Ի քսան և վեց փետըրվարին։

1. օ մնայցե''լ. 9. օ սարկայագօք. 13. օ նորայ. 14. օ կանդեղ. 19. օ ծընողաց. 30. օ քըսան.

Նահատակեալ սա ի յՋմիւռին՝
Լիկիացւոց մեծ քաղաքին.
Որ և մաղթմամբ սոյն երջանկին՝
Գըթացի մեզ արքայն վերին։

Սոյնոյ բանիս չարօղն յետնեալ
Գըլխատաւից լինի յայտնեալ.
Առ ընթերցողըդ աղերսեալ
Յիշել յաղօթս հաճոյացեալ։

Այս վկայաբանական տաղն ունի Օ ձեռագիրը, էջ 66 ա—71 ա։ Տների սկզբնատառերը, ինչպես վերջի տան մեջ յիշուած է, կազմում են՝ «Ի Հաննէ Նօտարե Կարնեցւոյ ի սէր սրբոյս ասացեալ է բանս։» Յովհաննէս Նօտարի մասին տես և վերը՝ էջ 601 դրուած տեղեկութիւնը։

Սորև գտնում ենք նահատակի տապանագիրն ու մի ընդարձակ պատմական ծանօթութիւն։

Յաստեղացն պարս պայծառ արուսեակ,
Ի Կարնոյ ծագեալ արփիատեսակ,
Տեառն Աղէքսանդրի զաւակ դեռահասակ,
Յարութիւն ընտիր կարմրագեղ պսակ։
Մշակ ժրաջան ի գործ հաւատոյ,
Բանսարկուին խլիչ սերմանց յարմատոյ,
Ոյր ստապատիր եզանց կալոտւոյ,
Կզակաց փշրող զօրութեամբ ազդոյ։
Ի քաջից խուժաց տասն օր հարուածեալ,
Քաղցու տուայտեալ ի ճենճերս ածեալ,
Վիզոլոր գելեալ տաշտատապ խանձեալ,
Յատրաշէկ ի թելս ընդ (գազայնս) փորձեալ։
Ոտնակախ լլկեալ վշտըմբեր վըկայ,
Խաչազգեաց զինուոր մարտիկ գերակայ,

2. Օ լիկիյացւոց.

Անեղ սպառնալեաց արի դիմակաց,
Խոստման պարգևաց դերևիչ յանկայ։
Արժան անձնաւոր մատեան հոգեբառ,
Անուն Ցիսուսի փող մշտաբարբառ,
Խնդրակ անձուրաց կենացն անսպառ,
Արիւնաներկեալ ի մահ գլխափառ։
Վասն որոյ խմբեալ ազգիս մեր համակ,
Զերջանիկդ ի գով պատուեմք նահատակ,
Ով հոգւոյն ... զեղուն ընդունակ,
Լուսաթափիչ յերկնից վերճեմող բնակ։
Ցամի տեառն 1806 ի փետր. 26։

Սպիտականեր ծերունիները Ցարութիւն նահատակիս կեանքն այսպէս կը պատմեն։ Ժամանակ մը, երբ Զմիւռնիոյ կուսակալը կը նստէր Այտընի քաղաքը, և Զմիւռնիա ունէր իբր կառավարիչ Միւսէլլիմներ, Ցարութիւն անուն երիտասարդ մը, բնիկ Կարնեցի, իւր եղբօրն հետ կը գտնուէր Զմիւռնիա։ Օր մը ենիչէրիներու խումբ մը՝ իրենց դրօշը պարզած, տեղական սովորութեան համաձայն փողով և թմբկով (տաւուլ զուռնա) գինետան մ'առջևէն անցած ատենները, Ցարութիւն որ իւր եօթն ընկերներով հոն կը գտնուէր եղեր, կէս մը արբեալ վիճակի մէջ, տեղէն դուրս ելլելով կը միանայ ենիչէրիներուն խմբին հետ։ Ասոնք կը տանին զինքը Ճէզայիրի անուանեալ խանին մէջ և կը թողուն հոն։ Ցարութիւն առաւօտեան դէմ սթափած, ինչպէս հոն եկած ըլլալուն վրայ կը զարմանայ և հետևութիւնը խորհելով, կերպով մը փախուստ կուտայ Օտուն Փազար անուանեալ շուկան, սափրիչ Հաճի Գէորգին խանութը։ Ժամանակին Ապրօեան ընտանիքը՝ նշանաւոր և յամենայնի ազդեցութիւն ունեցող, տեսնելով որ Ցարութիւն այլ ևս հանգիստ պիտի չկարենայ գտնել, գիշեր ատեն գաղղիական նաւու մը վրայ տանիլ կուտայ։ Ցարութիւն նաւուն

I. տապանագիրն. ուղի սպառնալեալ.

*վրայ խորհելով որ իւր ընկերներն իրեն համար նեղութիւն պիտի կրեն, կ՚որոշէ ցամաք ելլել և երթալ թողութիւն խնդրել, ուստի իսկոյն ծովը կը նետուի և լողալով կը հասնի ցամաք։ Սակայն այս անգամ հաստատուն իւր հաւատքին վրայ, երբ ձեռք կ՚իյնայ՝ անվախ կը խոստովանի իւր քրիստոնէութիւնը, որուն համար անլուր տանջանքներու կ՚ենթարկուի։ Բայց երբ նա բնաւ չի լքանիր և չի վհատիր իւր կրօնքը խոստովանելէ, ի վերջոյ ենիչերիները կը տանին զինքը և Հիսար անուանեալ մզկիթին առջև կը գլխատեն։ Յառաջ քան իւր մահը, Յարութիւն կը խնդրէ որ իւր ճկոյթին մէկ ոսկրը խրկեն երկիրը իւր ծնողաց՝ իբր յիշատակ, զոր և կը կատարէ եղբայրն։ Գլխատումէն յետոյ ժամանակին Միւսէլլիմը, ընիկ Կարնեցի, լսելով որ Յարութիւն ևս Կարնեցի էր, հրաման կուտայ մարմինը վերցընելու, որուն վրայ Հայք կուգան և կը տանին կը թաղեն Ս. Ստեփանոսի պարտէզը։ Ժողովուրդը սովորութիւն ունի երբեմն երբեմն իւր գերեզմանին վրայ իւղալից լապտեր վառելու և աղօթքներ ընելու։*

*Յիշեալ տապանագիրն ու պատմական տեղեկութիւնը արտատպում ենք Քօսեանի «Հայք ի Զմիւռնիա և ի շրջակայս» աշխատութիւնից, տպ. Վիեննա,* 1899, *հատ. Ա. էջ* 98—100։

## Տաղ սուրբ Յարութիւն մանկանն որ նահատակեցաւ վասն հաւատոյ Բանին։

Սուրբ նահատակ, նոր տունկ ծաղիկ ես դու պատուական,
Վարդ, մանուշակ, տաշխ, կինամոն, նարկիզ և շուշան,
Կամաւ ետուր զանձն ի զենումն վասն արքայութեան։

Արթուն անուն սուրբ Յարութիւն, մանուկ պատուական,
Անոյշ հոտով լցեր զաշխարհս ի քիմս ամենայն,
Կամաւ մտեր ի քարակոյտ վասն արքայութեան։

Հոգիդ պայծառ, մարմինդ մաքուր՝ եդին ի զընդան,
Անդէն հանեալ քարկոծեցին զողկոյզդ աննըման.
Կամաւ ետուր զանձն ի զենումն վասն արքայութեան։

Ականատես զլոյսըն տեսին քաղաքն ամենայն,
Կամարաձև էր կառուցեալ տեղին կատարման.
Յամօթ եղեն ազգըն տաճկաց և անդէն կորեան։

Կական բարձին հաւատացեալքն և ուրախացան.
Ժողովեցին դրամըս հազար, գնացին առ փաշան,
Թէ տուր զմարմին անմեղ մանկան, զի դիցուք տապան։

Ես Վանեցի Սահակ դըպիր յարմարող տաղիս՝
Լուայ զհամբաւ գառնիկ մանկանըն սուրբ Յարութեան,
Վասն այն գրեցի ողբըս նորա ընորատընկոյս։

1. β վերնագիրն ունի այսպէս. «Տաղ Վանեցի Սահակ դպրի ասացեալ». 3. β պալասան փխ. պատուական. 5. β զանձդ ետուր զենում՝ փխ. ետուր զանձն ի զենումն. | β ձեռագրերի մէջ իւրաքանչիւր տան երրորդ տողի ծայրին նշանակուած է «կրկ.» նշանակում է որ տողը երգելիս պէտք է երրորդ տողը կրկնել. 6. β արդուն. | γθ արուի. փխ. յարութիւն. 7. β անուշ. | β և զքիմըս մարդկան փխ. ի քիմս ամենայն. 8. այս տողի տեղ γθ դնում են առաջին տան երրորդ տողը՝ «կամաւ ետուր զանձն ի զենումն վասն արքայութեան»։ 9. β եթին. 10. β ողկոյզդ. 11. β զանձդ ետուր զենում. 12. β լոյսըն. 13. γθ այս տողի ծայրին դնում են «կա.», որը չունի β. 16. β դրամ. 17. β զմարմինն. | β մանկանն. 20. β վերջին տողն այսպէս ունի. վասն այն գրեցի զպատիւ նորին և նորայրոյս անկին։

Digitized by Google

վրայ խորհելով որ իւր ընկերներն իրեն համար նեղութիւն պիտի կրեն, կ'որոշէ ցամաք ելլել և երթալ թողութիւն խնդրել, ուստի իսկոյն ծովը կը նետուի և լողալով կը հասնի ցամաք։ Սակայն այս անգամ հաստատուն իւր հաւատքին վրայ, երբ ձեռք կ'իյնայ՝ անվախ կը խոստովանի իւր քրիստոնէութիւնը, որուն համար անլուր տանջանքներու կ'ենթարկուի։ Բայց երբ նա բնաւ չի լքանիր և չի վհատիր իւր կրօնքը խոստովանելէ, ի վերջոյ ենիչէրիները կը տանին զինքը և Հիսար անուանեալ մզկիթին առջև կը գլխատեն։ Յառաջ քան իւր մահը, Յարութիւն կը խնդրէ որ իւր ճկոյթին մէկ ոսկրը խրկեն երկիրը իւր ծնողաց՝ իբր յիշատակ, զոր և կը կատարէ եղբայրն։ Գլխատումէն յետոյ ժամանակին Միւսէլլիմը, բնիկ Կարնեցի, լսելով որ Յարութիւն ևս Կարնեցի էր, հրաման կուտայ մարմինը վերցընելու, որուն վրայ Հայք կուգան և կը տանին կը թաղեն Ս. Ստեփանոսի պարտէզը։ Ժողովուրդը սովորութիւն ունի երբեմն երբեմն իւր գերեզմանին վրայ իւղալից լապտեր վառելու և աղօթքներ ընելու։

Յիշեալ տապանագիրն ու պատմական տեղեկութիւնը արտատպում ենք Քոսեանի «Հայք ի Զմիւռնիա և ի շրջակայս» աշխատութիւնից, տպ. Վիեննա, 1899, հատ. Ա. էջ 98—100։

Digitized by Google

*Տաղ սուրբ Յարութիւն մանկանն որ նահատակեցաւ վասն հաւատոյ Բանին:*

Սուրբ նահատակ, նոր տունկ ծաղիկ ես դու պատուական,
Վարդ, մանուշակ, տաշխ, կինամոն, նարկիզ և շուշան,
Կամաւ ետուր զանձն ի զենումն վասն արքայութեան:

Արթուն անուն սուրբ Յարութիւն, մանուկ պատուական,
Անոյշ հոտով լըցեր զաշխարհս ի քիմս ամենայն,
Կամաւ մըտեր ի քարակոյտ վասն արքայութեան:

Հոգիդ պայծառ, մարմինդ մաքուր՝ եդին ի զընդան,
Անդէն հանեալ քարկոծեցին զողկոյզդ անըման.
Կամաւ ետուր զանձն ի զենումն վասն արքայութեան:

Ականատես զլոյսըն տեսին քաղաքն ամենայն,
Կամարաձև էր կառուցեալ տեղին կատարման.
Յամօթ եղեն ազգըն տաճկաց և անդէն կորեան:

Կական բարձին հաւատացեալքն և ուրախացան.
Ժողովեցին դրամըս հազար, գնացին առ փաշան,
Թէ տուր զմարմին անմեղ մանկան, զի դիցուք տապան:

Ես Վանեցի Սահակ դըպիր յարմարօղ տաղիս՝
Լուայ զհամբաւ գառնիկ մանկանըն սուրբ Յարութեան,
Վասն այն գրեցի ողբըս նորա ընորատընկոյս:

1. β վերնագիրն ունի այսպէս. «Տաղ Վանեցի Սահակ դպրի ՝ասա-ցեալ». 3. β պալատան փխ. պատուական. 5. β զանձդ ետուր զենում՝ փխ. ետուր զանձն ի զենումն. | β ձեռագրերի մէջ իւրաքանչիւր տան երրորդ տողի ծայրին նշանակուած է «կրկ.» նշանակում է թէ տողը երգելիս պէտք է երրորդ տողը կրկնել. 6. β արդուն. | γθ արուի. փխ. յարութիւն. 7. β անուշ. | β և զքիմըս մարդկան փխ. ի քիմս ամենայն. 8. այս տողի տեղ γθ դնում են առաջին տան երրորդ տողը՝ «կամաւ ետուր զանձն ի զենումն վասն արքայութեան»: 9. β եթին. 10. β ողկոյզդ. 11. β զանձդ ետուր զենում. 12. β լոյսըն. 13. γθ այս տողի ծայրին դնում են «կա.», որը չունի β. 16. β դրամ. 17. β զմարմինն. | β մանկանց. 20. β վերջին տողն այսպէս ունի. վասն այն գրեցի զպատիւ Նորին և Նորայրոյս անկինս:

Սոյն տաղն ունին Վիեննայի Մխիթարեան Հարց մատենադարանի երեք ձեռագրերը. β (=156), էջ 17 ա—18 բ. γ (=160). θ (=514), էջ 101 բ. որոնց համեմատեալ արտագրութիւնը ստացել ենք մատենադարանապետ Հ. Բ. Պիլէզիկճեանից։

Տաղս լինելով զուտ գովասանական գրուածք և չունենալով ոչ մի պատմական—ժամանակագրական տեղեկութիւն (օր. նահատակի ծնած քաղաքը, նահատակութեան թուականը, տեղը ևն), չենք կարող որոշել թէ ո՞վ է այս Յարութիւն նահատակը. միայն նահատակին տրուած «մանուկ» ածականը կարծել է տալիս մեզ թէ նոյն է Կարնեցի Յարութիւն մանուկ նահատակի հետ։ β ձեռագիրը հինգերորդ տնից յետոյ ունի մի ամբողջ տուն ևս, որը պակասում է γθ ձեռագրաց մէջ. այդ տունն է՝

Սեբաստացի սուրբ Յարութիւն, Քառասունքն անդ կան,
Փափաքէիր վասն նոցին և նոցին տեսլեան,
Արժանացար խառնիլ ընդ դասս ի փառս անվախճան։

Բայց որովհետև Ս սկզբնատառը խանգարում է միւս տների սկզբնատառերի յօդած ՍԱՀԱԿԵ բառը, որը նախորդ տնի հետ միասին դառնում է ՍԱՀԱԿՍԵ, ուստի և կարծում ենք թէ այդ տունն ամբողջովին նոր դրչի յաւելուած է։ Այս յաւելումը եղած է Սեբաստիայում, տաղը յարմարեցնելով Սեբաստիայում նահատակուած Սեբաստացի Յարութիւն անուն անծանօթ մի նահատակի՝ որի նահատակութեան թուականը յայտնի չէ մեզ։

# III.

## ԳԱՍՊԱՐ ԿԱՐՆԵՑԻ

† 1810 յունիս 8 դշ.

## ՄԱՐԻԱՄ ԵՒ ՎԱՌՎԱՌԷ ԿԱՐՆԵՑԻՔ

† 1810 յուլիս 16 շբ.

Բարեպաշտ կոյսն Վառվառեա՝ էր յերկրէն Կարնոյ ի Դզնիկ գեղջէ՝ ի տանէն Զուրիկեանց, գեղեցիկ տեսլեամբ և նազելի, համեստ և երկիւղած յԱստուծոյ, և էր ամաց չորեքտասանից։ Եւ յառաջ քան զերիս ամս եղբարք կուսին խօսեցեալ էին հարսնացուցանել զնա ընդ միոյ ուրուք ի բնակչաց գեղջն, որ անուանեալ կոչի Ղուչճի։

Եւ իբրև մերձեցաւ ժամանակ հարսանեաց՝ ծնօղք և ազգականք փեսային եկին ի Դզնիկ նշանադրել զօրն հարսանեաց. և ըստ սովորութեան երկրին արարին հացկերոյթ։ Հրաւիրեցին անդր և զգլխաւորս այլազգեաց, և ոչ յիշեցին կոչել զիշխանն գիւղին։ Եւ զի էր նա այր ժանտ՝ ոխացաւ ի սրտի իւրում, և պարապոյ սպասէր չարիս հասուցանել նոցա։

Եւ քանզի մի ոմն յայլազգի երիտասարդաց՝ որ դրացի էր տանն Զուրիկեանց՝ տեսեալ զսրբուհին Վառվառեա՝ հարեալ էր ի վայելուչ գեղ երեսաց նորին, և զօր ամենայն հնարս խորհէր դարձուցանել զնա ի կրօնս իւր, և առնել ի կնութիւն։

Digitized by Google

Եւ յորժամ գիտաց թէ յայնոսիկ աւուրս հանդերձեալ են տանիլ զնա ի հարսնութիւն, հատաւ ամենայն յոյս նորա. և լցեալ սատանայական խորհրդով գնաց առ իշխանն գիւղին և ասէ. «Աղջիկն Զուրիկեանց ի բազմաց հետէ խոստացեալ էր ինձ դառնալ ի կրօնս մեր և ամուսնանալ ընդ իս». որում իրազեկ եղեալ եղբարց նորա՝ փութացան ամուսնացուցանել ընդ այլում ի համազգեաց իւրեանց ի գիւղն Ղուչճի։

Եւ նա ասէ. «Ե՛րթ այժմ և անհոգ լեր, և ես ածից զաղջիկն քեզ ի կնութեան»։ Զայս զգացեալ եղբարց սրբուհւոյն՝ ազդ արարին մերձաւորաց փեսային իւրեանց. և նոքա վաղվաղակի եկեալ տարան զՎառվառեա ի գիւղն իւրեանց։

Յայնժամ անօրէն իշխանն կոչեաց զամենայն այլազգիս գեղջն ի ժողով, և երիտասարդն զրպարտիչ բողոք բարձեալ բազմութեանն զնոյն բան երկրորդեաց, և ասէ. «Ո՛վ կրօնասէրք, արարէք զոր ինչ կրօնն մեր և իրաւունք օրինադրեն»։ Եւ վաղվաղակի միաբանեցան ամենքեան՝ և երդմունս կռեցին դարձուցանել զաղջիկն ի կրօնս իւրեանց և տալ այլազգւոյն. և այս յաւէտ ի հրապուրանաց իշխանին, որ կամէր քինախնդիր լինել։

Եւ տարածեցաւ համբաւս այս չար ընդ ամենայն գիւղն, և եհաս մինչև յականջս կուսին։ Եւ տեսեալ նորա զվտանգն մեծ որ առաջի կայր, առժամայն դիմեաց յեկեղեցին. և լալագին դիմօք, ի ծունկս անկեալ աղօթեաց առ Աստուած ցօգուտ ժամս. և բարւոք խոստովանութեամբ հաղորդեցաւ ի մարմնոյ և յարենէ կենարարին. և զինուորեալ զգեղեցիկ զինուորութիւնն՝ դարձաւ ի տուն։

Իսկ այլազգիք ամբոխ արարեալ գնացին ի Կարին առ բդեաշխ քաղաքին Բահրամ փաշայ, և բողոքեցին ըստ բանիցս այսոցիկ, և խնդրեցին առնել իրաւունս ըստ օրինաց իւրեանց, և տալ զաղջիկն ի կնութիւն այլազգւոյն։ Եւ նա առաքեաց արս և ածին զՎառվառեա. եկին

Digitized by Google

ընդ նմա և երկու ոմանք ի հայկազանց դեղջն, և արկին զերեսեան ի բանդի. և առեալ տուգանս ի գիւղականացն՝ արձակեցին զնոսա։

Հրամայեաց և հանին զկոյսն յատեան. եհարց ցնա և ասէ. «Ա՛ղջիկ դու, ասա ինձ զճշմարիտն. հաճեա՞լ իցես կանխաւ և խոստացեալ ամուսնութեամբ լծակցիլ ընդ այլազգի երիտասարդին»։ Եւ նա խոնարհութեամբ ետ պատասխանի և ասէ. «Տէր իմ, սուտ զրպարտութիւն է այդ զոր ասեն. ես ոչ բնաւ խօսեցեալ եմ ընդ նմա, և ոչ ևս խորհեալ ի մտի»։ Ասէ ցնա բդեշխն ողոքանօք. «Տեսանեմ զքեզ օրիորդ շնորհաշուք և գթած. եկ դարձիր յօրէնս մեր և ամուսնացիր»։ Եւ խոստանայր նմա բազում պատիւս և պարգևս. զնոյն ասէին և մեծամեծք որ բազմեալ էին ընդ նմա։ Ասէ երանելի կոյսն. «Եթէ բիւր պարգևս և պատիւս ինձ տայք, ամուսնանալ ընդ այլազգւոյն ոչ երբէք առնում յանձն. թէև մասն մասն կտրատիցէք զիս, զհաւատսն Քրիստոսի զոր ունիմ ի մանկութենէ անտի՝ ոչ ուրացայց»։

Ցայնժամ բդեշխին խորհրդակցութեամբ մեծամեծաց յանձն արար զկոյսն դանիշմանին մեծի, զի որով և իցէ կերպիւ հնարեսցի դարձուցանել զնա յօրէնս իւրեանց։ Եւ տարեալ ի տուն՝ բազում ողոքանօք խրատ տայր նմա դառնալ ի հաւատոց՝ և ամուսնանալ ընդ այլազգւոյն։ Նոյնպէս և կին և զաւակք իւր յորդորէին, և կերակուրս համադամս ածէին, և խոստանային զմեծամեծս։

Իսկ սրբուհի կոյսն զայս միայն ասէր. «Եթէ զամենայն մեծութիւն և զփառս աշխարհիս ինձ տայք՝ ոչ ամուսնանամ ընդ այլազգւոյն. և եթէ զամենայն մարմինս իմ յօշատիցէք, ոչ ուրացայց զհաւատս իմ»։ Իբրև ետես դանիշմանն եթէ զամենայն խրատ իւր արհամարհէ, և անխախտ կայ ի քրիստոնէութեան, հրաման ետ դահճաց և մերկացուցին զՎառվառեա։ Եւ կապեալ զձեռս և զոտս նորա, դալար բրօք ձաղկեցին զնա ժամս ձիգս, և արիւն յորժ հոսէր ի մարմնոյ նորա. և յորժամ կիսամեռ եղև,

տարեալ արկին ի բանդ։ Իսկ նա անդադար աղօթիւք աղաչէր զԱստուած զօրացուցանել զնա զի համբերել կարասցէ․ և այս եղև սկիզբն չարչարանաց նորա։

Եւ ապա ետ հանել զնա ի պարտէզն իւր որ կոչի եազլըխ, և էր ձմեռն սաստիկ յոյժ, և շնչէր հողմն բքաբեր։ Եւ տարեալ կախեցին զսրբուհի կոյսն զհիւսից հերացն ի վերայ լճակին որ էր ի պարտիզի անդ․ և սրունկք նորա մինչև ի ծունկսն կայր մխեալ ի ցրտագին ջուր լճակին։ Եւ մնաց կախեալ անսուաղ զօրն ողջոյն և զգիշերն ամենայն․ և գոհանայր և օրհնէր զԱստուած։

Եւ ի գիշերին յայնմիկ տեսիլ երևեցաւ պահեկաց՝ որք յանկեան ուրեք պարտիզին նստեալ զգուշանային նմա, զի վառեալ կային մոմեղէնք շուրջ զկուսիւն, և ծեր մի փառաւոր մերձ կացեալ խօսէր ընդ նմա։

Եւ անդէն զահի հարեալ մտին խուճապաւ ի տունն, և պատմեցին զնշանսն զոր տեսին։ Եւ առժամայն դանիշմանն՝ և այլքն ամենայն որ էին անդ՝ դիմեցին ի պարտէզն, և ոչ այլ ինչ տեսին, բայց միայն զի ջուրք լճակին չէին սառուցեալ, յորժամ այլ ամենայն ջուրք պնդացեալ էին սառուցիւք․ և գոլորշի ևս իբրև յեռանդուն կաթսայէ ելանէր ի նմանէ։

Ընդ այս ապշեալ ահիւ մեծաւ ընտանիք դանիշմանին՝ աղաչեն զնա և ասեն․ «Հեռացո՛ զաղջիկդ ի տանէ մերմէ, զի ո՛չ փոքր ինչ էր նշանն զոր լուաք և զոր աչօք տեսաք․ գուցէ երկնառաք հարուածս թափեսցուք ի վերայ մեր»։ Իսկ նա լի ցասմամբ արհամարհեալ զբանս նոցա՝ զայլ ևս դժնդակ տանջանս հնարէր ի վերայ ածել։ Եւ իջուցեալ ի կախաղանէն՝ ընկեցին ի բանդի․ և յետ աւուրց ինչ իբրև փոքր մի ոգի էառ, մերկացուցին զնա միւսանգամ և ձաղկեցին։ Այս ձաղկանք կարծրագոյն էին քան զառաջինն, զի անկաւ անշնչացեալ մինչև կարծել բազմաց թէ մեռաւ։

Եւ ապա հրամայեաց և հրացեալ պայտս ձիոյ եդին ի վերայ կրծոց նորա․ բայց առ հրով սիրոյն զոր ունէր

ի սրտի առ Քրիստոս՝ ցրտագոյն թուէին նմա չանթքն։ Ապա եւ նստուցանել ի կաթսայ ինչ մեծ երկաթի՝ որ կայր պատրաստեալ ի վերայ տանեաց հրոյ լի սառուցեալ ջրով, և եդին դազախ հրախառն ի վերայ սրտի նորա, և թողին անդ զգիշերն ողջոյն ի բացի։ Բայց վկայն Քրիստոսի իբրև ի փափուկ բաղանիս հեշտանայր ի նմա, և զկայծակունսն իբրև զփունջս վարդից կրէր ի ծոցի։

Եւ ապա հրամայեաց և հրացուցին սաղաւարտ երկաթի և ագուցին ի գլուխ նորա։ Իսկ կոյսն սուրբ իբրև զպսակ ականակապ ընդունէր զայն, ի նշանակ երկնաւոր անթառամ պսակին որում փափագէր։

Տեսեալ դանիշմանին թէ որչափ ինքն սաստկացուցանէր զտանջանս, նոյնչափ կոյսն սուրբ ամրանայր ի հաւատսն, և ոչ բնաւ լքանէր, ահ կալաւ զնա և ասէ. «Արդարև խնամք աստուածայինն գոյ ի սմա, զոր ես յանդէտս թշնամանեմ. ապա թէ ոչ՝ վաղու ևս մեռեալ էր յահագին տանջանացն զոր ածի զնովաւ»։

Նա՝ զի և կին իւր զօր ամենայն թախանձէր զնա՝ յուշ առնելով զտեսիլն պահեկաց, մինչև խնդրել ի նմանէ տալ զգիր արձակման իւրոյ ի կապոյ ամուսնութեան՝ եթէ ոչ արձակեսցէ զկոյսն ի տանջանաց, և ձեռնթափ լինիցի յիրաց անտի նորա։ Քանզի և կինն բարեսիրտ ոք էր, և ի ծածուկ խնամ տանէր կուսին՝ կերակրէր և դարմանէր, գիտելով քաջ թէ տարապարտ չարչարի։

Յայնժամ յարուցեալ գնաց դանիշմանն և ծանոյց բդեշխին, թէ չկարաց հաւանեցուցանել զաղջիկն ոչ քաղցրութեամբ և ոչ բռնութեամբ. և աղաչեաց ի բաց հանել զնա ի տանէ իւրմէ։ Եւ նա հրամայեաց և ածին անդրէն զՎառվառէ. և յետ բազում հարցափորձի՝ իբրև եգիտ զնա պնդագոյն ի սէրն Քրիստոսի, յանձնեաց զնա այլոյ ումեմն դանիշմանի՝ զի փոյթ կալցի հաւանեցուցանել։

Եւ նա տարեալ ի տուն իւր՝ եցոյց նմա մարդասի-

29. տպ. հարձափորձի.

րութիւն, և քաղցրութեամբ խրատ տայր դառնալ ի կրօնս իւրեանց՝ և ամուսնանալ ընդ այլազգւոյն. յայտ արարեալ զչարաչար մահն որ առաջի կայր նմա՝ եթէ դժկամակ լինիցի։ Եւ եկաց երանելի կոյսն ի տան նորա զաւուրս բազումս տկարութեամբ մարմնոյ՝ անմեկնելի ի սիրոյն Քրիստոսի։

Իբրև տեսին ոստիկքն կուսին՝ եթէ առանց խոշտանգանաց մնալով ոչ երբէք հաւանեսցի, միւսանգամ բողոքեցին յատենին։ Եւ հրամայեաց բդեշխն և ածին զկոյսն, և ահագին սպառնալեօք ստիպէր դառնալ ի կրօնս իւրեանց և ամուսնանալ։ Իսկ կոյսն սուրբ առանց ինչ երկիւղի ասէ. «Ոչ բնաւ հնազանդելոց եմ հրամանի ձերում՝ որ կամիք հանել զիս ի հաւատոցն Քրիստոսի, և ոչ երբէք զանգիտեմ ի տանջանաց և ի մահուանէ՝ զոր սպառնայք ածել ի վերայ իմ. աւանիկ առաջի ձեր եմ. արարէք որպէս և կամիք»։

Յայնժամ բդեշխն ապշեալ ընդ անվեհեր պատասխանի կուսին՝ ասէ ցմեծամեծսն. «Զմի ինչ խորհեալ է իմ՝ և զայն կամիմ առնել». և ծանոյց նոցա զայն, և ամենեքին հաւանեցան։ Եւ ասէ. «Ա՛ղջիկ դու, վասն քո զիր ինչ խորհեալ եմ, և զայն հարկաւ պարտիս ընդունել. ահա այժմ առաքեմ զքեզ ի տուն այլազգւոյն իբրև հարսն Վառվառ անուամբ, և կացցես անդ քոյին կրօնիւքդ»։

Զայս լուեալ տխրեցաւ յոյժ. և մինչ խորհէր ընդ միտս տալ պատասխանի, դանիշմանն որ էած ի տանէ իւրմէ զկոյսն, աղաղակեաց՝ «հաճեցաւ աղջիկն հաճեցաւ». զնոյն ասէին և ամենայն բազմութիւնն և ըստ ակնարկելոյ բդեշխին վաղվաղակի արտաքս հանին զնա յատենէն։ Եւ թէպէտ աղաղակէր կոյսն՝ «ոչ կամիմ, ոչ հաճիմ», բայց վայրապար, զի ի ձայնէ խուժանին ոչ ոք էր որ լսէր նմա։

Եւ վաղվաղակի ամբոխն այլազգեաց ածին զառագաստ հարսանեաց ըստ սովորութեան իւրեանց դենին։

Digitized by Google

Եւ զկոյսն բռնութեամբ մուծեալ անդր՝ առեալ տանէին ծափաձայն ցնծութեամբ՝ որպէս թէ մեծ ինչ յաղթութիւն գործեալ իցեն։

Իսկ սուրբ կոյսն կոծէր զանձն իւր, և լալագին պաղատանօք զԱստուած կոչէր յօգնականութիւն՝ ազատել ի ձեռաց նոցա։ Զայս արար բդեշխն՝ զի հաճեսցէ զմիտս ամբոխին. և որպէս խոստացաւն յատենի՝ առաքեաց հրամանագիր առ կոյսն, թէ Վառվառեա անուամբ հարսնացաւ այլազգւոյն՝ պահելով զհայրենի կրօնն իւր։

Եւ այլազգիք մեծահանդէս պարերգութեամբ տարան զնա ի Դվինիկ՝ ի տուն այլազգւոյն. և նա յերեկոյին եկն առ կոյսն ի սենեակ առագաստին, և բազում բանիւք ողոքանօք և խոստմամբ պարգևաց ջանայր հաճել զկամս նորա և ննջել ընդ նմա։ Բայց նա արհամարհէր զամենայն բանս նորա և զխոստմունսն, և ոչ իսկ թողոյր հուպ մատչիլ առ ինքն։

Եւ քանզի յանհնարիցն եղև այլազգւոյն քաղցրութեամբ յինքն յանկուցանել զնա, ձգեաց զձեռն զի բռնութեամբ կատարեսցէ զկամս անօրէնութեան իւրոյ։ Իսկ սրբուհի կոյսն զօրացեալ ի վերին օգնականութենէ՝ ընդդէմ դառնայր նմա, և իբրև ըմբիշ արի յամենայն նուագի զգետնէր զայրն կորովի՝ իբրև զմանուկ մի տկար։

Եւ ընդ առաւօտն տեսեալ մերձաւորաց երիտասարդին՝ եթէ անկարելի է նուաճել զաղջիկն սիրով սկսան նեղել զնա. երբեմն դանակօծ առնէին, և երբեմն բռնցի և աքացի հարկանէին և ապտակէին. երբեմն անսուաղ պահէին, և երբեմն կապանօք ոտից ի ծանր աշխատանս տառապեցուցանէին իբրև գերի. իսկ նա համբերութեամբ տանէր ամենայնի՝ վասն սիրոյն Քրիստոսի։

Եւ հայեցեալ զի և բռնութեամբ ոչ կարացին ի հաւանութիւն ածել՝ խորհեցան միւսանգամ ողոքել։ Եւ յաւուր միում կարծելով թէ հաճեալ իցէ՝ մուծին անդրէն յառագաստն, և կոյսն հանճարեղ՝ կամելով պատրել զայ-

18. ապ. հանկուցանել.

լագգին՝ զուարթադէմ և յօժարամիտ զինքն եցոյց, և ետ ըմպել նմա գինի և արբեցոյց՝ մինչ յանգգայս լինել նմա։

Եւ զհատարակ գիշերաւն մինչդեռ ամենեքին որ ի տանն էին խոր ի քուն ննջէին, որպէս թէ ի վերին տեսչութենէ անկեալ իցէ զնովաւ թմբրութիւն, կոյսն սուրբ կնքեալ զինքն նշանաւ խաչին՝ եբաց զդուրսն. և լռելեայն փախուցեալ ի տանէ անտի՝ եհաս ի գետ մի մեծ՝ որ ընդ այն անցանէր. և թաքեաւ ի ներքոյ կամրջին զերիս տիւս և զերիս գիշերս անտես ի մարդկանէ, ակնկալեալ այցելութեան Տեառն։

Եւ ընդ առաւօտն տեսեալ նոցա թէ չէ անդ աղջիկն՝ խռովեցան յոյժ, և ցասմամբ մեծաւ եկին առ եղբարս նորա և առ դրացիս, և խնդրէին ի նոցանէ զաղջիկն, որպէս թէ նոքա փախուցեալ իցեն։ Եւ նոքա ասեն. «Ի տանն ձերում խեղդամահ արարեալ զնա, այժմ ի մէնջ խնդրէք»։ Երկուցեալ նոցա ի բանիցս յայսցանէ՝ լուռ եղեն առ ժամն, բայց ոխս քինու պահեցին ի սրտի իւրեանց։ Եւ արձակեալ յուղարկս ի գիւղորէս՝ խնդրէին զնա և ոչ կարէին գտանել։

Նոյնպէս և եղբարք կուսին յուզախնդիր՝ լինէին ի բազում տեղիս. և յետ երեց աւուրց մի յեղբարց նորա որում անուն էր Գասպար՝ գտանէ զնա ի ներքոյ կամրջին յաղօթս։ Եւ սպասեալ գիշերոյ՝ շալակեալ տանի գաղտագողի ճանապարհաւ ի քաղաքն Կարին՝ ի տուն բարեպաշտ կնոջ միոյ Մարիամ անուն, և փութանակի դառնայ ի Դիզնիկ՝ զի մի ոք գիտասցէ։

Եւ նա կերակրէ զՎառվառեա՝ որ կայր անսուաղ զաւուրս երիս. և թաքուցանէ ի մթին ինչ տեղի ներքնափոր. ուր եկաց առաւել քան զաւուրս քառասուն՝ իբրև ի մշտագիշեր բանդի, հանապազորդեալ ի պահս և յաղօթս անտանելի ճգնութեամբ։

Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ փոխեցաւ բդեշխն Բահրամ փաշայ, և եկն Իպրահիմ փաշայ՝ այր խրոխտ և սէգ, և եմուտ ի քաղաքն մեծաւ ամբոխիւ։ Ցայնժամ

ստախքն կուսին պատրաստեցան թուղթ ամբաստանութեան մատուցանել զՀայոց, որպէս թէ փախուցեալ իցեն զհարսն իւրեանց։ Զայն իմացեալ Հայոց՝ փութացան զառաջս առնել չարեացն. և յառաջ քան զայլազգիս՝ մատուցին թուղթ ամբաստանութեան, բողոք բարձեալ զնոցանէ թէ «Ինքեանք անհետ արարին զաղջիկն, և առ ի ծածկել զիրսն՝ զրպարտեն զմեզ թէ նոքա փախուցին»։ Եւ բդեշխն առաքեալ զօրականս՝ էած զայլազգիս և արգել ի բանդի, և տուգանս առեալ արձակեաց։ Եւ նոքա ի մի վայր ժողովեալ՝ խորհուրդ արարին, և երթեալ թուղթ ամբաստանութեան մատուցին, թէ Հայք գիշերայն փախուցին զաղջիկն՝ զի մի՛ դարձցի ի կրօնս մեր։

Եւ խնդութեամբ ընկալեալ զթուղթն, առաքեաց արս յերիս գիւղս և կալան զՀայս. զոմանս կապանօք և զոմանս գանիւք ածին առաջի։ Եւ ասէ ցնոսա սպառնալեօք. «Ո՛վ չարք, դո՛ւք էք փախուցեալ զաղջիկն, և զայլազգեաց գանգատէք. գիտասջի՛ք զի զամենեսին զձեզ չարաչար սպանանեմ, եթէ ոչ հանջի՛ք յերևան». և ետ դնել զնոսա ի բանդի։ Եւ բանդապետն պնդեաց զոտս նոցա ի կոճեղս, և արկ շղթայ ի պարանոցս նոցա։ Բայց զեղբայր կուսին զԳասպար առաւել քան զամենեսին խոշտանգէին, բրածեծ առնէին, անքուն և անսուաղ պահէին։

Զայս ստէպ ստէպ առաջի իւր կոչէր բդեշխն, և սպառնայր նմա գտանել զաղջիկն. և նա միշտ զայս առնէր պատասխանի, թէ «Աղջիկն ի տան այլազգւոյն էր. նոքա ասասցեն թէ զինչ արարին»։ Եւ յաւուր միում ասէ ցնա բդեշխն. «Գիտեմ, ո՛վ դու, չի՛ք քեզ հնար ապրանաց, բայց եթէ ուրացեալ զհաւատս քո դարձցիս ի կրօնս մեր»։

Պատասխանի ետ վկայն Քրիստոսի և ասէ. «Քա՛ւ լիցի ինձ թողուլ զհաւատսն Քրիստոսի, զոր ունիմ ի մանկութենէ, և դառնալ ի կրօնս ձեր. բայց զի սպառնաս ինձ մահ, պատրաստ եմ մեռանիլ ի կեանս աշխարհիս զի կեցից ի յաւիտեան»։

Digitized by Google

Ընդ այս բարկացեալ բդեշխին՝ հրամայեաց հանել զնա ի կախաղան, և փաղփաղակի շուրջ պատեալ դահճաց՝ ձգեցին արտաքս. և կապեալ զձեռս նորա յետս՝ տանէին ի տեղին կատարման մերկ և բոկ և գլխիբաց։ Եւ ամբոխն զկնի ընթացեալ՝ ստէպ ստէպ յորդորէին զնա դառնալ ի հաւատոցն և ապրել։ Իսկ նա աղաղակէր. «Ես քրիստոնեայ եմ և զՔրիստոս Աստուած պաշտեմ, և զայլ ոք ոչ ճանաչեմ»։

Եւ ածին զնա առ արտաքին դուռն եկեղեցւոյն. և դահիճն ձգեալ ի վերուստ զպարանն մահու, խրատ տայր դառնալ ի կրօնս իւրեանց և ապրել։ Իսկ վկայն Քրիստոսի զաչսն յերկինս համբարձեալ՝ գոչեաց. «Տէր Յիսուս, քեզ յանձն առնեմ զհոգի իմ»։ Եւ եմոյծ զգլուխ իւր ընդ խեղդն. և այսպէս բարւոք խոստովանութեամբ աւանդեաց զհոգին իւր՝ յունիսի Ը. յաւուր չորեքշաբաթու։

Եւ զերիս գիշերսն յորս եկաց ի կախաղանին՝ լոյս ծագեաց ի վերայ նորա, և փարէր զբոլոր մարմնովն։ Եւ ապա քրիստոնեայք հրաման առեալ ի բդեշխէն՝ տարեալ թաղեցին զնա։ Եւ ի նմին գիշերի տեսին վերստին լոյս պայծառ իջեալ յերկնից ի վերայ գերեզմանի նորա. և ուրախացեալ փառս ետուն Աստուծոյ։ Եւ ապա բազում տուգանս առեալ յերից գիւղից՝ արձակեաց զկապեալսն։

Իսկ կոյսն սուրբ որ կայր թաքուցեալ ի տան Մարիամայ, զկապանաց և զմահու եղբօր իւրոյ ինչ ոչ գիտէր, զի ոչ ոք երթեւեկս առնէր առ նա. բայց զայս միայն՝ թէ այլազգիք հետախոյզ են ինքեան, վասնորոյ և զգուշանայր անձին։ Եւ յաւուր միում մինչդեռ Մարիամ կերակրէր զկոյսն, կին ոմն այլազգի ի դրացեաց նորա՝ որ կարծիս ունէր զկուսէն թաքուցեալ ի տան նորա, յանկարծակի եմուտ անդր և ետես զնա. և առժամայն ընթացեալ ազդ արար բդեշխին։ Եւ հասեալ վախտ աղասին զօրականօք՝ կալան զՎառվառեա և զՄարիամ, և տանէին զնոսա ստիպաւ։

Եւ ի ճանապարհին սուրբ կոյսն քաջալերէր զվանա-

տուր իւր զՄարիամ՝ մի՛ ինչ զանգիտել ի սպառնալեաց բռնաւորին, և յետս ընկրկել ի պսակէ մարտիրոսութեան. այլ առօրեայ կենօք՝ գնոյ առնուլ զկեանսն յաւիտենից։

Եւ իբրև ածին յատեան, եհարց բդեշխն զՄարիամ խոժոռ դիմօք և ասէ. «Կի՛ն դու, ընդէ՞ր թաքուցեր զաղջիկն ի տան քում»։ Եւ նա յահէն զդողանի հարեալ՝ կարկեցաւ գլխովին, և ոչ կարաց տալ պատասխանի։ Ապա հրացայտ աչօք հայեցեալ առ կոյսն՝ ասէ. «Ա՛ղջիկ դու, յառաջագոյն զդենն մեր ընկալեալ ես, և ընդէ՞ր արհամարհեալ զայն փախեար»։

Եւ պատասխանի կոյսն սուրբ աներկիւղ համարձակութեամբ. «Սուտ զրպարտութիւն է այդ. ես ո՛չ երբէք ընկալեալ եմ զդենն ձեր, այլ իմով հաւատովս էի ի տան այլազգւոյն»։ Եւ հանեալ եցոյց զհրամանագիրն Բահրամ փաշային, և աղաղակեաց. «Վառվառ է անուն իմ. ես քրիստոնեայ եմ, մեռանիմ ի վերայ հաւատոցս, և ոչ լինիմ այլազգի»։

Յայնժամ բդեշխն յանձն արար զՎառվառ դանիշմանի ումեմն ուսուցանել զնա և խրատել. և զՄարիամ առաքեաց ի տուն երիցուն։ Եւ դանիշմանն տարեալ զնա ի տուն իւր՝ պահեաց յանդորրու, և զօր ամենայն յուշ առնէր նմա զանհրաժեշտ մահն եթէ անհաւան գտանիցի, և զմեծամեծ պարգևսն՝ եթէ հնազանդեսցի հրամանաց բդեշխին. և գուն գործէր հանել զնա ի հաւատոցն Քրիստոսի։

Իսկ նա որ գլխովին զգեցեալ էր զՔրիստոս, և պատսպարեալ վահանաւն հաւատոյ, անդծելի եկաց յամենայն թունաւոր նետից հակառակամարտից. և եռայր հոգւով և աղօթիւք խնդրէր յԱստուծոյ արժանի առնել վկայական մահուան։ Տեսեալ դանիշմանին զհաստատութիւն մտաց կուսին՝ ծանոյց բդեշխին. և ետ նա ածել առաջի իւր զՎառվառեա և զՄարիամ, և սաստիկ բար-

27. տպ. եկած.

կութեամբ և սպառնալեօք մահու՝ ետ դնել զնոսա ի բանդի։

Անդ Մարիամ լայր հեկեկանօք և կոծէր զանձն. ոչ եթէ դժկամակ էր մեռանիլ վասն Քրիստոսի, քանզի և նա յորդորեալ ի բանից կուսին ցանկայր մարտիրոսութեան, այլ զի յիշէր զորդիս իւր, թէ գուցէ և նոքա մատնեսցին ի ձեռս այլազգեաց, և յերկիւղէ մահուն անկցին ի հաւատոց։ Յայնժամ լցեալ կուսին շնորհօք Սուրբ Հոգւոյն, հայեցաւ յերեսս Մարիամայ և ասէ. «Տիկին բարի, քաջ գիտեմ զի ի պատճառս իմ ըմպելոց ես զբաժակ մահուն. բայց դու մի՛ համարիր զայն վասն իմ, այլ վասն սիրոյն Քրիստոսի, որ վասն մեր զանտանելի չարչարանս և զմահ ած յանձն։ Մերս այս մահ՝ շնորհ մեծ է յաստուածուստ մեզ տուեալ. որում թէպէտ բազումք ցանկան՝ այլ սակաւք արժանանան. գոհասցուք զՏեառնէ՝ որ արժանի արար զմեզ այսմ մեծի շնորհացս։ Իսկ վասն զաւակաց քոց մի՛ ինչ հոգար. այլ յանձն արա զնոսա Աստուծոյ, և նա հոգասցէ վասն նոցա, և դու եկ զկնի իմ. զի ահա հասեալ կամք առ դուրս ապարանից երկնաւոր արքային, փութասցուք մտանել ընդ նա յուրախութիւն յաւիտենական»։

Եւ Մարիամ մխիթարեալ ի հոգեբուխ բանից Վառվառեայ՝ սրբեաց զարտասուս յաչաց, և զհոգս որդւոց իւրոց ապապարեալ երկնաւորին խնամոց՝ վառեցաւ սիրովն Քրիստոսի։ Եւ այնուհետև ո՛չ զորդիս յիշէր, և ոչ ի յղութիւն իւր ակնարկէր՝ որ մերձ էր ի ծնանիլ. այլ միշտ զերկնայինսն խորհէր։ Եւ որչափ մնացին ի բանդի անդ՝ աղօթէին ի միասին ուրախութեամբ, և խօսակից լինէին զյաւիտենական կենացն և զփառացն արքայութեան։

Եւ յետ աւուրց ինչ հրամայեաց բդեաշխն և ածին առաջի զերկոսին սրբուհիսն։ Յառաջ կոչեաց զՎառվառ և ասէ. «Ա՛ղջիկ դու, քեզ ասեմ. ընկա՛լ վերստին զդենս մեր և կեցցես. ապա եթէ կամակորեալ ընդդէմ դարձցիս,

Digitized by Google

զքեզ և զվանատուր քո այդ կորուսից այժմ չարաչար մահուամբ»։

Աղաղակեաց կոյսն. «Մեք քրիստոնեայ եմք և վասն Քրիստոսի մեռանիմք. ոչ երբէք ընկալայք և ոչ բնաւ ընդունիմք զդենն ձեր. արա զոր ինչ առներոց ես ընդ մեզ»։

Յայնժամ բռնաւորն լի եղև բարկութեամբ և ասէ. «Արկէք զսոսա ի բանդ՝ զի հանցին ի կախաղան»։ Գոչեաց կոյսն սուրբ. «Ես ոչ եմ պոռնիկ՝ զի ի կախաղան հանցեն, այլ կոյս եմ ամբիծ. թող զլխատեսցեն զիս». զի ցանկայր արեամբ մարտիրոսութեան։

Եւ դահիճքն տարան զնոսա ի բանդ. և հատաւ ի վերայ նոցա վճիռ մահու։

Եւ ի նմին աւուր յութերորդ ժամու գիշերոյն հանեալ զնոսա ի բանդէն՝ տանէին ի դուռն սուրբ Աստուածածին եկեղեցւոյն, զի անդ հրամայեալ էր կախել. և երթային սուրբքն երկոքին ուրախութեամբ բազմաւ՝ որպէս ի հարսնութիւն որդւոյ թագաւորի։ Եւ յորժամ հասին ի տեղին, աղաչեաց Վառվառեա զդահիճն՝ զի նախ կախեսցեն զՄարիամ և ապա զինքն. թերևս կասկածեալ՝ թէ գուցէ երկուցեալ նորա յահագին տեսլենէ մահուան իւրոյ՝ դրդուեսցի ի հաւատոցն՝ զոր մինչև ցայն վայր ունէր հաստատուն։

Եւ իբրև կախեցին զՄարիամ, երանելին Վառվառեա համբարձ զաչս իւր յերկինս և աղաղակեաց. «Տէր Յիսուս՝ որ հաճեցար ընդունիլ և զայս վերջին պտուղ օրհնութեան ի բերանոյ իմմէ, հաճեա՛ց աղաչեմ խառնել զիս ի պարս վկայից քոց սրբոց։ Գոհանամ զքէն, բարերար, որ փառաւորեցեր զիս յերկրի այսպիսի փառաւոր մահուամբ, փառաւորեա՛ և յերկինս յաւիտենական փառօք»։ Եւ ապա զուարթ դիմօք մատոյց ինքնին զգլուխ իւր ի խեղդն. և դահիճքն կախեցին զնա անդէն առ դրամբք եկեղեցւոյն փոքր մի հեռի ի Մարիամայ։

21. տպ. ի հաւատոցըն.

Կատարեցան երկոքին վկայուհիքս՝ ի Թուին Հայոց հազար երկու հարիւր և վաթսուն, և յուլիսի ԺԶ, յաւուր շաբաթու։ Եւ գլխաւորք Հայոց միջնորդութեամբ մեծամեծացն այլազգեաց, ի նմին աւուր հրամանաւ բդեշխին իջուցին ի կախաղանէն. և ի վաղիւն մեծահանդէս յուղարկաւորութեամբ և երգօք հոգեւորօք թաղեցին զնոսա ի գերեզմանս նահատակաց։

Եւ յայնմ եօթնեկի յամենայն գիշերի լոյս ճաճանչաւէտ ցոլանայր յերկնից ի վերայ տապանի սրբոցն, որում ականատես եղեն ոչ միայն քրիստոնեայք, այլ և այլազգիք բազումք, և վկայէին զանմեղութենէ նոցա։ Եւ բազում նշանք բժշկութեան եղեն յայնժամ, և լինին մինչև ցայսօր ի տապանէ սրբոց վկայիցս՝ ի նեղեալս, և ի դիւահարս, և յախտաժէտս ի փառս Քրիստոսի։

Զփառաւոր նահատակութենէ բարեյաղթ վկայիցս Քրիստոսի գրեցին արք արժանահաւատք քաղաքակիցք սրբոցս, տէր Մատթէոս քահանայ, և Հաննէ վարժապետ քաղաքին, և պարոն Կարապետ որդի Յակոբայ իշխանի Մամիկոնեան։ Յորոց և մեք առեալ եդաք աստանօր ի յիշատակ յաւիտենական։

Յիշեալ վկայաբանութիւնն ունի միայն Յայսմ. Գ. տպ. Ա. հատ. 278″—285″, յունիս 30 և մարգաց ԻԴ, երկոտասան առաքելոց վկայաբանութիւնից յետոյ՝ այս վերնագրով. «Ի սմին վկայութիւն Սըրբուհւոյ կուսին Վառվառեայ նոր վկայուհւոյ, և եղբօր նորին Գասպարայ, և աղախնոյն Քրիստոսի Մարիամայ։»

Վկայաբանութեանս վերջին վեց տողերը՝ որոնք Յայսմաւուրքի հրատարակչի կողմից են, ցոյց են տալիս թէ ովքե՞ր են այս վկայաբանութեան հեղինակները. և որովհետև վկայաբանութիւնը ուրիշ տեղից

ծանօթ չէ, ուստի պէտք է ենթադրել թէ հեղինակները նոյնը յատկապէս Ցայսմաւուրքի Գ. տպագրութեան համար են գրել և նամակի ձևով ուղարկել հրատարակչին։

Գասպար, Մարիամ և Վառվառէ նահատակների մասին է նաև յաջորդ ընդարձակ տաղը։

*Իբր յառաջաբանութիւն·*

Ինքնաբուն պետական ամենաբարին
Քրիստոս Աստուած մեր արքայն երկնային՝
Վասըն փըրկութեան մարդկայնոյ ազգին՝
Պատարագեցաւ ի վերայ խաչին։

Հետեւեալ նըմա վըկայն առաջին՝
Սուրբն Ստեփաննոս նախապատուղ խաչին,
Ցայն շաւիղ յորդեալ բիւր ջոկ ընդ բիւրին՝
Մարտիրոսք զարիւնս իւրեանց որք հեղին։

Երջանիկ նահատակք չարին յաղթեցին,
Զարչարմամբ մարմնոյ ըզմահ յանձն առին,
Որ գըրեալ եղեւ պատմութիւն նոցին,
Իսկ և բազմացըն անյայտ մընացին։

Ներ յետին դարուս՝ յայս ձըմեռնային,
Սիրասպառ ժամու՝ տիր ցամաքային,
Վերաբուսան վարդք՝ յոյժ գեղեցկագին,
Անուշահոտ իսկ և կարմըրային։

Նուիրեալ զանձինս Քրիստոսի Փըրկչին,
Բանաւոր զենմունք և զոհք մեծագին,
Ցօդունք տար աշխարհ 'ւ այլք աստ ի Կարին,
Շատ տանջմամբ լեալ է կատարումն նոցին։

Էր այնց որք եղեն մերս ժամանակին,
Ոյց տեղեակք գոլով գրեցաք զճառ նոցին,
Հասու չեղելոցս թողաք գիտողին,
Ի կամիլն իւրեանց գրեսցեն և զնոցինն։

Երանուհւոյս այս քաջ նահատակին,
Եւ այնց՝ որք եղեն մարտակից նըմին,

7. s ստեփաննոս. 12. s էր փխ. որ. 26. այս տողի տեղ գրուած էր Ահա սոյն քաջ աղջկան այս նահատակին.

Digitized by Google

Զորոց պատմութիւնն գրել ըղվէպ ճառին՝
Ի հարկելն ումանց փոյթ կալայ յանձին։

Սին հեքս յուսալով յԱստուած սուրբ Հոգին,
Ապաւինելով ի ձիրըս Նորին,
Տալ կարողութիւն ինձ տըկար անձին,
Ցորինել զվկայիցս ճառըն ըղձագին։

*Յաղագս ումեմն Վառվառ անուն արիասիրտ աղջկան՝ որ ըմպեցաւ փորձութեան խմիք, յետ բազմակերպ տանջանաց՝ նահատակեցաւ ի սէր Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ Եւ նախ յաղագս ծննդեան տեղւոյն եւ ազգի նորին։*

Հանդէպ սոյն Կարնոյս դաշտին զետեղեալ՝
Ցորում կայր գիւղ մի Դրընիկ անուանեալ,
Գոյր տուն Համիայի Զուրիկեանց կոչեալ,
Ցոր երեք եղբարք էին բընակեալ։

Մաղագ և Գասպար՝ Թօգօլ առձայնեալ,
Եւ փոքր եղբայրըն ընդ այնց էր կեցեալ.
Քոյր սոցին՝ որ էր Վառվառ անուանեալ,
Համեստ և պարկեշտ վարուք կայր սընեալ։

Աղջիկս այս՝ որ էր խնամախօսեցեալ
Ղուշճի գիւղն Համփայի որդւոյ նշանեալ,
Երեք ամք ևըս ի վերայ անցեալ,
Կեսրանքն հարս տանել այժմըս յօժարեալ։

Ըստ սովորութեանն խօսք առնել եկեալ,
Եւ մեծ հանդիսիւ ի Դըընիկ մըտեալ,
Պատուաւորքըն անդ եղեն հրաւիրեալ,
Ըզգեղի աղայն տեսնել մոռացեալ։

3. Տ Նախ եդեալ զյոյս իմ յԱծ սուրբ հոգին. 10. Տ ըննդեան.
23. Տ կէօրանքն.

Եւ նա մախանօք զօխ սըրտին կալեալ,
Շատ վընասատու չարիք խորհեցեալ.
Բարեսէրք զայս լուր կեսրանցըն յայտնեալ,
Զաղջիկըն փութով տանել յորդորեալ։

«Ո՞վ գիտէ թէ զի՞նչ չարիք են խորհեալ,
«Երեւոյթ իւրին թէպէտ չէ յայտ լեալ.
«Զըլինի՛ վնաս ինչ ձեզ գայցէ հասեալ,
«Կամ հարսնացուին 'ւ եղբարցըն դիպեալ»։

Որ և նոքա այն խորհըրդոյն հաճեալ,
Յետ աւուրց եկեալ զհարսնացուն տարեալ,
Բայց աւագ տօնից միջօցին դիպեալ,
Յետ ութօրէից պսակել կամեցեալ։

*Յաղագս գեղի աղայի ընդ այլազգեացն չարութեամբ խորհուրդ առնելոյն վասն աղջկանն. եւ նա լուեալ պատրաստեցաւ հոգեւորապէս.*

Էր գեղի տէրըն նախանձու լըցեալ,
Եւ ըզվըրէժ իւր առնուլ կամեցեալ,
Զայլազգիս համայն ի մի հաւաքեալ,
Խորհուրդ իմըն չար ընդ նոսա խորհեալ։

Համակամ կանգնեալ դաշինըս եդեալ,
Ըստ իւրեանց ծիսի երդմամբ խիստ երդուեալ,
Բանիս կատարմանն արդ մեք աշխատեալ,
Զհայիֆ մեր առնուլ լիցուք փութացեալ։

Առ զապիթըն գալ նոցա կամեցեալ,
Զչար խորհուրդ իւրեանց յայտնել յօժարեալ,
Բայց դէպ և պատշաճ ժամու ըսպասեալ,
Բանի կատարմանն յերդմանն պինդ կացեալ։

3. s կէսրանցըն. 14. s աղջըկանն.

Digitized by Google

Նոյն բօթալի լուրն մինչ ի դուրս անկեալ,
Թէ գեղի Թուրքքըն թակարդ են լարեալ,
Ղուչճի գիւղն երբօր աղջիկըն լուեալ,
Առ այն սըրտիւ իւր զէտ հուր բորբոքեալ։

Շնորհիւն Աստուծոյ եղև զօրացեալ,
Քաջացեալ սըրտիւ տիր արիացեալ,
Իբր ըմբիշ զօրեղ առպատրաստեցեալ,
Ընդ այնց մարտընչիլ կամաւ յօժարեալ։

Ի յեկեղեցին իսկոյն ընթացեալ,
Լալագին դիմօք ի ծունկըս անկեալ,
Ջերմեռանդ սըրտիւ առ Տէր պաղատեալ,
Օգնութիւն ինքեան հասանել հայցեալ։

Խոստովանահօրն առաջի անկեալ,
Եւ յորդ արտասուօք անդ խոստովանեալ,
Սըրբոյ խորհըրդոյն կենաց հաղորդեալ,
Զմարմին և զարիւն Տեառըն ճաշակեալ։

*Յաղագս զալոյ վիւղի այլազգեացն առ փաշայն, եւ ծանուցանելոյ նմա զրաբանութիւն իւրեանց վասն աղջկանն.*

Նոյն միջոցին ի տեղս էր վէզիր նըստեալ,
Նա Բահրամ փաշայ անուանակոչեալ,
Որ էր այր խոհեմ հանճարափայլեալ,
Իրաւանց դատմանց կարի տեղեակ լեալ։

Առ որ դաշնադիրքն ի գիւղէն եկեալ,
Ի յատեան նորա անդ յառաջ կացեալ,
Ըզխորհեալն իւրեանց նըմա արզ առեալ,
Զըրաբանութեամբ զաղջիկն բարուրեալ։

2. Տ Թուկարթ.

Ասեն. «Մեր գեղէն Թուրք մանչ մի հարեալ
«Ի սէր աղջըկանն աշխիայ եղեալ.
«Եւ աղջիկն ունի մանչուն մէյլ տըւեալ.
«Արդ զինչ վըճռելըդ ի կամսդ է յանձնեալ»։

Փաշայն մարդ յըղեալ՝ զաղջիկըն բերեալ,
Եւ նա զէտ այր քաջ հետիոտս եկեալ,
Զերկու գիւղցիս հետ բերեալ բանտարկեալ,
Ցետ աւուրց տուգանս առեալ բաց Թողեալ։

Ապա հրաման ետ ի յատեան հանեալ,
Զքաջասիրտ աղջիկն հանդէպ կացուցեալ,
Փաշայն քաղցրութեամբ ցընա իսկ հարցեալ.
«Թուրք մանչուն արդեօք մէյլ ունի՞ս տըւեալ»։

Նա խոնարհ բանիւ առպատասխանեալ.
«Էֆէնտիմ, զո՛ւր է բանդ այդ ասացեալ,
«Զի չունիմ բընաւ ընդ նըմա խօսեալ,
«Եւ յերեսս նորա չեմ երբէք նայեալ»։

Փաշայն և բազմեալքն զաղջիկն յորդորեալ.
«Ա՛ռ ըզմանչն՝ զի քեզ լայեխ եմք տեսեալ.
«Լեր դենիւ մերով ի վեր պանծացեալ,
«Ցաղախնութենէ դու խանում եղեալ»։

Ասէ. «Բիւր փառք յաչս իմ ոչինչ Թըւեալ,
«Զհաւատս ոչ Թողում Թէ և մահ հասեալ,
«Եւ զԹուրք մանչդ առնուլ ինձ անհնար լեալ,
«Թէ մարմինս լիցի մաս մաս կըտրատեալ»։

Փաշայն և աղայքն եղեն ցասուցեալ,
Հընար նմա առնել ի խոր խորհեցեալ,
Զկարդացող Ցեչիլ իմամըն կոչեալ,
Զի ի դին իւրեանց ածցէ որսացեալ։

21. Տ է ոչինչ. 22. Տ զհաւատս իմ. 27. Տ յեէչիլ. 28. Տ Եւս տը-ւեալ նմա առնել զմիտսն հաճեցուցեալ.

Digitized by Google

*Յաղագս տանելոյ խնամոյն զաղջիկն ի տուն իւր առ ի հաճեցուցանել զմիտս նորա, թէ ողոքանօք թէ սպառնալեօք.*

Նոյն ժամայն խնամին զաղջիկն հետն առեալ,
Եւ ի տուն իւր զնա յորդորմամբ տարեալ,
Ընտանեաց իւրոց սաստիկ պատուիրեալ,
Ի պահել ըզնա ըզգուշացուցեալ։

Նախ ողոքանօք սիրայորդոր լեալ,
Կերպակերպ բանիւ վէզ քարոզ տըւեալ,
Գըրոց և փըլրոց խրատ առմատուցեալ,
Իցէ թէ աղջիկն լիցի այնց հաճեալ։

Կին՝, և զաւակքն ևս ըզնա մեծարեալ,
Քաղցրաբանութեամբ ի յողոք անկեալ,
Ասեն. «Պերճութեամբ լինիս ճոխացեալ,
«Խանում և խաթուն փառօք բարձրացեալ»։

Այլ և համադամ կերակրօք պատուեալ,
Բարելի սեղան միշտ յառաջ բերեալ,
Ցայգ ցերեկ ըզնա յարգանօք շահեալ,
Իցէ թէ լիցի այնց սիրահարեալ։

Գովելի աղջիկն այն երանեցեալ՝
Որ ի սէր Փըրկչին էր պարաւանդեալ,
Զողոքն և զպատիւն առ ոտըն հարեալ,
Զըր լըսելոյ այնց զունկըն իւր խըցեալ։

Իբրև տեսին թէ է նա յամառեալ,
Ի հաւատ իւր պինդ զէտ վէմ անշարժ լեալ,
Վասնորոյ զքանըն ի ցասումն փոխեալ,
Տանջել չարչարել եղեն ջանացեալ։

Զերջանիկ աղջիկն այն մերկացուցեալ,
Զձեռս և զոտս նորին կապանօք պընդեալ,

2,8. Տ ողոգանօք. 13. Տ ի յողոգ. 22. Տ զողոգն.

Digitized by Google

Ծեծել հարկանել ըզնա ըսկըսեալ,
Բըրօք և չըպխօք զօրս էին թըրջեալ։

Գիշեր և ցերեկ խիստ գանակոծեալ,
Աքցի բըռընցի երբ և ձեռն հասեալ,
Ապտակ ի յերեսն տալով և թըքեալ,
«Բանից մեր, ասեն, լեր դու հնազանդեալ»։

Յետ այնըր տանջանք մի ևըս խորհեալ,
Թէ «մեռցի կամ մեզ լիցի հնազանդեալ».
Զէմհէրին ամսոյ աւուրցն այս դիպեալ,
Ցուրտ սառնամանեաց միջոցն պատահեալ։

Ի մէջ պաղչային որ եազըլը կոչեալ,
Ի հիւսից հերաց ի վերուստ կախեալ,
Ներքևն փոսի մէջ ի լիք ջուր լըցեալ,
Սըրունքն մինչ ի ծունկն ներ ջըրոյն իջեալ։

Պատառման ասեն կըսկիծն սիրտն հարեալ,
Հերաց ցաւ գըլխոյն ընդ նըմին խառնեալ,
'Ի ինքեանք յանկիւնէ պահ առ պահ նայեալ,
Իցէ թէ գայցէ դեն իւրեանց հաճեալ։

Բայց շնորհիւ Տեառըն էր նա զօրացեալ,
Ոչ ինչ ներգործէր ցաւ նըմա տիրեալ,
Զի սիրով Փըրկչին էր նա զէտ թըմրեալ,
Եւ իբրու արբեալ քըրտամբ քըրտնեցեալ։

Գիշերապահոջ էր որ այս գործեալ,
Տեսին զի զնովաւ մոմեր գոյր վառեալ,
Լիճըն չէր սառեալ՝ այլ գոլորշ ելեալ,
Մերձ նորա ծեր մի ընդ նըմա խօսեալ։

Իսկ նայօղքն ի յայն դողմամբ զարհուրեալ,
Ընթացեալ ի տուն զեղեալըն պատմեալ,

8. Տ Եախ իցէ թէ մեռցի կամ մեզ հնազանդեալ. 21. Տ Եախ շնորհիւ (փխ. սիրով).

Մինչ նորա եկին զտեսիլն ոչ տեսեալ,
Բայց անհաբեկեալ ըզնա արձակեալ։

Ընտանիք իմամին դողմամբ աղերսեալ,
«Զաղջիկդ հեռացո՛ ի մէնջ բաց վարեալ,
«Եւ ի բան դորա մի՛ լիցիս խառնեալ,
«Զի դա չէ թէքին, մեք լինիմք վնասեալ»։

Իմամն ընտանեաց իւրոց անարգեալ,
Ասէ. «Այլ տանջմամբ առցուք զնա փորձեալ».
Ըզնալս հրացուցեալ մերկ մարմնոյն եդեալ,
Իբր ետես չայրիլն՝ կարի զարհուրեալ։

Իմամն առ զապիթն աղերս մատուցեալ,
«Թէ յորդոր, թէ զան ցուցի, ասացեալ,
«Չեղև մեզ հնազանդ նա յոյժ յամառեալ,
«Դո՛ւք դիտէք. որպէս կամք ձեր է հաճեալ»։

Որ և նա յայլ ումն իմամի տըւեալ,
Խելամուտ առնել զկամսն հաւան ածեալ.
Եւ նա առեալ զնա՝ ի տուն իւր տարեալ,
Տանջանք ինչ նըմա տալ ո՛չ յօժարեալ։

Բայց ցայգ և ցերեկ ըզնա խըրատեալ,
Կերպակերպ բանիւ ողջք առարկեալ,
Փառք պատիւ տըլիլ նըմա խոստացեալ,
Զդեն իւրեանց ընդունել զնա յորդորեալ։

Ի բազում աւուրս ի տան անդ. մնացեալ,
Ողջքմանց, յորդորմանց բնաւ ոչ լըւեալ,
Խոստմանց պարգևաց սիրահար չեղեալ,
Եւ յիւր դիտմանէն երբէք ոչ կասեալ։

9. s զնալս. 20. s ողոգ. 22. s բզնա. 24. s ողոգմանց.

Digitized by Google

*Յաղագս գալոյ դատախազ այլազգեացն եւ ցասուցանելոյ զփաշայն՝ առ ի սպառնալեօք ահացուցանել զաղջիկն եւ հաւան առնել բանին·*

Եկին դատախազքն ի չարէն դրդեալ,
Ըզփաշայն և զոյլսն ի վեր ցասուցեալ,
Զքաջ աղջիկն կրկին ի դիւան տարեալ,
Յոյժ ըսպառնալեօք զնա ահացուցեալ։

Քաջասիրտ աղջիկն տիր արիացեալ,
Անահ 'ւ աներկիւղ անդ պատասխանեալ.
«Զինչ առնելոց էք՝ արէք, ասացեալ,
«Զեմ ձեզ հնազանդօղ. լերուք իմացեալ»։

Ուստի և փաշայն յապշութեան եղեալ,
Հետ խորհրդակցաց զայլ բան մի խորհեալ,
Զնոյն խորհեցեալըն անդ յառաջ արկեալ,
Այն բանին համայնք եղեն հաւանեալ։

«Ղյ՛զ. ասեն, հախիդ բան մի եմք խորհեալ,
«Զըհնազանդիլդ այնմ անկար է եղեալ.
«Քո դենոյդ ի տուն մանչուն երթ լըռեալ,
«Արա ըզխըզմէթն իբր հարսն անուանեալ»։

Հանճարեղ աղջիկն մըտախոհ եղեալ,
Զեւս իրաց հընարն խելօք խորհեցեալ,
Անտի չու առնելն կարելի թըւեալ,
Եւ յերկուց չարեաց զփոքրագոյնն ընտրեալ։

Ընդ այս բան նա ինքն կայր անդ լըռեցեալ,
Ցակամայ կերպիւ դիմօք դըժգըմեալ.
Բայց վէզիրն իսկոյն պույրուլթի գըրեալ,
Թէ «Վառվառ անըուամբդ երթ անդ հարսնացեալ»։

Քաղաքի, գիւղի այլազգիք լըւեալ,
Մեծաւ ցընծութեամբ յոյժ ուրախացեալ,

24. Տ բան աղջիկն փխ. նա ինքն.

Digitized by Google

Իսկոյն ըղջերկեան ճիպկլլիկ բերեալ,
Ըստ հայու տանելոյ թօրային վարեալ։

Բայց աղջիկն արի առ այն դըժկամեալ,
Ցելանել նըստիլ անդ ոչ յօժարեալ,
Սակայն բըռնութեամբ մուծեալ նըստուցեալ,
Ինքն ի լաց՝ իսկ թուշքըն հըրճուանօք տարեալ։

Առեալ ցընծութեամբ ըզնա և տարեալ
Ի տուն թուրք մանչուն և անդ իջուցեալ,
Իբրու իւրեանց հարս զնա սիրաշահեալ,
Ի յորսալ ըզնա շատ խընամք տարեալ։

Սակայն խըղճալին տըրտմութեամբ լըցեալ,
Դառնագոյն ողբով յոյժ սըգաւորեալ,
Համարեալ թէ զինքն են գերի վարեալ,
Ըզգեստս արտասուաց յաչացն իջուցեալ։

Եւ մոլի թուրք մանչն հանդիստ ոչ տըւեալ,
Մերձենալ ի նա տըռփմամբ ջանացեալ,
Բայց քաջ աղջիկըն ոչ մօտեցուցեալ,
Ապտակեալ զերեսս նորա լըպըրշեալ։

Սուրբ Հռիփսիմէի կուսին նըմանեալ,
Զխենդ երիտասարդն ըզզեանի հարեալ,
Ոչ թէ մի անգամ, այլ միշտ նմին յաղթեալ,
Շնորհիւն Աստուծոյ զնա դողացուցեալ։

Իսկ մինչ թուրք մանչուն նրամքըն լըւեալ,
Ծանեան ոչ սիրով չլինի որսացեալ.
Ապա ի տանջել ըզնա ըսկըսեալ,
Անարգել հարկանել երբ և պատահեալ։

Եւ ի փախչելոյ նորին կասկածեալ,
Որ վասն ի փայտանս զոտս նորին պընդեալ,
Ըզնա յաշխատանս լըծել խըստացեալ,
Տառապանօք միշտ և դանակոծեալ։

4. Յ Եսխ յանձն առեալ փխ. յօժարեալ.

*Յաղագս գալոյ դատախազ այլազգեացն եւ ցասուցանելոյ զփաշայն՝ առ ի սպառնալեօք ահացուցանել զաղջիկն եւ հաւան առնել բանին.*

Եկին դատախազքն ի չարէն դրդեալ,
Ըզփաշայն և զայլսն ի վեր ցասուցեալ,
Զքաջ աղջիկն կըրկին ի դիւան տարեալ,
Յոյժ ըսպառնալեօք զնա ահացուցեալ։

Քաջասիրտ աղջիկն տիր արիացեալ,
Անահ 'ւ աներկիւղ անդ պատասխանեալ.
«Զինչ առնելոց էք՝ արէք, ասացեալ,
«Չեմ ձեզ հնազանդօղ. լերուք իմացեալ»։

Ուստի և փաշայն յապշութեան եղեալ,
Հետ խորհըրդակցաց զայլ բան մի խորհեալ,
Զնոյն խորհեցեալըն անդ յառաջ արկեալ,
Այն բանին համայնք եղեն հաւանեալ։

«Ղյո՛զ. ասեն, հախիդ բան մի եմք խորհեալ,
«Զըհնազանդիլդ այնմ անկար է եղեալ.
«Քո դենովդ ի տուն մանչուն երթ լըռեալ,
«Արա ըզխըզմէթն իբր հարսն անուանեալ»։

Հանճարեղ աղջիկն մըտախոհ եղեալ,
Զելս իրաց հընարն խելօք խորհեցեալ,
Անտի չու առնելն կարելի թըւեալ,
Եւ յերկուց չարեաց զփոքրագոյնն ընտրեալ։

Ընդ այս բան նա ինքն կայր անդ լըռեցեալ,
Յակամայ կերպիւ դիմօք գըժգըմեալ.
Բայց վէզիրն իսկոյն պույրուլթի գըրեալ,
Թէ «Վառվառ անուամբդ երթ անդ հարսնացեալ»։

Քաղաքի, գիւղի այլազգիք լըւեալ,
Մեծաւ ցընծութեամբ յոյժ ուրախացեալ,

24. S ճախ աղջիկն փխ. նա ինքն.

Իսկոյն ըղձերկեան ճիպիլլիկ բերեալ,
Ըստ հայրս տանելոյ թօրային վարեալ։

Բայց աղջիկն արի առ այն դըժկամեալ,
Ցեղանել նըստիլ անդ ոչ յօժարեալ,
Սակայն բըռնութեամբ մուծեալ նըստուցեալ,
Ինքն ի լաց՝ իսկ թուրքըն հըրճուանօք տարեալ։

Առեալ ցընծութեամբ ըզնա և տարեալ
Ի տուն թուրք մանչուն և անդ իջուցեալ,
Իբրու իւրեանց հայրս զնա սիրաշահեալ,
Ի յորսալ ըզնա շատ խընամք տարեալ։

Սակայն խըղճալին տըրտմութեամբ լըցեալ,
Դառնագոյն ողբով յոյժ սըգաւորեալ,
Համարեալ թէ զինքն են գերի վարեալ,
Ըզգետս արտասուաց յաչացն իջուցեալ։

Եւ մոլի թուրք մանչն հանդիստ ոչ տըւեալ,
Մերձենալ ի նա տըռփմամբ ջանացեալ,
Բայց քաջ աղջիկըն ոչ մօտեցուցեալ,
Ապտակեալ զերես նորա լըպըրշեալ։

Սուրբ Հռիփսիմէի կուսին նըմանեալ,
Զխենդ երիտասարդն ըզգետնի հարեալ,
Ոչ թէ մի անգամ, այլ միշտ նմա յաղթեալ,
Շնորհիւն Աստուծոյ զնա դողացուցեալ։

Իսկ մինչ թուրք մանչուն երամքըն լըւեալ,
Ծանեան որ սիրով չլինի որսացեալ.
Ապա ի տանջել ըզնա ըսկըսեալ,
Անարգել հարկանել երբ և պատահեալ։

Եւ ի փախչելոյ նորին կասկածեալ,
Ոյր վասն ի փայզանս զոտս նորին պընդեալ,
Ըզնա յաշխատանս լըծել խըստացեալ,
Տառապանօք միշտ և դառնակոծեալ։

4. Տ ճախ յանձն առեալ փխ. յօժարեալ.

Ի բաղում աւուրս ի տան անդ մնացեալ,
Դառնագին կենօք ցայգ ցերեկ լացեալ,
Զպէսպէս անարգանս՝ շատ վիշտըս կըրեալ,
Զորս համբերութեամբ յանձն առեալ տարեալ։

Որքան անդ կեցեալ՝ զպահս իւր ոչ խոտեալ,
Այր վասըն շատ օր նօթի անցուցեալ,
Ներհակքըն ուտեցնել կարի ջանացեալ,
Բայց նա ընաւ երբէք ոչ եղև յաղթեալ։

Ի սէր Քրիստոսի կայր սիրավառեալ,
Ըստ անուան իւրոյ որ Վառվառ կոչեալ.
Այն համայն վիշտքըն ոչինչ համարեալ,
Հաւատով մընալն իւր հանդիստ վարկեալ։

Թէպէտ յարկըն այն իւր գեհեան եղեալ,
Ցորում գտանեցեալքն տանջօղք ինքեան լեալ,
«Լաւ, ասէ, թէ աստ լինիմ չարչարեալ,
«Քան թողլով զօրէնս անդ լինիմ տանջեալ»։

Ապա քաջ աղջիկն ինքն ինքեան խորհեալ,
Զու առնել անտի ի մըտի եդեալ,
Ի յայս խորհըրդեան կայր միշտ տատանեալ,
Ըղհընար և զելն առնել վարանեալ։

Բոլորով սըրտիւ միշտ առ Տէր պաղատեալ,
Ցամենայն անձնէ ի նա յուսացեալ,
Զմիտք և զխոռում իւր առ նա հաստատեալ,
Զինքն անտի փըրկել ցայգ ցերեկ հայցեալ։

Լըսօղն աղօթից զհառաչսըն լուեալ,
Նա որ սիրէ զայնս՝ որք յինքըն յեցեալ,
Զերծ նորին անտի արագ յաջողեալ,
Իւր հըզօր բազկաւն փըրկեալ ազատեալ։

1. Տ մընացեալ. 2. Տ ցերէկ. 4. Ասխ ժուժեալ փխ. տարեալ. 12. Տ Ասխ թըւեալ փխ. վարկեալ. 21. Տ առաջին բառի տեղ գրուած էր այլև, յետոյ սրբագրած բոլորով.

Digitized by Google

*Յաղագս առն աղջկանն քաղաքացութեամբն չու առնելոյ ի տանէ անտի ի գիշերապահոց·*

Ներ պահոյ գիշերի՝ աղջիկն ելք գտեալ,
Լռելեայն ի տանէն յորտաքըս ելեալ,
Սըրընթաց իբրև արծըւի թըռեալ,
Ի քաղաք մըտեալ, հետքն ումեք չյայտնեալ։

Թուրք մանչն և ազգ իւր ի փաղիւն ելեալ,
Ի մէջ իւրեանց տան զաղջիկն ոչ գըտեալ,
Յայնժամ՝ ապշելով ի ցասման եղեալ,
Ի վերայ գիւղի Հայոց մըռմըռեալ։

Ասեն թէ «Դուք էք ըղնա փախուցեալ,
«Եւ գիտէք զտեղւոյն թէ ուր է թաքեալ»։
Նոքա ասեն «Յայդմ չեմք խապար եղեալ.
«Դուք էք զնա խեղդեալ և զլէշն կորուսեալ»։

Թէպէտ այլազգիքն եղեն ոխացեալ,
Եղբարցն և այլոց վընաս տալ խորհեալ,
Սակայն ինքեանք ևս ի յայնց երկուցեալ,
Զի ի տան մանչուն նա իսկ ղայպ եղեալ։

Տաս որոնեցին հետամուտ եղեալ,
Ի բազում գիւղորայս շրջեալ և խընդրեալ,
Ի չըդըռանելն եղեն ձանձրացեալ,
Թէպէտ ի բաց լեալ, այլ ղոխըն պահեալ։

*Յաղագս դիմանալոյ զգիւղն այլազգեացն եւ խորհելոյ՝ զի ի վաղ միւսոյ վէզիրին՝ արզուհալ տայցեն·*

Օն անդր այլազգիք մախանօք լըցեալ,
’Նդ այս եղելութեանս կարի վըրդովեալ,

1. Տ աղջըկանն. 5. Տ լուսանցքի վրայ գրուած է. «Արծւոյ նման արագ ալացեալ»», որ նուազ յաջող է։ 26. Տ ընդ.



Digitized by Google

Զվընասօղ խորհուրդս ի մըտի եդեալ,
Յաջողակ ժամու կայլին ըսպասեալ։

Ապա Իպրահիմ փաշայ անուանեալ՝
Որ յԱրապիստան աշխարհն էր սընեալ,
Երբեմն ի Հալէպ, յետոյ Շամ նըստեալ,
Յայնց կողմանց առ այսր ի մանսուպ եկեալ։

Բազմաթիւ զօրաց յոխորտմամբ վառեալ,
Խըրոխտանօք զինքն ահարկու ցուցեալ,
Մէգ արշաւանօք ի քաղաք մըտեալ,
Զտեսօղսըն համայն առասարսեցուցեալ։

Որ և գիւղի Թուրքքն եղեն պատրաստեալ,
Արզ տալ զապիթին միախոհ հաճեալ,
Զայս լուր գիւղի Հայ բնակիչքըն լուեալ,
Ինքեանք յառաջ տալ կարի փութացեալ։

Միակամ եկեալ արզուհալ տըւեալ,
Զեղեալսըն բոլոր զապիթին յայտնեալ,
«Ի գլուխ աղջըկան թ՝ ինչ չարիք բերեալ,
«Ինքեանք ղայպ արին, արդ մեզ են փակեալ»։

Ուստի և փաշայն իսկոյն մարդ յըղեալ,
Ըզգիւղի Թուրքերն բըռնութեամբ կալեալ,
Քանի ինչ աւուրս ի բանտի եդեալ,
Ըզբազում տուգանս առեալ և թողեալ։

Յետոյ նոյն Թուրքերն իբր հուր բորբոքեալ,
Ըստ եդեալ մըտացն եկեալ արզ տըւեալ,
Թէ «սոքա աղջկանն են խըրատ յըղեալ,
«Որ նա յայն տանէն հընարիւք փախեալ»։

Փաշայն խընդութեամբ մուպաշիր թռուցեալ,
Զերեք գիւղի Հայսն զհամայնսըն կալեալ,

1-2. Տ նախ գրուած է. «և զպէսպէս կարծիս ի միտ առբերեալ. բայց յաջող ժամու եղեն ըսպասեալ.» 20. Տ զգիւղի. 23 Տ նախ յայժ ջամամբ կանգնե՛՛լ փխ. իբր հուր բորբոքեալ.

Կապանօք, գանիւք ի քաղաք բերեալ,
Ի բանտ 'ւ ի շըղթայս ըզնոսա արկեալ։

«Քեմֆիրլէր, ասէ, դո՛ւք էք փախուցեալ.
«Թէզ, գըտէ՛ք զաղջիկն ու՛ր իցէ թաքչեալ.
«Ապա թէ ոչ՝ դո՛ւք լինիք մահացեալ,
«Զարաչար սպանմամբ ի կորուստ վարեալ»։

Հէսէս զօրք անդէն թային արարեալ,
Որ գիշեր ցերեկ զնոսա չարչարեալ.
Զէնճիր ի վիզըն նոցին անցուցեալ,
Եւ զոտն ի թօմրուխ խըստագոյն պընդեալ։

Բանտապանն իւրաքն միշտ տանջօղ եղեալ,
Թէ «Զաղջիկըն դո՛ւք էք ղայպ արարեալ.
«Արդ զտեղի նորին ցուցէ՛ք մեզ յայտնեալ,
«Թէ ոչ՝ մեռանիք մահուամբ դառնացեալ»։

Զեղբայր աղջըկանն՝ որ Գասպար կոչեալ,
Ըզնա յոյժ սաստիկ առաւել տանջեալ.
Փաշայն միշտ հանեալ զնա յատեան տարեալ,
Խիստ ցասմամբ նըմա մահ ըսպառնացեալ։

Ասէ «Քոյրդ անտի դու ես փախուցեալ.
«Արդ գիտես զտեղին՝ ուր իցէ գաղեալ.
«Ասա՛ մեզ և դու լինիցիս զերծեալ.
«Թէ ոչ՝ կեանքդ ի քէն առնի բաց բարձեալ»։

Արին այն վըստահ անդ պատասխանեալ.
«Աղջիկն տանն յինքեանց էր պահպանեցեալ.
«Եզերօք նորին ևըս չեմք անցեալ.
«Զեմք խապար բնաւ թէ ի՛նչ իցէ եղեալ»։

Յետ շատ տանջելոյն՝ եղեն ձանձրացեալ,
Եւ իւրեանց հարցմանն ճէվապ չընկալեալ.
Ապա յիւրեանց դեհն ըզնա հրաւիրեալ,
Բայց նա բընաւին երբէք ոչ լըւեալ։

Digitized by Google

Յայնժամ յոյժ ցասմամբ փաշայն բարկացեալ,
Ըսպանման նորա վըճիռըն հատեալ.
«Խեղդամահ արէք ըզդա», ասացեալ,
«Որ եղև այդքան կամապաշտեցեալ»։

Յաղագս տանելոյ զնա ի կախել եւ անդ եւս ստիպեցին յուրանալ եւ նորա չառնելոյ յանձն՝ կախեցին զնա, եւ լոյս էջ ի վերայ նորա.

Տանջօղ հոյլք զօրաց իսկոյն զնա կալեալ
Ըզձեռս ի յետըս չուանաւ կապեալ,
Մերկ և բոկ ըզնա գըլխիբաց տարեալ,
Եւ ամբոխք բազում ի տեսն ընթացեալ։

Ի տանելն ուըս հարցմամբ ըստիպեալ,
«Զտեղի աղջըկանն ասա՛, լե՛ր զերծեալ.
«Կամ դեն մեր ընկալ՝ որ լիցիս ապրեալ»։
Սակայն նա բան ինչ ո՛չ պատասխանեալ։

Մինչ կըրկին կըրկին ցընա որ հարցեալ,
Զայս բանըս միայն առպատասխանեալ.
«Մահուանէն ա՛յլ վեր բան կա՛յ դառնացեալ.
«Ի գիտելս ասէի, լինէի զերծեալ»։

Ժամի դըրան չարսուն բերեալ հասուցեալ,
Ներքոյ կախարանին ըզնա կացուցեալ,
Անդ ուըս նըմա Թէքլիֆ արժրեալ.
«Սոսկ բա՛ն մի ասա՛, լե՛ր ազատեցեալ»։

Բայց նա հաւատոյն էր սիրավառեալ,
Որ վասն զմեռանիլն յօժար յանձն առեալ.
Զաչս յերկինս կալեալ՝ մըտօք աղօթեալ,
Ի ծածուկ զերես իւր խաչակընքեալ։

25. Տ Մահ ոչինչ համարեալ փխ. յօժար յանձն առեալ.

Digitized by Google

Մինչ ջէլլաթն ի վերուստ զչուան կապեալ,
Նա կամաւ ըզգլուխն ի խեղդկապն մուծեալ,
Ի փառս Յիսուսի սա նահատակեալ,
Օր չորեքշաբթի յունիս ութ դիպեալ։

Բազումք ըզգիշերն ի հեռուստ դիտեալ,
Տեսին ի վերայ նորա լոյս ծագեալ,
Զանձամբըն բոլոր շուրջ շըրջապատեալ,
Ո՛չ թէ մի անգամ, այլ կըրկին կըրկնեալ։

Յետ երից աւուրց մինչ հրաման եղեալ,
Քրիստոնեայք ըզնա ի վայր իջուցեալ,
Փառաւոր թաղմամբ ի շիրմի եդեալ,
Կըրկին ի վերայ որ լոյս ցոլացեալ։

Ապա զքանտարկեալքն բանտէն բաց թողեալ։
Նոյն յերեք գիւղցւոց զտուգանս շատ առեալ,
Զհամայն գոյք իւրեանց տալով ոչ զերծեալ,
Ճարք պարտապան լեալ՝ մուրալ տարագրեալ։

Յաղագս այլազգի կանանց կարծիս առնլոյ տեղւոյ աղջկանն եւ իմաց տալոյ ումեմն աղայի եւ նա զապիթին. որք եկեալ կալան զաղջիկն եւ զնոյն տան կինն.

Այլազգիքն էին հետախոյզ եղեալ,
Աստ անդ հարցանել մինչ առջանացեալ.
Ջեղև հնար գըտման հետոցըն ծածկեալ,
Վասնորոյ լըքեալ եղեն ձանձրացեալ։

Այսքան միջոցս որ ի վերայ անցեալ,
Կայր աղջիկն ի տան անդ ըզգոյշ գաղեալ.
Զպատահմունք եղբօրն ոչ էր իմացեալ,
Միայն իւր գըտմանն կարի կասկածեալ։

4. Գ չբթի յունիսի. 21. Տ հետախուզ. 26. Տ զգուշ.

Դըրդմանէ չարին ըզկարծիս առեալ,
Դրացի Թուրք կանայք անդ գոլն իմացեալ.
Խընդալով փոյթ ոմն աղայի յայտնեալ,
Եւ նա առ ժամայն զապիթին խօսեալ։

Վախտ աղասին շուտ ղօլաք անդ հասեալ,
Ձաղջիկն և զտան կինն կալեալ և տարեալ,
Իբրև փաշային դէմն եղեն հանեալ,
Նա խոժոռ դիմօք ցընոսա հարցեալ։

Նախ կընոջն թէ «Է՞ր դա տանդ ես պահեալ»։
Իսկ խեղճ կինն յահէն եղև կարկամեալ.
Վանորոյ փաշայն առ նա սըրտմըտեալ,
Բայց ի ժամոյն այն ոչինչ խօսեցեալ։

Ապա և զաղջիկն յառաջ բերել տըւեալ,
Եւ հրացոյլ ակամբ առ նա նայեցեալ,
«Ղը՛զ, ասէ, դու զմեր դենն ես ընդունեալ.
«Է՞ր ես փոշմանեալ՝ ի տանէն փախեալ»։

Ցայնժամ և խոհեմ աղջիկն բարբառեալ,
Անահ 'ւ աներկիւղ պատասխան տըւեալ.
«Ձո՛ւր է բանըդ այդ՝ որ զինէն խօսեալ.
«Ես իմ դենովս եմ անդ այնքան մնացեալ»։

Ապա զպույրուլթին զայն նըմա ցուցեալ,
Զոր Բահրամ փաշայն էր իւրըն տըւեալ.
«Սա, ասէ, վըկայ է յայտնաբանեալ.
«Վառվառ եմ մինչ ցարդ դենէս ոչ խախտեալ։

«Վառվա՛ռ եմ, Վառվա՛ռ, զմահ եմ յանձն առեալ.
«Դենէս ոչ լինիմ երբէք բաժանեալ»։
Փաշայն ցասմամբ զնա ի կիմամն յանձնեալ,
Իսկ ըզկինն ի տուն իրիցու յըղեալ։

5. Տ Նախ վախտ աղայն իսկոյն.

Digitized by Google

Իմաստ զնա առեալ՝ ի տուն իւր տարեալ,
Ողոք, յորդորմունք և խրատ շատ տըւեալ,
Բայց յունկ աղջըկանն բընաւ ոչ ազդեալ,
Եւ ի ջերմ՝ սիրոյն չեղև ցըրտացեալ։

Ծաղազս փաշային յայլ խորհրդոյ լինելոյն, որ զաղջիկն ի տանէ իմամին շուտ շուտ բերեալ հարցանէր պատրանօք առ ի առնուլ ի բերանոյ նորա բան ինչ.

Բոտեալ զայլ խորհուրդ փաշայն էր խորհեալ,
Զի այլոց վերայ բանն լիցի շըրջեալ.
Վասնորոյ շուտ շուտ զաղջիկըն բերեալ,
Եւ կըրկին կըրկին հարցափորձ եղեալ։

«Աղջիկ, ո՞վ էր այն քեզ խըրատ տուեալ.
«Կամ որո՞յ ձեռամբ եղեր փախուցեալ»։
Եւ նա աներկիւղ զայս պատասխանեալ.
«Մարդ ոք չէ խապար. ես եմ հընարեալ»։

Քէրամիու մաքսապետն այեանըք խորհեալ,
Զխորհուրդ փաշային ցըրել ջանացեալ,
Քէրամ, ինիէմ ազգիս արարեալ,
Որ և առ փաշայն խապար յուղարկեալ։

«Քոյ մեծ համբաւոյդ այդ չէ վայել լեալ,
«Աղջկան մի բանի հետ լիցիս անցեալ.
«Տես որ չէ հընար, այդ բաւ համարեալ,
«Թո՛ղ զդուսա ի բաց գըլխէդ դհափ եղեալ»։

Նա ճեվապ ետ նոցա «Թողում» ասացեալ,
Բայց զաղջիկն բերեալ ի նա սպառնացեալ.
«Եկ ի դեն մեր կամ զխրատօղդ ցոյց յայտնեալ,
«Թէ ոչ՝ չարաչար լինիս դու մեռեալ»։

2. Տ տող. 13,14. Տ Նախ աղջիկ դքեզ ո՞վ է անտի փախուցեալ և կամ ով էր այն քեզ խրատ տուեալ. 25. Տ առաջ գրուած էր «Եւ նա խօսք ընդունօղ զինքըն առցուցեալ»

Digitized by Google

Աղջիկն ձանձրական ճէվապ տարարեալ,
«Մինչև երբ դուք իմ յետնէս էք անկեալ»։
Որ և զչիթ գըլխոյն ի յատեան նետեալ,
«Ի՞նչ անելոց էք՝ արէք» ասացեալ։

Ցայնժամ և փաշայն յոյժ սաստիկ ցասեալ,
«Տարէք խեղդեցէք զդուստ» ասացեալ.
Աղջիկն գըլխատման որ էր բաղձացեալ,
Զի արևամբ լիցի մարտիրոսացեալ։

Վկանորոյ առէ «Զեմ ես բողացեալ.
«Կախել հրամայեցիք է այնց պատշաճեալ.
«Այլ գըլխատել տուր. այն է ինձ դէպ լեալ»։
Բայց զինուորքն ըզնա յատենէն քարշեալ։

Ցաղագս տանելոյ զնորջանիկ աղջիկն եւ զխեղճ կինն ի խեղդել եւ զղիս նոցին ի մէջ ժամուն կախել ըստ հրամանի փաշային.

Իկեալ բանտապանն՝ զջէլլաթն հետն առեալ,
Զաղջիկն և զայն կինն ի խեղդել տարեալ.
Քաջ աղջիկն հըրճուեալ՝ զՏեառնէ գոհացեալ,
Որ ըղձման սըրտին ինքն եղև հասեալ։

Այլ և խեղճ կընոջն ևս սիրտ տըւեալ.
«Մի վախեր, պինտ կաց, լեր արիացեալ,
«Ի սէր Քրիստոսի լիցուք մահացեալ.
«Ցուսամք անդ փառաց մեք լինիմք հասեալ»։

Ապա զպարանոցս իւրեանց մատուցեալ,
Եւ յօժար կամաւ զխեղդումն ընկալեալ,
Ի փառս Յիսուսի նահատակեցեալ,
Յուլիս տասն և վեց՝ որ շաբաթ դիպեալ։

1. Տ աղջիկըն. 16. Տ բանտաբանն. 19. Տ յըղձման. 27. Տ յուլիսի.

Լուր մահու սոցին այեանքըն լըւեալ,
Թէպէտ վէրք առին, բայց համբեր տըւեալ,
Զհատուցումըն տալ Աստուծոյ թողեալ,
Ի դիպող ժամու լիցի գիտացեալ։

Փաշային չար մըտօք զայլ բանըս խորհեալ,
Զդիմն ի մէջ ժամուն կախել հրամայեալ,
Բանտապանն գիշերայն ըզդիխըն բերեալ,
Ի յերդոց ժամուն կախել կամեցեալ։

Սաղիմայ նուիրակն ներ գործոյ եղեալ,
Ստեփան եպիսկոպոս յարդոյ հայրն ընտրեալ,
Վէքիլն Յովհաննէս Րաբունին աստ լեալ,
Այր ճարտարախօս հանճարով լըցեալ,

Ընծայիւք տըրօք աղերս մատուցեալ,
Զմիտ բանտապանին առհաճեցուցեալ,
Որ և զաղերսանս նորին ընդունեալ,
Ապա ի սեմոց դըրանցըն կախեալ։

Զդրունսըն գաւթին յամրապէս փակեալ,
Զի մի գրոհքն ի տես գայցեն ամբոխեալ։
Իսկ վաղուն լըսօղքն եղեն յոյժ ապշեալ,
Զի զանլուր բանս այս բնաւ չէին տեսեալ։

Իշխանապետ մեր գերապատուեցեալ
Յարդոյ Յակոբ աղայն գոլով պերճացեալ՝
Որ ազգիս է միշտ խնամածու եղեալ,
Համայն վընասուց դիպմանց պահպանեալ։

Որպէս անհա արդ՝ մինչ զայս բան լըւեալ,
Վըրդովեալ ցասմամբ իսկոյն փութացեալ,
Մաքսապետին ղայս ՚ւ այլ մեծաց ազդեալ,
«Անուանց ձեր լայճիս է որ այս եղեալ։

2. 8 Ճախ լուեցին տեսեալ փխ. համբեր տըւեալ.

«Ի բընէ անտի ոչ ոք է լըւեալ՝
«Թէ սեմոց ժամուն իցեն զըք կախեալ.
«Խորհուրդ բըդեշխին կայ յայտ երեւեալ.
«Արդ հընար առնելն ձեզ է յանձնեցեալ»։

*Յաղագս մաքսապետին եւ այեանացն մեղադրանս յղելոյ առ փաշայն եւ նորա յակամայ հրամանն տալոյն վասն իջուցանելոյ զմարմին նահատակացն.*

Այն բանիս այեանքն աղեխարշ եղեալ՝
Ըրիայսն հոգածել տէր միաբանեալ,
Զերդիծան բանըս առ փաշայն յըղեալ.
«Այդ գործ յայս քաղաք բընաւ չէ եղեալ։

«Ըրիայէն բողոք լինի տարածեալ,
«Վերջըն հասանի վըտանգ վըրդովեալ.
«Արդ՝ ինչ և իցէ տուր հրաման շնորհեալ,
«Իջուցեն անտի, հող դիցեն ծածկեալ»։

Յակամայ կերպիւ հրաման յուղարկեալ,
Ի նոյն օրն իսկոյն անտի իջուցեալ,
Զմարմին վկայից որ նահատակեալ,
Փառաւոր Թաղմամբ ի շիրմի եդեալ։

Յոյս իջման լուսոյ ունօղքն ըսպասեալ,
Գիշերին ամենայն լեալ ակնադիտեալ,
Մինչ յեօթըն գիշեր գայր լոյս ցօլացեալ.
Վերուստ ի տապան նոցին շողշողեալ։

Արդ անունն Յիսուսի եղիցի օրհնեալ,
Բարեբանեալ միշտ և փառաւորեալ,
Որ զինքն սիրողաց տայ սիրտ քաջացեալ,
Զօրութիւն և կար՝ յոյժ արիացեալ,

Բերան և հանճար, խօս ճարտարացեալ.
Ըստ իւր հրամանին որ է խոստացեալ,

Դէմ բռնակալաց մինչ լինէին կացեալ,
Խօսին համարձակ պատշաճ զինչ է լեալ։

Որպէս ահա եւ սիրտ արիացեալ
Սոյն երանուհի աղջըկանս գովեալ,
Որ շնորհիւ Նորին այսքան կիրս կըրեալ,
Եօթն ամսօրեայ չափ համբերմամբ տարեալ։

Որ Վառվառ անուն էր նա անուանեալ,
Ըստ այնմ Քրիստոսի սիրովն էր վառեալ,
Պանացի բնութեամբ տանջանաց տեւեալ,
Զտեսօղս և զլըսօղս առհիացուցեալ։

Սուրբ Վառվառ կուսին անուանակից լեալ,
Գըսակաց փառաց նըմին կըցորդեալ,
Տան և չորս տարւոյ հասակի եղեալ,
Այսքան քաջութիւնս արար հրաշացեալ։

Նա ինքն որ սիրով Տեառըն էր վառեալ,
Եւ ըզ չարչարանս ոյր սակըս կըրեալ.
Ուստի և Տէրըն զնա ճոխացուցեալ,
Ասա լուսով և անդ փառօք զարդարեալ։

Յաղագս հրաշիցն որք հետզհետէ եղեն, զորոց զմի քանիսն միայն գրեալ եղեւ եւ զայլսն թողեալ՝ զի նըրամոնաց այն ամենայն յայտնի է.

Երջանկացս աղօթիւքն հրաշք շատ եղեալ,
Միայն միտ առնօղքն են վերահասեալ,
Ծածուկ և յայտնի որ պատահեցեալ,
Շնորհիւ Քրիստոսի այս համայնք եղեալ։

Այնք որք չարութեամբ եղեն ներհակեալ,
Եւ ազգիս մերոյ վընաս տալ խորհեալ,

Զ. Տ ճախ գրուած անվեհեր առ. այնս պատասխան խօսեալ.

Իսկ որք բարերարք գոլով խնամածեալ,
Երկաքանչքն զփոխ՚դարձն յԱստուծոյ առեալ։

Նախ բըդեշխն անդուլթ՝ որ զյոգունս վնասեալ,
Թունալի դիտմանցն նա չեղև հասեալ.
Զի յետ միջոցի յարքայէն հրամայեալ,
Ի պետութենէն եղև զրկեցեալ։

Ապա բարեբախտ մաքսապետն գովեալ,
Որ ըրիային է միշտ խնամ տարեալ,
Սմա փաշայութիւն յարքայէն շնորհեալ,
Փառք, պատիւ, մանսուպ եղև պարգևեալ։

Իսկ զայլ հըրաշալըն թողաք զանց առեալ,
Վասն այլ պատճառի անդէն համարեալ.
Զի նըրբամըտաց այնք իսկ են յայտ լեալ,
Ի քարտի դրոշմել այլ ոչ հարկ եղեալ։

Ներբող եւ ուրախատու բանս մատուցեալ առ Կարին քաղաք, առ ի ցնծալ, յունիլըն ընդ զիւր եւ զաւուրք մարտիրոսս եւ զնահատակն.

Եւ արդ դու Կարին քաղաք պերճացեալ,
Ի մեծ արքայից որ եսդ հիմնեցեալ,
Առատ բարեօք լի, ճոխ վայելչացեալ,
Անուամբ հըռչակեալ և շըքեղացեալ,

Ուրախ լեր, ցընծա՛ յաւէտ պանծացեալ,
Զ՝ ի քեզ նահատակք եղեն բազմացեալ,
Զէտ գարնանային ծաղիկք առբուսեալ,
Կարմրագոյն փայլմամբ հոտով բուրեցեալ։

Որք ի վաղ ժամանակ են սըղոցեալ,
Նիշքն ի շիրմի այնց կան յայտնաբանեալ,

2. s զփոխդ՚՚րձն. 9. s սմայ. 23. s զի ի քեզ. 26. s սըղոցեցեալ.

Digitized by Google

Ոմանք հրով այրեալ, ոմանք քարկոծեալ,
Եւ շատք դըլխատեալ և զարիւնս հեղեալ։

Եւ այլք այլ կերպիւ են չարչարեցեալ,
Սարսըռելագոյն մահուամբ կատարեալ,
Շատք կախարանէ զխեղդումն ընկալեալ,
Ի սէր հաւատոյ ըզկեանսն մատուցեալ։

Աղօթիւք սոցին կաս պահպանեցեալ,
Շուրջ ըզքեւ որպէս զպարիսպ են կառեալ,
Որովք զօրացեալ ես, յախտից բուժեալ,
Ցուցմամբ հըրաշից սոցին հըրճուեցեալ։

Ահա յայս դարուս վըկայքս որ եղեալ,
Ներ այնց քաջ աղջիկն է գերազանցեալ,
Որ իբր հըզօր այր լեալ արիացեալ,
Յետ այնքան տանջմանց ըզմահ ընկալեալ։

Արդ յոմանց եղբարց հէքս եղէ հարեալ,
՚ի ի սիրոյ սըրբոցս եւս յաղթահարեալ,
Յետ ինչ միջոցի որ վերայ անցեալ,
Զասկաւ բանս հիւսել եղէ յօժարեալ։

Ներ Թըւոջս որ էր հազարաւորեալ,
Երկ հարիւր վաթսուն յոր յարաբարդեալ,
Փետըրվար ամսոյ օր տասն և հընգեալ,
Յիմս դըժբախտ դիտմանց պահու պատահեալ։

Ի հանդիպողացդ խընդրեմ աղերսեալ՝
Յիշել զիս յաղօթս ձեր հաճոյացեալ,
Որ և Տէր լիցի համայնցս ողորմեալ,
Աստ և հանդերձեալն առնել ցընծացեալ։

20. Տ և վատսուն.

*Ծրգս ի վերայ Դընդըկցի Նոր Նահատակացն, այսինքն արիասիրտ Վառվառ անուն աղջկանն եւ եղբօրն եւ միւս կնոջն։ Երգի որպէս – իմ՝ աննման յոյժ զովելի արայի զոյն՝ սէն կիտերսըն ալէն աղլարըմ պաշը…*

Ի զուր մատնեալ ըմբըռնեցար,
Բըռնակալաց յատեանն կացար,
Ընդդէմ Նոցա արիացար,
Երանուհի դու կոյս Վառվառ,
Աւաղ, աւաղ, ջահ հոգւոյդ էր վառ։

Համբերեցեր շատ տանջանաց,
Կըրկին կըրկին բանտի վըշտաց,
Ցաղթեցեր դու քոյդ Ներհակաց,
Երանուհի արիդ Վառվառ,
Աւաղ, աւաղ, ակն հոգւոյդ պայծառ։

Եղբայրդ եւըս ըմբըռնեցաւ,
Նահատակեալ կատարեցաւ,
Ընդ վըկայսըն իսկ դասեցաւ,
Երանելին այն քաջ Գասպար,
Աւաղ, աւաղ, ընդ սուրբս լեալ ի չար։

Ներ տանն ըզքեզ պահօղ կինն այն՝
՚Նդ քեզ ընկալաւ ըզսուրբ վախճան,
Գըռակակից քեզ գոլ արժան,
Երանուհին այն Մարիամ,
Աւաղ, աւաղ, հոգւով քեզ երամ։

Նանիր կենցաղս անարգելով,
Անանց փառաց հասանելով,
Համայնց Փըրկչին հարսնանալով,
Երանելի Նոր Նահատակք,
Աւաղ, աւաղ, եղէք լուսոյ ակք։

2. s եղբօրըն. 9. s հգյդ. 14. s հգ″յդ. 2I. s ընդ. 24. s հգ″վ.

Էջ լոյս յերկնից ի ձերդ տապան,
Համայն տեսօղքն ուրախացան,
Փրկչին եղեն տիր գոհարան,
Դուք երջանիկ նոր նահատակք,
Աւաղ, աւաղ, լուայ ընդունակ։

Է գիտողաց հրաշք ձեր յայտնի,
ՄԵԾԵՌ թըւոջս որ կատարի,
Ի նօտարէս երգս յարմարի,
Ձերդ օգնութեան եմ միշտ փափագ,
Աւաղ, աւաղ, հասցէ ինձ արագ։

Ներբողական տապանագիր ի վերայ սոյն նահատակացս· անուն յարմարողին եւ թուականն գտանի ի վերջին տանն·

Գեղապանծ ըզլոյս զոր Սուրբք ըզգեցան՝
Ըզնոյնըն ըզգենուլ մատնեաց զանձն զենման
Արարչին ի փառս զՎառվառ քոյր իւրեան,
Ջանայր ազատել ծարաւեաց յարեան։

Սիրտ արի յինքըն բերեալ սա զգետնեաց
Զերկիւղ վըտանգին՝ զոր բըդեաշխն ազդեաց.
Պարանն ի փողին զգին կենաց կըշռեաց,
Զժանեակ ոսկեթել զյաղթանակ ընտրեաց։

Արփւոյն ի շողոյ ունել զջերմութիւն,
Բարձրացեալ յերկրէ էջ յայս խորութիւն,
Րենական զինուք եհատ զզօրութիւն
Բանսարկուին՝ լարեալ զհաղբ յորսառութիւն։

Ի յաբեղայէ Շընորհ ձայնելոյ,
Ի յաւելածուէ Սաղիմայ սըրբոյ,
Գըրի սա ի սէր քումըդ կօրօվւոյ
Ի փըրկչականի ԷՆԲԱՌըՆ թըւոյ։

12. s թըւականն. 25. s զհաղբ.

Digitized by Google

*Երկրորդ տապանագիրս ի վերայ երանուհւոյ Վառվառ Նահատակին՝ զոր նախատառքն յայտ առնեն։ Նմանապէս եւ անուն հիւսողին եւ թուականն ի վերջին տան գտանի․*

Վաղագոյն տըռփումնդ ի քեզ այդ փառաց
Ցոլանայր արև շողով շընորհաց,
Իբրև եղջերու առ ջուրըն կենաց՝
Դիմեալ զովացար ըստ քոյդ տենչանաց։

Ազաւնիդ Նոյեան ըզչիւղ ձիթենւոյ
Գեղուղէշ ծաղկեալ յարևոյդ տընկոյ՝
Կայսերաց առ կայսրն նուէր թագուհւոյ
Մատուցեր կոյսըդ պըսակ քում գըլխոյ։

Ռըմբաւոր արանց մարտին քաջութեան,
Բաղձաւոր տիկին զէնըն յաղթութեան
Ըզգեցեալ մարտեար ընդդէմ չարութեան,
Պատառչաց գառինդ՝ յուսով յարութեան։

Վերնական բարնացն յարդարեալ մըթեր
Գումարիլ ի քեզ յուսով յայս մըտեր.
Ցայս գուբ խորափոր զգանձ լուսոյ գըտեր,
Որով զարդարեալ զանձնըդ պըճնեցեր։

Ամոյ չափ եօթան աւուրց տանջանաց
Տոկումնըդ քեզ եւ ըզզարդ պարծանաց.
Զհարսնական զմանեակն նըման կուսանաց.
Ընկալար զօժիտ՝ ցուցակ յարգանաց։

Ռստինըդ քաղցու ըստեանց մօր լուսոյ
Դիել բաղձալով ի գիրկ թագուհւոյ,
Դըրդուեցար ի դուռն սուրբ եկեղեցւոյ,
Կալ խեղդին ի փողդ յաղթել քո մահու։

Յովհաննէս անուն յոմն աբեղայէ,
Սաղիմայ սըրբոյ ի յաւելածուէ,
Դըրի սա ի սէր յընծայեալ սըրտէ
ԷՆՐԲԱՌՆ ի թիւ որ փըրկչականն է։

Digitized by Google

Երրորդ տապանագիր ի վերայ ընդ նոյն աղջկանն կախեցեալ Մարիամ կնոջն, որպէս տեսանի ի գլխատառսն. Եւս. եւ անուն շարահիւսողին եւ Թուականն ի վերջին տանն.

Մեծ վայելչութեան փառաց պըսակին
Բաղձայր տօչորմամբ վերընտրեալ տիկին.
Արդարոց դասուց կուսանաց ջոկին
Կըցորդիլ յուսայր բարեպաշտ այս կին։

Բնական բարեօք լինել պանծացեալ,
Ըղպարտըս մեղաց ջընջել յուսացեալ,
Ի մահ ետ զանձն տոռամբ կախեցեալ,
Զհաւատոյն զպատիւ անբիծ պահեցեալ։

Արփւոյն շնորհաց լոյս ծագեալ ի սիրտ իւր՝
Ցերկրէս ելանել հաճեալ ախորժիւք.
Միածնին ի փառս թաքոյց ի տան իւր.
Ըզվ.տուվառ կոյսըն՝ մահակիցըն իւր։

Ցովհաննէս անուն հիւսեաց աբեղայն
Սըրբոյն Սաղիմայ զայս տապանի բան՝
Ի պատիւ իւր մօրն Մարիամ անուան
Ցամի ԷՆԲԱՌՆ Թըւոյ փըրկչական։

Սոյն վկայաբանական տաղը կազմում է ց ձեռագիրը, որ մի փոքր անկազմ տետրակ է հետեւեալ վերնագրով. «Տետրակս ոտանաւորեալ յորում պարունակի լիակատար պատմութիւն Դըլընըկցի նահատակացն՝ որք կատարեցան ի քղքս Կարին, յամի Տեառն 1810. և ի մերո թւին ՌՄԾԹ. եւ յետ անցման ինչ միջոցի ի յորգորմանէ ոմանց՝ յարմարեալ և շարահիւսեալ եղև յումեմնէ մանկավարժ նօտարէ մահտեսի Յօհաննիսէ Կարնեցւոյ. աշխատասիրեալ մեծաւ հոգունակութբ հասու լինելով համայն եղելութեանց և ըղհաւատութին

ուղղագրութք ի լոյս ընծայեալ։ Ի փառս Փրկչին մերոյ Քրիստոսի Աստուծոյ և ի պատիւ Նորին սիրովն վառեցեալ երջանիկ Նահատակացն. յամի տեառն 1811 և ի մերո թուոջ ՌՄԿ. յամսեանն յունվրի ԻԱ. ի քղքս Կարին։»

Տաղը տպուած է նախ Արարատի մէջ, 1895, նոյ" էջ 445—452, առանց որ և իցէ քննութեան. այս հրատարակութեան մէջ պակասում են վերջին երեք հատուածները, այն է՝ ներքողական տապանագիր են մինչև վերջը։

Վառվառէ կոյսի յիշատակը այնքան կենդանի է Կարնոյ և Կարնից գաղթած հայերի մէջ (Ախալցխա, Ալէքսանդրապօլ ևն), որ Նրա վերայ երգում են ժողովրդական այլևայլ երգեր։ Վարվառէի կեանքը նիւթ առնելով մի ընդարձակ վիպասանութիւն է կազմել ոմն Խաչատուր Ս. Էհրամճեանց (Կարնեցի), այս խորագրով. «Վարվառէ կամ XIX-րդ դարու զոհը». տպ. Թիֆլիզ, 1887։

Թուականի համար թէև վերի արձակ վկայաբանութիւնը էջ 644 դնում է ՌՄԿ, բայց այս թուի տեղ պէտք է հասկանալ ՌՄԾԹ—1810, ինչպէս որ ստանաւորների մէջ քանիցս յիշուած է ԷՆԲԱՌՆ=1810 թիւը, որի համաձայն են գալիս յունիս 8 դշ. և յուլիս 16 շաբաթ։

Digitized by Google

# 112

## ՊԵՏՐՈՍ ՆԻԺԵՑԻ

† 1826 սեպտ. 13

(Շաքի քաղաքի) հանգստարանի մուտքի աջ կողմում կայ մի նահատակի գերեզման, որի մահարձանի վերայ փորագրուած է.

Այս է տապան Նիժ գիւղացի  
Պետրոս անուն նահատակի.  
Սա էր որդի քահանայի.  
Ո՛վ հանդիպողք, տուք ողորմի.  
1826 ամի 13 սեպտեմբերի։

Սոյն տեղեկութիւնը ամբողջովին արտատպում ենք Մակար Ծ. վրդ. Բարխուդարեանցի «Աղուանից երկիր և դրացիք» աշխատութիւնից, տպ. Թիֆլիս, 1893, էջ 266։



Digitized by Google

# ԺԱԳ. (113.)

## ՅՈՎԱԿԻՄ ՍԱՄԱԹԻԱՑԻ

† 1843 օգոստ. 17

Ընդ այս ժամանակ Սամաթիացի երիտասարդ ոմն հայազգի Յովակիմ անուն՝ որ չորս ամօք յառաջ ընկալեալ էր զմահմէտական օրէնս, և ապա զղջացեալ և կերպարանափոխ եղեալ ըստ տարազու Եւրոպացւոց, և գաղտնի խոստովանեալ քահանայի իւրում չրջէր յանծանօթս, մատնութեամբ ոմանց կալանաւորեալ մատնեցաւ ի տանջանս: Պատրիարքն և ամիրայք չհամարձակեցան աղաչաւոր լինել առ Բ. Դուռն, զի անարգութիւն էր Մահմէտական դենին, և խրատ տային ողորմելի ծնողաց բանտարգելոյն երթալ աղաչել զդեսպանն Ռուսիոյ:

Եւ նոցա գնացեալ եռուն աղերսագիր դեսպանին, որոյ ընթերցեալ զթուղթն՝ իսկ և իսկ հրամայեաց երթալ առ Լօրտ Քանինկ դեսպանն Անգլիոյ, և մատուցանել նմա զայն թուղթ:

Ընթերցեալ դեսպանին Անգլիոյ զաղերսագիրն, և տեսեալ զարտասուաթոր աղաչանս նոցին, առաքեաց զԹիզանի զառաջին թարգման իւր ի Բ. Դուռն, առ վէզիրն մեծ Րէուֆ փաշա և առ վերատեսուչն արտաքին գործոց, զի ի չնորհս երեսաց իւրոց ազատութիւն տացի բանտարգեալ երիտասարդին այնմիկ: Գնացեալ թարգմանն խօսեցաւ առ վէզիրն զխնդիր դեսպանին, և ընկալաւ պատասխանի, թէ «յետ երկուց աւուրց ժողով առնի

լինել նախարարաց և օրէնսդիրաց, և ի ժողովին յայնմիկ յայտ առնել զխնդիր դեսպանի ձերում, և հանել ի բանէ զկողմնակցութիւն առաքեալ առ նա։ Եկեալ թարգմանն պատմեաց դեսպանին որպէս լուաւ, և դեսպանն մխիթարեաց զողորմելի ծնողս բանտարկելոյն համբերել աւուրս երկուս, և տեսանել զորդի իւրեանց առ ինքեանս։

Եղև ժողովն ի Բ. Դրան, և պատմեաց վէզիրն զբարեխօսութիւն դեսպանին վասն ուրացեալ կալանաւորին. բայց դենդեռն և Րիզա Ալի փաշա և այլ ևս երկուք ի ժողովականաց նախարարաց՝ արհամարհեալք զխնդիր նորա՝ վճռեցին գլխատել զնա ըստ օրինացն Մահմէտի. և գլխատեցաւ ողորմելի երիտասարդն ի Պալըգ բազար դուռն Կոստանդնուպոլսի յետ բազում յորդորանաց և խոստմանց մեծամեծ պարգևաց, զի դարձեալ յանձն առցէ ընդունել զմահմէտականութիւն. բայց նա ուրախութեամբ և փառաւորելով զՅիսուս Քրիստոս՝ խոնարհեցոյց զգլուխն առաջի դահճին, որ ձգեաց և ընկէց զգլուխն միով հարուածով, որոյ և ես եղէ իսկ ականատես, և եդաւ բեղոյլն (չափղա) ընդ երաստանաւ գլխատելոյն ի նախատինս քրիստոնէութեան։

Ընդ այս զայրացեալ դեսպանն Անգղիացւոց՝ ընդ որում և դեսպանք այլոց տէրութեանց՝ բողոք կալան զայսմ բարբարոսական գործոյ Բ. Դրան, և գրեցին առ կառավարութիւնս իւրեանց, և թագաւորք Եւրոպացւոց համաձայնութեամբ և խորհրդով միմեանց յետ հնգից ամսոց գրեցին առ Օսմանեան կառավարութիւնն խստիւ պահանջելով զազատութիւն և զհամարձակութիւն կրօնի ամենայն ազգաց. այնպէս զի թէ ուրացեալ ոք վերստին ապղջացեալ դարձցի յառաջին կրօնս իւր, մի լիցի նմա բռնութիւն. և եթէ ոք կրօնափոխ լինել կամիցի, զոր օրինակ Քրիստոնեայն կամիցի լինել Մահմէտական, և կամ Մահմէտականն՝ Քրիստոնեայ, մի արգելցի բնաւ, այլ թոյլ տացի ամենայն ումեք պաշտել զոր կրօն և ինքն կամիցի։

Digitized by Google

Առաջարկեցին դեսպանք զայս պահանջումն կառավարութեանց իւրեանց Բ. Դրան, և հրամանաւ արքային եղև ժողով մեծ ի պալատին, ուր կոչեցաւ և դեսպանն, և յետ բազում բանախօսութեանց և խորհրդածութեանց զայս պատասխանի որոշեցին տալ Եւրոպացւոց. Թէ «կառավարութիւնս յօժարութեամբ սրտի ընկալաւ զայդ առաջարկութիւն, բայց ի գործադրութեան մասին ոչ կարեմք այժմ հրատարակել ի լուր կրօնամոլ ժողովրդեան մերոյ, այլ խնդրեմք եօթնամեայ ժամանակ ի հրահանգել և ի համոզել զբիրտ հասարակութիւն մեր առ սակաւ սակաւ, ապա թէ ոչ՝ աղմուկ մեծ ծագի աղէտալի ի վնաս Քրիստոնեայ ազգաց»։

Այս մահ և նահատակութիւն Յովակիմայ եղև սկզբնապատճառ ազատութեան կրօնի. զի որք յառաջին բռնութեամբ ուրացուցանէին և յեղաշրջէին զբազումս ի Մահմէտական կրօնս, զոմանս յորդորանօք և խոստմամբ պարգևաց, և զոմանս ահիւ և սպառնալեօք, տանջանօք և մահացուցմամբ, այս ամենայն բարձաւ ի միջոյ և խափանեցաւ, և համարձակ թոյլտուութիւն եղև կրօնի ամենայն ազգաց պաշտել զկրօնս իւրեանց, շինել և նորոգել զեկեղեցիս առաւել վայելուչ և պայծառ քան զառաջինն. եղաւ զանգակատուն յեկեղեցիս Հայոց և Յունաց՝ փոխանակ անախորժ ձայնից ժամակոչաց. և ազատութիւն տուաւ կրօնափոխութեան ամենայն ազգաց եւս և Մահմէտականաց առանց անարգելոյ և հայհոյելոյ զկրօնս և զհաւատս այլոց, որպէս տեսանեմք այժմ։

Յիշեալ նահատակութեան պատմութիւնը ունի միայն Պատմութիւն Հայոց, Աւետիս վարժապետ Պէրպէրեան, Պոլիս, 1871, էջ 276—8։ Նոյն գրքի ժամանակագրական տախտակի մէջ, էջ 515, 1843 օգոստ. 17 թուականի տակ տրուած է նոյնպէս նահատակութեան համառօտութիւնը, որը աւելորդ համարեցինք դնել այստեղ։ Յովակիմ նահատակի տապանագիրը տե՛ս յաւելուածում (Բ)։

# ՅԱՒԵԼՈՒԱԾ Ա. ՆՈՐ ՎԿԱՅԻՑ

## I.

### ՅԱԿՈԲ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՒ ԸՆԿԵՐՔ ՆՈՐԻՆ

✝ օգոս. 14 կիր.

Կամիմ ես ի բանս խօսել,
Խօսելոյ ոչ եմ արժանի.
Հոգիս ի ձեռաց Թողի,
Հողեղէն մարմին սիրեցի։

Լըցեալ եմ զերսուն տարին,
Չեմ կացեալ ի պատուիրանին.
Հոգիս է մեղօք լըցեալ,
Եւ մըտօքս եմ տարակուսեալ։

Հան ցեղ ժամանակ հասաք՝
Այլազգեաց մէնք կոխան եղաք,
Պէսպէս փորձանաց դիպաք,
Եւ տաճկաց սըրէն խոցեցաք։

Ջօրէնս Աստուծոյ Թողաք,
Սատանայի կամքն սիրեցաք,
Այսպէս ժամանակ հասաք,
Եւ բազում չարիք դիպեցաք։

Digitized by Google

Վա՜յ է մեր Հայոց ազգին,
Որ բազումք ըղմեղ կոխեցին,
Մեր փառքն ի մեզնէ առին,
Մեր տանէն հանեալ վարեցին։

Յերկիրըն Հայոց ազգին՝
Թաթարին ազգն աւերեցին,
Վանայ մինչև յԾըրղընկան
Շինութիւն բընաւ չի թողին։

Շատ վանք և եկեղեցիք
Ի հիմանց խախտեալ փըլուցին,
Բազում գիրք աստուածաշունչք՝
Զայն ամէնն առեալ գերեցին։

Շատ բերդ և քաղաք առին,
Շատ երկիր հըրով այրեցին,
Կացինն ի ձեռներն առին,
Զքոյս և զտունկ զամէնն կըտրեցին։

Ողորմ ողբալից բաներս՝
Որ եղաւ Արճէշ գաւառին,
ԶՅակոբ քաջ րաբունապետն
Երեսուն հոգով սպանեցին։

Ամսեան ի Օգոստոսին
Տասնեչորս օրն ի կիրակին,
Փոխման սուրբ Աստուածածնին,
Անօրէնքըն զնոսա պատեցին։

Մինչդեռ ի պաշտօն էին
Ի ժամու անհեղ գիշերին,
Յակոբ վարդապետըն սուրբ
Մեկնութիւն առնէր երազին։

13. m բերդ. 17. m ողբալիկ. 20. m յերեսուն. 24. m յանօրէնքն.

Ասաց իր միաբանից թէ՝
Շաւտով նըշխարըք կազմեցին.
«Գիշերս ես երազ տեսայ,
«Կու փախեմ այլ մի ծուլանայք։

«Որդիք, պնդաց մէ կենայք,
«Մխիթարանց խոստովանեցէք,
Իմ սիրտս ի փորքս կ'այրի,
«Դուք ընաւէին զայն ոչ միտ ածէք»։

Յորժամ զպաշտօն արարին,
Ժամարարքն ըսպաս դընէին,
Յանկարծ դըղըրդում եղև,
Թէ «Եաղինքն ըզմեզ կոխեցին»։

Յանօղորմ ի ներս մըտին,
Յուսերօք զնոսա սպանեցին,
Մինչդեռ պատարագէին,
Զամենայն ի սուր քաշեցին։

Մինչդեռ կենդանի էին,
Օրհնութիւն վերառաքէին,
Բազում լալիւ ողբային,
Առ Քրիստոս ձայնիւ գոչէին։

Յորժամ նահատակեցին,
Եւ ըզտաճարն հրով այրեցին,
Մարմինք սուրբ երանելեացն
Տաճարէն այլ ոչ փոխեցին։

Յակոբն էր ընտրեալ ազգօք,
Եւ լըցեալ եօթնարփին շնորհօք,
Մաքուր յաշխարհի կացեալ,
Զարդարեալ անճառ պըսակօք։

4. m ծուլայնէք. 5. m անհօք. 7. m սիրտըս. 20. m գոջէին. 26. m եաւթնարբին.

Եղուկ ու վայ մեր անձանցս՝
Որ աչօք մերովք զայս տեսաք.
Ողորմ ողբալի եղաք,
Հայրեններաց մերոց զըրկեցաք։

Ով որ զայս բաներս ասէ,
Վարդապետն բերան մի յիշէ,
Քրիստոս իւր մեղքըն ջընջէ,
Գեհեննին հըրոյն ազատէ։

Սոյն վկայաբանական տաղն ունի միայն m ձեռագիրը, էջ 88 ա—91 ա, այս վերնագրով. «Տաղ ի յակոբ վրդպին և ընկերաց նորին։» Դժբախտաբար նահատակութեան թուականը չէ յիշուած և ոչ մի միջոց չունինք գոնէ մօտաւորապէս երևան հանելու

## Ձ.

### ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄՈՒՂԱՐՈՑԻ

Մեզ ծանօթ է այս նահատակի տապանագիրը միայն. տես Քօսեան, Հայք ի Զմիւռնիա և ի շրջակայս, հատ. Բ. Վիեննա, 1899, էջ 125։ Տապանագրի գլխին թուական դրուած է 1833, բայց վերջին տողում ասուում է «Թվին հազար երկու հարիւր չորսին» (=1755)։ Չկարենալով ստուգել թէ որն է ուղիղ, դրինք յաւելուածիս մէջ։

18 ✝ 33

Տեառն զօրութեամբ արիացեալ,
Սուրբ նահատակս որ աստ գանձեալ,
Մալղարայու յերկրին ծնեալ,
Եւ Յարութիւն անուն կոչեալ.
Որոյ չարի ինչ հանդիպեալ,
Զհաւատ իւր այլափոխեալ,
Քսանամեայ ի տիոն հասեալ,
Իբր զՊետրոս անդ զղջացեալ,
Սրտի մտօք առ Տէր դարձեալ,
Գլորեալ անձն անդէն կանգնեալ,
Եւ վերստին խոստովանեալ,
Ի նոյն վիմին անշարժ կացեալ,
ԶԱստուածորդին տէր դաւանեալ,

3. գրուած էր մալղարայու. ուղղեցինք այսպէս. 10. կանկնեալ.

Ի Մանիսա քաղաքս եկեալ,
Եւ յումեմնէ աստ ծանուցեալ,
Ցանօրինաց ձեռամն մատնեալ,
Ցարգելանոց չորս օր բանտեալ,
Զարչարանօք յոյժ վշտացեալ,
Ցետոյ սրով գլխափառեալ,
Լոյսն ի յերկնից վկայ իջեալ,
Թէ ի Տեառնէ իւր պսակն առեալ.
Որ յԱստուծոյ զայս էր խնդրեալ,
Եւ խնդիրք հաճոյացեալ,
Թէ յախտ ջերման որք հանդիպեալ,
Լիցի Տէրամբ փոյթ բժշկեալ,
Եւ յամենից չարաց զերծեալ.
Թվին հազար երկու հարիւր չորսին։

2. յումէմնէ.

# 3-

## ՆԱՀԱՏԱԿՔ Ի ԿՈՍՏԻՐՈԾԻ ԿԵՏԻԿ ԱՀՄԷՏ ՓԱՇԱՅԻ

1448-ին Խրիմու Հաճի-Գէրէյ կոչուած Թաթար խանին ցեղը զօրանալով՝ շատ պատերազմներ ըրին Գենուացւոց հետ, բայց չկարողացան բոլորովին յաղթել։ Այս բանիս վախճանական հնարը գտնելու համար՝ Թաթարաց Մէնգլի-Գէրէյ խանը Օսմանցւոց Մէհէմմէտ Բ-ին դիմեց, հետը միաբանեցաւ և նորա ծովակալ Կէտիկ Ահմէտ փաշային օգնութեամբը եկաւ տիրեց Գենուացւոց ձեռքն եղած քաղաքներուն, այսինքն Սուդաղի, Բալըքլաւայի, Կերչի, Մանգուփի և Քերսոնի. բայց չկարողացաւ առնուլ նաև Կաֆա քաղաքը, որոյ մեծաշէն ու անառիկ Փոռճանիկիար և Հայոց բերդ կոչուած ամրոցները վերջին ապաստանարան դարձած էր Կաֆայի բնակիչներուն։

Հայք և Գենուացիք ամենայն զօրութեամբ միացած մեծ քաջութեամբ պատերազմեցան Տաճկաց հետ. և երբ Գենուացւոց ազնուականները թուլանալով նոցա իշխանը իւր զօրացը հետ փախաւ և միայն Հայերը մնացին Գենուացւոց հակառակորդին դէմ, Տաճկաց փաշան ուխտ դրաւ Հայոց հետ որ եթէ հնազանդին՝ ամենևին վնաս չպատնոցա։ Հայերը քաջ ճանաչելով մահմէտականաց խարդախութիւնը, թէև ի սկզբան չուզեցին հաւատալ Կէտիկ Ահմետի երդմանը, բայց յետոյ Հայի պակասութենէն անճարանալով՝ երդումը ընդունեցին և 1475-ին վերջերը քաղաքը Տաճկաց տուին, որով այնուհետև բոլորովին վերջացաւ Խրիմէն Գենուացւոց իշխանութիւնը։ Շատ ժամանակ չանցած՝ Հայերն ալ զոհ եղան Կէտիկ Ահմէտ փաշայի

*սուտ երդմանն ու սաստիկ կրօնամոլութեանը, որ մահմէտական կրօնքը՝ Հայոց չընդունելուն համար, խարդախութեամբ ճաշի հրաւիրելով նոցա մէջ եղած իշխաններն ու ազնուականները, անպատմելի տմարդութեամբ մէկ մէկ կոտորել հրամայեց և մարմինները ծովը ձգել տուաւ։ Ահա Նեովիթայի ձեռագիր Ցայսմաւուրքին յիշատակարանին այս մասին պատմած խօսքերը,*

*...«Թուրքն ԳՃ* (300) *նաւօք ընդ ծովով և ինքն (Մէնգլի-Գէրէյ) ընդ ցամաքիւ պաշարեցին զՄէօգոսխա, յայնժամ ընդդիմացան իշխանքն և ազնուականքն մեր և ոչ ետուն զքերդն։ Ապա Թուրքին ուխտ եդեալ ընդ Հայոց չմեղանչել եթէ հնազանդեսցեն, այլ ազատութիւն տալ։ Տեսեալ իշխանաց մերոց և ազնուականաց զթուլութիւն իշխանին Ջինիւիզաց և զօրացն նոցին, մանաւանդ թէ իշխանն փախուստ էառ, անճար մնացեալ ի սովու, առին զերդումն և զքաղաքն ետուն Թուրքաց, զայս եղև ՋԻԴ* (1475) *թուին։*

*Իսկ Թուրքքն զկնի սուղ ինչ ժամանակաց ստեցին երդմանց և պայմանին իւրեանց. հանապազ հարկադրէին իշխանաց մերոց և ազնուականաց դառնալ ի կրօնս մահմէտական, զի դիւրաւ նուաճել (կարասցեն) զմնացեալ գռեհիկս։ Բազումս Կէտիկ Ահմէտ Ղաբիտան փաշայն բռնադատէր և բազմիցս ի ճաշ և յընթրիս հրաւիրեալ զպատասխանս խնդրէր դառնալ ի հաւատոց. և իշխանքն մեր պատասխանեն՝ թէ եթէ բռնութեամբ կամ սրով կոտորես զմեզ, մեք յօժար եմք փոխել զկենցաղս զայս ընդ յաւիտենականին, քան թէ զքրիստոնէական կրօնն ընդ մահմէտականին. զի մեք չեմք վաճառօղ կամ փոխօղ հաւատ ընդ հաւատոյ, այլ սէր ընդ բարեկամի և բարեկամ ընդ սիրոյ։ Եւ յետ բազում հարցմանց և պատասխանատուութեանց կրկին կեղծեալ բարեկամացան. բազմիցս իբրև զսէր ցուցանէր իշխանաց և ազնուականաց մերոց, և ասէր. «Այսուհետև ոչ է պատեհ ձեզ զսուր ընդ մէջ կապեալ առ իս գալ ի ճաշ կամ յընթրիս, այլ առանց սրոյ.» և այլ բազում բանիւ։*

Digitized by Google

«Յաւուր միում հաւատացեալ իշխանաց մերոց բանիցն փաշային, և մանաւանդ անճար մնացեալ՝ ըստ հրամանի նորին գնացին առանց սրոյ ի ճաշ առ փաշայն. զի էր բնակութիւն նորա Իսկէլէ ղաբուսին ի վերայ չորրորդդատիկոնի պալատին. յետ ճաշելոյ նոցին ի յիջանելն ի ձիգ ձիգ աստիճանսն պալատին, դահիճքն ըստ հրամանի փաշային մի մի կոտորեալ արկին ի ծով։ Այսպէս իշխանազունք մեր և ազնիւք կատարեցան ի Քրիստոս. ապա հրամայեաց Թուրքաց և Թաթարաց կոտորել զամենայն ազգս Հայոց, որք ի նմին աւուր բազմամարդ քաղաքն Թէոդոսիա սակաւաբնակ արարին. զի զծերս և զտղայս, զպառս և զկանայս սրոյ ճարակ ետուն, և զարիւնս նոցա յերկիր յեղեալ իբրև զվտակս գետոց ընթանայր ի փողոցսն. անթիւ աղջիկք և մանկունք և մատաղ տղայք գերեալ առաքեցին ի Պօլիս առ սուլթանն. զոյնս արարին ի Կաչարաթ և ի Սուրխաթ։ Այսպէս բազումք իշխանաց և ազնուականաց և հասարակ ժողովրդոց մեր՝ յոմանս առ Աստուած կատարեցան և յոմանս գերի վարեցան վասն հաւատոյն և վասն անուանն Յիսուսի Քրիստոսի։

«Բայց անօրէն խանն Ղռիմոյն և դժնաբարոյն և ծարաւին անմեղ արեանց, և պատճառն կոտորման ազգիս մերոյ, ինքն ևս մնաց ամօթալի, որ ոչ միայն ոչ ետ Ղաբիտան փաշայն զորդին խանին ըստ պայմանին, այլ տարաւ ի Պօլիս առ սուլթանն, և նա հնազանդեցուցանելով ինքեան զմանուկն Օսման ամրափակ նզովիւք, առաքէ ի Ղռիմ, զհայրն սպանեալ նստուցանէ յաթոռ խանութեան։ Յորմէ մինչև ցայսօր խանն Թաթարի՝ նստի ըստ հրամանի սուլթանին Թուրքաց. և մնացեալ ազգս Հայոց մինչև ցայսօր բնակիմք ի ձեռս Թաթար խանին, հարկատուողական պայմանիւ»։

Սոյն գլուխը ամբողջովին արտատպում ենք Յովհաննէս Տէր-Աբրահամեանի Պատմութիւն Խրիմու անուն աշխատութիւնից, տպ. Թէոդոսիա, 1865, Մասն Բ, էջ 62—66։

Digitized by Google

# Ձ.

## ՎԱՍԱԿ ԳԱՑՐԱՆԻԿ

† ՈԾ=1201

Յորժամ Թուականն էր ՈԾ, բարեպաշտ պատրոնիկն Վասակ Թոռն Կիւրիկայ Թագաւորին, որդի Հասանայ որդւոյ Սակռայ տեառն Հաթերքոյ, Հանդաբերդոյ, Հաւքախաղացին, եղբայր Վախտանկայ Նորին աԹոռակալի եբեր զխաչս և ոչ կարաց կանգնել վասն անպարապուԹեան. քանզի երԹեալ եղև ի Գոլաշտեան և առ զնա յամօրինաց օգնուԹեամբն Աստուծոյ և բնակեցոյց անդ զորդին իւր և ինքն նահատակեցաւ ի վերայ քրիստոնէից և իջեալ լոյս ի վերայ ի տեսուԹիւն բազմաց. և յետոյ ՈԾ Թուքն կանգնեցին որդիք նորա Խոյդան և Խաւչախն յիշատակ հոգւոյ նորա և յերկարուԹիւն կենաց իւրեանց...

Սոյն արձանագրուԹիւնը գտնւում է Խաթրայ վանքից ներքև Թարթառ գետի վերայ եղած հին կամուրջի մօտ՝ մի խաչարձանի վերայ, ըստ Մակար եպս. Բարխուդարեանցի Արցախի, տպ. Բագու, էջ 196։

1. տպ. ՈՁ, բայց էջ 459 վրիպակների մէջ ուղղուած ՈԾ. 2. տպ. Քիւրիկայ. 11. այսպէս երեք կէտ տպագրեալում։

Digitized by Google

5.

## ՓԻՐ, ԾԱՄԱԼ ԵՒ ՔՈՅՐ ՆԱՅԻՆ

(Փիր–Ծամալ) գիւղիս անդումն է (Ղօրա) անուն ուխտատեղին, այս է երկու փոքրիկ մատուռներ, որոց մէջ, ասում են աւանդաբար, թէ ամփոփուած են նահատակուած Փիրու և Ծամալի մարմինները, վասն որոյ ուխտատեղի է յարգուած ոչ միայն հայերից, այլ և մահմետականներից։

Աւանդութիւն. Ասում են. «Հարազատ եղբարք են Փիր և Ծամալ. երկուքն ևս հաստատ մնալով իւրեանց լոյս հաւատքի վերայ՝ նահատակուում են անօրէններից։ Յետոյ երկու եղբարցս անուամբ կոչուում է գիւղս Փիր-Ծամալ։ Իսկ սոցա քոյրն նահատակուած է Նախջուանիկ գիւղի հիւսիսային կողմում։»

(Նախիջևանիկ) գիւղից և Ասկերան բերդի միջև կայ մի ուխտատեղի, որի մասին ինչպէս ասացինք, Փիրու և Ծամալի քոյրն է, որպէս վկայում է աւանդութիւնն։

Տէր Մակար եպս. Բարխուդարեանց, Արցախ, էջ 128—129։



Digitized by Google

## 6-

## ՍՈՒՐԲ ՍՐԱԲԵԿ

Սուրբ Սրաբեկ. Ուխտատեղի Նահատակ գիւղիս (Դաշուշէն գիւղի) հիւսիսային կողմում։ Թափուած քարերից երեւում է, որ հնուց մատուռ եղած է նահատակիս վերայ, բայց կործանուած է հիմնայատակ։ Այժմ ծերունի ծառերի փառաւոր հովանու տակ շարուած են չոր քարեր իբր պատ, որի մէջ դրուած է մի հնաշէն քարեայ խաչ միջակ մեծութեամբ՝ յենած մի մեծ ծառի։ Ահա խաչս է ուխտատեղի, որի ուխտաւորն ամառ, ձմեռ անպակաս է, մանաւանդ Տուշուց, որ շատ հեռի չէ։ Նշանաւոր է արդարեւ Սրաբեկիս աղբիւրի ջուրն, որի մօտ կայ մի քանի սենեակ։

Տես Մակար եպս. Բարխուդարեանց, Արցախ, էջ 130։

# 7-

## ՓՈՒՇՆԻՆ ՆԱՀԱՏԱԿ

(Դահրան գիւղի հիւսիս-արեւմտեան կողմում եղած երեք բեմերից) առաջին բեմից փոքր ինչ վերեւ քերծի տակ մի բուշնի ծառի մօտ կայ մի գերեզման, որի վերայ շինուած է մի փոքրիկ սեղան։ Գերեզմանիս շուրջն պարսպուած է պատով, որի դրան գլխի քարի վերայ գրուած է.

«Սուրբ Նահատակին Փուշնին չորս կողմաւն հասար քաշեցինք Անդրի, Ստեփան, Արզման Իսրայէլեանք։»

Տես Մակար եպս. Բարխուդարեանց, Արցախ, էջ 156. Հեղինակը նոյն Փուշնին անունը մեկնում է ծանօթութեան մէջ «Բուշնի ծառին մօտ եղած Նահատակ», և ըստ այսմ էլ վերնագիրը փոխում դնում է «Բուշնին Նահատակ»։

Digitized by Google

8-

## ԾԵՐ ՆԱՀԱՏԱԿ

Գիւղատեղի, հանգստարան և եկեղեցի կայ (Գտրեցիք) գիւղից բաւական ներքև գետի ձախ կողմում (գետի վերի կողմն կոչւում է Գտրեցւոյ գետ, իսկ վարինն՝ Խոջալլուի գետ), որք միասին կոչւում են Ծերայ Անապատ: Եկեղեցումս ամփոփուած է Ծեր Նահատակի մարմինն։

Տես Մակար եպս. Բարխուդարեանց, Արցախ, էջ 158։

Digitized by Google

Գ.

## ԱՆԱՆՈՒՆ ՆԱՀԱՏԱԿ

(Ուլու-պապ չէն գիւղի) եկեղեցին է Պտգեսբերք (Պտկի սուրբ Գէորգ) վանքն, որ է չինիս արևելեան հանդէպ բարձրագոյն սարի գագաթի վերայ… Վանքիս դաստումն կայ մի փոքր գերեզման, որի մասին աւանդութիւնն ասում է թէ սոյն ամփոփեալն մահմետականի որդի է լինում, քանիցս սա իւր ծնողաց հետ գալիս է ուխտի վանքս. բայց որովհետև չքերք են լինում ծնողներն և ուխտով խնդրած այս զաւակն, վասն որոյ որդին թողնում է իւր ծնողները և յաճախ դիմում վանքս և շաբաթներով աղօթում վանքումս։ Քանիցս գալիս է հայրն և իւր տուն տանում իւր որդին, սակայն կրկին և կրկին փախչում է որդին և մտնում վանքս։ Վերջապէս հայրն՝ ձանձրանալով որդու արարմունքից և չկամենալով քրիստոնեայ տեսնել իւր որդին, գալիս է վանքս, համոզում որդին տուն տանելու։ Իսկ որդին չկամենալով բնաւ տուն գնալ, մտնում է տաճարումս և չէ դուրս գալիս, հասնում է զայրացած հայրն և նահատակում այժմեան գերեզմանի տեղում, որի մարմինը ամփոփելով այս իսկ տեղում մնում է մինչև ցայսօր. ուխտատեղի է գերեզմանս։

Ամենամեծ ուխտատեղի է վանքս, մանաւանդ ամուլ մարդոց և կանանց համար, ոչ միայն քրիստոնէից, այլ և մահմետականաց համար։

Տես Մակար եպս. Բարխուդարեանց, Արցախ, էջ 162—163։

Digitized by Google

## 10.

### ՀՂԵԳԵՐԱՆՑ ՆԱՀԱՏԱԿ

(Հղեգերան) լեռնաշղթան սկսւում է Գանձասար վանքի սարից. ձգուած Շահմասուր, Ծմակահող, Ալաջանձոր. Կիչան գիւղերի արեւմտահիւսիսային գլուխներից, անցած Արծաթահանքի մօտով և ճիւղաւորուելով հասած մինչև Թար-թառբերանին.

Սարում, որ գիւղս (Վանք գիւղի) հիւսիսային կողմումն է, կայ մի խաչարձան նահատակ անուն կամ Հղեգերանց նհատակ. Ուխտատեղի է. բայց ոչ ոք չգիտէ նահատակիս անունը.

Տէր Մակար եպս. Բարխուդարեանց, Արցախ, էջ 172.

## II.

### ԶԱՔԻՆ ՆԱՀԱՏԱԿ

(Դատի-Բէկանց) կիսաւեր վանքս գտնուում է Կիւլատան գիւղից ներքև Խնձա գետի աջ կողմում։ Մենաստանիս մօտ կայ միաբանից սենեակներ և հանգստարան։

Աւերակ վանքիս հիւսիսային կողմում, Գարանպատ անուն անտառում, Խնձայի ձախ կողմում կայ գիւղատեղի, հանգստարան և կիսակործան մի փոքր եկեղեցի Զաքին նահատակ անուն։

Տէր Մակար եպս. Բարխուդարեանց, Արցախ, էջ 243։

## 12.

### ՈՍԿԵԹԵԼ ՆԱՀԱՏԱԿՈՒՀԻ

Վսկաթել (Ոսկեթել) մատուռը գտնւում է գիւղից (Հարցհանգիստ գիւղի) հիւսիսային անդնդախոր ձորում, որի միջով հոսում է Հարցհանգիստ առուակն։ Փոքրիկ մատուռ է, ձեղունն փայտաշէն. որի մասին ոչ ինչ չկայ գրաւոր. միայն աւանդութեամբ ասում են թէ «Մի Վսկաթել կոյս աղջիկ նահատակուած է այստեղ»։ Մատրանս ստորոտից բղխում է մի նշանաւոր աղբիւր։

Տես Մակար եպս. Բարխուդարեանց, Արցախ, էջ 293։

Digitized by Google

13-

## ԲՈՒՍԿԱՆ ՆԱՀԱՏԱԿ

Բուսկան (գուցէ Ոսկան) Նահատակ.—Փայտաշէն մատուռ Փիփի հիւսիսային կողմում, գետակահայեաց լանջի վերայ։ Մատրանս մէջ կայ տապան, որի վերայ կանգնած է մի մեծ քարեայ խաչարձան, որ ուխտատեղիյ է։

Տես Մակար եպս. Բարխուդարեանց, Արցախ, էջ 300։

Digitized by Google

## I4.

### ԸՆԴԱՄԻՆ ՆԵՀԵՏՈՒ ՏՐԱՊԻԶՈՆԻ

*(Տրապիզոնի սուրբ Աստուածածին) եկեղեցին ունի երկու դուռ. մէկն հիւսիսային կողմը. ուր կայ քաւկ և նահատակի գերեզման երկաթապատի. որ հաւատքի համար շատ տանջանք քաշեր նահատակվեր է, բայց շատ հին չէ, երբ հարիւր տարուան գիր կայ.*

Արտատպում ենք Հ. Մինաս վրդ. Բժշկեանի պատմութիւն Պոնտոսի աշխատութիւնից, տպ. Վենետիկ, 1819, էջ 80։

Digitized by Google

# 15.

## ԳՐԻԳՈՐ ՆԱՀԱՏԱԿ

(Հիւսիսային Վայոց Ձորի Բէջօթեանլու գիւղի մօտ) կայ և այլ ընդարձակ գերեզմանատունք յարևմտակողմն ի սարահարթ վայրի, յորում նշմարին քառանկիւնի խաչվէմք գեղաքանդակք, կէսք կանգունք, այլք տապալեալք, յորոց երկուքին յարակիցք. ի միումն գրեալ,

Գրիգոր Նահատակ. յիշեցէք ի Տէր։

Տես Սիսական, էջ 109։

## 16.

### ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՆԱՀԱՏԱԿ

(Վայոց ձորի մէջ Եղեգեաց) չորրորդ եկեղեցին փոքրիկ (6 քայլ ընդ երկայնն և ընդ լայն) է ի հր. գերեզմանատանս ի ձորափն գետոյն, վայելուչ կաթողիկէին. որոյ մէջ յօրինեալ է կարմիր և սեաւ քարամբք, ի վերայ երկուց որմայեց սեանց, ունելով աւազան յաջմէ և պատուհան յահեկէ, և գաւիթ յառաջոյ (10 քայլ երկայն, 8 լայն), մանրաքանդակ շրջանակաւ դրանն։ Ցորմն հարաւային քանդակեալ է վիշապ երկգլխի և ժամացուցակ ի մէջին։— Ցարևմտակողմն գերեզմանատանն կայ տապան Նահատակի միոյ պատուեալ ի Հայոց և ի Պարսից կողմանցն, յորոյ վերայ գրեալ է և նոցա ինչ, որ որպէս և հայերէն գրուածն խանգարեալ է, այլ վերծանեն բանքս.

...Զհոգիս ճշմարիտ հաւատով և ուղիղ սրտիւ և լի շնորհաւք. Նահատակեցաւ և Քրիստոսի լուսոյն արժանի եղև, և Քրիստոսի ողորմութեանն հասաւ... ամենայն ցաւոց բժիշկ... յաղօթս յիշեցէք եղբարք մեր Սուրբ Ներսէս... փառն անուանն Քրիստոսի։

Տես Սիսական, էջ 151։

# I7.

## ԳՐԻԳՈՐ ԵՒ ՄԱՐԻԱՄ ԱՐՓԱՑԵՑԻՔ

(Վայոց Ձորի Արփա գիւղից) փոքր մի բացատոյն ընդ-արեւելս առ աղբերբ միով որ Գարա-սու (Սև ջուր) կոչի, առ ստորոտով քարաբլրոյ են հանգստարանք երկուց նահատակաց, ըստ աւանդութեան, եղբօր և քեռ, կոչեցելոց Գրիգոր և Մարիամ. ի կողմանս ժայռին հատեալ են խաչանիշք, և ի ներքոյ մատուռն յոյժ փոքրիկ, որ է հանգիստ Գրիգորիդ. և ի վերայ տապանին կանթեղք ուխտաւորաց, որք բազմութեամբ գան ի մերձակայ գիւղից աջակողմեան Արփայի և մեծարեն աղօթիւք, նուիրօք և ագապիւ զտեղիս այս, սրբազան իմն համարելով նա և զծառս փշատենիս և գլունապենիս վայրուցն, և ոչ հատանեն։

Տես Սիսական, էջ 183։

# I8-

## ՏԷՐ ԿՈՐԵԳԻՆ ՔՈՀԱՆԱՅ ԹԱՐԱՄԼԻՑԻ

Համշէնի լեռներու արեւմտեան երեսից հիւսիս կը հոսի Սեւ Գետ (գարա-տէրէ) ասուած մեծ և պատմական գետն։ Սորա հովտի ամբողջ տարածութիւնը Սեւ Գետ և ըստ ժողովուրդի Սեւ Գետացիք կասուին, որ Համշէնցոց պէս հայերէն կը խօսին և 1708-10 թուականներուն թուրքացած են կրօնամոլ մօլլաներու և ենի-չերիներու ճնշման ներքև...

...Համշէնի և Սեւ Գետ գաւառաց մէջ կային 16,000ի չափ հայեր, որք մասամբ որջացած էին այնպիսի վայրեր, գաւառակներ, որոց յարաբերութիւնը արտաքին գաւառներու հետ խզուած էր, երկրի դիրից բնական պատճառներով...

...Ենիչերիներու ի Տրապիզոն ամենազդեցիկ ժամանակն էր 1700 թուականը, որք Պոլսէց ի Տրապիզոն որջացած, իրենց թուոյն վերայ ևս բարդուած էին տեղացի աւազակք ու ենիչերեաց կարգն անցած և. սոքա ևս սփռուած էին մինչև Կարին, Մուշ, Վան, Բաղէշ, Տիգրանակերտ, Խարբերդ ևայլն։

Ենիչերիներու մեծ ոյժ տուած էր Սիւրմէնեցի աւազակաբարոյ ժողովուրդն, որք մեծ և փոքր աւազակ են, այս օր իսկ, մի փոքր մասն միայն նաւավարութեամբ կը

ցպ. կան.

պարապին. ենիչէրիք ուէլի նոցա ազդեցութեամբ ի Սեւ Գետ գործած են, երկրի դիրքն ալ իրենց օգնած է։ Ամեն գաւառ լեռներով ու անտառներով շրջապատուած է պարապի նման, հնաւուրց անտառներն անմխելի դարձած են, որով ենիչէրիք ուռկանի մէջ ամփոփուած ձկներու նման էին որ ուզած են այս տեղ անել՝ յաջողած են։

Այսպէս էր Սեւ Գետ եւ Համշէն, որք կղզիացած էին այդ երկու հովիտներու մէջ. Պարխար լեռներու շղթայն ընդհատուած էր Կարնից եւ Բաբերդից, արեւելեան կողմէ Եգերացիք, հիւսիսային եւ արեւմտեան կողմից յունական ատելութեան մատնուած. առաջնորդներից, նոյն իսկ կաթուղիկոսներից մոռացուած, քահանայից զրկուած, ալեկոծեալ. 36 գիւղի համար հազիւ մի քահանայ կար[1]։

Թորոսլի գիւղն Սեւ Գետի ամենէն բարձրն եւ մեծն է. այս գիւղը կայր տէր Կարապետ անուն քահանայ մը, որ նոյն ժամանակ մեծ հռչակ հանած էր, եւ ժողովրդից իբրեւ սուրբ անձնաւորութիւն մը կը պաշտուէր. ամբողջ Սեւ Գետի ժողովուրդն նորա անունով կերդուէին։

Սիւրմենէ գաւառին մէջ անուանի եղած էր նաեւ Ղաւառուֆ օղլի մօլլա Մէհմէտ, առ այնչափ մոլեռանդ մէկն էր, որ կուզէր մի ակնթարթի մէջ զքրիստոնեայս մահմետական կրօնին դարձնել[2]։

Քանի անգամ մտաւ Համշէն եւ Սեւ Գետ, ենիչերիներու խմբով կամեցաւ իւր նպատակը առաջ տանել, չը յաջողուեցաւ, թէեւ գտաւ իւր քարոզին լսող, բայց ոչ մահմետականութիւնը ընդունող. այլ եւ այլ երկիրներէ ընտրեց քառասուն մոլեռանդ աշակերտներ, միջոց մի ուսոյց, մոլեռանդութեան թերթն սոցա մէջ լրացոյց, զորս մօլլա

1) Համշէն որ մօտ 10,000 տուն, Սեւ Գետ 3-6,000 տուն է. մօտաւորապէս այս 16,000 տուն հայերն 4-5 քահանաներ ունէին:

2) Սիւրմենէի ժողովրդեան վերայ կը տեսնուի բարակ երկար դէմք, կապոյտ դիւրաշարժ աչքեր, արագաշարժ մարմին. որք կարծեմ Պոնտոսի թագաւորութեան բարձման միջոցին թուրքացած են, որով իրենց շրջականներուն վերայ ազդած են։

կարգեց, երդումն առաւ նրանցից, որ ցմահ մահմետականութիւնը տարածելու համար պիտի մաքառեն։

Այս մօլլաներն կրկին հոգւով և մեծ եռանդեամբ խորհուրդ արին մոլեռանդ թուրքերու և ենիչերիներու հետ, մտան Սև Գետ, մի ծայրից միւսը քարոզեցին մահմետականութիւնը, սպառնացան, «եթէ չընդունիք, թագաւորից մեծ բանակ կգայ, զամենդ կը կոտորէ, ձեր որդիքը և աղջկունքը ձեզնից կը բաժանեն...» ևայլն սպառնալեօք։

Մօլլաներն տակաւ առ տակաւ սերմանելու վայրեր գտան, ոմանք առ երես, ոմանք հայերից առ ահի կը խոստովանէին թէ Մահմէտ ճշմարիտ մարգարէ է, և թէ Ղուրանը սուրբ է։

Հայերէն ոմանք ժամանակի պահանջման և քաղաքականութեան հետևած էին։ Ջերմեռանդ մօլլաներն իրենց սերմանած սերմը արդիւնաւորած կարծելով հաշիւ կը տային դուրսը գտնուած մահմետականներուն, թէ իւրաքանչիւր գիւղէ որչափ անձնաւորութիւններ լսած և ընդունած են Մահմետի կրօնը։

Մօտ տասն տարի քարոզեցին մօլլաներն Սև Գետացոց, վերջ ի վերջոյ պաշտօնապէս առաջարկեցին որ ընդունին Մահմէտի կրօնը։

Հայ ժողովուրդն բուռն կերպով դիմադրեց մօլլաներու առաջարկութեան և արտաքսեց նրանց Սև Գետից։

Մօլլաներն վիրաւորուած նախ հնարագիտութեան և ապա բռնութեան դիմելու խորհուրդն յղացան, ժողովեցին 500-ի չափ մոլեռանդ թուրքեր, որոց աւետեցին թէ Սև Գետացիք պաշտօնապէս մահմետական կրօնը ընդունելու են, և թէ այս այն ինչ մարդով մեզ լուր յղած են և պաշտօնապէս թլփատութեան արարողութիւնը իրենց վերայ կատարել կը խնդրեն, և թէ ամեն ջերմեռանդ մահմետականի պարտականութիւնն է այսպիսի մեծ հանդիսի ներկայ լինելու։

Այս 500-ը տարածուեցան երկրի այլ և այլ կողմերն,

Digitized by Google

քարոզեցին և հռչակեցին Մօլլաներու ատեանին, հազար ձիաւոր, մի այնչափ ևս ոտով գնացին Սև Դեւ, նաև մի մեծ ենիչերեաց խումբ ևս հետերնին, որպէս զի չզրկուէին այն մեծ հանդիսէն.

Այս ամբոխը մեծ հանդիսով և աղմուկով մտաւ Սև Դեւ. Ղուրուֆ օղլի Մէհմէտ առաջ անցած ձին կը քշէր, վեց հոգի նորա չորս կողմ պատած, պատկառելի կերպով կը ծառայէին նմա, նորա քառասուն աշակերտներն դրօշակ պարզած երգելով կը հետևէին իրենց վարժապետին. Ենիչերիք ևս փայլուն և մեծամեծ տապարներ իրենց ուսին դրած, մօլլաներու չուրջը պատած կը հետևէին ամբոխին. Մահմետականներից ամենէն ջերմեռանդը ամբոխը ճեղքելով կաճապարէր առաջ սողալ, կրօնականներու մօտ գտնուիլ.

Մօլլաներու երգը, ենիչերիներու հա հուն, մոլեռանդ ամբոխի խառնաձայն աղաղակն՝ մեծ սարսափ ազդեցին և զարմանք հայ գիւղացոց, յիշեցին որ «սուլթանը զօրք յղած է զիրենք կոտորելու», որպէս առաջ սպառնալեաց լսած էին.

Մօլլաներն իրենց խմբով իջան մի հայ գիւղ. առաջարկեցին ու մահմետականութիւնը ընդունողներն թող ներկայանան իրենց առաջնորդին.

Հայք միակամ դիմադրեցին, յայտնելով որ այս երկրի մէջ Թուրքացող չկայ. ինչ ևս սպառնալիք լինի, միակամ դիմադրելու են.

Մօլլաներն առանձին բերել տուին այն հայերն, որք մուսուլմանութեան մերձեցած կը համարուէին, որոնցից հարց ու փորձ արին, իրենց համոզումը ուզեցին գիտնալ. Նոքա պատասխանեցին.

—«Մեզնից վեր կայ Թորոսալի գիւղ, ուր կը նստի Տէր Կարապետ քահանայն, ժողովրդեան մեծ մասն նորա համոզուած է, չեն դառնար մահմետականութեան. մենք ևս դառնալու լինենք, հայ ժողովրդից անհնարին հալածուած կը լինենք»

Թուրք ամբոխը նոյն հանդէսով մեկնեցաւ, քանի գիւղեր պատահելով մտաւ Թորոսլի մեծ հայ գիւղն, ուր էր պաշտելի Տէր Կարապետ։

Տէր Կարապետ զարմացաւ, երբ զայս տեսաւ. հարիւրի չափ զինեալ հայեր յղեց անմիջապէս, որք գիւղի եզրն սպառնացան Թուրք ամբոխին, որպէս զի գիւղը չը մտնեն, շուտով հեռանան. ապա թէ ոչ՝ ասացին, ցմահ կռուելու են։

Մոլեռանդ ամբոխի վերայ մեծ ներգործութիւն արաւ հայերու սպառնալիքը, թէև կատաղած կուզէին մի վայրկենի մէջ կլլել ու կործանել, սակայն վտանգաւոր դիրքի մէջ կը գտնուէին, հայ բնակիչներով շրջապատուած էին։

Խոհեմութեամբ յետ քաշուեցան, տարածուեցան մոլեռանդ Թուրքերու մէջ, յայտնեցին որ «Հայեր ապստամբ են, դիտմամբ զմեզ հրաւիրած են Թլփատուելու, որպէս զի զմեզ ներս առնեն, ապա կոտորեն. հազիւ կարողացած ենք որոց նպատակին հասու լինել, փախչիլ»։

Այս և սորա նման խօսքեր տարածեցին Թուրք հասարակութեան մէջ, մոլեռանդ մի մեծ ամբոխ ևս գրգռեցին հայերու դէմ։

Բերնէ բերան տարածուեցաւ. Ղուրուֆ օղլին, մոլլաները և պատուաւոր մահմետականներ անարգուած են, ուրեմն մահմետական կրօնը և Մահմետ անարգուած է։

Այլ և այլ տեղերէ գիտնական մոլլաներ, ղազի, մուֆթի ևայլն անձինք հաւաքուեցան ի Սիւմենէ, Ղուրանը և նորա բացատրութիւնը մէջտեղ դրին, ամենը պատկառանօք համբուրեցին, որոշեցին թէ Ղուրանի հրամանն է, քրիստոնէից լաւ խնամ տանել, բայց երբ մէկն դիմէ մահմետականութեան և ետ դառնայ, նորա պատիժը մահ է. նա պէտք է մաս առ մաս յօշոտուի, զի մարգարէն խաբած է. իսկ Սև Գետացիք ոչ միայն Աստուծոյ մարգարէն խաբած են, այլ և ապստամբ են. ուստի ոչ թէ հասակաւոր մարդերն մահուամբ պատժել՝ այլ ծծկեր երեխայն մինչև անգամ

29. 30. տպ. խափած.

Digitized by Google

ջի սուր մաշել, որպէս զի այդ անհաւատներու սերունդը այս աշխարհէն բարձուի։

Մօլլաներու որոշումը հաղորդուեցաւ Տրապիզոնի կառավարութեան և Թուրք հասարակութեան. մոլեռանդներու թիւը քառապատկեցաւ. կառավարութիւնն ևս իւր ոյժը միացոյց այս ամբոխին, մեծ ոյժով մտան Սև Գետ. առաջին անգամ մտան Թօրօսլի և գիւղը պաշարեցին յանկարծակի։

Աւագ շաբաթ օրն էր. ժողովուրդն հաւաքուած էր եկեղեցին՝ կրօնական պաշտամանց ներկայ լինելու. տեսան շրջապատուած ամբոխն, որ կառաջարկէին և կըսպառնային մահմետականութիւն ընդունելու. հայ ժողովուրդն չուզած Տէր Կարապետի երեսն կը նայէին. մօլլաներէն մին թրով մի հարուած իջեցոյց քահանայի գլխին. նա ձեռն դէմ տալով կտրուեցան բազուկներն. երկրորդ և երրորդ հարուածին արիւնը սկսաւ ֆշալ և գետին տապալեցաւ, որ անմիջապէս միւս մօլլաներն յօշոտեցին մաս առ մաս նորա մարմինը. որպէս զի երկիւղ ազդեն ամբողջ հայ ժողովրդեան վերայ։

Ժողովրդեան մեծ մասը դիմադրեց Թուրք ամբոխին, մերժեց նորա առաջարկութիւնը և մերժողի դիակը ընկաւ բարի քահանայի մասունքներու վերայ. կոտորածը ամեն կողմ սկսաւ. ծեր և մանկունք սուրերու հարուածներու տակ կը թաւալէին արեան մէջ։

Կոտորածը սարսափելի եղաւ. մռնչիւն ու հեծկլտանք տխուր արձագանք տուին Սև Գետացոց սև գլխին. Սև Գետի սև ջրի հետ խառնուեցաւ սև արիւնը. ժողովրդեան երկչոտ մասն խոնարհեցաւ մոլեռանդ գազանաց առջև. խոստացան կոտորածը դադարեցնել, որպէս զի հետևեալ օրն որոշում մի տան և թլփատուին։

Հետևեալ օրն որոշումը հաղորդուեցաւ Ղուրուֆ օղլի Մէհմէտին, թէ Սուրբ Յարութեան օրը կը պատրաստուին թլփատուելու։

9. տպ. չարբաթ. 26. տպ. արձագանք.

Կոտորածը դադարեցաւ. կրօնաւէր մարդիկ ժողովեցին իրենց որդիքը, տանը մէջ գտնուած թեթեւ կերղէնները, մտան Սեւ Գետի չուրջն սփռուած սեւ անտառներու մէջ, ոմանք ալ գազանաց ճիրաններուն զոհ գացին. Մնացողներն մխրճեցան անտառին խորը՝ յարատեւ կոյս ուղղութիւն մի բռնելով, անցան խիտ ու փշալից անտառներու միջէն, ուր ոչ թէ մարդու ոտք, այլ գազանաց անգամ ոտք կոխած չէր։

Այս փախստականներու մէջ կային ջերմեռանդ մարդիկ, որք խնամով հաւաքած և ամփոփած էին տէր Կարապետի յօշոտուած մարմինը, իբրեւ անգին մի բան շալակած՝ կը հետեւէին փախստականաց։

Փախստականներու վիճակն սարսափելի էր, անտառներն դեռ արձագանք կուտան. ոմանք հառաչանօք կը ձայնէին իրենց ամենասիրելի որոնց հատորիկներն. ոմանք կը մրմնջէին կորսուած ազգականներն. ոմանք նօթի ծարաւ կը հեծէին. երախաներու վժոցի ձայնն անգամ սարսափազդած էր հալածուող տարի մարդու ձայն չլսող անտառներ և գազանաց։

Եթէ դուք այս անտառները տեսած լինէիք՝ պիտի երեւակայէիք, որ սորա մէջէն անցնողներից մէկն եւ չպիտի ազատուէր. իսկ ես կասեմ որ 1/10-ը Բաբերդի կողմն դուրս ելաւ. 1/5-ը Տրապիզոնի մերձականերն Զաղփոս, Ապիօն, Կալաֆիկայ եայլն վայրեր դուրս ելան. դուրս ելնողներու 3/4-ը եւ անցան Ծանիկ, որ Տրապիզոնից ծովով մի աւուր ճանապարհ է ի յարեւմուտս։

Տէր Կարապետի սերունդից ազատուողներն հասան Կալաֆկայ գիւղն, ուր եւ հաստատուեցան, որ տեղ եւ ամփոփեցին ի հող նորա յօշոտուած մարմնոյ մէկ մասն, միւս մասն եւս՝ Բաբերդի կողմն գնացողներն իրենց հետ տարած էին։

Իսկ այն կողմ Գարա դերէի մէջ Թուրք ամբոխը՝ ինչ որ արած էր Թոսոնլիի, նոյնը եւ արեց հարիւրի չափ գիւ-

2. տպ. իրեղէնները.

Digitized by Google

զօրէից. փախչողն արդէն փախաւ, մէկ մասը կոտորուեցաւ, մէկ մասն ևս առ երես ուրացաւ, որպէս զի վտանգն դռնից հեռացնէ։

Բուն զատկի օրն էր ամբողջ երկրի երևելիներից 500-ի չափ անձինք հաւաքուեցան Թորոսլի գիւղի եկեղեցւոյն մօտ գտնուած հսկայ աժրի ծառներու ներքև և թլփատուեցան։

Մի շաբաթ յետոյ այս աժրի ծառերի շուրջն 30 ձեռք դավուլ զուռնա կածուէր, նախկին թլփատուողներու ազգականներն էին նոքա, որք հանդիսաւոր կերպով կը թըլփատուէին, և որոց թիւը հազարի կը հասնէր։

Նահատակուած տէր Կարապետի որդին Կալաֆկայ գիւղի մէջ քահանայ ձեռնադրուեցաւ իւր հօր անունով։

Սա ուխտեց, որ մինչև իրենց սերունդից քահանայ ձեռնադրուին տէր Կարապետ անունով և գոնէ տարին մի անգամ ծպտեալ այցելեն ի Սև Գետ, ժողովուրդն հոգեպէս մխիթարեն։

Սոյն տէր Կարապետ Նահատակի պատմութիւնը հանում ենք Ս. Հայկունու «Կորած ու մոռացուած Հայեր. Սև Գետացիք» երկար յօդուածից, տես Արարատ, 1895, էջ 239—243 և 293—297. մեր արտագրած մասն է էջ 239-ից մի հատուած և էջ 240 բ—242 ա. մնացեալը թէև նոյնպէս շատ հետաքրքրական է, բայց Տէր Կարապետի նահատակութեան հետ կապ չունենալով՝ զանց ենք առնում մէջ բերել այստեղ:

Digitized by Google

# 19.

## ՆԱՀԱՊԵՏ ՄՈԼԱՅԻ

Տրապիզոնից 9-10 ժամ ի հարաւ արեւմուտս, Փլաթանայ կոչուած նաւահանգստից 3 ժամ բարձրութեան վերայ տարածուած են ընդարձակ անտառապատ լեռներ. այս հինաւուրց անտառապատ լեռներն ունին սիրուն հովիտներ, միջակ աստիճանի քաղցրատեսիլ ձորեր ու բլուրներ, միջակ աստիճանի լեռներ ու ողեր։

...Այս լեռներից մէկի ի հիւսիս արեւելս հակեալ երեսի վերայ մի գիւղ կազմուած է հայաբնակ. յայտնի չէ թէ այս գիւղն ո՛ր դարուց շինուած է և թէ հայեր ինչ ճանապարհով այստեղ մտած մօտ 100 տնից երկու թաղ կազմած են, հսկայ անտառի մի խոռոչէ տակաւ առ տակաւ փորելով՝ իւրեանց տանց շուրջն փոքրիկ արտօրայք կազմած են։

...Այսօր այդ հայաբնակ վայրն Մալա կը կոչուի. մենք գոնէ աւանդութեամբ լսած ենք որ երկու դար առաջ այդտեղ հայեր կը բնակէին՝ գրեթէ անծանօթ վիճակի մէջ։... Սոքա 1730—60 թուականներու մէջ բոլորովին ապահով ապրած են. քաղաքի և ոչ մի հայ գիւղի հետ անգամ յարաբերութիւն չունէին։...

...Կ'աւանդուի թէ այս գիւղին մէջ Յուսէփ տէտէ անունով մէկը կար, որ ամենից աւելի բարեկեցիկ կեանք կը վարէր. ունէր հարստութիւն, բազմաթիւ որդիք ու թոռներ. նորա փեթակը, կովը և ոչխարը շատ էր. ունէր ջրաղաց ու կանեփ ծեծելու կոքալ. նորա մէկ որդին ամեն օր ջրաղաց կերթար տան համար ալիւր պատրաստելու.

Digitized by Google

միւս թոռն անտառից իշով վառելու փայտ կրելու. մին իւր նախիրն կտանէր արածելու, մէկն եւ այծերն ու ոչխարներն կը պահպանէր. մէկն էլ մեղուաց փեթակներն կը նորոգէր. մէկ ուրիշը արտը կուղի կը կրէր, կանայք եւ հաց կը թխէին փռան մէջ, լուաց ու կար կանէին, կանեփ ու բուրդ կը մանէին, շապիկցու կտաւ ու շալ կը գործէին։ Սորա տան իւրաքանչիւր անդամը աշխատասէր մեղուի նման իւրեանց յատուկ գործով կը պարապէր։

Ցուսէփ տէտէն և նորա պառաւ կինն վերին աստիճանի աստուածասէր, աշխատասէր և հիւրասէր էին. նաև որդեսէր։ Կ՚աւանդուի թէ ինքը և իւր կինն դաւուլ-զուռնայ սազած էին. չէին ղմշիր որդիք քաղցր քնից զարթեցնելու համար ձայն տալ. այլ դաւուլ զուռնայ կածէին, որպէս զի նուագածութեան քաղցր եղանակով զարթին ու գործի գնան։

Այս անտառային խիտ և յաղթանդամ ծառներու մէջ կը բնակէին նաև յաղթանդամ գազաններ, որով Մալացիք ուր և գնային, պարտաւորեալ էին զէնք վերցնել, ի հարկին գազանաց դէմ գործածելու։

Ցուսէփ տէտէի մեծ որդին, որպէս կասեն, յաղթանդամ և քաջ մէկն էր. զէնքի և որսորդութեան շատ սիրահար էր. նա տաս օխանոց ֆիշէնքլուխ և ութ օխանոց մաթարայ (վառօդի աման) կը գործածէր. անտառ կ՚երթար, արջ, գայլ և կինճ կը զարնէր և գիւղը կը կառավարէր։

Մալայի մեղր ու իւղը առատ էր. գիւղացիներից մէկ երկուսը կը խորհին տանել քաղաք, վաճառել. իւրեանց մտադրութիւնը կը կատարեն հակառակ Ցուսէփ տէտէի կամաց։ Նախ գաղտնի կը տանին. ապա Ցուսէփ տէտէի փոքր որդին եւս կը միանայ նրանց հետ։

«Մալայ անունով մի գիւղ կայ. նորա իւղին և մեղրին համը ոչ մի աշխարհի իւղն ու մեղրը չունի» տարածուեցաւ քաղաքի մէջ։

Շատ միջոց չանցաւ, փլաթանայի կողմերում իշխող բէլլիւք բաշին (խմբապետ) իմացաւ Մալայի վայրն, առաւ

Digitized by Google

իր հետ խումբ մը ենիչերի, մտաւ Մալա, գիւղի վրան հինգ լիտր մեղր և հինգ լիտր իւղ տուրք սահմանեց։

Գիւղացիք տեսնելով այս տուրքի չնչին մի բան ըլլալը՝ ընդունեցին. կանխիկ ալ տուին։

Այդ գիւղն կը բնակէր մի ազդեցիկ անձն Զաքար օղլի անունով. նա չէր ուզեր որ Յուսէֆ էֆէնտիի մեծ որդին կառավարէր գիւղը. սակայն գիւղացիք ամբողջովին հակառակեցան Զաքար օղլուն։ Նա ալ բարկացած գնաց թէ Թուրքացաւ, և թէ նոյն ժամանակի Տրապիզոնի իշխանութեան հաճելի դառնալով Մալայի տուրքն իր վերայ առաւ։ Եկաւ Մալա մի մեծ խումբ ենիչերիներով. իւրաքանչիւր տան վերայ սահմանեց հինգ լիտր իւղ և հինգ լիտր մեղր։

Յուսէֆ էֆէնտին ասաց. «Ես ի՞նչ ասիմ իմա մեր ճահիլներուն օ իդմօն փորձանք բերին մեր գլխուն. Աստուած էլ պէխթէրէն խալըսէ, ուրիշ ճար չունինք. տանք պիտի»

Իր որդւոյ ասաց. «Տղէք, հիմա ջօն մեղրը ու եղը տուէք. իմ էրիս հոնիկ միք. էն չօն էրիսը տեսնու չիմ ուզիր»

Հետևեալ տարին Զաքար օղլին կըգայ, Յուսէֆ էֆէնտիէն կը պահանջէ նախորդ տարուան տրուած տուրքն. աղան կառիպէ թէ տրուած է. իսկ Զաքար օղլին բռնի կը պահանջէ։

Վերայ կը հանի Յուսէֆ էֆէնտին. «Մօ, Զաքար օղլի, եթո քու բերօնը օսկուր նետեցի յօր կրծիս. չասածի դաս ինծի կի խածես». ասաց ու մի հրացանի գնդակով տապալեց գետին։ Մօտի մարդիկ մտան անտառի մէջ անյայտացան. Զաքար օղլու գլուխն քաշեցին ձորը։

Այս լուրն Տրապիզոն, ասոր Միւսիւմէնէ կը հասնի. մօրթուանք մօլլաներ և ենիչերիներ կը խմբուին. Եւ Գետի արեւանայքըու գաղաններին իւրեանց հետ առնելով կը դիմեն Մալա, ուր մեծ կոտորած կանեն, առանց խնայելու մանկանց ու կանանց։

Սարսափելի կոտորած տուին Յուսէֆ էֆէնտիի տան.

Digitized by Google

մեծէն մինչև փոքրը, օրօրոցի երեխային անգամ չխնայեցին. դեռ չմեռած՝ անդամ անդամ յօշոտեցին։ Յուսէփ դիմադրելով սպանուած էր. մեծ որդին Նահապետ՝ ապաստանած էր Ջրաղացն, ուր բռնեցին և ստիպեցին մահմետական լինել. նա չընդունեց. նրան սպանեցին նոյն տեղ։ Փոքր որդին Մովսէս՝ մուսուլմանութիւնը ընդունեց, տարուեցաւ Փլաթանայ, ընդարձակ կալուած շնորհուեցաւ նմա, այն տեղ բազմացաւ. այս օրս նորա սերունդը 200 տուն կայ, որք ամենն ևս Մուսլի օղլի կասուին։

Այս համառօտը ամբողջովին հանուած է Ս. Հայկունու անտիպ մի աշխատութիւնից, որ կրում է այս վերնագիրը. «Յուսէփցի Աբրեհամ, Տրապիզոնի գիւղերու մէջ հայ հերոսը. 1820—1845» և է Աբրահամ անուն նշանաւոր Տրապիզոնցի հայ աւազակապետի կենսագրութիւնը։ Այս կենսագրութիւնը գրուած է 1879 թուականին. բայց ցայժմ դեռ բոլորովին աւարտած չէ։

Digitized by Google

# 20.

## ՄԱՐՏԻՐՈՍ ՀԻԶՆԱՑԻ

(† ԺԵ դար)

Երանելի Մարտիրոս այս էր ի գաւառէն Հիզնայ։ և վասն դառնութեան աւուրցս և աղքատութեան ժամանակիս՝ ջաղաց մի առեալ էր յանօրինաց, և ինքն և եղբարքն իւր այնու վճարէին զկեանս իւրեանց։ Եւ եկեալ քուրթ կին մի ի նոյն ջաղացն վասն աղալոյ ցորեան։ Եւ յանկարծակի եկին այլազգիքն չեխեր ի ջաղացն ի նոյն գեղէն, և տեսին զկինն և զՄարտիրոսն միայն ի ջաղացն, և ասացին թէ «Հետ կնոջդ այդ չար գործեալ ես»։

Եւ նա ասէր. «Այն գործն ձեր է և ազգին ձեր. Քրիստոսն մեր սուրբ է և զսրբութիւն սիրէ. Նոյնպէս և ծառայքն Քրիստոսի սուրբ են և զսրբութիւն սիրեն»։

Եւ նոքա քարշեալ զնա ի վերայ երեսաց իւրոց և տարեալ յատեան կացուցին և ասեն թէ «Տաճկացիր և կամ զմահ յանձն առ»։

Եւ նա երկուցեալ ի մահուանէ՝ խօսեցաւ ըստ կամաց նոցա։

Եւ կացեալ անդ ի մէջ եղբարցն իւրոց գաղտագողի ամ մի, և ապա փախուցեալ անտի զինուորական ձևով և եկեալ յերկիրն Արճիշոյ, ի մեծահռչակ ուխտն Աստուածածին, որ այժմ Մեծոփայ վանք կոչի, առ երջանիկ և աշխարհալոյս վարդապետն հայկազեան սեռի Թումայ րաբունապետն, յորոյ բարի անուննն և ի քաղցր վարդապետ-

20. ւ Մեծոփոյ.

տութիւնն դիմել և խոստովանել զակամայ ուրացութիւնն իւր, և առեալ ի Նմանէ զարձակումն մեղաց։

Եւ միացեալ ի սուրբ ուխտն զերիս ամս՝ պահօք և արտասուօք և աղօթիւք և լալագին պաղատանօք անցուցանէր զկեանս իւր, և զծանրութիւն ուխտին բառնայր՝ կարի յոյժ աշխատութեամբ։

Եւ ասէր վարդապետին թէ «Կամք իմ այս են, զի երթամ սրտիս յօժարութեամբ ի մէջ այլազգեաց և դաւանեմ յայտնապէս զՔրիստոս Աստուած ճշմարիտ և հեղում զարիւն իմ վասն անուան Նորա»։

Իսկ վարդապետն արգելոյր և ասէր. «Ո՛րդեակ, մի՛ տար զքեզ ի փորձութիւն կամաւ, զի ո՛չ է հրամանք Քրիստոսի Աստուծոյ մերոյ, այլ աղաչել զԱստուած փրկել ի փորձութենէ։ Իւ թէ գայցէ փորձութիւն, խնդրել պարտ է յԱստուծոյ տալ համբերութիւն»։

Այլ թէպէտ արգելոյր զնա, արարիչն Աստուած կատարեաց զկամս Նորա, քանզի թոյլ ետ գալ ի վերայ Նորա փորձութիւն, և պահեաց արի և քաջ զվկայն Քրիստոսի։ Քանզի աւերեալ երկիրն Արճիշու և վարդապետն փախուցեալ յանօրէն թագաւորէն արևելեան Շահրուխ կոչեցեալ, եկն բնակեցաւ ի վանքն Բաղիշոյ, ի սուրբ ուխտն Աստուածածնի, որ այժմ Աւեխու կոչի։ Իսկ Մարտիրոսն յետ սակաւուց եկն առ վարդապետն մխիթարիլ ի Նմանէ. և կացեալ անդ զաւուրս ժ։ Եւ յանկարծակի եկեալ ի նոյն գաւառէն Հիզնայ, տեսեալ զՄարտիրոսն, ճանաչեցին և ասեն. «Դու երբեմն տաճկացեալ ես և այժմ ի վանքս յի՞նչ ես եկեալ»։

Եւ նա ասէ. «Յայնժամ յոչ կամաց ուրացուցին զիս. և այժմ իմ կամաւ քրիստոնեայ եմ»։

Եւ նոքա եդին չուան ի պարանոցն, և առեալ տարան ի քաղաքն առ դատաւորն և ամիրայն, և ասեն թէ «Այրս այս յերկրէս մեր է և տաճկացեալ է. և եկեալ գտաք ի մէջ աբեղայիցն»։

30. ւ չըւան.

Իսկ դատաւորն և ամբոխն հարցեալ զՄարտիրոսն և ասեն. «Սուտ է թէ ճշմարիտ, այր դու»։

Ասէ Մարտիրոսն. «Ճշմարիտ է. ես ոչ ուրանամ զմեղս իմ զոր գործեցի, և յԱստուծոյն իմմէ ամօթով եղէ»։

Ասէ դատաւորն. «Այժմ տաճիկ ես թէ քրիստոնեայ»։

Ասէ սուրբն. «Քրիստոնեայ եմ և Քրիստոսի ծառայ»։

Ասէ դատաւորն. «Ապա վասն էր տաճկացար»։

Ասէ Մարտիրոսն. «Սուտ եդին ի վերայ իմ և ի մահուանէ երկեայ»։

Ասէ դատաւորն. «Եթէ ոչ դառնաս յօրէնքն մեր, մահու ես պարտական»։

Եւ նա ոչ ետ նմա պատասխանի։

Յայնժամ առեալ զնա և տարան առ ամիրայն Շըխ Մահմուտ։ Եւ նա ժողովեալ զբազմութիւն անօրինացն և հանեալ զկապայն՝ հագոյց Մարտիրոսին, և արգելեաց ի բերդն զաւուրս Բ։ Եւ պարգևս մեծամեծս խոստանայր նմա և ասէր թէ «Հեծուցանեմ զքեզ ի ձի և շուրջ ածեմ ի մէջ քաղաքիս»։ Եւ նա ոչ տայր պատասխանի, այլ խնդրէր գիպող ժամ, զի յայտնեսցէ զպայծառութիւն հաւատոյն։ Զգեցեալ էր զրահն հաւատոյ և խնդրէր զտեղի պատերազմին։ Եւ եդեալ զսաղաւարտն յուսոյ ի գլուխն իւր և կամէր ներկել ի նոյն արեանն։ Վառեալ էր սիրովն Քրիստոսի անտեսաբար, և միայն զի յայտնապէս երևեսցին նշանք սիրոյն։ Պատրաստէր զինքն ի մարտ հանդիսին և հայցէր զտեղի ճակատուն։ Զարդարեալ էր զիւղ ճրագին և ցանկայր հրաւիրման առագաստին։ Ունէր զհանդերձ հարսանեաց և ակն ունէր կոչման փեսային։

Զարմանալի՛ գործ՝ քանզի Աստուած և հրեշտակք, դևք և այլազգիք ուրախացեալ էին ի գործ Մարտիրոսին, և քրիստոնեայք տրտմեալ էին։ Ուրախանայր Քրիստոս, զի հանդերձեալ էր առնել զնա իւր չարչարակից, զի խառնեսցէ ի դասս մարտիրոսաց։ Ցնծային հրեշտակք և մնային պսակել զնա թագիւն արքայական և խառնել ի դասս լուսեղինաց։ Այլ և դևք կուրացեալ մտօք և մահ-

Digitized by Google

մետակմանք կամարարք նոցին ոչ իմանային զծածուկ խորհուրդ Մարտիրոսին, կարծէին դառնալ ի հաւատս իւրեանց։

Յայնժամ երանելին Մարտիրոս յուղարկեաց քրիստոնեայ այր մի յեկեղեցին, և բերեալ ի սուրբ խորհրդոյն, հաղորդէր մարմնոյ և արեան Տեառն։ Եւ հանեալ զբրդեղէն սաւուն իւր, յանձնէր և ասէր. «Տարեալ տուք ի վարդապետն իմ և ասացէք նմա. մի՛ տրտմիր ի յայանի համբաւս իմ, քանզի վաղիւն տեսանես զմեծագոյն հանդէսն իմ. այսօր այլազգիքն ուրախացեալ են և քրիստոնեայք տրտմեալ. այլ վաղիւն կամին տրտմիլ դասք անօրինաց, և ուրախացեալ ցնծան ժողովուրդք քրիստոնէից»։

Յայնժամ իջուցեալ զՄարտիրոսն ի բերդէն, հեծուցեալ ի ձի։ Եւ դասք անօրինացն առաջի նորա դնացեալ սուսերամերկ՝ հանդերձ դիւական երգօք, թմբկօք և պարուք։ Եւ ածեալ ի շուրջ զքաղաքն ամենայն՝ աւետիս տային միմեանց թէ «Բարձրացաւ օրէնք մեր առաջնորդին և յաւելաւ ժողովուրդ նորին»։

Իսկ սուրբն թաքնաբար ծիծաղէր զանմտութիւն նոցա և ասէր ի սրտի իւրում թէ «Այժմ յայտնեմ զխորագոյն բարձրութեան հաւատոյ ձերոյ և յամօթ առնեմ զձեզ զամենեսեան և ցուցանեմ սուտ և ընդունայն, զնոտի և զխաբեբայ օրէնք ձեր»։

Յայնժամ եկեալ ի դուռն բերդին, իջեալ ի ձիոյն, դարձաւ յարեւելս և երկրպագեալ Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ աղաղակեաց մեծաձայն. «Քրիստոնեայ եմ և Քրիստոսի ծառայ. և զՔրիստոս ճշմարիտ Աստուած և Տէր խոստովանիմ։ Հաւատամ ի Հայր և յՈրդի և ի Սուրբ Հոգին, երեք անձինք և մի բնութիւն և մի աստուածութիւն կատարեալ։ Այս ժամուս ցանկացայ և արդ փափագանաց իմոց հասի»։

Յայնժամ յամօթ լեալ դասք անօրինացն, մխաբանեալ ի միջոյ նորա, ասեն. «Մի՛ առներ զայդ. ապա թէ ո՛չ՝ այժմ սպանանեմք զքեզ»։

Ասէ երանելին Մարտիրոս. «Ասացեալ եմ միշտ և դարձեալ ասեմ. պարգևատուն իմ և կեցուցիչ Քրիստոս է, Աստուածն իմ և ստեղծօղ, որդի Հօրն երկնաւորի և ծնեալն ի սուրբ կուսէն Մարիամայ։ Իսկ դուք սուտ և խաբեբայ, անօրինաց հետևողք և ժառանգորդ գեհեննին»։

Ապա դիմեցին առ հասարակ ի վերայ նորա և քարամբք քարկոծեցին, մինչև ծածկեցաւ ի քարանցն մարմին քաջ նահատակին Մարտիրոսի. քանզի ջարդեցին զգլուխ նորա, այլ յայնժամ պսակեցաւ յարքայէն Քրիստոսէ։ Կոտորեցին զմատունս նորա, այլ եղև բացօղ դրանն երկնից։ Խորտակեցին զբարձսն անդամոց Մարտիրոսին, այլ ընթացաւ ի ճանապարհն երկնից։ Ջախջախեցին զդաստակ ձեռացն, այլ առաւել զպարգևս ընկալաւ։ Այլայլեցին զպատկերն գեղեցիկ, այլ ուրախացաւ Քրիստոս ընդ քրտնաջան մշակն։ Մանրեցին զոտս Մարտիրոսին, այլ քայլեաց ի կամարն վերին։ Մերկացուցին զմարմին Մարտիրոսին, այլ զգեցաւ զլոյսն անճառելին։ Ներկեցին արեամբ զնահատակ ցանկալին, զի երևեսցի պայծառ փառօք յաւուր դատաստանին։ Ծածկեցին քարամբք զանձն պատուական, զի խնդրեսցէ զնա թագաւորն յաւիտենական։

Յայնժամ ուրախացեալ դասք քրիստոնէից և եկեալ քահանայք և ժողովուրդք Բաղէշ քաղաքին՝ բարձին զմարմին Մարտիրոսին և տարեալ թաղեցին առ դրան սուրբ եկեղեցւոյն Գէորգեայ։ Եւ է բարեխօս առ Քրիստոս ամենայն քրիստոնէից։

Սոյն վկայաբանութիւնն ունի միայն Վիեննայի Մխիթարեան Հարց մատենադարանի թիւ 10 ձեռագիր յայսմաւուրքը, էջ 245 բ''—247 ա'', հետևեալ վերնագրով. «Յայսմ աւուր վկայաբանութի Նոր վկայքին քի և Նոր մարտիրոսին։ Որ ի. ձմերայնի ժամանակս անուշահոտ վարդ յայտնեցաւ, և գործովք զանունն ելից և կատարեաց»։ Վկայաբանութեան արտագրու-

Digitized by Google

*թիւնը շնորհակալութեամբ ստացել ենք մատենադարանապետ Գեր. Հ. Բ. Պիլէզիկճեանից։ Նահատակութեան թուականը յայտնի չէ, բայց վկայաբանութեան մէջ յիշուած Թովմա վարդապետ Մեծոփեցուց և Շահռուղից երևում է որ պատկանում է ԺԵ. դարին։*

## 21.

# ՄԱՆՍՈՒՐ, ԽԱԼԻԼ ԵՒ ՆԱՍԻՄԻ

### Թուրք նահատակներ

### († 1524-ից առաջ)

Սոյն երեք նահատակների մասին չունինք առանձին վկայաբանութիւն, բացի մի քանի աննշան տեղեկութիւններից, որոնք ցրուած են երկու նահատակների վկայաբանութեան մէջ այն է Պուտախ Ամթեցի († 1524), թիւ 59, էջ 360—368 և Խաչատուր Տիգրանակերտցի († 1652), թիւ 79, էջ 455—466։ Այդ նահատակներից առաջինը էջ 361 և 362՝ յիշում է Մանսուրի, Խալիլի և Նասիմիի անունները, իսկ երկրորդը էջ 457 և 459՝ միայն Նասիմին։

Այդ կցկտուր տեղեկութեանց ամփոփումը հետեւեալն է։

Մանսուր, Խալիլ և Նասիմի նախ կրօնքով մահմետական էին և մահմետականների «առաջնորդ», այսինքն մոլլայ կամ իմամ։ Նոցա հայրենի երկիրը յիշուած չէ. բայց կարող է ենթադրութեամբ իմացուիլ թէ նոքա կամ Պարսկաստանի հիւսիսային արեւմտեան կողմերից էին (Մարաղայից կամ Դաւրէժից) և կամ Տիգրանակերտից։ Առաջին ենթադրութեան իրաւունք է տալիս մեզ այն պարագան՝ որ նրանց յիշողները այդ քաղաքներից են. այսպէս Պուտախ որ նահատակուեցաւ Տիգրանակերտում, ծագմամբ Մարաղացի էր. նոյնպէս Խաչատուր՝ թէև Տիգրանակերտցի, բայց իւր վկայաբանութեան հեղինակը՝ Առաքել պատմագիրը՝ Դաւրիժեցի էր։

Իսկ իբր Տիգրանակերտցի ընդունելու համար մեզ իբր ապացոյց է ծառայում այն պարագան, որ թէ

Digitized by Google

Գուտախ և Թէ Խաչատուր, բացի Տիգրանակերտի բնակիչ լինելուց, նրանց յիշում են Տիգրանակերտցի Թուրքերի առաջ՝ իբր նրանց արդէն յայտնի մարդկանց։

Երեքն էլ մոլլայութիւնից դառնում են քրիստոնէութեան և չարչարուելով մահմետականների կողմից՝ նահատակւում են Քրիստոսի անուան համար։ Նոցանից ամէնից նշանաւոր է դառել Նասիմին, որ ուսումնական և բանաստեղծ մարդ լինելով՝ երգել է բազմաթիւ երգեր հոգու վերայ և Քրիստոսի վերայ, աստուածաբանական այլևայլ տաղեր Քրիստոսի տնօրէնութեան վրայ, ինչպէս և սրտաշարժ խաղեր իւր նահատակութեան ժամանակ իւր մահուան վերայ։

Այդ երգերը երևի առանձին տաղաչափական յօրինուածութիւն կամ որոշ ոճի եղանակ ունէին, ուրովհետև կրում են առանձին նասիմի անունը, իրենց հեղինակի անունով։ Նոցա թիւը խիստ շատ էր. Գուտախ նահատակը 1524 թուին 1000-ից աւելի նասիմի գիտէր. և եթէ ենթադրենք էլ թէ այս բոլորը նասիմից չեն, այլ նոցա մի մասը միայն, բայց դարձեալ այնու ամենայնիւ բաւական բան պէտք է մնայ հեղինակին։ Նասիմի խաղերը շատ սիրուած էին ժողովրդից և սերնդից սերունդ մնում էին. Գուտախից հարիւր քսան և ութը տարի յետոյ՝ 1652-ին գերկենդանի էին նոքա։

Նասիմիին նահատակել են մարմինը քերթելով և մորթը տիկ հանելով։ Նահատակութեան թուականը որոշ չէ, բայց 1524-ից էլ շատ առաջ չպէտք է լինի։



Digitized by Google

# 22.

## ՍԱՐԳԻՍ ՔԱՀԱՆԱՅ ՂԱՐՍԵՑԻ

† ՌՄԽԵ=1796 *յուլ. 25, ուրբ.*

Թ*ուին* ՌՄԽԵ (=1245), *յուլիսի ամսոյ* ԻԵ (=25), *օրն վարդավառի պասի ուրբաթն։*

*Այս է Ղարսցի Տէր Սարգիսն որ է նահատակ և մարտիրոս, որդի Յօհան վարդապետի։ Այս լուսայհոգի էրէցն վերոյգրեալ Թարըղի օրն գնացեր բաղանիսն, ՚ւ անիծեալ աղվաշ մօլի հետ հակաճառ ընկեր. մէկս մէկի հայհոյեանք արարեալ են բաղանիս միջին։ Յետոյ այս անիծեալ մօլլէն գնաց Ղարսցի Լօման փաշին մատնեց թէ այս էրէցն մեր Դինին հայհոյեց։ Փաշէն մարդ ղրկէր մուֆտուն կամ ղատուն թէ այս իրիցուն ինչ բույուրմիշ կանէք։ Այս անիծեալ դանիշմաներն մահացնել տվին թէ մեր օրէնքին հայհոյեր է՝ մահապարտ է։ Յետոյ փաշէն բույուրմիշ կանէ այս իրիցուն թէ եկ դարձիր մեր հաւատին որ զերծանիս։ Այս օրհնեալ էրէցն բացարձակ ձայնեց թէ ես քրիստոնեայ եմ և Քրիստոսի ծառայ, իմ հաւատիս խաթերն արիւն պիտի թափեմ։*

*Այնժամ բարկացաւ փաշէն թէ տարէք գլխատեցէք։ Այն կետին արիւնարբոյ գազաններն հալաւն հանեցին, ձեռներն յետեւն կապեցին, գլուխն բաց, ոտքներն բոպիկ ցըդեցին յառաջ։ Այս խղճալի իրիցուն գլխուն ծեծելով, բերանն հարկանելով, շատ ըստիպելով թէ «Դարձիր մեր հաւատին»։ Այս օրհնեալ էրէցն Հոգւոյն Սրբոյ շնորհիւն ձայնէր թէ «Ես պիտի թափեմ արիւն Ղարսայ յերկրէ միջին որ ականերև տեսանեն ինձ»։*

Digitized by Google

Մինչ ի կախաղանի տակն այսպէս չարչարելով տարան։ Երեք անգամ էլ այն տեղն Թափլըգ արին թէ «Ուրացիր զՔրիստոս»։ Եւ նա խոստովանեցաւ Քրիստոս Աստուած, վեր հայեցաւ ի յերկինս և ասաց. «Փառք քեզ Աստուած որ արժանի կամեցար մեղաւորիս այսպէսի մահուան։ Ի Քեզ յանձնեմ զհոգի իմ»։

Այնժամ արեանարբոյ լազերն յետևանց յերկու արճիճ զարկին՝ վար ընկաւ. յետու գլուխն կտրեցին։ Կէս աւուր մինչ ի յերեկոյին ժամուն մարմինն մնաց կախաղանի տակն։ Ցետոյ քրիստոնեայքն գնացին հաքիմին մի լիտր ու կէս ղայֆա տվին, մարմինն վերուցին բերին եկեղեցւոյ բակին։

Այն ժամու Աստուծոյ ողորմութեամբն ա անձրև ցօղեց յերկինց որ սէլաֆ գնաց։ Տասներեք օր էր որ անձրև չէր էկեր։ Այն կեօտին լոյսն ճառագայթեց արիւն թափած տեղն. ակներև այլազգիքն տեսան։ Գիշերն իւրեան արիւնայշաղախ շապիկովն պատանեցինք, ութն կարգաւորօք քահանայաթաղ կարգն կատարեցաք. առաւոտեան պաշտաման և պատարագօք օծաք օրհնեալ գագաթն և սուրբ յաջն հանբուրեցաք և վեր կալաք թաղեցաք, փառք և գոհութիւն տվաք Աստուծոյ։ Մինչ ի յերեկոյի ժամուն մէկ անձրև էլ ցօղեց յերկնուց. լոյսն ճառագայթեց արիւն թափած տեղին, որ ակներև քրիստոնեայքն և այլազգիքն տեսան ամենեցուն. Փառք Ներողութեանն Աստուծոյ։ Մէկ անգամ էլ գերեզմանի վրան յիջաւ։

Ցեղբայրք աղաչեմ զձեզ ի սիրուն Քրիստոսի, ով որ այս նահատակիս երկբայ չի լինի. ճշմարիտ յեղեալ բան է, և չէ շատ առ գթութիւն մարդասէր կամացն Աստուծոյ. և Քրիստոսի փառք յաւիտեանս ամէն։

Ի հայրապետութեան մեծի և գերագահ միածնայէջ և լուսանկար Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի Տեառն Ղուկասայ սրբափայլ և կենդանի նահատակի սրբազան կաթուղիկոսի յամենայն Հայոց.... և ի պատրիարքութիւն սրբոց տնօրէնականաց տեղեացն ամենապայծառ սրբոյն Սագիմայ

Տեառն Պետրոսայ աստուածաբան և դրօշազարդ վարդապետի ... իսկ ի պատրիարքութիւն Մեծի Պօլսոյ և մայրաքաղաքի Բիւզանդիոյ Տեառն Զաքարիայ ազգասէր ննջեցեալ վարդապետի ... և մերոյս Ակնորդւոյ Վանեցւոյ առաջնորդ Տեառն Յովհաննէս խոհեմազարդ և հանճարեղ աստուածաբան վարդապետի*։

Յօրինեցաւ ձեռամբ ակեղածու Աւետիս երիցու ևէթ քահանայի։

Այս վկայաբանութիւնը վերցրել ենք պր. Կարապետ Կոստանեանցի մի ձեռագիր թերթից, որ ինչ որ ձեռագրի միջից դուրս է ընկել։ Վկայաբանութիւնը խիստ հետաքրքիր է մանաւանդ լեզուի տեսակէտից, որ XVIII-րդ դարի վերջում Ղափանում ժողովրդի մէջ գործածական աշխարհաբար լեզուն է։

---

* Լուսանցքում՝ «Ի ժամանակս տէրութեան Սէլիմ Թագաւորին Օսմանցւոց.. թուին [illegible] յունիս ամսոյ 20»։

# ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ.

## 30.

### ԻՍԱՀԱԿ ՊԱՐՍԻԿ ԹԱՒՐԻԺԵՑԻ

(Տես էջ 220)

(Շամախու գաւառի Քարքանջ) գիւղի արեւելեան կողմում հանգստարանի մէջ կայ մի քարուկիր մատուռ, որ իւր ճակատին կրում է սոյն արձանագիրը։

Այս նահատակս յայլազգաց է ի ծնէ բուն,
Յետոյ եկեալ ի հաւատս Լուսաւորչուն.
Ձեռնադրեցաւ սուրբ վարդապետ Սահակ անուն,
Որոյ վասն հուրբ փոխեցաւ այրեցեալ իսկոյն.
Ի սէր սորա կառուցեալ է պայս փոքրիկ մատուր
Շամախեցի Եղիազարեան այրն Խաչատուր.
Հայցէ ի ձէնջ հանդիպողաց՝ սրտիւ ախուր՝
Մաղթել ի տեառնէ վասն ինքեան կենդանի ջուր.
1817 թվին մայիսի 1-ին։

Այս արձանագրութիւնն արտատպում ենք Մակար ծ. վրդպ. Բարխուտարեանցի «Աղուանից երկիր և դրացիք» աշխատութիւնից, էջ 165—166 (Թիֆլ. 1873)։

Ինչպէս արձանագրից երեւում է՝ մատուռը շինել է Խաչատուր Եղիազարեան Շամախեցի՝ 1817 թուի մայիսի 1-ին՝ յանուն Իսահակ պարսիկ Դաւրիժեցու, որ նահատակուել է Շամախում՝ 1417 թուի ապրիլի 18-ին։ Ժամանակի այս անհագին տարբերութիւնը կարծել տուեց մեզ թէ արձանագրութեան մէջ յիշուած Սահակ վարդապետը տարբեր է Իսահակ Թաւրիժե-

Digitized by Google

ցուց, և նահատակուել է 1817 թուի մայիսի 1-ին՝ Շամախում։ Եւ այս պատճառով էլ մեր Նոր Վկայից ժողովրդական հրատարակութեան մէջ (տե՛ս հատոր Բ, էջ 314) դրել ենք իբրև Նոր սուրբ, տարբեր Թաւրիժեցուց, 62 համարի տակ, հակառակ Մակար եպիսկոպոս Բարխուտարեանցի որոշ զեկուցման, թէ երկուսը միևնոյն անձերն են։

Ուրախ ենք որ մեր գրքի գոնէ գիտական հրատարակութեան մէջ ուղղում ենք այդ սխալը՝ իրաւունք տալով Մակար եպս. Բարխուտարեանցին։

Digitized by Google

# 44-

## ՍՏԵՓԱՆՈՍ ՄԱՆՈՒԿ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԵՑԻ

(Տես էջ 305)

Սոյն նահատակի մասին գտնում ենք նաև հետևեալ տեղեկութիւնը, Հանդէս Ամսօրեայ, 1901, էջ 342-3 (յօդուածագիրն է Հ. Ք. Ց.)։

Յօդուածագիրը ենթադրում է որ Վիեննայի Ս. Ստեփանոս եկեղեցում պահուող Ս. Ստեփանոս Հայաստանցու նշխարքը գուցէ այս նահատակինը լինի։

«Վիեննա քաղքին ... կենդրոնը կը գտնուի հսկայագործ Մայր եկեղեցին՝ յանուն Ս. Ստեփանոսի, որ իւր՝ բայց ի մասնաւորի աշտարակին, բարձրութեամբը բովանդակ քաղքին վրայ կը տիրէ։...

Չմոռնանք յիշատակելու Հայոցս համար այն անգին գանձը՝ որ Ս. Ստեփանոսի եկեղեցին կը պահուի, և որ ազգայնոց աւելի հետաքրքրական է քան ամբողջ Ս. Ստեփանոս եկեղեցին իւր հնութեամբն ու ճարտարապետական զարմանալիքներովն։ Այս անգին գանձն է հայազգի Ս. Ստեփանոսի նշխարքն որ առաջին անգամ մեզի ծանօթացաւ 1849 Փետրուար 16-ին. և նոյն տարուան մեր «Եւրոպա» շաբաթաթերթովը ծանուցուեցաւ հայութեան։ Հոս մի առ մի յառաջ կը բերենք՝ ինչ որ 1849-ին հրատարակեց «Եւրոպա», մտածելով որ շատերուն անծանօթ է։

«Վիեննայի Ս. Ստեփանոս Մայր եկեղեցւոյն մէջ Փետրուարի 16-ին սրբոց նշխարքներուն կամ մասունքներուն հանդէսը կատարուեցաւ։ Այս հանդէսը 1363-ին Ռուդոլփոս դքսին ձեռքովը հաստատուած էր, և ան ժամա-

նակէն ի վեր ամէն տարի սրբոց նշխարքը հրապարակաւ կը դրուէր որ ժողովուրդը յարգէ։ Բայց Ցովսէփ Բ. կայսեր ատենն ինչպէս որ եկեղեցական շատ բաներու մէջ բռնական չափաւորութիւններ դրուեցաւ, նոյնպէս Սրբոց պատիւ բերող աս հանդէսն ալ արգիլուեցաւ և մինչև հիմայ անանկ մնացած էր. սակայն աս ազատութեան տարւոյն մէջ եկեղեցականք ան արգելիչ պարտաւորութենէն ազատ սեպելով՝ նոյն հին հանդէսը դարձեալ կատարեցին։ Աւագ խորանին ու կողմնական խորաններուն վրայ դրուած Սրբոց նշխարքներուն թիւը 220-ը կանցնէր, որոնցմէ ոմանց ամբողջ մարմինը, ոմանց ալ մինակ մէկ մասը կար։ Շատ երևելի Սուրբերուն և բոլոր Առաքելոց զանազան մանր նշխարքներէն զատ՝ Ս. Ստեփանոս Նախավկային գանկն ու Ս. Գրիգոր Նազիանզացւոյն գլուխը կար։ Բայց մեզի ամէնէն աւելի զարմանք պատճառեց անծանօթ Հայազգի Սրբոյ մը մարմինը՝ որուն անունն էր Սուրբ Ստեփանոս ի Հայաստանէ, որուն բուն մարմինը գրեթէ ամբողջ էր, ու միայն գլուխը չկար։ Եւ թէպէտ ասոր վրայ կարելի եղածին չափ ընդարձակ ու վաւեր ծանօթութիւն փնտռեցինք, բայց միայն 1543-ին նոյն ատենուան գերմաներէն լեզուաւ գրուած աս յիշատակարանը տեսանք, որ աս Սուրբ Ստեփանոս ի Հայաստանէ 1543-ին ատենները Ս. Ստեփանոս եկեղեցւոյն Սրբոց նշխարքներուն պահարանին ձեռքովը փառաւոր սնտուկի մը մէջ դրուեր է, և սուրբ [illegible] մըն է, ու իր արդութեանը համաձայն յարգութիւն ընդունելու համար ամէն տարի ժողովրդեան առջևը կը դրուի։ Բաղձալի էր մեր ազգային պատմութեան մէջ ասոր վրայ գոնէ փոքր յիշատակ մը գտնել։ Թուչէ 1471-ին Հայաստանէն Կոստանդնուպոլիս [illegible] եկած ու գլխատուած Ստեփանոս պատանին ըլլայ, որուն վրայ եղած գրաւոր յիշատակութիւնը կորսուած ըլլայ։

Digitized by Google

## 68.

### ԳԱՐՈՆ ԼՈՅՍ ԳԱՓԱՅԻ

(*Տե՛ս էջ* 412)

*«Մասեաց Աղաւնի» թերթի մէջ, հինգերորդ տարի, Թէոդոսիա* 1860, *էջ* 101՝ *լոյս է տեսել Խ. Վ. Գ. ստորագրութեամբ «Լոյս Գարոն Նահատակ Թէոդոսիոյ» վերնագրով մի ոտանաւոր, որ ամբողջովին արտատպում ենք այստեղ.*

### Ա.

*Զի՞ այդ խուժան մոլեգին*
*Ձեռս յետ կապեալ ուլն ՚ի յանուր,*
*Աղաղակաւ տուտանին,*
*Զմիմեանս խըռնեալ կոխեալ յահուր.*
*Մի յանցաւոր պատժապարտ,*
*Կամ աւազակ արիւնարբու,*
*Թէ ապըստամբ մահապարտ՝*
*Զուժէ լեցեն վըրէժտու։*
*—Ոչ. թէ շըղթայքն յանցաւորի,*
*Բայց է ճակատն իւր անմեղի։*

*Դա պարմանի զուարթափայլ,*
*Աչօք դիմօք իւր եռանդուն,*
*Որ անվեհեր անայլայլ*
*Գընայ ըզհետ կամաց նոցուն.*
*Եւ ընդ բիւրուց լուտանաց*
*Զոր ըղզայնեն յերեսն անմեղ,*
*Եւ ընդ բիւրուց մաղթանաց*

Digitized by Google

Զոր անկանեն առ նա շըքեղ,
Նա զայս մի տայ պատասխան.
«Ես Քրիստոսի եմ զօրական»։

Ատեան բացաւ ի դատել,
Եւ դատաւորն ողոքաւոր
«Որդեա՛կ, քեզ զի՞ է մոլել»,
Ասէր առ նա ի գութ պըղտոր.
«Թէ մանկութեան և գեղոյդ
«Դու անըզգայ իցես, ո՜վ Լոյս,
«Գըթամ ծաղիկ ես մարմնոյդ
«Յոր սըփռեցից ըղձեշտ և լոյս»։
Բայց նա մի տայ պատասխան.
«Ես Քրիստոսի եմ զօրական»։

Բա՛րբէ, փոխեալ անդանօր
Դատաստանաց կարգ և օրէն,
Որ աղաչէն դատաւոր
Եւ կապեալն ա՛յն է որ ժըխտէն.
Նա աղաչէ շնորհել կեանս,
Սա ըզշընորհսն այն ընթադրէ.
Նա զանմեղին զուր մեղանս
Բառնալ ճըգնի կրօնից դըրժող.
Սա զայս մի տայ պատասխան.
«Ես Քրիստոսի եմ զօրական»։

Աղաչանաց անդ ըղձետ
Որ ցընդեցան անդամադիտ,
Ըսպառնալիք չարաղէտ
Եկին քաջին խախտել ըզմիտ.
«Թէ չըթողուս, ասէ, զայդ
«Կըրօն մոլոր՝ ըստոյգ ընդ մերս՝
«Երդուեա՛լ զի ՚քեզ բարկաճայթ
«Ըզքարկութեան թափեմ շանթերս»։

Digitized by Google

Իսկ նա մի տայ պատասխան.
«Ես Քրիստոսի եմ զօրական»։

Եւ յարձակին փոյթ ընդ փոյթ
Դահիճք վառեալ իզէնս ահեղ,
Իբրև ի դաշտ մարտի դռոյթ
Տալով յանզէն մարմինն անմեղ.
Անզէ՞ն… ոչ, Լոյս չէր անզէն,
Սուր և սպար ունի նա Խաչ,
Որ պատըսպար հոգեղէն՝
Իմենամարտ մատչէր յառաջ,
Ձայս մի տալով պատասխան.
«Ես Քրիստոսի եմ զօրական»։

Բայց յայն տանջանս սաստկագոյն՝
Որ սոսկային տուողք և ինքնին՝
Լուծաւ մարմին պատանւոյն,
Այլ կայր անլոյծ, անշարժ ոգին.
Թառամեցաւ մահակիր
Իբր ըղշուշան անկեալ յարօտ,
Փակին շըրթունք վարդածիր,
Աչք կըկոյին երկնակարօտ.
Բայց սիրտ մընչէ՜ յաւիտեան.
«Ես Քրիստոսի եմ զօրական»։

## Բ.

Ո՜վ զօրական քաջամարտ,
Քեզ երանի՜, հասեր մարտին քում յաւարտ.
Հասեր յաղթող անպարտելիդ իհանդէս,
Պըսակելով յարիւնաներկդ անդ իդէս։

Փառացդ՝ յերկնից մինչ յերկիր
Անմահունակ ցոլան ճաճանչք լուսալիր,
Եւ սիրտք վառին մեր յայն նըշոյլ եռանդուն
Ըղձեա տենչալ յոր գեղեցիկս հասեր դուն։

Բայց մեր կըռուեալ սիրտք իփուշ՝
Զոր այլընդայլ կարծեմք ծաղկունըս քընքուշ
Ըզհետ նոցա յամեմք ծուլամք ծաղկաքաղ,
Եւ իտատասկ կապեմք պըսակ մեզ, աւա՜ղ։

Ո՜ն դու, ո սուրբ պատանի,
Դու զոր պատուեմք այսօր առ քոյդ տապանի,
Ցաւոցս ըզցաւըս քո ռըւեալ մխիթար՝
Ըզտխրութըս մեր ըզծանրացեալս խլեր առ։

Ահա շիրմիդ խնեղան
Ըզսիրտս հանեմք իղձատարուդ անարեան,
Ո՜հ դու ըղձուր սրով լըցու սիրոյդ անկէզ՝
Ա՛րկ և ծախի առ էն եւ մերս ողջակէզ։—

Գ.

Լո՜յս, սիրտս ըզքեզ սիրեա՜ց յոյժ,
Գուցէ յիս ծընաւ ընտանի.
Թէպէտ ըզքեզ ծանեայ նոր,
Բայց ըղձակաթ է ոգի.
Կարծեմ ըզքեզ բարեկամ
Ինձ այս կենաց եւ ընկեր,
Որպէս թէ նոյն յաղքերաց
Արբեալ ըզկաթն էր սիրտ մեր։

Ասեն թէ դու չունէիր
Քեզ բարեկամ ընկեր զոք,
Այլ թէ անկեալ սատ պանդուխտ՝
Ունէիր սիրտ լի ցաւօք.
Ծովուն երբեմն առ ափամբ
Անշարժ յոտին զերթ ըզվէմ
Զալեաց շառաչ լըսէիր
Լըռիկ մընջիկ թաղծադէմ.

Եւ կարծէիր թէ բերեն
Քեզ օրհնեալ եացդ ըզհադադ,

Ըզմօր համբոյրս անուշակ
Եւ քու ընծայն սիրամուսագ.
Եւ սիրտ հայեալ իկարօտ
Խոր հառաչանս անդ հեղույր,
Եւ իբր ըզգետ իծափու
Թափէր հեղեղս հազար բիւր։

Եւ այլ երբեմն իկանաչ
Ծլեալ բըլրոցն իկատար
Կաղամախեաց նըստելով
Ընդ ըստուերօք լայնատար,
Հրատապ սըրտիդ խընդրէիր
Հեղուլ հովիկ կամ շուք սեաւ,
Եւ մերձաւոր ջինջ յաղբիւր
Շիջուցանել ըզծարաւ։

Քանի՜ցս ընդ քեզ, Լոյս, քանի՜
Լուսին գիշերց շողշողուն
Եզրիտ անդէն հըսկելով
Իբր ըզկանթեղ սեղանոյն.
Քանի՜ցս անգամ եւ աստեղք
Զուարթնոց ներշընչմունս արփեայր
Ոչ խառնեցին ընդ վըրանս
Որ քոյ յաչաց գեղանիւր։

Դ.

Ո՛վ սուրբ պանդուխտ, թող ըզքո
Յիշեմ ըզցաւս ես ըստէպ,
Քանզի այնու լոկ սըրտիս
Թեթեւացի երաշխէպ,
Որ հայրենեաց եմ եւ ես
Թափառական վըշտաղդեաց,
Եւ ես քո պէս արտասուեմ
Յանձուկ կարօտ սիրելեաց։

Եւ ես, ով Լոյս, ոհ եւ ես
Հաստակակցի քեւ քոյին
Այն ինչ արիւն ի հոգւոյ
Եստու ողջոյն մի վերջին...
Որ չիք եւ ինձ մայրենի
Ժըպիտ՝ բերողն ըղխրախոյս,
Եւ չանեսանեմ զոր վասն իմ
Թափեալ անհատ արտասուս...

Լոյս, դու սըրտից վըշտահար
Սրացիր յերկնից ըսփոփիչ,
Մինչ արտասուք իմ թանան
Շիրմիդ ըզսուրբ կափարիչ.
Եւ ընդ ծառովս այս իգուճ
Զայր հովանին սիրէիր՝
Սիրտս իտօնիդ յիշատակ
Ծըփի ՚նդ երկինս եւ երկիր։

Լոյս Պարոնի գերեզմանի մասին Հ. Մինաս Բժըշկեանցի «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան եւ յայլ կողմանս բնակեալս ի Հայկազանց սերելոց ի նախնեաց Անի քաղաքին» ուսումնասիրութեան մէջ (Վենետիկ՝ 1830) էջ 342 հետեւեալ տեղեկութիւնը կայ. «Լոյս պարոն պատանին կատարեցաւ վասն ի Քս հաւատոցն, և ծաղկեցաւ գերեզման նորա աքանչելեօք, զոր տեսաք ի ձախակողմն տաճարին սրբոյն Աննայի»: Նոյն գրքում տպուած է նաև Պարոն Լոյս նահատակի վկայաբանութեան համառօտութիւնը, որ հեղինակը վերցրել է ձեռագիր Յայսմաւուրքից։

# 113.

## ՅՈՎԱԿԻՄ ՍԱՄԱԹԻԱՑԻ

Յովակիմ Սամաթիացու վկայաբանութիւնը տպագրուելուց յետոյ (տե՛ս էջ 676—678)՝ պր. Հայկունու միջոցով ստացանք սոյն Նահատակի տապանագիրը, որ ուղարկել է Կ. Պոլսից արժանապատիւ Վահան քահանայ Խոյեան։ Հնարաւորութիւն չունենալով տապանագիրը անմիջապէս վկայաբանութիւնից յետոյ տպագրելու՝ ստիպուած եղանք Յաւելուածում հրատարակելու։

*Անդլուխ մարմին*<br>
*Յովակիմայ Նահատակի Թավուքքեան Կոստանդնուպօլսեցւոյ*<br>
*ամփոփէ տապանս*<br>
*որ կատարեցաւ յամի Տեառն 1843 օգոստոս 10*<br>
*ի հասակի 22 ամաց.*

Դեռ յ՚առոյգ տիս զառաքինեաց զհանդէս
Ցուցեալ յանձին ի փորձութիւնս պէսպէս.
Իբրև ոսկի արկաւ ի բովս տանջանաց
Մինչև արեամբն զմեղս անկման իւր սրբեաց։

Յոյս սնոտեաց՝ գանք և կտտանք, մամոնայ,
Միաբանեալ յարեան մարտ տալ ընդ նմա.
Անուամբ Տեառն ել ընդ առաջ անվեհեր,
Յաղթեաց և ետ զփառս Փրկչին իւր նուէր։

Հաճեցաւ Տէր, էջ պսակաբերն յայն ի պահ,
Յորում դահիճն վարէր զանմեղըն ի մահ.
Կտրեալ ձեռօք՝ աչքն ի խոնարհ գնայր նա,
Ընդ հետս Փրկչին իբր ընդ շաւիղ Գողգոթայ։

Digitized by Google

Ամբոխ մեծ էր, և բանսարկուն դեռ իբր օձ,
Փչեալ առ ունկն, ճգնէր վառնել ըզսիրոյն բոց,
Այլ պատանեակն դրդուեալ զգլուխն ևեթ,
Վանեաց զչարն և լուրջ դիմօք ծունր եդ։

Շողաց սուսերն՝ երիցս եհար ըզծոծրակ,
Ի կիսահատ պարանոցէն սուրբ ծորակ.
Ցայտէր ի սփիւռ, այլ նա ընդ մէն մի հարուած,
Մնչէր հեզիկ. «Տէրդ իմ Փրկիչդ իմ Աստուած»։

Պակեաւ դահիճն և մոլեգնեալ յարձնէ՝
Իբր ոչխարի զսուրն ի կոկորդն զնէ,
Աչք պատանւոյն խփմամբ զհրեշտակս ողջունեն
Որ զհոգին առեալ Փրկչին նուիրեն։

Կապեալ վէմ մեծ զմարմինն ի ծով ընկեցին,
Ամպրոպայոյզ ջուրք իբր ի ցասս երկնեցին,
Ի թաթառաց խռովեալ անդունդն ալեսատ,
Զանգլուխ աւանդն բերեալ ժառոյց յեզերս առատ։

Որ զայ շիրմիս նահատակիս այցելու
Առցէ խրախոյս և յիշեսցէ ակնածու
Եթէ ի շնորհս սորա զմեզ Տէր փրկեաց,
Ցօրէ անտի՝ յարենէ և ըկանաց։

Այս տապանագիրը ընդօրինակուած է Գնալը կղզում (Նէտի-Պուրէ)։ Աւետիս Պէրպէրեանի «Պատմութիւն Հայոց» գրքում (էջ 516) նահատակութեան ամսաթիւը համարուած է օգոստոս 17։ Սակայն տապանագրի սոյն ընդօրինակութեան մէջ նահատակութեան ամսաթիւն է օգոստոս 10։ Եթէ տապանագրի ընդօրինակութիւնը բնագրին համապատասխան է՝ անշուշտ նահատակութեան ճիշտ ամսաթիւը պէտք է համարել օգոստոս 10, 1843։

Digitized by Google

# ՑԱՆԿ

## ՑԱՏՈՒԿ ԱՆՈՒԱՆՑ

*ծ.=ծանօթութեանց մէջ, տ.=տեղեկութեանց մէջ.*


Աբել 153. Աբէլ 153ծ. 184, 316, 582. Հաբել 153ծ. Հաբէլ 153ծ. 398. Յաբէլ 398ծ.

Աբուբաքր (Յովսէփ Դունեցի)68. Բուպաքր 47. Բուբաքր 52, 54, 68.

Աբրահամ նահապետ 76, 153, 156, 243տ. 316. Աբրայհամ 153ծ.

Աբրահամ քահանայ նահատակ 422.

Աբրիում Տրապիզոնցի հայ առա-ղակապետ 713տ.

Ս. Ագնառիա 204տ.

Ագուլիս գիւղ 423, 424, 425, 428, 429, 432տ. 433տ.

Ադամ նախահայր 25, 92, 160ծ. 236, 261տ. 361, 538.

Ադեն դրախտ 160. Յադեն 160ծ.

Ազախ քաղաք 552 («ի սահմանս Ղրիմու՝ ի պահնորդ քաղաքն Թուրքաց, որ կոչիւր ամենայն լեզուաւ Ազախ» տես նոյն էջ 552).

Ադդին ամիրապետ 168, 175ծ. 189ծ. Եդդին 168ծ. 175ծ. 183տ., 189ծ. Էդդին 175ծ. Ադդինին 175.

Ազիզ կէնինեա. տես Պատուական.

Ազիզ Պեկ՝ հայր Փուանկաւլ նահատակի 568.

Աթաճան՝ հայր Նիկողայոս Այվազ Պրուսացի նահատակի 531.

Աթապակ իշխան Նաչենոյ՝ որդի Ջալալ իշխան նահատակի 102.

Աթապակ ամիրապետ 55.

Ալանաց երկիր 354.

Ալաշկերտ (=Վաղարշակերտ) 562.

Ալէքսանդրապոլ 674տ.

Ալի փաշա մեծ վէզիր 343, 344.

Ալիբաս տես Ալիբասան.

Ալիբասան 3, 13, 13ծ. 15. Ալիլասլան, Ալփասլան, Ալփհասան, Ալփասան, Արփասլան 3տ. Ալիպասան 13ծ. 15ծ. Ալբասան 13ծ. Ասլիբասան 15ծ. Չամչեան Գ. էջ 178, Ալիբաս.

Ալիս գետ 15. Յալիս 15ծ.

Ալէւր գիւղ 467, 468.

Ալլահվերտի պաղալ 450.

Ս. Աղէքս 431տ.

Ալվանդ փաթշահ 339.




Digitized by Google

Ալփասլան տես Ալբասան.
Ախալցխէ 220. Ախալցխա 674տ.
Ախքակ տես Աղքակ.
Ախթամար տես Աղթամար.
Ախշարու տես Աղշարու.
Ահարոն 154.
Ահմէտ սուլտան (Բ) 537.
Ահմէտ փաշա տես Կէտիկ Ահմէտ փաշա.
Աղա-Մահմէդ-խան 618.
Աղքակ գաւառ 478. Ախքակ 478ծ.
Աղէքսանդր՝ Հայր Յարութիւն Կարնեցի նահատակի 626.
Աղթամար 173, 176, 177, 178, 180, 181տ, 183տ, 189. Ախթամար 173ծ, 176ծ, 181տ, 189ծ. Աղթայմար 181ծ, 189ծ. Աղթամ 181ծ.
Աղուանք 24, 31, 43, 319տ, 607.
Աղշարու լեառն 139, 148տ. Ախշարու 139ծ. Աշխարու 139ծ. Աշխարհու 139ծ.
Աքքիրման (Ակկերման) 341.
Աճմստան 497.
Ամաղեկ 64.
Ամառան կամ Մատրան եկեղեցի Սպահանի Երևան թաղում 549.
Ամասիա 342. Աամասիա 342ծ.
Ամենափրկիչ եկեղեցի Նոր-Ջուղայի Երևան թաղում 548.
Ամէնաւագ նահատակ 129, 131, 132տ.
Ամիրազդին (տես Ազդին) 189. Ամիրեզդին 189ծ.
Ամիդ քաղաք 352տ., 420տ. Ամիթ 350. Ցամիթ 350ծ, 360, 368, 416, 420տ, 449, 453, 455.
Ամիրմահմուտ իշխան 130.
Ամիրհասան դատաւոր 130.
Ամիրշարաֆ 158. Ամիրշարաւ 158ծ. Ամիրշաաւ 158ծ. Ամիրշաֆար 158ծ.
Սբ. Ամլորդի 586.
Ամլորդոյ վանք 724.
Ամուկ երկիրն 184, 467. Ամուկ դղեակն 48. Քարն Ամկու 231.
Այտըն քաղաք 627.
Այրարատ գաւառ 51. Այրարատ նահանգ 61. Արարատ 488, 496. Այրարատեան երկիր 400. Արարատեան գաւառ 491. Այրարատեան գաւառ 105.
Անանիա կաթուղիկոս 92, 93տ. Անանիաս 84.
Անանիա առաքեալ 448.
Անգլիա 676.
Անգլիացի 204տ, 677. Անգղիացի 539, 540, 541, 542, 544. Ընկլուզք 204տ.
Անդամալոյծ 465տ.
Անդափ 566.
Անդրէաս քահանայ նահատակ 423, 424, 426, 427, 429, 431տ, 432տ, 433տ, 466տ.
Անդրէաս վարդապետ 94.
Անդրի Իսրայէլեան 691.
Անի քաղաք 184տ. Անի Թուրքաբնակ գիւղ 184տ, 135տ.
Անծղնապատ ուխտ 282.
Անձրև Յղնեցի 427.
Աննա՝ մայր Կիւրղի հայրապետի 258.
Աննա՝ դուստր Նիկողայոս Պրուսացի նահատակի 532.
Ս. Աննայի վանք Կաֆայ քաղաքում տես Յովակիմայ և Ան-

Digitized by Google

Նայի վանք.
Ս. Անոյշ 465տ.
Անտոն նահատակ Թիփլիսեցի 608.
Անտոն՝ մեծ եղբայր Բաղտասար Թոխաթցի նահատակի 490.
Անփիլոս եպիսկոպոս 527տ.
Աշխարու կամ Աշխարհու տես Աղշարու.
Ապըրկեր 515.
Ապիօն 708.
Ապրօեան ընտանիք 627.
Առակ գիւղ 482.
Առան աշխարհ 25, 31.
Առաջաձոր գիւղ 694.
Առաքել քահանայ նահատակ 94, 95տ.
Առաքել վարդապետ Բաղէշեցի 243, 260, 260ծ, 261տ.
Առաքել՝ Գրիգոր Խլաթեցու աշակերտը 274տ.
Առաքել 349.
Առաքել վարդապետ Դաւրիժեցի (?) 503, 720տ.
Առեստ գիւղ 48.
Ասադդ՝ հայր Լոյս Գրիգոր նահատակի 549. Ասադդ 549ծ.
Ասիա 383.
Ասլան 549ծ.
Ասլան Սուլտան տես Խլիճ Ասլան Սուլտան.
Ասլանշահ թագաւոր եղեմացւոց և պարսից 31.
Ասկարեան բերդ 689.
Ասպահան քաղաք 434. 436, 521. Սպահան 539.
Ասպինակ գիւղ 231.
Ասորեստան 213, 223.
Ասորիք 116, 415, 463.
Աստապատ գիւղ 424.
Սբ. Աստուածածին եկեղեցի Տրապիզոնում 698.
Սբ. Աստուածածին եկեղեցի՝ Տաւրիկեան նահանգի Ղարասուբազար քաղաքում 568.
Սբ. Աստուածածին եկեղեցի Կարնում 643.
Աստուածածնի ուխտն, որ այժմ Աւեխտու կոչի 715.
Աստուածածնի ուխտն ի Սուխարա 265, 279.
Աստուածատուր Խթայեցի նահատակ 353, 354, 355, 357, 358տ. Աստուածատուր Խլաթեցի 358տ.
Աստուածատուր Կաֆացի նահատակ 329, 331. Բուղտան 330.
